Հետևաբար գալիս ենք այն եզրակացության, որ ինչպիսի ասույթ էլ որ խոսողը, ընթերցողը իրականացնի միևնույն է դրանք բոլորն էլ լեզվա-հաղորդակցական միջոցներ են, որոնց ընտրությունը կախված է այն իրավիճակից, որում հայտնվել է խոսողը և որոնք կարող են վեր հանել սոցիալական կյանքի տարբեր դրսևորումներ և ներազդել դրանց առաջացման զարգացման վրա, հատուցել որոշակի մտքեր, գաղափարներ և զարգացումներ (Lakoff Johnson, 1980):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան Գ. Ռ., Պատկերավոր արտահայտչամիջոցները գործաբանական ոճագիտության լույսի ներքո, ք.գ.թ. ատենախոսություն, Ե. 2008):
2. Պապոյան Ա., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Շարահյուսություն, 2003
3. Վարդանյան Լ., 2013, Պայմանի հարաբերություն արտահայտող կառույցների իմաստագործառական առանձնահատկությունները ժամանակակից անգլերենում. թեկ. ատ., Երևան
4. Austin J., 1962. Searle 1969, Levinson 1983, Bybee J., Perkins R., Pagliuca, 1994, The Evolution of Grammar, Chicago and London
5. Bennett J., 2003, A Philosophical Guide to Conditionals, Oxford.
6. Clause R., 1979, A Reference of Grammar for Students of English, Moscow
7. Dadman V., 2000, Classifying Conditionals, Oxford.
8. Lakoff G., Johnson M., 1980, Metaphors we live by, Chichago
9. Searle J.R. 1969, Speech Acts. An essay in the philosophy of language, London
10. Woods M., 2003, Conditionals, Oxford University Press.

СВЕТЛАНА АЗИЗЯН -ТИПЫ ПОСТПОЗИТИВНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ УПОТРЕБЛЯЕМЫЕ С ПРИДАТОЧНЫМИ УСЛОВИЯ

Процесс обучения английским наклонениям не простой. За короткое время необходимо усвоить один из самых трудных грамматических явлений – категорию наклонения. Естественно, хочется узнать а) степень усвоения, б) эффективность метода обучения. Для этого предлагаем сложные предложения с условными придаточными предложениями, в которых, с одной стороны, употребляются все наклонения – реальные / нереальные, с другой стороны - студенты часто задают вопрос. «Какие предложения можно употреблять с придаточными условиями, что и мы предлагаем как метод проверки.

SVETLANA AZIZYAN - TYPES OF SENTENCES USED AFTER SUBORDINATE CLAUSES OF CONDITION

On the one hand, a teacher introduces such a difficult verbal category – moods, on the other hand, she's a) interested in the level of the students' understanding the very grammatical information, b) how the method of teaching this grammatical phenomenon acts. Taking into consideration the fact that a) in complex sentences with subordinate clauses of condition all the moods – direct, indirect can be used, b) students are often interested in the types of sentences following the subordinate clauses of condition, sentences with “if” clauses are suggested as a method of checking the given material.

ՀԱՍՑԵԱԳՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԲԱԶՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՄԱՆԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Հիմնաբառեր՝ բազմախոսություն, հասցեագրում, առանցքային հասցեագրում, ցանցային հասցեագրում, խոսքային փոխազդեցություն

Օրեցօր ավելանում են այն իրավիճակները, որտեղ կիրառվում են բազմախոսությունները (ուսանողական խոսք, հեռուստատեսություն, գիտաժողովներ, բանավեճեր և այլն), ուստի բազմախոսությունների ուսումնասիրությունը դառնում է հույժ կարևոր:

Մասնագիտական գրականության մեջ բազմախոսության զանազան կողմերին անդրադառնալիս մանրամասն անդրադարձել են երկխոսության և բազմախոսության առանձնահատկություններին: Գերմաներեն լեզվի բազմախոսական խոսքի առանձնահատկություններին նվիրված աշխատության մեջ է. Յակովլևան, համեմատելով բազմախոսությունը, մենախոսությունը և երկխոսությունը, ի թիվս այլ առանձնահատկությունների նշում է, որ բազմակողմանի խոսքը երկկողմանիից տարբերվում է հետևյալով՝

Ա. Հաղորդակցական դերերի ավելի լայն սպեկտր՝

- առաջնորդող հասցեագրող (մոդերատոր, հիմնական մեկնաբան, թեման մշակող),

- շարքային հասցեագրող (միջնորդ, արբիտր, հակամարտության խաղարար, ամբողջ խմբի կարծիքի արտահայտող, գնահատող, շտկող, համառոտող, ինքնակոչ միջամտող, խոսակցությունը պահպանող),

- հասցեատեր (ուղիղ, կողմնակի, ձևական, պատահական, վիրտուալ, եզակի, հոգնակի և այլն):

Բ. Խոսակիցների դերերի անկայունությունը,

Գ. Բազմախոսության անկանխատեսելիությունը՝

դիտողությունների հերթագա-յություններից կապված մեկ կամ մի քանի մասնակիցների հնարավոր մասնակցությունից, դիտողությունների վերահասցեագրումից, թաքնված հասցեագրումից, վիրտուալ, պատահական միջամտությունից, որոնք ազդում են դիտողությունների

կապի վրա, խոսքային շփման յուրահատուկ զուգակցումից: [Яковлева 2004]

Բազմախոսությունների բազմաթիվ առանձնահատկություններից է հասցեագրումը, որի դիտարկումը հնարավորություն է տալիս պարզել մասնակցիների հաղորդակցական նպատակները և ներդրումը խոսքային գործունեության մեջ: Հարցի բազմակողմանի ուսումնասիրության համար անհրաժեշտ է դիտարկել հասցեագրման տեսակները՝ բազմախոսությունների հնչերանգային կաղապարման համար:

Հասցեագրման խնդրին անդրադարձել են տարբեր մասնագետներ, և դրա զանազան առանձնահատկությունները կներկայացնենք ստորև:

Համաձայն Մ. Մակովեցկայայի, որ ուսումնասիրել է խմբային շփման ժամանակ մասնակիցների փոխազդեցության առոգանական առանձնահատկությունները, հասցեագրումները բավականին բարդ բնույթ ունեն բազմախոսություններում: Խմբային շփման ժամանակ յուրաքանչյուր մասնակից կարող լինել և՛ հացեագրող, և՛ հացեատեր: Հասցեագրող դառնալիս մասնակիցները ստանձնում են նախաձեռնությունը: [Маковецкая 2012: 6-7]

S. Նենաշևան, ուսումնասիրելով անզլերենի դասավանդման գործընթացում բազմախոսական հմտությունների գնահատումը, իր հոդվածում տարբերակում է արդյունավետ բազմախոսության գնահատման հետևյալ չափանիշները՝ 1. հաղորդակցման նպատակը, 2. հաղորդակցման գործառույթները, 3. մասնակիցների հաղորդակցական իրազեկությունը (լեզվական, խոսույթային, ռազմավարական և սոցիալ-մշակութային): Հաղորդակցման հաջողվածության մասին դատելիս պետք է հաշվի առնել, թե որքանով են իրագործված գործառույթները, և ինչքանով է հաջողված տեղեկատվության և կարծիքների փոխանակումը մասնակիցների միջև: Սակայն ամենամեծ կարևորությունը հեղինակը վերագրում է հաղորդակցման նպատակին հասնելուն: Այս առումով հետաքրքրական է դառնում բազմակի հասցեագրումը: Այսպիսով, բազմակի հասցեագրումը բազմախոսությունում հնարավորություն է տալիս տարբեր խոսակիցների մասնակցել գործընթացին և նպաստել դրա արդյունավետությանը: Հաջողված հաղորդակցությունը ենթադրում է, որ այն պարզապես երկխոսությունների հաջորդականություն չէ, այլ դրանում պետք է ներգրավված լինեն խոսակիցների պատասխանները, հետադարձ կապը, հարցերը, կարճ մեկնաբանությունները և այլն: [Nenasheva 2014: 4]

Իրվինգ Գոֆմանը (1892-1982թթ.)՝ հայտնի կանադա-ամերիկացի սոցիալոգ և գրող, իր «Խոսքի ձևերը» հինգ էսսեյից բաղկացած շարքում ("Replies and Responses" (1976); "Response Cries" (1978); "Footing" (1979); "The Lecture" (1976); and "Radio Talk" (1981)) ուսումնասիրել է խոսքային և ոչ խոսքային հաղորդակցությունը սոցիալ-լեզվաբանական կադապարի միջով:

Իր *Replies and Responses* հոդվածում հեղինակը անդրադառնում է խոսակցական երկխոսության հարց ու պատասխանի առանձնահատկություններին: Նա նշում է, որ հարցերն ուղղված են առաջ, դեպի այն, ինչը դեռ սպասվում է, մինչդեռ պատասխանները միշտ ուղղված են ետ: Հարցերն ակնկալում են պատասխան, ուրեմն և միշտ կախված են նրանցից, իսկ պատասխաններն ունեն ավելի մեծ կախվածություն: Դրանք կապված են մի բանի հետ, որն արդեն սկսվել է: [Goffman 1976: 257]

Խոսողի ցանկությունը իմանալու, որ իր ուղերձը հասել է տեղ կամ հասկացվել, և ստացողի կարիքը ցույց տալու, որ նա ստացել է ուղերձը ճիշտ կերպով, ստեղծում են հարակից զույգեր ունենալու (adjacency pair) տրամաբանական հիմքը: Ի. Գոֆմանը նշում է, որ բավարար հիմքեր կան հարակից զույգ ձևաչափը հարց ու պատասխանից բացի տարածել նաև այլ տիպի երկկմաս հաղորդակցությունների վրա, քանի որ երբ հայտարարություն, հրաման, խնդրանք, ներողություն, ողջույն, խոստում, սպառնալիք կամ կանչ է հնչում, խոսողը ուզում է վստահ լինել, որ հասել է նպատակին, իսկ ստացողը՝ ցույց տալ, որ ճիշտ է ընկալել ուղերձը: [Goffman 1976: 263]

Հեղինակն օգտագործում է նաև ավելի լայն եզրեր այդ հարակից զույգերի մասին խոսելիս՝ *պնդում և պատասխան*, հաշվի առնելով, որ հարակից զույգում միայն կան ոչ միայն հարց ու պատասխան, այլև պնդում և պատասխան:

Է. Գոֆմանի առանձնացրած պահանջների համակարգը, որը հնարավոր է դարձնում հաղորդակցությունը, կներկայացնենք ստորև՝

1. երկկողմանի ունակություն ստանալու ակուստիկորեն ճշգրիտ և մեկնաբանելի ուղերձներ,
2. հետադարձ կապ՝ ընկալման մասին տեղեկացնելու համար,
3. կոնտակտի ազդանշաններ, որոնք միջոց են նշելու կապի եղանակով արտահայտված շփման որոնումը,
4. հերթափոխման ազդանշաններ, որոնք ցույց են տալիս մի խոսողի ուղերձի ավարտը և մյուսի՝ հերթը ստանձնելը,

5. հերթի ընդհատման ազդանշաններ, որոնք ստիպում են հերթը վերստին ստանձնել, հետաձգել խնդրանքները, ընդհատել խոսողին,
6. կադապարման ունակություններ՝ նշաններ, որոնց միջոցով տարբերակում են հեզանք, ուրիշի խոսքի մեջբերում, կատակ և այլն,
7. նորմեր, որոնք ստիպում են խոսողին անկեղծորեն պատասխանել,
8. ոչ մասնակիցների՝ գաղտանլսելու, աղմուկի, հայացքներով փոխանցվող ազդանշանների ճանապարհը փակելու սահմանափակումները: [Goffman 1976: 264-265]

Իր մեկ այլ հոդվածում Ի. Գոֆմանը նշել է, որ ասույթները տեղակայված են ոչ թե պարբերություններում, այլ խոսքահերթում, երբ խոսողներից մեկը ստանձնում է խոսելու իրավունքը: Խոսքահերթը բաղկացած է երկկողմանի խոսքափախանակումից: [Goffman 1978: 787]

Հետաքրքրական է Ս. Դունքանի առաջարկած ազդանշանների դասակարգումը, որոնք համարվում են հաղորդակցությունը կարգավորող կանոններ: Ի տարբերություն Է. Գոֆմանի՝ հեղինակն առանձնացնում է հետևյալ ազդանշանները՝

1. հերթի փոխանցման ազդանշաններ, որոնք խոսակցին թույլ են տալիս հասկանալ, որ խոսողն ավարտել է խոսքը (տեմա դանդաղեցում, հարցական նախադասություններ, նախադասության ավարտելը, լռություն, խոսակցին ուղղված հայացք, առոգանություն),
2. փորձը ճնշող ազդանշան, երբ խոսողը հրաժարվում է խոսքը փոխանցել խոսակցին,
3. հետադարձ կապի ազդանշաններ, որոնց նպատակն է ցույց տալ, որ լսողը չի ցանկանում խոսել (զլխով անել, խոսողի սկսած նախադասությունն ավարտել, պարզաբանում խնդրել և այլն): [Duncan 1972]

Ջ. Վիենմանը ու Մ. Կնեպը, դիտարկելով խոսքահերթը խոսակցություններում, համաձայնում են Ս. Դունքանի առաջարկած ազդանշանների տեսակետի հետ, սակայն միևնույն ժամանակ այդ ցուցակում ավելացնում են ոչ խոսքային ազդանշանները նույնպես: Դրանց թվում նրանք նշում են հայացքի գործոնը, մասնավորապես՝ խոսողը նայում է խոսակցին միայն այն ժամանակ, երբ ցանկանում է

խոսքը նրան փոխանցել, իսկ եթե ցանկանում է, որ իրեն չընդհատեն, խուսափում է ուղիղ նայել խոսակցին: [Wiemann, Knapp 1975 : 85]

Լ. Չիտախովյան դիտարկել է խոսքահերթը եռախոսություններում ֆրանսերենի հիման վրա: Համաձայն հեղինակի՝ երկխոսական փոխազդեցությունների հաջողվածության համար խոսակցության երկու մասնակիցները պետք է ակտիվ մասնակցություն ունենան խոսքահերթի ձևավորման հարցում: Լ. Չիտախովյան պնդում է, որ խոսքի հերթականությունը այն դեպքում կարելի նկատել, որտեղ հնարավոր է խոսքը ավարտել և փոխանցել խոսակցին: Հետաքրքրական է, որ հեղինակը խոսքի ավարտը համարում է ոչ միայն շարահյուսական կառուցվածքի ավարտուն լինելը, այլև լռությունը և առոգանական ազդանշանները: Կարևորվում է խոսակիցների համագործակցությունը ոչ միայն լեզվական, այլև հնչերանգային համակարգում, ինչպես նաև դիմախաղի և ժեստերի միջոցով: Ուշագրավ է հեղինակի այն պնդումը, որ հաղորդակցական կանոններին հետևում են միայն իդեալական հաղորդակցման պարագայում, իսկ իրական կյանքում կանոններից շեղումները բազմաթիվ են: [Читачова 2001: 47]

Հեղինակը պնդում է, որ երկխոսության մեջ փոխազդեցության խնդիրները հիմնականում լուծում գտնում են, եթե, իհարկե, մասնակիցները բացահայտ հակամարտության մեջ չեն: Երբ ավելանում է երրորդ խոսակից, շփման կառուցվածքը փոփոխություն է կրում: Փոխազդեցության բոլոր կանոններին ավելանում են նաև այն ազդանշանները, որոնք սահմանում են, թե ում է փոխանցվելու խոսքը: [Читачова 2001: 48] Համաձայնելով Լ. Չիտախովյանի հետ՝ կարելի է նշել, որ պատկերը փոխվում է ոչ միայն երրորդ, այլև յուրաքանչյուր նոր մասնակցի ավելանալու պարագայում, ինչի հետևանքով հաղորդակցման կանոնները վերաձևավորվում են բազմախոսություններում:

Է. Յակովլևան օգտագործում տեղեկատվության տեսության մեջ տարածված «ազդանշանների ուղղվածության» հասկացությունից: Այդ հասկացությունը ենթադրում է առանցքային (աքսիալ) հաղորդակցական գործընթաց, երբ անդրադառնում ենք առանձին հասցեատերերին ուղերձի ուղղվածությանը, և ցանցային (ռետիալ) հաղորդակցական գործընթաց, երբ հասցեագրումն ուղղված է բազմաթիվ խոսակիցներին: [Яковлева 2004: 129-131]¹

¹ Լ. Պատրուշևան ռուսալեզու վեր-ֆորումի ուսումնասիրման ժամանակ, հետևալով Է. Յակովլևային, առաձնացնում է հասցեագրման երկու տեսակ՝

Սրա հիման վրա հեղինակն առանձնացնում է հասցեագրման ա) **առանցքային** և բ) **ցանցային** տեսակները: Առաջին տեսակը ներառում է **ուղիղ** և **ձևական** հասցեագրումը: Ուղիղ հասցեագրումը անմիջական հասցեատիրոջն ուղղված հասցեագրումն է: Ուղիղ հասցեագրման ենթատեսակ է ուղիղ անվանական հասցեագրումը, ուղղված կոնկրետ հասցեատիրոջը՝ օգտագործելով նրա անունը կամ անձնական դերանունը: Հեղինակը նշում է, որ նման հասցեագրումը բնույթով երկխոսական է: Առանցքային հասցեագրման մյուս տեսակ նա նշում է ձևական կամ խնդրային հասցեագրումը, որը միայն ձևականորեն է ուղղված հասցեատիրոջը, սակայն փաստացիորեն ուղղված է խնդրին:

Առանցքային հասցեագրումը ենթադրում է **ինֆորմատիվ** առկայությունը:

Հաղորդակցման ցանցային տեսակը ենթադրում է *կոլեկտիվ* հասցեագրում, այսինքն՝ ուղղված է շփման բոլոր մասնակիցներին: [Яковлева 2004: 130-131]

Է. Յակովլևան ներկայացրել է **բազմախոսություններում խոսքային փոխազդեցության** թերևս ամենահամապարփակ նկարագիր՝ առանձնացնելով հետևյալ տեսակները՝

1. **Հաջորդական-գծային փոխազդեցություն**. փոխազդեցության այս տեսակը ենթադրում է, որ մասնակիցները հերթով են խոսում, յուրաքայտի արտահայտում է իր կարծիքը: Շփումն ունի գծի տեսք՝ A-B-C-D-E-F.
2. **Գնահատողական-եղանակավորող խոսքային քայլ**. նման խոսքային փոխազդեցությունը չի պահանջում անընդհատ մասնակցություն, այլ միայն դրա գնահատականը, թեմայի նկատմամբ վերաբերմունքը՝ վերջում արտահայտված դատողությամբ, եզրակացությամբ:
3. **Փոխարինման փոխազդեցություն (մեկ ուրիշը հասցեատիրոջ փոխարեն)**. սա ենթադրում է, որ A-ի խոսքին՝ ուղղված B-ին պատասխանում է C-ը:
4. **Վերահասցեագրում**. սա ենթադրում է, որ հասցեագրումն սկզբում ուղղվում է նախ մեկ հասցեատիրոջը, ապա՝ մյուսին: A-ի՝ B-ին ուղղված խոսքին պատասխանում է C-ը, ապա խոսքն

առանցքային (ուղիղ և ձևական) և ցանցային (խմբային): Բազմախոսության գլխավոր թեման ողջ տեքստի իմաստային բովանդակությունն է կամ մակրոթեման: Այն իրագործվում է ենթաթեմաների միջոցով: [Патрышева 2013: 129]

ուղղում է B-ին, քանի որ համարում է, որ նրա կարծիքը կարևոր է:

5. **Հետաձգված փոխազդեցություն.** այս տիպի հասցեագրումը ստանում է ուշացած պատասխան, մի քանի այլ մասնակիցների խոսքից հետո:
6. **Համատեղ հասցեագրում (երկուսը մեկում).** սա ենթադրում է կոլեկտիվ պատասխան անհատական հարցմանը:
7. **Շղթայական փոխազդեցություն.** նմանատիպ փոխազդեցությունը կարելի է հանդիպել նաև երկխոսությունում, երբ խոսակիցների ասածները շարվում են իրարից հետո հաջորդաբար: Սակայն բազմախոսությունում շղթան լրացվում է բազմաթիվ խոսակիցների ասածներով:
8. **Էստաֆետային փոխազդեցություն.** սա ենթադրում է B-ին ուղղված A-ի հարցի վերաձևակերպումը B-ի կողմից: Կարծես B-ն վերցնում է էստաֆետը A-ից և փոխանցում է C-ին:
9. **Նախաձեռնող փոխազդեցություն (մեկը երկուսի փոխարեն).** Սա ենթադրում է, որ երկու հասցեատերերին ուղղված խոսքին արձագանքում է մեկը:
10. **Միջնորդավորված փոխազդեցություն.** այս պարագայում C-ն բացատրում է A-ի հարցի բովանդակությունը B-ին՝ հանդես գալով որպես միջնորդ:
11. **Կրճատված փոխազդեցություն.** նմանատիպ փոխազդեցությունը հանդիպում է հիմնական պիեսներում հեղինակի խոսքում կամ բազմակողմանի զրույցի տեսաձայնագրությունում: Սակայն այն հանդիպում է նաև երրորդ անձի առկայությամբ բազմախոսություններում: Խոսքով չարտահայտված մասնակցությունը կարող է արտահայտվել ոչ խոսքային միջոցներով:
12. **Ներառող փոխազդեցություն.** նմանատիպ փոխազդեցությունը ենթադրում է զրույցի մասնակիցների շարքում երրորդ անձի հանկարծակի ընդգրկումը: A-ի՝ B-ին ուղղված հարցին պատասխանում է C-ն՝ այս կերպ ընդգրկվելով խոսակցության մեջ:
13. **Աջակցող փոխազդեցություն.** այս փոխազդեցության պարագայում հասցեագրողներից մեկի նախաձեռնող խոսքային քայլին աջակցում է երկրորդ հասցեագրողի նախաձեռնող քայլը, որին պետք է հաջորդի հասցեատիրոջ ռեակցիան:

14. **Քողարկված փոխազդեցություն.** այս փոխազդեցության ժամանակ մի մասնակցին ուղղված խոսքը, որն առաջին հայացքից հղված է մի խոսակցին, ըստ էության, թաքնված կերպով ուղղված է մեկ ուրիշին:

Մենք դիտարկեցինք *BBC* հեռուստաընկերության *Newsnight* թոքշոուի 2017թ.-ի հունիսի 23-ի հաղորդումը *Has Britain changed since the Brexit vote?*:

Հաղորդավար Էմիլի Մեյթլիսը առաջնային հասցեագրողն է: Նա է կազմակերպում խոսքի փոխանցում է հաղորդման մյուս անդամներին՝ չորս հյուրին (Ջոնաթան Ֆրիլանդ, Քերի-Էն Մենդոսա, Թիմ Մարթին, Ռոբերտ Թոմբս): Հասցեագրման տեսակը **հիմնականում** ցանցային է՝ հաճախ ներառելով ուղիղ անվանական հասցեագրում:

Դիտենք հետևյալ օրինակը, որտեղ հաղորդավարը հյուրերին և քննարկման խնդիրը ներկայացնելուց հետո անվանապես դիմում է մասնակիցներից մեկին՝ Թիմ Մարթինին.

1. **Է. Մեյթլիս՝** *Is the optimism of the Brexiteers and the scepticism of the remainers? Where it was? Should we put those terms to bed once and for all? Joining me now, journalist Jonathan Freedland and Kerry Anne Mendoza -editor of the Canary - who both voted remain. Tim Martin - Chairman of Wetherspoons and Robert Toombs the historian who voted to leave the EU. It is a pleasure to have you all here. Tim, I am going to start with you because you wrote frequently for Wetherspoon news, I remember. You played as big a part, really, as anyone in this debate. Do you think you lead people, your customers, people who read Wetherspoon news to the right direction?*

Խոսքը հաջորդ մասնակցին փոխանցելու նպատակով հաղորդավարը կրկին անվանական հասցեագրմամբ դիմում է նրան.

2. **Է. Մեյթլիս՝** *Fair enough. Kerry-Ann, do you see yourself now as a reliever or would you say that the defining question is no longer whether we are in or out, do you feel that we have moved on?*

Ինչ վերաբերում է խոսքային փոխազդեցությունների տեսակներին, ապա կարելի է նշել, որ դիտարկած օրինակում հետևյալ տեսակներն են վերհանվել՝

Ա) Հաջորդիվ կարելի է դիտել **հաջորդական—գծային փոխազդեցություն**, երբ Է. Մեյթլիսի հարցին պատասխանում է Ռ.

Թոմսը, ապա Ք.-Է. Մենդոսան միանում է խոսակցությանը, և խոսակիցների ասույթները շարվում են իրար հետևից՝

Է. Մեյթլիս *Right. And there are these impish overtures from European leaders now saying that the door is still open, you know, saying that everyone is, I can be a dreamer, are they trying to stir up trouble? What do you hear of that? Or are they saying, you can, you can treat this still as a democracy and change your mind again? How do you read that?*

Ռ. Թոմս *Well I think the EU leaders, are thoroughly committed to the EU as an idea and it is difficult for them to understand that we might not be. So I think, The EU has a record of getting countries to change their minds once they have voted and that's why I think it is natural for them to think like -- that we like the Dutch, the French and the Danes we might change our mind. I mean, they are also trying to weaken the bargaining position of the government. They will not offer us any more than they have to. And That's why I think the danger of our present situation is this appearance of uncertainty. If you are uncertain, then the people who disagree with you are going to take advantage of it.*

Ք. Է. Մենդոսա *Do you think, Robert, that the key issue in most people's mind is that we have at a referendum on if we Brexit but no one has had a chance to vote on the Brexit that is actually gonna happen? The negotiations have already started, still with the British public completely in the dark about what Brexit looks like. Surely, shouldn't there be another Democratic intervention down the line? When people get to actually give that Brexit deal a mandate.*

Բ) Գնահատողական-եղանակավորող խոսքային քայլ:

Հաղորդավարը մասնակիցներից մեկի խոսքին գնահատական է տալիս մինչև խոսքը հաջորդ մասնակցին փոխանցելը: Հաջորդ օրինակում հաղորդավարը համաձայնում է հյուրի խոսքի հետ, ապա նոր դիմում հաջորդ հյուրին՝

Է. Մեյթլիս *Fair enough. Kerry-Ann, do you see yourself now as a reliever or would you say that the defining question is no longer whether we are in or out, do you feel that we have moved on?*

Ինչպես նաև այս դրվագում, որտեղ հաղորդավարը կրկին համաձայնում նշված մտքի հետ, ապա շարունակում թեման:

Զ. Ֆրիլանդ՝...*One of the most powerful things said was on the Leave campaign, the leave side, David Davis said our democracy has the right to change its mind, otherwise it is not a democracy.*

Է. Մեյթլիս՝ *Right. And there are these impish overtures from European leaders now saying that the door is still open, you know, saying that everyone is, I can be a dreamer, are they trying to stir up trouble? What do you hear of that? Or are they saying, you can, you can treat this still as a democracy and change your mind again? How do you read that?*

Գ) **Փոխարինման փոխազդեցություն.** հետևյալ օրինակում Ռոբերտ Թոմբսին ուղղված հարցին պատասխանում է Թիմ Մարթինը՝ այդ կերպ փոխարինելով իրական հասցեատիրոջը՝

Զ. Ֆրիլանդ՝ *But what's the alternative, Robert. That is to say that we get negotiations, get a terrible deal, anyway and we will just have to swallow it.*

Թ. Մարթին՝ *There is no terrible deal we can get, There is no terrible deal we can get, the worst deal you can get is to trade on World Trade Organisation.*

Դ) **Վերահասցեագրում:** Այս օրինակում Զ. Ֆրիլանդը խոսքն ուղղում է Թ. Մարթինին և Ռ. Թոմբսին, սակայն մինչ նրանք կպատասխանեն խոսք է ստանձնում Է. Մեյթլիսը, ապա դիմում երրորդ մասնակցին: Այս դրվագում վերահասցեագրմանը հաջորդում է նախաձեռնող փոխազդեցություն, որը կդիտարկենք ավելի ուշ՝

Զ. Ֆրիլանդ՝ *That's a, that's a massive difference, isn't it, between do you want to move house, yes, or do you want to move into this house.*

Թ. Մարթին՝ *I don't think it's a big difference.*

Զ. Ֆրիլանդ՝ *Once people decide to move house , it is a decision but they would not buy the next house without seeing it.*

Է.Մեյթլիս *But they did. They took that risk. You have to admit that people said, we haven't seen the house but we are moving. What you're pointing to now is still this sense of division very much in the country, and I am wondering if you think we're any closer to reconciliation now a year or whether you think, post that election it feels wider than ever.*

Ռ. Թոմբս՝ *I think it depends on getting decent terms, getting a deal that most people feel is acceptable. In that case, it seems to be that is the only thing that can bring about reconciliation.*

Ե) **Հետաձգված փոխազդեցություն** կարելի է դիտել հաջորդ օրինակում, երբ խոսողը անդրադառնում է ավելի վաղ արտահայտված մտքին՝

Ջ. Ֆրիլանդ՝ *I want to say... I agree but I want to say something about your national reconciliation point because in a funny way that was beginning to happen even on the Remain side.*

2) **Համատեղ հասցեագրման** մասին խոսելիս Է. Յակովլևան նշում է մեկ հասցեատիրոջն ուղղված հարցին երկու մասնակցի պատասխանը: Հետևյալ օրինակում հաղորդվարը նկատում է Ք.-Է. Մենդոսայի մեղմ դիրքը խոսակցության ընթացքում և կատակով նշում դա: Նրա խոսքին արձագանքում է ոչ միայն Ք.-Է. Մենդոսան, այլև Ջ. Ֆրիլանդը: Չնայած այն փաստին, որ մասնակիցներն արձագանքում են ոչ թե հարցի, այլ դիտողության, միևնույն է խոսքային փոխազդեցությունը հետևյալ օրինակում կարելի է որակել որպես համատեղ հասցեագրում, քանի որ, հետևելով Ի. Գոֆմանի պնդմանը, կարելի է նշել, որ հարակից զույգը ոչ միայն հարց ու պատասխանի տեսքով է արտահայտվում, այլև պնդումի և պատասխանի:

Ք.-Է. Մենդոսա՝ *I don't really... Maybe there is an element of hypocrisy happening on both sides, 'cause I think, you know, the Brexit...*

Է. Մեյթլիս՝ *You're being very consolatory tonight, Kerry-Ann. I haven't heard this side of you...*

Ք.-Է. Մենդոսա՝ *Ha, ha, you know....*

Ջ. Ֆրիլանդ՝ *Well, she's is a model of sympathy...*

Ք.-Է. Մենդոսա՝ *Uhm , I... You know... Contrary to popular opinion, Jonathan.*

Ե) **Շղթայական փոխազդեցություն**. այստեղ մասնակիցները հերթով կարճ գնահատողական դիտողություններով մասնակցում են հաղորդակցությանը՝

Թ. Մարթին՝ *There is no terrible deal we can get, There is no terrible deal we can get, the worst deal you can get is to trade on World Trade Organisation.*

Է. Մեյթլիս՝ *That's a very bad deal.*

Թ. Մարթին՝ *It is not a very bad deal. We trade with America, China, India...*

Ք.-Է. Մենդոսա՝ *44% of our experts aren't relying on America.*

Ը) **Էստաֆետային փոխազդեցություն** կարելի է դիտել հետևյալ դրվագում, երբ Զ. Ֆրիլանդը ԵՄ-ից դուրս գալու հետ կապված հնարավոր խնդիրների հարցն է բարձրացնում, իսկ Ք.-Է. Մենդոսան հարցը այլ ձևակերպում ուղղում է Թիմ Մարթինին՝

Ռ. Թոմբս՝...*All of our partners in the EU would say "well, look these people do not know what they want, give them a hard deal and they will vote to stay in which is what they'd really like. We don't control the terms of the outcome, of course, and hence to start saying that we have to vote on the outcome means that that we shall will almost certainly get a bad outcome. That's what I...*

Զ. Ֆրիլանդ՝ *What's the alternative, Robert? That's to say*

Ք.-Է. Մենդոսա՝ *Yeah, what deal d'we get?*

Զ. Ֆրիլանդ՝...*that we get negotiations, get a terrible deal, anyway and we'll just have to swallow it.*

Թ. Մարթին՝....*There is no terrible deal...*

Թ) **Նախաձեռնող փոխազդեցություն.** այս օրինակում հաղորդավարը դիմում է իր ձախ կողմում նստած երկու մասնակիցներին, որ կողմ էին քվեարկել Բրեքսիտին, սակայն հարցին պատասխանում է միայն Ռ. Թոմբսը, այսինքն՝ ստանձնում է նախաձեռնությունը՝

Է. Մեյթլիս՝ *You have to admit that people said, we haven't seen the house but we are moving. What you're pointing to now is still this sense of division very much in the country, and I am wondering if you think we're any closer to reconciliation now a year or whether you think, post that election it feels wider than ever.*

Ռ. Թոմբս՝ *I think it depends on getting decent terms, getting a deal that most people feel is acceptable. In that case, it seems to be that is the only thing that can bring about reconciliation. As EUP showed the number of people who are absolutely determined to stay in the EU, or to try to, is quite a small proportion of the population. The majority that were either for Leave or were at least lukewarm about the EU and weren't afraid of the economic consequences. If we get a solution that shows that the economic*

consequences are fairly OK, then I think that the fear and the idea of rejection of the idea of Brexit will largely disappear.

Ժ) **Միջնորդավորված փոխազդեցություն.** Հաղորդավարը խոսակցի միտքը վերածնակերպում է և փոխանցում մյուս մասնակցին՝ հանդես գալով որպես միջնորդ՝

Ք. Է. Մենդոսա՝ *We have bigger questions to answer. We've got Theresa May who called the election saying that she needed a mandate to be able to conduct these negotiations and she has lost that mandate and he said that the alternative was a Coalition of chaos, that is another broken promise we can answer. The.... the least now we have got chaos. the utter chaos, no Coalition. And you know, the Conservative government in recent years has delivered a zombie economy and now we have a zombie government clinging onto power with its cold dead hands. We are told by people around Theresa May that she has a profound sense of duty and I think if that is true, she needs to do the dutiful thing now and resign. Unlike the conservative...*

Է. Մեյթլիս՝ *So, this, Jonathan, your fellow Remainer, this has become a different debate. It is about values and it is austerity, it's not really about our connection to the EU any more. Does that worry you or delight you?*

Զ. Ֆրիլանդ՝ *I think, it comes, all roads come back to that. The fundamental question of our relationship with Europe. That's still going to be the dominant question partly because. We have a government committed to extricating us from the European Union on a timetable that now looks unrealistic. The climate of the country, I think, has changed in a very big way. I can think of two very practical examples. The first one is the election of Donald Trump which I think you've had too, in the introduction . If you imagine that choice posed now, leave the European Union and trade with our natural friend across the Atlantic, with America, that was one kind of argument when President Obama was in the White House, a completely different argument. People would react differently.*

Ի) **Կրճատված փոխազդեցության** օրինակ կարելի է համարել հետևյալ դրվագը, որին Ք.-Է. Մենդոսան խոսքային մասնակցություն չի ունենում, սակայն, քանի որ հարցն ուղղված է նրան և Զ. Ֆրիլանդին՝

որպես ԵՄ-ում Մեծ Բրիտանիայի մնալու կողմնակիցների, նա Զ. Ֆրիլանդի խոսելու ժամանակ գլխով հավանության նշան է անում՝ լռությամբ ցույց տալով իր համաձայնությունն արտահայտած մտքի հետ:

Է. Մեյթլիս՝ *Did Remainers feel they were pulling against the national mood? Was there an embarrassment before the election that has now changed? I mean, you would have been quiet about the fact that you were, maybe not quiet, but Remainers would not have felt comfortable saying that they still disagree.*

Զ. Ֆրիլանդ՝ *Yes, cause It would sound as if you are trying to turn the clock and defy the public opinion.... The election shows that everything is up for grabs. Everything is very fluid, there is a big argument*

Է. Մեյթլիս՝ *You've sort of seen the trajectory of history. D'you, d'you, do you see this as another turning point?*

Ռ. Թոմբս՝ *Yeah. This is unexpected. A sort of turning point or it could be a turning point. I mean, I think. the problem is of uncertainty. I mean, I agree, okay, Democracy is a wonderful thing. But thinking practice of what would happen if you were to have a second vote. All of our partners in the EU would say "well, look these people do not know what they want, give them a hard deal and they will vote to stay in which is what they'd really like. We don't control the terms of the outcome, of course, and hence to start saying that we have to vote on the outcome means that that we shall will almost certainly get a bad outcome. That's what I...*

Զ. Ֆրիլանդ՝ *What is the alternative, Robert....*

Լ) Ներառող փոխազդեցություն: Հետևյալ օրինակում մասնակից հյուրերից մեկը դիմում է հակառակ միտք արտահայտող մյուս հյուրին, սակայն հարողավարը նույն հարցը վերաձևակերպում է և ապա ուղղում երրորդ մասնակցին՝

Ք. Է. Մենդոսա՝ *Do you think, Robert, that the key issue in most people's mind is that we have at a referendum on if we Brexit but no one has had a chance to vote on the Brexit that is actually gonna happen? The negotiations have already started, still with the British public completely in the dark about what Brexit looks like. Surely, shouldn't there be another Democratic intervention*

down the line? When people get to actually give that Brexit deal a mandate.

Է. Մեյթլիս՝ *You, too, wouldn't object to that. Would you have voted to end?*

Ռ. Թոմբս՝ *The thing, the thing about another vote is, the people he decision was subcontracted to the people to say, do you want to stay or do you wanna leave? They voted to leave. They could not have known the exact terms and the government today can't know the exact terms. I think people make too much about what the exact terms will be.*

Խ) **Աջակցող փոխազդեցություն.** այս օրինակում առաջին հասցեագրողի նախաձեռնող քայլին հետևում է երկրորդի նախաձեռնող քայլը, որից հետո հասցեատերը պատասխանում է հարցին՝

Ք.-Է. Մենդոսա՝ *Do you know the thing, the key issue in people's mind at the moment is we've had a referendum on if we Brexit, but no one has had a chance to vote on the Brexit. That is actually gonna happen? The negotiations have already started, still with the British public completely in the dark about what Brexit looks like. Surely, shouldn't there be another Democratic intervention down the line? When people get to actually give that Brexit deal a mandate.*

Է. Մեյթլիս՝ *You, too, wouldn't object to that, would you?*

Թ. Մարթին՝ *The thing about another vote is, the people he decision was subcontracted to the people to say, do you want to stay or do you wanna leave?*

Ծ) Մեր դիտարկած բազմախոսությունում հաճախ կարելի է դիտել **քողարկված փոխազդեցություն,** քանի որ հաղորդման հյուրերը հակառակ երկու տեսակետների ներկայացուցիչներ են. Թ. Մարթինը և Ռ. Թոմբսը կողմ են արտահայտվում Բրիտանիայի՝ ԵՄ-ից դուրս գալուն, իսկ Զ. Ֆրիլանդը և Ք.-Է. Մենդոսան դեմ են: Հաղորդավարի հարցին պատասխանելիս որոշ դեպքերում թվում է, թե մասնակիցները դիմում են հասցեագրողին (դա արտահայտվում է նաև նրանց հայացքի ուղղությամբ), սակայն նրանց խոսքի բովանդակությունը հակասում է հակառակ տեսակետ ունեցող մասնակիցների խոսքին, և ուրեմն ոչ ուղիղ կերպով ուղղված է նրանց: Հետևյալ օրինակում հաղորդավարի՝ Բրիտանիայի ապագայի վերաբերյալ հարցին Զ. Ֆրիլանդը,

պատասխանելիս հայացքն ուղղում է է. Մեյթլիսին, սակայն, ըստ էության, հակառակվում է Ռ. Թոմբսին՝

Է. Մեյթլիս՝ *Do you feel as you sit here tonight that there is a bright future for this country, a sort of cohesive place that we are going? Briefly.*

Ռ. Թոմբս՝ *The only thing we have to fear is fear itself. There is no reason to think that the country is in a long-term crisis. I agree with Jim, there is no reason to think that the outcome of these negotiations will be economically damaging. If we stick to our, to our guns guns, perhaps that is a military metaphor, if we follow a sensible and decent negotiating strategy there is no reason to think we shouldn't have a good outcome. I just....*

Ջ. Ֆրիլանդ՝ *One of the big arguments after leave, after the referendum and during it was the notion that there were two tribes in this country, there was this sort of anyways the urban and cosmopolitan, and then there some ways that those who still have British values of community. We have seen in the last month in areas that would have been labelled classic in anyway areas, diverse multilingual, multicultural community those are real communities were people really pulled together, there is no monopoly on patriotism on community on British values on the somewhere side, on the anywhere side.*

Ինչպես կարելի է եզրակացնել վերլուծությունից, մեկ բազմախոսական թոք-շոուում ի հայտ են գալիս հասցեագրման և խոսքային փոխազդեցության զանազան տեսակներ: Չնայած այն հանգամանքին, որ մինչ այժմ հասցեագրման առավել մանրամասն վերլուծություն կատարվել է գերմաներենի հիման վրա, հասցեագրման նույն սկզբունքները կարելի է տարածել նաև անգլերենի վրա: Բացի դրանից անհրաժեշտ է նշել, որ առանց հասցեագրման վերլուծության հնարավոր չէ դիտարկել բազմախոսությունների առոզանական կաղապարումը: Ավելի խորը ուսումնասիրությունը կարող է ընդլայնել բազմախոսություններում հասցեագրումների կառուցվածքի և տեսակների մասին մեր ունեցած տեղեկատվությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Duncan S.J. Some Signals and Rules for Taking Turns in Conversation // *Journal of Personality and Social Psychology*. - 1972. - № 23. - P. 283-292.
2. Goffman E. (1976) “Replies and responses”, *Language in Society* 5: 257- Reprinted in Erving Goffman (1981a) *Forms of Talk*, University of Philadelphia: Pennsylvania Press, 257-313.
http://www.jstor.org/stable/4166887?seq=1#page_scan_tab_contents
3. Goffman E. (1978) “Response Cries”, *Language* 54(4): 787-815. Reprinted in Erving Goffman (1981b) *Forms of Talk*, Philadelphia: University of Pennsylvania Press, 78-123.
4. Nenasheva T. (2014). *Factors of Effective Communication in Polylogue*. National Research University Higher School of Economics, Russia, Nizhniy Novgorod, pp. 1-8. Scientific newsletter: Modern linguistic and methodical and didactic research. No. 4 (7). P. 76-83
5. Wiemann J. M., Knapp M. L. (1975). *Turn-taking in Conversations*. *Journal of Communication*. Vol. 25. - № 2. Pp. 75-92
6. Маковецкая М. (2012). *Роль просодии в реализации взаимодействия участников группового общения (на материале полилога-дискуссии)*. Автореферат. Москва.
7. Патрушева Л. (2013). *Функционально-стилистические особенности форума как жанра Интернет-коммуникации*. Вестник Удмуртского Университета. История и филология УДК 316.774 (045), Вып. 4, стр. 128-134.
8. Читахова Л. (2001). *Трилог как форма общения коммуникантов в современном французском языке*. Московский ордена дружбы народов государственный лингвистический университет. Москва.
9. Яковлева Э. Б. (2004). *Специфика немецкой полилогической речи. Монография*. Москва. Московский государственный лингвистический университет.

ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

1. BBC, Newsnight. *Has Britain changed since the Brexit vote?*
[<https://www.youtube.com/watch?v=UJD-b3508-w>]

МАНАН АГАБЕКЯН-ВИДЫ АДРЕССАЦИИ В ПОЛИЛОГЕ

При сравнении полилога и диалога наряду с другими особенностями полилога можно указать на следующие: более широкий спектр коммуникативных ролей и их непостоянство, а также непредсказуемость полилогов. Для просодического моделирования полилогов особое значение в полилоге имеют адрессации. Различные виды адрессации и речевого взаимодействия связаны с коммуникативными целями и ролями участников полилога.

МАНАН АГНАВЕКЯН- TYPES OF ADDRESSING IN POLYLOGUE

The comparison of dialogues and polylogues has revealed various differences of these two forms of speech activity. Some of the specific features of polylogues are: a wider range of communicative roles and their changeability, as well as the unpredictability of polylogues. Addressing is of central importance in prosodic modelling of polylogues. Various types of addressing and verbal interaction are defined by the communicative aims and roles of the participants.

**ՎԻԿՏՈՐԻԱՆԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԵՐԳԻԾԱՆՔԸ
«ՈՐՔԱՆ ԿԱՐԵՎՈՐ Է ԼՈՒՐՋ ԼԻՆԵԼԸ» ՊԻԵՍՈՒՄ**

ՍՈՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

Հիմնաբառեր՝ Օսկար Ուայլդ, երգիծանք, վիկտորիանական, դարաշրջան

Հայտնի է, որ պատմական տարբեր ժամանակաշրջաններ ունեցել են միայն այդ շրջանին հատուկ հասարակական, քաղաքական, կրոնական ավանդույթներ, մոտեցումներ և սովորույթներ: Գրեթե միշտ պատմաբանները փորձել են լուսաբանել հասարակական կյանքում առկա սովյալ ժամանակաշրջանին հատուկ թերությունները:

Բազմաթիվ պատմաբաններ կարծում են, որ պատմական տեղեկատվությունները կարող են բարելավվել միայն այն դեպքում, եթե դրանք դիտարկվեն արվեստի և գրականության ոլորտներից ձեռք բերված տեղեկությունով [Allan H. Pasco 2004: 01]:

Դարեր շարունակ մարդուն և հասարակությանը բնորոշ բազմաթիվ թերություններ ու արատներ հաճախ դարձել են երգիծական գրականության նյութ:

Ըստ «վիքիպեդիա» ազատ հանրագիտարանի՝ երգիծանքը (լատ.՝ satira), գրականության և արվեստի մեջ իրականության գեղարվեստական արտացոլման յուրահատուկ տեսակ է: Երգիծական ստեղծագործության հիմքում դրված է կոմիկականի գեղագիտական արտացոլումը:

Այս հոդվածում դիտարկում ենք Օսկար Ուայլդի երգիծանքը «Որքան կարևոր է լուրջ լինելը» կատակերգությունում, որը նա գրել է վիկտորիանական դարաշրջանում: Այդ ժամակաշրջանն ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսը: Այն բուրժուական հասարակության զարգացման շրջան էր, և «լրջությունը» կարևոր դեր էր խաղում այդ ժամանակվա Անգլիայում: Մեր նպատակն է հակիրճ վերլուծել Օսկար Ուայլդի կողմից մշակված վիկտորիանական շրջանի ընդունված նորմերը, այդ դարաշրջանում տեղ գտած հասարակական իդեալները, ինչպես նաև այն ոճական հնարները, որոնք հմտորոն կիրառվել են հեղինակի կողմից իր երգիծանքն արտահայտելու համար:

Վիկտորիանական դարաշրջան է համարվում Վիկտորիա թագուհու կառավարման դարաշրջանը, այսինքն՝ 1837-1901 թվականները: Այս դարաշրջանն անցի է ընկել մի շարք քաղաքական և սոցիալական համակարգերում կատարված կտրուկ փոփոխություններով: Նշված շրջանում հասարակության մեջ գերակշռել են միջին դասի արժեքները, որոնք դավանում էին ինչպես անգլիական եկեղեցին, այնպես էլ հասարակության բուրժուական վերնախավը:

Միջին դասի արժեքները և էներգիան վիկտորիանական դարաշրջանի բոլոր ձեռքբերումների հիմքն են հանդիսացել: Սակայն ընտանեկան կյանքի ծայրահեղության հասնող պուրիտանությունը վիկտորիանական դարաշրջանում ծնել էր մեղքի զգացում և կեղծավորություն:²

«Ուրքան կարևոր է լուրջ լինելը» Ուայլդի ամենահայտնի ստեղծագործություններից մեկն է դրամա, միաժամանակ՝ կատակերգություն լուրջ մարդկանց համար: Առաջին անգամ այն ներկայացվել է Լոնդոնի Սք. Ջեյմսի թատրոնում 1894 թ.-ին: Կատակերգության անվանումն իրենից ներկայացնում է բառախաղ Earnest բառը, որը թարգմանաբար նշանակում է «լուրջ ազնիվ, վեհանձն», համահունչ է Էռնեստ անունին, որով ներկայանում են պիեսի գլխավոր հերոսները: Ընդ որում, նրանք լուրջ մարդիկ չէին:

Ուշադրության կենտրոնում երկու հիմնական հերոսներ են՝ Ջոն Ուորդինգը և Ալջերոն Մոնկրիֆը: Ջոնը ապրում է գյուղում: Նա ստեղծում է իր կրտսեր եղբորը՝ Էռնեստին, Լոնդոն գնալու պատճառը հիմնավորելու համար: Լոնդոնում նա կարող էր վայելել արիստոկրատական շքեղությունը, մասնավորապես շքեղ ճաշկերույթները և գեղեցիկ կանաց միջավայրը: Այս փաստը հաստատում են Ջոն Ուորդինգի հետևեյալ խոսքերը «Երբ քաղաքում ես, կարող ես զվարճանալ, իսկ գյուղում զվարճացնում ես ուրիշներին: Դա չափազանց ծանծրայի է » [Wilde, Act One : 17]:

Լոնդոնում Ջոնը ապրում էր իր մտերիմ ընկերոջ՝ Ալջերոն Մոնկրիֆի տանը: Նա սիրահարվում է Ալջերոնի զարմուհուն՝ Գուադոլենին (Gwendolen), ում սերը կարողանում է գրավել, վերջինիս մեծ ցանկության շնորհիվ ամուսնանալու վստահություն ներշնչող

² British History: <http://www.laura-cenicola.de/brithist2/brithist/8-1-introduction-into-victorian-morality-what-exactly-was-the-victorian-era.html>

Էռնեստ անունով մեկին: Իր հերթին՝ Ալջերոնը մեկնում է գյուղ՝ Ջոնի բնակարան, որտեղ վերջինս ապրում էր իր զարմուհու, Սեսիլի և նրա դաստիարակչուհու՝ Միսս Պրիզմի (Miss Prism) հետ: Կեղծելով իր ինքնությունը՝ նա ներկայանում է որպես Էռնեստ՝ Սեսիլին գրավելու համար: Այս ստեղծագործության բովանդակությունը լի է ֆարսային և մելոդրամային տարրերով. երկու հերոսներն էլ իրենց ընտրյալներին դուր գալու համար իրենց դնում են Էռնեստի տեղը, բայց հետագայում դիմակագերծվում են: Վերջում պարզվում է, որ Ջոնը և Ալջերոնը հարազատ եղբայրներ են, և նրանցից մեկի անունն իրականում Էռնեստ է: Առաջին հայացքից՝ Ուայլդը այս պիեսում չի շոշափում ոչ մի լուրջ հարց, սակայն իրականում այնտեղ կարևոր դեր են զբաղեցնում ստորությունն ու կեղծ բարեպաշտությունը: Նա անգամ չի խուսափել ամուսնական և կրոնական թեմաներից:

Ուայլդը, լինելով հասարկության բարձր դասի հարզված անդամ, իր երգիծանքը կենտրոնացրել էր վերնախավի վրա: Այն ուղղված էր այդ շրջանում ցայտուն արտահայտված կեղծավորության բացահայտմանը: Այդ դարաշրջանի անգլիական հասարակությունը սիրահարված էր լուրջ լինելու գաղափարին: Վիկտորիանական հասարակության ամենավառ գաղափարներից մեկը լրջախոհ ապրելու գաղափարն էր: Հասարակությունն այնքան տարված էր լրջախոհության գաղափարով, որ պատրաստ էր վճարել դրա համար ցանկացած գին: Ըստ Richard D. Altick –ի վիկտորիանական շրջանի ամենօրյա բառապաշարում «հարգելի» և «լուրջ» բառերը գրեթե միշտ հավանության են արժանացել: Ավելի լուրջ դերակատարություն ունենալը, լուրջ լինելը, ավետարանական կրոնական հայացքները երազելի ձգտումներ էին: Ընդհանրապես լուրջ մարդը ընդդիմանում էր փառամոլությանը և անբարոյականությանը, անհանդուրժող էր անխոհեմության և անտարբերության հանդեպ [Altick 1973: 175]: Իդեալականի նկատմամբ այս գաղափարախոսությունը ճնշում էր անհատներին՝ ստիպելով նրանց երկակի կյանք ապրել: Սրանով կարելի է բացատրել Ուայլդի հերոսների կողմից ստեղծված էռնեստի կերպարը, որը նրանք ստեղծել էին կանանց գրավելու համար: Հետևյալ տողերը ցույց են տալիս, թե որքան ազդեցիկ էր էռնեստ անունը, որը, ինչպես ասացինք, անգլերենում նշանակում է «լուրջ»:

Գուանդոլենը նշում էր, «Ինձ միշտ զայթակղել է Էռնեստ անունով մեկին սիրելու գաղափարը: Ինչ-որ բան կա այդ անվան մեջ, որ վստահություն է ներշնչում: Երբ Ալջերոնը առաջին անգամ ինձ ասաց, որ ունի Էռնեստ անունով ընկեր, ես գիտեի, որ կսիրեմ ձեզ » [Wilde, Act

One : 26]: Կարելի է ասել , որ պիեսի գլխավոր երգիծանքը էոնեստ անվան կեղծման և այդ անվան շուրջ ստեղծված խառնաշփոթի մեջ է: Ծիշաղաշարժ է նաև այն , որ երկու կանանց համար էլ էոնեստ անունը մեծ դերակատարություն է ունենում ամուսանալու ցանկության իրականացման գործում:

Վիկտորիանական դարաշրջանում երգիծականքի թեմա է հանդիսացել նաև կրոնը: Ուայլդն իր հերոսների միջոցով ցույց էր տալիս, թե որքան կեղծ է նույնիսկ կրոնական հավատն արտացոլող վերաբերմունքը հասարակության կողմից: Լեդի Բրեքնելը (Lady Bracknell)-ը նշում է, որ քրիստոնեությունը ժամանակի և հատկապես փողի կորուստ է, սակայն ինչպես ցույց են տալիս այս տողերը, համարվում է շքեղություն: «Յուրաքանչյուր շքեղություն կարելի է գնել փողով, այդ թվում՝ մկրտությունը, որը շնորհվում է ձեզ , ձեր արտացավ և մտահոգ ծնողների կողմից» [Wilde, Act three: 92]:

Մեկ այլ լուրջ թեմա է հանդիսացել նաև ամուսնությունը: Ուայլդն այն ներկայացնում է որպես համաձայնագիր սոցիալական նմանատիպ կարգավիճակ ունեցող ընտանիքների միջև, որտեղ սերը և երջանկությունը դեր չեն խաղում: Դրա ապացույցն են Ալքերոնի այս խոսքերը «Լոնդոնում այն կանանց թիվը, որոնք սիրում են իրենց ամուսիններին, սկանդալային է» [Wilde, Act One: 20]: «Վիկտորիանական ժամանակաշրջանում տղամարդիկ և կանայք փնտրում էին իդեալական հարաբերություններ՝ հիմք ընդունելով հասարակության ակնկալիքները: Եթե տղամարդը կամ կինը չունեին այնպիսի հատկություններ, որոնք համապատասխանում էին վիկտորիանական հասարակության կողմից ընդունված նորմերին, հակառակ սեռը կարող էր համարել այդ անձին ոչ համապատասխան կողակից» [Felicia Appell 2013: 1]:

Ավելին, ամուսնության ավարտը կարող էր դիտվել որպես ազատություն ամուսնական կապանքներից: Այս են վկայում Lady Bracknell-ի հետևյալ խոսքերը.

«Ներեցե՛ք ուշացման համար, Ալքերոն, բայց ես ստիպված էի այցելել Lady Harbudy-ին: Ես նրան չէի հանդիպել նրա ամուսնու մահից հետո: Ես երբեք չէի հանդիպել այդքան կերպարանափոխված կնոջ: Նա քսան տարով երիտասարդացել էր» [Wilde, Act One: 23]:

Կարելի է նկատել, որ Ուայլդը իր հերոսներին ներկայացնում է որպես աննկուն էակներ, որոնք հոգում են միայն հարստության և ճոխ ընթրիքի մասին: Ալքերոնը բացառություն չէր: Ալքերոնի համար աննդամթերքն այնքան կարևոր էր, որքան գիտությունը և

բարեկամությունը: Այս են վկայում Ալքերոնի հետևեյալ խոսքերը. «Ես ատում եմ այն մարդկանց, որոնք լուրջ չեն վերաբերվում ուտեստներին: Դա չափազանց անթույլատրելի է նրանց կողմից:» [Wilde, Act One: 22]:

Գրականության մեջ համապատասխան մթնոլորտ ստեղծելու համար հեղինակները դիմում են բազում լեզվական և ոճական հնարների օգնությանը: Օրինակ՝ Վ.Պրոպան իր հայտնի աշխատության մեջ առանձնացնում է այդպիսի միջոցներից ու հնարները կալամբուրը (բառախաղ), պարադոքսը, իրոնիան (հեգնանք), բառապաշարը , երգիծական անունները և այլն [B. П р о п а н , Проблемы комизма и смеха 1976 : 146] :

Ուայլդը կիրառել է բազում ոճական հնարներ՝ իրեն հատուկ հմտությամբ: Իր երգիծանքի և հումորի ընդգծման համար նա գործածել է հեգնանքը, աննշան երևույթներին կարևորություն տալու համար՝ չափազանցությունը (հիպերբոլա): Այլ հնարներից կարելի է առանձնացնել նաև բառախաղը: Պիեսի հիմնական բառախաղը ներկայացված է նրա վերնագրում:

Ուայլդի սրամտությունը դրսևորվում է էռնեստ անվան երկակի կիրառման մեջ: Պիեսում այն գործածվել է որպես տղամարդու անուն և ածական՝ կերպարի լրջախոհությունը ներկայացնելու համար:

Եվ այսպես, ծանոթանալով վիկտորիանական դարաշրջանում ընդունված սովորույթներին և բարքերին, ինչպես նաև Օսկար Ուայլդի պիեսին՝ կարելի է ենթադրել, որ հեղինակը մի շարք առումներով ներկայացնում է վիկտորիանական ժամանակաշրջանի վերնախավի բացասական, պահպանողական և ռեպրեսիվ արժեքների մասին իր տեսակետը: Պիեսում ծաղրում են վիկտորիանական ավանդույթները և սոցիալական սովորույթները, ինչպես, օրինակ, ամուսնությունը և սերը: [Raby 1997: 169]:

Անշուշտ հեղինակն այդ ամենը ներկայացրել է իրեն հատուկ սրամտությամբ և հումորի մեծ զգացումով, ինչն էլ պիեսը դարձրել է հետաքրքիր և բարձրարժեք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Pasco, Allan. Literature as historical archive. new literary history, v.35. n. 3, summer , 2004.

2. ALTICK, R. Victorian People and Ideas. New York: W.W. Norton & Company, 1973,173.
3. Felicia Appell. Victorian Ideals: The Influence of Society's Ideals on Victorian Relationships , 2000, 1.
4. П р о п п В. Проблемы комизма и смеха, 1976,146 .
5. Peter, R. The Cambridge Companion to Oscar Wilde . Cambridge University Press, Oct 16, 1997, 169.
6. Wilde, O. The Importance of Being Earnest. Moscow, Progress Publishers. 1979.

СОНА АЙВАЗЯН - САТИРА ВИКТОРИАНСКОЙ ЭПОХИ В ПЬЕСЕ «КАК ВАЖНО БЫТЬ СЕРЬЕЗНЫМ»

В статье рассматривается работа Оскара Уайльда «Как важно быть серьезным». Основная цель статьи - проанализировать, как Уайльд высмеивает культурные нормы и ценности в викторианской эпохе. Он высмеивает брак, любовь и религию. В статье также представляться как Уайльд комментирует абсурдность неспособности признать разницу между важным и несущественным.

SONA AYYAZYAN - SATIRE ON THE VICTORIAN AGE IN THE IMPORTANCE OF BEING EARNEST

The article discusses Oscar Wilde's play -"The Importance of Being Earnest". The main purpose of the article is to analyze the way Wilde satirizes cultural norms and values in Victorian era. He mocks marriage, love and religion. The article also introduces how Wilde comments on the absurdity of inability to recognize the difference between the important and unimportant.

**ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻԻ «ՓՈՔՐԻԿԻ ՄԱՍԻՆ ՊԻԵՍԸ» ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ԹԱՄԱՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ Էդվարդ Օլբի, Փոքրիկի մասին պիես, պոստմոդերնիզմ, վոդևիլ, պոստվոդևիլ, գեղանկարիչ, տղա, աղջիկ, կին, տղամարդ, պիես

Սույն աշխատանքը նվիրված է 20-րդ դարի ամերիկացի ակնանավոր թատերագիր Էդվարդ Օլբիի 1998 թվականին բեմադրված «Փոքրիկի մասին պիես»-ի ուսումնասիրությանը պոստմոդերնիզմի համատեքստում: Երկու գործողությունից բաղկացած այս ստեղծագործությունը մեր աշխատանքում կփորձենք ներկայացնել որպես արևմտյան տարրերով պոստմոդերնիստական պիես և հեղինակի ստեղծագործական մեթոդի էվոլյուցիան բնորոշող կարևոր քայլ:

«Փոքրիկի մասին պիես»-ի վերնագիրը ենթադրում է երեխայի առկայությունը, սակայն հանդիսատեսը բեմում երեխա չի տեսնում: Փոքրիկի գոյության փաստը հարցական է, այն համարվում է պիեսի գլխավոր առանցքներից մեկը: Բեմում երևում է միայն փոքրիկի բարուրը, որը ներկայացման ավարտին բացելուն պես պարզվում է, որ դատարկ է: Սա մոլորության մեջ է գցում ոչ միայն գլխավոր հերոսներին՝ Տոլային և Աղջկան, այլ նաև հանդիսատեսին: Սակայն Է.Օլբին իր հարցազրույցներից մեկում նշել է, որ փոքրիկն իրականում գոյություն ունի:³

Հաշվի առնելով, որ պիեսը թարգմանված չէ հայերեն կամ ռուսերեն, նպատակահարմար ենք գտնում փոքր անդրադարձ կատարել այուժեին: Ինչպես վերևում նշվեց, երկու գործողությունից բաղկացած պիեսը պատմում է Աղջկա և Տոլայի մասին, որոնք ապրում են՝ առաջին հայացքից Եդեմը հիշեցնող մի վայրում: Այս կերպարների նախատիպն են Ադամն ու Եվան: Պիեսում առանցքային են սեռական հարաբերությունների մանրամասնությունները՝ միտված լինելով

³ Portantiere M. The Play about the Baby. Review. // Internet Resource. URL: www.theatremania.com/washington-dc-theater/reviews/04-2003/the-play-about-the-baby_3413.html (Last Accessed March 9 , 2017)

խորհրդանշելու՝ պատմության սկզբում միամիտ այս զույգի՝ անհանգստանալու ուրիշ պատճառ չունենալու փաստը: Հեղինակն ի սկզբանե որոշում կայացնելով բեմում ներկայացնել Վիկտորիանական ոճով կահավորված բնակարան՝ այնուհետև գերադասել է «մաքուր, որոշակի բնորոշումից զուրկ մի վայր, իսկ բեմում՝ միայն երեխայի խաղալիքներ»: ⁴ Սա մեր կարծիքով միտված է հանդիսատեսին մոլորության մեջ գցել գործողությունների վայրի վերաբերյալ՝ պահպանելով առաջին հայացքից առկա զուգահեռները Ադամի և Եվայի հետ:

Ինչպես գործողությունների վայրը, այնպես էլ պիեսի ժամանակը միանշանակ չեն: Իրենց մերկությամբ, բացահայտ բնական սեռական հակումներով և միամտությամբ մի կողմից ակնհայտ նմանություն կրելով Ադամին և Եվային՝ Աղջիկն ու Տղան մյուս կողմից խոսում են արդիական, 20-րդ դարին հատուկ թեմաներից՝ ակնարկելով դեպքեր և վայրեր, որոնք Եղեմում գոյություն ունենալ չեն կարող: Սա մեզ թույլ է տալիս եզրակացնելու՝ պիեսում առկա պոստմոդեռնիստական ժամանակային խախտումների փաստը:

Անուններից զուրկ պիեսը սկսվում է Աղջկա ծննդաբերությունից: Նա և Տղան ամուսնացած չեն, չնայած ապրում են միասին և փոքրիկ ունեն: Չնայած զույգի ով լինելը կամ դասային պատկանելությունը այդպես էլ անհայտ են մնում, սակայն Տղան վերհիշում է այն պահը, երբ նրանք հանդիպեցին.

«Տղա: ... Եվ ես մտածեցի. «Երբ նա արթնանա, եթե արթնանա, ես նրա կողքին կլինեմ, առաջին մարդը լինելով, որին նա կտեսնի: Նա ինձ կսիրի և կցանկանա: Նա իմ նշանակությունն է:

Աղջիկ: Շատ հաճելի է: Նրանց՝ քեզ իմ կողքին մնալ թույլ տալու պատրճառն իսկապե՛ս այն էր, որ դու ներկայացել էիր որպես իմ եղբայր:

Տղա: Այո, ես քեզ շատ էի ցանկանում, և եղբայրդ լինելը այդ ցանկությունը ավելի ուժգին դարձրեց:»⁵

Այստեղ տեսնում ենք մի քանի ակնհայտ ակնարկներ: Նախևառաջ, հեղինակն ակնարկում է հին հունական միթոսներում առաջին

⁴ Ehren C. Simonson R. Waah! Albee's OB Baby Disappears Sept. 1; Goat Planned for Spring 2002. // Internet Resource. URL:

www.playbill.com/article/waah-albees-ob-baby-disappears-sept-1-goat-planned-for-spring-2002-com-98388 (Last Accessed March 9, 2018)

⁵ Albee E. The Play about the Baby. The Collected Plays. Overlook Duckworth. NY. 2005. p. 480.

աստվածներին՝ Ջևահիր և Հերային, որոնք բացի ամուսիններ լինելուց նաև քույր և եղբայր էին՝ տիտան Քրոնոսի երեխաները: Հեփեստոսն ու Աֆրոդիտեն նույնպես լինելով ամուսիններ՝ ծնված էին նույն հորից՝ Ջևահից: Հին հունական դիցաբանությանը հատուկ էին քույրերի և եղբայրների միջև ամուսնությունները:

Մինչ Աղջիկը փոքրիկին կուրծքով է կերակրում, Տղան խնդրում է իրեն էլ մի փոքր սնել: Այսպիսով՝ պիեսում ակնհայտ է Ջ.Ֆրոյդի «Էդիպյան բարդույթ»-ի առկայությունը: Տղայի՝ Աղջկան որպես կին, մայր և քույր վերաբերվելով է պայմանավորված այն փաստը, որ նա Աղջկանից խնդրում է իրեն էլ կրծքով կերակրել: Այսպիսով մյուս ակնարկը՝ Աստվածաշնչյան առաջին կնոջ՝ Եվայի, Ադամի համար ոչ միայն կողակից, այլ նաև մայր և կին լինելն է: Քույր և եղբայր էին նաև Ադան և Կայենը: Մարդկությունն էլ, որպես նրանց սերունդներ, փաստացի միմյանց հետ արյունակցական կապի մեջ են: Այս տեսությանն անդրադառնալը, մեր կարծիքով, փաստում է հեղինակի՝ հոգեբանական դրամայի ժանրին դիմելու մասին:

Նրանց՝ բեմից հեռանալուց հետո են դուրս գալիս Կինն ու Տղամարդը, որոնց կերպարները, ի տարբերություն Աղջկա և Տղայի, 20-րդ դարին են պատկանում: Իրական մտադրությունները սկզբում անհայտ, նրանք խոսում են հանդիսատեսի հետ, դրվագային պատմություններ պատմում առօրյա կյանքից՝ փորձելով առաջացնել հանդիսատեսի ծիծաղը և հետաքրքրել նրան: Սա այս երկու կերպարներին դարձնում է ռեժիսորի օգնականներ: Ըստ հեղինակային ցուցումների՝ նրանք, հարցեր տալով հանդիսատեսին և ենթադրաբար ստանալով պատասխաններ, պետք է իմպրովիզի դիմեն:

Մենք համակարծիք ենք «Նյու Յորք թայմսի» լրագրող Բեն Բրենթլիի՝ պիեսի վոլդրվիլի տարրեր պարունակելու նկատառման հետ⁶, սակայն մեր կարծիքով պիեսն ավելի ճիշտ է դասել պոստ-վոլդրվիլյան ստեղծագործությունների դասին՝ հաշվի առնելով ժանրի որոշակի փոխակերպումները 20-21-րդ դարերում:

Պիեսի մասնատվածությունը, կերպարների հաղորդակցումը հանդիսատեսի հետ, նրանց անկապակցված պատմությունները, դրանց

⁶ Brantley B. Theater Review: Albee Laughing Dourly Ever After. // Internet Resource. URL:

<http://www.nytimes.com/2001/02/02/movies/theater-review-albee-laughing-dourly-ever-after.html?pagewanted=all> (Last Accessed March 9, 2018)

կատակերգական բնույթը բնորոշ են պոստ-վոդևիլի ժանրային տարրեր պարունակող ստեղծագործություններին:

Վոդևիլը 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի 30-ական թվականները ԱՄՆ-ում և Կանադայում տարածված թատերական ժանր էր, որն իրենից ներկայացնում էր միմյանց հետ կապ չունեցող, տարբեր ժանրերի պատկանող դրվագային ներկայացումներ՝ միասին խմբված և իրար հետևից խաղարկվող:⁷ Հետզհետե վոդևիլը տեղափոխվեց բեմից հեռուստատեսության: Դասական վոդևիլի ժամանակակից տարատեսակները համարվում են պոստ-վոդևիլյան՝ ինչպես օրինակ «Ուշ գիշերը Դևիդ Լետտերմանի հետ» կամ «Էդ Սալիվանի շրուն» հեռուստահաղորդումները:

Միմյանց հետ ամուսնացած չլինելով հանդերձ Կինը իր մենախոսություններից մեկի ընթացքում փորձում է Տղամարդու մոտ խանդ առաջացնել՝ պատմելով իր սիրեկաններից մեկի հետ կապի պատմությունը: Մեր կարծիքով՝ գրողն ակնարկ է կատարում գրականության մեջ հայտնի գեղանկարչի մասին ստեղծագործություններին՝ յուրօրինակ մեկնաբանություն տալով դրանց:

Künstlerroman-ը կամ Գեղանկարչի մասին վեպը ձևավորվել է դեռ XVIII դարում՝ որպես գերմանական ռոմանտիզմի ժանրերից մեկը: Գեղանկարչի մասին վեպերի գլխավոր հերոս է դառնում գեղանկարիչը: Վեպերում մեծ դեր է տրվում գեղանկարչի և հասարակության, արվեստի և կյանքի փոխհարաբերությանը:⁸ Թատրոնում գեղանկարչի մասին ամենահայտնի պիեսներից է Օսկար Ուայլդի 1891 թվականին գրված «Սալոմե» ստեղծագործությունը:⁹

Չնայած Է.Օլբրիի «Փոքրիկի մասին պիես»-ում արվեստագետի մասին պատմությունը չի համարվում գլխավոր առանցքը, սակայն, մեր կարծիքով, հեղինակն այս պատմությամբ իրար է միախառնել արվեստագետի մասին ստեղծագործություններին հատուկ հիմնական բովանդակային տարրերը, և արդյունքում պիեսը դարձել է մետատեքստ գեղանկարչի մասին ստեղծագործությունների համար: Կարելի է պիեսը

⁷ Stu' Trav S.D. No Applause – Just Throw Money: The Book That Made Vaudeville Famous. Farrar, Straus & Giroux. USA. 2006.

⁸ Զանիկյան Ա. Բնորոշի - Գեղանկարիչ - Արվեստ հարակցությունը Գոնկուրների «Մանեթ Սոլոմոն» և Զոլայի «Ստեղծագործությունը» երկերում. // Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ. գիտաժողովի նյութեր. Լուսաբաց հրատարակչություն. Երևան, 2016, էջ 116:

⁹ Stu' Wilde O. Salome. Beardsley A. Under the Hill. L. 1996.

համարել է Օլբիի փորձը՝ սեփական մեկնաբանությունը տալու գեղանկարչի մասին ստեղծագործություններին՝ պոստմոդեռնիզմի տեսանկյունից: Նա ծաղրում է գեղանկարչի՝ նմանատիպ վեպերում սովորաբար առաքինություն համարվող միամտությունը, և ներկայացնում է վերջինիս սիրուն անարժան բնորդուհուն՝ որպես իրականում գռեհիկ անձնավորություն:

Կինը պատմում է իր՝ Գեղանկարչի բնորդուհին, ապա՝ սիրուհին դառնալու մասին: Սակայն հոգնելով Գեղանկարչից՝ նա վերադառնում է իր մարմնամարզիկ սիրելեանի մոտ:

Ձևականորեն պահպանելով այս ստեղծագործություններին հատուկ՝ կյանք-արվեստ հակամարտությունը, հեղինակը հատկապես մեծագույն պաթոսով է նկարագրում բաժանման և դրան հաջորդած՝ Գեղանկարչի ինքնասպանության պատմությունը: Գռեհիկ Կինը վերջիվերջո ընտրում է ոչ թե արվեստը՝ գեղանկարչին, այլ կյանքը՝ ձգտելով նյութական բարիքների՝ աթլետիկ կազմվածքով մարզիկների, հաճույքների, զվարճանքների: Այսինքն, ինչպես ընդունված է այս ստեղծագործություններում՝ բնորդուհին տանում է գեղանկարչին կործանման: Չդիմանալով կնոջ «դավաճանությանը», Գեղանկարիչն ինքնասպան է լինում:

Կնոջ ողջ պատմության ընթացքում, Տղամարդը հանդիսատեսին հորդորում է չհավատալ Կնոջ խոսքերին, հետևաբար հեղինակը ընթերցողի դատին է թողնում պատմության իսկության որոշման խնդիրը:

Պիեսի երկրորդ գործողության ընթացքում, վերջապես բեմ են դուրս գալիս բոլոր չորս կերպարները: Ի տարբերություն Աղջկա և Տղայի, Կինն ու Տղամարդը տեղյակ են հանդիսատեսի ներկայության մասին՝ շարունակելով դիմել նրան: Այս գործողության հիմնական թեման փոքրիկի գոյության հարցն է: Սկզբում հայտարարելով, որ եկել են փոքրիկին ծնողներից վերցնելու նպատակով, երկրորդ գործողության ընթացքում Կինն ու Տղամարդը հետզհետե համոզում են ծնողներին, որ փոքրիկն իրականում երբեք էլ գոյություն չի ունեցել: Պիեսում առկա են սյուրռեալիզմի տարրեր: Կինն ու Տղամարդը խաղում են Աղջկա և Տղայի գիտակցության հետ՝ փորձելով ժխտել՝ փոքրիկի գոյության, զույգի միասին լինելու փաստը:

Փոքրիկի գոյության փաստը կրում է փիլիսոփական բնույթ՝ թույլ տալով մեզ պիեսը դասել նաև փիլիսոփայական դրամայի շարքին: Իրենց վնասելու փորձ կատարելու Տղայի մեղադրանքին Տղամարդը պատասխանում է. *«Ժամանակը լրացել է: Վերքեր երեխաներ, վերքեր:*

Եթե վերքեր չունենաք, ինչպե՞ս կիմանաք, որ ապրում եք: Ինչպե՞ս կհասկանաք, թե ով եք:»¹⁰

Այս խոսքերը պատկերացում են տալիս հանդիսատեսին Կնոջ և Տղամարդու ինքնության մասին: Նրանք եկել են երիտասարդ զույգին ստիպելու ճանաչել կյանքը: Տղան և Աղջիկն ապրում են ժամանակի զգացողությունից զուրկ մի վայրում, որտեղ սիրաբանվելուց բացի ուրիշ ոչնչի մասին չեն անհանգստանում: Փոքրիկին էլ նրանք սիրում, փաղաքշում և կերակրում են՝ ինչպես խաղալիքի, սակայն իրականում վերջինիս մեծանալուն պես պատրաստ չեն լինի նրա մասին հոգալու: Տղամարդու և կնոջ նպատակն է նրանց աչքերը բացել կյանքի բազմազանության վրա և ցույց տալ, որ այն միակողմանի չէ, ունի ինչպես լավ, այնպես էլ վատ կողմեր: Այդ վատ կողմերը շեշտելու համար են նրանք որոշում վերցնել փոքրիկին: Նրանց կարծիքով՝ միայն մարդուն հասցրած ցավը, վերքը և դրանից հետո մնացող սպին կարող են բանական էակին ստիպել կյանքին սթափ նայել: Աղջկա և Տղայի համար այդպիսի վերք է դառնում փոքրիկի կորուստը: Երբ վերջիններս խնդրում են իրենց մի փոքր էլ ժամանակ տալ՝ մնալու միամիտ, վայելելու կյանքը, Տղամարդը պատասխանում է՝ ժամանակը սպառվել է:¹¹

Տղամարդու և Կնոջ ինքնության վերաբերյալ ամենատրամաբանական տեսակետը, հավանաբար, այն է, որ նրանք Աղջկա և Տղայի ապագա «եսեր»-ն են, որոնք եկել են նրանց զգուշացնելու, ցույց տալու իրենց ապագան: Ընդհանուր առմամբ չբացառելով այս տեսակետը, մենք այնուամենայնիվ հակված ենք մեկ այլ մեկնաբանության: Առաջնորդվելով այն փաստով, որ Աղջկա և Տղայի համար նախատիպ են ծառայել Ադամն ու Եվան, մեր կարծիքով, կարելի է Կնոջն ու Տղամարդուն համեմատել գայթակղիչների հետ: Ինչպես հիշում ենք, Աստվածաշնչյան լեգենդում այս դերը վիճակված էր սատանայի կողմից ուղարկված օձին, որը համոզեց Եվային՝ փորձել իմաստնության ծառի խնձորը: Սրան էլ հետևեց նրանց անկումը և վտարումը Եդեմից: Ադամի և Եվայի համար «վերք» դարձավ թույլ տրված սխալը, ինչպես Աղջկա և Տղայի համար՝ փոքրիկի կորուստը: Երկու զույգերն էլ հնարավորություն ստացան ծանոթանալ իրական կյանքին: Աղջկա և Տղայի համար իրենց ստեղծած Եդեմը վերացավ՝ բախվելով

¹⁰ Albee E. The Play about the Baby. The Collected Plays. Overlook Duckworth. NY. 2005. p. 530.

¹¹ Albee E. The Play about the Baby. The Collected Plays. Overlook Duckworth. NY. 2005. p. 530.

իրականությանը: Երկու դեպքում էլ իրենց ուրույն դերը խաղացին գայթակղիչները, որոնք իրենց արարքներով բացեցին հերոսների աչքերը:

Կերպարներին փոխառելով Աստվածաշնչից՝ Է.Օլբին, այնուամենայնիվ, խուսափում է Աստծո գոյության հարցը շոշափելուց: Կրոնական և աթեիստական էկզիստենցիալիստները, ինչպես նաև դրանից բխող «աբսուրդի թատրոնի» հեղինակները, կողմ կամ դեմ արտահայտվելով, փաստացի ընդունում էին Աստծո թեման, մինչդեռ, մեր կարծիքով, Է.Օլբիի մոտեցումը այս թեմային պոստմոդեռնիստական է: Նախևառաջ, չհստակեցնելով կերպարների Աստվածաշնչից փոխառնված լինելը, Է.Օլբին, այնուամենայնիվ, ակնարկում է դրա մասին: Սակայն կերպարները կարող են վերաբերել նաև հին հունական դիցաբանությանը: Այսինքն, սա կրում է խաղային բնույթ, քանի որ ընթերցողն ինքը, փաստորեն, պետք է կռահի կերպարների ծագման մասին: Մյուս կողմից՝ նույնիսկ եթե կերպարների համար նախատիպ են եղել Ադամն ու Եվան, դրանով հեղինակի համար Աստծո գոյությունը առաջնային չի դառնում, քանի որ կերպարների ընտրությունը ոչ թե Աստծո գոյությանը անդրադառնալու միջոց է, այլ նրանց մարդկային որակները (միամտությունը) օգտագործելու ցանկություն: Այսպիսով, Է.Օլբին առաջնորդվում է ոչ թե կերպարների Աստվածաշնչյան բնույթով, այլ նրանց՝ 20-րդ դարի համատեքստ տեղափոխելու հնարավորությամբ:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ աբսուրդն այս պիեսում կրում է մեծ մասամբ իրավիճակային բնույթ: Այն լիովին կարելի է համարել պոստմոդեռնիզմի բաղկացուցիչ մաս, քանի որ պիեսում բացակայում են «աբսուրդի թատրոնի» համար կարևոր հարցերը՝ ընտրության ազատությունը և սահմանային իրավիճակը, որոնք թույլ կտային պիեսը դասել «աբսուրդի թատրոնի» ժանրին:

Այսպիսով, Է.Օլբիի 1998 թվականին գրված «Փոքրիկի մասին պիեսը» ժանրային սինթեզ է՝ իր մեջ ներառելով հոգեբանական, փիլիսոփայական, սոցիալական, սյուռեալիստական տարրեր, որը միախառնում է վոդևիլին ու Գեղանկարչի մասին ստեղծագործությունները: Պիեսում անժխտելի է աբսուրդի ազդեցությունը, որը կրում է իրավիճակային բնույթ, սակայն զուրկ լինելով ժանրային մի շարք յուրահատկություններից՝ թեմաներից և խնդիրներից, պիեսը չենք կարող դասել աբսուրդի թատրոնի շարքին: Հեղինակի այս պիեսը ամրապնդում է Է.Օլբիի տեղը ամերիկյան պոստմոդեռնիզմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Albee E. The Play about the Baby. The Collected Plays. Overlook Duckworth. NY. 2005.
2. Brantley B. Theater Review: Albee Laughing Dourly Ever After. // Internet Resource. URL: <http://www.nytimes.com/2001/02/02/movies/theater-review-albee-laughing-dourly-ever-after.html?pagewanted=all> (Last Accessed March 9, 2018)
3. Ehren C. Simonson R. Waah! Albee's OB Baby Disappears Sept. 1; Goat Planned for Spring 2002. // Internet Resource. URL: <http://www.nytimes.com/2001/02/02/movies/theater-review-albee-laughing-dourly-ever-after.html?pagewanted=all> (Last Accessed March 9, 2018)
4. Portantiere M. The Play about the Baby. Review. // Internet Resource. URL: www.theatremania.com/washington-dc-theater/reviews/04-2003/the-play-about-the-baby_3413.html (Last Accessed March 9 , 2017)
5. Trav S.D. No Applause – Just Throw Money: The Book That Made Vaudeville Famous. Farrar, Straus & Giroux. USA. 2006.
6. Wilde O. Salome. Beardsley A. Under the Hill. L. 1996.
7. Ջանիկյան Ա. Բնորոգիտի – Գեղանկարիչ – Արվեստ հարակցությունը Գոնկուրների «Մանեթ Սոլոմոն» և Ջուլայի «Ստեղծագործությունը» երկերում. // Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ. գիտաժողովի նյութեր: Լուսաբաց: Երևան: 2016:

ТАМАРА АНТОНЯН – «ПЬЕСА О РЕБЕНКЕ» ЭДВАРДА ОЛБИ В КОНТЕКСТЕ ПОСТМОДЕРНИЗМА

В статье рассматриваются жанровые особенности “Пьесы о ребенке” американского драматурга Эдварда Олби с точки зрения наличия в них особенностей эстетики постмодернизма. Пьесу можно рассматривать как философскую и психологическую драму, а также отнести к жанру пост-водевиля.

TAMARA ANTONYAN – EDWARD ALBEE’S “THE PLAY ABOUT THE BABY” IN THE CONTEXT OF POSTMODERNISM

The article touches upon some of the genre specifics of American playwright Edward Albee’s “The Play about the Baby”, which allows the author of the article to view it in the context of Postmodernism. The play can be classified as a psychological and philosophical drama and includes some post-vaudeville features.

**ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ՍԱԹԵՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԷԴՈՒԱՐԴ ՀԱՅԿԱԶՅԱՆ**

Հիմնաբառեր՝ գործոնների վերլուծություն, գործոնային հետազոտություն, գիտելիքի գնահատում, թեստային համակարգ, գծային ծրագրավորում, ընդհանրականություն, կորելացիոն գործակից:

Ուսուցման գործընթացը բնութագրվում է հոգեբանական և մանկավարժական գործոնների բարդ փոխազդեցությունների շարքով: Այդ շարքում օրինաչափությունների հայտնաբերումը գիտական հիմք է նախապատրաստում ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար և հեշտացնում սովորողների գիտելիքի գնահատումը:

Զգալի թվով ուսումնասիրություններ են նվիրված մասնագիտական ուսուցման համակարգում սովորողի ընկալման, աշխատասիրության և ֆիզիկական կարողությունների միջև կապերի առկայությանը և սովորողների գիտելիքի գնահատման հարցերին [Небылицин 1960]: Ստացված տվյալները, թույլ են տալիս բացահայտելու ուսուցման համակարգին և գիտելիքի գնահատման բաղադրիչներին բնորոշ կապերը: Չնայած գնահատման բաղադրիչները կատարելագործվել են, սակայն բազմաթիվ ուսումնասիրություններում կան էական սահմանափակումներ և հակասություններ, քանի որ փորձարկման պայմաններում հաշվի չեն առնվել մնացորդային գիտելիքների հետազոտման արդյունքները:

Ուսուցման և գիտելիքի գնահատման գործընթացներում առկա օրինաչափությունների հայտնաբերումը հնարավոր է իրականացնել միայն վիճակագրական մեթոդներով ստացված փորձարարական տվյալների հոգեբանական վերլուծության և համարժեք արդյունքների համադրմամբ [Петросян 2017]: Վերը նշված նպատակին հասնելու համար սոցիալական և հոգեբանա-ֆիզիոլոգիական ուսումնասիրություններում օգտագործվող վիճակագրական մեթոդների օգնությամբ ստացված բնութագրիչները անբավարար են:

Ուսուցման և գիտելիքի գնահատման համակարգերում գործոնային վերլուծությունների իրականացման խոչընդոտը պայմանավորված է հայրենական գրականությունում տեսական և մեթոդական հարցերի մեկնաբանման պակասով: Այս ոլորտում առկա աշխատանքները սահմանափակված են միայն կենտրոնամետ գործոնների հայտնաբերմամբ և ժամանակակից պահանջներին լիովին չեն համապատասխանում:

Տվյալ աշխատանքում փորձ է արվում առկա գործոնների հետազոտության միջոցով ուսուցման և գիտելիքի գնահատման համակարգերում հայտնաբերել ընդհանրական օրինաչափություններ: Հետազոտության ընթացքում անհրաժեշտ է լուծել տեսական և կիրառական խնդիրներ: Վերոնշյալ հանգամանքները համակարգվել և կատարելագործվել են գործոնների վերլուծության իրագործման խնդրի միջոցով: Նշված բնագավառի խնդիրները լուծելիս անհրաժեշտություն է առաջանում գործ ունենալ մեծ թվով տվյալների (թեստերի, գործընթացների) հետ, որոնց միջև հարաբերությունները ներկայացվում են կորելացիոն կապվածությամբ: Հետազոտությունների կատարման ընթացքում տվյալների կապվածության աստիճանի որոշումը իրականացվում է գործոնների վերլուծության մեթոդի օգնությամբ:

Գիտելիքի ստուգման և գնահատման տեխնոլոգիաներն են՝ բանավոր, գրավոր, խառը տիպի և էլեկտրոնային, հետևաբար առկա գործոններն էլ կարող են տարբեր լինել:

Բանավոր քննությունների անցկացման մոդելները հարմար են ընդհանրական սկզբունքների ձևավորման և հետազոտությունների իրականացման համար: Բանավոր քննությունների անցկացման ընթացքում առկա են հետևյալ թերությունները՝

1. Հարցատոմս
2. Խիստ, լուռ քննող
3. Կանխակալ քննող
4. Տարբեր հանձնաժողովներ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ հիմնականում խուճապի մեջ են հայտնվում “անհանգիստ” բնավորության տեր անձիք: Եթե նրանց հնարավորություն ընձեռվի ընտրություն կատարել անձանոթ դասախոսի և թեստի միջև, ապա նրանք կընտրեն թեստը, չնայած թեստերը նրանց համար ավելի սթրեսածին են: Թեստերի կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում մեկ թեմայից արագ անցում կատարել

այլ թեմայի, սահմանված ժամանակահատվածում ճիշտ պատասխանել առավել շատ քանակով հարցերի:

Այժմ մեծ տարածում է գտել թեստերի միջոցով գիտելիքի ստուգման և գնահատման տեխնոլոգիան, որը հակադրվում է հարցատոմսերով բանավոր քննությունների իրականացման և գնահատման տեխնոլոգիային: Թեստավորման համակարգում մենք չենք կարող գտնել այնպիսի հումանիստ և արդար քննող դասախոս, որը ներում է պատահական անճշտությունները, շտկում է հուզական վիճակը, պատկերացնում է ունեցած գիտելիքների խորությունը և հարցադրումները այն ձևով է մատուցում, որպեսզի օգնի քննության մասնակցին լիարժեք ներկայանալու:

Բանավոր քննությունների իրականացման և գնահատման տեխնոլոգիան պետք է պահպանել և թերի կողմերը լրացնել թեստավորման միջոցով:

Բանավոր քննությունների անցկացման թերությունները և առաջացած խնդիրները, որոնք լուծման կարիք ունեն, հետևյալն են՝

1. Քննողի սուբյեկտիվիզմը,
2. Պատասխանների ընթացքում գնահատման ստանդարտացումը,
3. Սանդղակավորումը,
4. Տոմսերի ընտրության համակարգը:

Գրավոր քննությունների անցկացման և գնահատման տեխնոլոգիան ինքնին նույնպես թեստավորում է: Եվրոպական շատ համալսարաններում բանավոր քննությունների պակասը փորձում են լրացնել գիտելիքի գրավոր ձևով ստուգումների միջոցով: Գրավոր քննությունների անցկացման թերությունները և առաջացած խնդիրներն են՝

1. Գիտելիքների նեղ մասնագիտական շերտը,
2. Փոքր գիտելիքների բազայից ինֆորմացիա քաղելու վտանգի հավանականությունը,
3. Քննության ընթացքում ծածկաթերթիկների օգտագործումը,
4. Ստուգման աշխատատարությունը և գնահատման չափորոշիչների անկայունությունը:

Գրավոր քննությունների անցկացման ընթացքում թվարկված թերությունները հանգեցնում են այն մտքին, որ նույնիսկ բարեխիղճ և բարձր կազմակերպվածության դեպքում հանդիպում են արդյունքների վրա ազդող լուրջ սահմանափակումներ: Նկատվող

սահմանափակումները կարելի է վերացնել թեստային գնահատման միջոցով:

Գրավոր և թեստային համադրված ստուգման և գնահատման իրականացումը նպատահարմար է իրականացնել տարբեր ժամանակահատվածներում՝ հաշվի առնելով այն գործոնները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդել են գնահատման գործընթացի վրա:

Խառը տիպի և էլեկտրոնային ստուգման և գնահատման ընթացքում թվարկված թերությունները ընդհանրական են բանավոր և գրավոր քննությունների համար, իսկ **էլեկտրոնայինի** դեպքում ավելանում է նաև անորակ կապի առկայությունը:

Թեստերը և թեստավորումը տարբեր սովորողների մոտ տարբեր զգացողություններ են առաջացնում: Նույնիսկ նույն անձնավորության մոտ այդ զգացողությունը պայմանավորված է իրավիճակով և թեստավորման նյութով: Թեստավորման ընթացքում ճիշտ գործելու տարբերակները այնքան էլ շատ չեն: Հզոր ավտոմատ համակարգերի առկայության դեպքում, տրանսպորտի, մարդկանց, ինֆորմացիայի և այլ բնագավառներում հոսքերի կառավարման խնդրի իրականացման համար թեստերի և նրանց կիրառելիության իմացությունը դառնում է անհրաժեշտություն: Թեստավորումը թույլ է տալիս պատասխանատու աշխատանքների կատարման թույլատրել միայն մասնագետներին, այսինքն տվյալ ժամանակահատվածում չթույլատրել կյանքին և առողջությանը խոչընդոտ հանդիսացող աշխատանքների կատարում:

Թեստերի միջոցով իրականացվող գիտելիքի գնահատման ժամանակ գործոնների վերլուծության համար որպես նախնական տվյալներ հանդես են գալիս թեստերի միջև եղած հարաբերակցությունների կորելյացիոն զանգվածի տարրերը: Հետազոտության արդյունքում հայտնաբերվում են այն հիմնական գործոնները, որոնք հանդես են գալիս թեստերի միջև եղած կապվածության հիմքում: Յուրաքանչյուր թեստի ընտրությունը պատահական է: Գործոնների վերլուծության կենտրոնամետ և գլխավոր առանցքների մեթոդների օգնությամբ հիմնավորվում է, որ որոշ խմբային գործոնների և թեստերի շեղումները կարող են կախված լինել ինչպես գործոնների խմբերից, այնպես էլ մեկ գործոնից [Небылицин 1964]:

Թեստի շեղման վրա բացի խմբային գործոններից ազդում են յուրահատուկ S և չափման սխալների e գործոնները: Գործոնների վերլուծության ընթացքում հայտնաբերվում են թեստերում կամ

հարցաշարերում առկա կապվածությունները: Թեստերի քանակը, որոնք ներկայացված են աղյուսակի տողերում պետք է լինի ավելին քան գործոնների քանակը, որոնք ներկայացվում են սյուններում: Ընդհանրապես, գործոնների քանակը չպետք է գերազանցի թեստերում կամ հարցաշարերում ընդգրկված հարցերի քանակին: Գործոնային զանգվածի սյունների քանակը հավասար է կորելացիոն զանգվածի ունեցող [Небылицин 1964]:

Աղյուսակ 1-ում ներկայացված է թեստերի օգտագործման արդյունքում խմբային գործոնների հայտնաբերման օրինակ:

Աղյուսակ 1

Թեստեր	Խմբային գործոններ			
	Տեսական գիտելիքներ	Գործնական գիտելիքներ	Ընկալողականություն	Մնացորդային գիտելիքներ
Թեստ 1	1	0	1	0
Թեստ 2	1	1	0	1
Թեստ 3	0	1	0	1
Թեստ 4	1	0	0	0
Թեստ 5	0	1	0	1
Թեստ 6	1	0	1	1
Թեստ 7	0	1	1	0

Աղյուսակ 1-ից երևում է, որ 4-րդ թեստում ներկա է ազդեցության մեկ գործոն, 5 և 7 թեստերում՝ երկու գործոններ, 1, 2, 6 թեստերում՝ երեք գործոններ, 3 թեստերում՝ 4 գործոններ:

Աղյուսակ 2-ում ներկայացված է Աղյուսակ 1-ում ընդգրկված թեստերի կապվածության կորելացիոն գործակիցները:

Աղյուսակ 2

	Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	Թեստ 5	Թեստ 6	Թեստ 7
Թեստ 1	1.000						
Թեստ 2	-0.577	1.000					
Թեստ 3	-1.000	0.577	1.000				
Թեստ 4	0.577	0.333	-0.577	1.000			

Թեստ 5	-1.000	0.577	1.000	-0.577	1.000		
Թեստ 6	0.577	-0.333	-0.577	0.333	-0.577	1.000	
Թեստ 7	0.000	-0.577	0.000	-0.577	0.000	-0.577	1.000

Աղյուսակ 2-ից երևում է, որ ուժեղ ուղիղ գծային կապ կա 3 և 5 թեստերի միջև, ուժեղ հակադարձ գծայի կապ կա 1 և 3, 1 և 5 թեստերի միջև, թույլ ուղիղ կապ կա 1 և 4, 1 և 6, 2 և 3, 2 և 5, թեստերի միջև, թույլ հակադարձ կապ՝ 1 և 2, 2 և 6, 3 և 4, 3 և 6, 4 և 5, 4 և 7, 5 և 6, 6 և 7 թեստերի միջև, 1 և 7, 3 և 7, 5 և 7 թեստերի միջև կապ չկա, 2, 3 և 5 թեստերի միջև կա թույլ ուղղակի կապ, 3 և 7 թեստերի միջև կա թույլ հակադարձ կապ, 3 և 4 կապը կարելի է անտեսել 2 և 4, 2 և 6, 4 և 6 թեստերի միջև: Ներկայացված թեստային համակարգում ուսանողի վերջնական գնահատականին ավելի շատ մասնակցում են 1, 3 և 5 թեստերը: Մարդկային տրամաբանությունը հետազոտողների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում անձերի տեսությունը, որը հոգեբանությունում իրականացնում են այսպես կոչված «Q» տեխնիկայի օգնությամբ [Шмелева 2013]: Այն տարբերվում է «R» տեխնիկայից՝ ինտերկորելացիոն աղյուսակի ստեղծմամբ: Կորելյացիայի գործակիցները հաշվում են ոչ թե թեստերի միջև, այլ թեստավորվողների միջև: Ինտերկորելացիոն աղյուսակի մշակումից հետո ստացվում է ոչ թե թեստերի խմբավորում ըստ որոշակի գործոնի, այլ թեստավորվողների խմբավորում: Իսկ թեստավորվողների խմբավորումը մեծ աջակցություն է լսարանում աշխատանքների ճիշտ կազմակերպմանը: Գործոնային մշակման առաջարկված մեթոդի առավելությունը ակնհայտ է, բայց մեծ ընտրանքների դեպքում հաշվարկների քանակը թեստավորվողների քանակի նկատմամբ քառակուսի անգամ մեծանում է:

Գործոնների հետազոտման բնագավառում հետաքրքիր ներդրում է կատարել ֆին հոգեբան Ահմավաարան [Ahmavaara 1954]: Նրա աշխատանքները հիմնականում նվիրված են գործոնային հետազոտություններում ստացված տվյալների կայունությանը, այսինքն գործոնները հաշվարկման տարբեր պայմաններում փոփոխություն չեն կրում:

Գործոնները կարող են լինել ինչպես անկախ, այնպես էլ կախյալ: Գործոնային զանգվածի տարրերը կոչվում են գործոնների կշիռներ: Ապացուցված է, որ անկախ օրթոգոնալ գործոնների համակարգում

կշիռները մեկնաբանվում են որպես ներկայացված թեստերի գործոնների կորելացիոն գործակիցներ:

Գործոնների հետազոտման հիմնական թեորեմը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R = F * F^T, \quad (1)$$

որտեղ F – գործոնային զանգվածն է, F^T –ն F -ի անկյունագծի նկատմամբ տարրերի փոխատեղված զանգվածն է, իսկ R – վերջնական կորելացիոն գործակիցների զանգվածն է: Գործոնների հետազոտություններում ներկայացված (1) հավասարումում հայտնի է R զանգվածը, իսկ F և F^T զանգվածները անհայտ են: Հավասարման լուծումը կարելի է ստանալ անվերջ քանակի մեթոդներով: Սովորաբար, այն ենթարկվում է նախնական մշակման, որպեսզի ստացված արդյունքները դառնան շոշափելի: Ներկայացված $R = F * F^T$ (1) հավասարումը հնարավորություն է տալիս ստուգել հաշվարկների ճշգրտությունը: Թեստի օգնությամբ փորձարկման արդյունքները սովորաբար լինում են պատահական մեծություններ և վերլուծության ընթացքում է, որ դրսևորվում են փորձարկվողների անունները:

Պատահական մեծությունների հիմնական բնութագրիչը դիսպերսիան է: Նրա միջոցով է գնահատվում պատահական մեծությունների ցրվածության աստիճանը միջին արժեքի նկատմամբ:

Դիցուք, թեստավորման արդյունքում ստացվել է $\xi = \{\xi_1, \xi_2, \dots, \xi_n\}$ պատահական մեծություններ, որոնց

մաթեմատիկական սպասումը (միջինը) $\bar{\xi}$ -ն է, իսկ դիսպերսիան σ^2 : Այդ

դեպքում $\eta_i = (\xi_i - \bar{\xi}) / \sigma$ պատահական մեծությունների մաթեմատիկական սպասումը կլինի 0, իսկ դիսպերսիան՝ 1: Այս ձևափոխությունը հնարավորություն է տալիս մեկ ընդհանրական միավորների համակարգում գնահատել տարաբնույթ հետազոտությունների արդյունքներ [Հայկազյան 2017]:

Օրթոգոնալ համակարգերում գործոնի կշռի քառակուսին տալիս է դիսպերսիայի այն մասը, որը որոշվում է տվյալ գործոնով: Թէրստոնի կողմից մշակված գործոնների տեսությունում, նորմավորված չափումների դիսպերսիան որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$w_{i_1}^2 + w_{i_2}^2 + \dots + \Lambda w_{i_m}^2 + S_i^2 + e_i^2 = 1 \quad (2)$$

որտեղ $W_{i_1}, W_{i_2}, \Lambda, W_{i_m}$ i - րդ թեստի գործոնային կշիռներն են, S_i - ն i -րդ թեստի առանձնահատուկ գործոնի կշիռներն է, e_i - ն չափումների սխալների միջին քառակուսային շեղումն է [Thurston 1947]: Նորմավորված չափումների դիսպերսիան հավասար է 1-ի:

S_i - ն i - գործոնի քառակուսին տվյալ թեստի առանձնահատուկ դիսպերսիան է, որը կախված չէ գումարային այլ բաղադրիչներից: e^2 – դիսպերսիան առաջանում է հաշվարկների, փորձարարական և պատահական սխալների կուտակման արդյունքում և փոխկապակցվածություն չկա մնացած դիսպերսիաների հետ:

Ներկիլիցինի աշխատանքներում հանգամանորեն ներկայացված են գործոնային հետազոտման կենտրոնամետ և հիմնական անկյունագծային մեթոդները [Небылицин 1960, 1964]: Սույն աշխատանքում ներկայացված է մեկ այլ մոտեցում, որն ապահովում է գործոնների առավելագույն կապվածությունը:

Դիցուք կան խմբային գործոններ և այդ գործոնների քանակը տրված է աղյուսակ 1-ում: Ընտրել այնպիսի բազիսային համակարգ, որում ընդհանրականությունը լինի առավելագույնը: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

1. Հաշվել կորելացիոն զանգվածը (Աղյուսակ 2),
2. Դրականացնել կորելացիոն զանգվածի բոլոր տարրերը (Աղյուսակ 3),

Աղյուսակ 3

	Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	Թեստ 5	Թեստ 6	Թեստ 7
Թեստ 1	1						
Թեստ 2	0.57735	1					
Թեստ 3	1	0.57735	1				
Թեստ 4	0.5	0.5	0.5	1			
Թեստ 5	1	0.57735	1	0.5	1		
Թեստ 6	0.57735	0.33333	0.57735	0.5	0.57735	1	
Թեստ 7	0	0.57735	0	1	0	0.57735	1

3. Զրոյացնել գլխավոր անկյունագծի բոլոր տարրերը, իսկ բացակաները լրացնել գլխավոր անկյունագծի նկատմամբ համաչափ տարրերով (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

	Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	Թեստ 5	Թեստ 6	Թեստ 7
Թեստ 1		0.57735 2	1	0.5	1	0.57735	0
Թեստ 2	0.57735		0.57735	0.5	0.57735	0.33333	0.57735
Թեստ 3	1	0.57735		0.5	1		
Թեստ 4	0.5	0.5	0.5		0.5	0.5	1
Թեստ 5	1	0.57735	1	0.5		0.57735	
Թեստ 6	0.57735	0.33333	0.57735	0.5	0.57735		0.57735
Թեստ 7	0	0.57735	0	1	0	0.57735	

Գործոնների բազիսային վեկտորները հայտնաբերելու համար օգտվենք գծային ծրագրավորման խնդիրների լուծման մոդելներից: Աղյուսակ 5-ում ներկայացված են X_{ij} փոփոխականները, որոնք կարող են ընդունել միայն 0 կամ 1 արժեքներ:

Աղյուսակ 5

	Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	Թեստ 5	Թեստ 6	Թեստ 7
Թեստ 1	X11	X12	X13	X14	X15	X16	X17
Թեստ 2	X21	X22	X23	X24	X25	X26	X27
Թեստ 3	X31	X32	X33	X34	X35	X36	X37
Թեստ 4	X41	X42	X43	X44	X45	X46	X47
Թեստ 5	X51	X52	X53	X54	X55	X56	X57
Թեստ 6	X61	X62	X63	X64	X65	X66	X67
Թեստ 7	X71	X72	X73	X74	X75	X56	X77

Խնդիրը լուծվում է հետևյալ սահմանափակումների դեպքում՝

$$X_{ij} \geq 0, X_{ij} \leq 1, \sum_{i=1}^7 X_{ij} \leq 1, \sum_{j=1}^7 X_{ij} \leq 1, \sum_{i=1}^7 \sum_{j=1}^7 X_{ij} = 4 \text{ գործոնների}$$

քանակ,

$$\text{իսկ } L(X_{11}, X_{12}, \dots, X_{77}) = \sum_{i=1}^7 \sum_{j=1}^7 |r_{ij}| \cdot X_{ij} \rightarrow \max \text{ նպատակային ֆունկցիան}$$

ապահովում է 4 գործոնների կապվածություն առավելագույն մեծությունը:

Օգտագործելով գծային ծրագրավորման խնդիրների համար նախատեսված Solver կիրառական ծրագրերի փաթեթը՝ ստանում ենք հետևյալ աղյուսակը

Աղյուսակ 6

	Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	Թեստ 5	Թեստ 6	Թեստ 7	ՍՁՄ	ՍՆ	ՍԱՄ
Թեստ 1	0	0	0	0	1	0	0	1	<=	1
Թեստ 2	0	0	0	0	0	0	0	0	<=	1
Թեստ 3	1	0	0	0	0	0	0	1	<=	1
Թեստ 4	0	0	0	0	0	0	1	1	<=	1
Թեստ 5	0	0	1	0	0	0	0	1	<=	1
Թեստ 6	0	0	0	0	0	0	0	0	<=	1
Թեստ 7	0	0	0	0	0	0	0	0	<=	1
ՍՁՄ	1	0	1	0	1	0	1			
ՍՆ	<=	<=	<=	<=	<=	<=	<=			
ՍԱՄ										
Բնութագրիչների քանակը								4	=	4
Նպատակային ֆունկցիայի արժեքը								4		

Աղյուսակ 6-ում ստացված արդյունքներից հետևում է, որ նշված թեստային համակարգում 4 գործոնների համար ընդհանրություն են ապահովում 1, 3, 4 և 5 թեստերը (ՍՁՄ՝ սահմանափակումների ծախմասը, ՍՆ՝ սահմանափակումների նշանը, ՍԱՄ՝ սահմանափակումների աջ մասը):

Թեստային համակարգը իրեն շատ լավ դրսևորեց հումանիտար և այնպիսի առարկաների գնահատման իրականացման ընթացքում, որոնցում հիմնական գաղափարները առընչվում են սահմանումների, կառուցողական կանոնների կամ օրենսդրական նորմերի հետ: Սակայն բնագիտական առարկաների քննությունների իրականացման ընթացքում թեստային համակարգի առավելությունը բավականին նվազ է:

Ուսումնական հաստատությունները ձգտում են իրականացնել տարաբնույթ և փոփոխապակցված միջոցների մի ամբողջականության ուսումնասիրում, վերլուծում, դասակարգում և որոշումների կայացում՝ բարձորակ և արդիական ուսումնական գործընթաց կազմակերպելու, ներքին և արտաքին աշխատաշուկաներում մրցունակ մասնագիտական

կադրեր պատրաստելու ուղղությամբ: Նման համալիր ուսումնասիրություն կատարելու և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ է ընտրել ուսումնական հաստատության առկա իրավիճակի գնահատման մեթոդ և գործոն մեխանիզմներ, որոնք թույլ կտան հնարավոր սեղմ ժամկետներում իրականացնել կրթական համակարգի գործընթացների քանակական գնահատականները [Ստակյան 2016]:

Վերոնշյալ գործոնային վերլուծություն իրականացվել է նաև ԵՊԼՀ անգլերեն լեզվի 50 թեստերի վերաբերյալ՝ թվով 11 ուսանողների արդյունքների համադրության միջոցով: Հետազոտություններ են կատարվել ոչ միայն թեստավորվողների պատասխանների միջև առավել ընդհանրականությունների հայտնաբերման, այլև թեստերի կապվածության ուղղությամբ:

Թեստավորվողների պատասխանների ընդհանրականության հետազոտությունը կատարվել է երկու տարբերակների համար՝ ըստ զույգերի քանակի աճման և բոլորը-բոլորի հետ: Ստացվել են հետևյալ տվյալները:

Թեստավորվողների պատասխանների ընդհանրականությունն ըստ զույգերի քանակի աճման՝ ներկայացված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Զույգերի քանակը	Ընդհանրության կշիռը	Ընդհանրություն ապահովող զույգերի քանակը	Ընդհանրությունը տոկոսներով
1	0,436	1	43,57%
2	0,823	2	41,16%
3	1,146	3	38,21%
4	1,444	4	36,10%
5	1,703	5	34,05%
6	1,864	6	31,06%
7	1,977	7	28,24%
8	1,977	7	24,71%
9	1,977	7	21,97%
10	1,977	7	19,77%
11	1,977	7	17,97%

Տվյալ առարկայից, տվյալ ժամանակահատվածում թեստավորվող զույգերի պատասխանների ընդհանրականությունը չի գերազանցում 43,57%-ը: Թեստավորվողների քանակի ավելացման հետ նվազում է պատասխանների ընդհանրականությունը: Դա պայմանավորված է նրանով, որ թեստերի քանակը ավելի շատ է, քան թեստավորվողներինը: Զգալի քանակով թեստավորվողների դեպքում, եթե թեստերի քանակը չի մեծանում, պետք է ակընկալել ընդհանրականության մեծացում:

Թեստավորվողների պատասխանների ընդհանրականությունը ըստ բոլորը-բոլորի նկատմամբ կազմում է 48%, որի տարբերությունը ընդհանրական միջինի նկատմամբ չնչին տոկոս է կազմում:

Թեստերի կապվածության վերաբերյալ ստացել են հետևյալ արդյունքները.

1. Չկային թեստեր որոնք ամբողջությամբ պատասխան չեն ունեցել:
2. Երկու 5 և 16 թեստերում բոլոր պատասխանները ճիշտ էին և նրանց առկայությունը ավելորդ է հետազոտությունները ավելի մանրակրկիտ իրականացնելու համար: Այդ պատճառով՝ նշված երկու թեստերը առանձնացվել են և հետազոտությունները շարունակվել մնացած թեստերի արդյունքներով:
3. Չորս զույգ թեստերում 1 և 19, 10 և 43, 24 և 31 կա ուժեղ գծային կախվածություն և կորելացիոն գործակիցը $|r|=1$ է: Նշված ութ տարբեր թեստերի բաղադրիչները կազմում են առաջին գործոնը:
4. Երկու զույգ թեստերում՝ 17 և 33, 13 և 42 առկա է ուժեղ գծային կապ և կորելացիոն գործակիցը $|r|=0.833$ է: Նշված չորս տարբեր թեստերի բաղադրիչները կազմում են երկրորդ գործոնը:
5. Վեց զույգ թեստերում՝ 3 և 50, 4 և 40, 8 և 17, 18 և 20, 20 և 49, 27 և 50 և առկա է ուժեղ գծային կապ և $|r|=0.828$ է: Նշված տաս տարբեր թեստերի բաղադրիչները կազմում են երրորդ գործոնը:
6. Ութ զույգ թեստերում բացակայում է կապվածությունը: Այդ թեստերի ներգրավումը հաջորդ թեստավորման գործընթացներում նպատակահարմար է իրականացնել թեստավորման հանձնաժողովի, տվյալ առարկայի մասնագետների վերլուծությունից և մեկնաբանումից հետո միայն:

Հայտորոշիչ գործոններով օժտված թեստերի միջոցով ուսուցանողները հնարավորություն կունենան ժամանակին հայտորոշելու սովորողի կարիքները, վերհանելու նրա դժվարությունները, արձանագրելու հաջողությունները՝ հետագա աշխատանքներն ավելի

ճիշտ ու արդյունավետ կազմակերպելու համար: Հայտորոշիչ թեստերի միջոցով կազմակերպված աշխատանքը ներառում է սովորող-սովորեցնող մշտական փոխհամագործակցության տարրեր և հետադարձ կապով առաջադիմության ընթացքի մասին մշտական տեղեկատվություն է ապահովում:

Գործոնների հետազոտման առաջարկված մոտեցումը արդարացված է հետևյալ պատճառներով՝

1. զգալիորեն հեշտանում է գործոնների հայտնաբերման գործընթացը,
2. անմիջականորեն ստացվում են անկախ գործոնների բազիսային վեկտորները,
3. գլխավոր գործոնների հայտնաբերման ռոտացիայի փուլը դառնում է ավելորդ:

Ներկայացված մեթոդը հնարավորություն կտա զգալիորեն նվազեցնել ոչ միայն ուսուցման բնագավառում տարվող հետազոտական աշխատանքների կատարման ժամկետները, այլև բուն գնահատման գործընթացը՝ թեստավորման միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հայկազյան Է.Մ.** Տվյալների վիճակագրական մշակման մեթոդներ: Մեթոդական ձեռնարկ: Ճարտարագետ, Երևան, 2017թ.:
2. **Ստակյան Յու.Մ., Մարտիրոսյան Ա.Վ., Թորմաջյան, Առաքելյան Ս.Վ.** Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության գնահատումը հարցման մեթոդի կիրառմամբ: Ուսումնական ձեռնարկ: Ճարտարագետ, Երևան, 2016թ.:
3. **Небылицын В.Д.** Современное состояние факторного анализа. «Вопросы психологии», 1960, №4.
4. **Небылицын В.Д.** К проблеме уравновешенности нервных процессов. «Вопросы психологии», 1964, №6.
5. **Петросян А.Н., Айказян Э.М.** Об одном методе исследования факторной структуры в системе обучения. //Материалы итоговой научно-практической конференции за 2016г. «Интеграция теории, методологии и практики в современных науках и образовании»(01 март 2017г.) – Т.1. НЧОУ ВО АЛСИ, Армавир, 2017. С.184-196.

6. **Шмелева А.Г.**, Практическая тестология. Тестирование в образовании, прикладной психологии и управления персоналом. М.: ООО «ИПЦ «Москва»», 2013-688 с.
7. **Ahmadzade Y.** Transformation analysis of factorial data. Helsinki, 1954:
8. **Thurston I.L.** Multiple-factor analysis, Chicago, 1947

САТЕНИК АРАКЕЛЯН, ЭДУАРД АЙКАЗЯН – ФАКТОРНЫЙ АНАЛИЗ В ПРОЦЕССЕ ОЦЕНИВАНИЯ ЗНАНИЙ

В данной статье представляется факторный анализ методами линейного программирования и корреляционного анализа и применение соответствующих формул для получения общих закономерностей тестов.

SATENIK ARAKELYAN, EDUARD HAYKAZYAN – FACTOR ANALYSIS IN KNOWLEDGE VERIFICATION PROCESS

The article touches upon factor analysis through the method of linear programming and correlation analysis and the application of the corresponding formulas to obtain general test patterns.

ՄԱԿԴԻՐՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Գ. ԷՄԻՆԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

ՈՌԻՉԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ մակդիր, մակադրյալ, փոխաբերական իմաստ, քերականական որոշիչ և պարագա, գոյականական մակդիրներ, հուզական, հոգեբանական, նկարագրական, գունային մակդիրներ, ածականով, դերբայով և դերբայական դարձվածով արտահայտված մակդիրներ, առարկաների գործողությունները բնորոշող մակդիրներ

Գեղարվեստական խոսքի ոճական միջոցների համակարգում կարևոր դեր ունեն մակդիրները: Նոր, հաջող ընտրված մակդիրները, եթե բխում են բնութագրվող առարկաների ու երևույթների էությունից, ունեն իմաստային խորություն, հարստացնում են խոսքի բովանդակային կողմը, ուժեղացնում նրա արտահայտչականությունն ու հուզականությունը: Նրանց շնորհիվ իրերի և իրողությունների ներքին ու արտաքին հատկանիշները բացահայտվում են՝ զուգորդված հեղինակի կամային այլևայլ երանգներով:

Մակդիր հասկացությունը, անկախ նրա լայն ու նեղ ըմբռնումներից, մեր քերականագիտության մեջ միշտ էլ կապվել է գոյականի հետ և բնութագրվել է որպես գոյականի վրա դրվող բառ: Հետագայում, իհարկե, փոխվել է *մակդիր* հասկացության բովանդակությունը. այն ստացել է ավելի նեղ, գրականագիտական արժևորում, բայց կապակցելիության բնույթը չի փոխվել:

Մակդիրը այսօր էլ դիտվում է որպես առարկան ու երևույթը գեղարվեստորեն բնութագրող բառ կամ բառակապակցություն: Ժամանակակից հայ լեզվաբանության մեջ մակդիրի բնորոշման տարբեր բնորոշումներ գոյություն ունեն:

Ըստ Է. Ջրբաշյանի՝ «Մակդիրը մեկ կամ մի քանի բառերից բաղկացած գեղարվեստական բնորաշում է, որը մատնանշում և ընդգծում է երևույթի որևէ հատկանիշը և նրա նկատմամբ որոշակի վերաբերմունք արտահայտում»¹²:

Գ. Ջահուկյանի և Ֆ. Իսլաթյանի բնորոշմամբ՝ «այն որոշիչ բառերը, որոնք սովորականներից տարբերվում են

¹² Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Ե., 1967, էջ 221:

արտահայտչականությամբ, հուզական կամ պատկերավոր բնույթ ունեն, կոչվում են մակդիրներ»¹³: Ակնհայտ է, որ երկու դեպքում էլ ընդգծվում է առարկայի, երևույթի գեղարվեստական, պատկերավոր և հուզական-հոգեբանական վերաբերմունքային բնորոշումը: Վերջին տարիներին ոճաբանական գրականության մեջ նկատվում է մի նոր միտում՝ մակդիրների շարքը դասել նաև գործողությունը բնութագրող բառերը: Այս մոտեցումը տեղ է գտել մակդիրին տրված բնորոշումների մեջ. «Մակդիր - առարկան կամ գործողությունը բնութագրող բառ, որ ընդգծում է նրանց բնութագրական որևէ հատկությունն ու որակը»¹⁴: Այս բնորոշման մեջ նորն այն է, որ մակդիրը դիտվում է որպես գործողությունը բնութագրող բառ: Նույն մոտեցումը տեսնում ենք պրոֆեսոր Ֆ. Խլղաթյանի՝ մակդիրին տրված սահմանման մեջ. «Առարկան, երևույթը, գործողությունը արտահայտչորեն բնորոշող բառ կամ բառակապակցություն»¹⁵:

Մակդիրը՝ իբրև պատկերավոր արտահայտության տարր, ծառայում է խոսքը զգացմունքով լիցքավորելուն, իրերի ու իրողությունների ներքին ու արտաքին հատկանիշները բացահայտելուն: Մակդիրի գործածությունը չպետք է լինի բռնազբոսիկ. այն պետք է համապատասխանի խոսքի բովանդակությանը, բխի իրերի բնույթից, ճիշտ արտահայտի հեղինակի մտքերն ու զգացմունքները: Ուստի մակդիրների հմուտ, նպատակային ընտրությունը հեղինակին կարող է օգնել հասնելու նյութի գեղարվեստական ճշմարտացի վերարտադրման և խոսքի առավելագույն հնչեղության:

Ինչպես ասվեց, մակդիրները մասամբ հարում են քերականական որոշիչներին ու պարագաներին (հատկապես ձևի, որոշ վերապահությամբ՝ նաև չափի), սակայն դրանք չի կարելի նույնացնել, քանի որ խոսքում կիրառվում են տարբեր գործառույթներով. մեկը ոճական տարր է, մյուսը՝ շարահյուսական: Յուրաքանչյուր մակդիր կա՞մ որոշիչ է, կա՞մ պարագա, սակայն բոլոր որոշիչները չէ, որ կարող են ստանալ մակդիրի ոճական արժեք: Մակդիրի գործառույթ ձեռք բերելու համար անհրաժեշտ է, որ քերականական այդ տարրերը իրական հատկանիշը ակնարկեն՝ շաղախված զգացմունքով ու պատկերավորությամբ:

¹³ Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, Ոճաբանություն, Ե., 1994, էջ 32:

¹⁴ Розенталь Д. Э., Практическая стилистика русского языка, М., 1968, էջ 399:

¹⁵ Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Ե., 2000, էջ 115:

Այսպիսով, մակդիրները օժտված են փոխաբերական իմաստով, հարստացնում, ճոխացնում են լեզուն, հնարավորություն են տալիս միտքը, պատկերը խտացնելու, խոսքը թարմացնելու, ուստի դրանք խոսքի պատկերավորման ամենատարածված միջոցներից են:

Գևորգ Էմինի չափածոն հատկանշվում է մակդիրների ամենաբազմազան ձևերի հմուտ ու ճաշակով գործածությամբ:

Խոսելով Էմինի գործածած մակդիրների մասին՝ պետք է ասել, որ բանաստեղծը ձգտում է միշտ նոր ու թարմ մակդիրներ գործածել, խուսափում է միօրինակությունից: Էմինի պոեզիայում մակդիրները խոսքը զարդարելու, նրան արտաքին փայլ հաղորդելու ինքնանպատակ միջոցներ չեն: Դրանց գործածությունը խիստ պատճառաբանված է և բխում է նկարագրվող երևույթների էական հատկանիշները բացահայտելու անհրաժեշտությունից: Բանաստեղծը ամեն մի կոնկրետ դեպքում կարողանում է ընտրել այնպիսի մակդիրներ, որոնք աչքի են ընկնում իրենց պատկերավորությամբ, դիպուկ են, արտահայտիչ:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ մակդիրները հուզական ավելի մեծ լիցք են պարունակում և բառական նոր միջավայրում այլ բառերի հետ ունեցած նորանոր կապակցությունների շնորհիվ թարմություն են հաղորդում բանաստեղծական խոսքին, այն դարձնում բառ-պատկեր, գրողի ստեղծագործական երևակայության և անհատական ընկալման արդյունք՝ Էմինը ընթերցողին է ներկայացնում բազմաթիվ նոր ու թարմ մակդիրներ, որոնք հետաքրքրական են ոչ միայն իրենց կիրառական-ոճական առանձնահատկություններով, այլև նրանով, որ արտահայտում են բանաստեղծի հայացքն ու հուզական, գաղափարական վերաբերմունքը նկարագրվող երևույթի նկատմամբ: Իր ցանկացած միտքը պատկերավոր ու ճիշտ արտահայտելու համար Էմինը կարողանում է ընտրել այնպիսի բովանդակալից մակդիրներ, որոնք վառ ու տպավորիչ կերպով բացահայտում են նկարագրվող երևույթի բնորոշ հատկանիշները: «Ես հայ եմ...» խորագիրը կրող բանաստեղծությունների շարքում հեղինակը ունի հայրենիքին ու հայ ժողովրդին ձոնված գողտրիկ բանաստեղծություններ, որոնցից առանձնանում է «Նաիրի» բանաստեղծությունը, որում գործածված մակդիրները այնպես դիպուկ են, խոսուն ու լի զգացմունքներով, որ ուժեղացնում են բանաստեղծության քնարական հնչեղությունը:

Նաիրին խաղողի որթ է **հնագույն**
Արմատը խրած հողում **ժայռեղեն**.
Բարձր չի եղել նա բարդու հանգույն
Եվ չինարու պես փարթամ չի եղել:
Հազար ամպրոպ է մտրակել նրան,
Թե բարդի լիներ, մոխիր էր դարձել.
Չինարի չեղավ ճոխ ու **գեղիրան**.
Հող չկար այդքան շուքը տարածեր...
Տրորված հազար օտար սմբակից,
Ջրված մեր արյան կենսապու շաղով,
Գինի է տվել նա հայ մշակին,
Իսկ հայ արվեստին՝ **քարակոփ** խաղող:
Նաիրին խաղողի որթ է բերքառատ՝
Արմատով ճամփա պեղած քարերում.
Այդպես ժայռերն են դարձրել Գեղարդ.
Մեր վարպետները հնոց դարերում.
Եվ ով էլ նրան հանդգնի թեքել,
Հանել այս հողից՝ **մեր արյամբ ջրված,**
Նա ծաղկելու է առավել շքեղ՝

Թափված սերմերից նոր ծիլեր տված... (I, էջ 41)¹⁶:

Հնագույն որթ, ժայռեղեն հող, գեղիրան չինարի, տրորված հազար օտար սմբակից, ջրված մեր արյան կենսապու շաղով, արմատով ճամփա պեղած քարերում խաղողի որթ, քարակոփ խաղող, մեր արյամբ ջրված հող. ահա այն մակդիրները, որոնք ընթերցողի հիշողության մեջ վերակենդանացնում են պատմության քառուղիներում արյուն թափած հայ ժողովրդի պատմության մղձավանջային էջերը, ամբողջ խորությամբ բացահայտում իր մայր հողին ամուր կառչած հայ ժողովրդի ստեղծագործ միտքն ու արվեստ արարող ձեռքերը, որոնք քարակոփ խաղող ու վիմափոր տաճար են ստեղծել՝ քարեղեն, ժայռեղեն գեղեցկություններ, որոնք մեր հնքնության քարե կնիքն են:

Հետաքրքրական է նկատել, որ Գ. Էմինը իր չափածո ստեղծագործություններում գործածել է մակդիրների ամենաբազմազան ձևեր: Ծանոթանանք դրանց կիրառական առավել բնորոշ մի քանի առանձնահատկությունների:

¹⁶Տե՛ս Էմին Գ., Երկերի ժողովածու, հ. I, II, Ե., 1985: Այսուհետ կնշվեն միայն համապատասխան հատորը և էջը:

Իբրև մակդիր կարող են հանդես գալ հատկանիշ և հատկանիշի հատկանիշ մատնանշող բոլոր խոսքի մասերը՝ ածականը, թվականը, դերանունը (որոշ տեսակներ), դերբայները (հարակատար, ենթակայական) և մակբայը (ծնի, մասամբ չափի):

Գևորգ Էմինի չափածոյում լայն կիրառություն ունեն ածականով և դերբայներով արտահայտված մակդիրները, որոնք նյութը շոշափելիության աստիճանի թանձրացված են ներկայացնում: Զգալի հետաքրքրություն են ներկայացնում գոյականական մակդիրները, որոնք առատ են Էմինի չափածոյում: Բանաստեղծը այս կամ այն երևույթի կամ իրողության էությունը կարողանում է բացահայտել՝ գտնելով տվյալ հարաբերության մեջ միակ բնորոշ ու ընդունելի հատկանիշը: Օրինակ, ահա թե ինչպես պարզ ու պատկերավոր է բնորոշում պանդխտության և կարոտի զգացումը, որ, բանաստեղծական հավերժական թեմաներից մեկը լինելով, զանազան նրբերանգներով է ներկայացվել: Կա± մի հայ, որ լսած կամ երգած չլինի «Կռունկ»-ը, որը պանդուխտի երգ է, հայրենիքի կարոտի երգ: Այն այնքան շատ է երգվել Հայաստանում ու բոլոր այն վայրերում, ուր գեթ մի պանդուխտ հայ կա, որ դարձել է մեր ժողովրդի տխրության ու կարոտի հիմնը: Այդ երգ-բանաստեղծության մի նոր տարբերակ է Գ. Էմինի «Երգ կռունկի մասին» բանաստեղծությունը, որը, «Կռունկ» երգի հետ երամ կազմած, թևածում է սփյուռքում ու հայրենիքում: Այս բանաստեղծության մեջ Էմինը խորացրել ու բյուրեղացրել է մեր ժողովրդի պատմական տխուր ճակատագիրը: Աղետներից հալածված ժողովուրդը փախել է իր հայրենի տնից ու կռունկի պես չվել օտար ափեր՝ հոգում պահած հայրենի երկրի անափ կարոտը: Արարատը պանդուխտ հայի լուսե փարոսն է, իսկ Արարատի ձյունը՝ մի սուրբ մասունք մայր հայրենիքից.

Գնա՛, կռունկ, հայոց արտից ծիլ տար կանաչ՝ Պանդուխտներին.

Մի **նշխար ձյուն**՝ Արարատից՝ Պանդուխտներին.... (I, էջ 54):

Գոյականական մակդիրները խոսքային գեղարվեստական միջավայրից դուրս ևս պահպանում են իրենց իմաստային ուժգնությունը ու սպառիչ կերպով բացահայտում իրենց մակադրյալի էությունը: Բերենք օրինակներ. **զմրուխտ սարեր** (II, 39), **հուր կարոտ** (II, 240), **մանուկ աշխարհ** (I, 24), **քար աշխարհ** (I, 32), **արյուն գինի** (I, 61), **հրաշք լիճ** (I, 25), **հրաշք հանդիպում** (I, 280), **գարուն գինի** (I, 61), **զմրուխտ անտառներ** (I, 59), **զմրուխտ կանաչ** (II, 72), **բոց ուղեղ** (II, 108), **հուր ցուրեր** (I, 79), **հուր աղջիկներ** (I, 227), **հուր ծաղիկներ** (I, 147), **հուր խոսքեր** (I, 141), **անապատ սիրտ** (I, 200), **ձիթապտուղ աչքեր** (I, 273),

մայր հող (II, 197), **բյուրեղ ցող** (I, 16), **օձ պարան** (I, 308), **լուսնյակ կճուճ** (I, 308), **արծաթ բոժոժ** (I, 24), **խեղկատրակ քամի** (II, 136), **ժայռ կամք** (I, 42և այլն:

Այժմ քննենք գոյականական մակդիրների գործածության մի քանի դեպքեր գեղարվեստական խոսքում:

Իմ լուսեղեն՛ն, իմ մանկի՛կ, սիրո իմ բարուր,

Իմ ոսկեղեն՛ թիթեռնիկ, աչքերդ փակի՛ր:

Սրընգի ձայնն է լսվում դաշտերից արծակ,

Ամպ - **գառնուկներն** են մայում երկնի մարագից,

Եվ զնգում են աստղերի բոժոժներն **արծաթ**,-

Իմ ա՞ստղ, իմ ա՞մպ ու գառնուկ, աչքերդ փակիր... (I, էջ 24):

«Օրոր» բանաստեղծության այս գողտրիկ հատվածում *ամպ-գառնուկներ* արտահայտության *գառնուկ* մակդիրը պատկերային-նկարագրական մեծ ուժգնություն է հանդես բերում. այդ մակդիրը կենդանացնում, շարժման մեջ է դնում երկնքի լազուրում լողացող ամպերի քուլաները և եթերային պայծառությամբ, քնքշանքով պարուրում մանկան հոգին: *Արծաթ բոժոժներ* արտահայտության *արծաթ* մակդիրը արտացոլում է ոչ թե բոժոժների կազմություն-բաղադրությունը, այլ լսելի է դարձնում փոքրիկ զանգուլակների անուշ զնգոցը, որ օրոր է ասում ու նինջ բերում լուսեղեն մանկիկին:

Մակդիրներ ընտրելիս Գ. Էմինը առաջին հերթին հաշվի է առնում նրանց իմաստային խորությունն ու բազմազանությունը, նկարագրվող երևույթի բնորոշ կողմերն արտահայտելու հատկությունը: Նա կարողանում է ինքնատիպ զուգորդություններով նոր իմաստներ հայտնաբերել բառերի մեջ:

Կարոտում են աչքերս դեռ **ձիթապարուղ** քո աչքերին,

Եվ սիրտս՝ քո տենդոտ սրտին... (էջ 273):

Ձիթապարուղ գոյականական մակդիրը, որ թվում է նույնիսկ փոքր-ինչ անսովոր, իրոք, լավ է բնութագրում կնոջ աչքերը և բացահայտում քնարական հերոսի հուզական ու քնքուշ վերաբերմունքը սիրելիի նկատմամբ:

Էմինի չափաժոյում հաճախադեպ են հուզական, հոգեբանական, նկարագրական, գունային մակդիրները, որոնք հիմնականում արտահայտվում են ածականով:

Հուզական, հոգեբանական մակդիրները բնորոշում են առարկան կամ երևույթը՝ հուզականորեն առանձնացնելով նրա որևէ էական

հատկանիշ, արտահայտելով նաև հեղինակի հուզահոգեբանական վերաբերմունքը:

Դիտարկենք հուզական, հոգեբանական մակդիրները գեղարվեստական խոսքի կոնկրետ միջավայրում: Ահա՝ («Ոչ, քեզ չեմ սիրում... Դու չե՞ս հասկանում... Լավ չե՞՝ Քան քնել Սուտ անուրջների **հեղձուկ** անկողնում...» (II, 75), «Եվ ճիգ անելով մոռանալ կյանքը,- Կյանք կոչել կյանքի այս **փուչ** պատրանքը...» (II, 71), «<Հիմա մնում է հասարակ մի բան՝ Սանձել **խենթ** սրտիս ընթացքը **վայրագ**...» (II, 70), «Մի՞թե սերն անգամ, Այս **անսեր** դարում Դավ է, Լաուրա...» (II, 236), «Տես, իջնում է մեր **սույր** գարունքին **ճմարիկ** ձմռան **ցուրտ** հանդեսը...» (II, 237), «Այնքան հոգնել եմ **սույր** սերերից...» (II, 236), «Բայց չէր տեսել վաղուց Աշխարհն արար Այդպիսի **սուրբ** մի սեր մեր **գորշ** կյանքում...» (II, 239), «Նզովք է նետել ձկնորսը ճիչով **Քարասիրտ** վանքին ու **քար** աշխարհին...» (I, 32)): Ընդգծված հուզական, հոգեբանական մակդիրները խտացնում են գեղարվեստական խոսքի ներգործությունը, հուզականությունն ու արտահայտչականությունը:

Ասվածը հիմնավորելու համար բերենք բնագրային մի պատահիկ.

Այս մուժի՛ց է արդյոք, այս անձրևի՛ց,
Թե՛ այս **անդուն, անել** մենությունից,
Որ տխուր եմ այնքան, այնպես անօգ...
...Դու՞ բաց արա դուռն այս **որբ** ու **այրի**,
Դու՞ մերկացիր՝ ինչպես մանկան առջև...

Որ ես մանուկ դառնամ գրկում քո **խակ**... (II, էջ 201):

Ակնհայտ է, որ ընդգծված մակդիրները հիմնականում հուզական բնույթի են և անսովոր զուգորդությունների շնորհիվ ընթերցողի մեջ առաջ են բերում համապատասխան զգացում ու հույզ, ստեղծագործությանը տալիս քնարական նուրբ երանգավորում:

Գ. Էմինի չափածո խոսքում զգալի դեր ու գործածության որոշակի տեղ ունեն նկարագրական մակդիրները, որոնք նկարագրում են առարկան կամ երևույթը՝ դրսևորելով հեղինակի գեղագիտական հակումներն ու պատկերավորման արվեստի յուրահատկությունները: Այսպես՝ **անպուն, մերկ** ծառեր (I, 100), **վսեմ** շիրմաքար (II, 109), **թշվառ** սազ (II, 109), **ոսկեղեն** անձրև (I, 23), **կախարդ** լճակ (I, 26), **կախարդական** լեռներ (I, 34), **խելառ** մրրիկներ (I, 45), **լոթի** քամի (I, 55), **ոսկեղեն** մազեր (II, 279), **քնաթաթախ** բարդի (I, 22), **մեղկ** նրբանցքներ (I, 47), **ասողիկ, երգեցիկ** ձեռքեր (II, 64), **զուլալ, անամպ** աչքեր (I, 287),

ամուրի ծառ (I, 294), *գունապ* լուսին (II, 138), *ոսկրոպ* սարեր (II, 144), *կապույտաչ* լիճ (I, 58), *անժողովուրդ* հող (II, 168), *համառ* որթ (I, 173), *ոսկե* վարսեր (I, 81), *նազպար* ծառ (II, 209), *կուզ* փշատենի (II, 210), *անդուռ* վիճակ (II, 228), *պայծառապես* գինի (II, 236), *անշունչ* լեռ (I, 145), *չբեր* ուռենի (II, 188), *գիժ* գարուն (I, 109), *կուզ, սապապ* թթենի (I, 207) և այլն:

Նկարագրական մակդիրների գործածությունը դիտարկենք մի քանի մեջբերումներում.

Իսշում են ձորում ջրերը *լուսե*,
Ճեղքում պատնեշը *մթին* ժայռերի.
Հայրենի երգն է մեզ այդպես հասել՝
ժայռերի միջով *մթին* դարերի... (I, 59):
Ես հեռանում եմ ձեր *կախարդ* գրկից.
Լոռու *սեգ* լեռներ, մնացեք բարով... (I, էջ 60):

Լուսե ջրեր կապակցության մեջ *լուսե* մակդիրը բնութագրական, նկարագրական մեծ ուժգնություն է հանդես բերում. այդ մակդիրը մակադրյալ բառին հաղորդում է *լույսի նման պարզ ու վճիպ, լույսի նման, գեղեցիկ, լուսագեղ* իմաստները: *Մթին ժայռեր, մթին դարեր* կապակցություններից առաջինում *մթին* բառը արտահայտում է *մոայլ, թխպամած, մթնասույզ* իմաստները, իսկ երկրորդում՝ ընթերցողի հիշողության մեջ վերականգնանացնում է պատմության քառուղիներում արյուն թափած հայ ժողովրդի պատմության մղձավանջային էջերը:

Լոռու չքնաղ բնապատկերը բանաստեղծը վրձնում է *կախարդ գիրկ, սեգ լեռներ* արտահայտություններով, որտեղ *կախարդ* մակդիրը Լոռվա բնությունը ներկայացնում է որպես դյուբող, հմայող թովիչ գիրկ:

Էմինի չափածոյում զգալի կիրառություն ունեն գունային մակդիրները, որոնք, դրվելով գոյականների վրա, ոչ թե նրանց արտաքին հատկանիշներն են ցույց տալիս, այլ դառնում են բանաստեղծի հույզերի, տրամադրությունների արտահայտման հիմնական միջոց:

Գույնով բնորոշող մակդիրներ շատ են գործածել նաև Մ. Մեծարենցը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը, Եղ. Չարենցը, Հ. Սահյանը: *Կապույտ* ածականի փոխաբերական գործածությունը առկա է նշված բոլոր հեղինակների ստեղծագործություններում. այն կարծես անխուսափելի անհրաժեշտություն է բանաստեղծների համար:

Գ. Էմինն էլ առատորեն գործածել է *կապույտ* մակդիրը՝ իր փոխաբերական բազմազան նրբիմաստներով. *կապույտ երեկո, կապույտ աղոթք, կապույտ արուրներ, կապույտ Ջանգու, կապույտ նիրհ,*

կապույտ կարուր, կապույտ ձեռքեր, կապույտ մշուշ, կապույտ մենություն, կապույտ հրաշք, կապույտ հմայք և այլն:

Ահա բնագրային մի քանի վկայություն.

Ծաղիկներ կային քո գալուց առաջ,

Քո գալուց առաջ՝ **կապույտ** երեկո... (I, 16):

Երգը աղջիկ է, աղջիկը՝ երգ,

Արվեստը՝ հոգու **կապույտ** աղոթք... (I, էջ18):

Առաջին հատվածում *կապույտ* մակդիրը, զուգարկվելով *երեկո* մակադրյային, արտահայտում է *անխռով, հանդարտ, ապահով, հաշտ, դաշն, երջանիկ* նրբիմաստները, իսկ երկրորդ հատվածում *կապույտ աղոթք* կապակցության մեջ՝ *խորհմաստ, սուրբ, երազային, ցնորական* իմաստները:

Էմինի ստեղծագործություններում հանդիպում ենք *սև* գույնով բնորոշող մակդիրների առատ գործածության, օրինակ՝ *սև ալիք* (I, 32), *սև ցավ* (I, 46), *սև խուց* (I, 125), *սև ձեռքեր* (II, 113), *սև պանդխտություն* (I, 177), *սև կոկորդ* (I, 177), *սև արկ* (I, 226), *սև գնդակ* (I, 126), *սև Պառնաս* (II,112), *սև անձրև* (II,277), *սև-սաթ երազներ* (II, 274), *սև անցյալ* (I,192), *սև դաշտ* (I, 128), *սև որջ* (I, 176), *սև զուլում* (I, 53), *սև խորխորապ* (I, 68), *սև նոճիներ* (I, 127), *սև գնացք* (I, 167), *սև հրացան* (I, 167), *սև հրթիռ* (I, 176), *սև բոց* (I, 187), *սև Ռայխստագ* (I, 222), *սև ռումբ* (I, 224), *սև բույն* (I, 225), *սև գահ* (I, 244), *սև բոթ* (I, 291), *սև սարսափ* (II, 182), *սև լուր* (I, 342), *սև շուշան* (I, 99) և այլն:

Սև գունանունը, օժտված լինելով փոխաբերական իմաստներով, վերոնշյալ զուգորդություններում դրսևորել է *կործանարար, մահաբեր, ավերիչ, մահացու, անբուժելի, մուտ, անդառնալի, չարագործ, մահածին, օտար, անհյուրընկալ, չարագույժ, եղերական, սգալից, աղետալի* նրբիմաստները՝ հաղորդելով բանաստեղծական խոսքին հուզական մեծ լիցք: Գույնով բնորոշող և հատկանշող մակդիրները չեն բխում անպայման բնութագրվող առարկայի կամ երևույթի առանձնահատկություններից: Շատ հաճախ մակդիրի և մակադրյալի միջև նմանության եզրեր էլ կարող են չլինել, սակայն խոսքային համապատասխան միջավայրում միանգամայն արդարացված են ու պատճառաբանված:

Ներքոհիշյալ գունային մակդիրները ներգործուն են ինչպես գեղարվեստական խոսքային կոնկրետ միջավայրում, այնպես էլ առանձին գործածության մեջ, ինչպես՝ *վարդագույն մուտ* (I, 47), *դեղին սարսափ* (II,119), *դեղին բոթ* (I, 29), *կանաչ կյանք* (I, 40), *լազուր լեռներ*

(II, 44),
լազուր թոկ (I, 305), դեղին մամուլ (II, 305), կանաչ ամբիոն (I, 22),
Հոկտեմբերի ալ այգաբաց (I, 65), կանաչ վարսեր (I, 203), կանաչ ձեռքեր
(I, 27), ալ քամի (I, 256), գորշ գործ (I, 256), բիլ մածուն (I, 305), գորշ
կռունկ (I, 336), գորշ հեղևակ (II, 67), ճերմակ վարսավիր (II, 277) և այլն:

Գ. Էմինի չափածոյում զգալի կիրառություն ունեն նաև
ենթակայական, հարակատար դերբայներով և դերբայական
դարձվածներով արտահայտված մակդիրները, որոնք ներկայացնում են
առարկայի կամ երևոյթի շարժունակությունը, ապրումի
հարափոփոխականությունը և գեղարվեստական խոսքն ավելի կենդանի
ու ներգործուն են դարձնում: Օրինակ՝

Ես Աշտարակի տոհմիկ ծնունդ եմ...

...հնձ մեռնել չկա -

Վկա՝ այս **թաղվող**

Եվ ամեն գարնան **հարություն առնող**

Խաղողի հունդը... (II, էջ 265):

«Բալլադ տան մասին» ստեղծագործության մեջ Էմինը դժխեմ
բախտից հալածված հայորդու հիշողություններում խտացրել է հայ
ժողովրդի պատմությունը՝ սկսած հեթանոսական շրջանից մինչև նոր
հայրենիքի, նոր պետության կերտումը: Բանաստեղծը յուրաքանչյուր տան
մեջ ներկայացնում է մեր պատմության որոշակի ժամանակահատված,
որն ամփոփվում է դերբայական դարձվածների յուրօրինակ
կրկնություններով (**արյունից ծնված** պատմություն, **արյունով սնված**
պատմություն, **արյան մեջ կորած** պատմություն), որտեղ **գերադաս** բառի
փոփոխությամբ բնութագրվում է տվյալ ժամանակաշրջանը:

Դերբայով ու դերբայական դարձվածով արտահայտված
մակդիրները միաժամանակ խոսքի սեղմության ու համառոտության
ցուցանիշներ են, արտահայտում են բանաստեղծի հուզական
վերաբերմունքն ու գնահատականը նկարագրվող երևոյթի նկատմամբ:

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ մակդիրները բնորոշում են
ոչ միայն առարկաները, այլև նրանց գործողությունները: Այդպիսի
մակդիրները քերականորեն համընկնում են ձևի պարագաների հետ,
բայց անշուշտ տարբերվում են նրանցից: Գ. Էմինը հաճախ է դիմում
առարկաների գործողությունները բնորոշող մակդիրների
գործածությանը: Նմանօրինակ մակդիրների գործածությամբ
բանաստեղծը ստեղծում է անհրաժեշտ ոճական երանգավորում.

Եվ **վարդերի ցուլից շիկնած**,

**Ծովի ծփանքն իր ականջում,
Հանդիպումի տենչից հարբած**

Սարից գետակն էր կարկաչում...

Աչքը հառած ծովին ծփուն՝

Նա դեպի ծովն էր սլանում,

Բաշ ու գլուխ քարին խփում

Ու **խենթացած** փրփուր հանում.

Իսկ ծովը **լուռ, ինքնահավան**

Ծփում էր ու աչքով անում... (I, էջ105):

Ամփոփելով մեր դատողությունները Գևորգ Էմինի չափածոյում հանդիպող մակդիրների տարաբնույթ կիրառությունների մասին՝ նկատենք, որ տեղին ու դիպուկ մակդիրները օգնել են բանաստեղծին՝ հասնելու նյութի գեղարվեստական ճշմարտացի վերարտադրմանը և խոսքի առավելագույն հնչեղությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Ե., 2005:
2. Էլոյան Ա., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989:
3. Էմին Գ., Երկերի ժողովածու, հ. I, II, Ե., 1985:
4. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Ե., 2000:
5. Խլղաթյան Ֆ., Ոճաբանության առարկան ու խնդիրները, Ե., 1971:
6. Մելքոնյան Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984:
7. Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, Ե., 1994:
8. Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1967թ.:
9. Розенталь Д.Э., Практическая стилистика русского языка, М., 1968г.

РУЗАННА АСАТЯН - СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ЭПИТЕТОВ В ПОЭЗИИ Г. ЭМИНА

В статье рассматривается использование самых разных форм эпитетов (эмоциональных, психологических, описательных, цветовых), которые представляют интерес не только с точки зрения свежести, стилистических особенностей, но и с точки зрения выражения видения и эмоционального,

идеологического отношения поэта, превращая поэтическое слово в слово-изображение.

RUZANNA ASATRYAN - THE STYLISTIC SIGNIFICANCE OF EPITHETS IN G. EMIN 'S POETRY

The use of various forms of epithets (emotional, psychological, descriptive, colour) is considered in the article, which is of interest not with respect to freshness, stylistic features, but also with respect to expression of the poet's vision and emotional, ideological attitude, thus turning the poetic word into word-picture.

ВОЗМОЖНОСТИ РЕАЛИЗАЦИИ КОНЦЕПЦИИ СМЕШАННОГО ОБУЧЕНИЯ (BLENDED LEARNING) В ПРЕПОДАВАНИИ РКИ В ВУЗАХ РА

ЭРИКА АВАКОВА

Ключевые слова: ИКТ, дистанционное обучение, смешанное обучение, аудиторные занятия, технологические платформы, электронное обучение.

“Инновации – это способность видеть в переменах возможности, а не угрозу”.

Стив Джобс

Стремительное развитие и совершенствование информационно-коммуникационных технологий оказало существенное влияние практически на все сферы жизни людей как во всем мире, так и в Армении. В последние годы в республике под воздействием ИКТ прочно сформировались и надежно функционируют реальная (физическая) и виртуальная (информационная) стороны жизнедеятельности человека. Образование, как важнейшая сфера общественной жизни, определяемое Законом РА об образовании как “процесс обучения и воспитания в интересах личности, общества и государства, направленный на поддержание и передачу знаний поколениям” [2], не осталось в стороне.

В настоящее время особую актуальность в РА приобрело формирование виртуального образовательного пространства как необходимого дополнения реальной образовательной среды. Данную идею зачастую связывают с *дистанционным обучением*, определяемым как “форма систематизированного обучения, при которой процесс непосредственного и опосредованного обучения между учащимся и преподавателем осуществляется в основном средствами информационных технологий и телекоммуникации”[1].

Несмотря на то что принятый еще в 2004 году закон РА о вузовском и послевузовском профессиональном образовании для реализации основных образовательных программ высшего профессионального образования наряду со стационарной и заочной, предусматривает и дистанционную форму обучения, дистанционное

обучение в Армении все еще находится на стадии формирования. К сожалению, у нас до сих пор нет отдельного нормативного документа, где дистанционное образование рассматривалось бы как система в главных ее аспектах: функциональном, техническом, организационном, юридическом. Более того, Постановление Правительства РА “Об утверждении порядка обучения по основным образовательным программам высшего и послевузовского профессионального образования в дистанционной форме”[3], а также “Методическое руководство по организации обучения по основным образовательным программам высшего и послевузовского профессионального образования в дистанционной форме”[4] появились лишь в 2010 году. В том же году Правительством РА был установлен и перечень специальностей (профессий), по которым получение высшего профессионального образования в дистанционной форме не допускается¹⁷.

Дистанционное обучение призвано сделать систему образования более гибкой и доступной, успевающей удовлетворять быстро меняющиеся потребности общества. Несмотря на желание многих вузов РА лидировать в области современных технологий и методов обучения, тем не менее, на сегодняшний день в республике нет организаций (институтов, лабораторий, групп), которые разработали бы систему дистанционного образования в целом, а не отдельные ее элементы¹⁸. Ведь чтобы перевести на дистанционную форму обучения какую-либо специальность, необходимо в дистанционную форму перевести и каждую дисциплину этой специальности. Работа эта очень сложная и трудоемкая, выполнить ее за короткие сроки практически невозможно.

¹⁷ Согласно новому Законопроекту о высшем образовании, разработанному Министерством образования и науки РА и в настоящее время проходящему слушания в Национальном Собрании РА, перечень специальностей, по которым не допускается получение высшего профессионального образования в дистанционной форме, определяется Правительством РА по рекомендации Совета ректоров и уполномоченного государственного органа образования РА.

¹⁸ Некоторые вузы республики уже получили право на осуществление дистанционного образования по отдельным программам/курсам. Например, Лаборатория дистанционного обучения факультета социологии ЕГУ, Государственная академия управления РА, Международный научно-образовательный центр НАН РА.

На наш взгляд, целесообразнее начинать с формы, объединяющей традиционное и дистанционное обучение, тем более что сочетание стационарной формы получения высшего и послевузовского профессионального образования с иными формами Законом РА о вузовском и послевузовском профессиональном образовании не запрещается.

Уникальным сочетанием очного и дистанционного обучения на сегодняшний день можно считать так называемое смешанное обучение (*Blended Learning*). В основе данного подхода лежит образовательная концепция, согласной которой обучающийся получает знания как на занятиях с преподавателем, так и самостоятельно онлайн. Концепция *Blended Learning* существовала уже в 60-х годах 20-го века, но термин был впервые предложен в 1999 году в пресс-релизе американского центра *Interactive Learning Center*, который решил сменить название на *Blended Learning*. Долгое время дефиниции термина значительно разнились, пока в 2006 году не вышла книга авторов Bonk C.J., Graham C.R., которые уточнили, что смешанное обучение подразумевает сочетание традиционного обучения “лицом к лицу” и элементов интернет-обучения [Bonk, Graham 2006].

В наши дни под смешанным обучением понимается обучение, сочетающее возможности:

- ✓ дистанционного обучения (*Distance Learning*),
- ✓ обучения в классе/аудитории (*Face-To-Face Learning*),
- ✓ обучения через Интернет (*Online Learning*).

На наш взгляд, особенно эффективно данная концепция в нашей республике может быть реализована в вузовской практике преподавания иностранных языков (в том числе РКИ). На сегодняшний день для изучения РКИ каждый из трех компонентов данного подхода в отдельности не представляется полноценным. Во-первых, изучать язык только дистанционно и через Интернет нецелесообразно: утрачивается возможность живого общения и интерактивного взаимодействия в аудитории (например, дискуссии, презентации, защита проектов, проверка приобретенных в процессе обучения умений и навыков. и др.) Во-вторых, необходимость повышения конкурентоспособности системы высшего образования РА, содействие интернационализации и внедрению

непрерывных инноваций в соответствии с международными тенденциями не позволяет ограничиваться только обучением в аудитории.

В настоящее время практически во всех вузах РА используются технологические платформы, позволяющие организовать электронное обучение (например, Moodle¹⁹, Google Classroom²⁰ и др.), т.е. минимальную материальную базу вузы предоставляют. Однако внедрение новых информационных технологий и более эффективное использование старых приемов происходит достаточно медленно, неоправданно медленно. Инновационные технологии интенсивно осваиваются теми областями знаний, которые пользуются “повышенным спросом” со стороны населения, – экономикой, бизнесом, информатикой. Стремительное обновление информационных технологий, к сожалению, практически не отражается на преподавании русского языка. Причина, возможно, кроется в недостаточной мобильности и гибкости преподавателей, отсутствии у них желания, готовности, а иногда и возможности внедрять новые технологии. В лучшем случае преподаватели используют на уроках наиболее универсальные и простые в работе мультимедийные презентации, созданные в программе PowerPoint, основное назначение которых – нести информационную нагрузку и обеспечивать наглядность, но этого на сегодняшний день недостаточно.

Для реализации концепции Blended Learning в процессе обучения РКИ в вузах РА, на наш взгляд, необходимо пересмотреть содержание обучения РКИ в вузах, разработать новую программу с учетом дидактических возможностей той или иной технологической платформы, рационально распределить материал курса для очного и дистанционного обучения. Для этого требуется понять, какие блоки процесса обучения можно усовершенствовать с помощью ИКТ, как выстроить архитектуру интерфейса и разместить учебные материалы для оптимизации работы студентов с электронными ресурсами.

Несомненно, нам, преподавателям, еще предстоит осмыслить концепцию Blended Learning, провести апробацию существующих моделей смешанного обучения, осознать их возможности, преимущества и недостатки, пересмотреть и модернизировать программы и описания курсов. Однако очевидно одно: нам, преподавателям 21-го века, надо

¹⁹ ЕГУЯСН им. В.Брюсова, РАУ, Гаварский государственный университет и др.

²⁰ Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

научиться выходить из зоны комфорта, отходить от шаблонных действий, осваивать и внедрять новые, более гибкие формы организации и проведения занятий для обеспечения максимальной эффективности учебного процесса.

ЛИТЕРАТУРА

1. «Բարձրագույն և հետրուիական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք [Электронный ресурс]. Режим доступа: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=73261> Дата обращения: 05.02.2018
2. «Կրթության մասին» ՀՀ օրենք [Электронный ресурс]. Режим доступа: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=71908> Дата обращения: 15.02.2018
3. ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի «Բարձրագույն և հետրուիական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» N 124-Ն որոշում [Электронный ресурс]. Режим доступа: <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56573> Дата обращения: 30.01.2018
4. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 27-ի N 1348-Ա/Ք հրաման «Բարձրագույն և հետրուիական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույց» [Электронный ресурс]. Режим доступа: <http://extension.yzu.am/page/heravar-ousoucoun> Дата обращения: 30.01.2018
5. Bonk C. J., Graham C. R. The Handbook of Blended Learning: Global Perspectives, Local Designs. San Francisco, CA: Pfeiffer, 2006. 624 p. [Электронный ресурс]. Режим доступа: <http://www.click4it.org/images/a/a8/Graham.pdf> Дата обращения: 20.01.2018

**ԷՐԻԿԱ ԱՎԱԿՈՎԱ – ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՌՈՒՍԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ
ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽԱՌԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ
(BLENDED LEARNING) ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում ներակայացվում են ավանդական և հեռավար ուսուցման ձևերը զուգակցող խառը ուսուցման հայեցակարգի առանձնահատկությունները, դիտարկվում է ՀՀ բուհերում ռուսերենի դասավանդման ընթացքում տվյալ հայեցակարգի իրացման հնարավորությունները:

**ERIKA AVAKOVA – THE POSSIBILITIES OF IMPLEMENTATION OF THE
BLENDED LEARNING CONCEPT WHEN TEACHING RUSSIAN AS A
FOREIGN LANGUAGE IN THE HEIs OF RA**

The article focuses on the peculiarities of the Blended Learning concept which combines the traditional face-to-face and distance learning forms. The possibilities of implementation of this concept during Russian language teaching in Armenian HEIs are presented.

**ИСПОЛЬЗОВАНИЕ ЛИНГВОДИДАКТИЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА
ЯЗЫКОВЫХ КОРПУСОВ В ВУЗОВСКОЙ ПРАКТИКЕ ПРЕПОДАВАНИЯ
РКИ**

ЭРИКА АВАКОВА

Ключевые слова: ИКТ, корпусные технологии, формат KWIC, лингводидактический потенциал, ресурсы, инструментарий корпуса, аутентичный материал.

Современные методики обучения РКИ находятся в тесной корреляции с глобальным революционным научно-техническим и технологическим прогрессом, массовой компьютеризацией и информатизацией общества. Не секрет, что прошедшее десятилетие принципиально повлияло на наши отношения с языком. Пережив взрыв информационных технологий, мы за кратчайший срок практически полностью сменили основные способы получения и передачи информации. Мы (и особенно наши студенты) получаем теперь большую часть информации с различных дисплеев – компьютеров, мобильных телефонов, всевозможных гаджетов – небольших устройств, предназначенных для облегчения и усовершенствования жизни человека. Более того, ТЕЛЕфоны сменились СМАРТфонами, компьютеры планшетами, а мы все реже получаем информацию в виде страниц сплошного текста, тем более на бумажном носителе, и все больше имеем дело с таблицами, интерфейсами и короткими сообщениями, требующими быстрого восприятия и столь же быстрой реакции.

Информационно-коммуникационные технологии (ИКТ), получившие широкое распространение в сегодняшнем интеллектуальном пространстве и прочно вошедшие в сферу образования, затрагивают также языковое обучение, в частности, обучение русскому языку как иностранному: изменения информационно-образовательной среды создают новые условия межличностной коммуникации, новые формы организации и предъявления учебного материала, контроля усвоения знаний, а сами средства обучения РКИ приобретают новые лингводидактические и лингвометодические свойства.

Отметим, что идея применения ИКТ в школьной и вузовской практике преподавания русского языка в РА не нова. К этой теме обращались ведущие методисты и русисты нашей республики [Бабаян Т.А., Самуэлян С.Б. 2010; Бабаян 2011; Бабаян 2014; Саркисян 2015]. В рамках данной статьи мы остановимся на дидактическом осмыслении потенциала информационно-коммуникационных, в частности, **корпусных**, технологий в практике преподавания РКИ в вузе.

Корпус представляет собой массив текстов, в рамках которого с помощью определенной поисковой системы можно осуществлять поиск слов, словосочетаний, грамматических форм, значений слов. Примечательно, что приводя определение понятия “корпус”, исследователи в первую очередь подчеркивают его научную ценность, связанную с решением определенных лингвистических задач. Так, В.П. Захаров рассматривает корпус как большой, представленный в электронном виде, структурированный и размеченный, филологически представительный массив языковых данных, предназначенных для решения определенных лингвистических задач [Захаров 2005: 3]. К сожалению, *лингводидактический потенциал* языковых корпусов на сегодняшний день не оценен по достоинству и раскрыт не полностью.

Представим описание основных корпусов русского языка и раскроем некоторые стороны и возможности использования их потенциала с дидактических и методических позиций.

1. Национальный корпус русского языка (<http://www.ruscorpora.ru>) включает более 600 млн. слов. Кроме основного корпуса он содержит газетный, параллельный, диалектный, поэтический, обучающий, устной речи, акцентологический и мультимедийный, а также содержит особую дополнительную информацию о свойствах входящих в него текстов (так называемую разметку). Разметка - главная характеристика корпуса, отличающая его от простых коллекций (или “библиотек”) текстов, в изобилии представленных в Интернете.

Национальный корпус предназначен в первую очередь для обеспечения научных исследований лексики и грамматики языка, а также тонких, но непрерывных процессов языковых изменений, происходящих в языке. Важнейшая особенность инструментария НКРЯ – наличие функции KWIC (Key Word In Context)/ “Ключевое слово в контекстном

окружении”, которая дает возможность создавать конкордансы. В лексикографии под термином “конкорданс” понимается пример употребления слова в контексте фиксированной длины. С помощью функции KWIC на площадке НКРЯ можно получить конкорданс с ключевым словом в центре и использовать полученный результат при составлении лексико-грамматических упражнений. Задания с использованием конкорданса включают вертикальное чтение, наблюдение за поведением слова или словоформы в речи с учетом левого и правого контекстов [см. об этом Авакова 2017].

На площадке НКРЯ в рамках синтаксического подкорпуса доступна также информация о синтаксической структуре предложения (см. Рисунок 1, Рисунок 2).

на тугом, пружинном, похожем на **сердце** седле велосипеда казался мне существом [\[Показать структуру\]](#)
 Мое **сердце** , моя боль неизменно принадлежали второму [\[Показать структуру\]](#)
 Гарусов погрузил туда лицо, и **сердце** у него зашло от любви [\[Показать структуру\]](#)
 Бежал он очень медленно, но **сердце** билось, будто бежал быстро. [\[Показать структуру\]](#)
 Сладилось, воспоминание уже не рвет **сердце** , а, задетое, звучит музыкой. [\[Показать структуру\]](#)
Сердце сладко замирало и екало от [\[Показать структуру\]](#)
 костюм, что покорило он первое **сердце** . [\[Показать структуру\]](#)
 Или, вернее, первое **сердце** покорило его, Фаина... [\[Показать структуру\]](#)
 И радостью и страданием наполнилось **сердце** Павлова. [\[Показать структуру\]](#)
 сидел, стараясь не шевелиться, хотя **сердце** билось в предчувствии острия. [\[Показать структуру\]](#)
 Читаешь - и сладко замирает **сердце** : вот начнут разрабатывать три- четыре [\[Показать структуру\]](#)
 вероятно, что сам Хрущев в **сердце** своем действительно раскаивался в содеянном [\[Показать структуру\]](#)
 Сегодня он в самом **сердце** этой жизни. [\[Показать структуру\]](#)
 С болью в **сердце** я поддержал Фобос, все-таки этот [\[Показать структуру\]](#)

Рис.1. Результаты поиска в синтаксическом подкорпусе НКРЯ в формате KWIC




Рис. 2. Синтаксическая структура предложения в НКРЯ

2. ruTenTen - Интернет-корпус русского языка в составе системы SketchEngine (<https://www.sketchengine.co.uk/rutenten-corpus/>) включает тексты, загруженные из Интернета. Корпус принадлежит семейству TenTen corpus, которое представляет собой набор веб-корпусов (на более чем 30-и языках), построенных с использованием того же метода с общим объемом более 10 млрд. слов. Русский корпус очищен, дедулицирован, украинские и белорусские тексты удалены. Корпус лемматизирован и морфологически размечен: содержит частеречную разметку, аннотации и описания слов, позволяющие проводить сравнительное и сопоставительное исследование языков (см. Рисунок 3).




Рис.3. Скриншот Интернет-сайта ruTenTen

Программный инструментарий корпуса позволяет осуществлять поиск слов и словоформ как в обычном формате, так и в формате KWIC (см. Рисунок 4). Полученные результаты можно использовать не только в исследовательской работе, но и в методике обучения русскому языку (например, при составлении заданий и упражнений). При этом задание с использованием корпусного инструментария может формулироваться как исследовательская задача, проект или знакомство с проведенным сопоставлением, исследованием.




Рис.4. Результаты поиска слова в ruTenTen в формате KWIC

3. Google Books NGram Viewer (<https://books.google.com/ngrams>) - информационная система, которая содержит несколько корпусов размеченных текстов книг на 9-и языках. Программа работает на огромном массиве оцифрованных Google Books. На конец 2012 г. объем базы данных равен приблизительно 8 млн. книг (текстов), что составляет около 6% всех когда-либо опубликованных печатных книг. Корпус книг на русском языке (2012 г.) содержит 591 310 книг (текстов) или 67 137 666 353 словоупотреблений. Система строит график, на вертикальной оси которого откладывается относительная частота встречаемости заданной N-граммы в данном году, выраженная в процентах. На горизонтальной оси показаны годы, входящие в заданный пользователем временной интервал (см. Рисунок 5).

Кроме построения графиков, система представляет ссылки к текстам, найденным по запросам. По сравнению с другими корпусами, инструментарий *NGram Viewer* намного беднее, однако объем данных предоставляет широкие возможности для работы с информацией. Это в основном библиографические описания книг и фрагменты текстов с выделением в них цветом заданных N-грамм. В некоторых случаях доступен полный текст книги в графическом формате.




Рис.5. Поиск слова в Google Books Ngram Viewer

4. База данных русской прессы «Integrum» (<http://www.integrumworld.com/>) является крупнейшим в мире электронным архивом авторитетных источников информации о России. В Интегруме хранится более 500 миллионов документов в более 7000 базах данных. Это огромный массив текстов, включающих: а) полнотекстовые электронные версии центральных (около 700) и региональных (около 2000) российских газет и журналов; б) аналитические исследования и обзоры; в) адресно-справочные и правовые базы данных; г) материалы библиотечных фондов ИНИОН, Агропрома, Роспатента; д) законодательство Российской Федерации; е) полные тексты произведений русской классики и др.

Возможности поисковой системы ИНТЕГРУМ™ Профи (Артефакт) довольно широки и включают:

- ✓ алгоритм согласованного морфологического анализа, который позволяет производить поиск по всем словоформам;
- ✓ функцию "язык запросов", позволяющую наиболее точно задавать критерии отбора документов;

- ✓ инструмент "настройка области поиска", позволяющий выбрать формат и тематику информации, а также производить поиск как по одному, так и по нескольким источникам одновременно;
- ✓ показ "результатов поиска" в виде отчетов и списков, что позволяет оценить контекст, в котором употребляются интересующие пользователя слова, а также сгруппировать и отсортировать найденную информацию.

5. ХАНКО - Хельсинкский аннотированный корпус русских текстов (<http://www.ling.helsinki.fi/projects/hanco/>) содержит информацию о текстах общим объемом около 100 тыс. текстоформ, извлеченных из журнала "Итоги". При осуществлении поиска можно получить лингвистическую информацию и контекст для найденных предложений. Корпус предоставляет возможность ознакомиться с морфологическими признаками выбранного слова, получить синтаксическую информацию о предложении (графическую разметку и таблицу с синтаксическими признаками членов выбранного предложения), в котором употреблено данное слово, а также фрагмент текста с указанием на источник.

6. Корпус русского литературного языка (<http://www.narusco.ru>) содержит тексты со сбалансированным жанровым составом (художественная проза – не менее 30%, публицистика – не более 30%, научная литература (аналитика и обзоры, научно-популярная) – не более 20%, а также драматические произведения – около 20%), насчитывающие чуть больше 1 млн. словоупотреблений. В корпус включаются тексты с начала 50-х гг. XX века до настоящего времени. На базе корпуса создан частотный словарь словоформ и идет подготовка морфологически аннотированного варианта текстов. К сожалению, инструментарий корпуса больших возможностей не предоставляет.

Результаты работы с лингвистическими корпусами русского языка и анализ их инструментария показали, что корпуса обладают рядом особенностей, позволяющих рассматривать их как богатую лингводидактическую базу:

- ✓ во-первых, языковые корпуса показывают функционирование лингвистических единиц на большом *аутентичном* материале и в их естественном окружении – контекстной среде;
- ✓ во-вторых, на базе корпусов могут формироваться списки активной

лексики студентов, частотные списки терминов для использования в профессиональных курсах и т.п. При разработке и составлении учебников и пособий также можно опираться на аутентичные массивы текстов;

- ✓ в-третьих, преподаватели могут создавать задания и упражнения, включающие примеры из аутентичного материала, затрачивая меньшие усилия и получая большие результаты. Студенты в свою очередь получают естественные примеры демонстрации тех или иных грамматических или лексических явлений и смогут самостоятельно проводить лингвистические исследования.

ЛИТЕРАТУРА

1. Авакова Э.Р. Использование ресурсов НКРЯ при обучении РКИ в вузах Армении.// Вестник ЕГУЯСН им. В.Брюсова (Лингвистика и филология) 1(42). - Ереван, 2017. – с. 115-123.
2. Бабаян Т.А. Мультимедийные электронные учебные пособия в системе обучения русскому языку учащихся-армян. – Ереван: Григор Татеваци, 2011. – 163 с.
3. Бабаян Т.А. Теоретические основы проектирования и практическая реализация мультимедийных учебных пособий по русскому языку для основной школы РА: дис. ... док. пед. наук.- Ереван, 2014. - 347 с.
4. Бабаян Т.А., Самуэлян С.Б. Проблема создания мультимедийного пособия по русскому языку для учащихся-армян в свете глобальной информатизации общества.//Русский язык в Армении, 2010, N 8, с.7-18.
5. Захаров В.П. Корпусная лингвистика: Учебно-методическое пособие. – СПб., 2005. – 48 с.
6. Саркисян Г.Р. Лингводидактические основы создания электронного учебника по русскому языку для гуманитарных специальностей в вузах РА: дис. ... канд. пед. наук. - Ереван, 2015. – 172 с.

**ԷՐԻԿԱ ԱՎԱԿՈՎԱ – ԲՈՒՀՈՒՄ ՌՈՒՍԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԿՈՐՊՈՒՍՆԵՐԻ
ԼԵԶՎԱԴԻԴԱԿՏԻԿ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

Հոդվածը նվիրված է տեղեկատվական-հաղորդակցական, մասնավորապես, կորպուսային տեխնոլոգիաների կիրառմամբ ՀՀ բուհերում ռուսերենի դասավանդման խնդրին: Ներկայացվում է ռուսաց լեզվի կորպուսների գործիքակազմը, բացահայտվում է վերջիններիս լեզվադիդակտիկ ներուժը:

**ERIKA AVAKOVA – THE USE OF LINGUO-DIDACTIC POTENTIAL OF
LANGUAGE CORPORA WHEN TEACHING RUSSIAN AS A FOREIGN
LANGUAGE IN THE HEIs**

The article focuses on the teaching of Russian in Armenian HEIs using Information and Communications, in particular, Corpus technologies. The tools of the Russian Language Corpora are presented, the linguo-didactic potential of the latter is revealed.

**ԳԵՆԻՏԻՎ ՀՈՒՈՎԻ ԳՈՐԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

ՌԻՄԱ ԱՐՏՈՒՇՅԱՆ

Հիմնաբառեր՝ հոլով, գենիտիվ, գործաբանական, հնչութաբանական, շարահյուսական

Անգլերենում հոլովը բառի մեջ ձևի փոփոխություն է, որը ցույց է տալիս, թե ինչպես է բառը օգտագործվում նախադասության մեջ, այլ կերպ ասած, ինչպես է այն շարահյուսորեն հարաբերակցվում նախադասության մեջ այլ բառերի հետ [The cases in English / Department of classics. classics. osu. edu 2018. The Ohio State University] 06.03.18

«Գենիտիվ» նշանակում է ծնունդ, (սերում) (generation), որովհետև շատ կիրառություններում անձը, տեղը կամ առարկան ցույց տվող գոյականները իրականում չեն պատկանում լրացմանը [<https://www.dailywritingtips.com/the-7-types-of-possessive-case/>]:

Ի տարբերություն ստացական հոլովի, որն արտահայտում է պատկանելիություն, գենիտիվը ստացականությունից զատ արտահայտում է նաև հետևյալ իմաստերը՝ առարկայի ծագում, բնութագրում կամ դրան բնորոշ գծեր [What is the Genitive case. Definition, Examples of English Genitive... <https://writingexplained.org/genitive-case/>]:

Քերականության մեջ գենիտիվը համարվում է գոյականների, ածականների և դերանունների միջև հարաբերակցվող հոլով, որն արտացոլում է նրանց միջև գործող սերտ կապը [[www.grammar-monster.com/learn_english. A student's Guide Cambridge University Press](http://www.grammar-monster.com/learn_english/A_student's_Guide_Cambridge_University_Press/)]:

Հոդվածում քննարկվում է գենիտիվ հոլովի գործաբանությունը պայմանավորող գործոնների շարքը, որոնք սերտ փոխազդեցության մեջ են գտնվում գենիտիվ կառույցի փոփոխության հարցում: Այդ գործոնները բաժանվում են չորս խմբի՝

1. իմաստային և գործաբանական
2. հնչութաբանական
3. մասնատման և վերլուծության /մշակման (parsing and processing)
4. տնտեսմանը միտված գործոններ

1. *Իմաստային և գործաբանական* խմբի մեջ են մտնում թեմատիկ գենիտիվը (thematic), տեղեկատվության կարգավիճակ (information status) և շնչավորության (animacy) ենթագործոնները կամ ենթախմբերը:

Թեմատիկ գենիտիվ գործոն.

Անշունչ գոյականները սովորաբար ստանում են "of " նախդիրը ստացական հոլովում, սակայն կան շատ բացառություններ: Ամենակնհայտ բացառությունը, որպես գործաբանական երևույթ, այսպես կոչված «թեմատիկ գենիտիվն» է: Եթե գոյականը ձեռք է բերում թեմատիկ արժեք, քանի որ իմաստային կենտրոնում է, ապա կարող է ստանալ "s" ձևայթաձևանիկ: Օրինակ՝

That is a beautiful teapot. And those teacups must be Meissen. Notice the **teapot's ornate** lid and slender figure.

Այսպիսով, «թեմատիկ գենիտիվով» կազմված կառույցը ներկայացնում է համատեքստի ընդհանուր թեման, ըստ որի էլ կանխատեսվում է, թե որ գոյականն է ստանում 's ձևայթաձևանիկ:

Տեղեկատվության կարգավիճակ գործոն.

Անզվերեն քերականության մեջ տեղեկատվության գործաբանական կողմը «հաջորդող տեղեկատվության կարգավիճակ» գործոնը հաճախ բնութագրվել է որպես նշանակալի որոշարկիչ (դետերմինանտ)՝ գենիտիվի ընտրության հարցում: Այսպիսով՝ հիմնվելով գրականության վերլուծությունների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ եթե լրացումը առաջնային դիրքում է, ապա "s" ձևայթաձևանիկով կառույցն է նախընտրելի (Biber et al., 1999:305-306, Quirk et al., 1985: 1282): Որպեսզի հնարավորություն ունենանք կողավորել այս գործոնը, մենք փորձեցինք հստակորեն համակարգել «հաջորդող տեղեկատվության կարգավիճակ» գործոնը, հստակ ձևով. այն է, եթե քննարկվող անվանական կապակցության լրացում բաղադրիչը արտահայտված է " of " նախդիր ստացական հոլովով, ապա տեղեկատվական հոսքի զարգացման փուլում (մոտ 50 բառ հետո) նույն գոյականը (որը " of " էր ստացել) որպես բառակապակցության գլխադաս բառ ստանում է "s" ձևայթաձևանիկ:

Շնչավորության գործոն.

Ինչպես արդեն նշել ենք, առաջին խմբի մեջ մտնող մյուս գործոնը շնչավորությունն է: Ելնելով գենիտիվի փոփոխությանը վերաբերող

գրականությունից՝ կարող ենք փաստել, որ լրացման բառային կարգը ամենավճռական գործոնն է գենիտիվի ընտրությունը կանխատեսելու համար: Ուստի, որքան շնչավոր է լրացում բաղադրիչը, այնքան ‘s ձևությամասնիկ ստանալու հավանականությունը մեծ է (Alterberg, 1982: 117-148, Biber et al.,1999: 302-303, Dahl, 1971:140, Jucker, 1993: 126-128, Kreyer, 2003: 172, Rosenbach, 2003, Rosenbach, 2005, Taylor, 1989:668-669):

2. Հնչութաբանական գործոնը էապես պայմանավորված է բառակապակցության մեջ լրացում բաղադրիչի վերջին շչական հնչույթի առկայությամբ, որը խոչընդոտում է ‘s’ գենիտիվի գործածությունը (Altenberg, 1982, Zwicky, 1987):

Օրինակ՝

But that is the sad and angry side of Bush.

Համակարգելով հնչութաբանական այս սահմանափակման դեպքերը և քննելով բառակապակցությունների մեջ այն լրացումները, որոնք ավարտվում են հետևյալ շչական (տուվական) հնչույթներով՝ (“s” congress բառի մեջ, “ce” resistance բառի մեջ, “sh” bush բառի մեջ, “tch” match բառի մեջ և “z” jazz բառի մեջ), հանգեցինք այն եզրակացությանը, որ նշված դեպքերում գերակշռությունը տրվում է “ of ” ձևությամասնիկ պարունակող գենիտիվին:

3. Գենիտիվի կառուցվածքի վրա ազդող երրորդ գործոնը մասնապուրմը և վերլուծություն/ընկալումն է: Այս վերլուծության հետ հարաբերակցող գործոններն են՝ հավելյալ գենիտիվը (nested genitive), հաստատականությունը (persistence) և այսպես կոչված ծանրությունը վերջ տանելու (end weight)-ի սկզբունքը:

“End -weight” գործոն.

“End-weight” գործոնը առանձնացնող լեզվաբանների (Behaghel, 1909,1910,Wasow,2002) տեսության հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ լեզուն կիրառողները հակված են օգտագործելու ավելի «ծանր», ավելի բարդ բաղադրիչներ՝ ավելի կարճ, «թեթև» բաղադրիչներից հետո, որը նպաստում է նախադասության դյուրին ընկալմանը (Hawkins,1994): Ներկայացվում է, որ end- weight սկզբունքը ազդեցություն է ունենում ” s ” և ” of ” գենիտիվի փոխհաջորդման վրա, այն է, եթե լրացումը «ծանր» է, նախապատվությունը տրվում է ” of ” գենիտիվին, որովհետև լրացումը դրվում է կապակցության վերջում, իսկ եթե լրացյալն է ծանր, ակնկալվում է ” s ” գենիտիվի

գերադասությունը, որովհետև լրացյալն է դրվում նշված հատվածի վերջում (Altenberg, 1982: 76-79, Biber et al., 1999: 304-305, Kreyer, 2003: 200-204, Quirk et al ., 1985: 1282, Rosenbach, 2005): Օրինակ՝

Instructions of Captain John Smith (vs. Captain John Smith' s instructions)

Smith' s instructions, commands and requests (vs. instructions, commands and requests of Smith)

Հավելյալ գենիտիվ գործոն.

Նշված գործոնը մեկ այլ երևույթ է, որը ընդգրկում է բարդ կառուցվածքով կապակցություններ, որոնց համալրումը նախադասության շարահյուսական վերլուծության և լեզվի գործածության դժվարություն է ներկայացնում: “s” գենիտիվը նախընտրելի է այն դեպքում, երբ լրացումը կամ լրացյալը պարունակում է այսպես կոչված հավելյալ “of ” և նաև հատկանշական է այն դեպքը, երբ “of” գենիտիվը նախընտրելի է այն դեպքում, երբ լրացումը կամ լրացյալը պարունակում է “s” գենիտիվ: Օրինակ՝ the recent birth of the friend' s daughter

Այլ կերպ ասած, հիմք է ընդունվում ձևաբանական – շարահյուսական ազդեցությունը, որպեսզի լեզուն օգտագործողները խուսափեն երկու նման գենիտիվ կառույցից միևնույն անվանական կապակցության մեջ (Rohdenburg, 2000):

4.հնչյառարդեն նշել ենք, չորրորդ խումբը ընդգրկում է *տնտեսություն միավոր գործոնները*, որոնք ներառում են (type-token ratio) և անվանականություն (nouniness) ենթագործոնները: Այստեղ “s” գենիտիվը համարվում է ավելի սեղմ և տնտեսող միջոց, որը ըստ Բայբերի և այլոց (Biber et al 1999:302) «արտահայտության ավելի թափանցիկ և պակաս խիտ միջոց է»: Որքան տարբեր են տվյալ հատվածում բառերի տեսակները, այնքան բարձր է բառային խտությունը, ուստի անհրաժեշտ է ավելի շատ սեղմում՝ ասելիքը հակիրճ ներկայացնելու համար և օգտագործվում է ոչ թե of - գենիտիվը, այլ s-գենիտիվը:

Այսպիսով, գենիտիվ հոլովի գործաբանությունը պայմանավորում են՝ իմաստային և գործաբանական, հնչույթաբանական, մասնատման և վերլուծության /մշակման (parsing and processing) և տնտեսմանը միտված գործոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Altenberg B. The Genitive v. the Of – Construction. A Study of Syntactic Variation in 17th Century English. 1982.
2. Behaghel. O. Beziehungen zwischen Umfang und Reihenfolge von Satzgliedern Indogermanische Forschungen. 1909/1910.
3. Biber, D., G. Leech, S. Johansson Longman Grammar of Spoken and Written English. London / New York: Longman. 1999.
4. Bock, K. Syntactic persistence in language production. Cognitive Psychology. 1986.
5. Hawkins, J. A Performance Theory of Order and Constituency. Cambridge: Cambridge UP. 1994.
6. Osselton, N. Thematic Genitives. In Nixon, G. J. Honey. An Historic Tongue: Studies in English Linguistics in Memory of Barbara Strang. London : Routledge. 1988.
7. Rosenbach, A. Aspects of iconicity and economy in the choice between the s – genitive and the of – genitive in English. Determinants Of Grammatical Variation in English. Berlin, New York: 2003.
8. Rohdenburg, G. Implications of a hotrrior aequi principle in Early and Late English. 2000.
9. Jucker, A. The genitive versus the of – construction in newspaper language. In Jucker, A. (ed.) The Noun Phrase in English. Its Structure and Variability. 1993.
10. Szmrecsanyi, B. Morphosyntactic prrsistence in spoken English. Berlin / New York. 2006.
11. Taylor, J. Possessives Genitives in English. Linguistics 27: 1989.
12. Tannen, D. Talking Voices: Repetition, Dialogue, and Imagery in Conversatoinal Discourse. Cambridge : Cambridge UP. 1989.
13. Wasow, T. Postverbal Behavior. Stanford, CA: CSLI Publications. 2002.
14. Weiner, J. et.al. Constraints on the agentless passive. Journal of Linguistics. Kreyer, R. 2003. Genitive and of – construction in modern written English. Processability and human involvement. International Journal of Corpus Linguistics 8: 169-207. 1983.

РИМА АРТУШЯН- ПРАГМАТИКА ГЕНЕТИВА В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

В настоящей статье представлен анализ разных факторов, обуславливающих прагматический эффект генетива в английском языке. В отличие от родительного падежа, выражающего принадлежность, генитив кроме принадлежности, выражает также: происхождение предмета, его характеристику или характерные черты.

RIMA ARTUSHYAN – ON PRAGMATIC ASPECTS OF THE GENITIVE CASE IN ENGLISH

The article touches upon the pragmatic factors of the genitive case. We have introduced a concise analysis of the conditioning factors in genitive, marked a series of univariate analysis of how these factors interact with genitive variation.

ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

ՌԻՄԱ ԱՐՏՈՒՇՅԱՆ

Հիմնաբառեր՝ կարգ, հոլով, շարահյուսական, ձևաբանական

Հոդվածում ներկայացվում են տարբեր լեզվաբանների դրույթները՝ հոլովի քերականական կարգի վերաբերյալ: Հոլովի ուսումնասիրության համար ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնել, թե այն ինչպիսի քերականական կարգ է, դրա միջոցով ինչ է արտահայտում և ինչպիսի համակարգ է ներկայացնում տարբեր լեզուներում:

Հոլովի արևմտյան հայեցակարգերի շարքում թերևս ամենահայտնին Չարլզ Ֆիլմորի իմաստային (խորքային) հոլովների տեսությունն է (Филмор 1981: 369-530):

2. Ֆիլմորը նշում է այն կարևոր հանգամանքը, որ «հոլովի» քերականական հասկացությունը իր ուրույն տեղը պետք է ունենա ցանկացած լեզվի քերականության հիմնական բաղադրիչում: Նա գրում է, որ նախկինում «հոլով» հասկացությունը սահմանափակվում էր գոյական անվան բոլոր հնարավոր իմաստային և նախադասության մյուս մասի միջև եղած հարաբերությունների ուսումնասիրությամբ: Համարվում էր, որ նկարագրել հոլովը նույնն է, ինչ ուսումնասիրել անվանական բառաստեղծ ածանցների իմաստային գործառույթները կամ էլ որոշակի անվանական ածանցների և նախադասության հարևան անդամների բառաքերականական հատկանիշների միջև հարաբերությունները: Նրա կարծիքով հոլովային հարաբերությունների ճիշտ ընկալման համար, անհրաժեշտ է հիմնական կառուցվածքի այնպիսի հայեցակարգ, որի դեպքում հոլովային հարաբերությունները լինեն տեսության տարրական հասկացություններ: Սա նշանակում է հետևյալը.

1. պետք է հաշվի առնել հոլովային իմաստների ամբողջությունը, որը հարմար է ցանկացած լեզվի համար՝ բոլոր շարահյուսական, բառային և իմաստային առանձնահատկություններով, որոնք կարող են հարմարեցնել յուրաքանչյուր կոնկրետ լեզվին:

2. մակերեսային կառուցվածքով «հոլով» հասկացությունը սահմանափակելու յուրաքանչյուր փորձ պետք է համարվի ոչ օրինաչափական (Филмор 1981: 372):

Որպես ապացույց Ֆիլմորը ընդունում է 2 կարևոր հանգամանք:

- քերականության մեջ շարահյուսության կենտրոնական դերի մասին ենթադրություն
- թաքնված կարգերի կարևորության մասին ենթադրություն (Филмор 373-374):

Այս կապակցությամբ Ֆիլմորը նշում է քերականական հատկանիշների կարևորությունը, որոնք նույնիսկ ակնհայտ «ձևությամբ» իրացման բացակայության դեպքում գոյություն ունեն իրականության մեջ և դրսևորվում է լեզվական միավորների փոխակերպային հնարավորություններում: Շարունակում է փաստել, որ քերականական հատկանիշները, որոնք առկա են մեկ լեզվում, դրսևորվում են այս կամ այն ձևով ուրիշ լեզուներում նույնպես:

Հետևելով Գրինբերգին՝ Ֆիլմորը նշում է, որ չի կարելի համեմատել հոլովները տարբեր լեզուներում: Երկու հոլովային համակարգեր կարող են ունենալ հոլովների տարբեր քանակ. միևնույն անվան տակ կարող են թաքնվել գործառնության տարբերություններ: Մասնավորապես նա գրում է, որ եթե մեկ լեզվում ագենսի (գործողություն կատարողը) դատիվը կարող է մյուս լեզվում լինել արևատիվ, նմանապես կարելի է ընդունել ագենսի հարաբերության առկայությունը՝ գոյականի և բայի միջև, այսպես կոչված, ոչ հոլովային լեզուներում: Եթե պարզվի, որ նախադասության մեջ կա ագենսի հարաբերություններ, ուրեմն կան նաև այլ փաստեր, ապա Ֆիլմորի կարծիքով պարզ կդառնա, որ հոլովային գործածությունների նկարագրության հինքում ընկած հարաբերությունները կարող են ունենալ ավելի մեծ լեզվաբանական կարևորություն, քան այն հասկացությունները, որոնց օգնությամբ նկարագրվում են մակերեսային հոլովային համակարգերը: Նման հավելյալ գործոնների շարքում, ինչպես Ֆիլմորը կարծում է, կարող է ներառվել գոյականների և բայերի սահմանափակ քանակ, որոնք կարող են մտնել այդ հարաբերությունների մեջ և ցանկացած հավելյալ ընդհանրացում, որը կարելի է դասել նման դասակարգերի շարքին: Կարող են լինել ավելի բարձր մակարդակների կապվածություն՝ ինչպես օրինակ, խորքային, «թաքնված» կարգերում առկա հարաբերությունները (Филмор 397):

Ֆիլմորը հաջորդ հարցն է առաջ քաշում. արդարացված է արդյոք «հոլով» եզրույթի կիրառումը հետազոտվող շարահյուսական իմաստային հարաբերություններում, որոնք ունեն ընդհանուր քիչ բան

սովորական հոլովների հետ (որոնք որոշարկվում են միայն գոյականների մեջ փոփոխվող բառայինների դեպքում):

Ֆիլմորի կարծիքով, եթե նախադասության մեջ կան հեշտ ճանաչվող հարաբերություններ, անկախ նրանից, արտացոլվում են նրանք հոլովային վերջավորություններով, թե ոչ, կարելի է ցույց տալ, որ այս հարաբերությունները համեմատելի են լեզուներում: Ֆիլմորը կարծում է, որ «հոլով» եզրույթի մասին վիճաբանությունները կորցնում են իրենց ուժը այն լեզվաբանական հետզոտությունների շրջանակում, որտեղ շարահյուսությունը կենտրոնական դերում է: Ընդ որում, նա նշում է, որ պատմական անցումը վերլուծական և համադրական հոլովների միջև բավական համոզիչ է, որպեսզի հայտարարվի, որ լեզվաբանները իրավունք չունեն հոլովները և նախդիրները համարեն տարբեր քերականական վերլուծության առարկաներ: Ֆիլմորը համարում է, որ այն հասկացությունը, որը մեզ հավանաբար անհրաժեշտ է, համապատասխանում է հոլովային հարաբերություններին (Филмор 399):

«Հոլով» եզրույթ ասելով՝ Ֆիլմորը հասկանում է խորքային շարահյուսական իմաստային հարաբերություն, իսկ «հոլովային ձև» ասելով՝ կոնկրետ լեզվում հոլովային հարաբերության արտահայտում, անկախ նրանից օգտագործվում է ածանցում, տարբեր տեսակի մասնիկի ավելացում թե բառի շարադասության սահմանափակում (Филмор 400):

Չնայած հոլովի կարգի վերաբերյալ լեզվաբանների կողմից ներկայացված տարբեր մոտեցումներին՝ նրանք միակարծիք են հոլովի երկակի բնույթի վերաբերյալ: Այս կապակցությամբ հաջողված է Վ. Վ. Գուրևիչի ներկայացրած սահմանումը՝ «Ձևի տեսանկյունից հոլովը ձևաբանական կարգ է (այն արտահայտվում է գոյականական ձևերի միջոցով), իսկ բովանդակության տեսանկյունից՝ շարահյուսական կարգ է, քանի որ հոլովը արտացոլում է գոյականների և նրանց հետ շարահյուսորեն կապված այլ բառերի միջև հարաբերությունը» (Гуревич 2003:26):

Ավանդական քերականության մեջ հոլովային իմաստները հաշվարկվել են յուրաքանչյուր հոլովին բնորոշ իմաստների ցանկով: Սակայն, դեռ Ա. Մ. Պեշկովսկին իր աշխատություններում նշում էր, որ չպետք է շփոթել հոլովային իմաստները՝ լրացման և լրացյալի բառային իմաստների հետ, ինչպես նաև մասնատել անվերջ քանակով իմաստները (Пешковский 1956:292):

Վ. Վ. Վինգրադովը հանգել է այն եզրակացության, որ բոլոր վերհանված իմաստները մեկ ընդհանուր բանաձևով ներկայացնելու փորձը «անհաջողության է մատնված» (Виноградов 1972:146): Ձևաբանության ոլորտում կարևորվում է նախ և առաջ հիմնական, ամենաընդհանուր, իմաստների ամբողջությունը, որոնք բնորոշ են այս կամ այն հոլովին՝ դրա տարբեր դիրքերում:

Հոլովը, որը բազմիմաստ միավոր է, բնութագրվում է իր նշանակությունների համակարգով: Յուրաքանչյուր հոլովի հիմնական նշանակությունների վերհանման, ինչպես նաև տարբեր հոլովների միջև եղած սկզբունքային տարբերությունների սահմանման խնդիրը վաղուց լեզվաբանների ուշադրության կենտրոնում է (Якобсон 1985, Вежбицка 1985):

Մասնավորապես, Ե. Կուրիլովիչը տարբերում է իմաստային կարևոր և ոչ կարևոր հոլովներ, որը պայմանավորում է դրանց բաժանումը քերականական (շարահյուսական) և կոնկրետ (իմաստաբանական) հոլովների: Ե. Կուրիլովիչը առանձնացնում է հետևյալ քերականական հոլովները՝ նոմինատիվ, գերունոմինատիվ, իսկ կոնկրետ հոլովներինը՝ ինստրումենտալ, դատիվ, աբլատիվ, լոկատիվ (Курилович 1962: 176-203):

Ս. Դ. Կացնելսոնը սահմանափակում է հոլովների սուբյեկտ-օբյեկտ գործառույթները, որոնք բնութագրում են բայը ներսից՝ առանձնացնելով առարկաներ, որոնք «ներգրավված են» իրենց արտահայտած գործողության մեջ և հոլովների պարագայական գործառույթներ, որոնք անմիջականորեն կապված չեն բայական գործողության հետ, այլ ասես «կազմում են հիմնական բովանդակային փոն նախադասության համար», այդպիսով հստակեցնելով բայի գործողությունը: Պարագայակա գործառույթները արտացոլում են ժամանակ, տարածություն, պատճառ, հետևանք և այլն (Кацнельсон 1972:43-44):

Լեզվաբանները անդրադարձել են նաև հոլովի քերականական կարգին՝ լուսաբանել հոլովի քերականական կարգի ոչ միայն նշանակության, այլև ձևի և դրանց փոխկապակցության հարցերը: Նրանք նշել են, որ «Հոլովը անվան քերականական կարգ է, որի կարգային քերականական իրոյթները արտահայտում են տվյալ անվամբ նշվող հարաբերությունը այլ բառերով նշվող առարկաների կամ երևույթների նկատմամբ...», հոլովը «Անվան քերականական այն կարգն է, որը արտահայտում է նրանով նշվող առարկայի հարաբերությունը իրականության այլ առարկաների, հատկանիշների կամ եղելություններ

նկատմամբ...», «Հոլովը անվան ձև է, որը արտահայտում է նրա հարաբերությունը խոսքում այլ բառերի նկատմամբ», և կամ՝ «Գոյական անվան հոլովական ձևերով արտացոլվում է նյութական, իրական աշխարհի առարկաների, երևույթների, գործողությունների և հատկանիշների միջև եղած կապերի ըմբռնումը», «...հոլովը այնպիսի քերականական կարգ է, որը ներկայացնում է վերջավորության և քերականական այն իմաստների համատեղման միասնությունը, որոնք արտահայտում են գոյական անվան հարաբերությունը այլ գոյականի կամ գոյականի հարաբերությունը բայի նկատմամբ», «...երկակիությունը բնորոշ է նաև գոյականների հոլովի կարգի համար: Հոլովն ունի անվանողական արժեք. այն կապակցվելով նրանով կառավարվող բառույթների հետ՝ որոշում է մի առարկայի և այլ առարկաների գործողությունների կամ եղելությունների միջև եղած հարաբերությունների բնույթը», «Հոլովի կարգը անվան (գոյականի, դերանուն-գոյականի և թվականի) բառափոխական կարգն է, որը արտահայտվում է իրար հակադիր մի շարք այնպիսի ձևերի համակարգում, որոնք ցույց են տալիս անվան հարաբերությունը մի այլ բառի (բանաձևի) նկատմամբ բառակապակցության կամ նախադասության կազմում» և այլն (տես՝ Մարգարյան 2014):

Լեզվաբանները գտնում են, որ «Հոլովը ձևի վրա է հիմնված, և հոլովների որոշման սկզբունքը դրանց ձևն է. Դա այդպես է ոչ թե նրա համար, թե իբր ձևն ավելի կարևոր է, քան թե այդ ձևի արտահայտած նշանակությունը, այլ սուսկ նրա համար, որ նշանակությամբ հոլով որոշելն անհնար է: Հոլովական ձևերը սահմանափակ են և որոշակի, իսկ այդ ձևերի նշանակությունները ոչ միայն շատ և բազմազան են, այլև՝ մեկ հոլովաձևով շատ նշանակություններ են արտահայտվում, և ընդհակառակն՝ մեկ նշանակությամբ հաճախ մի քանի հոլովաձև է արտահայտվում, ուստի հնարավոր չէ նշանակությունների վրա հիմնվելով որևէ լեզվի համար հոլովների որոշակի կարգ սահմանել և որոշել, թե քանի հոլով կա այդ տվյալ լեզվում: Գրաբարում և արևմտյան հայերենում ներգոյական հոլով չեն դնում, որովհետև դրանցում ներգոյականի առանձին ձև չկա. Այդպես է ընդունված նաև ուրիշ լեզուներում, օրինակ, անգլերենի քերականություններում միայն երկու հոլով են դնում, որովհետև անգլերենում միայն երկու հոլովաձև կա» (տես՝ Շարախանյան Պ., Պիվազյան hpj.asj-oa.am/1277/1/1968-4(61).pdf):

Վերլուծելով տարբեր լեզվաբանների (Ա. Ա. Ռեֆորմատսկի, Ռ. Ա. Բուդագով և այլք) ներկայացրած դրույթները այն մասին, որ որքան

կարևոր է հոլովի ձևը, նույնքան էլ նշանակությունը՝ մենք հակված ենք ընդունել հայազգի լեզվաբան Ռ. Ա. Բուդագովի այն հավաստումը, որ «Հոլովը, իբրև քերականական կարգ ներկայացնում է իմաստի և դրա արտահայտման ձևի բարդ միասնություն»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարգարյան Ա. Հոլովների ընդհանուր լեզվաբանական ըմբռնումը: Լրաբեր Հասարակական Գիտությունների, №1. pp. 3-16., 2014. [Iraber.asj-oa.am/1786/](http://iraber.asj-oa.am/1786/)
2. Շարախանյան Պ., Պիվազյան Է., Արդի հայերենի հոլովների մասին: [hpj.asj-oa.am/1277/1/1968-4\(61\).pdf](http://hpj.asj-oa.am/1277/1/1968-4(61).pdf)
3. Ахманова О. С., Словарь лингвистических терминов, М., 1969, с.305
4. Будагов Р. А., Очерки по языкознанию, М., 1953, с. 168
5. Виноградов В.В. Русский язык:Грамматическое учение о слове/В.В. Виноградов.-М.:Высшая школа,1972.-615с.
6. Вежбицка А. Дело о поверхностном падеже/А. Вежбицка//Новое в зарубежной лингвистике. -М.: Прогресс, 1985.-Вып. 15.-С.303-341.
7. Гуревич В.В. Теоретическая грамматика английского языка: Сравнительная типология английского и русского языков: учеб. Пособие/В.В. Гуревич.-М.:Флинта, Наука,2003.-168с.
8. Кацнельсон С.Д. Типология языка и речевое мышление/С.Д. Кацнельсон.-Л.: Наука, 1972.-216с.
9. Курилович Е.Очерки по лингвистике/ Е. Курилович.-М.: Изд-во иностр. лит-ры, 1962.-252с.
10. Милославский И. Г., Морфологические категории современного русского языка, М., 1981, с. 69
11. Пешковский А.М. Русский синтаксис в научном освещении/А.М. Пешковский.-7-е изд.-М.:Учпетгиз,1956.-511с.
12. Филмор Ч.Дело о падеже/Ч. Филмор// Новое в зарубежной лингвистике. -М.: Прогресс, 1981.-Вып. 10.-С. 369-530.
13. Якобсон Р.О.Избранные работы/Р.О. Якобсон.-М.:Прогресс,1985.-455с.

РИМА АРТУШЯН - ФУНКЦИОНАЛЬНОСТЬ ГРАМАТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ ПАДЕЖА

Данная статья посвящена функциональному анализу категории падежа в английском языке. Рассматриваются разные подходы западных, русских и армянских лингвистов к определению категории падежа.

RIMA ARTUSHYAN -ON THE CATEGORY OF THE CASE

The article deals with the category of the case. Different scholars give different definitions and have different approaches to the category of the case.

**ԱՆՀԱՏԻ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԼԻԼԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Հիմնաբառեր՝ աշխարհայացք, անհատի վարվելակերպ, բարոյական գիտակցություն, դիմելաձև, ողջույնի ձևեր, խոսքային գործունեություն

Անհատը հասարակության զարգացմանը համընթաց, նույն հասարակության կողմից ստեղծված յուրահատուկ կերպար է, որն իրականացնում է իր առաքելությունը այն հասարակության համար, առանց որի իր գոյությունն անիմաստ է և անհնար: Կարևոր հանգամանք է, որ յուրաքանչյուրն ստեղծի իր հաստատուն անհատականությունը: Մարդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սեփական աշխարհայացքով, քանի որ այն ապահովում է բնության և հասարակության բարդ երևույթների իմացության, մարդկային փոխհարաբերություններում ճիշտ կողմնորոշվելու, նաև կենսագործունեության բոլոր բնագավառներում անհատի վարվելակերպի գնահատման հուսալի ուղի: Մարդն իր գործունեության ընթացքում ստեղծել է իր անհատական աշխարհայացքը: Մարդկության համար քաղաքավարի հաղորդակցվելու գաղափարը ապրելակերպի պարտադիր պայմանն է: Անհատը շփվում է տարբեր մակարդակների մարդկանց հետ, այդ պատճառով շատ կարևոր է ճշգրիտ և տեղին բառապաշարի օգտագործումը, որն էլ կարող է իրավիճակի կառավարման գրավականը դառնալ:

Յուրաքանչյուրն իր կյանքի և գործունեության ընթացքում ղեկավարվում է իր ստեղծած աշխարհայացքով: Պատմական ամեն մի ժամանակաշրջանում մարդիկ կամ տարբեր սոցիալական խմբեր տարբերվել են անհատական աշխարհայացքներով, քանի որ վերջիններս արտահայտում են այս կամ այն դասակարգի կամ մարդկանց խմբերի էությունը: Առօրյա կյանքում մարդն առաջնորդվում է իր իսկ ստեղծած և իր համար կատարյալ աշխարհայացքով, քանի որ այն հասարակության բարդ երևույթների իմացության, ինչպես նաև մարդկային փոխհարաբերությունների մեջ ճիշտ կողմնորոշվելու հնարավորություն է տալիս:

Քաղաքավարի է այն անձը, որն ուշադիր է դիմացինի կարծիքի, ճաշակի, սովորույթների նկատմամբ, ձայնը չի բարձրացնում գործընկերների կամ անձանոթ մարդկանց հետ խոսելիս, չի նվաստացնում ուրիշի արժանապատվությունը, օգնում է դժվար իրավիճակների մեջ հայտնված մարդկանց: Անհատի կարևոր հատկանիշներից է համեստությունը, որը շրջապատին ճանաչելու և սեփական անձի իրական արժեքի գիտակցում է: Սակայն համեստությունն ու քաղաքավարությունը չեն ենթադրում ցանկացած՝ քննադատության արժանի վարքագծի հանդուրժում:

Մարդն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է բարոյական փոխհարաբերությունների այն սկզբունքներով, որոնք զարգացման տվյալ փուլում իշխում են հասարակության մեջ: Վերջիններս ձևավորվում են բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են օրինակ, յուրաքանչյուրի կյանքի պայմանները, փորձը, կրթությունը, դաստիարակությունը և այլն: Անհատի բարոյական գիտակցության ընդհանուր չափանիշը որոշվում է բարոյական պահանջների իմացության և գործնականում դրանք կիրառելու աստիճանով: Բարոյական գիտակցությունը ձևավորվում է միայն այն անհատի մեջ, ում համար հասարակության բարոյականության սկզբունքները համոզմունք են դարձել:

Անհատն ունի ներքին և արտաքին քաղաքավարության արտահայտման իր ձևերը: Ներքին քաղաքավարությունը հասարակության բարոյականության յուրացման մակարդակն է, արտաքին քաղաքավարությունը՝ ներքին քաղաքավարության կոնկրետ արտահայտությունը վարվելակերպի մեջ: Այլ կերպ ասած, մարդու արտաքին բարոյական մշակույթը նրա վարվելակարգն է: Վարվելակարգը անհատի վերվեցողության մեջ և միջանձնային հարաբերություններում ի հայտ եկող կանոնների և գործելաձևի միագումարն է: Անհատի քաղաքավարության մեջ առկա են «ներքին» և «արտաքին» գործոնները, որոնք մարդկության առջև դրված սուր հիմնահարցերից են: Տարրական քաղաքավարությունը, բարեկրթությունը, պարզությունը լեզվի տեսանկյունից կարող են լինել արտաքին քաղաքավարության պահանջներ: Վերոնշյալ հակադրությունը նկատվում է լեզվի ոչ ճիշտ գործածության դեպքում, որը կարող է բախման պատճառ դառնալ: Սակայն լեզվի ճիշտ գործածությամբ կարելի է ազատվել հնարավոր և իրական բախումներից: Ըստ էության, կարծրատիպացման և նորմերի ձևավորման, ինչպես նաև վարքային

շրջանակների ուսումնասիրությամբ զբաղվում է գործաբանությունը: Ներքին և արտաքին քաղաքավարությունների միասնությունն ու տարբերությունը ֆրանսերենի և հայերենի զուգադրության ժամանակ ի հայտ է գալիս առօրյա խոսակցության ընթացքում: Հաճախ լեզվական առումով քաղաքավարության նորմերի միաձուլում է տեղի ունենում (Ահարոնյան 1981):

Սույն հոդվածում առանձնացրել ենք դիմելաձևի հետևյալ տեսակները. ավանդական ողջույնները և ներկայանալը:

Ողջույնը մարդկանց փոխհարաբերությունների պարզ, ավանդական և լեզվական առումով ոչ բարդ ձևերից մեկն է: Մարդկային փոխհարաբերություններում ողջույնը անհրաժեշտ քաղաքավարական միջոց է, որը գոյություն է ունեցել մարդկային հասարակության առաջացման օրից և կշարունակի գոյություն ունենալ՝ որպես հաղորդակցվելու և տարբեր մակարդակների խոսակցություն սկսելու պարտադիր պայման:

Հնագույն ժամանակներից ի վեր տարբեր ժողովուրդներ ողջունելու տարբեր ձևեր են ունեցել: Ավանդական դարձած այդ ձևերը փոխանցվել են սերնդեսերունդ՝ կրելով որոշակի փոփոխություններ, իսկ շատ հաճախ պահպանվել են: Վերջիններս լեզվական կամ ոչ լեզվական բնույթի են. օրինակ՝ լեզվական միջոցներ՝ *Bonjour M/Mme /Բարի օր/*, *Bonsoir M/Mme/ Բարի երեկո*. ոչ լեզվական միջոցներ՝ *Enlever le chapeau/ Գլխարկ հանել*, *Sourire aimable/ Բարյացակամ ժպտալ*, *Faire des révérence / Խոնարհվել* *Se serrer les mains / Ձեռքսեղմումներ*, և այլն:

Այսօր պահպանվել են ողջույնի ձևեր, որոնք գոյություն են ունեցել դեռևս հնագույն ժամանակներից, սակայն երբեք դրանց ստեղծվելու աղիթների և մասնավորապես անհրաժեշտության մասին մարդիկ չեն մտածել: Օրինակ՝ ձեռքսեղմումը եղել է ցեղապետերի խաղաղասիրական ձգտումների արտահայտման նշան: Հանդիպման ժամանակ նրանք զենքը բռնել են ձախ ձեռքով, իսկ աջով՝ ողջունել միմյանց: Մինչդեռ այսօր ձեռքսեղմման համար աջը մեկնելը համարվում է հարգանքի նշան ավագ ընկերոջը, գործընկերոջը, նույնիսկ մտերիմին: Ձեռքսեղմման ժամանակ տղամարդը հանում է ձեռնոցը, իսկ կինը՝ ոչ: Անկեղծ ձեռքսեղմումը կարող է բարձրացնել մարդու տրամադրությունը: Անձանոթին դիմելիս պետք է հաշվի առնել նրա տարիքը, զբաղեցրած պաշտոնը: Անձանոթին սովորաբար դիմում են անուն -ազգանվամբ, շատ տարածված է նաև ռուսերենից փոխառված անուն-հայրանունով դիմելաձևը: Վերջինս լայն տարածում ուներ խորհրդային, նույնիսկ հետխորհրդային

ժամանակաշրջանում /հազվադեպ, սակայն նկատվում է նաև մեր ժամանակներում/: Այսօր առավել տարածված և կիրառելի է ազգանվան հետ տիկին/պարոն ձևերի կիրառումը :

2012 թ-ին Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիոնի գրասենյակից հրապարակվել է մի հաղորդագրություն առ այն, որ Ֆրանսիայում բոլոր պաշտոնական փաստաթղթերում արգելվում է «մադմուազել», ինչպես նաև օրիորդական (nom de jeune fille) ու ամուսնական ազգանունով (nom d'épouse) դիմելաձևերը: «Օրիորդական ազգանուն» արտահայտության փոխարեն Ֆրանսիայում օգտագործվում է «ազգանուն», իսկ «ամուսնական ազգանուն»-ի փոխարեն «գործող ազգանուն» արտահայտությունը: Նման փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ վերոնշյալ դիմելաձևերը հաշվի չէին առնում այրիների, ամուսնալուծված կանանց կարգավիճակը: Այդ դիմելաձևի արգելքը ֆրանսիական ֆեմինիստական կազմակերպությունների ակտիվ քարոզչության և պայքարի արդյունք է: Նրանք պնդում էին, թե «մադմուազել» ձևը «սեքսիզմի» դրսևորում է, քանի որ վերջինիս գործածությունը փաստացի բացահայտում էր իգական սեռի ներկայացուցչի ընտանեկան կարգավիճակը, որն իրականում ոչ միշտ է ցանկալի: Բացի այդ, ֆրանսիական այդ բառի «oiselle» հատվածը ֆրանսերենում նշանակում է միամիտ, անմիտ, անփորձ, երբեմն նաև պարզամիտ աղջիկ, ինչը ևս վիրավորական է հասցեատիրոջ համար (Petit Robert, 2012): Սովորաբար «մադմուազել» կոչում են չամուսնացած կանանց: Նման դիմելաձևը ներառում է նաև թաքնված իմաստ, որը չնայած չի բարձրաձայնվում, այդուհանդերձ ընկալվում է որպես այդպիսին: Օրինակ, նշվում է, որ եթե ֆրանսիացին կնոջն ասում է «մադմուազել», ապա դրանով իսկ հաճոյախոսում է նրան, ընդգծելով այն հանգամանքը, որ կինը գեղեցիկ ու ազատ է: Այժմ «Mademoiselle» բառն արգելված է օգտագործել պաշտոնական փաստաթղթերում: Որոշում է կայացվել այն փոխարինել «Madame» (տիկին) բառով :

Նույն պատկերն է նաև Գերմանիայում: Այնտեղ ևս որոշում է կայացվել հրաժարվել ընտանեկան կարգավիճակի հստակեցումից: Նրանք ֆրոյյայն Fräulein (օրիորդ) դիմելաձևից հրաժարվել են դեռևս 1972 թ-ին: Այս միտումը տարածվել է նաև անգլալեզու երկրներում, որտեղ ևս աստիճանաբար սկսում են հրաժարվել «miss» (օրիորդ) դիմելաձևից :

Խոսքային գործունեության ընթացքում ոչ պակաս կարևոր է անձնական դերանունների ճիշտ ընտրությունը, կիրառումը, ինչը

խոսքային էթիկետի կարևոր տարրերից է: Ըստ իրավիճակի հաճախ գրուցակցին կարելի է հարցնել արդյո՞ք կարելի է «դու»-ով խոսել «tutoyer»: Պատասխանից էլ կախված է գրուցի ընթացքում անձնական դերանվան ընտրությունը: Ֆրանսիական էթիկետը նախապատվությունը տալիս է «Դուք» անձնական դերանվանը՝ անհարմար վիճակում չհայտնվելու համար: Հաճախ, եթե խոսակցությունը սկսում է «դու»-ով, կարող է դժգոհության առիթ դառնալ գրուցակցի համար, հատկապես ֆրանսիական քաղաքակրթության մեջ: Սակայն միշտ չէ, որ նույն «Դուք»-ը արտահայտում է գրուցակցի նկատմամբ խորը հարգանք: Հաճախ «դու»-ն օգտագործում են միայն ընտանիքի անդամների և շատ մտերիմների հետ գրուցելիս: Իսկ եթե խոսակցության ընթացքում «դուք»-ով դիմում են մտերիմ մարդուն, ապա դա դիտվում է ոճական թույլատրելի անարգանք մտերիմի նկատմամբ: «Դու» և «Դուք» դիմելաձևերի տարբերությունը նույնիսկ ակնհայտորեն տարբերվում է ֆրանսախոս երկրներում: Օրինակ՝ Քվեբեկում անձանոթին դիմելիս ավելի ազատ օգտագործում են «Դու» անձնական դերանունը՝ անկախ գրուցակցի դիրքից, քան Ֆրանսիայում, որտեղ լեզվաոճական կանոնները ավելի խիստ են:

Բարեկիրթ մարդը առաջնորդվում է ողջույնի սահմանված վարվելակարգով: Ըստ քաղաքավարության ընդունված կանոնների՝ տղամարդիկ առաջինն են ողջունում կանանց, երիտասարդները՝ մեծահասակներին, պատանիները ոտքի են կանգնում մեծահասակներին ողջունելիս: Սովորաբար նստած կարելի է ողջունել միայն մեծ տարիքում, իսկ եթե ներս է մտնում կինը, ապա անկախ տարիքից՝ տղամարդը ոտքի է կանգնում: Ինչ վերաբերում է գլխարկներին, ապա ֆրանսիայում ողջույնի ընդունված ձև է գլխարկ հանելը՝ բացառությամբ ծմեռային գլխարկների:

Այսպիսով, գոյություն ունի մեկ՝ հաստատված և բոլորի կողմից ընդունելի կարգ, այն է՝ ներս մտնողն է առաջինը ողջունում և, համապատասխանաբար, դուրս եկողը հրաժեշտ է տալիս առաջինը: Այսօր գրեթե բոլոր լեզուները, այդ թվում՝ հայերենը, ունեն դիմելու առնվազն երկու տարբեր դերանուններ՝ ֆրանսերենում՝ tu և vous, հայերենում՝ դու և դուք, ռուսերենում՝ ты և Вы և այլն: Այս դերանուններն ընդգծում են յուրաքանչյուր համատեքստում մեկ իմաստ: Օրինակ՝ կարող են արտահայտել հոգնակիության իմաստը քերականորեն և հարգանքի իմաստը՝ ոճականորեն: Անգլերենում դու և Դուք դիմելաձևերի տարբերություն չկա: Նույն You անձնական դերանունը, կախված

համատեքստից կարող է արտահայտել եռակի իմաստ: Արտահայտել եզակի և հոգնակի քերականական թվի երկրորդ դեմք, ապա քաղաքավարության և հարգալից վերաբերմունքի դրսևորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ահարոնյան Ա.Ս., Վարքի կոլտուրա, Երևան, Լույս, 1981թ.:
2. Լեպեշինսկայա Օ.Վ., Օրդանսկայա Լ.Ռ., Ժուկովա Ռ.Մ. և ուրիշներ, Վարվելակերպի էսթետիկա, Երևան, Հայաստան հրատ., 1966թ.:
3. Le Petit Robert : dictionnaire alphabétique et analogique de la langue française : version numérique, <http://pr.bvdep.com/>
4. Формановская Н.И., Культура общения и речевой этикет, М., изд-во ИКАР, 2005 г.
5. <https://www.melty.fr/mademoiselle-disparait-de-la-langue-francaise-actu96281.html>
6. <http://bigbrowser.blog.lemonde.fr/2014/07/15/bienseance-les-regles-du-vouvoisement-expliquees-aux-anglophones/>

ЛИЛИТ БАБАЯН – ЯЗЫКОВЫЕ ПРАВИЛА ПОВЕДЕНИЯ ЛИЧНОСТИ В ПРОЦЕССЕ МЕЖЛИЧНОСТНЫХ ОТНОШЕНИЙ

В данной статье исследуется процесс становления речевого поведения личности, которое способствует правильной ориентации в межличностных взаимоотношениях, а также регулирует речевую деятельность в зависимости от коммуникативной ситуации. Описываются этикетные речевые модели, являющиеся залогом управления речевой ситуацией. В статье выделены способы обращения, а именно приветствие, Ты- и Вы-общение, которые выполняют контактоустанавливающую функцию.

LILIT BABAYAN – THE LINGUISTIC RULES OF INDIVIDUAL BEHAVIOR IN INTERPERSONAL RELATIONS

The article plots the actualization of individual speech behavior as a way to prompt adequate orientation in interpersonal relations along with regulating the speech act on the basis of communicative situation. The article sketches the leading role of speech etiquette models in communication. It touches upon the ways of addressing, mainly the welcoming ones, and it presents you (informal) and You (formal) interaction which all carry phatic function.

ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՐԵՏԱ ԲԱԶԻԿՅԱՆ

Հիմնաբառեր՝ փոխադարձության կարգ, անդրադարձություն, սեռ, փոխադարձ դերանուններ, բառային, վերլուծական, միջանձնյա հարաբերություններ

Փոխադարձության կարգը բնորոշ է գրեթե բոլոր լեզուներին, բայց թե՛ անգլերենում, թե՛ հայերենում տվյալ կարգի քերականական կարգավիճակը մինչև այժմ մնում է անորոշ՝ տեղի տալով տարբեր մեկնաբանումների և կարծիքների: Անգլերենում որոշ լեզվաբաններ փոխադարձությունը, անդրադարձության հետ մեկտեղ, ներգործական և կրավորական սեռերի հետ միասին սեռային ձևեր են համարել, ոմանք էլ՝ իմաստային բայական կարգեր՝ իրենց բնորոշ հատկություններով: Ինչ վերաբերում է անգլերենի փոխադարձ դերանուններին, որոնք շատ հաճախ հանդիպում են հիշյալ կառույցում, լեզվաբաններից շատերը արտահայտում են երկու կարծիք.

1. վերոհիշյալ դերանունները փոխադարձ սեռի օժանդակ բառերն են,
2. դրանք հանդիսանում են նախադասության լիիրավ անդամ՝ ուղիղ խնդրի գործառույթով: [Ilyish 2012:116-119; Иванова 1981:79; Blokh 1983:181; Payne 2011:308]

Տարբեր ժամանակներում երկու լեզուներում էլ ինչպես բայի սեռի քերականական կարգի, այնպես էլ փոխադարձության և անդրադարձության կառույցների վերաբերյալ գոյություն են ունեցել տարբեր տեսակետներ: Եթե Ա. Ի. Սմիրնիցկին և Ի. Պ. Իվանովան անգլերենում ընդունում են երկու սեռ՝ **Active Voice** (Ներգործական սեռ) և **Passive Voice** (Կրավորական սեռ), իսկ փոխադարձ և անդրադարձ կառույցները համարում իմաստային բայական կարգեր [Смирницкий 2011:257; Иванова 1981:74], ապա Իլլիշը և Բլոխը առաջարկում են հինգ սեռ՝ **Active Voice**, **Passive Voice**, **Reflexive Voice** (Անդրադարձ սեռ), **Reciprocal Voice** (Փոխադարձ սեռ), **Medial** կամ **Middle Voice** (Միջին սեռ)՝ առանձին սեռեր համարելով փոխադարձությունը և անդրադարձությունը [Ilyish 2012:115; Blokh 1983:180]: Դեռ ավելին՝ Ն. Ա.

Կոբրինան, Ի. Ն. Բուրիբեկը, Ա. Ա. Խուդյակովը վերոհիշյալ սեռերին ավելացրել են ևս մեկ սեռ՝ **The Causative voice** (Պատճառական սեռ), իսկ փոխադարձ և անդրադարձ կառույցները նույնպես համարել առանձին սեռեր [Кобрина и др. 2007:105]:

Հայերենում ևս փոխադարձության և անդրադարձության բայական կարգերի նկատմամբ չկա միասնական մոտեցում. գրեթե նույն տարակարծություններն առկա են հայերենի բայական համակարգում: Որոշ լեզվաբաններ դրանց տվել են տարբեր մեկնաբանություններ. Ա.Ղարիբյանը և Է. Աղայանը դրանք համարել են առանձին սեռ [Մ. Ասատրյան 1977:164; Աղայան 1967:120], Ա. Ա. Աբրահամյանը՝ կրավորակերպ չեզոք բայեր կամ միջին-անդրադարձ սեռային առում [Խլղայան 2010:134], Ս. Գ. Աբրահամյանը և Ֆ. Խլղայանը՝ կրկնասեռ [Ս. Գ. Աբրահամյան 1981:190-195; Խլղայան 2010:146-147], Ռ. Իշխանյանը՝ առանձին բառային միավորներ, որոնք կապ չունեն սեռի հետ [Ասատրյան 1977:167]: Մ. Աբեղյանի և Մ. Ասատրյանի կողմից վերոհիշյալ բայերը դիտվել են նաև որպես կրավորական սեռի տարատեսակ [Ասատրյան 1977:156-157], իսկ Բարսեղյանի՝ չեզոք բայեր [Ասատրյան 1977:186]:

Մենք հակված ենք այն կարծիքին, որ փոխադարձությունը չի կարող հանդիսանալ որպես հիմք առանձին բայական սեռ համարվելու համար, և թե՛ անզլերենում, թե՛ հայերենում այն կազմում է առանձին բառային խումբ՝ փոխադարձ իմաստով:

Այժմ ներկայացնենք անզլերենի և հայերենի փոխադարձ կառույցները՝ ի հայտ բերելով դրանց կառուցվածքային առանձնահատկությունները և իմաստային նրբերանգները:

Անզլերենում **փոխադարձ բայերը** ցույց են տալիս գործողություն, որը ենթական կրում է իր վրա, սակայն այդ նույն գործողությամբ երկու առարկանները փոխադարձաբար ազդում են մեկը մյուսի վրա: Այդպիսի բայեր են հանդիսանում՝ *to blame, to divorce, to fight, to greet, to help, to hug, to kill, to marry, to meet, to suit* և այլն: Տվյալ բայերը կարող են կապակցվել փոխադարձ դերանունների հետ (reciprocal pronouns)՝ **each other** և **one another**, որոնք նույնպես մատնացույց են անում փոխադարձ գործողությամբ կամ վիճակով միմյանց կապված անձեր կամ առարկաններ: Օրինակ,

You have given me a seat where poets of all times bring their
tribute, and lovers with

deathless names greet one another across the ages. (BNC)²¹

Սակայն անգլերենում կան փոխադարձ բայեր, որոնք սովորաբար գործածվում են առանց հիշյալ դերանունների, ինչպես՝ *to meet, to marry* և այլն [Swan 1995:169], օրինակ՝

The festival is pleased to provide an opportunity for audience and musicians *to meet*

in the beautiful 12th-century church known as the Spurriergate Centre. (BNC)

Make absolutely independent of one another the record of what has happened and

the record of what is required *are never married*. Except as, when the two individuals

get together again and they may choose to *marry*. (BNC)

Արտահայտելով առարկայական նշանակություն՝ անգլերենի փոխադարձ դերանունները հոլովվում են բոլոր հոլովներով՝ բացի ուղղական հոլովաձևից: Հետևաբար, նախադասության մեջ դրանք կարող են հանդես գալ գոյականին հատուկ տարբեր շարահյուսական գործառույթներով՝ բացի ենթակայից: Սակայն անգլերենի խոսակցական լեզվում հնարավոր են նաև ենթակայի պաշտոնով օրինակները [Swan 1995:169], օրինակ՝

They listened carefully to what *each other* said. [Swan 1995:169]

Անգլերենի փոխադարձ դերանունները ունեն մեկ քերականական կարգ՝ ստացական հոլով (the possessive case), որի *'s* վերջաավորությունը ավելացվում է հիշյալ դերանունների երկրորդ բաղադրիչին, ինչպես *each other's* և *one another's*. Օրինակ,

Recipients and donors are carefully matched and counselled but never learn *each other's* identities. (BNC)

Too much work and people lose touch with *each other*; too little and they get under *one another's* feet. (BNC)

Ժամանակակից անգլերենում փոխադարձ դերանունները ունեն լայն գործածություն, ընդ որում *each other*-ը սովորաբար գործածվում է, երբ խոսքը գնում է երկու անձերի կամ իրերի մասին, իսկ *one another*-ը՝

²¹ Մենք ներկայացնում ենք Բրիտանական ազգային կորպուսից վերցրած օրինակները՝ առանց հեղինակները նշելու՝ հոդվածի ծավալից ելնելով

երկուսից ավելի անձերի կամ իրերի մասին: Սակայն, հասկապես խոսակցական լեզվում դրանք կարող են փոխարինել մեկը մյուսին՝ **each other**-ը հանդես գալով մեծ խմբերի փոխարեն: Օրինակ,

These parts of international law, distinct from *each other* as they are, all overlap at one point or another and cannot be considered entirely in isolation. (BNC)

Այնուամենայնիվ, եթե **each other**-ը մատնացույց է անում երկու մարդու փոխհարաբերության կամ իրերի առնչության յուրատիպ բնույթը, **one another**-ը կենտրոնացնում է մեր ուշադրությունը մարդկանց և իրերի համախմբման վրա [Carter, McCarthy 2006:76]: Օրինակ,

Public and private can learn from each other, as their environments are becoming increasingly alike. (BNC)

Soon Berlin will become overpopulated by images, like New York and Paris, and its images will have lost their powers, save those of reflecting and recalling one another. (BNC)

Հայերենում **փոխադարձ բայերը**²² նույնպես արտահայտում են փոխադարձ գործողության իմաստ և կազմվում են **-վ-** կրավորական ածանցով, թեև չունեն կրավորականության իմաստ: Այդպիսի բայերի թիվը սակավ է՝ *համբուրվել, սիրահարվել, գրկախառնվել, գրկվել, բաժանվել, անջարվել, զարվել, պոկվել, պաչպչվել, ծեծկվել, տեսնվել, ողջագործվել, բախվել, գժտվել, զարկվել*: Դրանք սովորաբար դրսևորվում են բայի հոգնակիի ձևերում, իսկ եզակի թվում գործածվում միայն այն դեպքում, երբ կապակցվում են գոյականի սեռական-տրական հոլովի և **հետք** կապի միջոցով դրսևորվող խնդրի հետ: Օրինակ,

Մի խումբ շրջապատեց Միքայելին, մի ուրիշը՝ Մելքոնին, մոտեցրին իրարու՝ հրելով ու բոթելով և ստիպեցին *համբուրվել*: («Քառս», Ա. Շիրվանզադե)

²² Այս տերմինը կիրառվում է մի շարք հայ լեզվաբանների կողմից՝ Ս. Գ. Աբրահամյան, Է. Աղայան, Մ. Ե. Ասատրյան, Հ. Խ. Բարսեղյան, Ֆ. Հ. Խլիլայան և ուրիշներ [Աղայան 1967:322, Ասատրյան 1977:165,191; Խլիլայան 2010:146]

Ձարմանալի է, ի՞նչ էր ասում քիչ առաջ, իսկ հիմա ինչ է անում, ինչպե՞ս է, որ չի կարողանում հանդուրժել նրա գոյությունը, իսկ ահա այժմ կարողանում է փաթաթվել և նույնիսկ *համբուրվել նրա հետ*, մինչդեռ իր սեփական *հոր հետ համբուրվել* չկարողացավ, չուզեց. («Հող և սեր», Սևան Գեղամ)

Փոխադարձ բայերը նաև կարող են հանդես գալ փոխադարձ դերանունների հետ, ինչպիսիք են՝ ***միմյանց, մեկմեկու (մեկմեկի), իրար***, որոնցից առաջին երկուսը (միմյանց, մեկմեկու) գործածվում են միայն անձերի փոխարեն, իսկ երրորդը (իրար)՝ թե՛ անձերի, թե՛ իրերի, [Խլղաթյան 2010:116], օրինակ,

Հավաքվել էին փրկվածները, սատար եղել միմյանց ու ցանկանում էին *իրար* վերքեր ամոքել:

Սակայն մենք հանդիպել ենք նաև այնպիսի օրինակների, որտեղ ***միմյանց*** դերանունը հանդես է գալիս նաև իրի փոխարեն, ինչպես,

Այդ տարրերը համակցվում են ***միմյանց*** հետ որոշակի կերպով՝ օպտիկական պատկերներ

ստանալու կամ լույսի աղբյուրից եկող լուսային հոսքը փոխակերպելու համար: (<ՍՀ, հ.12, 1986)

Հայերենում որոշ փոխադարձ բայեր ունեն համապատասխան ներգործական հակադիրը՝ առանց **-վ-** ածանցի, ինչպիսիք են՝ *համբուրվել-համբուրել, գրկվել-գրկել, բաժանվել-բաժանել, պաշպսվել-պաշպսել, տեսնվել-տեսնել, զարկվել-զարկել, պոկվել-պոկել, զարվել-զարել, անջարվել-անջարել*: Եթե փոխադարձ դերանունը առկա է տվյալ կառույցում, ապա բայը պահանջում է ներգործական սեռ: Օրինակ՝

Նրանք *գրկվեցին / գրկեցին իրար*:

Նրանք *համբուրվեցին / համբուրեցին իրար*:

Միմյանց, մեկմեկու, (մեկմեկի), իրար ձևերը ինքնին սեռական-տրականի իմաստ ունեն և խոսքում հաճախ հանդիպում են տվյալ հոլովներով: Սակայն որոշ փոխադարձ բայերի դեպքում հիշյալ դերանունները դրվում են բացառական հոլովով՝ նախադասության մեջ հանդես գալով անջատման խնդրի շարահյուսական գործառույթով: Անջատման խնդիր են առնում հետևյալ փոխադարձ բայերը՝ *բաժանվել, պոկվել, զարվել, անջարվել* և այլն [Պապոյան, Բաղիկյան 2003:148]: Օրինակ,

Շատ կանայք և տղամարդիկ ինչ ժամանակ ցանկացել են
բաժանվել միմյանցից

ու չվել մի տեղից մյուսը: (Բուլճևիկյան դրոշով, 1936.06.04
#37)

Պետք է ասել, որ նրանք ևս սկզբում անվստահությամբ,
փոքր-ինչ իրոնիայով էին վերաբերվում թեմային, սակայն
աշխատանքի ընթացքում նրանց ոգևորությունն այնքան
աճեց, որ *բաժանվել իրարից* դժվարանում էին:
(«Օրինություն և անեծք», Այվազյան Աղասի)

Ըստ Թ. Փեյնիի՝ փոխադարձության իմաստը կարող է դրսևորվել ոչ
միայն բուն բառային փոխադարձ բառույթներով, այլև ուրիշ բայերի
միջոցով, որոնք գործածվում են համապատասխան դերանունների հետ,
ինչպես՝ *to argue, to accuse*, և այլն: Տվյալ բայերը Բլոխը անվանում է
«*փոխադարձված*» (reciprocalized) [Blokh 1983:182; Payne 2011:307-311]:
Օրինակ՝

The two opposed parties *have been accusing one another* vehemently.

Թ. Փեյնին առաջարկում է անգլերենի փոխադարձ բայերի համար
երկու տարբեր անվանումներ՝ *բառային* (lexical) և *վերլուծական*
(analytic): Փոխադարձ կառույցի բառային տեսակը արտահայտված է
միայն բայերով՝ իրենց դրսևորած փոխադարձ իմաստով, իսկ
վերլուծական տարբերակը, որը նա անվանում է նաև *չարահյուսական*
(syntactic) կամ *ընդարձակ* (periphrastic)՝ հիշյալ բայերով և
համապատասխան դերանուններով (reciprocal pronouns) [Payne 2011:307-
311]: Համեմատենք՝

Jane and Mary *met*. - Jane and Mary *met each other*.

Նույն բայերը ուղիղ խնդրի զուգակցությամբ կորցնում են
փոխադարձության իմաստը և դառնում սովորական բայեր: Օրինակ՝

They *met her* at the station.

Նույն երկույթը կարող ենք դիտել հայերենում, օրինակ՝

Նրանք *Սևակին* պատահաբար *հանդիպեցին* փողոցում:

Ուսումնասիրության ենթարկելով անգլերենի և հայերենի
փոխադարձ դերանունների կիրառության դեպքերը Բրիտանական
(British National Corpus) (1000 օրինակ) և «Արևակ» ազգային
կորպուսներում (1000 օրինակ)՝ մենք եկել ենք այն եզրակացության, որ
դրանք միջանձնյա հարաբերություններ արտահայտելիս դրսևորում են
տարբեր իմաստային նրբերանգներ՝ այն է, ինչ նշվում է Ե. Մխիթարյանի

և Մ. Վարդանյանի հոդվածում [Mkhitarian, Vardanyan 2014:63-69]: Այսպես, **each other** փոխադարձ դերանունը գործածվում է այն դեպքում, երբ շեշտվում են միջանձնյա ջերմ, մտերիմ հարաբերությունները, իսկ **one another**-ը գլխավորապես հանդես է գալիս չեզոք կամ պաշտոնական-ձևական, սառը հարաբերություններ արտահայտելու համար: Հայերենում **each other**-ի համարժեքը հանդիսանում է **իրար** փոխադարձ դերանունը, որը հիմնականում պահպանում է նույն իմաստային նրբերանգները: Անգլերենի **one another** դերանվանը հայերենում համապատասխանում է **միմյանց** փոխադարձ դերանունը, որին բնորոշ է գրեթե նույն իմաստային դրսևորումները: Ամենագործածական փոխադարձ դերանունը անգլերենում **each other**-ն է, իսկ հայերենում՝ **իրար**-ը: Այսպիսով, մենք ստանում ենք հետևյալ պատկերը.

Փոխադարձ դերանունների հաճախականությունը և իմաստային հարաբերությունները

դերանուն	Հաճախակա նություն	Միջանձնյա հարաբերություններ (2000 օրինակ)		Գործածու թյուն անշունչ առարկա- ների հետ
		պաշտոնական- ձևական, սառը հարաբերություն ներ	մտերիմ, ջերմ հարաբերու- թյուններ	
each other	10202	73	363	64
one another	2635	249	113	139
իրար	1516	21	158	320
միմյանց	399/57	406	65	29

Ստորև բերենք «միջանձնյա ջերմ հարաբերություններ» իմաստով մի քանի օրինակներ՝

When we are together the atmosphere is electric. We read *each other's* thoughts

and share *each other's* interests. (BNC)

Every day couples meet who are amazed at how right they are for *each other*. (BNC)

Ես նայեցի նրան, նա նայեց ինձ, և մեր հայացքները գրկեց ին **իրար**: (Արձակ, Ա.Իսահակյան)

Մենք շատ լավ էինք *իրար* հասկանում: («Թներ», Բալայան
Ջորի)
Այժմ ներկայացնենք օրինակներ «պաշտոնական-ձևական, սառը
հարաբերություններ» իմաստով՝

But as you cannot see me at present with any advantage to
yourself, I leave for

Tunbridge, my dear, and hope we shall better
understand **one another** on my return. (BNC)
How strangely you talk! Are not the two sexes made for one
another? And is it not natural for a
gentleman to love a pretty woman? (BNC)

Կարիք չկա, որ մանրամասն նկարագրեմ, թե ինչպես աստիճանաբա
ր խորացավ

միմյանց նկատմամբ մեր սառնությունը, ինչպես Սիմոնը հ
ետզհետև սկսեց հեռանալ:

(«Բալենին», Շ. Թաթևյան)

Բերենք նաև օրինակներ անշունչ առարկաների հետ՝

Is it true that liberal democracies' don't go to war with one
another?

Of course the two regimes, of legacy and trust, were
assimilated to *each other* in

certain relatively minor respects. (BNC)

Արդյունքում՝ ձեռավորվել են երկու զուգահեռ աշխարհներ՝
իշխանությունները, իրենց
անձնական խնդիրներով եւ հետաքրքրություններով,
հանրությունը՝ իր անկանխատեսելի

առօրյայով եւ վաղվանով,

միմյանց հետ ոչ մի կապ չունեցող, *միմյանցով* չհապրող

համակարգեր, մեկը՝ վերելում, մյուսը՝ նրա տակ:

(Առավոտ, 2002.10.29)

— Այո,— ասաց Մելիքը, և նրա ու Ղուկասի

իրար զննող հայացքները հանդիպեցին:

(«Սիրտ», Ա. Հովսեփյան)

Ուսումնասիրելով անգլերենի և հայերենի փոխադարձ բայերով
կառույցների կառուցվածքային և իմաստային

առանձնահատկությունները՝ մենք հանգում ենք այն եզրակացության, որ փոխադարձության կարգը թե՛ անզլերենում, թե՛ հայերենում նպատակահարմար չէ ներկայացնել առանձին քերականական բայասեռով: Մեր կարծիքով, այն արտահայտված է մի խումբ փոխադարձ իմաստ ունեցող բայերով՝ հաճախ փոխադարձ դերանունների կապակցությամբ: Իմաստային առումով անզլերենի և հայերենի հիշյալ կառույցները համընկնում են, թեև փոխադարձ դերանունների դեպքում չի կարելի խոսել բացարձակ նույնության մասին: Անզլերենում փոխադարձ բայերը զուրկ են որևէ ձևաբանական ցուցիչից, իսկ հայերենում դրանք կազմվում են **-վ-** ածանցով: Վերլուծությունը ցույց է տվել նաև, որ անզլերենի փոխադարձ դերանունները **each other** և **one another-ը** հաճախ գործածվում են որոշ իմաստային տարբերակչությամբ, որը համեմատած հայերենի **իրար** և **միմյանց** դերանունների շատ ավելի աննշան է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան, Ս. Գ. Ժամանակակից գրական հայերեն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981
2. Աղայան, Է. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967
3. Ասատրյան, Մ. Ե. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևանի Համալսարանի Հրատ., Երևան, 1977
4. Խլղաթյան, Ֆ. Հ. Ժամանակակից հայոց լեզու, մաս Բ, Երևան, Ձանգակ-97, 2010
5. Պապոյան, Ա. Բադիկյան Խ. Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր.:Երևանի համալս. հրատ., 2003, 462 էջ
6. Иванова, И. П. Бурлакова, В. В. Почепцов, Г. Г. Теоретическая грамматика современного английского языка, М.: Высшая школа, 1981. - 285 с.
7. Кобрин, Н.А. Болдырев, Н.Н. Худяков, А.А. Теоретическая грамматика современного английского языка, учебное пособие, М.: Высшая школа, 2007. - 368 с.
8. Лайонз, Дж. Введение в теоретическую лингвистику. М.: Прогресс, 1978.-544с.
9. Смирницкий, А.И. Морфология английского языка, М.: Литература на иностранных языках, 2011.440 с

10. Blokh, M. A course in Theoretical English Grammar. M.: Visshaya shkola, 1983
11. Carter, R.; McCarthy, M. Cambridge Grammar of English: Cambridge, 2006: CUP
12. Ilyish, B. A. The structure of Modern English, Leningrad: Prosveshchenie, 2012, p. 366
13. Mkhitaryan Y., Vardanyan M. Constructions with Reflexive and Reciprocal Verbs in English and Armenian, Armenian Folia Anglistika, 1(12)/2014-Yerevan
14. Payne, Th. Understanding English Grammar: Cambridge, 2011: CUP
15. Swan M. Practical English Usage, second edition, Oxford, New York, Oxford University Press, 1995, 658p.

ЛОРЕТТА БАЗИКЯН - СТРУКТУРНЫЕ И СЕМАНТИЧЕСКИЕ РАЗЛИЧИЯ МЕЖДУ АНГЛИЙСКИМИ И АРМЯНСКИМИ ВЗАИМНЫМИ КОНСТРУКЦИЯМИ

В статье рассматриваются структурные и семантические различия между английскими и армянскими взаимными конструкциями. Сравнительный анализ показывает, что категория взаимности в армянском языке выражается морфологически - с помощью суффикса **վ** (**-վ**), который прибавляется к глаголу, а также с помощью сочетания глагола с взаимным местоимением. В английском языке взаимность выражается при помощи специальной группы глаголов, имеющих взаимное значение в сочетании с указанными местоимениями или без них.

LORETTA BAZIKYAN - STRUCTURAL AND SEMANTIC DIFFERENCES BETWEEN ENGLISH AND ARMENIAN RECIPROCAL CONSTRUCTIONS

The paper examines structural and semantic distinctive features of reciprocal constructions in English and Armenian. The comparative analysis shows that the category of reciprocity in Armenian is expressed morphologically: by means of the suffix **v** (**-v**) which is added to the verb as well as by combining the verb with reciprocal pronouns. In English reciprocity is expressed through a special group of verbs which have reciprocal meaning in conjunction with respective pronouns or without them.

**ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԶԵՂՉՄԱՆ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ**

ԷՄՄԱ ԲԱԼԱՅԱՆ

*Հիմնաբառեր՝ զեղչում, լեզվամտածողություն, նախադասության
գլխավոր անդամ, ոճական հնար, քերականական-
կառուցվածքայինմակարդակ, բովանդակության պլան, թերի
նախադասություն*

Զեղչումը համամարդկային բնույթ ունի և հանդես է գալիս լեզվական բոլոր մակարդակներում: Զեղչումը ամենից առաջ ոճական իրողություններ են և իրենց գոյությամբ հարստացնում են լեզվի իրացման հնարավորությունները, լիցքավորում խոսքը, շարժում ընթերցողի /ունկնդրի/ հետաքրքրահրությունը, ասելիքը դարձնում են դինամի ու շարժուն, հաղորդումը՝ աշխույժ ու հետաքրքրական, խոսքը՝ ներգործուն ու անմոռաց: [Կարապետյան, 2016:5]

Զեղչումը ոճի սեղմության հատկության դրսևորումն է, իսկ սեղմությունը խիստ բնորոշ է ժողովրդական լեզվամտածողությանը: Պրոֆ. Ռ. Իշխանյանը իրավացիորեն գրում է «Խոսքը սեղմելը, ձևական դեր կատարող բառերից /դերանուններ, շաղկապներ, մեկնական բառեր/ ազատելը ժողովրդի խոսակցական լեզվի հատկությունն է»: [Իշխանյան, 1965: 210]

Ավելացնենք, որ զեղչումը միայն նշված բառերի բացթողումով չի սահմանափակվում, զեղչվում են նաև հնչյուններ, նախադասության անդամներ, բարդ նախադասության բաղադրիչներ և այլն: Սեղմությունը լեզվի տնտեսման օրենքի հիմնական կիրարկումն է, որը դառնում է գրական լեզվի և մանավանդ գեղարվեստական խոսքի կարևորագույն հատկանիշներից մեկը, լեզվի ընդարձակման հակառակ միտումների դրսևորումը: [Կարապետյան, 2016:17]

Զեղչումը ծագել է հունարեն «էլլիպսիս» բառից, որը նշանակում է «բացթողում», «պակաս»:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես արդի արևելահայերենում, այնպես էլ ժամանակակից իտալերենում թե՛ գրավոր,

և թե՛ բանավոր խոսքում, շատ բառեր, բառակապակցություններ հաճախ չեն դրվում կամ ասվում նախադասության մեջ, քանի որ դրանց գաղափարը, մտապատկերը գոյություն ունի, հետևաբար կարիք չկա ծանրաբեռնել նախադասությունը ավելորդ անգամ այդ բառերը գրելով կամ կրկնելով: Ձեռչումը թույլ է տալիս խոսքը դարձնել ավելի պատկերավոր, ճկուն, հակիրճ, սահուն: Խոսքն ազատվում է ավելորդ կրկնությունից: Իսկ նախադասության մեջ հասկանալի բառերը կրկնելը ոչ միայն ավելորդություն է, այլև՝ ձանձրալի: Հարկ է նշել, որ չեղչումը նաև ժողովրդական լեզվամտածողություն է, քերականական ու ոճական կարևորագույն միջոց: [Պալերմո, 2012:115]

Որոշ հեղինակներ իրենց աշխատություններում համառոտ խոսել են զեղչման մասին, արտահայտել իրենց նկատառումները: Ձեռչումը լեզվական հնար է, որը բազմիցս եղել է լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Իր թվացյալ պարզությամբ հանդերձ զեղչումն ունի կիրառական բարդ դաշտ, որով էլ պայմանավորված է վերջինիս գործարանական արժեքը հանգամանալից վերլուծության ենթարկելու անհրաժեշտությունը: Լինելով լեզվի քերականական-կառուցվածքային մակարդակի կարևոր տարրերից մեկը՝ զեղչումը մասնակից է լինում նաև լեզվի իմաստային մակարդակին նպաստելով ոչ միայն ասույթի, այլ նաև տեքստի բովանդակության ձևավորմանը: Ինչպես ընդունված է տեքստի լեզվաբանության մեջ, զեղչումը հատկապես բնորոշ է բանավոր խոսքին իրար հաջորդող փոխկապակցված ասույթների միությանը:

Դիտելով զեղչումը որպես շարակարգային մակարդակի լեզվական երևույթ է. Աղայանը գտնում է, որ վերջինս խոսքի ուրիշ անդամներով արտահայտվող կամ ինքնին կոահվող բառի բացթողումն է: [Աղայան, 1987: 371]

Փորձելով գնահատել զեղչման լեզվաբանական արժեքը Հ. Պետրոսյանը զեղչյալ է համարում այն նախադասությունը կամ կապակցությունը, որում կա հեշտ վերականգնելի անդամի բացթողում, երբ այն մտքով հասկացվում է: Հ. Պետրոսյանը զեղչման մի տեսակ է համարում նաև համառոտությունը, երբ խուսափում են հենց նոր հիշատակված բառը, ձևը կրկնելուց, լայն իմաստով, երբ արտահայտության հնարավոր կառույցներից նախընտրում են համառոտը: [Պետրոսյան, 1987: 98] Ս. Գյուլբուդաղյանը գտնում է, որ զեղչումը վերականգնման ենթակա կամ սպասելի անդամի բացակայությունն է: Նա նշում է, որ երբեմն նախադասությունների այս կամ այն անդամը բացակայում է կառույցից, բայց խոսքային միջավայրից

ու իրադրությունից գիտակցվում է. լսողը, կարդացողը բացակա բառը մտքով վերականգնում է: Այստեղից հետևում է, որ ոչ բոլոր անդամների բացակայությունն է կարելի զեղչում համարել: [Գյուլբուդադյան, 1988: 236]

Ջեղչում է կոչվում այն անդամի բացակայությունը, որի առկայությունը փվյալ կառույցում սպասելի է, պարտադիր, և առանց այդ անդամի փվյալ նախադասությունների կազմը թերի է դառնում:

Նախադասության անդամի զեղչման հիմքը նրա հասկանալի լինելն է խոսքի կառուցվածքից, խոսքում մի այլ առիթով հիշատակված լինելուց կամ խոսելու պայմաններից: Նախադասության անդամների զեղչման չափը տարբեր է լինում . կարող է զեղչվել մեկ անդամի միայն մեկ բաղադրիչը, մեկ անդամն ամբողջությամբ, մեկից ավելի անդամներ: [Աբրահամյան, 1969: 322]

Ստորև ներկայացնում ենք զեղչված անդամով նախադասությունների մի քանի օրինակ՝

- *էդ պայուսակիդ մեջ կոնյա՞կ է,- ասաց նա:*
- *Այո, գնա՞նք խմենք մի-մի բաժակ:*
- *Ձեր կոնյակը հրաշք է՝ եթե արդեն չեն փչացնում: [Մաթևոսյան, 1978: 45]*

E non ce la faceva più a vivere con i suoi, gli sembrava d'impazzire ogni volta che entrava in casa. [Ammaniti, 2000: 164]

- *Քննարկումից հետո գնա՞նք գարեջրի:*
- *Ովքե՞ր ենք գնում:*
- *էլդարը, դու, ես, Վիկտոր Իգնատևը, չնայած չարժի էլդարի հետ խմել: [Մաթևոսյան, 1978: 23]*

Scusa se non sono il figlio che volevi, ma neanche tu sei il padre che volevo io. [Ammaniti, 2000: 165]

- *Իսկ ինչու՞ ես բողոքում:*
- *Որովհետև հիմարություն է դուրս փայխս: [Մաթևոսյան, 1978: 35]*

Pietro aveva visto alla tv il film del dottor Jekyll e Mr. Hyde. Era uguale identico a Zagor. [Ammaniti, 2000: 154]

Ինչպես արդեն նշեցինք, զեղչման հետևանքով նախադասությունների կազմը թերի է դառնում, ուստի և որոշ լեզվաբաններ առաջարկում են զեղչված անդամով նախադասություններն անվանել թերի: Հարկ է նշել, որ թերի լինելը վերաբերում է ոչ թե նախադասության բովանդակությանը, այլ նրա կազմին, շարակարգային կառուցվածքից բացակայում են նախադասության անդամներ, որոնց տեղը մնում է թափուր: Սակայն մտքի տեսակետից այդ տեղերը թափուր չեն մնում, այլ լրացվում են, վերականգնվում նախորդ համատեքստից: Հետևաբար, կառուցվածքային տեսակետից թերի համարվող զեղչյալ նախադասությունն իմաստային առումով ամբողջական է և խոսքում լիիրավ կատարում է իր հաղորդակցական դերը: Այսպիսի «թերի» նախադասությունը պետք է տարբերակել այն նախադասություններից, որոնցում կա մտքի թերիություն: Նախադասությունն իմաստային առումով կիսատ է, քանի որ պարունակում է թերի քերականական կառույց բառակապակցություն, որը չի կարող վերականգնվել համատեքստից և, հետևաբար, այդպիսի ասույթը չի կարող հաղորդակցական դեր կատարել: Այդպիսի հաղորդակցական ընդհատված կառույցները թերի նախադասությունները, առավել հաճախ կարող ենք հանդիպել առօրյա բանավոր զրույցի ընթացքում, երբ խոսողին ընդհատում են խոսակցության պահին ասույթը թողնելով անավարտ:

Այսպիսով, քանի որ թերի տերմինով հնարավոր չէ տարբերակել մտքի և կառուցվածքի անավարտությունը, **նպատակահարմար է համարվում կազմությամբ թերի, բայց իմաստով ամբողջական նախադասությունը կոչել զեղչված նախադասություն:** Այսպես, Ա. Աբրահամյանն առաջարկում է թերի անվանել այն նախադասությունը, որի որևէ անդամ կամ անդամներ զեղչված են, բայց հասկացվում են: [Աբրահամյան, 1992: 153]

Ինչպես արդի արևելահայերենում, այնպես էլ ժամանակակից իտալերենում, զեղչվել կարող են նախադասությունների տարբեր անդամներ և՛ գլխավոր, և՛ երկրորդական: Ձեղչումը երբեմն մեծ չափերի է հասնում, և զեղչված անդամներով նախադասությունը կորցնում է իր քերականական սովորական տեսքը: **Նախադասությունների անդամը կարող է հասկանալի լինել ու զեղչվել, երբ գործածվում է կից կամ մոտիկ նախադասությունների մեջ կամ հասկացվում է խոսելու պայմաններից:** Ինչպես նշեցինք, զեղչման ենթակա են նախադասությունների բոլոր անդամները: Սակայն երկրորդական

անդամների զեղչումը այնքան զգալի չէ, որքան գլխավոր անդամների զեղչումը: Ըստ այնմ, թե նախադասությունների որ անդամն է զեղչված, տարբերակում են **զեղչված ենթակայով, ստորոգյալով, խնդրով և պարագայով նախադասություններ:**

Լեզվաբանության մեջ ընդունված է նաև զեղչմանը վերագրել ոճական արժեք: Որպես ոճական հնար օգտագործելիս զեղչմանն են վերագրվում խոսակցական լեզվին բնորոշ մի շարք հատկանիշներ, երբ իրադրության օգնությամբ լրացվում է նախադասության բացակա անդամը: [Պալերմո, 2012:116] Այսպես օրինակ, հայերենում օժանդակ բայի բացթողումը նախադասությանը տալիս է հուզական երանգ ավելի արտահայտիչ դարձնելով նրա հնչողությունը: Ուսումնասիրվող լեզուներում որպես ոճական հնար զեղչումն օգտագործվում է նաև չափածո խոսքում: Այն հանդիսանում է նաև լռելու չասելու միջոցներից մեկը: Զեղչումը որպես ոճական հնար հաճախ կարելի է հանդիպել նաև ասացվածքներում և հանելուկներում: Առավել տարածված է զեղչումը երկխոսություններում, որում զեղչումը հիմնականում տեղի է ունենում պատասխան ասույթներում:

Այսպես օրինակ՝

- Պեղք է գնալ տեսնել, - ասաց նա:
- Ի՞նչը տեսնել՝ խորովա՞ծը թե ժայռափոր գյուղը:
- Եվ մեկը, և մյուսը, - ասաց նա. - չէ՞ որ նայել տեսնելը հեղաքրքիր է: [Մաթևոսյան, 1978: 67]

- **Che fai dopo?**
- **Non lo so. E tu?** [Ammaniti, 2000: 10]

- Սա կողոպուտ է՞:
- Անշուշտ: [Մաթևոսյան, 1978: 41]

- **Che c'è? Cosa sono tutti questi baci?**
- **Niente... [Ammaniti, 2000: 158]**

- Սա քանի՞ տարեկան է:
- Ինձանից մեծ է, երեսունհինգ-քառասուն: [Մաթևոսյան, 1978: 51]

- **Ho delle bellissime novità da raccontarti. Ti posso richiamare più tardi?**

- **No, sono in giro e ho il cellulare scarico. [Ammaniti, 2000: 150]**

Եթե վերականգնենք վերոնշյալ յուրաքանչյուր նախադասության անդամների կազմն ամբողջությամբ կատանանք նույն բովանդակության պլանն արտահայտող հետևյալ կառույցները՝

- *Թռչունների խմբին դուք ի՞նչ էիք ասում, Մաքս:*
- *Թռչունների խմբին մենք ասում ենք երամ:*
- *Che fai dopo?*
- *Non lo so. E tu che cosa fai?*
- *Սա կողոպուտ է՞:*
- *Սա անշուշտ կողոպուտ է:*
- *Che c'è? Cosa sono tutti questi baci?*
- *Tutti questi baci sono niente..*
-
- *Սա քանի՞ տարեկան է:*
- *Սա ինձանից մեծ է, երեսունհինգ-քառասուն տարեկան է:*
- *Ho delle bellissime novità da raccontarti. Ti posso richiamare più tardi?*
- *No, non puoi richiamarmi, io sono in giro e ho il cellulare scarico.*

Զեղչման առավել տարածված լինելը երկխոսություններում կարելի է բացատրել նրանով, որ հարցերը հաճախ բխում են նախկինում ասված ինչ-որ բանից: Այնպես, որ հարցին պատասխանողը ավելորդ կրկնություններից խուսափելու համար զեղչում է նախադասության այն անդամները, որոնք արդեն ասվել են նախկինում: Երբեմն հարցը կարող է կազմված լինել նոր միավորից, իսկ նախորդը՝ զեղչված:

Ինչպես օրինակ՝

- *Գրե՞մ վարպետ Մարգարի մասին:*
- *Գրիր, ի՞նչ ես գրելու: [Մաթևոսյան, 1978: 51]*
- *Moroni, hai fatto la ricerca?*
- *Sì, professoressa.*
- *E con chi l'hai fatta?*

- *Con Celani. [Ammaniti, 2000: 270]*

Հարց տվողը կարող է արտահայտել հուզմունք (քաղաքավարի հետաքրքրություն, կասկածամտություն, զարմանք և այլն): Պատասխանները կարող են լինել բացականչական և ընդգրկել նախկինում ասված որոշ բառերի կրկնություն: Այն զեղչումները, որոնք կախված չեն լեզվական համատեքստից և կարող են վերականգնվել առանձին իրավիճակներից հաճախ վերաբերում են ոչ պաշտոնական ոճին:

**Ենթակայով զեղչված նախադասությունները
արդի արևելահայերենում և ժամանակակից իտալերենում**

Ուսումնասիրվող լեզուներում, նախադասության մեջ հաճախ զեղչվում են բազմաթիվ բառեր, բառակապակցություններ, երբեմն ամբողջ նախադասություններից պահպանվում է միայն մեկ-երկու անդամ: Զեղչումները հիմնականում տեղի են ունենում այն դեպքում, երբ առանձին բառերի, բառակապակցությունների իմաստը նախադասության մեջ հասկանալի է լինում, հետևապես անհրաժեշտ չէ դրանք գործածել: Այդպիսի բառերի կամ բառակապակցությունների զեղչումով նախադասությունն ազատվում է ծանրաբեռնվածությունից, խոսքը դառնում է հակիրճ, պատկերավոր, կտրուկ, հարուստ՝ լեզվաոճական, հուզարտահայտչական նշանակություններով:

Չնայած որ, ինչպես ասվեց, զեղչվել կարող են տարբեր անդամներ, բայց քանի որ նախադասության (*խոսքը վերաբերվում է երկկազմ նախադասությանը*), որպես մտքի նվազագույն միավորի, ամբողջության համար անհրաժեշտ են մասնավորապես ենթական և ստորոգյալը, ուստի ամենից առաջ աչքի է ընկնում և սովորաբար քննվում է դրանց զեղչումը: [Աբրահամյան, 1969: 322]

Ինչպես արդի արևելահայերենում, այնպես էլ ժամանակակից իտալերենում նախադասության մեջ առավել հաճախ զեղչվող անդամներից մեկը ենթական է: Կարևոր է այն իրողությունը, որ ենթակայի զեղչումով նաև ստեղծվում են տեղի ու ժամանակի խնայողություն, խոսքի գեղարվեստական պատկերավորություն:

Ուսումնասիրվող երկու լեզուներում էլ ենթակայի զեղչում տեղի է ունենում հետևյալ դեպքերում.

- **Երբ ստորոգյալը արտահայտվում է առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի դերանուններով.**

Օրինակ՝

Է՛ անծայր երկրի կեսը ներկել են, կեսը ներկում են – նշանակու՞մ է աշխատում են՝ նշանակում է: [Մաթևոսյան, 1978: 37]

Ma quella mattina decise di fermarsi perchè era uscita così di fretta che non aveva nemmeno fatto colazione. [Ammaniti, 2000: 229]

Նկարահանման հրապարակից ելել է, ծխում ու անվայելույս կաղապակներ է անում: [Մաթևոսյան, 1978: 39]

Sembrava più piccola ora che finalmente piangeva. [Ammaniti, 2000: 193]

Սա բացատրվում է նրանով, որ երկու լեզուներում է խոնարհված բայի վերջավորությունը կամ օժանդակ բայը թույլ է տալիս հստակ տարբերակել թե որ դեմքի և թվի դերանուն է բաց թողնված տվյալ նախադասության մեջ: Այսպես օրինակ՝ ներկել են – **նրանք** ներկել են, **era uscita** – **lei era uscita**, ելել է– **նա** եկել է, **sembrava** – **lei sembrava**.

➤ **Եթե բարդ նախադասության կազմում ենթական կիրառված է նախորդ նախադասության մեջ, հաջորդ նախադասության մեջ այն զեղչվում է:** Երբ միավորյալ նախադասությունների կազմի մեջ մտնում են մեկից ավելի կամ մի քանի նախադասություններ, սովորաբար ենթական կիրառվում է առաջին նախադասության մեջ, իսկ հաջորդ նախադասություններում այն զեղչվում է: [Vanzon 1834: 380]

Օրինակ՝

Mi scusi, io non mi sono presentato, mi chiamo Graziano Biglia. Sono figlio della merciaia e sono stato via parecchio... All'estero, per lavoro... [Ammaniti, 2000: 233]

Նստարանի տակից նա դուրս եկավ, բաճկոնի վրա փնտրեց կտրված կոճակի տեղը, ակնոցը շտկելով հայացքը բարձրացրեց և զարմացավ: [Մաթևոսյան, 1978: 43]

Lui e Martina viaggiavano sulle stesse frequenze e si assomigliavano anche se venivano da due mondi diversi. [Ammaniti, 2000: 173]

Նա եկավ, վիթխարի հասակը կռացրեց, լայն թիկունքը ժպտալով տեղավորեց մեքենայի նեղվածքում, և փրոլեյբուսին հասած պառավի նման դեռ ժպտում էր: [Մաթևոսյան, 1978: 8]

*Nella loro camera **i letti erano separati** da un comodino e durante il giorno, **sembravano** creature di due pianeti diversi costrette per una necessità imperscrutabile a dividere vita. [Ammaniti, 2000: 157]*

Աշխատասենյակից ծխելով նա դուրս էր եկել ու փղերքի մոտ եկել կանգնել: Հեփո հիշել, ժպտացել ու փղերքի ողջությունը հարցրել էր: [Մաթևոսյան, 1978: 12]

Ուսումնասիրվող լեզուներում, հանդիպում ենք այնպիսի դեպքեր, երբ ենթակայի գործածությունը կախված է տրամաբանական շեշտից: Վերջադաս ենթակաները հիմնականում տրամաբանական շեշտ չեն կրում: Բայց երբ կրկնվում են, ոչ միայն չեն զեղչվում, այլև իրենց վրա են կրում տրամաբանական շեշտը:
Ինպես օրինակ հետևյալ նախադասություններում՝

Սեղանին նամակ ու ծանրոցի տեղեկանք ունեիր, վերցրի՞ր դու:

Tu non ti preoccupare. Ci penso io. Gliela faccio vedere io la lavatrice. [Ammaniti, 2000: 219]

Վերոնշյալ օրինակից պարզ է դառնում, որ կրկնվող ենթակաները չեն զեղչվում և դարձյալ կրում են տրամաբանական շեշտ: Այդպիսի կրկնությունները որոշ հեղինակների մոտ դարձել են գեղարվեստական կատարելություններ:

Ուսումնասիրվող երկու լեզուներում էլ դերանուն ենթակաները նույնքան հաճախակի են կիրառվում նախադասության մեջ, որքան, ասենք, գոյական ենթակաները: Դրանք, առանց բացառության, գործածվում են այն դեպքերում, երբ ընդգծվում, կարևորվում է գործողություն կատարողը, նկատի է առնվում, թե ինչպիսի անհրաժեշտություն է ներկայացնում դերանուն ենթական տվյալ նախադասության մեջ: Ավելի հաճախ էլ զեղչվում են այդ ենթակաները:

Զուգադրվող լեզուների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արդի արևելահայերենում և ժամանակակից իտալերենում ամենից հաճախ

զեղչվում են առաջին դեմքի դերանուն ենթակաները: Դա պայմանավորված է նրանով, որ 1-ին դեմքը ինքը՝ խոսողն է և ապա՝ և՛ հայերենում, և՛ իտալերենում բայ ստորոգյալի դեմքը արտահայտում է նաև զեղչված դերանվան դեմքը.

- ✓ **Ho già dovuto pagare** due pecore. [Ammaniti, 2000: 155]
- ✓ Հայրենիքը բոլորինս է և **բոլորս ենք** նրա զինվորները:
- ✓ *Alle tre di notte avevo deciso di cambiare la disposizione dei mobili in cucina.* [Ammaniti, 2000: 116]
- ✓ Պատրասխանը ձեզ **եմ թողնում**:
- ✓ *Domani mattina ti accompagno ad Antonio.* [Ammaniti, 2000: 122]

Հարկ է նշել սակայն, որ գրեթե նույն հաճախականությամբ զեղչվում են նախադասության երկրորդ և երրորդ դեմքի դերանուն ենթակաները: Այս դեպքում նույնպես բայ-ստորոգյալի դեմքը ցույց է տալիս նաև դերանուն ենթակայի դեմքը՝ կարևորելով նախադասության գործողությունը:

- ✓ *Աշխատասենյակից ծխելով նա դուրս էր եկել ու տղերքի մոտ եկել կանգնել: Հետո հիշել, ժպտացել ու տղերքի առողջությունը հարցրել էր:*
- ✓ **Voleva girarsi a guardare ma non poteva. Se lo avesse fatto, avrebbe perso l'equilibrio e avrebbe rallentato e sarebbe stata la fine.** [Ammaniti, 2000: 337]
- ✓ *Էլդար, իմ տղայի ծննդյան խնջույքին ասացի ես, գուցե այնուամենայնիվ բաժանվես:*
- ✓ **Vuoi dire che hai messo la catena e sei entrato e hai distrutto il televisore e poi hai fatto le scritte e hai colpito Italo tutto da solo?** [Ammaniti, 2000: 276]

Այսպիսով, թե՛ արձակ և թե՛ չափածո խոսքում ենթակայի, առավելապես դերանուն ենթակայի զեղչման առավել հաճախակի հանդիպող երևույթները հիմք են տալիս եզրակացնելու, որ դերանուն ենթակաները չեն զեղչվում.

- երբ հեղինակը ընդգծում, կարևորում է գործողությունը կատարողին, տվյալ դեպքում՝ դերանուն ենթակային,
- երբ դերանվան առաջին և երկրորդ դեմքերի միջև ստեղծվում է քերականական հակադրություն:

**Ստորոգյալով զեղչված նախադասությունները
արդի արևելահայերենում և ժամանակակից իտալերենում**

Ստորոգյալի զեղչումը ամենից առաջ հատուկ է խոսքի մեծ վարպետներին, բարձրաճ հեղինակներին, որոնք հաճախ լրիվ չեն արտահայտում նախադասության միտքը, մտածելու շատ բան են թողնում ընթերցողին: Հայերենում նախադասության ստորոգյալը հաճախ զեղչվում է ամբողջությամբ կամ մասամբ: Զեղչումը լինում է այն դեպքում, երբ ստորոգյալն ամբողջությամբ կամ նրա մի մասը առանց գործածվելու հասկանալի են լինում: [Աբրահամյան, 1969: 323]

Արդի արևելահայերենում և ժամանակակից իտալերենում ստորոգյալն ամբողջությամբ կարող է զեղչվել՝

- **Եթե նույն ստորոգյալը տվյալ նախադասության մեջ արդեն գործածված է՝ այլ ենթակայի հետ կապված.**

Ինչպես օրինակ՝

Ես շար ուզեցի ապրել նրա կինոնկարի մեջ և ոչ թե Դոբրոյուբովի փողոցի 9/11 այդ հանրակացարանում: → Ես շար ուզեցի ապրել նրա կինոնկարի մեջ և ոչ թե ուզեցի ապրել Դոբրոյուբովի փողոցի 9/11 այդ հանրակացարանում: [Մաթևոսյան, 1978: 93]

Su quella strada non passava nessuno, al massimo qualche camion con il fieno. → Su quella strada non passava nessuno, al massimo passava qualche camion con il fieno. [Ammaniti, 2000: 179]

Ծիծաղում էին նրանք, ովքեր սովորել էին թոչուններին երամ ասել, ոչխարին՝ հոտ: → Ծիծաղում էին նրանք, ովքեր սովորել էին թոչուններին երամ ասել, ոչխարին հոտ ասել: [Մաթևոսյան, 1978: 178]

Lei può lavare il pavimento e Mario i vetri. → Lei può lavare il pavimento, e/o Mario può lavare i vetri. [Ammaniti, 2000: 118]

Նա գրել փվեց Եվայի ազգանունը-անունը-հայրանունը, իմ ազգանունը-փարիքը, ապա՝ իրենը: → Նա գրել փվեց Եվայի ազգանունը-անունը-հայրանունը, իմ ազգանունը-փարիքը, ապա գրել փվեց իրենը /իր անուն ազգանունը/: [Մաթևոսյան, 1978: 54]

Ձեռչման այս տեսակը հաճախ հանդիպում ենք այնպիսի նախադասություններում, որոնցում արտահայտված են տարբեր ենթակաների միևնույն գործողությունը կամ հատկանիշը, կամ միևնույն ենթակայի տարբեր պարագաներում կատարած միևնույն գործողությունը: Ձեռչված ստորոգյալը արտահայտված ստորոգյալի հետ նույնն է լինում իր նյութական իմաստով (*Եթե զեղչված է ամբողջությամբ*) և սովորաբար քերականական ժամանակով: Դեմքով և թվով նրանք կարող են չհամապատասխանել: Ձեռչված ստորոգյալի դեմքն ու թիվը հասկացվում են ենթակայից: Այսպես վերը բերված բոլոր օրինակներում զեղչված ստորոգյալը իր նյութական իմաստով ու ժամանակով համապատասխանում է արտահայտված ստորոգյալին: Արդի արևելահայերենում, սակավ դեպքերում, անցյալ անկատարով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասության մեջ կարող է զեղչվել ներկայով արտահայտվելիք ստորոգյալը, մանավանդ եթե ներկան նշող որևէ բառ կա նաև նախադասության մեջ:

Օրինակ՝
Նա քիչ առաջ գիրք էր կարդում, իսկ այժմ՝ թերթ (է կարդում):
Dopo la festa i bambini saranno felici e voi (sarete) distrutti.

Ամփոփելով կարող ենք ասել, որ զեղչման դրսևորումները և կիրառան դեպքերը նույնն են զուգադրվող լեզուներում: Եվ՝ արդի արևելահայերենում, և՛ ժամանակակից իտալերենում, զեղչումը՝ որպես լեզվի «խնայողության քաղաքականության» արդյունք, երևան է գալիս նրա բոլոր մակարդակներում, միայն թե տարբեր չափով ու տարբեր հաճախականությամբ, և արդյունքում լեզվահորինվածքը տարբեր դրսևորումներ է ունենում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կարապետյան Ա, «Կրկնությունը և զեղչումը ժամանակակից հայերենում», Գիտություն հրատարակչություն, 2016
2. Աղայան Է, «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան, 1987, 1հ.
3. Մաթևոսյան Հ., «Սովետական գրող», Երևան, 1978
4. Պետրոսյան Հ., «Հայերենագիտական բառարան», Երևան, 1987
5. Իշխանյան Ռ. , «Բակունցի լեզվական արվեստը», Երևան, 1965
6. Աբրահամյան Ս. , «Ժամանակակից հայերենի քերականություն», Լույս հրատարակչություն, Երևան, 1969

7. Աբրահամյան Ս. , «Հայոց Լեզու», Երևան, 1992
8. Գյուլբուդադյան Ս. , «Ժամանակակից հեյերենի շարահյուսություն», Երևան, 1988
9. Carlo Vanzon “Grammatica ragionata della lingua italiana”, seconda edizione, Livorno 1834
10. Lorenzo Renzi e Giampaolo Salvi “Grande grammatica italiana di consultazione” Volume II, Il Mulino, Bologna 1991
11. Lorenzo Renzi e Giampaolo Salvi “Grande grammatica italiana di consultazione” Volume II, Il Mulino, Bologna 1991
12. Sensini M. “La grammatica della lingua italiana”, Oscar Mondadori Milano 2013
13. Massimo Palermo “Linguistica testuale dell’italiano”, Il Mulino, 2012
14. Niccolò Ammaniti «Ti prendo e ti porto via», Oscar Mondadori edizione, aprile 2000

ЭММА БАЛАЯН - СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЭЛЛИПСА ГЛАВНЫХ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ В СОВРЕМЕННОМ ВОСТОЧНОАРМЯНСКОМ И ИТАЛЬЯНСКОМ ЯЗЫКЕ

Целью исследования в данной статье является разъяснение и представление эллипса как одного из важнейших элементов структурно-грамматического и семантического уровня языка. Посредством сопоставительного анализа исследованы семантические особенности эллипса главных членов предложения в современном восточноармянском и итальянском языках.

EMMA BALAYAN – SEMANTIC - FUNCIONAL FEATURES OF ELLIPSES IN MODERN ARMENIAN AND ITALIAN

The aim of the present article is to clarify and present ellipses as one of the most important elements of the grammatical-structural and semantic level of the language. The features of ellipses of the principal parts of the sentence have been examined in modern armenian and italian through comparative analysis.

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԱՐԶԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԼԱՅԱՆ

Հիմնաբառեր՝ մարզական տերմինահամակարգ, նորաբանություն, նորակազմություն, բառակազմական միջոցներ, ածանցում, բառաբարդում, օտարաբանություն, իմաստային նորաբանություն, դիպվածային նորաբանություն, մարզական փոխառյալ տերմիններ

Հայերեն մարզական տերմինաբանությունը հայերենի տերմինաբանական համակարգի առանձին ճյուղերից է: Սպորտի արագ զարգացումն ու տարածումը, նորանոր մարզաձևերի արմատավորումը, մարզական բազմազան ու բազմատեսակ մրցումների, խաղերի, այլևայլ միջոցառումների անցկացումը, մարզական նոր կառույցների, գույքի, հանդերձանքի, կոչումների, պաշտոնների երևան գալը իրենց հետ նոր հասկացություններ բերեցին: Վերջիններիս մուտքով հարյուրավոր նոր բառեր կազմվեցին՝ հարստացնելով հայոց լեզվի բառակազմը:

Ինչպես ցանկացած գիտակարգի, այնպես էլ մարզական տերմինաբանության համալրումը կատարվում է երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին: Ներքին ճանապարհը տերմինահամակարգի համալրումն է հայերենի բառակազմական միջոցներով՝ ածանցմամբ և բառաբարդմամբ: Այս եղանակով են ստեղծվել մարզական մի շարք նորաբանություններ²³:

Ածանցմամբ են կազմվել՝

-ուհի վերջածանցով՝ գեղասահորդուհի, լողորդուհի, հակառակորդուհի, սամբիստուհի, վազորդուհի և այլն,

-որդ վերջածանցով՝ մականորդ, սահնակորդ, օդապարիկորդ, առագաստասահնակորդ, արագավազորդ «սպրինտեր», ջրադահուկորդ, ճատրակորդ²⁴ և այլն,

²³ Նորաբանությունները տրվում են ըստ Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան»-ի, Երևան, 2002:

²⁴ Անհաջող կազմություն է. հանձնարարելի և գործածական է «շախմատիստ» տերմինը:

-ում վերջածանցով՝ թվադասում «մարզական մրցույթների ժամանակ շահած տեղերի թվական կարգի որոշումը», մարտավարում և այլն,

գեր- նախածանցով՝ գերմրցաշար, գերծանրքաշային, գերմարզվածություն, գերգավաթակիր և այլն:

Բառաբարդմամբ են կազմվել՝

մուրց արմատով՝ մրցաշրջան, մրցախաղ /պարտիա/, մրցամարտ /մատչ/, մրցաշար /տուրնիր/, մրցափուլ/տուր/, մրցալող «լողի մրցում», մրցակալ «մրցության հաղթող՝ չեմպիոն», մրցանիշ /ռեկորդ/ և այլն,

մարզ արմատով՝ մարզասարք, մարզաշապիկ, մարզաոճ և այլն,

լող արմատով՝ գեղալող, զուգալող, սառցալող, քառալող, գորտալող /բրաս/ և այլն,

գավաթ արմատով՝ Եվրագավաթ, պատվոգավաթ, վերնագավաթ «բարձր մրցանակ» և այլն²⁵,

մարտ արմատով՝ բազկամարտ /արմռեսթինգ/, մարտարվեստ «մարտական մարզածև՝ կարատե, ուշու և այլն», մրցամարտ և այլն,

դահուկ արմատով՝ անվադահուկ, ջրադահուկ, ցատկադահուկ, վազքադահուկ և այլն,

խաղ արմատով՝ երկաթախաղ «երկաթյա ծանրածող բարձրացնելու մարզածևը», առաջնախաղ /դեբյուտ/, վերջնախաղ /էնդչափ/, մրցախաղ և այլն :

Մարզական տերմինների մեջ առանձնանում են նաև այնպիսի նորակազմություններ, որոնց բաղադրիչներից մեկը փոխառյալ է: Այդպիսի նորակազմ մարզական տերմինների կա՛մ առաջին բաղադրիչն է փոխառյալ /**գոլառապ, ռեկորդածին, ռեկորդակիր, սպորտանավորդ, կրոսավազք, մոտովազք**/, կա՛մ երկրորդ բաղադրիչը /**մարզաբազա, առագաստասպորտ, թեթևաթլետիկա, նավամողել, սահնակասպորտ, ձիասպորտ** և այլն/:

Մարզական տերմինահամակարգը, նորաստեղծ տերմիններից զատ, ընդգրկում է նաև իմաստային նորաբանություններ, որոնց հիմքում ընկած է իմաստափոխությունը, որը «պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝ ա/ երբ տվյալ լեզվի ներքին զարգացումներն են բերում իմաստափոխության, բ/ երբ օտար լեզվական միավորի իմաստի

²⁵ Գործածական է նաև *գավաթային տենդ* նորակազմությունը, որն ունի «մարզական գավաթի համար ծավալվող պայքար՝ մրցություն» փոխաբերական իմաստը:

ազդեցությամբ բառն ստանում է իմաստային ճյուղավորում, այսինքն՝ կատարվում է իմաստային պատճենում»²⁶:

Մարզական տերմինահամակարգում քիչ են իմաստային նորաբանությունները: Այսպես՝ **օլիմպիական** մարզական տերմինը սկզբում գործածվել է «օլիմպիադային՝ մրցախաղերին վերաբերող» ածականական նշանակությամբ, իսկ հիմա գործածվում է նաև «օլիմպիադայի մարզական մրցախաղերի մասնակից» գոյականական իմաստով: **Նեպոմ** մարզական տերմինը, թեև կազմված է նետ+ում կաղապարով, բայց բացարձակապես կապ չունի **նեպ** «նետաձգության մրցումներում օգտագործվող մարզախր» տերմինի հետ. այն ունի «բասկետբոլում և ձեռքի գնդակի մրցումներում օգտագործվող տեխնիկական հնարք» իմաստը: **Մրցում** տերմինի արմատն էլ մուրց «բռունցք»-ն է, բայց այդ իմաստը չի պահպանվել մուրց արմատով կազմված մարզական տերմիններում: **Պոկում** տերմինը «1. պոկելը, 2. ծանրամարտի վարժություններից մեկը» իմաստներից բացի փոխաբերական գործածությամբ այսօր ստացել է «թափ, առաջընթաց, սկիզբ» նշանակությունը: **Տանդեմ /թանդեմ/** տերմինը, «երկտեղ հեծանիվ» նշանակությունից բացի, ունի նաև «գաղափարական, քաղաքական և այլ միասնականություն» նոր իմաստը: Կան նորակազմ բառակապակցություններ, որոնց բաղադրիչներից մեկը բառակապակցության կազմում հանդես է գալիս նոր իմաստով, և այդ իմաստափոխությունը նկատելի է միայն կայուն բառակապակցության մեջ, այսինքն՝ բառը նոր իմաստ է ստանում միայն որոշակի բառային միջավայրում, ինչպես՝ **մաքուր** հաղթանակ «*հարյուրպոկոսանոց* հաղթանակ», սև-սպիտակ **վանդակներ** «*շախմատ*», ժամանակ **շահել** «*ժամանակը ձգձգել*», ամբողջ **ճակատով** «*դաշտը լիովին ընդգրկելով*», սեփական **հարկի տակ** «*իր դաշտում*», միավորներ **հավաքել** «*միավորներ շահել*» և այլն:

Մարզական տերմինաբանության մեջ հանդիպում ենք նաև դիպվածային նորաբանությունների: Այս կարգի նորաբանություններն ունեն մեկանգամյա գործածություն խոսքային տվյալ միջավայրում, իսկ հետագայում դուրս են մնում բառապաշարից: Սեդա Էլոյանի նորաբանությունների բառարանից առանձնացրել ենք մարզական մի քանի դիպվածային նորաբանություններ: Այսպես՝ **շաշխարուհի** «*շաշկի խաղացող իգական սեռի մարզիկ*», **շախմատիզացում** «*շախմատի լայնորեն տա-*

²⁶ Մարտիրոսյան Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Երևան, 2007, էջ 167-168:

րածումը», **Ֆուրբոլախար, Ֆուրբոլամանիա** «Ֆուտբոլով չափազանց կամ հիվանդագին տարվելը», **մարզամարդ** «տարվա մարզական մարդը», **համալսարանիադա** «համալսարանի ուսանողության մարզական մրցում», **նոկրաունական** «ուժեղ ցնցող, նոկրաունի մեջ գցող»:

Մարզական նորաստեղծ տերմինները գրեթե հավասար քանակությամբ կազմվում են և՛ ածանցման, և՛ բառաբարդման եղանակներով, ինչի հետևանքով էլ մարզական բառապաշարը համալրվում է առավելապես գոյականներով և ածականներով:

Բառապաշարի համալրման արտաքին ճանապարհը օտար լեզուներից կատարվող փոխառություններն են: Մարզական բազմաթիվ փոխառություններ, մուտք գործելով մեր լեզվի մեջ, դարձան նրա անբաժանելի մասը և նպաստեցին հայոց լեզվի բառագանձի հարստացմանն ու ճոխացմանը: Դրանցից շատերը բնութագրվում են գործածության միջին հաճախականությամբ և տարածում են ստացել մեր կյանքում:

Օտար մի շարք բառերին զուգահեռ կիրառվում են նրանց ազգային համարժեքները, որոնցից շատերը կայունացել և որոշակի առավելություն են հանդես բերում փոխառյալ ձևերի նկատմամբ: Այսպես՝ ռեկորդ-մրցանիշ, բոքս-բռնցքամարտ, ձեռնամարտ, ստարտ-մեկնարկ, ֆինիշ-վերջնարկ, ալպինիստ-լեռնագնաց, հանդբոլ-ձեռնագնդակ, պարաշյուտ-անկարգել /արևմտահայերեն/, վատերբոլ-ջրագնդակ, բոքսլեյ-դեկասահնակ, պրոֆեսիոնալ-արհեստավարժ, դինամոմետր-ուժաչափ, դեբյուտ-առաջնախաղ, սկզբնախաղ, ռաունդ-խաղափուլ, մատչ-մրցամարտ, տուրմրցափուլ, տուրնիր-մրցաշար, տիր-հրաձգարան, տրամպլին-ոստնակ, սպրինտեր-արագավազորդ, լապտա-գնդաթի և այլն:

Տերմինային հայերեն ձևերը իմաստային հստակությամբ ու հասկանալիությամբ առավելություն են դրսևորում փոխառյալ ձևերի նկատմամբ: Օտար մի քանի բառեր ևս աստիճանաբար իրենց տեղը զիջում են մայրենի լեզվի բառերին. օրինակ՝ սպորտսմեն, սնայպեր, ստադիոն , բոքս, բոքսյոր և այլ բառեր այժմ հիմնականում հանդիպում են բանավոր խոսքում, իսկ գրավոր խոսքում հազվադեպ են կիրառվում: Դրանց փոխարեն գործածվում են մարզիկ, դիպուկահար, մարզադաշտ, բռնցքամարտ և բռնցքամարտիկ ազգային ձևերը:

Հայերենի տերմինաբանության ընդհանուր զարգացումը ցույց է տալիս, որ տերմինային փոխառյալ անվանումների փոխարեն ավելի հաճախ գործածվում են հայերեն համարժեքներ, բայց փաստ է, որ տերմինային օտար անվանումների ու բառերի ընդհանուր քանակը ավելանում է:

Ռ. Իշխանյանը, քննելով հայերենի տերմինաշինության հարցերը, նշում է. «Ճիշտ է, օտար մասնագիտական անվանումների հիմնավոր փոխառությունները անխուսափելի են, բայց մյուս կողմից ճիշտ չի լինի հաշտվել դեպի հայոց լեզուն հոսող ամեն կարգի օտարաբանությունների հեղեղի փաստի հետ: Հայերենի բառաշինությունը ավելի գործուն ու արդյունավետ դարձնելու դեպքում բազմաթիվ օտար փոխառություններ ինքնըստինքյան անհարկի կդառնան»²⁷:

Մարզական տերմինահամակարգում կատարված փոխառությունները միասեռ չեն. դրանց մի մասը արմատացել է հայերենում, մի մասը դուրս է եկել գործածությունից՝ իր տեղը զիջելով հայերեն համարժեքներին, մի մասը գործածվում է հայերեն տերմինների հետ զուգահեռաբար, մյուս մասն էլ, ունենալով հայերեն համարժեք, շարունակում է գործածվել: Ըստ այդմ, նոր փոխառյալ մարզական տերմինները կարելի է բաժանել չորս խմբի՝

1. Երբ մարզական փոխառյալ տերմինի համարժեքը չկա հայերենում, և գործածվում է փոխառյալ տերմինը²⁸, այսպես՝ ֆուտբոլ, բիլիարդ, բռեկ, բոուլինգ, գոլ, նոկաուտ, նոկդաուն, ռալլի, չեմպիոն, ռինգ, բասկետբոլ, ակրոբատիկա, սալտո, ցայտնոտ, կարատե, կուլտուրիզմ, կրիկետ, սամբո, ձյուդո, օլիմպիադա, առլետիկա, տեխնիկա, շախմատ, թիմ, մոտոցիկլետ, ֆեդերացիա և այլն:

2. Երբ մարզական փոխառյալ տերմինն ունի իր հայերեն համարժեքը, բայց նրանք գործածվում են զուգահեռաբար, ինչպես օրինակ՝ սպորտսմեն-մարզիկ, դինամոմետր-ուժաչափ, ալպինիզմ-լեռնասպորտ, տուրիստ-գրոսաշրջիկ, տուրիզմ-գրոսաշրջություն, ֆիզկուլտուրա-մարմնամարզություն, պարաշյուտ-անկարգել, տուրմրցափուլ, պրոֆեսիոնալ-արհեստավարժ, դեբյուտ-առաջնախաղ, սկզբնախաղ, տուրնիր-մրցաշար, ֆինիշ-վերջնարկ, ռաունդ-խաղափուլ, ստարտ-մեկնարկ և այլն:

3. Երբ մարզական փոխառյալ տերմինն ունի իր հայերեն համարժեքը, և փոխառյալ տերմինի գործածությունը դիտվում է օտարաբանություն, այսպես՝ շտանգա-ծանրաձող, ծանրամարտ, շտանգիստ-ծանրորդ ²⁹ , հանդբոլ-

²⁷ Իշխանյան Ռ., Ակնարկ հայերենի տերմինաշինության, Լոյս, Երևան, 1981, էջ 109:

²⁸ Այս տիպի տերմինները կարելի է անվանել միջազգային:

²⁹ Իբրև շտանգիստ բառի համարժեք կիրառվում են և՛ ծանրորդ-ը, և՛ ծանրամարտիկ-ը: Ծանրամարտիկ-ը ստեղծվել է բռնցքամարտիկ, հնգամարտիկ, ըմբշամարտիկ և նման ձևերի նմանակությամբ:

ծեռնագնդակ, սնայպեր-նշանառու, դիպուկահար, տիր- հրաձգարան, բոքս-բռնցքամարտ, կռիվամարտ, ձեռնամարտ, տրենաժոր- մարզասարք, բորսլեյ-դեկասահնակ, պարտիա-մրցախաղ վատերբոլ-ջրագնդակ, մատչ-մրցամարտ և այլն:

4. Երբ մարզական փոխառյալ տերմինն ունի իր հայերեն համարժեքը, բայց դեռևս գործածվում է փոխառյալ տերմինը, այսպես՝ ռեկորդ-մրցանիշ, ժյուրի-մրցատյան, տրամպլին-ոստնակ, բադմինտոն-փետրագնդակ, ռակետ-ցնցաթի, շպագատ-լարան և այլն:

Այսպիսով, նորաբանությունները հայոց լեզվի զարգացման, հարստացման կարևորագույն միջոցներից են: Մարզական տերմինապաշարը համալրվում է մայրենի լեզվի բառակազմական միջոցներով կազմված նորաստեղծ բառերով և իմաստային նորաբանություններով, ինչպես նաև փոխառություններով: Հայերենն աշխատում է փոխառյալ տերմինների դիմաց ստեղծել իր սեփական ձևերը: Ժամանակի ընթացքում մեծ մասամբ հաղթում են հայերեն ձևերը՝ դուրս մղելով օտարաբանությունները, որոշ դեպքերում էլ փոխառյալ տերմինները արմատանում են լեզվում և լայն գործածություն ունենում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Էդ., Տերմինագիտություն, Երևան, 1978:
2. Բաբայան Կ., Մարմնամարզական տերմինների տեղեկատու-բառարան, Երևան, 1985:
3. Զաքարյան Հ., Մասնագիտական տերմինաբանության ստեղծման և յուրացման հասարակական պայմանները, Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, պր. 1988:
4. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002:
5. Իշխանյան Ռ., Ակնարկ հայերենի տերմինաշինության, Երևան, 1981:
6. Իսպիրյան Մ., Մարզանունների բացատրական բառարան, Երևան, 1984:
7. Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, 2009:
8. Ղարիբյան Ար., Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968:
9. Մարտիրոսյան Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Երևան, 2007:
10. Մելքոնյան Լ., Իմաստային նորաբանությունները ժամանակակից հայերենում, Կանթեղ, հ. 3/40/, Երևան, 2009:

11. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տերմինաբանության հարցերի քննարկում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1971:
12. Словарь иностранных слов, Москва, „Русский язык,,. 1980:

СУСАННА БАЛАЯН - НЕОЛОГИЗМЫ И ВАРВАРИЗМЫ В СПОРТИВНОЙ СИСТЕМЕ ТЕРМИНОВ

В статье рассматриваются спортивные неологизмы и варваризмы. Быстрое развитие и распространение спорта, появление новых видов спорта привели с собой новые понятия, требующие изучения. В работе были изучены как неологизмы, составленные путем аффиксации, словосложения, так и смысловые неологизмы. Также отдельно были рассмотрены заимствованные термины и выделены варваризмы.

SUSANNA BALAYAN - NEOLOGISMS AND BARBARISMS IN SPORTS TERMINOLOGY

The article is devoted to the study of neologisms and barbarisms in sports terminology. The rapid development and spread of sports, as well as the appearance of new types of sports led to new conceptions which provide interesting material for linguistic research. The paper focuses on neologisms formed by affixation and compounding, as well as semantic derivation. Special attention is given to borrowed terms and barbarisms.

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

**ՍԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՍԵՂԱ ԳՅՈՒՐՋԱՅԱՆՑ**

Հիմնաբառեր՝ փառադարձություն (գիտական և գործնական), գրադարձություն, տարբերիչ նշաններ, փառադարձության սկզբունքներ, միասնականացված համակարգ

Ժամանակակից հասարակության զարգացման ներկա փուլին բնորոշ միջազգային շփումների ընդլայնումը, միգրացիոն գործընթացների աճը, տուրիզմի զարգացումը զգալիորեն բարդացրել են ինքնությունը հաստատող փաստաթղթերի ձևակերպումը, ինչը հաճախ կապված է հայերեն անձնանունների և տեղանունների տառադարձման դժվարությունների հաղթահարման ու երկվություններից խուսափելու խնդրի հետ: Հարցի լուծմանը խոչընդոտում են մի կողմից ոչ միանշանակ տառադարձումը, մյուս կողմից՝ տառադարձված նշանների տարբեր արտասանությունը: Բավական է հիշատակել Երևանի կենտրոնում կողք կողքի հանդիպող *Սարյան* ազգանվան երկակի տառադարձումը՝ *Saryan* և *Sarian*: Տառադարձության երկվությունները կարող են հանգեցնել անցանկալի հետևանքների իրավական գործողություններ կատարելու ընթացքում: Եթե ներկայացվող փաստաթղթերում անվան գրությունը տարբերվում է երկակի տառադարձության հետևանքով, ապա կարող են առաջանալ տարատեսակ խնդիրներ ուղևորների տոմսերի գրանցման դեպքում, սահմանը անցնելիս, ժառանգություն ձևակերպելիս և այլն: Վերջերս տարբեր լեզուներով հրատարակված գիտական աշխատությունների հեղինակների ինքնության խնդիրը ձեռք է բերել հատուկ կարևորություն: Գիտնականի գիտական ներդրման գնահատումը կարող է զգալիորեն վնասվել, եթե հեղինակի ինքնությունը չի հաստատվում ավտոմատացված բիբլիոմետրիկ համակարգերում անվան տարատեսակ գրության պատճառով:

Դժվարությունները մասնավորապես պայմանավորված են երկու լեզուների հնչույթային համակարգերի անհամապատասխանություններով: Հաճախ անհրաժեշտություն է առաջանում որոշել հայերենի տվյալ հնչույթի մոտավոր համարժեքը անգլերենում: Բավական է նշել հայերենի

ս, փ, փ, թ. կ, ք, ճ, ց, ձ, ծ, ռ և ը տառերի և հնչյունների տառադարձման հետ կապված դժվարությունները:

Գրադարձության (մեկ լեզվի այբուբենի փոխարկում մեկ այլ լեզվի այբուբենով) և տառադարձության (մեկ լեզվի հնչյունների հնչյունական գրությամբ վերարտադրում) սկզբունքների մշակման խնդիրը բազմիցս քննարկվել է գիտական գրականության մեջ, և առաջարկվել են մի շարք մոտեցումներ խնդրի լուծմանը [Вартапетян 1961; Суперанская 1978; Белозеров 2014; Кабакчи 2015]:

Առաջին փորձը կատարել են Հյուբշմանն ու Մեյլեն (Hübschmann-Meillet) 1813 թվականին: 1981 թվականին ԱՄՆ-ում առաջարկվել է BGN/PCGN ստանդարտը (United States Board on Geographic Names/The Permanent Committee on Geographical Names for British Official Use), հետագայում ստանդարտների միջազգային կազմակերպությունը ստեղծել է իր ստանդարտը՝ ISO 9985:1996: Այս համակարգերը լայնորեն կիրառվել են գիտական բազմաթիվ աշխատություններում, աշխարհագրական քարտեզներում և անունների ստանդարտացման դեպքերում:

1997 թվականին Ամերիկյան գրադարանների ասոցիացիան Կոնգրեսի գլխավորությամբ հրատարակել է ALA-LC (American Library Association/Library of Congress) ստանդարտը: 1963 թվականին մշակվել է համակարգչային կոդավորման ASCII ստանդարտը, որի ձևափոխումները հետագայում սկսել են օգտագործել ազգային տարբեր լեզուների ինչպես տպագիր, այնպես էլ համակարգչային տառերը և թվերը ներկայացնելու համար:

Հայերենի այբուբենի գիտական տառադարձության հիմքը լատիներենի այբուբենն է, սակայն լատիներենի 26 տառերով հնարավոր չէ ներկայացնել հայերենի 36 հնչույթները, այդ պատճառով նշված համակարգերում կիրառվում են տարատեսակ տառակապակցություններ և տարբերիչ նշաններ: Օրինակ՝ ճ տառը ASCII համակարգում ներկայացված է *tw* տառակապակցությամբ, իսկ ISO 9985 համակարգում՝ *č* տարբերիչ նշաններ պարունակող տառով: Այս համակարգերը հիմնված են մեկ հնչույթ-մեկ նշան գիտական սկզբունքի վրա:

Հայտնի են տառադարձման խնդրի լուծման մի շարք մեթոդներ.

1. *բառարանային* որի կիրառման դեպքում անունը արտացոլվում է բառարանում իր արտասանությամբ, սակայն քանի որ տարեցտարի անձնանունների քանակը անընդհատ աճում է,

- հետևաբար գործնականում հնարավոր չէ ստեղծել հատուկ անձնանունների համապարփակ բառարան.
2. *գիտական տառադարձության* ,որը հիմնված է *մեկ տառ-մեկ նշան* սկզբունքի վրա, սակայն քանի որ գիտական տառադարձության համար անհրաժեշտ է օգտագործել ինչպես նոր տառույթներ, այնպես էլ տարբերիչ նշաններ, այդ մոտեցումը կիրառում են գիտական նպատակներով, և այն չի կարող ծառայել որպես գործնական ուղեցույց.
 3. *գրադարձության*, համաձայն որի՝ մեկ լեզվի տառին համապատասխանում է մյուս լեզվի մեկ տառը կամ տառակապակցությունը, ինչը հնարավորություն է տալիս վերարտադրելու միայն բառի գրությունը.
 4. *տառադարձության*, որը հնարավորություն է տալիս մի լեզվի բառի հնչողությունը ներկայացնել մյուս լեզվի միջոցներով, սակայն այն կիրառվում է միայն մասնագետների նեղ շրջանակում.
 5. *գործնական*, որի հիմքում ընկած է տառադարձության և գրադարձության ներդաշնակ համադրության սկզբունքը:
 Ի տարբերություն գիտական տառադարձության, որը *մեկ տառ-մեկ հնչյուն* սկզբունքի հետևողականությունը պահպանելու նպատակով կիրառում է նոր տառեր և տարբերիչ նշաններ, լայն հասարակության համար նախատեսված գործնական տառադարձությունը օտար լեզվի տառերը և հնչյունները փոխանցելու համար օգտագործում է միայն տվյալ լեզվին բնորոշ տառերը և տառակապակցությունները: Նման մոտեցումը հնարավորինս ապահովում է գրաֆիկական և հնչյունային համապատասխանությունը երկու լեզուների միջև, այլ կերպ ասած՝ որոշ չափով ապահովվում է «ոսկե միջինը» անունների գրության և արտասանության միջև: Գործնական տառադարձումը պետք է հաշվի առնի տվյալ լեզվի այբուբենը [*Хачатрян 1973: 36*], սակայն այն փաստը, որ երկու լեզուների հնչյունային կազմի միջև բացակայում է լիակատար համապատասխանությունը, բարդացնում է գործնական տառադարձության կիրառումը: Միանշանակ համապատասխանությանը հաճախ խոչընդոտում են բարեհնչության խնդիրը, անզլերենի ձայնային շղթայի և ուղղագրության առանձնահատկությունները:

Անզլերեն տառադարձված տեղեկության պատշաճ ընկալման համար անհրաժեշտ է օգտագործել հայկական անունների

տառադարձության, գրադարձության և թարգմանության ներդաշնակ համադրության մոտեցումը: Հարկ է նշել այն հանգամանքը, որ անգլերենում բացակայում է միանշանակ համապատասխանությունը տառերի և դրանց ընթերցման միջև. հաճախ մեկ տառին համապատասխանում է մեկից ավելի արտասանություն: Տառադարձության և գրադարձության սկզբունքների ոչ հստակ տարբերակումը, անգլերենում բացակայող հնչյոթների արտահայտման տարբեր սկզբունքների կիրառումը և ընդհանրապես տառադարձության որոշակի սկզբունքների բացակայությունը հանգեցնում են երկվությունների, երբեմն նաև զանազան արտասանությունների առաջացմանը: Այսպես, օրինակ, Մինասյան ազգանունը գրվում է *Minasyan* և *Minasian*, *Բաղդասարյան* ազգանունը տառադարձվում է որպես *Baghdasarian*, *Bagdasarian*, *Baghdassarian*, *Baghdasaryan*.

1. Հայերենի 30 բաղաձայնը հնարավոր չէ ներկայացնել անգլերենի 21 բաղաձայն տառույթներով: Հասկանալի է, որ հայերենի մի շարք բաղաձայններն ունեն իրենց անգլերեն համարժեքները: Օրինակ՝ *հայ. բ, գ, դ, ջ, չ – անգլ. p, q, j, ch*:
2. Հայերենի այն հնչյոթները, որոնք չունեն անգլերեն համարժեքներ, տառադարձվում են նրանց առավել մոտ հնչյոթներ արտահայտող տառերով: Օրինակ՝ *հայ. ս, տ, կ, ռ – անգլ. p, t, k, r*: Այս դեպքում դժվարությունն այն է, որ անգլերենի *p, t, k*, տառերը արտասանությամբ համարժեք են հայերենի *փ, թ, ք* բաղաձայններին, քանի որ հայերենում հակադրվում են շնչեղ *փ, թ, ք* և ոչ շնչեղ *ս, տ, կ* բաղաձայնները, մինչդեռ անգլերենում շնչեղությունը տարբերակիչ հատկանիշ չէ: Հայերենի *-ք*-ն կարելի էր ներկայացնել անգլերենի *-q*- տառով *կ-ք* զույգը տարբերակելու համար, սակայն տառադարձման միասնականացման սկզբունքը պահանջում է ներկայացնել այդ զույգը մեկ *-k-* տառով, քանի որ *ս-փ* և *տ-թ* զույգերը հնարավոր է տառադարձել անգլերենի միայն *t* և *p* տառերով: Շնչեղ-ոչ շնչեղ զույգերը տարբերակելու համար առաջարկում են հայերենի *փ, թ, ք* բաղաձայնները տառադարձել *ph, th, kh*, իսկ *ռ-ն՝ rr* տառակապակցություններով: Սակայն նման մոտեցումը հակասում է անգլերենի ուղղագրությանը և ընթերցման կանոններին: Օրինակ, ըստ անգլերենի կանոնների, *ph* տառակապակցությունը կընթերցվի [f], իսկ *th* տառակապակցությունը [θ] կամ [ð]:

3. Անգլերենում համարժեք չունեցող մի շարք բաղաձայններ տառադարձվում են ինչպես անգլերենին բնորոշ, այնպես էլ անգլերենում բացակայող տառակապակցություններով, օրինակ՝ *հայ. ժ – անգլ. zh, հայ. ղ – անգլ. gh, հայ. խ – անգլ. kh, հայ. ձ – անգլ. dz, հայ. ց – անգլ. ts, հայ. ծ – անգլ. ts, հայ. ճ – անգլ. ch, հայ. ժաննա, Աղունիկ, Խաչապուր, Փառանձեմ, Յուլակ, Ծաղիկ, Տաճապ – անգլ. Zhanna, Aghunik, Khachatur, Parandzem, Tsaghik, Tachat*: Գոյություն ունեն հայերենի *ց-ծ* և *չ-ճ* զույգերի տառադարձման երկու եղանակ: Մի դեպքում տառադարձված նշանները չեն տարբերվում, մյուս դեպքում դրանք ներկայացվում են տարբեր նշաններով: Երկու մոտեցումներն էլ ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Առաջին դեպքում նկատի է առնվում այն փաստը, որ անգլերենում շնչեղությունը տարբերակիչ հատկանիշ չէ (*հայ. ց/ծ – անգլ. ts, հայ. չ/ճ – անգլ. ch*), մինչդեռ երկրորդ մոտեցման դեպքում կարևորվում է տառերի տարբերակման սկզբունքը (*հայ. ց/ծ – անգլ. c/c', հայ. չ/ճ – անգլ. ch/tw*): Սակայն երկրորդ մոտեցումն անընթեռնելի է դարձնում բառերը, իսկ, ինչպես արդեն նշվել է, հայերենի տառադարձությունը պետք է հնարավորինս համապատասխանի անգլերենի ընթերցման կանոններին:
4. Հայերենի *ա, ի, է, օ* և *ու* տառերը տառադարձվում են անգլերենի *a, i, e, o* և *u* տառերով: Ինչպես հայտնի է, անգլերենի ձայնավոր տառերը ունեն տարբեր արտասանություն՝ կախված վանկի տեսակից (բաց/փակ, շեշտված/անշեշտ), նախորդող ու հաջորդող տառերից կամ տառակապակցություններից, սակայն տառադարձման դեպքում անգլերենի ձայնավորները ընթերցվում են ինչպես լատինական այբուբենում: Օրինակ՝ *հայ. Արարակ, Իշխան, Օնիկ, Էդգար, Ոստիան – անգլ. Bagrat, Ishkhan, Edgar Onik, Ustyan*: Հայերենի *ե* և *ո* տառերը տառադարձվում են որպես *Ye* և *Vo* բառասկզբում ու որպես *e* և *o*՝ բառամիջում և բառավերջում, քանի որ հայերենի այդ տառերի արտասանությունը կախված է դիրքից. բառասկզբում դրանք արտասանվում են [յե] և [վո], իսկ բառամիջում և բառավերջում [է] և [օ]: Օրինակ՝ *հայ. Ոսկան, Երվանդ, Մեսրոպ – անգլ. Voskan, Yervand, Mesrop*:
5. Հայերենի *-ը*- տառի անգլերեն տառադարձումը որոշակի դժվարություն է ներկայացնում, քանի որ անգլերենում համարժեք

- տառ չկա: Որպես համարժեք կարելի է օգտագործել անգլերենի -*i*-, կամ -*e*- տառը, օրինակ՝ հայ. *Ընծակ* – անգլ. *Indzak*:
6. Հայերենի -*այ*-, -*եյ*- և -*ոյ*- տառակապակցությունները տառադարձվում են բառասկզբում և բառամիջում՝ -*ai*-, -*ei*-, -*oi* տառակապակցություններով բաղաձայնից առաջ, օրինակ՝ հայ. *Հայկ*, *Սեյրան*, *Եյրամջան* - անգլ. *Haik*, *Seiran*, *Eiramjyan*, իսկ ձայնավորների միջև և բառավերջում՝ *ay*-, -*ey*-, -*oy*-. Օրինակ՝, հայ. *Սերգեյ*, *Նոյ*, *Ջոյա*, *Բոյաջան* - անգլ. *Sergey*, *Noy*, *Zoya*, *Boyajyan*:
7. Ինչ վերաբերում է ազգանունների -*յան* վերջածանցի տառադարձմանը, այն ունի երկակի տառադարձում՝ -*ian* կամ -*yan*: Հաշվի առնելով այն փաստը որ -*ian* վերջածանցի ընտրության դեպքում անգլերենի ընթերցման կանոնները հաճախ ազդում են արտասանության վրա (-*sian*/-*tian* վերջածանցը արտասանվում է [ʃəɪn])՝ նպատակահարմար է կիրառել -*yan* տառադարձումը:
8. Հայերենի -իա- *դատակապակցությունը ներկայացվում է -ia-դատակապակցությամբ*, իսկ -յա- *դատակապակցությունը՝ -ya-դատակապակցությամբ*, օրինակ՝ հայ. Ամալյա, Անանիա – անգլ. *Amalia*, *Anania*, *բայց հայ. Եպրաքսյա*, *Էյյա*, *Բայանդուր* - անգլ. *Yepraksya*, *Elya*, *Bayandur*:
9. Հայերենի բաղաձայն տառերի որոշ կուտակումների արտասանությունը արմատապես տարբերվում է անգլերենում կիրառվող կուտակումներից, ինչը այդ կուտակումների անգլերեն արտասանությունը դարձնում է անճանաչելի, իսկ գրությունը՝ ծայրահեղ անսովոր: Բանն այն է, որ հայերենում կուտակումները հաճախ հանդիպում են միայն գրության մեջ. բանավոր խոսքում այդ կուտակումներում կիրառվում է գաղտնավանկ *ը* հնչյունը, օրինակ՝ *Մկրտիչ*, *Դստրիկ*, *Խլղաթ*, *Տրդատ*. Համամիտ ենք այն տեսակետին, որի համաձայն՝ նման կուտակումներում կարելի է կիրառել էպենտետիկ/ընդմիջարկված -*i*- կամ -*e*- ձայնավորները, օրինակ՝ *Mikirtich*, *Khilghat*, *Tirdat*, *Distrik* [Хаচারян 1973: 38]:
10. Պատմական անունները (թագավորների, իշխանների, զորավարների, պատմիչների, քաղաքական ու կրոնական գործիչների, գրողների և այլն) տառադարձվում են գրադարձությամբ, օրինակ՝ *Մովսես Խորենացին* տառադարձվում է որպես *Movses Khorenatsi* (ոչ *Moses of Khoren*), իսկ Հովհան Ոսկեբերանը՝ *Hovnan Voskeberan*: Որոշ անուններ, հատկապես մականունները, հանդիպում են նաև թարգմանաբար, օրինակ՝ *Աշոտ Երկաթ*

տառադարձվում է *Ashot Yerkat* և *Ashot the Iron*, *Ներսես Շնորհալի՝ Nerses Shnorhali* կամ *Nerses the Gracious*, *Տիգրան Մեծ՝ Tigran the Great*, *Արա Գեղեցիկ՝ Ara Geghetsik* և *Ara the Beautiful*:

11. Պատմական, դիցաբանական, գեղարվեստական գրականության մեջ գործածված ու տարածում գտած անունները տառադարձվում են անգլերեն ընդունված ձևով, օրինակ՝ *Աքիլլես* տառադարձվում է *Achilles*, *Հոմերոս՝ Homer*, *Ոդիսևս՝ Odyssey*, *Պրոմեթևս՝ Prometheus*, *Ջևս՝ Zeus*, *Ապոլլոն՝ Apollo*, *Տրդատ I՝ Tiridates I*, *Լեվոն I՝ Leo I*:
12. Հայերենի՝ այլ լեզուներից փոխառված անունները տառադարձելու դեպքում պահպանվում են հայերենի գրությունն ու արտասանությունը, օրինակ՝ *Դավիթ - Davit*, *Արթուր - Artur*, *Բեատրիս - Beatris*, *Բելա- Bela*, *Իզաբելա - Isabela*, *Լյուսի - Lucy*, *Ֆրանց - Franz*: Այս կապակցությամբ տեղին է մեջբերել հայտնի ամերիկացի թարգմանիչ Լին Վիսոնի մեկնաբանությունը օտար անունների կիրառության վերաբերյալ, ըստ որի՝ անընդունելի է աղավաղել անձնանվան արտասանությունը, ներկայացնելով այն օտարալեզու, տվյալ դեպքում անգլերենի զուգանմանով, անգամ եթե այն գոյություն ունի, օրինակ՝ *Գևորգ, Միքայել* անունները սխալ է ներկայացնել որպես *Ջորջ* և *Մայքլ* [Visson 2015]:
13. Հայերենի անձնանունների բառավերջի *-ի* տառը սովորաբար տառադարձվում է որպես *-i*, սակայն անգլերեն անձնանունների վերջում հանդիպում են միայն *-ie* և *-y* տարբերակները, օրինակ՝ *հայ. Իսկուհի, Երանուհի - Iskuhy/Iskuhie/Iskuhi, Eranuhie/Eranuhy/Eranuhi*: Տառադարձման դեպքում կարևոր է հնարավորինս պահպանել միասնականության սկզբունքը և ընտրել միայն մեկ տարբերակը:

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՌԵՐԻ ԱՆԳԼԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ

Ա	Ա	Հայերենի <i>-ա-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-a-</i> տառով, օրինակ՝ <i>Ադամ - Adam</i> , <i>Անի - Ani</i> , <i>Արեգ - Areg</i> , <i>Գագիկ - Gagik</i> :
----------	----------	---

Բ	B	Հայերենի <i>-բ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-b-</i> տառով, օրինակ՝ <i>Բագրատ</i> - <i>Bagrat</i> , <i>Բաբախան</i> - <i>Babakhan</i> , <i>Բալասան</i> - <i>Balasan</i> , <i>Բավական</i> - <i>Bavakan</i> :
Գ	G	Հայերենի <i>-գ-</i> տառը ներկայացվում է անգլերենի <i>-g-</i> տառով, օրինակ՝ <i>Գարիկ</i> - <i>Garik</i> , <i>Գայանե</i> - <i>Gayane</i> , <i>Գարեգին</i> - <i>Garegin</i> :
Դ	D	Հայերենի <i>-դ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-d-</i> տառով, օրինակ՝ <i>Դերենիկ</i> - <i>Derenik</i> :
Ե	Ye, e	Հայերենի <i>-ե-</i> տառը ներկայացվում է՝ - բառասկզբում <i>Ye-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Երվանդ</i> - <i>Yervand</i> , <i>Եվա</i> - <i>Yeva</i> . - բառամիջում և բառավերջում <i>-e-</i> տառով, օրինակ՝ <i>Մեսրոպ</i> , <i>Նարինե</i> - <i>Mesrop</i> , <i>Narine</i> :
Զ	Z	Հայերենի <i>-զ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-z-</i> տառով, օրինակ՝ <i>Զաբել</i> - <i>Zabel</i> , <i>Զանան</i> - <i>Zanan</i> , <i>Զավեն</i> - <i>Zaven</i> :
Է	E	Հայերենի <i>-է-</i> տառը ներկայացվում է <i>-e-</i> տառով, օրինակ՝ <i>Էդգար</i> - <i>Edgar</i> , <i>Էլզա</i> - <i>Elza</i> :
Ը	I	Հայերենի <i>-ը-</i> ն տառադարձվում է անգլերենի <i>-i-</i> տառով, օրինակ՝ <i>Ընձակ</i> - <i>Indzak</i> , <i>Ըղձուհի</i> - <i>Ighdzuhi</i> :
Թ	T	Հայերենի <i>-թ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-t-</i> տառով, օրինակ՝ <i>Թաթուլ</i> - <i>Tatul</i> , <i>Թամար</i> - <i>Tamar</i> :
Ժ	Zh	<i>ժ</i> տառին համապատասխանում է <i>-zh-</i> տառակապակցությունը, օրինակ՝ <i>ժրայր</i> - <i>Zhirair</i> , <i>ժանա</i> - <i>Zhanna</i> :
Ի	I	Հայերենի <i>-ի-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-i-</i> տառով, օրինակ՝ <i>Իշխան</i> - <i>Ishkhan</i> , <i>Իդա</i> - <i>Ida</i> :

L	L	Հայերենի <i>-l-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-l-</i> տառով, օրինակ՝ <i>Լիլյա - Lilya, Լևոն - Levon:</i>
Խ	Kh	Հայերենի <i>-խ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-kh-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Խանդուտ - Khandut, Խաչիկ - Khachik:</i>
Ծ	Ts	Հայերենի <i>-ծ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-ts-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Ծափուր - Tsatur:</i>
Կ	K	Հայերենի <i>-կ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-k-</i> տառով, օրինակ՝ <i>Կարինե - Karine, Կարեն - Karen:</i>
Հ	H	Հայերենի <i>-հ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-h-</i> տառով, օրինակ՝ <i>Համեստ - Hamest, Հովիկ - Hovik:</i>
Ձ	Dz	Հայերենի <i>-ձ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-dz-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Փարանձեմ - Parandzem:</i>
Ղ	Gh	Հայերենի <i>-ղ-</i> տառը համապատասխանում է <i>-gh-</i> տառակապակցությանը, օրինակ՝ <i>Մուշեղ - Mushegh, Աղամիր - Aghamir:</i>
Ճ	ch	Հայերենի <i>-ճ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-ch-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Տաճափ - Tachat, Ճուլիկ - Chutik:</i>
Մ	M	Հայերենի <i>-մ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-m-</i> տառով, օրինակ՝ <i>Միսակ - Misak, Մայա - Maya:</i>
Յ	Y	Հայերենի <i>-յ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-y-</i> տառով, օրինակ՝ <i>Մանյա - Manya, Փայլակ - Paylak:</i>
Ն	N	Հայերենի <i>-ն-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-n-</i> տառով, օրինակ, <i>Նարեկ - Narek, Նարինե - Narine:</i>
Շ	Sh	Հայերենի <i>-շ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-sh-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Շուշան - Shushan,</i>

		<i>Շամիրամ – Shamiram:</i>
Ո	Vo, o	Հայերենի <i>-n-</i> տառը տառադարձվում է՝ - բառասկզբում անգլերենի <i>Vo-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Ոսկան – Voskan,</i> <i>Ոսանիկ – Vostanik.</i> - բառամիջում և բառավերջում <i>-o-</i> տառով, օրինակ՝ <i>Պողոս – Poghos, Մարո – Maro, Սարո – Saro:</i>
Չ	Ch	Հայերենի <i>-չ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-ch-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Չինար – Chinar:</i>
Պ	P	Հայերենի <i>-պ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-p-</i> տառով, օրինակ՝ <i>Պարույր – Paruyr:</i>
Ջ	J	Հայերենի <i>-ջ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-j-</i> տառով, օրինակ՝ <i>Ջանիկ – Janik:</i>
Ռ	R	Հայերենի <i>-ռ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-r-</i> տառով, օրինակ՝ <i>Ռազմիկ – Razmik, Ռաֆայել – Rafael,</i> <i>Ռիմա – Rima:</i>
ս	s	Հայերենի <i>-ս-</i> տառին համապատասխանում է <i>-s-</i> տառը, որը կարդացվում է որպես [s] կամ [z], օրինակ՝ <i>Սեդրակ – Sedrak, Ամասիկ – Amasik [s], բայց Իսաբեկ –</i> <i>Isabek [q]:</i>
Վ	V	Հայերենի <i>-վ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-v-</i> տառով, օրինակ՝ <i>Վարվառա – Varvara, Վարսենիկ –</i> <i>Varsenik:</i>
Տ	T	Հայերենի <i>-տ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-t-</i> տառով, օրինակ՝ <i>Տաթև – Tatev, Տիգրան – Tigran:</i>
Ր	R	Հայերենի <i>-ր-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-r-</i> տառով, օրինակ՝ <i>Րաֆֆի – Raffi, Պարույր – Paruyr:</i>

Ց	Ts	Հայերենի <i>-g-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-ts</i> - տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Ցոլակ – Tsoлак</i> :
Ու	U	Հայերենի <i>-ու-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-u-</i> տառով, օրինակ, <i>Ուստիան – Ustyan</i> :
Փ	P	Հայերենի <i>-փ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-p-</i> տառով, օրինակ, <i>Փայլակ – Paylak</i> :
Ք	K	Հայերենի <i>-կ-</i> տառը տառադարձվում է <i>անգլերենի -կ- փառով</i> , օրինակ՝ <i>Քրիստինե – Kristine</i> , <i>Քուչակ – Kuchak</i> :
և	Ev	Հայերենի <i>-և-</i> տառը տառադարձվում է <i>-ev-</i> տառակապակցությամբ, օրինակ՝ <i>Պարզև – Pargev</i> :
Օ	O	Հայերենի <i>-օ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-o-</i> տառով, օրինակ, <i>Օլսաննա – Osanna</i> , <i>Օնիկ – Onik</i> :
Ֆ	F	Հայերենի <i>-ֆ-</i> տառը տառադարձվում է անգլերենի <i>-f-</i> տառով, օրինակ՝ <i>Ֆրիդա – Frida</i> :

Տառադարձության և գրադարձության սկզբունքների ոչ հստակ տարբերակումը, անգլերենում բացակայող հնչույթների արտահայտման տարբեր սկզբունքների կիրառումը և ընդհանրապես տառադարձության որոշակի սկզբունքների բացակայությունը, հաճախ նաև տառադարձող անձերի ոչ բավարար պատասխանատվությունը հանգեցնում են այն բանին, որ հանդիպում են կողք կողքի երկու և ավելի անգլերեն համարժեքներ: Ժամանակի հրատապ պահանջն է միասնականացված համակարգի ներդրումը բազմակի և ինքնաբերական տառադարձություններից խուսափելու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Вартапетян Н.А., *Справочник по русской транскрипции армянских имен, фамилий и географических названий*, Ереван, 1961:

2. Виссон, Линн, *Русские проблемы в английской речи. Слова и фразы в контексте двух культур*. М.: «Р.Валент», 2015:
3. Белозеров В.Н., *Латинский алфавит для русских слов*. <https://cyberleninka.ru/article/v/latinskiy-alfavit-dlya-russkih-slov>
Интернет-журнал «Проблемы современного образования» 2014 N 2:
4. Кабакчи М. К., *К проблеме перевода русскоязычных реалий на английский язык (на примере топонимики Санкт-Петербурга)*. Текст научной статьи по специальности «Языкознание» **Том 7, № 7/2 (2015)**:
5. *Правила транслитерации, для чего она применяется и транслит переводчики онлайн*,
oldbusinessnet.com/kompyuter-i-internet/transliteraciya-translit-perevodchiki-onlajn/#translit-rules:
6. Суперанская, А.В., *Теоретические основы практической транскрипции*/ А.В. Суперанская. Отв. ред. А.А. Реформатский. М.: Наука, 1978:
7. Хачатрян А., *Фонемная система армянского языка и некоторые вопросы транскрипции*. Вестник АН Арм. ССР, N 5, Ереван, 1973:
8. *AM Translit – Armenian Transliteration and Spell Checker*, <http://am.translit.cc/>:
9. The Principles of the International Phonetic Association, Department of Phonetics, University College, London, W.C.I., 1949 (reprinted 1966):

СЕДА БАГДАСАРЯН, СЕДА ГЮРДЖАЯНЦ – К ПРОБЛЕМЕ ТРАНСЛИТЕРАЦИИ АРМЯНСКИХ ИМЕН НА АНГЛИЙСКИЙ ЯЗЫК

Статья посвящена проблеме транслитерации армянских собственных имен на английский язык. Расширение международных контактов, миграционные процессы, увеличение туристических потоков со всей серьезностью ставят проблему однозначного оформления идентификационных документов и как одну из проблем – транслитерацию собственных имен на английский язык. В статье рассматриваются известные подходы к проблеме транслитерации, теоретические основы и принципы транслитерации и предпринимается попытка обосновать возможные пути решения проблемы, способствующие унификации передачи собственных имен на английский язык, что позволит предотвратить стихийные способы транслитерации.

SEDA BAGDASARYAN, SEDA GYURJAYANTS – ON THE PROBLEM OF TRASLITERATION OF ARMENIAN NAMES INTO ENGLISH

The article addresses the problem of transliteration of Armenian proper names into English given the present-day expansion of international contacts, migration processes, rise of tourism, etc. Incorrect transliteration results in various identity problems. The article considers the basic approaches to the problem concentrating on those having practical efficiency.

**ԻՍՊՈՒՆԱԿԱՆ ԽԱՐԵՔԱՅԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԻ
ՀԱՄԱԼԻՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ԴՈՆԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հիմնաբառեր՝ խոսույթ, հեղինակ՝ տեքստի հասցեագրող, ընթերցող՝ հասցեատեր, հորինված աշխարհ (diégesis, diégèse), միջտեքստային պատում (narración intradiegetica, narration intradiegetique), սուբյեկտիվ հեղինակային դեմք, օբյեկտիվ կերպարի դեմք, մակրո- և միկրոհասկացույթներ

Յուրաքանչյուր խոսույթ, գրավոր, թե բանավոր, բնութագրվում է որպես հաղորդակցական ակտ, որը տեղի է ունենում որոշակի հաղորդակցական իրադրությունում և, որին մասնակցում են հաղորդագրության կամ տեքստի հեղինակը և հասցեատերը, ընդ որում, այդ հաղորդագրությունը նպատակ ունի ինչ-որ ձևով ազդելու իր հասցեատիրոջ վրա:

Այլ կերպ ասած, տեքստը ստեղծվում է խոսքամտածողական գործունեության ընթացքում, որին մասնակցում են ոչ միայն տեքստի հեղինակը (տեքստ հասցեագրողը), այլ նաև ընթերցողը (հասցեատերը), արտացոլվող իրականությունը, տեքստի միջոցով փոխանցվող գիտելիքը և լեզվական համակարգը, որից հեղինակը ընտրում է լեզվական միջոցներ (Ayala, 1970; 29):

Տեքստի ստեղծման արդյունքում հեղինակի ստեղծագործական միտքը օբյեկտիվորեն առարկայանում է, և տեքստի միջոցով հեղինակը փոխանցում է մարդու և նրան շրջապատող աշխարհի մասին իր գիտելիքները՝ այն դարձնելով ուրիշի սեփականություն (Бабенко, Васильев, Казарин, 2000; 14):

Հարկ է նշել, որ գրական խոսույթը որպես պատմողական շարադրանք ունի իր առանձնահատկությունները, և այստեղ արդեն հաղորդակցության պայմանները փոխվում են, և այս ժանրի վերլուծությունը պահանջում է հստակեցնել հետևյալ խնդիրները. <<Ով է խոսում>>, <<Ում հետ>>, <<Ինչպես>>, <<Որն է հաղորդագրության մտադրությունը (ինտենցիան):

Նկարագրական տեքստի կարևոր առանձնահատկություններից է հորինված պատմության ընդունումը որպես իրական՝ հաղորդակցության երկու մասնակիցների կողմից:

Խոսելով գրական տեքստի հեղինակի մասին, նախ և առաջ անհրաժեշտ է տարբերակել մարդու, գրողի և պատմողի կարգավիճակները, որոնք բոլորովին տարբեր են: Մարդը իրական, գոյություն ունեցող աշխարհի ծնունդ է և կարող է ունենալ գրողի մասնագիտություն: Մարդու ինքնակենսագրական որոշ տվյալներ կարող են օգտագործվել գրողի ինքնակենսագրական վեպերում՝ որոշակի գեղարվեստական ձևավորում ստանալով: Պատմողը հորինվածքի այն ձայնն է, որ լսում է ընթերցողը՝ տեքստը կարդալիս: Այդ տեքստային ձայնը հեղինակի ձայնը չէ, քանի որ այն ներկայացնում է նկարագրական տեքստի ներսում երևակայական, հորինված և սուբյեկտիվ իրականությունը: Հեղինակը տարանջատվում է իր ասույթից, և նրա փոխարեն հանդես է գալիս պատմողը, որը հորինված անձ է: Պատմողը դառնում է հեղինակի մտահաղացման այն սուբյեկտը, որն անմիջապես իր մարմնավորումն է ստանում տեքստի ներսում և դառնում է տարածաժամանակային ցուցիչների մեխանիզմի համակարգման կենտրոնը, մեխանիզմ, որը ստեղծվում է լեզվական հենքի վրա և, որը անպայման առկա է յուրաքանչյուր պատմողական տեքստում:

Այսպիսով, կարելի է ասել, որ պատմողը գոյություն ունի միայն տեքստի ներսում, իսկ գրողը՝ տեքստից դուրս, նույնիսկ, եթե այդ տեքստը ինքնակենսագրական ստեղծագործություն է:

Սակայն, պատմողի կարգավիճակը լիարժեք հստակեցնելու համար, անհրաժեշտ է հորինված աշխարհ(diegèse) և այդ աշխարհի ներսում կատարվող դեպքերի և իրադարձությունների պատմում, ներկայացում (narration) հասկացությունները: Պատմվածքը ստեղծվում է իրադարձությունների շարադրանքի հիման վրա, որտեղ հորինված աշխարհը այդ պատումի օբյեկտն է, այլ կերպ ասած՝ պատմողի խոսույթը: Այն դեպքում, երբ պատմողը դեպքերն ու իրադարձությունները ներկայացնում է առաջին դեմքով, ապա նա դառնում է այդ աշխարհի անմիջական մասնակից և գտնվում է դրա ներսում: Սակայն գոյություն ունի նաև պատմողի մեկ այլ կարգավիճակ, երբ նա դուրս է գտնվում այդ հորինված աշխարհից և չլինելով գործողությունների մասնակից, ընդամենը պատմում է դրանց մասին, նույնիսկ մեկնաբանություններ է անում, գնահատականներ տալիս՝ և այս դեպքում նա հանդես է գալիս երրորդ դեմքով: Շատ հաճախ, նույն պատումի ներսում կարող է տեղի

ունենալ մեկ այլ պատմություն, որը ներկայացվում է գլխավոր հերոսներից մեկի կողմից՝ առաջին դեմքով: Այստեղ արդեն ունենք տեքստի ներսում ստեղծված հորինված աշխարհը ներկայացնող պատմող, որը գտնվում է այդ աշխարհից դուրս և գլխավոր հերոս՝ որպես միջտեքստային պատմող (intradiégétique), որը գտնվում է հորինված աշխարհի ներսում: (Tisset, 2000;10-14):

Այսպես օրինակ, իսպանական պիկկարոյական վեպերում XVII դարի իսպանական հասարակությունը՝“ոսկե դարի” բարոկկյան գրողների յուրովի մեկնաբանմամբ, ներկայացված է երևակայական պատմությունների միջոցով: Այլ կերպ ասած, հեղինակի մտորումներում գոյություն ունեցող օբյեկտիվ իրականությունը, վեպում վերածվում է սուբյեկտիվ իրականության: Եվ չնայած այն հանգամանքին, որ տեքստի կառուցվածքային ամբողջությունը ապահովում է տեքստից դուրս գտնվող հեղինակի մտահաղացման և տեքստի ներսում արտացոլված աշխարհի մոդելի միասնությունը, այնուամենայնիվ հեղինակի դերը գեղարվեստական տեքստում միանշանակ չէ, այն ունի երկատված բնույթ՝ իրական մարդ-հեղինակ, որը գտնվում է տեքստից դուրս և խոսող-պատմող, որը գտնվում է տեքստի ներսում(Ayala, 1970;31):

Ասվածը դիտարկենք Ֆ.Լոպես Ուբեդայի “La pícaro Justina” վեպից վերցված օրինակներում.

1. **Yo, mi** señor Don Picaro, soy la melindrosa escribana, la honrosa pelona, la manchega al uso, la engulle figas... (P.28) - **ես**, տեր **իմ** պարոն Պիկարո, քծնող, սեթևթ գրիչ (գրագիր) եմ, ազնիվ չքավոր գեղջկուհի, հալումաշ եղած փնթի կին, արարքների ու կատակների կլանիչ...
2. Un pelo tiene esta **mi** negra pluma, jay, pluma **mía**, pluma **mía!** (P.29) -Մի մազ է կպել **իմ** սև փետուրին (գրչին): Վա~յ գրիչ **իմ**, գրիչ **իմ**:
3. **Válgame** san Jorge, que mató la araña; san Rafael, que venció a los leones (P.48) – Փրկիր **ինձ**, սուրբ Խորխե, որ սարդ ես սպանել, սուրբ Ռաֆայել, որ առյուծների ես հաղթել:

Առաջին օրինակում պատմողը ներկայացված էեզակի թվի առաջին դեմքի անձնական դերանունով**yo, ser** (լինել, հանդես գալ) բայի առաջին դեմքով, իսկ իզական սեռի **escribana, pelona** գոյականները ցույց են տալիս նաև, որ պատմողը կին է :Առաջին և երկրորդ օրինակներում ներկայացված ստացական ածականակերտդերանվան առաջին դեմքի **mi**

և ստացական դերանվան առաջին դեմքի **mía** ձևերը մատնանշում են պատմողի սերտ կապվածությունը իր գրչի հետ, նրա մտերմիկ ընկերական վերաբերմունքը մի իրի նկատմամբ, որն անբաժան է իր կյանքից (**mi negra pluma, pluma mía, pluma mía**): Երրորդ օրինակում **me** անձնական դերանունը հայցական հոլովով (ուղղակի խնդիր), դարձյալ մատնանշում է պատմողին, իսկ **valer** բայը՝ օգտագործված հրամայական եղանակի հաստատական ձևով (modo imperativo afirmativo), ձևաբանորեն երրորդ դեմքով (բայց շարահյուսորեն երկրորդ դեմքով), մատնացույց է անում հաղորդակցության երկու մասնակիցներին՝ **ես** (հաղորդող) և **դու** (հաղորդման հասցեատեր), տվյալ դեպքում այդ հաղորդումը ուղղված է սրբերին՝ փրկության աղերսով:

Գեղարվեստական տեքստում, ինչպես արդեն ասացինք, պատմողը հանդես է գալիս նաև որպես իրերի և իրադարձությունների գնահատող և երկխոսություններին արձագանքող սուբյեկտ: Այսպես, Ֆ. դե Կևեդոյի <<El buscón>> վեպում դոն Պաբլոն՝ պատմողը, ոչ միայն ներկայացնում է դեպքերն ու իրադարձությունները, այլ նաև տալիս է դրանց գնահատականը.

...Mandóme desatacar y **azotando - me decía tras cada azote**:

- ¿Diréis más Poncio Pilato?

Yo respondía; - -No, Señor. (P.84)

...Նա հրամայեց ինձ արձակել վարտիքը (մերկանայ) և մտրակի ամեն հարվածի հետ կրկնում էր.

-Կասե՞ս (կկրկնես) էլի Պոնտացի Պիղատոս:

Իսկ ես պատասխանում էի. – Ոչ, պարոն (տերս):

Yo no pude con eso tener la risa, que a borbollones se me salía por los ojos y narices, y **dando una gran carcajada, dije**;

- ¡Cosa admirable! (P.144)

Այդ խոսքերից հետո ես չկարողացա զսպել ծիծաղս, որը կչկչոցով դուրս արձավ քթերիցս և ես ասացի հրիռալով. – Ի~նչ զարմանլի (հիանալի) բան է:

Ներկայացված օրինակներում **decir** (ասել) բայը, որից հետո ամեն անգամ ներմուծվում է ուղղիղ խոսքը, ուղեկցվում է լրացուցիչ ստորոգյալով՝ արտահայտելով գնահատողական վերաբերմունք. **azotando - me decía tras cada azote; dando una gran carcajada, dije**.

Ընդհանուր առմամբ, դասական իսպանական խաբեբայապատումի ժանրային բնութագրերից է պատումի ներկայացումը առաջին դեմքով:

Օրինակ,

1. Pues, sepa Vuestra Merced, ante todas cosas, que **me llaman Lázaro de Tormes**, hijo de Tomé González y de Antona Pérez, natural de Tejares, aldea Salamanca (Lazarillo de Tormes, 12)

-Ամենից առաջ հայտնի թող լինի ձերդ մեծությանը, որ **իմ անունն է Լասարո Տորմեսը**, որդի Տոմե Գոնսալեսի և Անտոնա Պերեսի: Ծնողներս Սալամանկայի կողմերից են, Տեխարես գյուղից:

2. **Yo, señora, soy de Segovia**; mi padre se llamó Clemente Pablo, natural del mismo pueblo (Dios le tenga en cielo)... (El buscón, 73)

-**ես**, տիկին, **Սեգովիա քաղաքից եմ**; իմ հորը (Աստված հոգին լուսավորի) կոչում էին Կլիմենտե Պաբլո, ծնունդով նույն վայրից (գյուղից)...

Բերված օրինակներում, որոնցով, ի դեպ, սկսվում է «Տորմեսի Լասարիլիոյի կյանքը» խաբեբայապատումը, գլխաավոր հերոսը՝ Լասարիլիոն ինքն է պատմում իր ծննդի, իր կյանքի մանրամասները (**me llaman Lázaro de Tormes; Yo soy de Segovia**) միևնույն ժամանակ հանդես գալով որպես հեղինակ, հետևաբար տեղի է ունենում սուբյեկտիվ հեղինակի և օբյեկտիվ կերպարի՝ գլխավոր հերոսի դեմքի կատեգորիաների միավորում.

սուբյեկտիվ հեղինակային դեմք = օբյեկտիվ կերպարի դեմք:

Տվյալիավասարությունը գործում է «Lazarillo de Tormes», Մատեո Ալեմանի «Guzmán de Alfarache», Ֆրանսիսկո դե Կետեյի «El buscón», Լոպես դե Ուրեդայի «La picara Justina» դասական խաբեբայապատումներում:

Սակայն, ինչպես արդեն ասացինք, միշտ չէ, որ պատմողը հանդես է գալիս առաջին դեմքով և հանդիսանում է տեքստի ներսում ներկայացված հորինված աշխարհի գործողությունների և իրադարձությունների անմիջական մասնակիցը:

Ավելի ուշ գրված խաբեբայապատումներում, երբ նկատվում է պիկարեսկայի անկում՝ պայմանավորված, մի կողմից, դասական բովանդակության ներկայացման նոր ձևերի որոնմամբ, մյուս կողմից՝ քննադական բովանդակությունից հոգնած, դեպի զվարճանքը, ուրախությունը ձգտելու ցանկությամբ, հեղինակները անցնում են երրորդ դեմքով ներկայացվող պատումի:

Agradeció de nuevo Rufina su hidalga oferta; y porque ya **vio** ser tiempo para comenzar a urdir su tela, habiendo tomado asiento cerca del enamorado avariento, **le dijo así**:

«Granada, ilustrísima ciudad de **nuestra** España, es **mi** patria; **mis** padres, cuyos nombres **callo** por no ser propósito decirlos, son los dos más antiguos y nobles solares que hay en los montañas de Burgos...» (La Gorduña de Sevilla, 51)

Կրկին շնորհակալություն հայտնեց Ռուֆինան ազնվաբարո (ազնիվ) առաջարկության համար և երբ տեսավ, որ ժամանակն է գործի անցնելու, նստեցսիրահարված ժլատի կողքին և ասաց այսպես. «Գրանադան մեր Իսպանիայի ամենահայտնի քաղաքն է, այն իմ հայրենիքն է, իմ ծնողները, ում անունը ես չեմ տալիս, ներկայացնում են երկու ամենաազնվական և հին ցեղերը, որոնց կարելի է հանդիպել Բուրգոսի լեռներում...»

Այն վեպերում, որոնք ներկայացնում են պիկարոյական ժանրի անկումը (դեկադենսը), ինչպես օրինակ Ա. Կաստիլիո-ի-Սոլորսանոյի «Սևիլյանկաքիսը» վեպում, պատումը տարվում է երրորդ դեմքով, որն արտահայտված է համապատասխան բայական ձևերով՝ (**agradeció**– շնորհակալություն հայտնեց, **vio** - տեսավ, **dijo** - ասաց) և դերանվանական վերաբերյալի (referent) բացակայությամբ, որոնք ներակայորեն մատնանշում են պատմողի մասնակցությունը գործողությանը, իսկ վեպի գլխավոր հերոսի խոսքը ներկայացված է առաջին դեմքով դրված **callo** (անունը չեմ տալիս, լռում եմ) բայով և առաջին դեմքով դրված ստացական դերանուններով՝ **nuestra** España (մեր Իսպանիան), **mi** patria (իմ հայրենիքը), **mis** padres (իմ ծնողները):

Այսպիսով, կարելի է ասել, որ իսպանական պիկարոյական վեպերի տեքստերը բաղկացած են երկու պատմողական կառույցներից. դասական պիկարեսկայում իրական հեղինակը ներկայացված է պատմողի կողմից, որը նաև գլխավոր հերոսն է, և անկումային պիկարեսկայում, որտեղ պատումը տարվում է երրորդ դեմքով, առկա է մի պատմիչ, որն անուղղակիորեն է հարաբերակցվում իրական հեղինակի հետ և, որը անմիջական մասնակցություն չունենալով գործողություններին, այնուամենայնիվ արտահայտում է իր գնահատողական վերաբերմունքը դեպքերի և իրադարձությունների նկատմամբ: Ուստի, սուբյեկտիվ հեղինակային դեմք = օբյեկտիվ կերպարի դեմքի ավասարությունը, որը հատկանշական է դասական

խաբեբայապատումին, խախտված է: Սակայն ոչ առաջին, ոչ էլ երկրորդ դեպքում «տեքստի ոչ մի վերլուծություն չի կարող մատնանշել անմիջական կապը իրական հեղինակի և հեղինակի կերպարի միջև» (Падучева, 1996; 215): Իրական հեղինակը, գտնվելով տեքստի տարածական շրջանակներից դուրս, դրսևորվում է ներակայորեն:

Հարկ է նշել, որ գեղարվեստական տեքստի հասցեատիրոջ կարգավիճակը ևս դժվար է հստակեցնել: Այստեղ ևս գոյություն ունի երկու հասցեատեր՝ տեքստի իրական. Ճշմարիտ ընթերցող, որը կարող է լինել մեզանից յուրաքանչյուրը և, որը կարող է ունենալ տեքստի իր յուրովի ընթռնումն ու մեկնաբանումը, և հասցեատեր, որը գոյություն ունի տեքստի ներսում: Օրինակ, իսպանական խաբեբայապատումներում, որպես կանոն, առկա է կոնկրետ հասցեատեր: Նրա ներկայությունը դուրս է բերվում տեքստային կառույցի մեջ առկա ծանոթագրությունների և նախաբանների միջոցով, ընդ որում նախաբանների կառույցը կարող է լինել տարբեր: Պիկարոյական վեպում առանձնացնում են նախաբանի մի մասից կազմված կրկնակի և եռակի համակարգներ (Laurenti, 1970; 5):

Օրինակ, «Տորմեսի Լասարիլիոյի կյանքը» վեպի նախաբանը բաղկացած է մի մասից, որտեղ անհայտ կամ անանուն հեղինակը կիրառում է պիկարեսկայի (խաբեբայապատումի) համար օրինակելի դարձած դիմելաձևը «**Vuestra Merced**» (**ձերդ մեծություն**):

Suplico a **Vuestra Merced** reciba el pobre servicio de mano de quien lo hiciera más rico, si su poder y deseo se conformaran («Lazarillo de Tormes», «El prólogo», 10)

– Խնդրում եմ **ձերդ մեծությանը**, ընդունել այս համեստ աշխատանքը մի մարդուց, որն, անշուշտ, կցանկանար ավելի կատարյալ դարձնել այն, եթե նրա ցանկություններն ու կարողությունները համընկնեին:

Ի դեպ, «Ձերդ մեծության» անձը այդպես էլ մնում է անհայտ:

Իսկ Լոպես դե Ուբեդայի «Խորամանկ Խուստինա» վեպում, առկա են երկու նախաբան՝ «Al lector» և «La epístola a don Rodrigo Calderó Sandelín» («Ընթերցողին» և «Նամակ Ռոդրիգո Կալդերոն Սանդելինին»), ինչպես նաև «Սևիլյան կզաքիս» վեպը, որը բաղկացած է երկակի նախաբանից:

Եռակի նախաբան ի հայտ է գալիս «Կաղ սատանան» վեպում՝ «**Al Ecto. Sr. D. Rodrigo de Sandoval, de Silva, de Mendoza y de la Cerda, Príncipe de Mélito, Duque de Pastrana, de Estremera y Francavilla, etc.**»; «**Prólogo a los moqueteros de la Comedia de Madrid**», «**Carta de**

recomendación al candido o moreno lector» («Պայծառափայլություն Դոն Ռոդրիգո դե Սանդովալ, դե Սիլվա, դե Մենդոսա և դե լա Սերդա, իշխան դե Մելիտո, դուքս դե Պաստրանա, դե Էստրեմերա ի Ֆռանկավիլլա և այլն»։ «Նախաբան- դիմում Մադրիդի Կատակերգություն թատրոնի սուլորդներին (անբաններին)» և «Նամակ- երաշխավորագիր անկողմնակալ/անաչառ և հաճելի ընթերցողին»)։

Նախաբանի առկայությունը, մի կողմից, բացատրվում է ավանդույթով, որը սկիզբ է առել հին հունական ստեղծագործություններից, իսկ մյուս կողմից՝ տպագրման հանձնելու համար բարձրաստիճան մարդու բարեխոսության կամ երաշխավորության անհրաժեշտությամբ։ Պետք է ասել, որ XVI-XVII դդ. տպագրվող գրականությունը ենթարկվում էր եկեղեցիական խիստ գրաքննության, և եթե հեղինակը (գրողը) ուներ բարձրաստիճան հովանավոր ու վայելում էր նրա վստահությունը և բարեհաճությունը, ապա այդ ստեղծագործությունը անպայման տպագրվում էր։ Այդ է պատճառը, որ նախաբաններում ներկայացված են բարձրաստիճան և ազնվական անձանց անուններ, որոնք էլ ներկայանում են որպես իրական հասցեատերեր՝ ներառված տեքստի ներսում։

Խոսեֆ Լաուրենտինսկանանձնացրել է նաև ներկայացուցչական (պրեզենտատիվ) գերզգայական (բարձր էմոցիոնալ, աֆֆեկտիվ) տիպի նախաբաններ (Laurenti, 1970; 6)։ Ընդ որում, ներկայացուցչական նախաբանները ունեն ծանոթացման, իրազեկման գործառույթ, իսկ գերզգայական տիպի նախաբանները՝ ուղերձի գործառույթ։

Ուղերձ- նախաբանները ուղված են անանուն (անհայտ) ընթերցողին և միտված են ներգործելու, ազդելու նրա վրա։ Դրանք հասցեատիրոջից պատասխան չեն պահանջում, այլ փորձում են ճնշել նրա բացասական զգացմունքները (էմոցիաները), սկզբնական թշնամանքը՝ «**Al vulgo**» - «Պլեբսին (հասարակ մարդուն)», «**Prólogo a los moqueteros de la Comedia de Madrid**» - «Ուղերձ Մադրիդի Կատակերգության թատրոնի սուլորդներին»), կամ էլ հասցեատիրոջ մոտ առաջացնել դրական զգացմունքներ՝ «**Carta derecomendación al candido o moreno lector**» - «Երաշխավորող նամականկողմնակալ և կողմնապահ ընթերցողին», «**Al lector**» «Ընթերցողին»)։

Lector amigo: yo he escrito este discurso, que no me atrevido a llamarle libro, pasándome de la jineta de los consonantes a la brida de la prosa... (El diablo Cojuelo, 67).

- Ընթերցող-ընկեր, ես գրել եմ այս պատմվածքը, որը չեմ համարձակվում գիրք անվանել, անցնելով չափածոյի չոր թամբից արձակի փափուկ նստարանին...

Lector amigo (ընթերցող-ընկեր) դիմելաձևն արդեն իսկ ընդգծում է հեղինակի ընկերական, բարյացակամ վերաբերմունքը ընթերցողի նկատմամբ, որն էլ վերջինիս տրամադրում է ընթերցանության ընթացքում համակվելիղական լիցքերով ու զգացմունքներով:

Անանուն ընթերցողը ցանկացած հնարավոր ընթերցողի նախատիպն է: Նա անմիջականորեն ներառված չէ տեքստային տարածության մեջ, և միայն «Vuestra Merced»(Ձերդ մեծություն) տեքստային դիմելաձևի միջոցով է ի հայտ գալիս նրա ներկայությունը, քանի որպատմողի գործաբանական (պրագմատիկ) բոլոր ցուցումները բացահայտորեն ուղղված են նրան:

Եվ վերջապես, այն գաղափարներն ու մտքերը, որոնք ներկայացված են պատմողական գրական տեքստերում հարաբերակցվում են հեղինակի մտքերի ու գաղափարների հետ և կազմում են արտակա ու ներակա տեղեկատվությունների մի համալիր, որոնց հենքի վրա կառուցվում է տեքստի բովանդակությունը: Այդ տեղեկատվությունը, ձևավորվելով հեղինակի գիտակցության մեջ, միասնական մակրոհասկացությանի տեսքով իրենց մարմնավորումն են ստանում տեքստի ամբողջական կառույցում:


Այսպես օրինակ, խաբեբայապատման ժանրի հիմնական մակրոհասկացություններ են »խաբեբայություն« կամ «կյանք-խաղ», որը բարոկկո ժամանակաշրջանի աշխարհայացքի գերիշխող թեման է: «Խաղ» հասկացությունը բաժանվում է երկու ավելի փոքր կամ մանր գաղափարական միավորների՝ աշխարհիկ և ծիսական-կրոնական խաղ: Աշխարհիկ «խաղը» ներկայացված է բարոկկո դարաշրջանի Իսպանիայում հասարակության մեջ իրենց նշանակությամբ կարևորվող երեք հիմնական խաղային հասկացություններով՝ «ասպետական մրցախաղ», որը առավել հեղինակավոր և հարգված խաղ էր, «գնդակով խաղ», որը կենցաղային մակարդակի խաղեր էին «թղթախաղ/խաղաքարտ», որը հասարակությունից դուրս մղվածների, մերժվածների արատավոր զբաղմունքն էր:

«Ծիսական- կրոնական խաղը»՝ գտնվելով գրեթե բոլոր պիկկարոյական վեպերի գաղափարական հիմքում, բաժանվում է այնպիսի միկրոհասկացությունների, ինչպիսիք են «դիմակահանդես»(Carnestolendas), «պահք»(cuaresma),

«սով»(hambre),«որկրամոլություն»։ Իսկ սոցիալական խավերը, որոնք ներկայացված են պիկկարոյական վեպում ծառաներ են, ազնվականներ, եկեղեցականներ, բանաստեղծներ, բեմադիրչներ, պաշտոնյաներ, և իհարկե,հասարակությունից դուրս վտարվածներ՝խաբեբաներ, մուրացկաններ, սրիկաներ։

Այս բոլոր սոցիալական դերերը կապված են մարգինալ շերտերի հետ, քանի որ խաբեբան (պիկարոն) փորձում է իրենհարմարեցնել բոլոր այդ դերերը՝մնալով խաբեբա, իսկ շատ ազնվականներ, պաշտոնյաներ և այլն,պարզվում է, որ իրականում մուրացկաններ և սրիկաներ են։

Խաբեբայապատումների տեքստային միավորների վերլուծության հիման վրա մենք փորձել ենք գծապատկերի միջոցով դուրս բերել գեղարվեստական այս յուրօրինակժանրի հիմնական հասկացույթները, ընդ որում երկկողմանի սլաքերը մատնանշում են դրանց փոխադարձ կապը, իսկ շրջանաձև սլաքը ցույց է տալիս, որ խաբեբան, փոխելով իր սոցիալական դերերը, միևնույն էվերադառնում է իր սկզբնական կարգավիճակին։



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ayala F. El Lazarillo: nuevo examen de algunos aspectos. - Madrid, 1971.- 98 p.
2. Ayala F. Reflexiones sobre la estructura narrativa. - Madrid: Taurus, 1970.78 p.
3. Bataillón M . Pícaros y picaresca. La picara Justina. - Salamanca: Taurus, 1969. - 252 p.
4. Caso González J. La genesis del Lazarillo de Tormes. - En el libro: Historia y estructura de la obra literaria. Madrid, 1971. - P. 175-196.
5. Laurenti J.A. Estudios sobre la novela picaresca española. -Madrid, 1970.-143 p.
6. Lázaro Carreter F. "Lazarillo de Tormes" en la picaresca. - Barcelona, 1972.-232 p.
7. Márquez Villanueva F. Sebastian de Horosco y el "Lazarillo de Tormes". - 1957. - P. 253-339.
8. Molho M . Semántica y poética (Góngora, Quevedo).- Barcelona: Editorial Crítica, 1978.-217 p.
9. Guzman de Alfarache - Alemán M. Guzman de Alfarache. - Barcelona: Planeta, 1999.-989 p.
10. Castillo y Solórzano A. La gorduña de Sevilla. - La Habana, 1964. - 275 p.
11. La picara Justina. - López Úbeda F. La picara Justina. - La Habana, 1977. - 445 p.
12. Lazarillo de Tormes. - Madrid: Cátedra, 1999. - 330 p.
13. El bucón - Quevedo F.de. El bucón (Historia de la vida del buscón, llamado don Pablos. - Madrid: Clásicos Castilla, 1990. - 257 p.
14. El Cojuelo - Vélez de Guevara L. El Diablo Cojuelo. - Madrid: Clásicos Castilla, 1988.-245 p.
15. Carole Tisset. Analyse linguistique de la narration. Paris SEDES/HER 2000. 10-15p.
16. Бабенко Л.Г., Васильев И.Е., Казарин Ю.В. Лингвистический анализ художественного текста. - Екатеринбург: 2000. - 534 с.
17. Падучева Е.В. Семантические исследования (Семантика времени и вида в русском языке. Семантика нарратива). - М.: Школа «Языки русской культуры». 1996.-464 с.

МАРГАРИТА БАГРАМЯН, ДОНАРА КАЗАРЯН -КОМПЛЕКСНЫЙ АНАЛИЗ ТЕКСТА ИСПАНСКИХ ПЛУТОВСКИХ РОМАНОВ

В данной статье представлены свойственная нарративу связь между адресантом (автором) и адресатом (читателем); причем фигура адресанта текста распадается на две составляющие: автора-реального человека за рамками текста и говорящего- повествователя внутри текста. Делается попытка дифференцировать статус реального человека, писателя и повествователя. Раскрывается тождество субъективного авторского лица с объективным персонажным лицом, которое характерно классическим плутовским романам и разрыв или нарушение это тождества в пикареске периода его декаденса. Также представлен анализ основных понятийных микроконцепций пикарески характерных мировоззрению барокко.

MARGARITA BAGHRAMYAN, DONARA GHAZARYAN-COMPREHENSIVE ANALYSIS OF SPANISH PICARESQUE NOVELS

The present article leans upon the relation between the addressee (the author) and the recipient (the reader); the addressee of the narrative being divided into two parts: the author-real man beyond the limits of the texts and the speaker-narrator within the text. An attempt is made to differentiate the real person, the writer and the narrator. Congruity of subjective author and objective character typical of classical picaresque novels is revealed, as well as the disruption or deviation from this congruity in picaresque novel in the period of its decadence. Also, an analysis of the main notional microconcepts of picaresque novels typical of the ideology of Baroque period is introduced.

**ԴԻՊԿԱԾԱՅԻՆ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԵՎ ԲԱՐԴ ԲԱՌԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԱԼԵՂՈՒ
ԼՐԱԳՐԱՆՅՈՒԹԵՐՈՒՄ**

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հիմնաբառեր՝ ածանցավոր բառ, բարդ բառային միավոր, դիպվածային բառ, իմաստակառուցվածքային առանձնահատկություններ, լրագրային հոդված

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան անգլալեզու լրագրային հոդվածներում կիրառված դիպվածային ածանցավոր և բարդ բառային միավորների իմաստակառուցվածքային յուրահատկությունների վերլուծությունն է: Դիպվածային բառերը երևան են գալիս թե՛ բանավոր խոսքում, թե՛ գեղարվեստական գրականության մեջ, թե՛ լրագրային ժանրերում: Լրագրային ժանրին բնորոշ են մի շարք լեզվաոճական առանձնահատկություններ, որոնց շարքին են դասվում նաև մեր խնդրո առարկա դիպվածային բառային միավորները:

Լրագրողները լուրեր հաղորդելիս անշեղորեն հետևում են լուրերի ձևավորման լեզվական միջոցներին և հնարներին, միաժամանակ, տարբեր թերթեր և ամսագրեր միևնույն իրադարձությունը մեկնաբանում են տարբեր ձևերով: Իրադարձությունների մեկնաբանման տարբերությունները կապված են թե՛ քաղաքական տարբեր դիրքորոշումների, թե՛ լրագրողների լեզվակրթական մակարդակի հետ: Իսկ լավ հրապարակախոսից «պահանջվում է երեք կարևոր բան՝ նյութի խոր իմացություն, խնդրի հրատապություն ու կարևորություն» (Ստեփանյան 2013:94):

Հարափոփոխ արտալեզվական աշխարհը նկարագրելիս՝ բազում լեզվաոճական հնարների կողքին լրագրողը հեղինակում է նոր բառեր, բառերի անհամատեղելի կապակցություններ, լրագրահոդվածների խորագրերի յուրօրինակ ձևակերպումներ՝ այդպիսով ծնունդ տալով դիպվածային բառերին: Դիպվածային բառերի գործածումը խոսքաշարում հաղորդվող նյութի լրագրող-հեղինակին հնարավորություն է ընձեռում ամբողջացնել մտքի լեզվական ձևավորումը, ընդգծել անհատական ոճը և

առանձնանալ պատկերաստեղծ միջոցների լայն գործածությամբ, իսկ ընթերցողներին՝ հաղորդակցումն ընդունողներին, ամբողջական պատկերացում կազմել խոսողի միտման և լրագրանյութի խոսքային դիմանկարի մասին:

Ն. Մկրտչյանն իր «*Քառերի կենսագրությունից*» գրքում արդարացիորեն գրում է. «Եվ այսպես ամեն դար, ամեն տարի, ամեն ամիս (թերևս նաև ամեն օր) իմաստավորվում են բառերը, ամեն պահ բանաստեղծների, գրողների, գիտնականների, լրագրողների և ժողովրդի լայն զանգվածների խոսքում հանդես են գալիս նոր արտահայտություններ, նոր ոճեր, նոր դարձվածքներ, նոր իմաստներ՝ բառերի նոր երանգներ, այսինքն՝ ծնվում են ու մեռնում բառերը, և լեզուն փոփոխվում է աննկատ մեր աչքերի առջև» (Մկրտչյան 2004:289):

Իր հերթին, Լ. Աւետիսեանը վկայում է, որ «բառը չի ստեղծում բառարմատների զուտ ֆիզիկական կցումով. բառաստեղծումը ենթադրում է արուեստագետի հայեացք, իմաստասերի իմացականութիւն, գիտնականի վերլուծող և համադրող միտք» (Աւետիսեան 2015:91):

Ռ. Բաշիելլին իր «*Our worries about 'nonce': Something more than a terminological problem*» հոդվածում պնդում է, որ «դիպլոմատիկ բառը մեկանգամյա գործածության բառ դիտարկելը կապված է տվյալ բառի ծագման հետ <...> իրականում դրանք մեկանգամյա գործածության բառեր չեն <...> «դիպլոմատիկ» եզրույթը պետք է կիրառել ոչ միայն բառային միավորների, այլև դիպլոմատիկ բառակապակցությունների և բառիմաստային փոփոխությունների համար» (Bachielli 2010:83): Մենք համամիտ ենք Ռ. Բաշիելլիի հետ, որն առաջադրում է «դիպլոմատիկ բառեր» եզրույթը փոխարինել «*համատեքստային բառեր*» (*contextuals or contextual concretations*) եզրույթով, քանի որ դրանք ի հայտ են գալիս համատեքստի պահանջով (Bachielli 2010):

Դիպլոմատիկ բառային միավորների ուսումնասիրության մեջ մյուս կարևորագույն խնդիրը դրանց ներակայած իմաստի վերհանումն է: Այս գործընթացն առավել դժուրին են դարձնում մի շարք գործոններ՝ «համատեքստային տեղեկույթը, ձևաբանական կառուցվածքի թափանցիկությունը, բառակազմիչ ձևույթների մասին պատկերացում կազմելը և բաղադրիչների միջև իմաստային հարաբերությունների մասին պատկերացում կազմելը» (Schmid 2008:13):

Դիպլոմատիկ ածանցավոր բառերը կազմվում են բաղադրիչների՝ երկրորդական (նախածանց, վերջածանց) և հիմնական (արմատ) բառակազմական ձևույթների անմիջական միացումով: Սույն հոդվածում

քննության կառնենք *anti-*, *i-*, *out-* նախածանցներով և *-ing* վերջածանցով կազմված դիպվածային ածանցավոր բառերը:

Ստորև քննենք յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Անգլերեն բառարաններում **anti-** նախածանցն ունի հետևյալ սահմանումները՝ 1. *opposed to; against; 1.1 preventing; 1.2 relieving; 1.3. the opposite of; 1.4 acting as a rival; 1.5 unlike the conventional form;* 2. *the antiparticle of a specified particle.* Նշված նախածանցը ծագում է հունարեն *anti* (*against*) բառից (<http://www.oxforddictionaries.com> 10.03.2018-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային ածականներ՝ գոյականների հիմքից (**anti-vaccine**), գոյականների՝ գոյականների հիմքից (**anti-vaccination**):

Օրինակ 1. *Deadly choices: How the anti-vaccine movement threatens us all – review (headline) [...] My review of the exposé that presents a reasoned and carefully documented argument about paranoid claims spouted by shrill "anti-vaxxers" – a powerful citizen misinformation activist movement [...] There was a time when vaccines were recognised as the life-saving medical advances that they are, but somewhere along the way, a portion of the public became side-tracked by the paranoia spouted by the powerful citizen misinformation activist movement, the anti-vaxxers, and stopped vaccinating their children* (The Guardian 11 Oct 2011).

Այս օրինակում **anti-vaccine** գոյականը գործածվել է ածականաբար՝ *movement* բառի զուգորդությամբ: Համատեքստում այն իրացնում է «պայտվաստումներին դեմ/հակապայտվաստումային» բառիմաստային տարբերակը³⁰: Գործածելով *anti-vaccine* բառը հողվածի վերնագրում՝ լրագրող-հեղինակն իր համար որպես հիմնաբառ է վերցնում հենց այս բառը, որի շուրջ էլ կառուցվում է ողջ լրագրանյութը: Նկատենք, որ համատեքստում առկա է նաև **anti-vaxxer** («պայտվաստմանն ընդդիմացող անձ») գոյականը: Վերջինիս իմաստի վերհանմանը

³⁰ Սույն հողվածում քննության առնված բառային միավորների իրացրած բառիմաստային տարբերակները մեծամասամբ վերհանել ենք լրագրանյութերից. լրագրային հողվածներում ոչ միայն գործածվել են և/կամ վերստեղծվել դիպվածային բառերը, այլև լրագրանյութերում տրվում է տվյալ բառային միավորների սահմանումը: Ուսումնասիրված բառային միավորների իրացրած բառիմաստները վերհանել ենք նաև *Urban Dictionary* և *Cambridge Dictionaries Online Blog* (<http://www.dictionaryblog.cambridge.org>) անցանց աղբյուրների տրամադրած տվյալների հիման վրա:

նպաստում է համատեքստի՝ **a powerful citizen misinformation activist movement** և **stopped vaccinating their children** հատվածները:

Օրինակ 2. **Anti-vaxxers: so friendless that free speech is enough to defeat them** (headline) [...] **Anti-vaccination** cranks like Sherry Tenpenny share plenty in common with climate change deniers (The Guardian 08 Jan 2015).

Տվյալ օրինակում **anti-** նախածանցով կազմված **anti-vaccination** բառը գոյականական կազմություն է, համատեքստում այն իրացնում է «պատրվաստումների հետ պայքարը/ընդդիմանալը» բառիմաստային տարբերակը: Պատվաստումների դեմ պայքարը նոր իրակություն չէ, այն առկա է եղել վաղնջական ժամանակներից, սակայն նշված երևույթի առկայացումը լեզվում ի հայտ է գալիս մեր օրերում: Տվյալ լրագրանյութում ևս գործածվել է *anti-vaxxer* բառը, որը լրագրող-հեղինակն իր համար որպես հիմնաբառ է վերցնում՝ գործածելով վերջինս հոդվածի վերնագրում:

Պետք է նշել, որ *anti-vaxxer* գոյականը սերում է *anti-vax* ածականից: Ընդ որում, *anti-vaxxer* գոյականը կազմվել է 2011թ.-ին, իսկ *anti-vax* ածականը՝ ավելի վաղ՝ 1990-ական թթ.-ին (<http://www.oxforddictionaries.com> 10.03.2018-ի դրությամբ):

Վերը նշված *anti-vaccine*, *anti-vaccination* և *anti-vaxxer* բառերում *anti-* նախածանցը դրսևորում է իր բառարանային հիմնանշանակությունը (*opposed to; against*):

Այսպիսով, կարելի է փաստել, որ **anti-vax**, **anti-vaxxer**, **anti-vaccine**, **anti-vaccination** բառերը բառակազմական փունջ են կազմում, որտեղ *anti-vaccine* և *anti-vaccination* դիպվածային բառերը կազմվել են նախածանցման եղանակով (*anti-+vaccine; anti-+vaccination*), իսկ անգլերեն բառարաններում արդեն զետեղված *anti-vaxxer* բառային միավորը՝ վերջածանցման (**anti-vax+-er**):

Անգլերեն բառարաններում **out-** նախածանցն ունի հետևյալ սահմանումները՝ 1. *to the point of surpassing or exceeding*; 2. *external; separate; from outside*; 3. *away from; outward*. Նշված նախածանցն ունի գերմանական ծագում. այն սերում է հին անգլերենի *ūt* մակբայից (<http://www.oxforddictionaries.com> 10.03.2018-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային բայեր՝ գոյականների հիմքից (**outfootball**):

Օրինակ 3. *Saturday football clockwatch – as it happened (headline) [...] Being **outfootballed** by a very similar team to themselves [...]* (The Guardian 10 March 2012).

Նշված օրինակում **out-** նախածանցով կազմված բառը բայական կազմություն է, համատեքստում այն իրացնում է «*ֆուտբոլային խաղում մեկ թիմի գերազանց խաղ ցուցադրելը և ահռելի առավելությունը մրցակցի նկատմամբ*» բառիմաստային տարբերակը, իսկ *out-* նախածանցը դրսևորում է իր բառարանային հիմնանշանակությունը (*to the point of surpassing or exceeding*):

Նշենք նաև, որ բերված օրինակում **outfootball** բառը կազմվել է ոչ միայն նախածանցման, այլև փոխակարգման եղանակով. դիպվածային *outfootball* բառում *football* գոյականը վերածվել է բայի (*to football*):

Անգլերեն բառարաններում **i-** նախածանցը դեռևս բացակայում է, սակայն դրանով նորանոր բառեր են կազմվում ժամանակակից անգլերենում՝ նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված: Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ գոյականների հիմքից (**iDanger, iFinger**):

Օրինակ 4. **iFinger** Steve Jobs, says former Apple finance chief after paying \$3.5m to settle options charges (The Guardian 25 April 2007).

Վերը նշված երկրորդ օրինակում **iFinger** բառը նշանակում է՝ «*ձեռքի հեռախոսի աշխատանքները կառավարող «մատ», որն Այֆոն ունեցողը պետք է միշտ մաքուր պահի*»: Նշենք, որ տվյալ բառիմաստը վերհանել ենք *Urban Dictionary* առցանց բառարանից: Նշված բառարանում *iFinger* բառն ունի հետևյալ սահմանումը՝ *It's the finger(s) you purposely keep clean when you eat something messy so you could operate your touchscreen smartphone/tablet/GPS without making the screen look like your plate* (<http://www.urbandictionary.com> 10.03.2018-ի դրությամբ). Իսկ մեր առանձնացրած երրորդ օրինակում *iFinger* բառը գործածվել է փոխաբերական իմաստով՝ հանրահայտ Սթիվ Ջոբսի մասին հրապարակված հոդվածի վերնագրում:

Օրինակ 5. **iDanger!** Viewing 3D on your smartphone harms your sight and gives you headaches (The Daily Mail 25 July 2011).

Բերված օրինակում **iDanger** բառն իրացնում է «*բջջային հեռախոսի ճառագայթման վնասակար ազդեցությունը մարդու առողջության վրա*» բառիմաստային տարբերակը:

Նկատենք, որ *iDanger* և *iFinger* բառերը կազմվել են *iPhone* բառի համարանույթյամբ:

Ինչ վերաբերում է դիպվածային վերջածանցավոր բառերին, ապա սույն հոդվածում առանձնացրել ենք *-ing* վերջածանցով կազմված դիպվածային վերջածանցավոր բառեր:

Անգլերեն բառարաններում **-ing** վերջածանցն ունի հետևյալ սահմանումները՝ 1. *denoting a verbal action, an instance of this, or its result*; 2. *denoting material used for or associated with a process etc.* (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ). Նշված վերջածանցն ունի գերմանական ծագում և սերում է հին անգլերենի *-ung* և *-ing* վերջածանցներից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային բայանուն գոյականներ՝ պարզ գոյականների հիմքից (**owling, ghosting**), բարդ գոյականների հիմքից (**highlining**) և բայերի հիմքից (**creeping**):

Օրինակ 6. *Somewhere in this mix came **owling** – for people more comfortable with squatting than lying* (The Guardian 27 Nov 2012).

Այս օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «*պազած վիճակում արված ինքնանկարի հրապարակում համացանցում*» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 7. *The good news here is that surviving family members are ultimately not responsible for charges (or for legitimate debts of the dead). But **ghosting** can still cause plenty of angst* (AARP Bulletin March 2013).

Վերը նշված օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «*մահացածի անձնական փվյալների գողությունը համացանցում*» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 8. *The group travel the world to take part in the extreme sport of **highlining**, in which people walk across wires fixed high above the ground or water* (The Daily Mail 25 March 2013).

Տվյալ օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «*(էքստրիմ սպորտաձև) բարձրաբերձ ժայռերի միջով բարակ պարանի վրայով քայլելը/անցնելը*» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 9. *A massive 75 percent of us keep our exes as ‘friends’, allowing us to rifle through photographs and wall posts and friend lists at will. Today’s youth call this ‘**creeping**’* (Grazia 03 March 2014).

Այս օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «մեկ ուրիշի առցանց անձնական տվյալների գաղտնի դիտում» բառիմաստային տարբերակը:

Ինչ վերաբերում է դիպվածային բարդ բառային միավորներին, ապա ներկա ուսումնասիրության մեջ քննության են առնվում **ring rain**, **burn book** և **bread-sinner** բառային միավորները.

Օրինակ 10. *'The main effect of ring rain is that it acts to quench the ionosphere of Saturn,' Mr. O'Donoghue said* (The New York Times 16 April 2013).

Ring rain բառային միավորը երկբաղադրիչ չպատճառաբանված հարադրություն է և բառիմաստը վերհանվում է լրագրանյութի համալիր քննությունից: Այն նշանակում է՝ «Սափուրն մոլորակի մակերևույթին հոսող ջուր»:

Նշված բառային միավորում արձանագրում ենք բաղաձայնայն ռճական հնարը, որը դրսևորվում է «r» բաղաձայնի կրկնությամբ:

Օրինակ 11. **BURN BOOK** *Last seen in Mean Girls, now someone's penned one in Surl's name. Now that's mean, girls* (Grazia 17 Sept 2012).

Burn book բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *burn* առաջնաբաղադրիչը լրացնում է *book* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «այլ մարդկանց մասին քննադատություններ պարունակող օրագիր»: Այս բարդության բաղադրիչ մասերը հանդես են գալիս իրենց երկրորդական նշանակություններով. *book* – (3) *a set of sheets of paper that are fastened together inside a cover and used for writing in*; *burn* – (12) *to put information onto a CD* (OALD 2006:167). Նկատենք նաև, որ նորակազմությունը ներկայացված է գլխատառերով՝ տվյալ բառի վրա ընթերցողների ուշադրությունը գրավելու նպատակով: Այնուհանդերձ, բերված օրինակը չի բնութագրում *burn book* բառը, այլ հոդվածի ընթերցումից հետո է միայն բառիմաստը դուրս բերվում:

Վերը նշված բառային միավորում արձանագրում ենք նաև բաղաձայնայն ռճական հնարը, որը դրսևորվում է «b» բաղաձայնի կրկնությամբ:

Օրինակ 12. *Why we need to invent new words* (headline) [...] **Bread-sinner** *noun* *A man experiencing guilt and shame because he stays home to raise the kids while his wife provides economically: We won't get Bill to come to Vegas with us because he's become a bread-sinner* (The Guardian 11 March 2013).

Breadwinner բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական կազմություն է և նշանակում է՝ «*տղամարդ, որն ամուսինի և մեղքի զգացում ունի, քանի որ կինն է ֆինանսապես ապահովում ընտանիքը*»: Հարկ է փաստել, որ նշված բառային միավորը կազմվել է *breadwinner* բառի համաբանությամբ:

Քննության առնված բարդ դիպվածային բառերը կազմում են տարբեր բառիմաստային և/կամ թեմատիկ խմբեր.

1. **Բժշկություն, առողջություն և մարզաձևեր (Medicine, Health, and Sports)** – anti-vaccine, anti-vaccination, highlining, iDanger, outfootball:
2. **Գիտություն, տեխնոլոգիա և համակարգչի գործածություն (Science, Technology, and Computing)** – iFinger, owling, ghosting, creeping, ring rain:
3. **Մարդիկ և հասարակություն (People and Society)** – burn book, breadsinner:

Ուսումնասիրված բառարանային և կորպուսային շտեմարանների լեզվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ քննության առնված ածանցավոր և բարդ բառային միավորները որոշ դեպքերում ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն՝ առցանց հրապարակումների շնորհիվ, որոշ դեպքերում էլ գրանցվում են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում:

Քննության առնված **anti-vaccine, anti-vaccination, ghosting, burn book** բառային միավորները զետեղվել են անգլերեն բառարաններում³¹: Անգլերեն բառարաններում չեն ընդգրկվել **outfootball, iDanger, iFinger, ring rain, breadsinner** բառային միավորները:

Creeping բառն ընդգրկվել է *Merriam-Webster Dictionary Online* բառարանում: Այստեղ *creeping* բառը ածական է (այն նշանակում է՝ *developing or advancing by slow imperceptible degrees*) (<http://www.merriam-webster.com> 22.09.2015-ի դրությամբ), իսկ մեր առանձնացրած օրինակում այն գոյական է: Հետևապես, արձանագրում ենք բացարձակ համանունություն, քանի որ երկուսն էլ նույնագիր և նույնահունչ բառեր են: Նշվածը նաև իմաստային տեղաշարժ է, քանի որ *creeping* բառը ձեռք է բերել միանգամայն նոր նշանակություն:

³¹<https://www.merriam-webster.com> 10.03.2018-ի դրությամբ;
<https://en.oxforddictionaries.com>; 10.03.2018-ի դրությամբ;
<https://www.collinsdictionary.com>; 10.03.2018-ի դրությամբ.


Ghosting բառը զետեղվել է *Merriam-Webster Dictionary Online* բառարանում: Այստեղ այն ունի հետևյալ սահմանումը՝ *a faint double image on a television screen*. Մինչդեռ առանձնացված համատեքստում այն իրացնում է «մահացածի անձնական տվյալների գողությունը համացանցում» բառիմաստային տարբերակը: Կարելի է փաստել, որ տվյալ պարագայում արձանագրում ենք բացարձակ համանունություն բառարանում առկա և սույն աշխատանքում առանձնացված բառերի միջև, քանի որ երկուսն էլ նույնագիր և նույնահունչ բառեր են:

Highlining բառն առկա է *Oxford Dictionaries Online* բառարանում՝ *high-lining* գծիկով գրությամբ: Պետք է նշել, որ *Oxford Dictionaries Online* բառարանում զետեղված *high-lining* բառը վերաբերում է *փայտամթերմանը*, մինչդեռ մեր առանձնացրած համատեքստում՝ *էքսպորիմ սպորտաձևին*:

Owling բառն առկա է *Oxford Dictionaries Online* բառարանում: Այստեղ այն ունի հետևյալ սահմանումները՝ *1. the action of imitating the hooting of an owl, especially to discover the whereabouts of birds when hunting them; 2. the practice of smuggling wool or sheep out of England; the trade of an owler; 3. the activity of observing owls in their natural environment, especially at night*. Իսկ մեր առանձնացրած օրինակում *owling* բառն իրացնում է «պպզած վիճակում արված ինքնանկարի հրապարակում համացանցում» բառիմաստային տարբերակը: Հետևապես, արձանագրում ենք կատարյալ համանունություն և իմաստային տեղաշարժ:

Կորպուսային ուսումնասիրության մեթոդով վեր ենք հանել քննության առնված դիպվածային ածանցավոր և բարդ բառային միավորների հաճախականության վիճակագրական տվյալները՝ ըստ ժամանակակից անգլերենի **COCA (Corpus of Contemporary American English)** և **GloWbE (Corpus of Global Web-based English)** կորպուսների: Ասվածը ներկայացնենք Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Դիպվածային ածանցավոր և բարդ բառային միավորների հաճախականությունը COCA և GloWbE կորպուսներում



Ինչպես երևում է Գծապատկեր 1-ում՝ COCA և GloWbE կորպուսներում ամենամեծ հաճախականությունն ունի **anti-vaccine** բառային միավորը: Իսկ **anti-vaccination** բառային միավորը ներկայացված է 24 համատեքստում, **owling** բառային միավորը՝ 8 համատեքստում, **ghosting** բառային միավորը՝ 105 համատեքստում, **burn book** բառային միավորը՝ 1 համատեքստում (<http://corpus.byu.edu/coca/> 10.03.2018-ի դրությամբ; <http://corpus.byu.edu/glowbe/> 10.03.2018-ի դրությամբ):

Տվյալ կորպուսներում բացակայում են **outfootball**, **iDanger**, **iFinger**, **highlining**, **ring rain** և **breedsinner** բառային միավորները: Իսկ **creeping** բառային միավորն առկա է միանգամայն այլ նշանակությամբ:

Ուսումնասիրելով դիպվածային ածանցավոր և բարդ բառային միավորների գործածությունը լրագրային հոդվածներում՝ եկանք հետևյալ եզրահանգումներին՝

1. Դիպվածային բառային միավորների գործածումը լրագրանյութին հաղորդում է արտահայտչականություն, պատկերավորություն և լավագույնս արտահայտում է հեղինակի մտադրությունը:
2. Քննության առնված դիպվածային բառային միավորները գերազանցապես գոյականական կազմություններ են և առավելապես հանդես են գալիս *Բժշկություն, առողջություն և մարզաձևեր (Medicine, Health, and Sports)* և *Գիտություն, տեխնոլոգիա և համակարգչի գործածություն (Science, Technology, and Computing)* թեմատիկ և/կամ բառիմաստային խմբերում:

3. Դիպլաձային բարդ բառային միավորներում առկա են բառեր, որոնք կազմվել են լեզվում արդեն իսկ առկա բառերի համաբանությամբ (breadsinner, iDanger, iFinger): Անգլերենի *-ing* վերջածանցով կազմված դիպլաձային բառերում (highlining, ghosting, creeping, owling) արձանագրում ենք իմաստային տեղաշարժ և բացարձակ համանունություն լեզվում առկա նույնահունչ և նույնագիր բառերի հետ:
4. Դիպլաձային բարդ բառային միավորներում, որոշ դեպքերում, արձանագրվում է բաղաձայնոյթ ռճական հնարը (burn book, ring rain):
5. Ուսումնասիրված դիպլաձային բառային միավորներից 4–ը զետեղվել են անգլերեն միավելու բացատրական բառարաններում և վերածվել նորաբանությունների, իսկ գերակշիռ մասի դիպլաձային կարգավիճակը թեական է (*uncertain between nonce and neologism*): Բացառություն է միմիայն *outfootball* բառը, որը դիպլաձային բառի լավագույն օրինակ է և ուսումնասիրված լրագրանյութում եզակի կիրառություն է դրսևորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աւետիսեան Լ., Տիրան Չրաքեանի բառաստեղծական արուեստը (հակադրութիւն և պարադոքս) // «Էջմիածին» կրոնագիտական և հայագիտական հանդես, Դեկտեմբեր, 2015, էջմիածին, էջ 90-101:
2. Մկրտչյան Ն.Ա., Բառերի կենսագրությունից: Բառերի ճակատագիրը. դեպի լեզվի ակունքները, Չորրորդ վերամշակված և լրացված հրատարակչություն, Չանգակ-97, Երևան, 2004.-300 էջ:
3. Ստեփանյան Ա., Ուրվագծեր հայ ամսագրային հրապարակախոսության պատմության (1960-1970թթ.), Տիգրան Մեծ, Երևան, 2013.-104 էջ:
4. Bachielli R., Our Worries about ‘Nonce’. Something More Than a Terminological Problem // *Linguæ* 1/2010, Università di Urbino, pp.83-90. Available online at: <http://www.ledonline.it/index.php/linguae/article/view/273> 10.03.2018.
5. Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 10.03.2018.
6. Davies, Mark. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 10.03.2018.

7. Schmid Hans-Jörg., New Words in the Mind: Concept-Formation and Entrenchment of Neologisms // Anglia Anglia - Zeitschrift für englische Philologie, Volume 126, Issue 1, 2008, pp. 1-36.

ԿԱՅՔԵՐ

1. <https://www.theguardian.com/science/punctuated-equilibrium/2011/oct/11/1> 10.03.2018.
2. <https://www.theguardian.com/commentisfree/2015/jan/08/anti-vaxxers-so-friendless-that-free-speech-is-enough-to-defeat-them> 10.03.2018.
3. <https://www.theguardian.com/football/2012/mar/10/saturday-football-clockwatch-premier-league> 10.03.2018.
4. <http://www.dailymail.co.uk/sciencetech/article-2017901/iDanger-Viewing-3D-smartphone-harms-sight-gives-headaches.html> 10.03.2018.
5. <https://www.theguardian.com/technology/blog?page=300> 10.03.2018.
6. <https://www.theguardian.com/education/shortcuts/2012/nov/26/milking-udderly-bizarre-student-trend> 10.03.2018.
7. <https://www.aarp.org/money/scams-fraud/info-03-2013/protecting-the-dead-from-identity-theft.html> 10.03.2018.
8. <https://dictionaryblog.cambridge.org/2013/08/12/new-words-12-august-2013> 10.03.2018.
9. <https://dictionaryblog.cambridge.org/page/44/?app-download=nokia> 10.03.2018.
10. <https://www.nytimes.com/2013/04/16/science/language-on-twitter-saturns-ring-rain-and-more.html> 10.03.2018.
11. <https://graziadaily.co.uk> 10.03.2018.
12. <https://www.theguardian.com/culture/2013/mar/11/why-we-need-invent-new-words> 10.03.2018.
13. <http://www.merriam-webster.com> 10.03.2018.
14. <https://www.merriam-webster.com> 10.03.2018.
15. <https://en.oxforddictionaries.com> 10.03.2018.
16. <https://www.collinsdictionary.com> 10.03.2018.
17. <http://www.urbandictionary.com> 10.03.2018.

ГАЯНЕ БАРСЕГЯН - СЕМАНТИЧЕСКИЕ И СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ АФФИКСАЛЬНЫХ И СЛОЖНЫХ ОККАЗИОНАЛИЗМОВ В АНГЛИЙСКИХ ЖУРНАЛИСТСКИХ СТАТЬЯХ

Данная статья посвящена изучению окказионализмов в английских журналистских статьях с семантической и структурной точки зрения. В статье также определяются и выявляются случаи проникновения окказионализмов в английских одноязычных словарях. Определенные семантические и структурные особенности окказионализмов придают контексту эмоциональную выразительность, повышая интерес читателей к журналистским статьям.

GAYANE BARSEGHYAN - THE SEMANTIC-STRUCTURAL FEATURES OF NONCE DERIVED AND COMPOUND WORDS IN ENGLISH JOURNALISTIC ARTICLES

The present article is concerned with the semantic and structural characteristics of nonce derived and compound words in English journalistic articles. The present article is also concerned with determination of the nonce status of the words under study and their inclusion in English monolingual dictionaries. The journalists employ nonce or occasional words, which serve the purpose of drawing the readers' attention and making the news report more expressive and emotive-evaluative.

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԴԻՑԱԲԱՆՈՒՅԹԸ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ
(ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ԱՆԻ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ հեքիաթ, երկվորյակ դիցաբանույթ, խոսքային նշան, մշակութային հերոս, օձերի դեմ պայքար

Խոսքի՝ որպես հաղորդակցական համակարգի առաջացումը, դեռ պարզաբանված չէ: Ակնհայտ է, որ խոսքի առաջացումը ձևավորել է խոսքային գիտակցությունը: Ի տարբերություն ծիսական գիտակցության, որտեղ զգայական տեղեկատվության վերապրումները ներկայացված են որպես նշաններ՝ խոսքային գիտակցությունը գոյություն ունի ներքին նշանների և իմաստների տարածության մեջ: Այդ պատճառով միջերում (այսուհետ՝ դից) և հեքիաթներում ներկայացված են գիտակցության նախախոսքային ձևեր՝ որպես աշխարհի ընկալման և նկարագրման միջոց: Այս դեպքում անհատական փորձը փոխվել է խոսքային կառույցների, որոնք փոխանցվում են ուրիշին որպես խոսքային նշան և ունեն իրենց իմաստը: Եթե փորձը կարևոր է հասարակության գոյատևման համար, դառնում է ավանդույթ, որը ձևավորում է հասարակության իմաստային կառույցը [Шинкаренко 2009:7]:

Այս տեսանկյունից հետաքրքրական է տարբեր մշակույթներում առկա դիցերի և հեքիաթների ուսումնասիրությունը՝ նրանցում առկա խոսքային նշաններն ու վերջիններիս իմաստը բացահայտելու, ինչպես նաև տարբեր մշակույթներին բնորոշ աշխարհի ընկալման առանձնահատկություններն արտացոլելու համար:

Տարբեր ազգերում առկա են տարատեսակ դիցեր և հեքիաթներ, սակայն, միևնույն ժամանակ, բոլոր ազգերում միևնույն մոտիվները կարող են կրկնվել: Ի. Նաստինը տարբեր մշակույթներում հանդիպող միևնույն դիցերը (դիցաբանությունները) դասակարգում է 6 հիմնական խմբերի՝ կեցության ելակետային վիճակ, մեղսագործություն կամ ուրիշ իրադարձություն, որը բերում է գոյության վնասի, երկվորյակ դիցեր, խմբի մասին դիցեր, կորցրած ամբողջության վերականգնում, հայտնության դիցեր [Настин 2007: 41]:

Հաշվի առնելով այն փաստը, որ դիցաբանությունների վերաբերյալ ուսումնասիրությունները քիչ են անդրադարձել հեքիաթին՝ սույն հոդվածում մեր կողմից փորձ է արվել դիտարկել <<երկվորյակ>> դիցաբանությամբ անգլիական [Glover 1920:1- 318, Jacobs 2005:1-169] և հայկական [Նազինյան 1959:1-269, Հովակիմյան 1980:1-176] ժողովրդական հեքիաթներում՝ նրանցում առկա խոսքային նշաններն ու վերջիններիս իմաստը բացահայտելու նպատակով:

<<երկվորյակ>> դիցաբանությամբ ներկայանում է որպես երկակի (բինար) հակադրության սկզբունքի դիցաբանական ձև: Դրանք մշակութային (ժողովրդական) հերոսի մասին են, ովքեր որպես կանոն, վաղ մանկությունից ցուցադրում են իրենց անսովոր գերբնական ընդունակությունները [6: 43]: Սակայն, հերոսները, ինչքան էլ իրենց ծագմամբ, գերբնական հատկություններով ու արարքներով կապված են բնության և նրա ուժերի հետ, երկրային կյանքը պատկերող զրույցներում վառ արտացոլում են գտնում ոչ միայն նրանց սխրագործությունները, այլև մարդկային զգացմունքները [5: 147]:

Հեքիաթներում մանկուց գերբնական կարողություններով օժտված հերոսը հակադրվում է չար հսկաներին և դառնում նրանց թշնամին: Եթե ժողովրդական դիցաբանության մեջ հանդիպում ենք մանուկների, ովքեր մեծանում են ժամ առ ժամ, և նրանց գերբնական կարողությունները հնարավորինս չափազանցված են, ապա հեքիաթներում նրանց կարողությունները այնքան էլ չափազանցված չեն և արտահայտված են նաև մյուսների նկատմամբ գերադաս լինելու փաստով կամ լավագույն հատկանիշներով օժտված լինելով: Նրանց գլխավոր հատկանիշներ են՝ հնարամտությունը, աշխատասիրությունը, ուժն ու նպատակասլաց լինելը, որոնց օգնությամբ հաղթում են թշնամուն և իրենց առջև ծառայած բոլոր դժվարությունները: Մեր կողմից ուսումնասիրված հայկական և անգլիական հեքիաթներում սրանք գլխավոր հատկանիշներն են, որոնք բացահայտվում են հերոսի գործողություններում և նկարագրված են ներակա կերպով:

Ե՛վ հայկական, և՛ անգլիական հեքիաթներում առանցքային հատկանիշ է համարվում խելացի և իմաստուն լինելը: Օրինակ՝

<<...Սրանց ընտանիքի մեծ տղեն՝ Սամվելը, շար խելոք ու աչքաբաց էրեխա է լինում, վանքի վարժարանումը կարդացած, վարդապետներից շար բան սովորած, շար բանի էլ իրա խելքովը հասած... >> (<<Սամվելի առակը>>):

Հայկական հեքիաթում հերոսն իմաստուն է, հնարամիտ, կարողանում է ելք գտնել դժվարին իրավիճակներում:

*“When good king Arthur reigned, there lived near the Land’s End of England, in the county of Cornwall, a farmer who had one only son called Jack. He was **brisk** and of a **ready lively wit**, so **that nobody or nothing could worst him.....**”* (“Jack the Giant-Killer”).

Անգլիական “Jack the Giant-Killer” հեքիաթում հերոսը նկարագրվում է որպես աշխույժ, խելացի, ում ոչ ոք չի կարող հաղթել, այսպիսով, պարզ է դառնում մշակութային հերոսի կերպարը, ով մենամարտելու է չարի հետ:

Այս դիցաբանույթը իր լեզվական դրսևորումն է ստանում մակդիրների (*խելոք, աչքաբաց, կարդացած, սովորած, brisk, lively wit*) միջոցով, ինչպես նաև բայերի միջոցով, որոնք նկարագրում են նրանց կատարած արարքները:

Ըստ Ի. Նաստինի՝ հեքիաթում մշակութային (ժողովրդական) հերոսը կատարում է հետևյալ հիմնական գործառույթները՝

ա) *տիեզերքի ընդարձակում (ընդունված կարգի լայնացում, էքսպանսիա),*

բ) *սահմանների հաստատում/ամրապնդում, որը բաժանում է տիեզերքը քառսից կամ հակաաշխարհից,*

գ) *գաղտնի իմացությամբ և ձիրքով օժտված մարդկանց ներմուծում աշխարհ [Настин: 43]:*

Օրինակ՝ անգլիական “Jack the Giant-Killer” հեքիաթում մշակութային հերոսը՝ Ջեքը, կատարում է առաջին երկու գործառույթները: Տեղի է ունենում ընդունված կարգի լայնացում. իր հնարամտությամբ նա սպանում է աժդահային: Առաջին գործառույթի կատարումը դառնում է երկրորդի իրագործման հիմնաքար, քանի որ, սպանելով աժդահային, ամրապնդում է սահմանները, որը բաժանում է տիեզերքը քառսից կամ հակաաշխարհից: Հեքիաթում գերբնական ուժով կամ ձիրքով օժտված հերոսը խորհրդանշում է տիեզերական ուժը, իսկ չար հսկան դառնում է հակատիեզերականի խորհրդանիշ, որն արտացոլում և դրսևորում է սատանայական բնույթը:

Հետևյալ դիցաբանույթը ենթադրում է ոչ միայն գլխավոր հերոսի յուրահատուկ ձիրքով օժտված լինելը, այլ նաև գաղտնի իմացությամբ և ձիրքով մարդկանց ներմուծումը հեքիաթ: Այդ մարդիկ կարողանում են լուծել այն խնդիրներն ու առաջադրանքները, որոնք <<սովորական>> մարդիկ ունակ չեն լուծելու: Նրանք աչքի են ընկնում իրենց

հնարամտությամբ և խելքի ճկունությամբ: Այդ մարդկանց դերում հանդես են գալիս հասարակ աղքատ գյուղացին, ոսկերիչը, դարբինը:

Կատարելով հեքիաթների կառուցաձևաբանական վերլուծություն՝ Պրոպյալը նշում է, որ հեքիաթ են ներմուծվում մի շարք <<օգնականներ>>: Այս դեպքում հերոսը գտնվում է պասիվ դերում, իր փոխարեն ամեն ինչ անում է օգնականը կամ կախարդական միջոցը: Օգնականը նրան տանում է այլ երկրներ, ազատում է արքայադստերը չար կախարդի ճիրաններից [Պրոպո: 253]: <Երոսը դիմում է նրա օգնությանը իր առջև ծառացած խնդիրը լուծելու համար, կամ նրա փոխարեն մենամարտում է օձերի և այլ հրեշների հետ:

Օրինակ՝ հայկական <<Մարդու աչքը մենակ հողը կկշտացնի>> հեքիաթում պատմվում է մի թագավորի մասին, ով կորցնում է իր մատանու քարը: Որպես օգնական հանդես է գալիս դերվիշը, ով խոստանում է օգնել թագավորին միայն այն պայմանով, եթե նա խոստանա կատարել իր ցանկությունը:

<<...Էսպեղ, պալապոն՝ ա մտնում մի դերվիշ: — Թագավորն ապրած կենա,— ասում ա,— մթամ, որ սաղ քաղաքը սրի քաշեցիր, մեռածները քեզ անգին քար կդառնա՞ն: Ես քու կորուստը կգրտնեմ, ամա ինչ ուզեմ, պիտի տրա ինձ, — ասում ա, — խոստանում ե՞ս...>> (<<Մարդու աչքը մենակ հողը կկշտացնի>>):

Մեկ այլ անգլիական “Sea-maiden” հեքիաթում ձկնորսի ավագ որդին գնում է սպանելու հսկային: Նա իր հետ վերցնում է իր երեք օգնականներին՝ շանը, բազեին, ջրասամույրին, ովքեր հեքիաթի զարգացման տարբեր փուլերում օգնելու են նրան դժվար իրավիճակներում:

“...For this,” **said the dog**, “if swiftness of foot or sharpness of tooth will give thee aid, mind me, and I will be at thy side.”

Said the otter: “If the swimming of foot on the ground of a pool will loose thee, mind me, and I will be at thy side.”

Said the falcon: “If hardship comes on thee, where swiftness of wing or crook of a claw will do good, mind me, and I will be at thy side.”... (“Sea-maiden”).

Ինչպես տեսնում ենք, հեքիաթներում որոշակի ձիրքով կարող են օժտված լինել ոչ միայն մարդիկ, այլ նաև կենդանիները, որոնց վերագրվում են մարդկային հատկանիշներից շատերը:

<<...Մին էլ տեսնում ա հրես իր բնիցը դուրս էկավ մի օձ, ասավ. <<Մարդ-ախպեր, որ թագավորի էրագի միտքը քեզ ասեմ, հարիր ոսկին

որ աննես, կբերես ինձ հետ կկիսես՞...» (<<Թագավորը, աղքատն ու օձը>>):

Գաղտնի իմացությամբ օժտված հերոսի վառ օրինակ կարելի է գտնել անգլիական “The master and his pupil” հեքիաթում:

“There was once a very **learned** man in the north-country who knew all the languages under the sun, and who **was acquainted with all the mysteries of creation**.... He had one big book....it contained **all the secrets of the spiritual world**. It told **how many angels there were in heaven, and how they marched in their ranks, and sang in their quires, and what were their several functions, and what was the name of each great angel of might**...” (“The master and his pupil”).

Այդ կրթված մարդը գիտի այն ամենը, ինչ <<հասարակ>> մարդը չգիտի: Ինչպես և հայկական հեքիաթներում, անգլիական հեքիաթներում նույնպես գիտունը հակադրվում է անգետին, ծույլը՝ աշխատասերին, բարին՝ չարին: Այս հեքիաթում փորձառու վարպետը հակադրվում է անփորձ աշակերտին: Անդրադառնալով Վ. Պրոպպին՝ նշենք, որ նա դիտարկել է այն փաստը, որ հեքիաթներում շատ հաճախ պատմվում է այն մասին, որ ընտանիքը ուղարկում է իր երեխաներին ուսում ստանալու վարպետի մոտ: Սա, իհարկե, արտացոլում է անցյալի պատմական իրականությունը: Վ. Պրոպպն այն անվանել է հեքիաթի այս տեսակը <<գաղտնի գիտություն>>, քանի որ, ըստ նրա, հեքիաթներում տրամադրվում է որոշակի գաղտնի գիտություն, այսինքն՝ նրանք ձեռք են բերում նաև սրբազան իմացություն: Ուսուցիչը, ում մոտ աշակերտում է տղան, իմաստուն ծերուկ է, կախարդ կամ նաև ոգի [Ռոսո: 194]: Աշակերտը նկարագրվում է որպես ծույլ, տգետ, և ուսուցչի խնդիրն ու զարձառույթն է իր աշակերտին սովորեցնել լինել աշխատասեր և զարգացնել լավագույն հատկանիշները:

“...Now the master had a pupil who was but a foolish lad, and he acted as servant to the great master...” (“The master and his pupil”).

<<...հ՞նչ անի, ի՞նչ չանի, դես ա գնում, դեն ա գնում, որ շապ ման ա գալիս, ծանդր ու թեթև ա անում, գալիս ա թագավորի զարգյարի մոտ աշկերտ...>> <<Էրազ փեսնող աշկերտը>>:

Հեքիաթներ են ներմուծվում նաև որոշակի հրաշքներ իրագործող մարդիկ, որը նույնպես կարելի է դիտել որպես յուրահատուկ ձիրք: Օրինակ՝

“...And when he opened it, out there hopped three little red men, and asked Jack: “What is your will with us...?” (“Jack and his golden snuff-box”).

Մեր կողմից ուսումնասիրված հայկական հեքիաթներում հրաշքներ գործում են այսպես կոչված դերվիշները:

<<... Որ փեսա կնիկս հարամություն ա անում, ընկա մի դերվիշի ուրը աղաչեցի, պաղապեցի, ինձ սորվացրեց, թե ոնց անես կնկանս խնձոր դարձնես, որ միշտ ջեբիս լինի, հարամություն չանի...>> (<<Դարդոտած վաճառականը>>):

Այսպիսով, հեքիաթում հանգուցային է դառնում կախարդական միջոցի ձեռքբերումը: Հեքիաթում կախարդական միջոցի ձեռք բերման մեթոդները շատ տարբեր են: Ինչպես նշում է Վ. Պրոպյը, որպես կանոն, դրա համար հեքիաթ է ներմուծվում նոր կերպար, և, այսպիսով, գործողությունների ընթացքը մտնում է նոր փուլ: Այդ նոր կերպարը, այսպես կոչված, <<նվիրողն>> (<<շնորհողը>>) է: Ըստ Պրոպյի <<նվիրողի>> դասական տարբերակ է համարվում <<Յագա>>-ն: <<Յագա>> են անվանում նաև այլ կարգերի տարբեր կերպարներ, օրինակ՝ խորթ մորը [Սրոո: 146]: Նրա դերում հանդես են գալիս նաև կենդանիները, ծերուկները և այլն: Նշենք նաև, որ ուսումնասիրված հայկական և անգլիական հեքիաթներում Յագայի դերում հանդես են գալիս կախարդներ, ովքեր կատարում են ռուսական հեքիաթներում հանդիպող Յագայի կերպարի գործառույթը:

Ամփոփելով տեսնում ենք, որ այս դիցաբանույթն առկա է և՛ հայկական, և՛ անգլիական հեքիաթներում: Մշակութային հերոսի կերպարը, ում հիմնական գործառույթն է մենամարտել և հաղթել օձերին և այլ հրեշներին, երկու մշակույթներում էլ վառ արտահայտված է: Ի տարբերություն դիցերի, որտեղ ավելի վառ է արտահայտված մշակութային հերոսի կերպարը, որն անպայման օժտված է գերբնական ուժով, հեքիաթներում նույն կերպարը ենթարկվում է որոշակի փոփոխությունների: Հեքիաթներում արդեն հերոսն օժտված է որոշակի ծիրքով, ունի առավելություն մյուսների նկատմամբ, որն արդեն պայքարում է ոչ թե դիցական մտացածին չար ուժերի դեմ, այլ հասարակական կյանքում հանդիպող դժվարությունների դեմ: Այս դիցաբանույթը իր լեզվական դրսևորումն է ստանում մակդիրների (*խելոք, աչքաբաց, կարդացած, սովորած, brisk, lively wit*) միջոցով: Երկու մշակույթներում էլ առանձնացվում է իմաստությունը, խելքը և հնարամտությունը՝ որպես հերոսի կարևորագույն հատկանիշներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովակիմյան Ս., Արև հեքիաթ: Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, Սովետական գրող, 1980, 1-176:
2. Ա. Նազիմյան, Կ. Մելիք - Օհանջանյան: Հայ ժողովրդական հեքիաթներ < - 1, ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ինս.-տ.; ՀՍՍՀ ԳԱ. հնագիտ. և ազգր. ինս-տ. Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1959, 1-269:
3. Glover W.J., British Fairy and Folk tales, 4,5 and 6 Soho Square, London, A&C Black LTD 1920, pp. 1- 318.
4. Jacobs J., “English fairy Tales”, The Pennsylvania State University, Pennsylvania 2005, pp. 1-169.
5. Пропп В. “Исторические корни волшебной сказки”, Лабиринт, Москва, 2000, стр. 1-509.
6. Настин И.В., “Психолингвистика”, Московский психолого-социальный институт, Москва, 2007, стр. 37-45.
7. Шинкаренко В.Д., Смысловая структура социокультурного пространства: Миф и сказка. Изд.2, URSS. 2009, стр. 140-141.

АНИ ГЮРДЖИНЯН - МИФОЛОГЕМА КУЛЬТУРНОГО ГЕРОЯ В СКАЗКАХ (НА МАТЕРИАЛЕ АРМЯНСКИХ И АНГЛИЙСКИХ СКАЗОК)

Вербальное сознание существует во внутреннем пространстве знаков и значений, а превербальные формы сознания представлены в мифах и сказках как средство описания и восприятия мира. В этой статье мы попытались проанализировать «близничную мифологему» в армянских и британских сказках с целью выявления вербальных знаков и их значений в сказках.

ANI GYURJINYAN – THE MYTHOLOGEME OF CULTURAL HERO IN TALES (ON THE MATERIAL OF ARMENIAN AND ENGLISH TALES)

Verbal consciousness exists in the inner space of signs and meanings, and preverbal forms of consciousness are presented in myths and fairy tales as a means of description and perception of the world. In this article we have made an attempt to analyze “twin myths” in Armenian and British tales with the aim to reveal the verbal signs and their meanings in tales.

**ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ԱՆԳԼԱԼԵՁՈՒ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՏԻՐՈՒՅԹՈՒՄ**

ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ բարբառային տարբերակներ, անձնական և անդրադարձ դերանուններ, տարածքային և էթնիկական բարբառ, սոցիալական մեդիատիրույթ

Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիատիրույթը, համարվելով լեզվի իրացման լավագույն աղբյուրներից մեկը, ընդգրկում է անգլերենի որոշ բարբառներին, ենթաբարբառներին և խոսվածքներին ներհատուկ տարրեր: Այդ բարբառային շեղումներից անմասն չեն մնում նաև անձնական և անդրադարձ դերանունները:

Ներկայումս լեզվի տարածքային տարատեսակները, գործածվելով սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում, սկսել են ընդլայնել իրենց կիրառման աշխարհագրական քարտեզը և օգտագործվում են ոչ միայն տվյալ տարածքում բնակվող անգլախոս լեզվակիրների կողմից, այլև մյուս անգլախոս հաղորդակցվողների կողմից: Այս համատեքստում ամերիկացի լեզվաբան Ջ. Էյնշտեյնը նշում է, որ բարբառային բառերն այնքան արագ են տարածվում, որ այսօր օգտագործվում են հազարավոր անհատների կողմից³², ինչի արդյունքում, հաճախ շատ դժվար է դառնում որոշարկել այս կամ այն բարբառային դրսևորումների սահմանազատման տարածքը:

Ժամանակ առ ժամանակ այդ շեղումներն ընդլայնում են իրենց աշխարհագրական քարտեզն ու ի վերջո ներթափանցում են գրական լեզու: Արևմտյան լեզվաբան Ռ. Հիկին, անդրադառնալով լեզվում բարբառային տարբերակներին, նշում է՝ վարիացիաների մի մասի գործածումը սահմանափակվում է միայն այդ տարբերակով խոսող հանրույթի գործածմամբ, մինչդեռ մյուսներն ընդլայնում են իրենց կիրառական դաշտը: Այս վերջին հանգամանքը լեզուն ենթարկում է

³² <https://www.cc.gatech.edu/~jeisenst/papers/dialectology-chapter.pdf>

փոփոխության, ինչը տեսանելի է դառնում միայն լեզուն հետահայաց վերլուծելիս³³:

Իհարկե, վեր հանել անձնական և անդրադարձ դերանունների բոլոր այդ բարբառային տարբերակներն, անշուշտ, հնարավոր չէ, քանի որ անգլերենի բազմաթիվ տարբերակներում դերանվանական շեղումները բավականին թերի են արտահայտված: Հետևապես սույն հոդվածում մենք կուսումնասիրենք անգլերենի այն հիմնական բարբառները, որտեղ անձնական և անդրադարձ դերանունների շեղումները լավ արտահայտված են և ներկայումս համեմատաբար կիրառելի են անգլալեզու սոցիալական մեդիայի բազմաթիվ հարթակներում: Վերջիններիս անմիջականորեն արտացոլվում են առցանց հաղորդակցման հարթակներում օգտատերերի գրառումների, մեկնաբանությունների, քննարկումների միջոցով:

Անձնական և անդրադարձ դերանունների առանձնահատկություններն աֆրոամերիկյան անգլերենում

Աֆրոամերիկյան անգլերենը կամ էթնոիքսը Ամերիկայի Միացյալ Նահանգներում թերևս ամենաշատ տարածված էթնիկ բարբառներից մեկն է: Այս բարբառը բնութագրվում է ինչպես հնչունաբանական, այնպես էլ քերականական առանձնահատկություններով:

Անձնական և անդրադարձ դերանուններն աֆրոամերիկյան անգլերենում բազմազան են ինչպես բնույթով, այնպես էլ գործառության յին առանձնահատկություններով:

Նախևառաջ, հարկ է նշել, որ աֆրոամերիկյան անգլերենում ենթակա անձնական դերանունների հարացույցում «դու» և «դուք» անձնական դերանուններն իրացվում են առանձին բառային միավորների միջոցով՝ you-դու, y'all-դուք՝

I just got home and found my pet, my best friend, dead. I wanted to share his picture with **y'all** (www.reddit.com).

How the hell do **y'all** pee? Apparently everything I've ever believed is wrong (www.reddit.com).

Every year **y'all** talk shit about people wanting...(www.twitter.com).

Y'all think **y'all** got friends? Lose yo car (www.twitter.com).

³³https://www.unidue.de/~lan300/Internally_and_externally_motivated_language_change.pdf

Աֆրոամերիկյան խոսվածքում "they" անձնական դերանունն ընդլայնել է իր իմաստային դաշտը, ինչի արդյունքում այս դերանունը ձեռք է բերել ստացականության ներիմաստ: Այսպես՝ լեզվաբան Ջ. Ռիկֆորդը նշում է, որ they դերանունը գործածվում է հոգնակի թիվ ստացական դերանվան ներիմաստով³⁴, ինչպես՝

They is only one thing I ever needed... (www.facebook.com)

They is always that one friend Who secretly...(www.facebook.com).

As long as **they** is life their is hope (www.facebook.com).

They is no competition in destiny so run your race and wish others well.happy Xmas n happyysunda... (www.facebook.com)

Այս համատեքստում հետաքրքրական է նաև դիտարկել անձնական դերանունների և ստորոգյալների փոխկապակցվածությունը: Աֆրոամերիկյան անգլերենին ներհատուկ է ներկա ժամանակաձևում երրորդ դեմք եզակի թվում "s" վերջավորության բացակայությունը³⁵, ինչպես հետևյալ օրինակներում՝

He way up!!! **He feel** blessed!!! This is after football practice!!

(www.facebook.com)

Great Baby to Babysitt!He is such an #Angel#**HeDont**Cry

(www.facebook.com).

Դերանվանական հոլովի, սեռի, թվի քերականական կարգը պահպանվել է և նման է գրական տարբերակին:

Խնդիր անձնական դերանունների պարագայում մենք նկատելի բարբառային վարիացիաների չենք հանդիպել:

Աֆրոամերիկյան անգլերենում անդրադարձ դերանունների կազմությունը համեմատաբար նման է գրական անգլերենի տարբերակներին: Բացառություն են կազմում երրորդ դեմք եզակի (արական) և հոգնակի թիվ դերանունները՝ **his+self-hisself, their+self+theirself**:

Փաստորեն, աֆրոամերիկյան անգլերենում անդրադարձ դերանունները երկու հատկանիշով կարող են բնութագրվել՝ նախ այս դերանունների երկրորդ բաղադրիչը և՛ հոգնակի, և՛ եզակի թվում նույնն է, երկրորդ՝ hisself և theirself շեղումներում պահպանվել են գրական

³⁴ <http://www.johnrickford.com/portals/45/documents/papers/Rickford-1999e-Phonological-and-Grammatical-Features-of-AAVE.pdf>

³⁵ <http://events.ff.uni-mb.si/mir/files/2012/EzgetaGrammar.pdf>

անգլերենում անդրադարձ դերանունների կազմության օրինաչափության սկզբունքն, այն է՝ ստացական դերանունը+self (ves) արմատները՝

Blocking about **theirself** just cuz (www.tumblr.com).

Who have hated their bodies. Who have hated **theirself** (www.tumblr.com).

I think everyOne can hate **hissself** (www.tumblr.com).

The timelord **hissself** (www.tumblr.com).

ժամանակակից անգլերենի անդրադարձ դերանունների այլաձևությունները չեն սահմանափակվել միայն վերը շարադրվածով: Փոփոխության է ենթարկվել անդրադարձ դերանունների կառուցվածքը՝ երկբաղադրիչ կազմությունից վերածելով եռաբաղադրիչ կազմության (ստացական/խնդիր անձնական դերանուն+own ձևայթ+self(ves)): Ինչպես նշում է Լ. Գրինը՝ own միջանկյալ արմատը ծառայում է որպես սաստկացուցիչ, որն արտահայտում է ինչ-որ մեկի անկախությունը կամ շեշտադրում է անձի անհատականությունը որևէ գործողության պատասխանատվություն վերցնելիս³⁶

Howard, King, Nolan, Matheson. And Joe **hisownself**, of course (www.twitter.com).

Tanks! Youz a lil GINGER CUTIE **youownself** (www.twitter.com).

From the inside out. Within **ourownselfs**, within our families, communities, workplaces, churches, schools (www.twitter.com).

Is it Friday again already? More great 'toons from Juanita Jean **Herownself** down at the beauty salon (www.twitter.com).

...may just end up putting a link online to the mp3 files

themownselfs (www.facebook.com).

Գուլահ կամ Գիչի

Ամերիկայում առավել գործածվող էթնիկ բարբառային տարբերակներից է նաև Գուլահը կամ Գիչին: Աֆրոամերիկյան այս խոսվածքը շատ ընդհանրություններ ունի Էբոնիքսի հետ, սակայն ամբողջովին չի նույնանում վերջինիս հետ: Ինչպես բազմաթիվ խոսվածքներ, աֆրոամերիկյան այս ենթաբարբառը նույնպես բնութագրվում է հնչյունաբանական և քերականական միավորների կիրառման առանձնահատկություններով, որից անմասը չի մնում նաև

³⁶<http://assets.cambridge.org/97805218/14492/sample/9780521814492ws.pdf>

դերանվանական համակարգը: Ինչպես նշում է Դ. Ֆրանկը՝ Գուլահը շատ համաչափ դերանվանական համակարգ ունի³⁷: Հեղինակը Գիչիի դերանվանական համակարգի համաչափությունը մեկնաբանում է մի կողմից դու անձնական դերանվան տարարմատ հոգնակի տարբերակի կազմությամբ, իսկ մյուս կողմից սեռի քերականական կարգի մեկ դերանվանական միավորի դրսևորմամբ: Հոլովի և դեմքի քերականական կարգերը նույնպես տարբերակված են և նման են գրական անգլերենին: Հեղինակն իր աշխատությունում Գուլահին ներհատուկ ենթակա անձնական և խնդիր անձնական դերանուններ է ներկայացնում հետևյալ լեզվական միավորները՝ a, ya(h), e, we (wi), oona, dey և mi, ya, um, we, oona, dem: Այս առումով, հարկ ենք համարում նշել, որ մեր ուսումնասիրությունների ընթացքում մենք նույնպես հանդիպել ենք այս դերանունների որոշ ձևափոխված վարիացիաների, մասնավորապես ya-եզակի դերանվանը զուգահեռաբար գործածվում է նաև yah-տարբերակը, իսկ տարահիմք oona հոգնակիակերտ դերանունը վերափոխվել է una տարբերակի: Բացի այդ, առցանց միջավայրում Գիչիով հաղորդակցվողների գրառումներում հիմնականում գործածվում է wi դերանվանական միավորը՝

Gawd bless **wi** ebeedey. **E** up tuh **wi** fah see faar enuff eentoo **wi** lyfe fah reckunize... (www.facebook.com)

Ebeebodee be sho fah check disyah out! **E** gwine be a tyme fah tru! (www.facebook.com)

How ebeebodee da do tudeh? **E'** a byutiful yah een Cleveland,OH.. (www.facebook.com)

Wi cyaan le nobodee tief disyah e' belong tuh **wi** frum **wi** Queen! (www.facebook.com)

Dey gwan b un Gee " CHI " to de bone fe takin bout . En de name ob de " KONKER "(www.facebook.com)

Mi dey sittin **yah** wunjrin, how **wi** gut suminee peepel **yah** en de traffic da slow likka **wi dey**... (www.facebook.com)

Happee Nyew yea tuh ebeebodee da dun fan **wi** en **dem** wah gwine cum (www.facebook.com).

fan **dem** nough hunnuh chillun... **Wi** da still risin tuh de top... Le **wi** keep **um** gwine!!!! (www.facebook.com)

³⁷ http://www.dbfrank.net/papers/gullah_grammar_sketch.pdf

Mi prey hannuh chillun stay bless en stay press fah do rite een ya life... (www.facebook.com)

Ժամանակակից Գույահում անդրադարձ դերանուններն ըստ կազմության երկրադարիչ են՝ կազմված խնդիր անձնական դերանուններից և seff բառային միավորից, ինչպես՝ miseff, yaseff, --, wiseff, unaseff, demseff՝

Pple dey reshape team Southampton turn **demseff** to SHOPRITE..... (www.twitter.com)

I think the northerners are BomBinG **demseff**, to scare us, remind us they Must b the Next President of dis Beloved country of 3 major bride (www.twitter.com).

Tbh I prefer 15/20 minutes match because man no be wood, some guys go dey form say 1 hour Oya kill **yaseff** no be say d p dey expire today (www.twitter.com).

Ei ; keep dirtying **yaseff** boss...bye bye. (www.twitter.com).

All of you sha dey give **unaseff** Animal name... (www.twitter.com)

Wo. Make una dey warn **unaseff** (www.twitter.com).

yeah I'm in v 8 more rn can barely handle it **miseff** (www.twitter.com).

Շարահյուսական մակարդակում մենք չենք հանդիպել ենթակա, խնդիր և անդրադարձ դերանունների փոխակերպված գործառույթներ:

Քումբրիան անգլերեն

Բրիտանական բարբառների շարքում իր դերով և նշանակությամբ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Քումբրիան բարբառը: Հարկ է փաստել, որ բարբառային այս տարատեսակի գործածումն առցանց միջավայրում նվազման միտում է արձանագրում հատկապես երիտասարդների շրջանակում: Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում մեր կողմից կատարված հետազոտությունների ընթացքում Քումբրիան բարբառին ներհատուկ դերանվանական տարատեսակները համեմատաբար սակավ են սկսել գործածվել՝ Ah, thoo, he, she, it, we, Y'(y), Th"

FEKK!!...**AH'M** STILL ALIVE!!...GOIN' BACK...(www.facebook.com)

...but **Ah'm** not sure why. It's official. Ah'm finally gettin' better! That's why **Ah'm** schmilin'! (www.facebook.com)

..I don't care who **y'are** and I'm wearing crazy..(www.facebook.com).

Here **y'are** 😊 :) as filmed by myself, molly and whoever else grabbed the camera... (www.facebook.com)

They are soooo sweet when **th'are** not tryng to eat ya 😊 :))
(www.facebook.com)

th'are adgite players in Bole, GRA (www.facebook.com)

Քումբրիան բարբառում նույնպես հստակորեն տարանջատվում են երկրորդ դեմք անձնական դերանուններն առանձին բառային միավորների տեսքով: Այսինքն, թվի քերականական կարգը լիովին տարահիմք է: Դեմքի, սեռի և հոլովի քերականական կարգերում որոշակիորեն տարբերակված կիրարկումներ նկատելի չեն: Խնդիր անձնական դերանունների հարացույցում այլաձև կիրարկումներ նույնպես նկատելի չեն:

Ուշագրավ է այն փաստը, որ տարածական բարբառի յուրահատկությունները դրսևորվել են նաև անդրադարձ դերանունների պարագայում՝ Mi'sel, thee'sel, his'sel, her'sel, its'sel, oor'sels, y'rsels, th'sels, thmsels՝

He did nothing about it...restructuring will only be a shadow of **its sel**
(www.twitter.com)

i would given up on life **its sel** my brother...(www.twitter.com)

...here's lil leo gi'en **his'sel'** a guid wash!!!!.....xxxxxxx
(www.facebook.com)

... Have a word with **yrsels** x (www.twitter.com)

Female refs in men's games in the @Bundesliga_EN absolutely on **yrsels!** Excellent stuff! (www.twitter.com)

....2014 time tae rid **oor'sels** of this scum !! (www.facebook.com)

Whn u say jz mst fall u ar saying branches of anc mst fall they elected him u ar asking parly anc members to betray **thmsels**
(www.twitter.com).

Lol wat type of female calls **thsels** faithfull ...(www.twitter.com).

Փաստորեն, Քումբրիան բարբառում անդրադարձ դերանունների հոգնակի թվի կազմությունը նման է գոյականի հոգնակի թվի կազմությանը (ավելացնում են s վերջածանցը):

Ջեորդի բարբառ

Բրիտանական բարբառներից հաջորդը, որի մասին հարկ ենք համարում անդրադառնալ Ջեորդի բարբառն է: Վերջինս Անգլիայի հյուսիս-արևելքի բարբառն է: Պ. Էրբաթնովան նշում է՝ մեծ տարբերություն կա Ջեորդի բարբառի դերանունների և դերանվանական համակարգի ու գրական անգլերենի դերանվանական համակարգի միջև³⁸: Ներկայացնենք անձնական դերանունները՝ Aa, Aw Yee, ye He, she, it We Youse Thor(they are)³⁹

...forcing you to attend Holyrood as an MSP an' expectin' **ye** tae stand up for Scotland (www.twitter.com).

*Whit **are** they like*, ken... (www.twitter.com)

When **ye** say your not going out and your mates all of a sudden turn into motivational speakers "when your like 90 **are ye** gonna remember the times when **ye..** or **are ye** gonna... (www.twitter.com).

Bang bang **youse** all deadedno democracy...(www.twitter.com)

I love **youse** @milly_mckenna @madisoncbrown @rioyasminx... (www.twitter.com)

Փաստորեն, ինչպես մյուս անգլիական բարբառներում, այս բարբառում ևս դու և դուք դերանուններն իրացվում են տարբեր բառային միավորների միջոցով: Ձևաբանական տեսակետից, դերանուններին ներհատուկ սեռի, հոլովի և եռանդամ թվի քերականական կարգերը հստակ տարբերակված են:

Դերանվանական այլաձևությունները Ջեորդի բարբառում դրսևորվել են նաև անդրադարձ դերանունների բառաձևերում: Վերջիններս և՛ եզակի, և՛ հոգնակի թվում ունեն միանման վերջավորություն: Հոգնակի թվի դեպքում միայն գոյականին ներհատուկ *s* հոգնակիակերտ մասնիկն է ավելանում՝ Mysell Yoursell Hersell, hissell, Oursells Yoursells Themsells՝

Pissing **mysell** at that een!! (www.twitter.com)

He does lie trie; and i **Myself** be right, and... (www.twitter.com)

Oj big guy enjoy **yoursell**...(www.twitter.com)

...hope you all enjoyed **yoursells** as much as we did...(www.facebook.com)

³⁸ https://is.muni.cz/th/262661/ff_b/Geordie_dialect_BP.pdf

³⁹ <http://englandsnortheast.co.uk/GeordieDictionaryu-z.html>

Canna help **themselfs**... (www.facebook.com)
Bairns enjoying **themselfs** a sandhaven ... (www.facebook.com)
She might of got **hersell** DOON to windows... (www.twitter.com)

Յորքշայր բարբառ

Իր լեզվական յուրահատկություններով, բառային իրացումներով և տարածքային սահմանափակվածությամբ Մեծ Բրիտանիայի բարբառների շարքում աչքի է ընկնում նաև Յորքշայր բարբառը: Ինչպես անգլոսաքսոնական մյուս բարբառներում, այս բարբառում ևս դերանվանական համակարգը դրսևորել է որոշակի տարածություններ: Այսպես, բառային մակարդակում անձնական դերանունները լիովին ձևափոխված են, ոչ սիմետրիկ՝ Ah, Aw Tha, thoo Shoo, sher, sh', 'e Wer, wi Yer, You Thet, ther, the'

Aw naw **am** exposed, it's been **a** while so **a** need rid **a** the cobwebs (www.twitter.com).

Can't remember if **a** signed up for my exam results through text/email HAHAAHHA **aw am** terrified (www.twitter.com).

aw mate am so hungover n workin a 9 hour shift get it UP me (www.twitter.com).

Yer no a celebrity ye live in a semi-detached wae your maw n da :))) (www.twitter.com).

Calm **yer** tits luv (www.twitter.com).

Yer loike sh*t in a field! (www.twitter.com).

Այս բարբառային տարբերակում, ինչպես տեսնում ենք, դու և դուք անձնական դերանունները ևս իրացվել են առանձին դերանվանական միավորներով: Ինչպես գրական անգլերենում, այս բարբառում ևս եռանդամ թվի, հոլովի և սեռի քերականական կարգերը ևս որոշակիորեն տարբերակված են: Յորքշայրյան առցանց բառարաններում (<http://www.silsden.net/yorkshiredialect/dictionary.htm#.Wk0cyIVlIU>) մեր կողմից կատարված ուսումնասիրությունների ընթացքում խնդիր անձնական դերանունների հարացույցում մենք զուգաձևություններ չենք նկատել:

Անդրադարձ դերանունները երկբաղադրիչ են, զուրկ հոգնակիակերտ վերջավորություններից: Եզակի և հոգնակի թվում երկրորդ բաղադրիչը միատարր է և կազմվում է sen արմատի օգնությամբ՝ mysen Yoursen, thissen, hissien, hersen, itsen, oursen, yoursen, theirsen:

Get **yoursen** a ugly girl we can...(www.facebook.com).
 No Diddy, bad Diddy, your gonna get **yoursen** in trouble ladd...
 (www.twitter.com)
 If I don't pass my driving test next month I'm deffo gunna kill
mysen (www.twitter.com).
 Can't believe a feminist is enjoyin **hersen**...(www.twitter.com)
 Only in Benidorm does a lass shove a baseball bat up **hersen**
 (www.twitter.com).
 #Blade appeared in #Hull. Had a gander. Reight good. Did tha see it
thissen (www.twitter.com).
 Na'then get **thissen** dahn t'Boat Inn an' celebrate...(www.twitter.com).

Շոտլանդական անգլերեն

Էթնիկ և տարածական բարբառների մի յուրօրինակ համադրություն է ներկայացնում շոտլանդական անգլերենը: Թերևս պետք է նշել, որ Շոտլանդիայում մի կողմից գործածում է շոտլանդական գաեղերենը, իսկ մյուս կողմից անգլերենը, որոնք ժամանակին զուգընթաց մշտապես փոխազդեցության մեջ են: Ինչպես նշում է Վ. Ներոլդովան՝ գրական շոտլանդական անգլերենը բնորոշվում է որպես գրական անգլերենի ձևափոխված տարբերակ, որով խոսվում են Շոտլանդիայում⁴⁰: Այս բարբառում դերանվանական համակարգը նույնպես դրսևորում է վարիացիոն իրողություններ: Այսպես, բառային մակարդակում անձնական դերանունները իրացվում են հետևյալ կերպ՝ Ah You He, she, -- - we Ye, youse, yi They

Ah will pray for you then you will pray for me ok rate me jareh.....
 (www.facebook.com)

...it is going to be boom **ah** mean the sound...(www.facebook.com)

#Mama **ah** think ah will b needing yhur paryer"(www.facebook.com).

Do **youse** mind if we finish Stevo off with the tribute that he deserves?(www.reddit.com)

Dis is proof I'm a lawyer. WHAT? **YOUSE** SAYIN' DIS IS FAKE!?
 HUH!? (www.reddit.com)

The geographically isolated **Yi** have retained their language and tradition (www.twitter.com).

⁴⁰ https://theses.cz/id/waoaqn/Neroldova_BC.pdf

Yi added in his meeting with Washington Friday,"Dude, I told them. Chill with the rocket shit (www.twitter.com).

ye all games **are** boring :(like no motivation to play them anymore or edit them anymore :((www.twitter.com).

"Many **are** the .tarrs I see // but in my **ye** no starr like thee" (www.twitter.com).

Ինչպես նկատում ենք, թվի քերականական կարգը լիովին արտահայտվել է առանձին բառային միավորներով, այսինքն տարահիմք է, իսկ սեռի քերականական կարգում որոշակիորեն չի տարանջատվում չեզոք սեռը: Մյուս երկու քերականական կարգերը հստակ տարբերակված են: Խնդիր անձնական դերանունների հարացույցում միակ վարիացիոն իրողությունն արտահատվել է երրորդ դեմք եզակի թվում, որն արտահատվել է երկու բառային միավորներով՝ heem, er:

Գրական շոտլանդական անգլերենում հետաքրքիր ձևաչափեր են զարգացել նաև անդրադարձ դերանունների հարացույցում՝ առաջին բաղադրիչը կազմված է ստացական դերանուններից առանց որևէ փոփոխության, իսկ որպես երկրորդ բաղադրիչ գործածվում է sel արմատը: Սակայն, ի տարբերություն մյուս տարբերակների, շոտլանդական անգլերենի անդրադարձ դերանունների հոգնակի թիվը կազմվում է գոյականին ներհատուկ s մասնիկի հավելմամբ՝ masel, yersel, hissel, hersel, itsel, oorsels, wirsels, yersels, thirsels⁴¹

managed to walk fine all day and just went to the shop and back within 15 minutes proud ae **masel** (www.twitter.com).

am howling at **masel** (www.twitter.com).

Did **ye** pack yer bags **yersel**? (www.reddit.com).

'Haw, get **yersel**' away' Watch Scottish guardsman shout at dancing tourist in London (www.reddit.com).

...the weemen and go for a few **oorsels** #lads (www.twitter.com).

Example; Trainspotting. "... and relationships tae delude **oorsels** that it isnae aw totally pointless"(www.twitter.com).

He doesnae say "ourselves" he says "**wirsels**", why are your subtitles changing him into standard English? (www.twitter.com)

A doot we'r seein **wirsels** as ithers see us no Anni (www.twitter.com).

⁴¹ <http://www.scotsdictionaries.org.uk/Scots/Grammar/Pronouns.html>

Aontaich le ar n-uile-chridhe paid to spread fear and caw **thirsels** a chartiy#LullabyTrust equals #UnTrustworthy (www.twitter.com).

Aye dinnae let them pull the wool o'er yer een they are only interested in **thirsels** (www.twitter.com).

Եվ, այսպիսով ամփոփելով, ներկայացված նյութը, մենք կարող են պնդել, որ ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում շրջանառվող անձնական և անդրադարձ դերանունների բարբառային տարբերակներին ներհատուկ են ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Այսպես, ներկայացված բոլոր բարբառներում «դու և դուք» դերանուններն իրացվում են առաձին բառային միավորների միջոցով, այսինքն՝ տարահիմքությամբ: Արևմտյան հետազոտող Ռ. Հիկին, անդրադառնալով գրական անգլերենում «դու և դուք» դերանվանական միևնույն բառային միավորի իրացման խնդրին, նշել է, գրական անգլերենն այն ընդունել է առանց որևէ թերապևտիկ փոփոխության, մինչդեռ աշխարհի բոլոր անկյուններում անգլերենի խոսվածքները փոփոխել, փոխառել կամ լեզվում առկա միջոցներով պակասը լրացրել են⁴²:

Մեր դիտանկյունից, ի վերջո, «դու» և «դուք» դերանվանական շեղումները փոփոխության կենթարկեն ժամանակակից անգլերենի անձնական դերանունների համակարգն, ինչի արդյունքում «դու» և «դուք» դերանունները գրական անգլերենում ևս կիրացվեն առանձին բառային միավորների օգնությամբ:

Ուսումնասիրված բոլոր խոսվածքներում թիվն ունի երկու կարգ: Որոշ բարբառներում թերի է արտահայտվել սեռի քերականական կարգը: Սակայն, ի տարբերություն այդ հանգամանքին, այդ բարբառներում առկա է առման քերականական կարգը: Դեմքի քերականական կարգում որևէ փոփոխություն չկա, այն եռանդամ է բոլոր բարբառներում:

Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիա տիրույթում հաճախակի կարելի է հանդիպել նաև այնպիսի բարբառային գրառումների, որտեղ խնդիր անձնական դերանունները և անդրադարձ դերանունները հակադարձ շարահյուսական պաշտոններ են ստանձնում: Շարահյուսական պաշտոնների փոխարինելիություն նկատվում է նաև

⁴²[https://www.unidue.de/~lan300/09_Rectifying_a_Standard_Deficiency_\(Hickey\).pdf](https://www.unidue.de/~lan300/09_Rectifying_a_Standard_Deficiency_(Hickey).pdf)

ենթակա անձնական դերանունների և ստացական դերանունների հարացույցում:

Բարբառային միտումները բազմազան են նաև անդրադարձ դերանունների հարացույցում: Այնուհանդերձ ինչպես գրական անգլերենում, անգլիական բարբառների ճնշող մեծամասնությունում ևս անդրադարձ դերանունները երկբաղադրիչ են: Առաջին բաղադրիչը կարող է կազմված լինել ինչպես ստացական, այնպես էլ անձնական դերանուններից: Երկրորդ բաղադրիչը որոշ բարբառներում միատարր է և՛ հոգնակի, և՛ եզակի թվում, իսկ որոշ բարբառներում՝ ոչ:

Այսինքն, թվի քերականական կարգում որոշ բարբառներում նկատվում է միասնականացում, հոգնակի թվի ներիմաստն ամրակցվում է առաջին բաղադրիչին: Մեր դիտարկմամբ, այս լեզվական իրողությունն ինքնին ենթադրում է, որ մոտ ապագայում անդրադարձ դերանունները եզակի և հոգնակի թվում կունենան միաձև կազմություն: Դեմքի քերականական կարգը, որպես կանոն, եռանդամ է:

Անձնական և անդրադարձ դերանունների բարբառային տարբերակների ներկայացման համատեքստում կարևոր է ևս մեկ անգամ ընդգծել այն փաստը, որ ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում անձնական և անդրադարձ դերանունների բարբառային տարբերակները շրջանառվում են անհամաչափ: Վերջիններիս վերածնավորման և հետագա զարգացման միտումները միանշանակ օգտատերերի ինտենսիվ գործածումից է կախված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Eisenstein J. Identifying regional dialects in online social media, 2014 Available at: <https://www.cc.gatech.edu/~jeisenst/papers/dialectology-chapter.pdf>
- 2, Erbanová P. The Intelligibility of the Geordie Dialect Bachelor's Diploma Thesis, 2011. Available at: https://is.muni.cz/th/262661/ff_b/Geordie_dialect_BP.pdf
3. Ezgeta M. Internal Grammatical Conditioning in African-American Vernacular English, Maribor International Review, Vol. 5, No 1 (2012)
4. Green L. African American English: a linguistic introduction, Cambridge, Cambridge University Press, 2002
5. Frank D. Gullah Grammar Sketch: SIL International Available at: / http://www.dbfrank.net/papers/gullah_grammar_sketch.pdf

6. Rickford J. R., African American Vernacular English: Features, evolution, educational implications. Malden, MA: Blackwell, 1999.

7. <http://englandsnortheast.co.uk/GeordieDictionaryu-z.html>

8. <http://www.scotsdictionaries.org.uk/Scots/Grammar/Pronouns.html>

9. www.facebook.com

10. www.twitter.com

11. www.tumblr.com

12. www.reddit.com

ГЕВОРГ ГРИГОРЯН- ДИАЛЕКТНЫЕ ВАРИАНТЫ ЛИЧНЫХ И ВОЗВРАТНЫХ МЕСТОИМЕНИЙ В СОВРЕМЕННОМ АНГЛОЯЗЫЧНОМ СОЦИАЛЬНОМ МЕДИАПРОСТРАНСТВЕ

Данная статья посвящена изучению диалектных вариантов личных и возвратных местоимений в современном англоязычном социальном медиапространстве. Некоторые диалектные варианты личных и возвратных местоимений, характеризующиеся частотой употребления в различных социальных медиапространствах, расширили границы своего применения, в то время как другие все еще ограничены в их применении пользователями определенного сообщества. Подобные отличающиеся варианты, которые расширили сферу своего применения, в случае активного употребления могут проникнуть в литературный язык и стать нормой и закономерностью, в результате чего литературный язык подвергнется изменениям.

GEVORG GRIGORYAN -PERSONAL AND REFLEXIVE PRONOUN DIALECT VARIANTS IN THE DOMAIN OF CONTEMPORARY ENGLISH SOCIAL MEDIA

The following article is devoted to the study of personal and reflexive pronoun dialect variants in the domain of contemporary English social media. Today, in different platforms of social media communicators make use of many pronominal dialect invariants and non-standard spellings. Among them certain dialect invariants of personal and reflexive pronouns have expanded the limits of their use at a dramatic rate, whereas others are still restricted by the community speaking in a particular territory. In case of active use those dialect variants which have widened their usage in different platforms of social media may penetrate into literary language and become language norm, as a result of which literary language will be structurally changed.

**ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՉՎԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԹԵ՛ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊՃՆԱՄՈԼՈՒԹՅԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔ**

ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ բառամիավոր, պատճենում, համարժեքների զույգ, համադրում, հարանշանակություն, ազդեցություն, ամրագրում, օտարաբանություն

20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարասկզբին նորաբանությունների կազմության արդյունավետությունը ֆրանսերենում նկատելի է երեք հիմնական եղանակների միջոցով՝ բառիմաստի փոփոխություն, բառակազմություն լեզվում գոյություն ունեցող բառերի և ձևայինների հիման վրա և փոխառություն կամ պատճենում:

Փոխառությունների ներմուծումը ֆրանսերեն այսօր կարծես դիմադրության է հանդիպում: Լեզուն առաջին հերթին փոխառում է ոչ թե հոմանիշներ, այլ նոր բառեր՝ նոր իրողություններին անվանումներ տալու համար՝

- e-mail m. – էլեկտրոնային փոստ (անգլ),
- blitzkrieg m. – այծակնային պատերազմ (գերմ.),
- airbag m. – զսպաբարձիկ (անգլ.) և այլն:

Ֆրանսերենի բառապաշարի համալրմանը հետևող հատուկ մարմինները, մասնավորապես Ֆրանսիական Ակադեմիան, օտար բառամիավորների դիմաց առաջարկում են ֆրանսերեն համարժեքներ, որոնց մի մասը ընդունվում է հանրության կողմից.

- broker m. – courtier
- fast - food m. – prêt à manger
- jingle m. – sonal
- software m. – logiciel
- tie - break m. – jeu décisif և այլն:

Սակայն քիչ չեն դեպքերը, երբ ֆրանսերեն համարժեքի առաջընթացումը արհեստական բնույթ է կրում:

Նորաբանությունների, հատկապես հոմանիշային նորաբանությունների առաջացման վիճարկելի աղբյուրներից է

փոխառությունը: Մենք դիտարկում ենք միայն բուն փոխառությունները՝ բացառելով փոխառված ձևայիններով, հնչյուններով կամ հնչյունային կապակցություններով կազմված բառերը: Մյուս կողմից, մենք այս շարքում դիտարկում ենք նաև կրկնակի փոխառված բառեր՝ սկզբում ֆրանսերենից անգլերեն՝ ապա հակառակը: Այս բառերը քննում ենք փոխառությունների շրջանակում, քանի որ վերադառնալով ֆրանսերեն, վերջիններս որոշակի հնչյունաբանական և իմաստաբանական փոփոխությունների են ենթարկվել: Ֆրանսերենը որոշ բառեր փոխառել է տարբեր, այդ թվում նաև հազվագյուտ լեզուներից (օրինակ, ամերիկյան հնդիկների լեզվից) մեկ այլ լեզվի միջոցով: Այսպիսով, ներկայացված են փոխառության բոլոր երեք ճանապարհները՝ ուղղակի, անուղղակի (միջնորդ լեզվի միջոցով) և ըստ «անդ ու ետ» կամ «երթուդարձ» բանաձևի:

Հենց փոխառությունները, հատկապես անգլերենից, ֆրանսիական լեզվական հասարակությանը բացասաբար են տրամադրում նորաբանությունների նկատմամբ: Նորաբանությունների հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտել, թե երբ է փոխառությունը լեզվի և հասարակության բնական զարգացման կամ՝ նորաձևության ու պճնամոլության հետևանք: Փոխառություններով համալրված հոմանիշային շարքերը կազմվում են երկու ճանապարհով՝

1. Նոր իրականության և նրա օտար անվանման դեպքում Ֆրանսիական Ակադեմիան առաջարկում է հոմանիշ, որը ստեղծվում է առկա ֆրանսերեն բառերի և ձևայինների հիման վրա [Walter 2000:50-51]: Օրինակ՝

after-shave m. – après-rasage m. – սափրվելուց հետո գործածվող հեղուկ կամ քունկ,

brain-storming m. – remue-méninges m. – ուղեղային «գրոհ»,

pin's m. (կեղծ անգլիաբանություն) – épinglette f. – գնդասեղ,

kitchenette f.– cuisinette f. – փոքրիկ խոհանոց և այլն:

Ֆրանսերեն համարժեքների մի զգալի մասը անգլերեն բառամիավորների պատճենումներն են: Սակայն ոչ բոլոր առաջարկված բառերն են հաջողված: Այդ դեպքում կարող են պահպանվել երկուսը, կամ միայն փոխառությունը:

2. Հոմանիշային շարքերը կազմվում կամ համալրվում են օտար բառի փոխառությամբ, երբ արդեն առկա է վերջինիս ֆրանսերեն համարժեքը: Այսօր նմանատիպ փոխառությունները անգլերենից իմաստակիր չեն և առաջանում են միայն նորաձևության ազդեցությամբ:

Մեծամասնություն են կազմում անգլերենից փոխառությունները: Այս գործընթացը սկսվել է դեռևս 19-րդ դարում Մեծ Բրիտանիայի տնտեսական և քաղաքական կայունացման հետևանքով, իսկ 20-րդ դարում ակտիվացել է ԱՄՆ-ի արագ զարգացման և կյանքի բոլոր ոլորտներում ամերիկյան ազդեցության տարածման պատճառով: 20-րդ դարի փոխառությունները յուրահատուկ են, հատկապես իրենց թեմատիկ դասակարգմամբ: Հոմանիշներից զուրկ են տեխնիկական, ինչպես նաև գիտական ոլորտներին վերաբերող փոխառությունները:

Անգլիաբանությունները կամ ամերիկաբանությունները հոմանիշային շարքեր են կազմում ժամանակակից երիտասարդության լեզուն բնութագրող բառապաշարի շրջանակներում (կենցաղ, երաժշտություն, հետաքրքրություններ, թմրանյութեր և այլն)`

job m. – travail, boulot – աշխատանք,

break m. – pause – ընդմիջում,

caller v.t. – téléphoner – զանգահարել,

flasher v.i. – s'éprendre – սիրահարվել,

happening m. – spectacle – ներկայացում,

shit m. – drogue – թմրանյութ,

junkie f. – drogue, toxicomane – թմրամոլ,

cool adj. – excellent – գերազանց:

Նման փոխառությունները մեծամասամբ ֆրանսերեն համարժեքների զույգեր են, որոնք հավելյալ իմաստային կամ ոճական հատկանիշներով օժտված չեն: Ավելի շատ են գնահատողական երանգով օժտված հոմանիշները, որոնք բնութագրում են մարդուն, առարկան կամ իրավիճակը.

glamour m. – charme sophistiqué – շինծու, անբնական հմայք՝ հրապույր,

out adj. – ringard – հնաոճ, նորածնությունից դուրս (ներկայացումների, նորածնության մասին):

Հետաքրքիր է անգլո-ամերիկյան փոխառությունների ծագումնաբանությունը: Գրեթե բոլոր բառերը կարելի է բաժանել երկու խմբի՝ ամերիկյան սլենգից առաջացած փոխառություններ (top adj., addict adj., straight adj.) և ժամանակակից գործարար խմբերի մասնագիտական ժարգոնի փոխառություններ, որոնք ժամանակակից կյանքի ազդեցության տակ դառնում են համընդհանուր բառապաշարի մի մասը: Ընդհանուր է այդ բառերի մեջ այն, որ վերջիններս օտարաբանություններ (քսենիզմներ) են, քանի որ դրանց անգլո-ամերիկյան հնչեղությունը raison

d'être է, այսինքն՝ գոյության իմաստը, հիմնավորումը: Առաջին խումբն ընդգրկում է հոմանիշների մեծամասնությունը, որոնք արագ փոխարինում են իրար և երկար չեն գոյատևում լեզվում: Դրանց մեծամասնությունը գործածվում է լեզվին հնչեղություն հաղորդելու նպատակով և կամ զուտ որպես նորաձևություն կամ ցուցամոլության դրսևորում: Երկրորդ խմբի բառերը՝ փոխառված «գործարար անգլերենից», նույնպես առանձնանում են իրենց հարանշանակությամբ, ինչը մեծ մասամբ առաջանում է օտար բառի արտասանության կամ գրության ազդեցությամբ:

Բիզնեսի անգլո-ամերիկյան կաղապարը (նմուշը) աշխարհի համար օրինակ է ծառայում և իր հետքն է թողնում նաև լեզվի վրա: Այս գործընթացը ֆրանսիացիների կողմից ընդունվում է բացասաբար, քանի որ տվյալ համատեքստում դուրս է մղվում հենց ֆրանսերեն հոմանիշը (հոմանիշները)՝

manager v.t. – diriger, administrer, conduire, gérer, organiser,

coacher v.t. – diriger (une équipe, un sportif),

briefier v.t. – informer collectivement, mettre au courant:

Հենց այս բառերն են մտահոգություն առաջացնում, քանի որ լրացուցիչ ոչ մի պարզաբանում կամ ճշգրտում չեն ավելացնում: Պ. Մերլի "Le prêt-à-parler" աշխատության մեջ ծաղրանկարով է ներկայացվում այս փաստը՝ "Excuse-me sir, parlez-vous anglais?": Պատասխանը՝ "Oui, dans quelle langue?" [Merle 1999:126]:

Ֆրանսիական Ակադեմիան, գրական ֆրանսերենի ջատագովները պայքար են մղում անգլո-ամերիկաբանությունների դեմ՝ առաջարկելով տարբեր լուծումներ, արտասանության կամ գրության փոփոխություններ, ֆրանսահունչ համարժեքներ:

Այս պայքարը արձանագրված է նաև ֆրանսերենի և երկրագիտության դասագրքերում: Որպես օրինակ կարող ենք նշել Les Français. Mentalités et comportements-ի հեղինակի [Mauchamp 2001] կողմից կազմված ձեռնարկներից մեկում տեղ գտած վարժությունը՝ "Chassons le franglais! Dans le texte ci-dessous il y a des mots qui sont empruntés à l'anglais. Certains sont tellement entrés dans les habitudes qu'il paraît difficile de les abandonner. D'autres peuvent facilement être remplacés par des équivalents à prendre dans la liste des mots qui suit:

Pierre, un crack d'informatique, avait eu une semaine hard. Son patron lui avait annoncé un scoop, il était proposé pour un poste de manager. Il était ravi, mais cela supposait pour les mois à venir un challenge difficile à

tenir... Pour ne pas sombrer dans le blue, il avait décidé de s'accorder un break en passant un samedi cool: le matin, un petit footing en bois pour se mettre en forme, puis déjeuner dans un fast-food, ensuite un film avec sa star préférée et enfin un peu de shopping pour acheter quelques CD. Pour la soirée, il hésitait entre la party où il était invité et un club très smart dont on lui avait parlé. Ses collègues auraient été surprises de voir son look du week-end: un jean, des boots, et un walkman sur les oreilles.

Անգլերեն փոխառությունները ամրագրվում են ֆրանսերենում այն դեպքում, երբ վերջիններիս իմաստային կառուցվածքում կա հասկացության կամ հարանշանակային նոր տարր՝ ֆրանսերեն հոմանիշի համեմատությամբ: Պ. Մերլի Dictionnaire du français branché բառարանում flasher բառը հետևյալ կերպ է բացատրվում՝ “Version de drogue de “avoir un coup de foudre”: 20-25 տարեկան ֆրանսիացիների կողմից կազմված մատյանում նույն բառը բացատրվում է հետևյալ կերպ՝ “craquer pour զո. Ne voir que lui. On l'utilise beaucoup car il y a moins de sentiment que dans craquer pour զո”: Որոշ փոխառություններ դուրս են մղվում ֆրանսերեն հոմանիշի կողմից, օրինակ՝ manager m. բառն այսօր ժամանակակից ֆրանսիացիների կողմից ընդունվում է որպես հնացած, որն իր տեղն է զիջում ֆրանսերեն gérant – կառավարիչ կամ responsable – պատասխանատու բառերին: Իսկ մյուսները, որոնք հաջող են, ընդունվում են որպես ֆրանսերեն բառեր (label m. – étiquette – պիտակ):

Այսուհանդերձ ֆրանսերեն հոմանիշային նորաբանությունների դեպքում այս հարցը դժվար է լուծվում: Անգլո-ամերիկյան օտարաբանության կամ ֆրանսերեն համարժեքի գործածումը մեծամասամբ կախված է խոսողի կամքից, ինչպես նաև հաղորդակցման համատեքստից: Ընդօրինակելով անգլո-ամերիկյան բիզնեսի հաղորդակցական ոճը, որոշ ֆրանսիացիներ գիտակցաբար խոսում են «ֆրանսանգլերենով» (franglais) : Ուրիշներն էլ, մերժելով այն ամենն, ինչ վերաբերում է ԱՄՆ-ին ու անգլո-սաքսոնական մշակույթին, նախընտրում են մեկ այլ ծայրահեղություն ու իսպառ մերժում են անգլերեն փոխառությունները: «Ոսկե միջինի» փնտրտուքը, ըստ էության, միտված է ֆրանսիական լեզվաբանության ավանդույթների ու ժամանակակից միջազգային կյանքի ոճի համադրմանը:

Այլ են մյուս լեզուներից փոխառությունները: Անհրաժեշտ է հաշվի առնել այդ բառերի առաջացման սոցիալական պայմանները: Արաբերենից ու գնչուերենից ցածր ոճի բառեր են փոխառվում գաղթականների, աշխատավորների, առանց մշտական ապրելավայրի

մարդկանց խոսքի միջոցով: Գնչուների՝ քաղաքականության մեջ դրական հարանշանակությամբ օժտված անվանումն է *les gens de voyage*: Այդ լեզվից բոլոր փոխառությունները ցածր ոճի են: Ընդ որում՝ գնչուերենից փոխառված բառերը հիմնականում վերաբերում են քրեական ոլորտին՝

marave v.t. – *tuer* – սպանել,

natchaver – *s'évader* – փախչել,

chourave v.t. – *voler* – գողանալ, թոցնել,

bédi m. – *policier* – ոստիկան,

իսկ արաբերենից փոխառությունները՝ ոսասյական պատկանելությանը,

bougoul m., *mohammed* m. – *arabe* m. – արաբ,

ինչպես նաև կենցաղին.

cagna f. – *maison* – տուն:

Ի տարբերություն անգլո-ամերիկյան փոխառությունների, այստեղ պճնամոլության (սնորհգմի) մասին խոսք չկա: Այս բառերի գործածությունը մի քանի նպատակ ունի. «բարգավաճող» Ֆրանսիայի մյուս մասին հակադրվելու, ծածկաբանական գործառույթն իրականացնելու, ինչպես նաև ինքնահաստատման՝ սեփական մշակույթի հետ կապը պահելու ձգտում: Հետաքրքիր է, որ առաջին նպատակը հակառակ արդյունք է տալիս՝ նույնիսկ ապահովված ընտանիքներից երիտասարդներ փոխառում են այդ բառապաշարը, իսկ ապրելաճը, երաժշտությունը, հետաքրքրությունները դառնում են առօրյա կյանքի անբաժանելի մասնիկը:

Վերլուծականության (հարադրականության) վառ օրինակներ են խոնարհվող բայերը, որոնք վերջանում են *-ave* (*-are*) *-ով*՝ փոխառված գնչուերենից՝

marave v.t. – *frapper, tuer* – սպանել, ծեծել, թակել,

mouquave v.i. – *se taire* – լռել,

poukave v.t. – *rapporter* – կրկին բերել, վերադարձնել,

pouillave v.t. – *taper* – տպել, տպագրել,

bedave v.t. – *fumer* – ծխել, ծխալ,

bicrave, chourave v.t. – *voler* – գողանալ, թոցնել

damare v.i. – *pleurer* – հեկեկալ և այլն:

Վերջիններս խոնարհման ժամանակ պահպանում են իրենց ձևը թվի և դեմքի քերականական կարգերում, սակայն օժտված չեն համադրականությամբ ժամանակի և եղանակի քերականական

կարգերում: Ժամանակը արտահայտվում է բառային միջոցներով, բարդ ժամանակները կազմվում են avoir բայի միջոցով (J'ai marave):

Գերմաներենից փոխառված բառերը վերաբերում են տարբեր բնագավառների՝ հետաքրքրություններ (kino m. – cinema – կինոթատրոն), (schnouffe f. – drogue – թմրադեղ, հերոին), ինչպես նաև ազգային պատկանելություն՝ բացասական հարանշանակությամբ (youde m., schmoutz m. – Juif – հրեա): Գերմաներենից փոխառությունները պահպանում են իրենց յուրահատուկ գրությունը՝ schproum m., benzene f., stuc m., strasse f. և այդ պատճառով էլ միշտ ընկալվում են որպես օտար բառեր:

Հետաքրքիր է Գ. Վալթերի հետազոտությունը այն մասին, որ 1987 թ. բոլոր նորաբանությունները փոխառված են անգլերենից, իսկ 1994 թ. հայտնվում են փոխառություններ արաբերենից ու գերմաներենից՝ չնայած անգլերենը դեռ պահպանում է իր առաջատար դիրքը [Walter 1992:79]:

Այլ լեզուներից փոխառությունները իտալերենից, իսպաներենից, ֆլամանդերենից, ռուսերենից են:

Որոշ փոխառություններ արժեքավոր են, օրինակ՝ tchatche f. (իսպաներենից), որը արվարձանային լեզուն է բնութագրում: Վերջինս, դառնալով parole-խոսք բառի հոմանիշը, առաջ է բերել նույնարմատ բառեր (tchatcher, tchatcheur): Macho m.-ն հոմանիշային շարք է կազմել phallocrate, sexiste բառերի հետ և լայն տարածում ստացել:

Իտալերենից փոխառությունների շրջանակներում կարելի է նշել ciao (tchao) – ողջույն բառը, որը հայտնի է սոցիալական բոլոր մակարդակներում և տարիքային բոլոր խմբերում:

Fransquillon m. – փոխառություն ֆլամանդերենից՝ բացասական հարանշանակությամբ (բելգիացի, որը կոտրատվելով ֆրանսերեն է խոսում փարիզյան առոգանությամբ):

Ռուսերենից քիչ են փոխառությունները (օրինակ՝ popof, որը մատնանշում է ազգային պատկանելություն՝ ռուս):

Եվ այսպես, նյութական և հոգևոր իրականության մեջ առկա մշտական փոխազդեցությունը, ժամանակակից կյանքի օրենքները ստիպում են նաև ֆրանսերենին մասնակից դառնալ այդ ամենին: Այդուհանդերձ, հոմանիշային նորաբանությունների շրջանակներում փոխառություններն ամենից շատ են վեճեր առաջացնում: Ֆրանսերեն հոմանիշն ավելի հաջող է հենց միայն վերջինիս ծագման պատճառով: Փոխառության գործածությունը մեծամասամբ կախում ունի ոճական կամ

արտալեզվական գործոնից՝ հաղորդակցման համատեքստից, հաղորդակիցների սոցիալական պատկանելությունից:

Փոխառությունների մեծ մասի համար ընդհանուր հատկանիշ կարելի է համարել վերջիններիս օտարածին բնույթը: Մի կողմից, դա կապված է փոխառությունների առաջացման ժամանակաշրջանի հետ (վերջիններս դեռ չեն հասցրել հարմարվել փոխառու լեզվում), մյուս կողմից, որոշակի թվով օտարաբանությունների պահպանման միտումով, որը պայմանավորված է պճնամոլությամբ, ազգային ինքնագիտակցության կորստով, նորածն երևալու ցուցամոլությամբ: Ֆրանսիացիների մտահոգությունը տեղին է: Անգլերենն իր ազդեցությունն է թողնում ֆրանսերենի վրա ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի ձևով: Ֆրանսիական Ակադեմիայի կողմից առաջարկվող ֆրանսերեն համարժեքները հաճախ փոխառում են անգլիաբանությունների ներքին ձևը, այսինքն՝ բառակազմական և իմաստային պատճենումներ են: Առավել մեծ վտանգ է ներկայացնում անգլիաբանությունների այս թաքնված ազդեցությունը: Որոշ ֆրանսերեն բառեր փոխում են իրենց իմաստը նմանատիպ անգլիաբանությունների ազդեցության տակ՝ *choquer* v.t. բառը դադարում է գործածվել որպես *offusquer* v.t - վիրավորել, դուր չգալ բառերի հոմանիշ և ինչպես ժամանակակից անգլերենում սկսում է նշանակել «վերանայված, նորովի լուսաբանված, վերամեկնաբանված»: *Nominé* - ն դուրս է մղում *sélectionné* - ընտրված - ին: Վերջինս առաջին անգամ գործածվել է Ռ. Շնայդերի կողմից [Merle 1999: 36]:

Այսուհանդերձ, ինչպես և ցանկացած այլ երևույթ, փոխառությունը չի կարելի դիտել միայն որպես բացասական երևույթ: Օրինակ, անգլերենի ազդեցությամբ ակտիվանում են ֆրանսերեն որոշ մոռացված բառեր: Որոշ «վերականգնված» բառեր հաջող են, օրինակ՝ *relaxe* adj. (*calme, détendu* - հանգիստ), *environnement* m. (*milieu* - միջավայր) և այլն: Նկատելի է այս բառերի արագ ընկալում ողջ հանրության կողմից և վերջիններիս ամրագրում հատուկ բառարաններում: Իսկ դրանց հանրայնացումը հաստատող գլխավոր չափանիշը վերջիններիս մուտքն է ֆրանսերենի ընդհանուր բացատրական բառարաններ (*Le Robert, Larousse, Hachette* և այլն):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Garcia D., Malaurie G., Merle P., Rey A., Walter H. Tchatchez-vous céfran? Le Nouvel Observateur N°1771. P., 1998, pp. 4-13.
2. Guiraud P. Le français populaire. 5-e édition. P., PUF, 1986, 128p.
3. Guiraud P. Les gros mots. 4-e édition. P., PUF, 1991, 128 p.
4. Mauchamp N. Les Français. Mentalités et comportements. P., CLE International, 2001, 159 p.
5. Merle P. Le prêt-à-parler. P., 1999, 192 p.
6. Merle P. Argot, verlan et tchatches. Edition Milan, Toulouse, 2006, 64 p.
7. Mitterrand H. Les mots français. P., PUF, 1996, 128 p.
8. Walter H. Le lexique des très jeunes. Langue Française N°3, 1992, p. 32-80.
9. Walter H. Nous sommes trop timides. Lire N°4, 2000, pp.50-52.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Աղայան Է. Արդի Հայերենի Բացատրական Բառարան, Երևան, 1976, 1641 էջ:
2. Բարլեզիզյան Ա. Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, 2009, 976 էջ:
3. Իսլղաթյան Ֆ. Ոճաբանական բառարան, Երևան, 2000, 188 էջ:
4. Նազարյան Ա. Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, 1993, 655 էջ:
5. Սուքիասյան Ա. Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան 2009, 1242 էջ:
6. GLLF. Grand Larousse de la Langue Française. Sous la direction de Guilbert L. P., Larousse, 1986, 1988 p.
7. Robert P., Rey A. Le Grand Robert de la langue française: Dictionnaire alphabétique et analogique de la langue française. P., 1980, 1989, T. 1-9.
8. Robert P., Rey. A., Rey-Debove J. Le Nouveau Petit Robert. Dictionnaire alphabétique et analogique de la langue française. P., 2010, 2552 p.
9. Seguin B., Teillard F. Les Céfrans parlent aux Français. P., 1996, 230 p.

ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ՎԱՅՔԵՐ

1. Dictionnaire des Synonymes du CRISCO; (DES, <http://www.crisco.unicaen.fr/cgi-bin/cherches.cgi>)
2. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24>
3. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=25>

АСМИК ГРИГОРЯН- ЛЕКСИЧЕСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ: НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ РАЗВИТИЯ ЯЗЫКА ИЛИ СЛЕДСТВИЕ ЯЗЫКОВОГО СНОБИЗМА И ДАНЬ МОДЕ

Начало XXI века обогатило современный французский язык лексическими заимствованиями, маркирующими молодежный дискурс и характеризующимися большим тематическим разнообразием.

Англицизмы или американизмы, составляющие синонимические ряды встречаются в основном в научно-технической литературе. Язык заимствует не только синонимы, но и слова, отражающие новые факты и явления действительности.

В целом, заимствования рассматриваются нами как положительное явление так как при воздействии английского активизируются и наполняются новым семантическим содержанием некоторые забытые слова французского языка.

Заметно, что неологизмы быстро усваиваются социумом и закрепляются в словарях.

HASMIK GRIGORYAN-BORROWINGS AS A CONSEQUENCE OF NATURAL EVOLUTION OF LANGUAGE AND SOCIETY OR A CONSEQUENCE OF FASHION AND SNOBBERY

The borrowings incorporated into the French language at the beginning of the 21st century are unique especially in their thematic classification. Borrowings from the British or American English (Americanisms) constitute a part of synonymous lexicon of modern youth. To name new realities French first of all borrows not only synonyms but also the new words.

Borrowings should not be merely viewed as negative phenomena. Under the influence of English some of the previously forgotten French words have been activated. The rapid adoption of neologisms by the whole community and their inclusion in relevant dictionaries is noteworthy. The main criterion for their publicity and wide use is their access to general explanatory dictionaries.

**СТРУКТУРНЫЕ И ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ РОМАНА Д.ФАУЛЗА
«ДЭНИЕЛ МАРТИН»**

КАРИНЕ ГУЛАНЯН

Ключевые слова: Фаулз, Дэниел Мартин, роман, структура, жанр, идея

Роман «Дэниел Мартин» написан Фаулзом в 1977 году и в известной степени является первым романом нового, зрелого этапа его творчества. Это седьмая из написанных им книг и его пятый роман. Латвийский ученый В.Фрейбергс считает, что в «Дэниеле Мартине» происходит возврат к реалистической манере изложения, свойственной первому роману писателя. Роман этот с одинаковой уверенностью можно назвать и интеллектуальным, как характеризовал данный тип романа Т.Манн, и психологическим. В нем гораздо больше ясности и непосредственности. Сюжетная линия тоже проста и играет менее важную роль, чем в предыдущих романах. Как в произведениях поздних английских просветителей, сюжет второстепенен, по сравнению с теми философскими проблемами, которые ставятся в романе.

Композиционно роман можно поделить на две части: все, что имело место до совместной поездки Дэниела и Джейн по Нилу, которую он предложил в надежде помочь ей развеяться после смерти мужа, и само путешествие, являющееся заключительным этапом поисков героем самого себя, и вторая часть - все, что случилось после. Таким образом, тема путешествия вновь становится одной из ведущих тем романа. Путешествие или дорога являются символами жизни не только в английской, но и в мировой литературе. В данном романе они символизируют начало новой жизни.

Роман представляет собой сложную структуру: уже написанный и одновременно с этим находящийся в процессе создания роман. Некоторые части этого романа как бы написаны героем, другие - автором. Несколько глав представляют собой письма подруги Дэниела Мартина, Дженни. Лица, ведущие повествование, могут сменять друг друга в пределах главы, параграфа и даже предложения. Грамматические времена тоже меняются в зависимости от лица и возраста рассказчика.

«Дэниел Мартин» - роман частично автобиографический, его главный герой - тоже писатель, драматург и сценарист, который хочет написать роман. Повествование сначала ведется от лица автора, то есть Фаулза, и местоимение «я» - это голос Фаулза, а «он» - Дэниел Мартин - литературный герой одноименного романа. Но затем «я» переходит в «он», и основную нарративную нагрузку берет на себя Дэниел. Фаулз рассказывает о событиях одновременно как бы с разных точек зрения и в разных временных проекциях. Только переходы из одной в другую не всегда четко разделены. Иногда они проходят в пределах одного предложения.

Главный герой романа Дэниел Мартин - профессиональный сценарист, работающий в Голливуде. Он пишет сценарии о Китченере, английском политическом деятеле начала XX века, который жил и работал в Египте. Дэниел не симпатизирует своему герою, и поэтому ему сложно писать. Но работу необходимо выполнить, и Дэниел придумывает интересный сюжетный ход: в фильме за основу будет взят период жизни Китченера, когда он был на вершине власти и в расцвете сил, а некоторые сцены будут нарушать течение времени и уносить зрителей в прошлое или будущее главного героя. Схема, положенная в основу сценария, является также основой всего романа. Точка зрения автора романа остается неизменной - показать нам судьбу английской интеллигенции после Второй мировой войны, но точка зрения Дэниела меняется в соответствии с его возрастом и приобретенным опытом. Но это наблюдение относится скорее к первой части романа, чем ко всему произведению в целом. Во второй части «Дэниела Мартина» сюжетная линия выравнивается, повествование становится линейным. В романе большое внимание уделяется размышлениям автора и персонажей о различных проблемах современности. «Дэниел Мартин» содержит исключительно богатый фактографический материал, и его действие охватывает период с начала 40-х годов до середины 70-х в жизни Англии и США.

Важную роль в этом произведении играет проблема восприятия жизни, природы и окружающих людей во всем их многообразии. Автор вместе со своим героем размышляет о месте человека в жизни, его позиции по отношению к различным общественным проблемам, к тому, как он сам оценивает свою жизнь. Проблема мировосприятия получает также дополнительное значение благодаря тому, что главный герой

романа – писатель. В «Дэниеле Мартине» мало внешнего действия, но много внутреннего движения, познания мира и себя, выяснения отношений с собой, друзьями, страной, природой и Богом. Природа вообще занимает очень важное место во многих произведениях Фаулза, но ни в одном его романе природа не играет такой значительной роли, как «Дэниеле Мартине». В начале романа природа представлена как убежище от людской жестокости и непонимания. Но постепенно в течение жизни главный герой приближается к обретению «цельного взгляда» на жизнь и природу, начинает понимать ее великую самоценность как универсального и единственно доступного нам творения Бога. Природу не обязательно понимать. Надо уметь ее чувствовать. И тогда он начнет относиться к ней не как к тайному, заповедному храму, в который можно сбежать от жизненных неурядиц, а как к самой жизни, постоянно изменяющейся, текущей. Он начинает принимать и понимать людей, которых раньше не понимал. В частности, это касается Джейн и Каро, его любимой женщины и дочери, которые раньше были для него неразрешимыми загадками. Полного понимания любимых людей, конечно, не наступает, но у Дэниела исчезает желание их изменять, перевоспитывать.

Мастерство писателя проявляется еще и в том, что, центральная идея романа «о цельном взгляде» подчиняет себе каждый из отдельных эпизодов и, несмотря на их обилие, роман не распадается на отдельные части.

Как мы уже упоминали, «Дэниел Мартин» – это роман одновременно интеллектуальный и психологический. Но его можно так же назвать романом – биографией, романом воспитания и романом поиска (quest novel), когда героям необходимо, отправившись в длительное путешествие в поисках возлюбленной или для помощи другу, найти свое место в жизни. А центральной темой романа являются их религиозные, нравственные и политические искания.

Роман дает нам подробную и широкую панораму жизни послевоенной Британии. Но при кажущейся эпичности, в нем «преобладает камерный стиль, и нет внешне изощренных приемов»⁴³.

⁴³ Фрейбергс В.Л. Творческий путь Джона Фаулза. Автореферат диссертации кандидата филологических наук. Рига. 1986. С. 20.

«Дэниел Мартин» - это в первую очередь роман идей. Каждый из персонажей является олицетворением той или иной идеи, образа жизни, социального типа. В то же время фаулзовские образы вовсе не ходульные схемы. Это воссозданные человеческие характеры, со своими специфическими чертами, особенностями и «пунктиками», в основе которых лежит определенная идея. Мысль о том, что у каждого человека должна быть своя особенная черта характера, восходит к мнению Л.Стерна, высказанному им в романе «Жизнь и мнения Тристрама Шенди, джентльмена».

Роман имеет форму воспоминаний и размышлений о своем детстве и юности известного кинодраматурга и писателя Дэниела Мартина. Перед нами проходят наиболее значительные этапы его жизни, когда ему предстояло совершить выбор между подлинной свободой и должной, с точки зрения общепринятой морали, формой поведения. И обычно в подобных ситуациях он предпочитал наиболее легкий выход. Так он дважды отказался от женщин, которых действительно любил. В ранней юности от Нэнси, а потом от Джейн.

Еще в философском сборнике афоризмов «Аристос» Д.Фаулз писал об опасности веры в загробную жизнь. Она может превратить людей в «египтян, хоронящих свое настоящее в пирамидах»⁴⁴. Таким образом Египет, по которому путешествуют Дэниел и Джейн, созвучен их душевному настрою. Он становится символом положения, когда человек лишь в прошлом или в будущем видит образец для подражания, а может, оправдание настоящему. Дэн выбирает не только между двумя женщинами, он выбирает между иллюзией настоящего и возможностью жить полноценной и осознанной жизнью, в настоящем.

Немаловажную роль в романе играют размышления Дэниела о Боге, существовании веры в него для каждого человека, без различия религиозных и философских представлений, о связи творческого процесса с восприятием природы. Джон Фаулз, а вместе с ним и Дэниел Мартин сравнивают писателя, художника и его творческий потенциал с Богом. Писатели и художники тоже создают свои миры. В начале было Слово. Но «слово» в переводе с греческого - логос, понятие, мысль. Понятие дает образ. А образ - инструмент писателя. Но почти сразу же сравнение отменяется, потому что писатель, создавая воображаемые

⁴⁴ Фаулз Дж. Аристос, автопортрет в идеях. М. Эксмо-Пресс. 2002. С. 29.

миры, в конечном итоге вычеркивает из своего текста все случайное, в то время как Бог «высокомерно равнодушен» к боли, равенству, справедливости. Дэниел находит высшее проявление Бога в природе и простых человеческих отношениях. Он испытывает почти религиозный экстаз от чувства единения с природой и со своими друзьями во время купания лунной ночью. Его глубоко радует процесс поиска редких орхидей. В то время как для Энтони важен результат – найти цветок, чтобы потом его классифицировать.

В отличие от Дэниела, его друг Энтони, будучи глубоко верующим католиком, лишен дара видеть и воспринимать мир во всем его многообразии, таким, какой он есть. Бог для Энтони – конкретная личность, установившая свои порядки и законы (как бытовые, так и моральные), неукоснительное выполнение которых дает человеку счастье. Но реальная жизнь всегда шире и многообразнее даже самых лучших правил. Причина краха всего мировоззрения Энтони в том, что, возложив ответственность на Бога и стараясь соответствовать своему идеалу, он чисто по-человечески оказался слабее и нетерпимее к человеческим слабостям, чем ему самому бы хотелось. В конце жизни Энтони понимает всю тяжесть своих заблуждений. Держа в руках распятие, он кончает жизнь самоубийством, что изначально неприемлемо для глубоко верующего католика. Совершив грех самоубийства, он как бы взял на себя ответственность за тот грех, который он, пусть неосознанно, подтолкнул совершить двух самых близких себе людей: Дэниела и Джейн. Трагедия Энтони в том, что он считал себя правым, пока жизнь и природа не доказали ему обратное. Во время последнего разговора с Дэном он признается: «Наш брак, и все, что с ним связано, Дэн, покоился на разуме, не на страсти. И не на чувстве. <...> Это-то и позволяло нам хранить нашу тайну. А тебя вынудило жениться на Нэлл. Что снимает с тебя часть ответственности за написание той пьесы. За нашу многолетнюю разлуку. <...> Сделав тогда вид, что вычеркнул тебя из памяти, я лишь удостоверился, что это невозможно»⁴⁵.

И, обретя цельный взгляд на мир и людей, Энтони ушел, чтобы спасти других. Если много лет назад Дэн и Джейн пожертвовали своей любовью во имя его спокойствия, то Энтони жертвует последними днями своей жизни, чтобы исправить ошибку, совершенную когда-то.

⁴⁵ Фаулз Дж. Дэниел Мартин. В 2-х кн. Кн. 2. М. Махаон. 2001. С. 80.

Главная философская мысль произведения о «цельном взгляде» придает ему кольцевую завершенность. В конце романа Дэн иронично сообщает Джейн, что нашел заключительную фразу для будущего романа, и его «почти не таящийся призрак» поставил ту «невозможную заключительную фразу в начало своего». Читатель понимает, что речь идет о предложении: «Нужен цельный взгляд, чтобы не впасть в отчаяние». Тем самым эта мысль приобретает ключевое значение для понимания всего произведения.

В.Фрейбергс в своем исследовании 1980 года писал, что роман «Дэниел Мартин» обозначает собой переход к новому этапу творчества, переход к более реалистической манере изложения, возможный отказ от экспериментов с романной формой. Мы согласны с латвийским исследователем в том, что «Дэниел Мартин» лежит на границе изменения определенных идей. Но что касается экспериментальной формы, по нашему мнению, «Дэниел Мартин» является для Фаулза экспериментом в сфере биографического романа. Хотя этот роман действительно более реалистичен, чем остальные произведения писателя, он скорее отражает изменения не в поэтике, а в мировоззрении Фаулза.

ЛИТЕРАТУРА

1. Фаулз Дж. Аристос, автопортрет в идеях. М. Эксмо-Пресс. 2002. С. 29.
2. Фаулз Дж. Дэниел Мартин. В 2-х кн. Кн. 2. М. Махаон. 2001. С. 80.
3. Фрейбергс В.Л. Творческий путь Джона Фаулза. Автореферат диссертации кандидата филологических наук. Рига. 1986. С. 20.

ԿԱՐԻՆԵ ԳՈՒԼԱՆՅԱՆ - ՋՈՆ ՖԱՈՒԼԶԻ ԴԵՆԻԵԼ ՄԱՐՏԻՆ ՎԵՊԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ուսումնասիրվում են Ջոն Ֆաուլզի «Դանիել Մարտին» վեպի կառուցվածքային և ժանրային առանձնահատկությունները: Վեպը ցույց է տալիս հեղինակի գաղափարների փոփոխությունը: Այս ստեղծագործությունը Ֆաուլզի համար փորձ է հանդիսանում կենսագրական վեպի ժանրում: Վեպում սինթեզվում են նաև հոգեբանական, ինտելեկտուալ և փիլիսոփայական վեպերի յուրահատկությունները: Այս աշխատանքը, ըստ էության, ավելի

ռեալիստական է, քան գրողի մյուս վեպերը, բայց դա արտացոլում է ոչ թե պոետիկայի, այլ հեղինակային գաղափարախոսության փոփոխությունը:

KARINE GULANYAN – THE STRUCTURAL AND GENRE PECULIARITIES IN JOHN FOWLES’ NOVEL *DANIEL MARTIN*

The article examines the structural and genre peculiarities of *Daniel Martin* by John Fowles. The novel shows the change of author’s ideas. *Daniel Martin* for Fowles is an experiment in the genre of biographical novel. The author concludes that the novel combines the features of psychological, intellectual and philosophical novels. This work is actually more realistic than the other novels of the writer, but it reflects the changes not in poetics, but in author’s ideology.

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄՇԱԿԱԾ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հիմնաբառեր՝ լեզու, հեքիաթ, ձևաբանական, գեղարվեստական, խոսքարվեստ, բարբառ, լեզվական առանձնահատկություն, բառապաշար, բանախյուսություն, ժողովրդախոսակցական ոճ, խոսք

Լեզվի համակարգում յուրաքանչյուր բաղադրիչ ունի իր դերն ու նշանակությունը: Սակայն այդ համակարգի անկյունաքարը եղել և մնում է քերականությունը: Լեզուն, ինչպես յուրաքանչյուր կենդանի երևույթ, իր գոյության ընթացքում ենթարկվում է փոփոխությունների, որոնք շղթայական ազդեցությամբ հանգեցնում են համակարգային լուրջ տեղաշարժերի: Լեզվական փոփոխություններն ի հայտ են բերում մի շարք քերականական զուգաձևություններ: Ժամանակի ընթացքում սովորաբար դրանցից մեկը դառնում է գերիշխող և ամրապնդվում: Այս գործընթացում դեր են խաղում տարբեր հանգամանքներ, որոնցից մեկն էլ այս կամ այն ձևին հեղինակների նախապատվություն տալն է: Այս առումով հեղինակների դերը խիստ կարևորվում է: Արժևորելով հեքիաթի անկրկնելի նշանակությունը ազգի հոգևոր կյանքում՝ Հովհաննես Թումանյանը իր հեքիաթները մշակելիս հաղորդել է նրանց ինքնատիպություն ոչ միայն կառուցվածքային հղկվածության ու հետևողականության, այլև լեզվական յուրահատուկ հմայքի առումով:

Մնալով ժողովրդական մտածողության ոգուն ու ոճին հավատարիմ՝ Թումանյանը հանճարին բնորոշ գրչով կերտել է իր ստեղծագործական անհատականությունն արտահայտող և իր ինքնատիպ խոսքի կնիքը կրող գլուխգործոցներ Ա. Ղանալանյանը⁴⁶ և Էդ. Ջրբաշյանը⁴⁷ Թումանյանի հեքիաթների մշակման մոտեցումը բնութագրելիս իրավացիորեն

⁴⁶ Ղանալանյան Ա., ժողովրդական բանախյուսության տեղն ու դերը Թումանյանի ստեղծագործության մեջ, Տեղեկագիր հասարակական գիտությունների, Ե., 1943, N3, էջ 9-22:

⁴⁷ Ջրբաշյան Էդ., Թումանյանի պոեմները, Ե., 1964, էջ 307-312:

նկատում են, որ աշխատանքը ծավալվել է հատկապես լեզուն ու ոճը հղկելու ու բյուրեղացնելու ուղղությամբ:

Հիրավի, Հովհաննես Թումանյանի մշակած հեքիաթներում ժողովրդախոսակցական կենդանի խոսքը շողշողում է իր անխարդախ երանգներով: Օգտվելով տարբեր բարբառներով գրի առնված ժողովրդական նյութերից՝ Թումանյանը ստեղծել է ժողովրդական մտածողության վրա խարսխված իր ուրույն լեզվական աշխարհը: «Ոմանք կարծում են, թե եթե երբեմն Լոռուցն եմ առնում գրվածքիս նյութը կամ էս-էն ձևն եմ գործածում, ուրեմն Լոռու բարբառով եմ գրում: Չարաչար սխալվում են: Ինչպես նյութի, էնպես էլ լեզվի վերաբերությամբ ես ինձ միանգամայն ազատ եմ համարում և օգտվում եմ ամեն տեղից»⁴⁸, - գրում է Թումանյանը:

Թումանյանի ոճը պարզ է, հասկանալի ու հարազատ յուրաքանչյուր տարիքային խմբի: «Մարդ ինչքան թեթևություն է զգում, երբ ահագին կտորները ջնջում և դուրս է բերում մի սեղմ, կոկիկ երկտող»⁴⁹, - այսպես է բնութագրել իր աշխատանքը Թումանյանը և այս գեղարվեստական սկզբունքը կիրառել նաև իր մշակած հեքիաթներում՝ շերտ առ շերտ ընթերցողին բացելով իր լեզվազգացողությունն ու աշխարհընկալումը, գեղագիտական ճաշակն ու անհատական ոճի յուրահատկությունը:

Այնուամենայնիվ, որքան էլ Թումանյանն իր մշակած հեքիաթներում պահպանում է գրական լեզվի օրինաչափությունները, դրանք նաև վառ արտահայտված ժողովրդախոսակցական երանգներ են պարունակում:

Դրանք բազում են, և խոսքը միայն բարբառային ու խոսակցական բառերի գործածությամբ չի սահմանափակվում: Ժողովրդական լեզվին մերձեցումը առավելապես ոճային նշանակություն ունի և պայմանավորված է խոսքի հյուսվածքով ու քերականական ձևերով:

Թումանյանի հեքիաթներում ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի ու օրինաչափությունների կայուն ձևերը երբեմն բարբառային խոսակցական ձևերով են զուգակցվում: Այդպես է, օրինակ, հոգնակի թվով գոյականների գործածությունը: Հայտնի է, որ գոյականի թվի կազմության հարցում ժամանակակից հայերենը հասել է միօրինականացման: Ունենալով որոշ բացառություններ՝ հոգնակի թիվը կազմվում է - եր և - ներ վերջավորություններով: Թումանյանը չի շեղվում,

⁴⁸ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. IV, Ե., 1969, էջ 402:

⁴⁹ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969, էջ 45

բայց կանոնավոր ձևերի կողքին հանդիպում ենք ք-ով հոգնակիակերտ ձևերի գործածություն:

Օրինակ՝

Ես մեր ծերերից եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն էլ իրենց մեծերից... /169/

Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է տրեխները հագնել: /174/

Գյուղացիք եկան, հավաքվեցին, սկսեցին կացնին ծեծել: /159/

Կնիկն ու առջկերը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի: /229/

- Վա՛յ, Կիկոս ջա՛ն, - ծնկներին տալիս են ու սուզ են անում մեր ու առջրկերք: /230/

Տանրգիք վեր են թռչում, տեսնում երեխեն օրորոցում մորթած: /186/

Լեզվական կանոնների շեղում է աշխարհ բառի հոգնակի թվով գործածելը:

Աշխարհի կարգն է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա: /230/

Քանի որ ժամանակակից հայերենում քերականական համակարգը նորմավորված է, ուստի նման շեղումները ոճավորման երանգի ցայտուն դրսևորում են համարվում:

Թումանյանի հեքիաթներում հոլովական համակարգը հիմնականում ներկայացված է ընդունված ձևերով: Սակայն այստեղ էլ կան զուգաձևություններ: Այսպես՝ հայտնի է, որ ժամանակակից հայերենում գերիշխող է **և** արտաքին հոլովումը, և գնալով ավելի շատ գոյականներ, որոնք պատկանում են այլ հոլովումների, հակվում են դեպի **և** հոլովումը:

Գիշերվա մի ժամանակ վեր է կենում, էս մարդի գրպանից նամակը հանում, կրակը գցում ու ինքը մի նոր նամակ գրում, դնում տեղը: /188/

էս որ փեսեն լսում է, վախից քիչ է մնում պռոշը ճաքի. էն է լինում որ էն, արգելում է Հուռին ձեռն էլ բանի չտա, որ մորքուրի նման բզեզ չդառնա: /203/

Թումանյանի հեքիաթներում այս զուգաձևությունների կիրառությունը ասելիքով է պայմանավորված, այսինքն՝ հոլովական զուգահեռ ձևերի գործածությունը զուտ ոճավորման նպատակ է հետապնդում: Կերպարն ավելի տիպականացնելու համար հեղինակը զուգահեռ գործածում է նաև բարբառային ու խոսակցական ձևեր:

- Չէ՛, ասում է, ով է լսել, որ տարու էս եղանակին, ծմեռվա կիսին, կրկուն ձեն ածի, որ սա ձեն է ածում: /176/

- *Ձեռքի տրայրակն էլ խլում ու ճամփու դնում: /181/*

Ժամանակակից հայերենում որոշալուծության քերականական իմաստը արտահայտվում է և և ը հոդերով: Հայերենում որոշիչ հոդ են ստանում ուղղական, տրական և հայցականը հոլովածները: Թումանյանի մշակած հեքիաթներում նկատում ենք նաև բացառական, գործիական և ներգոյական հոլովածների որոշալ հոդով կիրառություններ, որոնք ոչ միայն Լոռու բարբառին են յուրահատուկ, այլև ժամանակին եղել են գրական ձևեր:

- *Հե՛յ, աչքդ լուս, - ասում է, - քու հողումը մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տար: /169/*

Հիմարը էստեղ վախենում է, կարծում է ավերակի մարքումը կա, որ իր փողը չտա:

Բերում են երեխին կապում են մոր դռնիցը, լաց են լինում, օրհնում են ու իրեն տանիցը դուրս են անում: /189/

Կռանում է թե ջուր խմի՝ երեխեն գրկիցը ընկնում է ջրհորի մեջը: /189/

- *Լուս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղորուղո՛ւ... /195/*

Հեքիաթներում ոճական նշանակություն է ստանում անորոշ առումը: Անորոշ առումը գրեթե միշտ կիրառվում է մի բառի միջոցով: Մի բառը հեքիաթներում յուրահատուկ նրբերանգ է ստանում հասկապես պատումի սկզբում:

Ժամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը Փանոս: Ինքը մի բարի մարդ է լինում... /231/

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ: /227/

Քեֆի լավ ժամանակ մի բզեզ է ներս մտնում: /201/

Թումանյանը հմտորեն օգտագործում է դերանվան ոճական հնարավորությունները: Թեև սա, դա ցուցական դերանունները մատնացույց են անում և՛ անձ, և՛ առարկա, սակայն առաջինի դեպքում նկատելի է նրանց արտահայտած հեգնական երանգը: «Կիկոսի մահը» հեքիաթում երևակայական հերոսի մահը ողբացող մորն ու աղջիկներին Թումանյանն այսպես է բնութագրում.

Սրանց միջի խելքը հերն է լինում: /230/

Դու մի՛ սսիլ՝ սրանց ունեցած – չունեցած չորստարանի մի եզն է լինում, ունեցած փոշին էլ մի քթոց այլուր: /230/

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի... /229/

«Քաջ Նազար» հեքիաթում Նազարով հետաքրքրվող հասանքավորներին նույնպես սա դերանունով է բնութագրում, իսկ Նազարից վախեցած յոթ եղբայրներին՝ սրանց:

Ներքին ծերից մինը բոթում է իր կողքի նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բոթում... /219/

Դու մի՛ ասիլ հարբած հարսանքավորների փարածած լուրը սրանց էլ է հասած լինում: /219/

Հաճախ անձնական դերանունները հանդիպում են բարբառային ձևով, որը միտված է խոսքը ավելի ժողովրդային դարձնելու:

... Չախչախ թագավորը պետք է ամուսնանա, քու աղջիկն ուզում է: /164/

- Վա՛յ, քու փունը քանդվի, այ աղվես. էդ ի՞նչ ես արել: /164/

Հողի վարձը դու փվել ես, դու վարում ես, էն հողումն ինչ էլ դուրս գա, քունն է... /169/

- Երբ որ աստծուն փեսնես, - աղաչեց սիրուն աղջիկը, - ասա այսպիսի մի սիրուն աղջիկ կա՛ ջահել, առողջ, հարուստ - բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրան - ի՞նչ պիտի լինի նրա ճարը: /147/

Բայց այդ միտումը նկատվում է ոչ բոլոր հեքիաթներում: Հիմնականում անձնական դերանունները և նրանց հոլոված ձևերը համապատասխանում են ժամանակակից հայերենի քերականական օրինաչափություններին:

- Էն եմ ասում, որ մենք քո ծառան չենք, որ քն եղն ու բրինձը պահենք: /197/

- Օ՛, բարով, բարով, դերվիշ բաբա. համեցեք, նստիր քն փեղը:

Կես գիշերին երաժիշտներն իրենց վարձն առնում են հեռանում: /206/

Թումանյանի հեքիաթներում հատկանիշի գերազանցությունն արտահայտվում է ոչ միայն ածականի համեմատության աստիճաններով, այլև տարբեր միջոցներով: Առավելապես հանդիպող ձևերից է վերլուծական եղանակով կատարվող համեմատությունը:

- Էլ քեզանից անխելք մարդ ո՞ր փեղից գտնեմ, որ ուրեմ, - ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին /149/:

Չախչախը մի շապր հարուստ թագավոր է, ես էլ նրա վեզիրն եմ /164/:

Ամենատարածված ձևերը բառային հարադրությամբ արտահայտվածներն են՝ ամենից խելոք, ամենից քաջ, բոլորից խելոք,

չափազանց ազնիվ և այլն: Քիչ չեն կրկնավոր բարոյությունները՝ նոր-նոր, մեծ-մեծ, լավ-լավ: Հաճախակի են հանդիպում նաև այլ բարոյություններով արտահայտված ձևերը՝ մորեմերկ, մեծամեծ, խորախոր և այլն:

Թումանյանի հեքիաթներում ուշագրավ են ձևաբանական այն իրողությունները, որոնք առնչվում են բայ խոսքի մասին: Արդի հայերենում բայի անցյալ կատարյալը ունի ցոյական և ոչ ցոյական հիմքեր: Այս կրկնակ ձևերից հեղինակը երբեմն ընտրում է ժողովրդականը՝ ոչ ցոյական հիմքը (տվի, թողի): Այս ձևերի ընտրությունը պայմանավորված է ժողովրդական լեզվամտածողության արտահայտությամբ:

Բայց դու մի՛ ասիլ էս աղջկանը ուզած է լինում հարևան երկրի թագավորը /224/:

Մին էլ տեսնեմ՝ վերևից գալիս է. մեր տունն էր ման գալի. Կանչեցի, մի լավ էլ խայտառակ արքի, շալակը քովի, փարավ:/197/

Այս և նմանատիպ շատ օրինակներ կարելի է գտնել Թումանյանի մշակած հեքիաթներում: Դրանք ավելի շատ միտված են պահպանելու հեքիաթի ժողովրդական հյուսված լեզուն, որով խոսել և խոսում է բանասաց ժողովուրդը:

Ամփոփելով նշենք, որ Թումանյանի մշակած հեքիաթներում լեզուն ձեռք բերեց նոր որակ: Ընդունելով և ստեղծագործաբար յուրացնելով հեքիաթագրության մեջ իր նախորդների ավանդները՝ Թումանյանը գերազանցեց նրանց՝ ստեղծելով ժողովրդական հիմքի վրա խարսխված յուրօրինակ ու անկրկնելի հեքիաթներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981:
2. Աբրահամյան Ա., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969
3. Գյուրջինյան Դ., Հայոց լեզու, Խոսքարվեստի դասագիրք, Ս. Էջմիածին, 2015
4. Էլոյան Ա., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989
5. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1955, 1958, 1990
6. Թումանյան Ն., Հուշեր և զրույցներ, Ե., 1987
7. Թումանյան Ն., Ինչպես էր մշակում Հ. Թումանյանը իր երկերը, Գրական սերունդ, 1934:
8. Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Ե., 1978:

9. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Ե.,1976:
10. Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Ե.,1966:
11. Մկրյան Մ., Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Ե.,1981:
12. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Ե.,1992:
13. Զրբաշյան Էդ., Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ, Ե.,1988:
14. Պետրոսյան Հ., Հայրենագիտական բառարան, Ե., 1987

ЛИЛИТ ГЕВОРГЯН – ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ СКАЗОК, ОБРАБОТАННЫХ ОВАНЕСОМ ТУМАНЯНОМ (МОРФОЛОГИЧЕСКИЕ ФАКТЫ)

В рамках статьи материалом исследования стала языковая оригинальность сказок, обработанных О. Туманяном, знаменитым писателем 20-ого века, не только за счет конструктивного, но и за счет характерного языкового шарма.

Сохраняя закономерность литературного языка, Туманян придает им яркие народно-разговорные оттенки, которые не ограничиваются только использованием диалектических и разговорных слов. В сказках сближение с народным языком преимущественно имеет стилистическое значение и обусловлено сочетанием речи и грамматическими формами.

LILIT GEVORGYAN – LANGUAGE PECULIARITIES OF FAIRY TALES, PROCESSED BY HOVHANNES TUMANYAN (MORPHOLOGICAL FACTS)

Within the scope of the article, the topic of research is the language originality of fairy tales, processed by O. Tumanyan, a well-known writer of the 20th century, which is not only due to constructive, but also due to specific language charm.

Keeping the regularity of literary language, Tumanyan gives them bright folk-colloquial shades, which is not only limited to the use of dialectal and colloquial words. In fairy tales, particularly the approach to folk language has a stylistic significance and is based on speech structure and grammatical forms.

**ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՄԱՐԻԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Հիմնաբառեր՝ ժխտում, ածանցում, նախածանցում, բառակազմություն,
նորարանություն, ձևաբանություն, իմաստագործառական
առանձնահատկություն*

Ժխտման կարգը երկար ժամանակ եղել է տարբեր բնագավառների մասնագետների ուշադրության կենտրոնում և պատահական չէ, որ այն հավասարապես ուսումնասիրության առարկա է փիլիսոփայության, հոգեբանության, տրամաբանության և լեզվաբանության համար: Ըստ լեզվաբանական հայեցակետի կարելի է առանձնացնել ձևաբանական-քերականական և իմաստաբանական-գործառական սկզբունքները:

Ե. Ի. Շենդելսը նշում է. «Ժխտումը, որպես լեզվականկարգ, որոշակի լեզվական միջոցներով արտահայտում է հասկացությունների միջև կապերի բացակայությունը: (Шенделье:1959:25) Լեզվաբանների մեկ այլ խումբ ժխտման էության լուսաբանման հարցում այն տեսակետին է, որ ժխտական է համարվում այն նախադասությունը, որում առկա է որևէ ժխտական բառ կամ մասնիկ: Այս մոտեցումը ծածկում է լեզվի միայն արտաքին՝ քերականական մակերեսը, քանի որ շատ լեզուներում ժխտական մասնիկով նախադասությունները միշտ չէ, որ ժխտում են արտահայտում և ընդհակառակը մեկ ժխտական միտք կարող է իրականացվել բազմաթիվ ձևերով՝ բացահայտ և ոչ բացահայտ ժխտման միջոցներով: (Շաշիվյան:79)

Բացահայտ ժխտումն արտահայտվում է լեզվական տարբեր մակարդակներում:

Բացահայտությունը ենթադրում է իմաստի բաց, ակնհայտ, անմիջական արտահայտման միջոցներ: Բառակազմական մակարդակում բացահայտ ժխտման արտահայտման միջոցները ժխտական նախածանցներն ու վերջածանցներն են, ձևաբանական մակարդակում՝ ժխտական մասնիկները, ժխտման բառաքերականական միջոցները (ժխտական դերանունները, մակբայները), ժխտական կապերն ու

շաղկապները: (Ջահուկյան 1974:)

Ածանցման և բառաբարդման/բարդության/շնորհիվ լեզուն հարստանում է նորաբանություններով, ինչպես հաստատական, այնպես էլ ժխտական իմաստայնությամբ:

Ժխտումը արտահայտվում է ածանցման՝ նախածանց-վերջածանց տարբերակմամբ, ձևաբանական՝ դերանուն, բայ, մակբայ, խոնարհում, եղանակավորող բայեր և շարահյուսական՝ պարզ-համադասական և բարդ-ստորադասական նախադասություններով: (Եզեկյան 2005:182) Սույն հոդվածի շրջանակում ժխտումը քնարկվում է քերականական մակարդակում՝ ածանցման և ձևաբանական, ինչպես նաև մատնանշվում է վերջինիս իմաստագործառական առանձնագիտությունները: Ժամանակակից հայերենում կենսունակ ժխտական նախածանցներն են՝ **ան-, -ապ, -դժ, -տ, -չ**, օրինակ՝ **անտուն, ապաշնորհ, դժգույն, տգեղ, չտես**; իտալերենում՝ **-in, -s, -dis, -mis, -senza, -a, -non**, օրինակ՝ **incapace, scortesia, disfunzione, misconoscere, senzaamore, analfabeta, nonstop**, անգլերենում՝ **un-, non-, in-, dis-, a-**, օրինակ՝ **ungrateful, unemployment, non-politician, incorrect, disloyal, amoral**.

Հայերենում ժխտական ածանցները հաստատականից տարբերվում են ոչ միայն իրենց նշանակությամբ, այլև ծագումնաբանությամբ: Հայտնի է, որ ժխտական ածանցները ավելի վաղ են ստեղծվել՝ նախագրաբարյան շրջանից: **Ան-** ժխտական նախածանցների մեջ ծագումով ամենահին, ամենագործուն ու ամենակենսունակ ածանցն է: Գործածվում է գոյականի, ածականի, բայարմատի հետ, կազմում բացասական նշանակությամբ բառեր: Հավանաբար հնդեվրոպական ծագում ունի, հանդիպում է 3 հազարից ավելի բառերում: Դրվելով գոյականների վրա՝ կազմում է ածականների բացասական ստացական նշանակությամբ, այսինքն՝ ցուց է տալիս մի բան չունենալը՝ **անլեզու, անհույս, անմարմին**: Դրվելով ածականների վրա՝ բացասում է նրանց նշանակությունը, համապատասխանում է ՈՉ բառին, օրինակ՝ **անազնիվ-** ոչ ազնիվ, **անարդար, անպատասխանատու** և այլն: Դրվելով բայերի հիմքի վրա՝ կազմում է ածականներ բացասական դերբայների նշանակությամբ և համապատասխանում է **-չ** ժխտական նախածանցին, օրինակ՝ **անսպառ-չսպառվող, անխնամ-չխնամված** և այլն... (Առաքելյան:1979:399)

Ապ- ըստ կենսունակության երկրորդ՝ առավել գործուն ժխտական նախածանցն է:

Համաձայն Հր. Աճառյանի՝ ծագում է պարսկերենից եւ նախապես գործ է ածվել հենց այդտեղից փոխառնուած **ապալեպ** «անխորշ, «անզոգ», **ապենիագ** «անկարօտ», **ապերիսան**||ապերասան «անսանձ» և այլն բառերի մեջ: (Աճառյան 1971:694)

Ապ- ածանցով ունենք շուրջ 200 բառ, այս ժխտական նախածանցը ավելի քիչ գործածական է ժամանակակից հայերենում: Միանալով գոյականի, երբեմն էլ նաև բայի հիմքին՝ կազմում են ածականներ՝ բացասական և ժխտական նշանակությամբ, օրինակ՝ **ապուշ**, **ապօրինի**, **ապազգային**: Գոյականակերտ հիմքից կազմվում են գոյականներ՝ **ապաբեռ**, **ապակենտրոն**, բայակերտից էլ համապատասխանաբար կազմվում են բայեր՝ **ապազինել**, **ապակենտրոնացնել** և այլն:

Դժ- նախածանցը անկենսունակ է, նոր բառեր չի կազմում և հանդես է գալիս միայն սկզբնատիպ ձևերից կազմված բարդություններում, օրինակ՝ **դժգույն**-դժգունակ, **դժգունել**, **դժգոհ**-դժգոհել, **դժգոհություն** (Սուքիասյան:1999:266): Ծագում է պարսկերենից և գործածվում է այդտեղից փոխառյալ մի քանի բառերի հետ, օրինակ՝ **դժբախտ**-անբախտ, բախտ չունեցող, **դժգոհ**-անգոհ, ոչ գոհ, **դժկամ**-տհաճող: Հիմնականում կազմվում է ածականակերտ բառեր, օրինակ՝ **դժգոհ**, **դժբախտ**, **դժկամ**, բացառություն չեն նաև գոյականակերտ և բայակերտ բառերը, օրինակ՝ **դժկամություն**, **դժբախտություն**, **դժգոհել**, **դժբախտանալ** և այլն:

Տ- ժխտական նախածանցը ժամանակակից հայերենում կենսունակ չէ և գործավում է նախնական բառերում ու նրանցից կազմված բաղադրություններում, օրինակ՝ **տգեղ**-տգեղանալ, տգեղություն, **տկար**-տկարամիտ, տկարանալ, տկարավուն, **տհաճ**-տհաճորեն, տհաճություն: Ծագում է հնդեվրոպական լեզուներից, համեմատվում է հին հնդկերենի – **duh** և լատիներեն – **dis** նախածանցի հետ: Ըստ Գ. Ջահուկյանի տեսակետի՝ **տ**- նախածանցը հղերոպական է և բազմաթիվ բառահիմքերում առկա է հենց այս նախածանցը, օրինակ՝ **տ**-գեղ, **տ**-հաճ, **տ**-ձև (Ջահուկյան:1985:242): Օգտագործվում է ինչպես պարզ, այնպես էլ ածանցավոր բառերի հետ՝ **տկար**, **տձև**, **տհաճություն**:

Չ-նախածանցը ամենաքիչ գործածվող նախածանցն է ժամանակակից հայոց լեզվում Շատ գործուն է եղել գրաբարում, և բայարմատի, գոյականի, ածականի վրա դրվելով՝ կազմել է ածականներ և գոյականներ, օրինակ՝ **չլուր**, **չտես**, **չփոյթ**, **չգոյ**, **չազգ**-Հիմնականում գործածում է բայարմատների հետ և դրանցից կազմված

բաղադրություններում, օրինակ՝ **չբեր, չտես, չկամ** (Սարգսյան, 1991:259): Առավել հաճախ գործածվում է կրկնակի բարդությունների հետ, ինչպես օրինակ՝ ունենալ-չունենալ, անել-չանել, լինել-չլինել և այլն: Այժմ ուսումնասիրենք իտալերենի ածանցման այն միջոցները, որոնց միջոցով ժխտում ենք արտահայտում, դրանք են՝ **in-, s-, dis-, senza-, (a-), non-**.

In- նախածանցը ամենակենսունակ նախածանցն է ժամանակակից իտալերենում: Համաձայն առցանց աղբյուրների՝ հաշվառվում՝ 5000 և ավել բառեր այս նախածանցով սկսվող: (<http://trovaparole.com/starts-with-by-length/in/>):

Ծագում է լատիներենից, արտահայտում է ինչ-որ բանի բացակայություն, մասնավորեցում, հակադրում, օրինակ՝ **inutile, insano, inorganico**, որտեղ երկրորդ մասը կարող է լինել գոյական, ածական, դերբայական դարձված (Dardano M, Trifone P:1997:543) Կարող է օգտագործվել նաև լատիներենից սերող հարադրական բայերի հետ (**incurvare, incorporare**) այսինքն բացի գոյականից և ածականից, կազմել բայեր այլ բայերից: Այս դեպքում նախածանցը պահպանում է լատիներենի նախնական *մեջ, ներս* իմաստը՝ **infondere, influire**.

In-նախածանցը *l-, m-, r-* բաղաձայնով սկսվող բառերից առաջ հնչյունափոխվում է և նշված տառերը կրկնապատկվում են (**in-** +*l* դառնում է **ill-**օրինակ՝ **illogico, illegale, in-** +*m* դառնում է **imm-**օրինակ՝ **immangiabile, immoralita' in-** +*r* դառնում է **irr-irresponsabile, irrealta'**)

S-նախածանցը սերում է լատիներեն **ex-** նախածանցից, որն էլ նշանակում է “հեռացում”: Ածականների և գոյականների հետ միանալով՝ արտահայտում է ինչ-որ բանի բացակայություն, մասնավորեցում, օրինակ՝ **sfiducia, sleale**: (Հարասինթետիկ) բայերին միանալով՝ ձեռք է բերում մասնավորեցման իմաստ, օրինակ՝ **sconfinare, sbiancare**: Հազվադեպ է հանդիպում ոչ ածականակերտ բառերի հետ, օրինակ՝ **proporzione-sproporzione** (Dardano M, Trifone P:1997:543): Որոշ դեպքերում **s** նախդիրը ուղղակի **dis-**ի կրճատ ձևն է (**disperdere-sperdere**): Garzanti 2006 էլեկտրոնային բառարանում հանդիպում ենք 388 բառ ժխտական այս նախածանցով:

Dis-di- (բաղաձայնով սկսվող բառերից առաջ) նախածանցը նույնպես լատիական ծագում ունի (լատ. **dis**): Արտահայտում է ժխտում, հակադրություն (**discontinuita', disonesto**), ցրվածություն (**distribuire, disperdere**), բաժանում (**distolgere, divaricare**), կարող է ունենալ նաև

valore intensivo (**dissimulare**, **dissangiunare**), գիտատեխնիկական եզրույթաբանության մեջ ցույց է տալիս հակադիր ընթացք (**dissorbimento**, **disgelare**).

Aldo Gabrielli-ի “Grande italiano Vocabolario della lingua italiana”-ում տարբերակվում է 191 բառ ժխտական այս ածանցով:

Mis- ժխտական ածանցը, որը նույնպես լատիկան (minus) բառից է սերում, այնքան էլ գործածական ածանց չէ: Միանալով ածականի, գոյականի, բայի հիմքին՝ արտահայտում է բացական իմաստ, օրինակ՝ **misconoscere**, **misfatto**, **miscredente**: Aldo Gabrielli-ի “Grande italiano Vocabolario della lingua italiana”-ում տարբերակվում է ընդամենը 80 բառ ժխտական այս ածանցով:

Senza-, **a-**, ժխտական ածանցներով քիչ բառեր են կազմվում, հանդիպում ենք **senzadio**, **senzapatria**, **afono**, **aggiungere**, **avitaminoso** և այլն: Ըստ առցանց բառարանների՝ **a-**, **senza-** նախդիրներով կազմվախ բառերի թիվը չի գերազանցում քսանը:

Non- նախաձանցը ժամանակակից իտալերենում կենսունակ է, հանդիպում է գոյականների և ածականներին միանալով : **Senza-** նախաձանցի նմանությամբ՝ **non-** ժխտական նախաձանցի միջոցով կազմվում է թե՛ մեկ բառ, թե՛ երկու, օրինակ՝ **nonsense** բայց **non intervento**. Գրավոր խոսքում ճիշտ է համարվում առանձին գրված ձևը (**non** **aggressione**, **non** **credente**), սակայն բացառություն չէ նաև միասին գրված տարբերակը (**nonconformist**, **noncuranza**): **Non-** նախաձանցով սկսվող բառերի թիվը հասնում է մոտ հիսունի: (Dardano M, Trifone P:1997:544)

Անգլերենի կենսունակ ժխտական նաձանցներ են՝ **de-**, **dis-in-**, **mis-non-un-**:

Un-, **de-**, **dis-**գտագործվում են շրջուն կամ մասնավորեցնող իմաստով /reversative or privative/, օրինակ՝ **untie**, **decentralize**, **disconnect**.

De-, **dis-**լատինական ծագում ունեցող այս նախաձանցները արտահայտում են հակադարձություն և բառին հաղորդում բացական նրբերանգ՝ **deactivate**, **deform**, **disloyal**, **disagreement**: Ժամանակակից անգլերենում այս նախաձանցով բառերը շատ կենսունակ են. աշվառվում է 1333 բառ **de-** նախաձանցով (https://en.wiktionary.org/wiki/Category:English_words_prefixed_with_de-) և 553 **dis-**ով (https://en.wiktionary.org/wiki/Category:English_words_prefixed_with_dis-):

Un-ամենագործածական և իմաստով չեզոք ժխտական նախաձանցն է.

Ըստ առցանց հանրագիտարանների՝ հաշվառվում է 9085 բառ **un-** ժխտական նախածանցով:

(https://en.wiktionary.org/wiki/Category:English_words_prefixed_with_un-):

Լատիներենից փոխառյալ բառերը անգլերենում ժխտական իմաստ ստանում են հենց **un-** նախածանցի միջոցով, **ungrateful**, **unemployment**.

In-նախածանցը, կախված բառարմատի առաջին տառից, հանդիպում է տարբեր հնչյունական ձևերով, այլ կերպ ասած նախածանցային ձևայթը ունի մի քանի ենթաձևայթ /allomorphs/: Նույն երկույթին հանդիպել ենք նաև

իտալերենում:

il- ([l]-ից առաջ), **im-** ([p, m]-ից առաջ), **ir-** [r]-ից առաջ), **in-**մյուս բոլոր դեպքերում՝**illegal**, **improbable**, **immaterial**, **irreligious**, **inactive**. Ըստ առցանց հանրագիտարանի՝ հաշվվում են նախածանցների հետևյալ քանակները՝ **il-1**, **im-3**, **ir-23** **in-1136**,

Mis-, **mal-**, **pseudo-**բացասական նախածանցներ /pejorative/ ինչպիսիք են օրինակ՝ **miscalculate**, **maltreat**, **pseudoclassicism**. Ըստ առցանց հանրագիտարանի՝ հաշվվում են նախածանցների հետևյալ քանակները՝ **mis-711**,

mal-77,

pseudo-675:

Non-անգլերենի գոծածական նախածանցներից է, հանդիպում է 7922 բառերում

(https://en.wiktionary.org/wiki/Category:English_words_prefixed_with_non-)

արտահայտում է բացարձակ հակադարձություն, կցվում է գոյականին՝ **nonsense**, **nonstop**, ածականին՝ **nonprofessional**, **nonrenewable**, բային՝ մակբային: (Ginzburg:1979:117-118)

Ժխտական նախածանցներն առավել կենսունակ են, քան վերջածանցները:

Հայերենում տարբերակում է **սստ-** ժխտական վերջածանցը, որն արտահայտում է բացասական միտք, որևէ բանից զուրկ լինելու իմաստ:

Ծագումնաբանորեն սերում է *հատանել* բառի հնչյունափոխությունից (*հատ>ատ*) (Մուրվայան:1955:300): Օգտագործվում է ածականների՝

(պոչ**ստ**, քն**ստ**, գուն**ստ**), գոյականների՝ (խրամ**ստ**, հեղեղ**ստ**) և բայերի հետ՝ (գլխ**ստ**ել, փետր**ստ**ել):

Անգլերենում հանդիպում ենք **less-**ժխտական վերջածանցին: Միանալով գոյականի հիմքին՝ կազմում է ածականներ՝ **end-endless**, **price-priceless**, **sleep-sleepless**

և

այլն:

Ժամանակակից իտալերենում լեզվաբանները ժխտական վերջածանց չեն առանձնացնում:

Աղյուսակում ներկայացված ժխտական ածանցները ըստ կենսունակության՝


Affissi in italiano	Affixes in English	Ածանցները հայերենում
In-	Un-	Ան-
S-	In-	Ասպ-
Dis-	De- Dis-	Դժ-
Senza- a-	Mis-	Տ-
Non-	Non	Չ-
-	-Less	-Ատ

Եզրակացության գալով՝ երևան հանենք այն դրույթները, որոնց հանգել ենք հորվածի ուսումնասիրության շրջանակներում.

- Նախաածանցները, իբրև բառակազմական ձևութներ, ունեն իրենց համապատասխան հնչյունական կազմը. քիչ են հանդիպում մեկ հնչյունից կազմված միավորները՝ **s-**, **a-**, **un-**, **չ-**: Առավել հաճախ հանդիպում են երկհնչյուն և եռահնչյուն տարբերակով՝ **in-**², **un-**², **de-**, **ան-**, **ասպ-**, **դժ-**, **dis-**², **non-**², **mis**, և ամենաքիչը՝ չորս հնչյունից կազմված՝ **senza-**.
- Իմաստագործառական տեսանկյունից բոլոր նախաածանցները հիմնականում իրար հոմանիշներ են. իտալերենում՝ **disamore**, **senza amore**, **non amore**, անգլերենում՝ **unfortunate**, **disfortune**, **misfortune**, հայ՝ **անբախտ**, **ասպաբախտ**, **դժբախտ**: Երբեմն նույն նախաածանցը կարող է օգտագործվել և՛ որպես ածական, և՛ որպես բայ, և՛ որպես գոյական, օրինակ՝ իտալ՝ **inattivo**, **disattivare**, **non attivo**, անգլ՝ **unable**, **inability**, (to) **disable**, հայ՝ **անկայուն**, **ասպակայունություն**, **չկայունացնել**:
- Դրվելով գոյականի, ածականի, բառարմատի վրա՝ կազմում են ածականի, ինչպես նաև ածականակերտ բայերի բացասական


նշանակությամբ բառեր, այսինքն ցույց են տալիս մի բան չունենալու հատկանիշ:

- Ժխտական նախաձայններն առավել կենսունակ են, քան վերջաձայնները, իտալերենում, առհասարակ, ժխտական վերջաձայն չենք հանդիպում, ի տարբերություն հայերենի **աւտ**-ի և անգլերենի **less**-ի: Հայերենի կենսունակ նախաձայնն է **աւ-**, իտալերենում **in-**, անգլերենում՝ **un-**.
- Ծագումնաբանությամբ նախաձայնները և՛ իտալերենում, և՛ անգլերենում հիմնականում սերում են լատիներենից (**de-**, **dis-**, **in-**, **non-**), հունարենից (**a-**), իսկ հայերենում՝ պարսկական (**աւ-**, **դժ/տժ-**) և հնդկարոպական ծագման են՝ (**աւ-**):
- Ուսումնասիրվող լեզուների մեջ ամենից կենսունակ և ակտիվ գործածական են անգլերենի նախաձայնները, ժխտական նախաձայնների թիվը (մոտ 22000-տե՛ս գրաֆիկ 3) անգլերենում գերազանցում է թե՛ իտալերենի (մոտ 5800 տե՛ս գրաֆիկ 2) և թե՛ հայերենի (մոտ 3300 տե՛ս գրաֆիկ 1) նախաձայններին:




Գրաֆիկ 1

Իտալերենի ժխտական նախածանցներ



Գրաֆիկ 2

Անգլերենի ժխտական նախածանցներ



Գրաֆիկ 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց Լեզվի Տեսություն, Երևան, «Միտք» հրատարակչություն, 1965
2. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987
3. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հհ1-6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ 1-4, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1971, 1973, 1977, 1979
5. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն և բառագիտություն), հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1979
6. Եզեկյան Լ. Հայոց Լեզու, Երևան, ԵՊՀ-2005
7. Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, 1963
8. Մուրվալյան Ա., Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1955
9. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1974
10. Սարգսյան Ա., Եզեկյան Լ., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու, Մակմիլան-Արմենիա 2016
11. Ginzburg R.S. A Course in Modern Lexicology, Moscow, 1979
12. Dardano M, Trifone P. La Nuova Gramattica Della Lingua Italiana, Zanichelli, 1997
13. Fogliato S. e Carla T.M. Italiano: l'uso e la grammatical, Loescher, 1996
14. Garanzanti, Il grande dizionario delle lingua italiana, Rotolito Lombardia di Pioltello, Milano, 2003
15. Sensini M. Le Parole e i Testi, Mondadori, 2012
16. Шенделье Е. И., Отрицание как лингвистическое понятие, Учен. зап. МГПИИЯ, т. XIX, 1959

МАРИАМ ГЕВОРГЯН -СМЫСЛОФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ОТРИЦАТЕЛЬНЫХ ПРЕФИКСОВ В СОВРЕМЕННОМ ИТАЛЬЯНСКОМ, АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ.

В данной статье рассматриваются отрицательные аффиксы как предмет, изучаемый в контексте словообразования. Представлены морфологические и смыслофункциональные особенности аффиксов, сделана попытка выделить наиболее употребляемые отрицательные приставки. Основанием для исследования послужили аффиксные системы современного итальянского, армянского и английского языков.

MARIAM GEVORGYAN-SEMANTIC-STYLISTIC FEATURES OF NEGATIVE PREFIXES IN MODERN ITALIAN, ENGLISH AND ARMENIAN.

In this paper an attempt is made to discuss negative prefixes as a matter of study of word-formation. The paper touches upon morphological and semantic-stylistic features and as a result of which the most productive negative affixes are revealed. The theoretical basis for the paper is provided by modern Italian, Armenian and Italian system of affixation.

ОБУЧЕНИЕ ИНТЕРАКТИВНЫМ МЕТОДАМ РАБОТЫ С АУДИТОРИЕЙ ПРЕПОДАВАТЕЛЕЙ ВУЗА

ГАЛИНА ДОВЖИК
ЕЛЕНА ФАРБА

Ключевые слова: интерактивные методы обучения, взаимодействие с аудиторией, эффективная презентация, мультимедийные средства, обратная связь.

На сегодняшний день вопрос эффективного преподавания в вузе приобретает новое звучание. Интерактивные методы работы с аудиторией, позволяют решать современные задачи практикоориентированного обучения более эффективно и успешно реализовывать требования государственных образовательных стандартов в рамках компетентностного подхода в образовании. Таким образом, благодаря интерактивным методам обучения эу студентов за более короткий период формируются все необходимые общепрофессиональные и профессиональные компетенции в рамках конкретного направления подготовки. Кроме того, глубина осмысления слушателями новой информации значительно выше, если в процессе обучения используются данные методики, повышающие у студентов уровень мотивации и интерес к учебе. Эта статья посвящена обзору критериев эффективного обучения в вузе с помощью интерактивных методов обучения, в частности таких как: мини-лекция, групповая дискуссия, конструктивная развивающая обратная связь.

Итак, рассмотрим критерии оценки эффективности обучения [13]. В качестве таких критериев выступают: уровень мотивации обучающегося; значимость получаемой информации для будущей профессии; уровень профессиональной вовлеченности; степень направленности на конечный результат; уровень довузовской подготовки обучающегося; возможность конструктивной обратной связи. Увеличить эффективность обучения возможно посредством использования интерактивных методов обучения, поэтому преподавателям высших учебных заведений необходимо владеть данными технологиями, одной из которых является тренинг.

Для того, чтобы в процессе обучения получить максимальную эффективность преподавателям, в процессе проведения тренинга следует также придерживаться следующих принципов [11]:

1. Принцип конструктивной активности: только активная позиция участника через апробирование и тренировку приемов, способов поведения, идей, через активные упражнения, является тем способом, который приводит к реализации поставленных каждым участником целей на тренинг.

2. Принцип соблюдения регламента тренинга: временной ресурс ограничен. Поэтому очень важно соблюдать временные рамки во всех активностях, в работе подгрупп, в начале и завершении тренинга, а также своевременное начало работы после кофе-брейков и обедов.

3. Принцип психологического единства: на тренинге все равны, все одинаково учатся, осваивают новое. Из этого принципа вытекают: правило “одного микрофона”, правило “Говорить от себя лично: “Я считаю”, “Я думаю”. А также единство обращения друг к другу.

4. Принцип “право на ошибку”: любое обучение подразумевает, что слушатель еще не знает и не умеет то, чему он пришел научиться. Чтобы в результате он действительно научился новому, первостепенное значение имеет возможность пробовать и совершать ошибки. Поэтому в тренинге существует запрет на критику. Используется анализ по принципу конструктивной развивающей обратной связи без оценочных суждений типа “правильно-неправильно”, “хорошо-плохо”.

Каким образом преподаватель в процессе тренинга может реализовывать все эти принципы? Существует множество технологий, например «мини-лекция» [7]. В отличие от обычной, этот формат подразумевает короткую передачу информации (до 20 минут) с применением различных ораторских приемов и приемов риторики.

Требования к проведению мини-лекции:

- Задавая вопросы аудитории, следует выдержать небольшую паузу, а затем ответить самому.
- Обязательно включать примеры из практики в соответствии с обсуждаемой темой.
- Необходимо создавать интригу. Например: преподаватель рассказывает ситуацию, ставит задачу перед слушателями, а ее решение

задачи обещает раскрыть через 10 минут. Получаемый эффект незаконченного действия побуждает студентов задуматься и самим искать ответ, повышает уровень интереса и внимания с целью поиска правильного решения поставленной задачи.

- Следует довести одну из важнейших тем «до абсурда», что позволяет снять напряжение, дает слушающим возможность свободно высказывать свои мнения, даже если они резко отличаются от точки зрения преподавателя.

Критерии эффективности мини-лекции [7]:

1. Уровень усваивания новой информация значительно выше, чем при обычной трансляции изучаемого материала, так как используются все вышеуказанные принципы в комплексе.

2. Степень мотивации слушателей выше, чем при обычной трансляции изучаемого материала, так как они понимают, где его можно применить на практике.

Следующей интерактивной технологией, которую можно успешно применять в процессе обучения студентов – это диалог, важнейшей составляющей которого является **конгруэнтность** как соответствие содержания передаваемой информации невербальной подаче. В процессе диалога со слушателями преподавателю очень важно учитывать во время выступления невербальную составляющую.

В этой связи рассмотрим основные жесты и позы во время выступления и их значение[12]:

Таблица 1. Типы жестов и поз.

1. Конгруэнтные	1. Неконгруэнтные
Говорят о вере говорящего в свои слова. Внушают доверие, помогают понять.	Говорят о неверии говорящего в свои слова или о неуверенности в данной ситуации
2. Открытые (ладони)	2. Закрытые (ладони)
Открытость актуальных намерений.	Закрытость актуальных намерений

Вызывают доверие, способствуют контакту и пониманию	
3. Незамкнутые	3. Замкнутые
<p>Руки - открытость в мыслях</p> <p>Ноги - открытость в личностных отношениях, эмоциональная открытость.</p> <p>Способствуют лучшему контакту.</p>	<p>Руки - сконцентрированность на мыслях и делах, о которых в данный момент времени не сообщается</p> <p>Ноги - сконцентрированность на своих мыслях и личных вопросах, о которых в данный момент не сообщается</p>
4. Открытая линия контакта	4. Закрытая линия контакта
<p>Готовность к открытому личностному контакту.</p> <p>Способствуют контакту.</p>	<p>Желание увеличить дистанцию в контакте, выйти из контакта, завершить беседу</p>
5. От себя	5. К себе
<p>Дающие что-либо аудитории.</p> <p>Вызывают доверие, дают ощущение пользы от контакта.</p>	<p>Забирающие что-либо у аудитории</p>
6. Прочный контакт с полом, стулом	6. Непрочный контакт с поверхностью пола, кресла
<p>Уверенность в своих словах.</p> <p>Вызывают доверие к словам</p>	<p>Неуверенность в своих словах</p>

7. Устойчивый центр тяжести	7. Неустойчивый центр тяжести
Уверенность в себе. Доверие и уважение собеседника	Неуверенность в себе

В процессе диалога с аудиторией очень важна структура выступления. Преподаватель высшей школы, продумывая свою лекционную часть, может опираться на следующий алгоритм [2]: 1. подготовка к выступлению (подготовка слайдов; амонастрой (чем я могу заинтересовать аудиторию?); переключение с себя на аудиторию). 2. вступление: приветствие; представление себя; сообщение о целях диалога и его содержании (тезисно). 3. информационный этап: демонстрация и аргументирование; четкая структура; получение обратной связи от слушателей. На данном этапе необходимо внимательно наблюдать за реакцией аудитории. Если она не проявляет внимания к выступлению, люди сидят с отсутствующим видом либо отвлекаются на посторонние дела – с информационного изложения вам следует переключиться на эмоциональное. 4. заключение: подведение итогов, подытоживание ключевых идей с опорой на заявленные цели; выражение благодарности и прощание.

Требования к временному развертыванию выступления [7]:

наиболее общими рекомендациями о пропорциях времени являются: вступление – 10 - 20%, основная часть – 70 -80%, заключение - 10%. На начальном этапе уделяется больше внимания функциональным задачам, на последующих этапах фокус внимания должен перемещаться на содержательные задачи.

На сегодняшний день преподавателю нельзя забывать об использовании слайдов. Причем, не только при передаче информации, но и для дальнейшей работы с этой информацией, для организации практики. Поэтому важно, чтобы слайды были сделаны профессионально и отвечали следующим требованиям: имели единый формат, шрифт и разметку; были написаны прописными буквами; сохраняли анонимность кейсов, если того требует профессиональная этика; были составлены в

виде перечней / списков; не содержали знаки препинания, если это не цитата; - имели одно стилевое оформление; содержали менее шести строк на каждом слайде и менее шести слов в каждом предложении; были написаны простыми шрифтами которые легко читать. Например, Arial, Helvetica, Verdana, Comic Sans; отступы в тексте сделаны на одном уровне; отсутствуют ненужные рисунки, без дополнительной анимации; содержат информацию в виде диаграмм и графиков; орфографически точные; начинаются с «основной мысли» и содержат тезисы; содержат не более двух типов шрифтов на слайде; поддерживают выступление и помогают сделать его яснее для слушателей; имеют четкую структуру, где в начале и в конце обозначены цели, которые достигаются в результате выступления [10].

Еще одним эффективным способом интерактивного обучения является групповая дискуссия. Общеизвестно, что после передачи информации студентам, необходимо создать условия для осмысления нового материала и для этого больше всего подходит «групповая дискуссия» [5, 7, 8]. Групповая дискуссия - метод, применяемый для структурированного и интенсивного сбора мнений участников по определенному локальному вопросу. Групповая дискуссия позволяет ведущему активизировать всех участников, включить их мыслительную активность. Также групповая дискуссия позволяет собрать весь спектр мнений участников с тем, чтобы потом ведущий сфокусировал внимание группы на тех высказываниях, которые будут иллюстрировать и поддерживать пройденный материал[11, 7].

Групповая дискуссия позволяет хорошо активизировать каждого участника, включить его в изучаемый материал, дать понимание полученной участниками во время мини-лекций информации. От ведущего требуется быть внимательным, доброжелательным и точным в резюмировании, не перебивать сказанного участниками. Не развивать их мысли, а только резюмировать, опираясь на слова самих участников. Тогда групповая дискуссия дает максимальный эффект. Перефразирование и развитие смысла во время резюмирования подавляет участников, показывает, насколько они некомпетентны и далеки от профессионализма ведущего. Ведущий в такой ситуации сам себя возводит на пьедестал, чем замораживает групповую динамику. Также ведущему важно следить, чтобы не было споров. В ситуации их

возникновения тут же блокировать, говоря, что важно каждое мнение, что мы сейчас выслушиваем видение каждого, что также очень ценно. А уже потом мы будем анализировать, что взять за основу. Во время анализа и на этапе выводов, ведущий опирается на цели, который ставит тот или иной клинический случай перед врачом. А также на последствия той или иной выбранной врачом тактики. Через эти объективные показатели: цель и последствия, ведущий дает системное видение ситуации и решений в соответствии с изучаемым материалом [11, 7].

Алгоритм подготовки групповой дискуссии: выберите тему групповой дискуссии; зафиксируйте на доске письменно цель дискуссии; подготовьте слайды; подготовьтесь по структуре групповой дискуссии, а именно: решите, как начнете дискуссию; как поприветствуете аудиторию, как обозначите тему и цель, как введете в формат групповой дискуссии; каким образом дадите участникам дискуссии кратко высказаться по кругу; решите, будете ли вводить правила обсуждения, и если да, то какие?; продумайте, как будете активировать свою группу; составьте минимум 5 открытых вопросов для поддержания и развития групповой дискуссии. При этом следует помнить, что открытый вопрос – тот, на который нельзя ответить «да/нет». Пример открытого вопроса: «Как вы действуете в такой ситуации?». «Что вы думаете о...?» и т.д.; найдите основу, соответствующую вашей цели, на основании которой вы будете резюмировать сказанное; продумайте концовку групповой дискуссии; скажите слова благодарности группе за участие! [7, 13].

Существуют универсальные правила организации группового обсуждения:

1. в начале групповой дискуссии: рассадите участников так, чтобы каждый мог поддерживать зрительный контакт с каждым (в виде круга или подковы); проясняйте цели и задачи для каждой дискуссии; узнайте имена участников; сообщите о порядке взаимодействия участников.

2. Задавая вопросы, дайте возможность высказывать участникам свои идеи. Позвольте участникам развивать их. Говорите меньше, больше прислушивайтесь к идеям участников. Старайтесь не быть в центре внимания. Не принимайте решение за группу. Если вы станете высказывать экспертное мнение во время дискуссии, это отпугнет участников, остановит обсуждение и может даже обидеть участников.

Решения должны приниматься совместно всей группой путем обсуждения.

3. Постарайтесь сделать обсуждение интересным для участников. Оно должно касаться их интересов. Тогда участники запомнят его. Кроме того, если самому ведущему интересна тема, она будет интересна группе. Энтузиазм заразен.

4. Не торопитесь охватить весь материал. Быть эффективным важнее, чем просто активным. Двигайтесь со скоростью группы. Хвалите участников чаще и признавайте мнения меньшинства. Знайте, что период молчания в группе важен, чтобы участники могли собраться с мыслями.

5. Резюмируйте, когда в процессе обсуждения участники выдвинули эффективную идею, когда прозвучала ключевая идея клинического случая, а также во время освещения важного экспертного мнения. Резюмируйте или уточняйте тему для поддержания дискуссии [4, 9, 11].

Проводя занятие в форме дискуссии, соблюдайте следующие принципы эффективного обсуждения:

1. Награждать - похвала, признание, повышение самооценки участников способствует более активному их участию и создает комфортную творческую атмосферу.

2. Активизировать - все время старайтесь, чтобы участники были активны (думали, переживали, говорили). Когда люди активны, они учатся.

3. Давать обратную связь - конструктивной и своевременной. Чем меньше обратной связи, тем больше путаница. Чем больше обратной связи, тем быстрее обучение.

4. Давать право на ошибку. Создайте комфортную атмосферу, в которой участники могут ошибаться. Безопасность совершения ошибок способствует обучению и творчеству.

5. Использовать потенциал группы. Для обеспечения максимальной производительности группы, следует использовать все ресурсы группы (природные способности, уникальный опыт, знания, многообразие) [1, 2, 3].

Ниже представлена шкала самооценки преподавателя, которая является эффективным инструментом настройки необходимых умений для ведения качественной групповой дискуссии: для самооценки преподавателя, ведущего групповой дискуссии, ответьте на следующие вопросы. За ответ «да» - 1 балл, за ответ «нет»- 0 баллов [13].

1. Цели дискуссии должны быть четко определены.
2. Дискуссия началась вовремя.
3. Все участники приняли участие в обсуждении.
4. Вопросы были предварительно спланированы, правильно заданы и инициировали обсуждение.
5. Обсуждение проходило спонтанно и непринуждённо.
6. Дискуссия развивалась, тема дискуссии не менялась на протяжении всего обсуждения и цель дискуссии была достигнута.
7. Я избегал чтения лекций и доминирования в обсуждении.
8. Я помогал участникам обсуждения слышать мнения других и уважать чужое мнение.
9. Я не принимал чью-либо сторону в обсуждении.
10. Я не отвечал на заданные мне вопросы, а переадресовывал их обратно группе.
11. Я старался не выдвигать своих идей и мнений.
12. Объяснения были использованы только при необходимости.
13. Контроль процесса поддерживался на протяжении всей дискуссии.
14. Я часто подводил итоги обсуждения для формирования группового мышления.
15. Флип-чарт и слайды были использованы эффективно.
16. Все основные пункты плана, построенного перед дискуссией, выполнены.

17. Интерес к обсуждению поддерживался на протяжении всей дискуссии.

18. Группа покинула дискуссионный зал с размышлениями на тему.

19. Заключительное резюме было сделано (группой или ведущим).

20. Дискуссия закончилась вовремя.

РЕЗУЛЬТАТ ТЕСТА: 17-20 - великолепно, 13-16 – хорошо, 9-12 – удовлетворительно, 5-8 - достаточно, 1-4 плохо.

Поскольку дискуссия строится с помощью вопросов, ниже представлены некоторые варианты эффективных вопросов [2], запускающих активное осмысление в группе:

1. Что вы хотите получить в результате? Какова ваша цель?
2. Какой у вас план действий? А почему именно такой? Какие причины такого выбора?
3. Как вы поймете, что поставленная цель достигнута? Когда что произойдет?
4. Что в желаемом результате самого существенного?
5. А чем этот конечный результат важен вам, пациенту, возможно, коллегам?
6. Какие нюансы требуют повышенного внимания? Что еще нужно учесть?
7. Что вам совершенно ясно в этой ситуации?
8. А что требует дополнительного анализа?
9. Какие у вас есть ресурсы для решения этого вопроса? Кто бы мог помочь, подсказать, посодействовать?
10. А что происходит сейчас в этом вопросе? Что уже делается?
11. В связи со всем этим, что бы можно было сделать для достижения поставленной цели?

Финальной темой нашего обсуждения является правила дачи поддерживающей развивающей обратной связи [13]. Эта тема является ключевой для динамичного движения в освоении нового материала. Именно теме дачи обратной связи посвящается все больше исследований. Поскольку, данная в эффективной форме, она создает творческую мотивирующую атмосферу. Итак, структура обратной связи следующая:

1. Спросите участника, что по его мнению, было сделано им хорошо.
2. Скажите свое мнение о том, что было им сделано хорошо.
3. Предложите участнику описать, что бы он сделал по-другому в следующий раз. Помогайте ему избегать негативных формулировок и фокусировки на ошибках!
4. Суммируйте сказанное и добавьте при необходимости что-то, что может быть сделано иначе участником в следующий раз.
5. Поблагодарите участника.

Подводя итоги, необходимо отметить следующее. С помощью описанных выше методов мини-лекции, групповой дискуссии и поддерживающей развивающей обратной связи, у преподавателя высшей школы появляется возможность контролировано воздействовать на аудиторию, управлять эмоциями аудитории, устанавливать контакт и вести за собой студентов, умение чувствовать и понимать аудиторию, действовать, отталкиваясь от мотивации аудитории, умение готовить эффективную презентацию и проводить групповую дискуссию с учетом законов восприятия. А также умение чувствовать себя и действовать уверенно, находясь в контакте с аудиторией.

БИБЛИОГРАФИЧЕСКИЙ СПИСОК

1. Аткинсон Мэрилин, Рае Т.Чойс. Мастерство жизни. Внутренняя динамика развития. Изд-во «Альпина Паблишер», Москва, 2015.
2. Аткинсон Мэрилин,. Достижение целей. Пошаговая система. Изд-во «Альпина Паблишер», Москва, 2013.
3. Аткинсон Мэрилин. Жизнь в потоке. Изд-во «Альпина Паблишер», Москва, 2015.
4. Генри Клауд, Джон Таунсенд. Барьеры. пер. с англ. Изд-во «Мирт», 2009.
5. Гиппенрейтер Ю.Б. Введение в общую психологию. Курс лекций. Изд-во «Че-Ро», Москва, 2002.
6. Завьялова Ж., Фарба Е., Авдюнина М., Каденильяс-Нечаева Е. Энергия бизнес-тренинга. Изд-во «Речь», С.-Пб., 2005.
7. Завьялова Жанна «Путь тренера». Изд-во «Речь», С.-Пб., 2002.
8. Метафорическая деловая игра. Коллектив авторов, под ред. Ж. Завьяловой. Изд-во «Речь», 2005.

9. Николаева Е.И. «Воспитание толерантности». Изд-во «Мой учебник», Москва, 2007.

10. Роэм Дэн. Визуальное мышление. пер. с англ. Изд-во “Манн, Иванов, Фербер”, Москва, 2009.

11. Фопель Клаус. Психологические группы: рабочие материалы для ведущего. Перевод с нем., 5-е издание, стереотипное. М., “Генезис”, 2004.

12. Leadership Embodiment: How the Way We Sit and Stand Can Change the Way We Think and Speak (2013)

13. Learning How to Learn: Powerful mental tools to help you master tough subjects. Курс Калифорнийского университета в Сан-Диего. Coursera.org.

ԳԱԼԻՆԱ ԴՈՎՃԻԿ, ԵԼԵՆԱ ՖԱՐԲԱ-ՌԻՍՈՒՑՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԲՈՒՇԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սույն հոդվածի նպատակը լսարանի հետ աշխատելու ինտերակտիվ մեթոդների նկարագրությունն է: Նկարագրվում են լսարանի հետ արդյունավետ փոխներգործության միջոցները, լսարանի զգացմունքները կառավարելու, մարդկանց հետ շփվելու և նրանց իր հետևից տանելու հմտությունները, նաև լսարանն զգալու ու հասկանալու ունակությունը, լսարանի մոտիվացիայի վրա հիմնվելով՝ գործելու կարողությունը, արդյունավետ շնորհանդեսներ պատրաստելու և խմբակային բանավեճեր անցկացնելու հմտությունները՝ հաշվի առնելով ընկալման օրենքները, նաև իրեն վստահ զգալու և գործելու ունակությունները:

GALINA DOVZHİK, ELENA FARBA - INTERACTIVE METHODS OF LEARNING FOR PROFESSORS

Research methods for increasing the efficiency of teaching in University. The aim of the article is the description of interactive methods of work with the audience. We study the way to control the impact on the audience, manage the emotions of the audience, to establish contact and lead the people, the ability to feel and understand the audience to act, using the motivation of the audience, the ability to prepare an effective presentation and conduct a group discussion based on the perception. As well as the ability to feel and act with confidence, being in contact with the audience.

STYLISTIC PECULIARITIES OF LITERARY IMAGES IN “SULA” BY TONY MORRISON

GAYANE YEGHIAZARYAN

Key words: Tony Morrison, Sula, literary image, metaphor, contrast

The article explores literary images in the novel “Sula” by Tony Morrison⁵⁰ analyzing metaphors that disclose the notion of contrast. A great part depends on how the writer speaks and what language chooses for the writer-reader conversation. Eventually a literary language comes to be, among other things, a huge sea of implicit metaphors, an endless web of interrelated symbols and expressive images. T. Morrison is a writer who knows what language to use for the reader to understand her world that is full of complexities and contradictions. She skillfully grabs readers’ attention with every word she writes and takes us to a journey of mind and heart.

A literary image, known as “imagery” in literature, is when an author uses descriptive language to engage one of the reader’s five senses. This makes a piece of writing more powerful because the reader can easily picture the actions or characters in a story or poem. It is used to create images in the reader's mind. When imagery employs the use of various senses, it enhances the reality of what the reader is reading. Imagery allows a writer to show the reader the setting, character or situation, not just tell him what is going on in the story. It creates an unbelievable world for the reader to enjoy. Imagery is used to bring the story or poem alive for the reader⁵¹.

A literary language is not just a collection of words in an unabridged dictionary but the individual and social possession of living men, an inexhaustible system of equivalents, of sounds to objects and to one another. Eventually a literary language comes to be, among other things, a huge sea of implicit metaphors, an endless web of interrelated symbols and expressive images⁵².

⁵⁰ Morrison, Toni. *Sula*. New York. Penguin Group. 1973.

⁵¹ Galperin I. *Stylistics*. Moscow. Higher School Publishing House. 1971

⁵² Mitchell W. *New Literary History* Vol. 15, No. 3, *Image/Imago/Imagination*. The Johns Hopkins University Press. 1984. 503-537.

The image is often seen, after it has been written, as being one of two things. It is either something that represents a thing in the "real" world, or it is seen as its own thing, divorced from the burden of representing anything other than itself. Again, it is the latter definition that has come into more common use. As many philosophers have recently shown, written language is more than simply representational. This means that the image, rather than being something that stands in for something else, is seen as something in and of itself; tied to the things of the world, but not burdened by "representing them directly". Ezra Pound made perhaps the most widely used definition of image in the 20th century: "An 'Image' is that which presents an intellectual and emotional complex in an instant of time." In Pound's definition, the image is not just a stand in for something else; it is a putting-into-words of the emotional, intellectual and concrete stuff that we experience in any given moment. It is also important to note that an image in literature, contrary to popular belief, is not simply visual. It can engage any of the senses. And, in fact, for it to be an image, it must engage at least one of the senses by using sensory detail⁵³.

Once an image is created, there is often a need to place it in the context of a larger unit. While many aspects of an image may be endlessly debatable, this one rarely is: images are the concrete, gut-level part of a literary work. And their function within a poem or novel reflects that. The key to using images well in a them is to remember that images tend to produce gut-level responses in readers. They feel the most real. They do, ultimately, convey (in very short order) a complete human experience in words. And that is why a study of literary work almost always begins with the image. It is the backbone, the grounding rod, of it. Few other aspects of our language can boast such a strength.

Sensory images, known as "imagery" in literature, are when an author uses descriptive language to engage one of the reader's five senses. This makes a piece of writing more powerful because the reader can easily picture the actions or characters in a story or poem. Writers also use imagery to create a specific tone or mood. The Bedford Glossary of Critical and Literary Terms distinguishes three uses of the term "imagery".⁵⁴ The first refers to the

⁵³ Cuddon J. Dictionary of Literary Terms and Literary Theory. 2012. John Wiley & Sons.

⁵⁴ Baldick Ch. The Oxford Dictionary of Literary Terms. 2008. Oxford University Press.

group of images found in a text as a whole, while the second refers to specific word images that appeal to the five senses of sight, hearing, taste, smell or touch. The third use refers to figurative language, like simile or metaphor. When used skillfully, imagery can generate a strong graphic image in the mind of the reader that gives him the sense of being in the story. Careful word choice is key to good imagery. Senses that can be expressed through descriptive imagery in poetry or other literature include the visual, auditory, olfactory, gustatory, tactile, organic and kinesthetic senses. Organic imagery refers to an internal sensation, such as fear, hunger or tiredness, while kinesthetic imagery deals with movement. Imagery is used to create images in the reader's mind. When imagery employs the use of various senses, it enhances the reality of what the reader is reading. Imagery allows a writer to show the reader the setting, character or situation, not just tell him what is going on in the story. It creates a believable world for the reader to enjoy. Imagery is used to bring the story or poem alive for the reader⁵⁵.

Tony Morrison used a bundle of literary images in her novel to make it vibrant and dynamic. The images are depicted by many literary means in creation of which **contrast** is predominating.

"Sula" is one of the most alive novels of Tony Morrison as it is full of impressive imageries that help you to feel the story with all your senses and be part of it⁵⁶. The uniqueness of this novel is that nearly every page contains an imagery expressing contrast, juxtaposition, foil, opposition and etc. It is rich with paradoxes and contradictions from the name of a community on top of a hill called "Bottom" to a family full of discords and conflicts named "Peace." This contrastive tone of "Sula" can be taken as a literary technique, indeed strongly expressing writer's natural talent. In the opening chapter of "Sula", Morrison implies an absence of color in the nearly abandoned hill top community that stood above the city of Medallion, ironically called the "Bottom" by its inhabitants. To make room for the new Medallion City Golf Course, the "nightshade and blackberry patches" have been torn from their roots and the beech and pear trees that were once "wonderful to see" are also gone.

⁵⁵ Jefferson B. Fletcher (1989). *The Visual Image in Literature* Vol. 6, No. 4. The Johns Hopkins University Press. 385-401.

⁵⁶ Rubenstein, R. *Pariahs and Community. Toni Morrison: Critical Perspectives Past and Present*. Eds. Henry Louis Gates and K. A. Appiah. New York. Amistad Press, Inc. 1993.

*E.g. 1. In that place, where they **tore the nightshade and blackberry patches from their roots to make room for the Medallion City Golf Course**, there was once a neighborhood.*

Morrison starts her story with a beautiful imagery of nightshade and blackberry expressing contrast. Here nightshade and blackberry are metaphors which stand for two main characters of the novel- Sula as nightshade and Nel as blackberry. Morrison compares Sula with nightshade for her contradictory and somehow evil nature. Both the foliage and the berries of this plant are extremely toxic for which it earned a list of sinister names like deadly nightshade, devil's berries, naughty man's cherries, death cherries, beautiful death, and devil's herb. On the other hand, Nel is compared with blackberry, soft and sweet eatable fruit counting her serene and peaceful spirit. With these metaphors Morrison sets up the main contrast of the story that exists between *good (Nel) and evil (Sula)*.

As it was already mentioned Morrison is a great master of creating vibrant and dazzling images where the reader uses all his 5 senses to feel the author's creation with his heart. The following imagery illustrates summer with its bright colors and emotions.

*E.g.2. Then summer came. A summer limp with the weight of blossomed things. **Heavy sunflowers weeping over fences; iris curling and browning at the edges far away from their purple hearts; ears of corn letting their auburn hair wind down to their stalks.** And the boys. The beautiful, beautiful boys who **dotted the landscape like jewels, split the air with their shouts in the field, and thickened the river with their shining wet backs.** Even their **footsteps left a smell of smoke** behind.*

Morrison makes summer limp with the weight of blossomed things. Usually blossom is a sign of abundance and happiness, symbol of energetic life but in case of Medallion summer, it limps like an old man who has so much burden on his shoulders that even the shiny blossomed atmosphere rises sense of heaviness in him with sunflowers weeping over fences. Morrison makes her sentences alive and uses different stylistic devices such as metaphors, epithets, simile and personification. Here summer represents the boys as well: boys give the smell of smoke to the summer and their voices split the air. They are one with the nature, the nature that created them and

nature that breathes with their presence. This is another brilliant imagery that shows there are no boundaries for Morrison's imagination.

The major theme of "Sula" is good versus evil. The question of right versus wrong in the novel can be traced all the way back to the childhood's of Sula and Nel. As the two girls played with Chicken Little, a young child from the neighborhood, Sula was swinging him around by his hands. She accidentally threw him into the water, and he drowned. Sula and Nel decided not to tell anyone the truth about what had happened. Below we see a terrifying but at the same time stunning imagery of Chicken Little's death.

*E.g.3. **The water darkened and closed** quickly over the place where Chicken Little sank. The pressure of his hard and tight little finger was still in Sula's palms as she stood looking at the closed place in the water...**The water was so peaceful** now. There was nothing but the **baking sun** and something newly missing.*

Here the writer uses four dramatic metaphors to create the imagery of unexpected death. For Morrison water is often associated with death in the novel. For Sula (and Nel, to a lesser degree), it represents Chicken's horrible drowning. Closely examining the metaphor "water was so peaceful" we notice the contradiction Morrison gives. After death water is so tranquil that even a little trace can't be found to indicate what have happened. The terror of death is contrasted with the peacefulness of water. Here can see a very beautiful pattern of mother-nature. The drowning happens so quickly and easily and calmly, as if the water just swallowed the Chicken Little. Here nature plays the role of God who easily gave him life and easily took it. The result is that Sula goes through life believing that she is evil because she killed the Chicken Little. In contrast, Nel judges herself to be good because it was not she who caused the Chicken Little's death. The lives of both women are clearly shaped by the views they have of themselves. As an adult, Sula is wild and unconventional, while Nel is the picture of propriety and goodness.

*E.g.4. Even Nel's love for Jude, which over the years had **spun a steady gray web around her heart**, became a bright and easy affection.*

For describing the fading emotions Morrison uses metaphor which explains the gradual transformation of love into a bright and easy affection.

E.g.5. *I waited for Sula to look up at me any minute and say one of those lovely college words like aesthetic or rapport, which I never understood but which I loved because **they sounded so comfortable and firm**, contrasting understanding with liking.*

Unfortunately, even though the girls were closely bonded in their childhood, they are not really truthful with one another in their adulthood. Even though they seem to need one another, they betray each other. Sula sleeps with Nel's husband, breaking up her marriage. In this part Morrison shows the scene of infidelity and portrays the emotions Nel feels. With the help of metaphors we get the image of shocked Nel who waits for Sula to say something to explain what happened or to joke like she used to when they were young. This speaks about trust that Nel had over Sula which she loses once and forever.

E.g.6. *It was Sula who had taken the life from them and **Jude who smashed her heart** and the both of them who left her with no thighs and no heart just her brain raveling away.*

In this sentence the author uses another striking and strong metaphor to describe the betrayal which was like smashing Nel's heart without the smallest regret and shame.

E.g. 7. *It was a fine cry-loud and long-but **it had no bottom and it had no top**, just **circles and circles of sorrow**.*

Years later after Sula's death Nel visits Medallion once again. Prompted by a discussion about Chicken Little with Sula's grandmother, Nel goes to visit the Sula's grave. There she comes to terms with the truth of her past. Nel remembers that Sula had been terrified and anguished over the Chicken Little's death: she certainly had not wanted the boy to die, but blamed herself fully for the accident. Nel made no attempt to change Sula's thinking. and Nel refuses to tell Sula that she should forgive herself for the Chicken Little's death. Morrison by means of metaphor describes the last heart-touching scene, and creates a soundless and at the same time noisy imagery. When finally Nel realizes what she had done, she gives a fine cry, loud and long, cry without bottom or top, just circles and circles of sorrow, similar to their lives.

To read Tony Morrison is like an entertaining and at the same time philosophical conversation with yourself. Her language is clear but not simple. She is the master of expressing contradictions. She wants us readers to immerse into her world and for doing it she deliberately chooses words that strike your mind with the contrastive meaning their express in a certain context. She always keeps you intrigued and interested and the great role in this has her talent to create perfect and amazing imageries with different literary devices. “Sula” is a novel of complexities and contradictions. Nearly every line contains some kind of contrast in it. In the novel the constant metaphysical struggle between good and evil is described as it takes place on a hill in the small black town of Medallion, Ohio. Morrison succeeds in putting the notion of good and evil, in decadent terms as seen within a society that is breaking down.

ՔԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ –ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Թ. ՄՈՐԻՍՈՆԻ «ՍՈՒԼԱ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են ամերիկացի գրող Թոնի Մորիսոնի «Սուլա» պատմվածքում առկա գեղարվեստական պատկերները և դրանց առկայացումը՝ փոխաբերություն-հակադրությունների միջոցով: Հակադրությունը ներկայացվում է Բարու և Չարի մշտական պայքարի համատեքստում:

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН- СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЛИТЕРАТУРНЫХ ОБРАЗОВ В РАССКАЗЕ «СУЛА» Т. МОРИССОНА

В статье анализируются художественные образы в рассказе «Сула» американского писателя Тони Морисона и их актуализация метафорическими контрастами. Противоречие представлено в контексте вечной борьбы Добра и Зла.

**ՏԵՔՍՏԻ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՆԱԽԱԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

ԷՎԵԼԻՆԱ ԶԱԴՈՅԱՆ

Հիմնաբառեր՝ տեքստի կարգեր, նախաթարգմանական գործունեություն, տեղեկատվական տեքստ, հուզա-արտահայտչական տեքստ, ազդեցական տեքստ, աղբյուր լեզու, թիրախ լեզու

Համաշխարհային գրականությունը բազմալեզու համակարգ է: Որքան բազմաթիվ են աշխարհի ժողովուրդներն ու ազգությունները, նույնքան տարատեսակ են գոյություն ունեցող ազգային գրականությունները: Բայց քանի որ *մշակույթ* ասվածը համամարդկային հասկացություն է և շատ դեպքերում մեծապես աղերսում է աշխարհի տարբեր ժողովուրդներին, մեր օրերում միջմշակութային փոխներթափանցման միջոցները դարձել են առավել առանցքային և բազմազան: Այս առումով անուրանալի է գրականության՝ իբրև յուրօրինակ կամրջողի դերն ու կարևորությունը: Բայց գրականության նման կարևոր առաքելությունն ի կատար չէր ածվի, եթե շփվող կողմերին օգնության չգային թարգմանիչները:

Սույն ուսումնասիրության նպատակն է վեր հանել տեքստի կարգերի վերլուծության առանցքային կողմերն իբրև նախաթարգմանական գործունեություն: Ուսումնասիրության առարկա են դառնում գրականագիտությունն ու թարգմանաբանությունը՝ իբրև գիտաճյուղեր, իսկ օբյեկտ՝ տեքստի նախաթարգմանական վերլուծությունն իբրև կարևոր գործառույթ:

Պետք է նշել, որ թարգմանչությունն իբրև այդպիսին ի հայտ է եկել դեռևս հին դարերում՝ նախաքրիստոնեական ժամանակներում: Այս ժամանակների լավագույն թարգմանիչներ են Հերոդոտոսը (Ն. Ք. 484-430/20թթ.) [Գաբրիելյան, 5], հոմեթացի հայտնի ճարտասան Մարկուս Տուլիոս Յիցերոնը (Ն. Ք. 106-43թթ.), իսկ արդեն միջին դարերում՝ Յուզիբուս Ջերոմը (347-419թթ.) [Գաբրիելյան, 12]:

Թարգմանության պատմության յուրաքանչյուր ժամանակաշրջան իր առջև դրել է որոշակի պահանջներ ու նպատակներ: Անտիկ դարաշրջանում, օրինակ, կատարվել են բազմաթիվ թարգմանություններ

հունա-հռոմեական գրականությունից: Արդեն միջին դարերում թարգմանվում էին հիմնականում կրոնական տեքստերը, այդ թվում և «Աստվածաշունչը» [Համատեքստ, 304]: Հետագա դարերում թե՛ մեծանում է թարգմանված գրականության քանակը, թե՛ ընդլայնվում է թարգմանվող լեզուների ցանկը: Միաժամանակ կանոնակարգվում են նաև թարգմանության տեսական դրույթները: Եվ եթե նախկինում թարգմանությունն ավելի շատ ինքնաբերական, ինքնաբերաբար գործընթաց էր, ապա այժմ գնալով ավելի ու ավելի է կանոնակարգվում թարգմանչական գործընթացն՝ իբրև գիտակցական և պլանավորված գործունեության տեսակ:

Եթե մենք թարգմանությունը դիտարկում ենք իբրև միջմշակութային հաղորդակցության միջոց, ապա թարգմանիչները պետք է անխուսափելիորեն ընկալվեն իբրև այդ նույն հաղորդակցության միջնորդներ: Եվ իրոք, եթե չլինեի թարգմանչի կատարած բարդ և պատասխանատու աշխատանքը, այդ հաղորդակցումն ի կատար չէր ածվի:

Այստեղ արդեն տեղին է խոսել թարգմանված տեքստում թարգմանչի ներկայության չափաբաժնից: Եվ ինչպես գիտական շատ հարցադրումների դեպքում, այս հարցի շուրջ ևս տիրում է բազմակարծությունը: Ըստ մի տեսակետի, «բուն գործընթացում թարգմանիչը երբեք չպետք է, ինչպես ասում են՝ տեղավորվի ստեղծագործության մեջ, այլ լինի նրա հետ՝ իբրև ուղեկից» [Կարապետյան, 167]: Մեկ այլ կարծիքի համաձայն, որ արտահայտել է ռուս բանասեր Պավել Անտոլսկին՝ «թարգմանիչը պարտավոր է ներթափանցել հեղինակի աշխարհայացքի մեջ, ըմբռնել նրա գրելաձևը և ոճը և հնարավորինս փոխանցել այդ ամենը մայրենի լեզվի միջոցներով՝ միաժամանակ պահպանելով իր դեմքը» [Bon. худ. пер., 24]: Գրեթե նմանատիպ տեսակետ է արտահայտել նաև ռուս գրականագետ Լյուբիմովը՝ ասելով. «Թարգմանչի համար իդեալը հեղինակի հետ միաձուլումն է: Բայց միաձուլվել հեղինակի հետ չի նշանակում նրա ստրուկը դառնալ» [Любимов, 125]: Հետաքրքիր է նաև գրականագետ Ա. Զրբաշյանի դիրքորոշումը, ով պնդում է, թե «կարևոր հարցերից մեկը թարգմանական տեքստում թարգմանչի անխուսափելի ներկայության փաստի հիմնավորումն է» [Զրբաշյան, 211]: Մեր կարծիքով թարգմանիչը, որքան էլ կամենա, չի կարողանա ամբողջովին օբյեկտիվ լինել թարգմանական գործընթացում, բայց նա պետք է փորձի հնարավորինս

սահմանափակել իր վերաբերմունքի արտահայտումը թարգմանվող տեքստում:

Ինչ վերաբերում է բուն թարգմանական գործունեությանը, որ թարգմանչի հիմնական առաքելությունն է, ապա այն եռափուլ գործընթաց է: «Աղբյուր լեզվից» «թիրախ լեզու» անցնելիս (source language & target language) (Վինեյ և Դարբելն, Ջ. Քեթֆորդ, Պ. Նյումարկ և ուրիշներ) թարգմանվող տեքստը նախ ենթարկվում է իմաստային և քերականական վերլուծության, ապա փոխակերպվում ընդունող լեզվի համակարգ, որից հետո միայն վերակոդավորվում ընդունող լեզվի քերականական համակարգին համապատասխան [Գաբրիելյան, 154]:

Թարգմանչի բուն աշխատանքին, սակայն, նախորդում է մի փուլ, որ պակաս կարևոր չէ, քան թարգմանելն է: Խոսքը նախաթարգմանական գործունեության մասին է, ինչը ևս իրագործվում է մի քանի էտապներով:

Առաջին հերթին պետք է խոսել թարգմանվող տեքստի ընտրության գործընթացի մասին: Թարգմանվող նյութը դրա քննողի՝ թարգմանչի սեղանին կարող է հայտնվել մի քանի ճանապարհներով: Այն կարող է իբրև աշխատանք առաջարկվել թարգմանչին: Այս դեպքում թարգմանչի ես-ի դրսևորումը տեքստի ընտրության հարցում սահմանափակվում է սուկ իր դրական կամ բացասական պատասխանի հնչեցմամբ. նա կարող է ընդունել կամ մերժել արվող առաջարկը: Նյութը կարող է թարգմանչի ձեռքում հայտնվել նաև պատահականության սկզբունքով՝ մասնագիտական պրպտումների արդյունքում: Այս դեպքում թարգմանչի կամքի դրսևորումը թարգմանել – չթարգմանելու երկընտրանքի հարցում ավելի է մեծանում: Եթե նախորդ դեպքում նա գուցեև դժվարանար մերժել ինչ-ինչ հանգամանքներից ելնելով (պարտավորվածության զգացում, մասնագիտական առաջընթաց, ֆինանսական խնդիրներ և այլն), ապա այս դեպքում նման խնդիր այլևս չկա: Վերջապես, երրորդ տարբերակի դեպքում թարգմանիչն ինքը կարող է գնալ տվյալ նյութի ընտրությանն ու թարգմանությանը՝ ելնելով որոշակի հետաքրքրություններից ու նախասիրությունից: Այս դեպքում նյութի ընտրության հարցում թարգմանչի կամքին ավելանում է նրա գիտակցված ինքնամղումը՝ առավելագույնի հասցնելով տեքստի ընտրության հարցում նրա ես-ը:

Նախաթարգմանական երկրորդ փուլը նախնական ընթերցումն է: Որքան էլ թուուցիկ լինի տեքստի նախնական ընթերցումը թարգմանչի կողմից, այն կարող է շատ բան տալ թարգմանչին: Հենց այս փուլում է, որ

նա վերջնականապես վճռում է թարգմանել կամ չթարգմանել տվյալ տեքստը:

Երրորդ էտապում թարգմանիչն անցնում է խնդրո առարկա տեքստի կարգի կամ տեսակի վերլուծությանը: Հենց այս փուլում է, որ թարգմանիչը որոշում է, թե ինչ տիպի տեքստի հետ գործ ունի և, ըստ այդմ էլ, ինչպիսի մեխանիզմներ և հնարներ պետք է ընտրի թարգմանական գործընթացի ժամանակ:

Եվ վերջապես, երբ արդեն վերջացրել է թարգմանվող տեքստի հետ կապված նախնական բոլոր ուսումնասիրությունները, թարգմանիչն անցնում է, այսպես կոչված, արտատեքստային քննությանը: Այս դեպքում արդեն վերլուծության են ենթարկվում տեքստից դուրս որոշակի մանրամասներ, որոնք կարող են մեծապես օգնել թարգմանչին ավելի լավ ճանաչել տեքստն ու առավել հեշտ կողմնորոշվել թարգմանական երկրնտրանքի պահերին: Խոսքը վերաբերում է այնպիսի փաստերի ուսումնասիրությանը, ինչպիսիք են թարգմանվող տեքստի ստեղծման պատմական կոնկրետ ժամանակաշրջանը, նյութի մշակության ին կոնտեքստը, հեղինակի կենսագրական տվյալները, նրա աշխարհայացքն ու համոզմունքները և այլն:

Մի կողմ թողնելով նախաթարգմանական մյուս գործընթացները՝ փորձենք քննել տեքստի կարգերի վերլուծության գործունեությունը՝ ելնելով մեր հետազոտության նպատակադրումից:

Տեքստի՝ կարգերի կամ տեսակների բաժանման առաքելությունը վիճակված է գերմանացի լեզվաբան և թարգմանաբան Կատարինա Ռայսին, ով առանձնացնում է տեքստի երեք տիպեր՝ տեղեկատվական (informative), հուզա-արտահայտչական (expressive or emotive), կոչական կամ ազդեցական (operative or vocative) [Reiss, 27]: Ի պատիվ Ռայսի պետք է նշել, որ տեքստային բաժանման եռաճյուղ համակարգ առաջ քաշելիս նա հաշվի է առել տեքստի հետ կապված բոլոր հանգամանքները՝ ձևը, բովանդակությունը, հեղինակային նպատակադրումը և այլն: Իսկ գիտական գրականության մեջ բավական լայնորեն է խոսվել և քննարկվել ձևի և բովանդակության միասնության հարցը [Leech, 11]:

Եթե հաշվի առնենք այն փաստը, որ հաղորդակցական գործընթացը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից՝ ուղարկող (խոսող կամ գրող), ընդունող (լսող կամ կարդացող) և նյութ (ինֆորմացիա) [Գաբրիելյան, 189], ապա Ռայսի վերոնշյալ դասակարգման հիմքում դրվում է նշված բաղադրիչներից մեկի կամ

մյուսի առաջնային լինելու սկզբունքը: Տեղեկատվական տիպի տեքստերում կարևորությունը տրվում է փոխանցվող նյութին: Այս դեպքում թե՛ այդ տեղեկատվության ուղարկողը և թե՛ ընդունողը ետին պլան են մղվում: Կարևորը թարգմանվող նյութի ամբողջականության պահպանումն ու փոխանցումն է՝ դրանում ամփոփված ինֆորմացիայով հանդերձ: Այս տիպի տեքստերը, որպես կանոն, զուրկ են հուզական երանգավորումից:

Հուզա-արտահայտչական կարգի տեքստերում փոխանցվող նյութից և ընդունողից շատ ավելի կարևոր է *ուղարկողը*: Այսպիսի տեքստերի հեղինակը մեծ ճիգ է գործադրում որոշակի նյութ կերտելիս՝ գործի դնելով թե՛ իր երևակայությունը, թե՛ լեզվամտածողությունը և թե՛ գիտելիքները թեմայի հետ կապված: Այս տիպի տեքստեր թարգմանելիս թարգմանիչը, փաստորեն, պետք է կարևորություն տա ոչ այնքան փոխանցվող նյութի տեղեկատվական կողմին, որքան դրա հեղինակի ասելիքին ու ասվածի եղանակին:

Կոչական կամ ազդեցական բնույթի տեքստերում առաջնային պլան է մղվում *ստացողը*: Խնդիրն այն է, որ այս տիպի տեքստերը պարունակում են թե՛ ինֆորմացիա, թե՛ հուզական որոշակի երանգավորում և միտված են ընթերցողի կամ ունկնդրի վրա որոշակի ազդեցություն գործադրելուն, նրան որոշակի քայլերի դրդելուն: Հասկանալի է, որ այս կարգի տեքստեր թարգմանելիս թարգմանիչը պետք է ձգտի հնարավորինս ավելի լավ պահպանել այդ տեքստերի նպատակային կողմը և դա նույն կերպ փոխանցել «թիրախ լեզվի» ընթերցողին:

Տեքստի՝ վերոբերյալ բաժանման պարագայում տեքստի կարգերից յուրաքանչյուրին բաժին է ընկնում գրականության կամ խոսքի մի քանի տարատեսակներ: Ըստ այդմ, տեղեկատվական բնույթի տեքստեր են նորությունները, գիտական տեղեկատվությունը, փաստարկները, կարծիքները և այլն: Հուզա-արտահայտչական տեքստային կարգի տակ հիմնականում ընկնում է գեղարվեստական գրականությունը՝ իր ողջ տարատեսակներով հանդերձ: Ի վերջո, ազդեցական բնույթի տեքստեր են համարվում գովազդները, հոետորական ճառերը, գիտահանրամատչելի գրականությունը և այլն:

Ինչպես արդեն նշեցինք, տեքստի կարգային վերլուծությունն անչափ կարևոր գործընթաց է, որն օգնում է թարգմանչին կողմնորոշվել թարգմանական այս կամ այն հնարն ընտրելիս: Դա շատ կարևոր է, քանի որ բացի նրանից, թե ով է կատարում թարգմանությունը, և ինչ բնույթի

տեքստ է թարգմանվում, բուն թարգմանության որակը մեծապես կախված է նաև այն փաստից, թե ինչպես է կատարվում այդ թարգմանությունը:

Թարգմանության կատարման եղանակների կամ, այլ խոսքերով, թարգմանության տարատեսակների շուրջ ևս գիտական շրջանակներում տիրում է բազմակարծությունը: Տարբեր ժամանակների թարգմանաբանները ձգտել են տալ թարգմանական մեխանիզմների առավել ճշմարիտ և ընդգրկուն բաժանումը՝ հաշվի առնելով խնդրին առնչվող յուրաքանչյուր մանրամասն:

Այսպես, անգլիացի բանաստեղծ, թարգմանիչ և քննադատ Ջոն Դրայդենը (1631 - 1700) առաջարկում է թարգմանության երեք տեսակներ՝ մետաֆրազա (metaphrase), վերապատմում (paraphrase) և նմանակում (imitation) [Dryden, 43]: Առաջին դեպքում մենք գործ ունենք «բառ առ բառ» թարգմանության հետ: Դրայդենյան երկրորդ տարբերակի դեպքում բնագիր տեքստի հեղինակը միշտ աչքի առաջ է պահվում, բայց թարգմանիչը չի կառչում նրա բառերից, երբեմն կարող է որևէ կոնկրետ բառի համար այլընտրանքային տարբերակ առաջարկել՝ իրավիճակից ելնելով: Դե իսկ նմանակման ժամանակ թարգմանիչն այն աստիճան է շեղվում բնագիր տեքստից, որ ինքն էլ, Դրայդենի խոսքերով, դառնում է մի նոր ստեղծագործող:

Հատկանշական է, որ տեսաբաններից շատերի մոտ թարգմանության տարանջատումները համընկնում են, և անուններն են միայն տարբեր: Այսպես, Նովալիսը ևս առաջարկում է թարգմանության երեք տեսակներ՝ դրանք անվանելով քերականական (grammatical), փոխակերպական (transformative), և դիցարանային (mythic) [Գաբրիելյան, 78]: Առաջինը համընկնում է բուն թարգմանության հետ, երկրորդ դեպքում թարգմանիչը որդեգրում է պոետական ոգի և առավել ազատ թարգմանում, դե իսկ երրորդ տարբերակի դեպքում աղբյուր տեքստից մնում է միայն գաղափարը, իսկ դրա փոխանցման բառաքերականական կառույցներն ընտրվում են թարգմանչի ազատ հայեցողությամբ:

Ժան Պոլ Վինեյը և Ժան Դարբելենն տարբերում են թարգմանության երկու ընդհանուր տեսակներ՝ ուղիղ և անուղղակի, որոնք էլ իրենց հերթին ստորաբաժանվում են յոթ տարատեսակների՝ փոխառություն (borrowing), պատճենում (calque), բառացի թարգմանություն (literal translation), փոխակերպում (transposition), ձևափոխում (modulation), շարահյուսական փոփոխություն (total syntagmatic change), ադապտացիա (adaptation) [Գաբրիելյան, 144]:

Սրանք անշուշտ թարգմանության տարատեսակներն առանձնացնող միակ տեսությունները չեն, բայց ամենաընդգրկունն են եղածների շարքում: Կարևորն այն է, որ ինչպիսի մեխանիզմ էլ ընտրի թարգմանիչը, թարգմանելիս պահպանի համարժեքությունը: Իսկ դա ենթադրում է, որ նրա կատարած թարգմանությունը պետք է լինի գրագետ ու համապատասխանի թարգմանության տեսական դրույթներին: Վերջնական արդյունքում թարգմանությունը պետք է լինի այնպիսին, որ գոհացնի թե՛ աղբյուր լեզվի հեղինակի, թե՛ թիրախ լեզվի ընթերցողի պահանջները: Ուրիշ խոսքերով՝ համարժեք թարգմանության պարագայում շեշտը դրվում է թե՛ բնագրի ձևաբովանդակային ամբողջականության պահպանման և թե՛ թիրախ լեզվի ընթերցողի համար առավելագույն մատչելիությունն ու հասկացումն ապահովելու վրա:

Այսպիսով, տեքստերի կարգաբանական վերլուծությանը հաջորդում է թարգմանչի կողմից թարգմանական այս կամ այն տարատեսակի ընտրությունը: Գրականության յուրաքանչյուր պատահիկ իր հետ բերում է որոշակի դժվարություններ և անհատական մոտեցման կիրառում:

Տեղեկատվական կարգի տեքստերը, որպես կանոն, թարգմանվում են դրայդենյան մետաֆրազային եղանակով: Այստեղ չկան հուզա-հոգեբանական դժվարին հանգույցներ, որոնք պետք էլինի վերաձևակերպել թիրախ լեզվի շրջանակներում: Թարգմանվում է միայն ինֆորմացիան, ինչը կարելի է անել նաև «բառ առ բառ» սկզբունքով:

Սա չի նշանակում, սակայն, թե տեղեկատվական տեքստերում թարգմանական դժվարություններ համեմատաբար ավելի քիչ կան, քան այլ կարգի տեքստերում: Ավելին, հաշվի առնելով այն փաստը, որ ինֆորմացիոն թերացումը կամ բացթողումը կարող են բերել տեղեկատվական տեքստի թերացման և դրա հիմնական առաքելության, այն է՝ հավաստի տեղեկություն հաղորդելու ձախողման, ուստի անհրաժեշտություն է առաջանում այս կարգի տեքստերը թարգմանել առավել զգուշավորությամբ: Երբեմն տեղեկատվական կարգի տեքստը կարող է ենթադրել նաև որոշակի նախաթարգմանական հետազոտության կատարում՝ կապված դրանում առկա հատուկ բառապաշարի հետ: Թարգմանիչն այս դեպքում պարտավորվում է կատարել որոշակի հետազոտական աշխատանքներ, անգամ որոշ չափով ուսումնասիրել գիտության տվյալ բնագավառը՝ ցանկալի արդյունքի հասնելու համար:

Թարգմանական հատուկ ուշադրություն պահանջող այդպիսի բառերից են եզրույթները, որոնց թարգմանությունը երբեմն կարող է իսկական գլոբալություն թվալ: Հարցն այն է, որ շատ գիտաբաներ ժամանակի ընթացքում մտնում են շրջանառության մեջ գրեթե բոլոր լեզուներում՝ չունենալով իրենց համարժեքը: Այդ դեպքում լավագույն լուծում կարող են դառնալ Վինեյի և Դարբելնեյի առաջարկած փոխառությունը՝ բառի անփոփոխ արտապատճենումը, կամ պատճենումը, որի դեպքում փոխառվում է ամբողջական արտահայտությունը, բայց նրա կազմի մեջ մտնող բառերը թարգմանվում են բառացի:

Չնայած բովանդակությանը տրված առաջնայնությանը՝ նույնիսկ գիտական տեքստերում թարգմանիչն անխուսափելիորեն բախվում է դրա հեղինակի լեզվամտածողությանը: Ոճական առանձնահատկությունները, շարադրանքի կառուցվածքն ու շարահյուսությունը որոշակի դրսևորում են գտնում գիտական տեքստերում: Ցանկության դեպքում անգամ բավական դժվար է դրանք շրջանցել ու անտեսել: Մի բան, սակայն, կասկածից դուրս է. որքան էլ դժվարին թվա գիտական տեքստերում բնագրին մոտ շարադրանքի, լեզվաոճական կաղապարների ընտրությունը, այն չի կարող համեմատվել, օրինակ գեղարվեստական տեքստի հետ, որտեղ ցանկացած նմանօրինակ սայթաքում կարող է բերել բնագրի հեղինակի ստեղծածի ամբողջական աղճատման: Ի հակադրումն ասվածի՝ պետք է նաև ընդունել, որ երբ իրար են բախվում գիտական տեքստի ընթեռնելիության և նրա առանձնահատկությունների պահպանման անհրաժեշտությունները, կորուստները երբեմն դառնում են անխուսափելի:

Փաստորեն, գիտատեխնիկական բնույթի տեքստերի թարգմանության բարդությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնց թվում պետք է նշել թարգմանչի սահմանափակ հնարավորությունը որոշակի բառապաշարի և շարահյուսական կառույցների ընտրության հարցում: Եվ եթե գեղարվեստական տեքստերում թարգմանչին լայն հնարավորություն է ընձեռված թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում, ապա այս պարագայում թարգմանիչը պարտավոր է գտնել ամենաճիշտ և հաճախ միակ ուղին դեպի առաջադրված տեքստային միավորի ճշմարիտ, անսխալ թարգմանում:

Գալով հուզա-արտահայտչական կարգի տեքստերին՝ նշենք, որ այս տիպի տեքստերի թարգմանումն էլ իր հերթին բերում է որոշակի թարգմանական խնդիրների և յուրահատկությունների: Բայց որքան

բազմազան են այս կարգի տեքստերը, նույնքան տարատեսակ են և թարգմանչի նկատմամբ պահանջները՝ դրանք թարգմանելիս:

Արձակ բնույթի հուզա-արտահայտչական տեքստերը (վեպ, պատմվածք, հեքիաթ և այլն) նպատակ են հետապնդում ոչ թե ինֆորմացիա հաղորդելու, այլ ընթերցողին գեղագիտական հաճույք պատճառելու, նրան բարոյախրատական դասեր տալու, անցյալի պատմական սխրանքներին ծանոթացնելու և նմանատիպ այլ նկատառումներով: Սա նշանակում է, որ հենց որ թարգմանիչը տեքստի կարգաբանական վերլուծություն կատարելու իր նախաթարգմանական գործունեության ժամանակ այն որակում է իբրև հուզա-արտահայտչական կարգի, նրա մտքում անմիջապես գծագրվում են այն նրբությունները, որ պահանջում է այս կարգի տեքստերի թարգմանությունը: Կատարինա Ռայսի առաջարկած տարբերակով թարգմանիչը հեղինակ – նյութ – ընթերցող եռյակից նախապատվությունը տալիս է առաջինին՝ նրա ամբողջական ու անթերի բացահայտմանը: Սա չի նշանակում, սակայն, թե թարգմանչի համար այս դեպքում միևնույն է ընթերցողի շահը: Ի վերջո թարգմանությունն արվում է հենց թիրախ լեզվի ընթերցողի համար, և ոչ թե հեղինակի: Բայց պետք է և հաշվի առնել այն փաստը, որ այդ ընթերցողն առավելապես շահում է, երբ թարգմանությունն առավել մոտ է բնագրին, լավագույնս արտահայտում է հեղինակի ասելիքը: Ուստի, շղթայական վերլուծությամբ հերթական քայլը կատարելով, մենք կրկին հայտնվում ենք *հեղինակի* տիրույթում՝ գալով Ռայսի մտքի ճշմարտացիությանը:

Փաստորեն, հուզա-արտահայտչական կարգի տեքստերում հեղինակի կերտած պատկերա-կերպարային համակարգի անթերի փոխանցումն առաջին պլան է մղվում: Թարգմանիչը, հասկանալիորեն, պետք է փորձի կառչել ոչ թե առանձին բառերից ու քերականական – շարահյուսական կառույցներից, այլ ձգտի տալ հեղինակի միտքը, գաղափարը: Այս պարագայում թարգմանչի կողմից որդեգրած թարգմանական լավագույն հնար կարող է դառնալ դրայդենյան վերապատմումը, Նովալիսի առաջարկած փոխակերպական և դիցարանային թարգմանական հնարները:

Բացի հեղինակի գաղափարի փոխանցումից, արձակ բնույթի գեղարվեստական տեքստում թարգմանչի կողմից կարևորվում է նաև պատմա- աշխարհագրական այն կոլորիտի փոխանցումը, որի շրջանակներում գրված է այդ տեքստը: Թարգմանչի առաքելությունն է մի կողմ թողնել իր անձնական որոշակի դրդապատճառները (ազգամիջյան

տարածայնություններ, նախասիրություններ և այլն) և լավագույնս փոխանցել բնագրի մշակութային ենթատեքստը: Պատմավեպերի պարագայում, օրինակ, եթե թարգմանիչը թերանում է տալ այն ազգային հերոսական պաթոսը, որ թաքնված է նման տեքստերի տողատակում, ուրեմն նա ձախողվել է իր կատարած աշխատանքում:

Հուզա-արտահայտչական կարգի տեքստերում թարգմանական դժվարություն կարող են առաջացնել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են հեղինակի երգիծանքի, լեզվա-ոճական ամենատարբեր հնարների ճիշտ հասկացումն ու փոխանցումը, միայն տվյալ ազգին կամ լեզվին բնորոշ որոշակի բառապաշարը (ամերիկյան անգլերինի պարագայում, օրինակ, այդ պատերը կոչվում են ամերիկաբանություններ) թարգմանությունը և այլն:

Այս կարգի տեքստերի թարգմանական դժվարություններից մեկն էլ դառնում է բնագիր տեքստում եղած դարձվածաբանությունը: Դարձվածքային միավորներն ու ասացվածքները, լինելով կոնկրետ լեզվի մշակութային ժառանգության մի մասը, ամենափորձառու թարգմանչին անգամ երբեմն կարող են իսկական փակուղու առաջ կանգնեցնել: Երբեմն թարգմանիչը ստիպված է լինում ընդհատել բուն թարգմանական գործընթացը և կրկին գնալ որոշակի նախաթարգմանական ուսումնասիրության՝ պարզելու համար որևէ կոնկրետ դարձվածքի իմաստը: Բայց միայն դրա հասկացմամբ խնդիրը չի վերջանում: Թարգմանիչն անշուշտ փորձում է գտնել թիրախ լեզվում դրա համարժեքը, ինչը հարցի լուծման ամենահեշտ և նախընտրելի տարբերակն է: Այս հարցում ձախողվելու պարագայում թարգմանիչը երկրորդ քայլով պարտավորվում է գտնել տվյալ դարձվածքային միավորի *իմաստային* համարժեքը, որը թիրախ լեզվում արտահայտում է ճիշտ նույն գաղափարը, ինչ աղբյուր տեքստում է: Այս դեպքում նրան օգնության է գալիս ադապտացիան՝ իբրև թարգմանական հնար: Եվ միայն երրորդ քայլով, երբ առաջին երկուսն ապարդյուն են եղել, թարգմանչին մնում է միայն տալ տվյալ դարձվածքային միավորի բացատրական թարգմանությունը, որի պարագայում, ցավոք, դարձվածքը կորցնում է իր հիմնական նշանակությունը և տարրալուծվում տեքստում:

Իբրև հուզա-արտահայտչական բնույթի տեքստային ինքնուրույն միավոր՝ դրամատիկական ստեղծագործությունները, իրենց հերթին ենթադրում են թարգմանական որոշակի հմտությունների ցուցաբերում: Բացի այն ամենից, ինչ արդեն նշվեց արձակ տեքստի պարագայում,

դրամատիկական տեքստերի թարգմանության դժվարությունների թվում պետք է նշել դրանցում առկա բազմաթիվ հատուկ անունների թարգմանությունը, ավելի ստույգ՝ դրանց ճիշտ տառադարձումը: Արձակ տեքստերում ևս այս խնդիրն առկա է, միայն թե դրամատիկական ստեղծագործություններում, որպես կանոն, գործող անձերն ավելի շատ են:

Դրամատիկական ստեղծագործություններում թարգմանիչը հաճախ բախվում է նաև այնպիսի խնդրի, ինչպիսիք են ժարգոնային, աղավաղված բառապաշարի թարգմանությունը: Խնդիրն այն է, որ նման բառապաշարը մեծամասամբ ի հայտ է գալիս ստեղծագործության հերոսների խոսքում (իսկ երկխոսությունները դրամատիկական ստեղծագործության առանցքն են կազմում) և ոչ թե հեղինակային խոսքի շարադրանքում: Կամենալով տալ իր ժամանակի կոլորիտի ամբողջական պատկերը՝ գրողը ստիպված է լինում իր հերոսներին «խոսեցնել» տվյալ ժամանակի համար ընդունելի լեզվական տարատեսակով: Եվ ինչպես դարձվածքների պարագայում էր, այս դեպքում ևս թարգմանիչը ստիպված է լինում գնալ նախաթարգմանական որոշակի վերլուծության՝ պարզելով բնագիր տեքստում տվյալ բառապաշարի իմաստն ու առանձնահատկությունները: Հաջորդ քայլով միայն նա փորձում է գտնել թիրախ լեզվում բառային այդ միավորի կամ կառույցի ամենանախընտրելի և համարժեք տարբերակը:

Խոսելով հերոսների խոսքի թարգմանության հնարավոր բարդություններից՝ մենք դրանք զետեղեցինք դրամատիկական ստեղծագործության շրջանակներում: Սա չի նշանակում, սակայն, թե արձակ երկերում հերոսների խոսքը զերծ է նման կարգի առանձնահատկություններից: Պարզապես, ինչ-որ առումով արձակ տեքստի՝ հերոսների երկխոսության հատվածները կարելի է համարել դրամատիկական ոճի ստեղծագործության մի պատահիկ՝ զետեղված տվյալ տեքստում: Այս մոտեցմամբ մեր դիրքորոշումը հասկանալի է դառնում:

Եվ վերջապես, հուզա-արտահայտչական կարգի ստեղծագործության տարատեսակներից է չաճածո խոսքը՝ իր յուրահատկություններով ու թարգմանական դժվարություններով հանդերձ:

Պետք է փաստել, որ բանաստեղծական խոսքի թարգմանությունը գեղարվեստական թարգմանության տարատեսակներից թերևս ամենաբարդն է: Դա պայմանավորված է չափածո խոսքի

առանձնահատկություններով, իսկ դրանք բազմաթիվ են: Նախևառաջ, չափածո խոսքը շատ հազեցած է, քանի որ հաճախ ընդամենը մի քանի տողով գրողը փորձում է ստեղծել մի ամբողջ պատկեր: Բացի այդ, չափածո ստեղծագործությունը, որպես կանոն, գրված է ձևաչափային որոշակի համակարգի շրջանակներում, ինչը միայն այս տիպի ստեղծագործություններին է բնորոշ:

Հասկանալիորեն, չափածո խոսքը թիրախ լեզվով վերաշարադրելիս թարգմանիչը բախվում է մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Նրա առջև դրված է մի քանի նպատակ. տալ հեղինակի հիմնական գաղափարը, հնարավորինս ճիշտ արտահայտել հեղինակի ստեղծած հուզա-հոգեբանական մթնոլորտը, փոխանցել նրա տաղաչափական առանձնահատկությունները և այլն: Այս ճանապարհին թարգմանիչը հաճախ կանգնում է երկընտրանքի առաջ. խախտել բանաստեղծական տեքստի ձևաչափային առանձնահատկությունները՝ բառիմաստային բովանդակության պահպանմամբ, կամ թերանալ բնագրի պատկերային համակարգի փոխանցման մեջ՝ արտաքին ձևի պահպանմամբ: Ուստի չափածո խոսք թարգմանելիս թարգմանիչը պետք է կատարի արտահայտչամիջոցների չափազանց բժախնդիր ընտրություն՝ լավագույն արդյունքի հասնելու նկատառումով:

Փաստորեն, չափածո խոսքի թարգմանիչը պետք է օժտված լինի որոշակի ունակություններով, ինչը արձակ տեքստի թարգմանության պարագայում բոլորովին էլ պարտադիր չէ: Նա պետք է հստակ գաղափար կազմի իր մայրենի լեզվի տաղաչափական համակարգից ու դրա ընձեռած հնարավորություններից: Ինքնին հասկանալի է, որ չափածոյի թարգմանչի առաջին գործն է փորձելու փոխանցել իր ձեռքում եղած տեքստը բնագրին հնարավորինս ավելի մոտ տաղաչափական համակարգով, և միայն դրա անհնարինության դեպքում օգտվել առավել հարմար և տվյալ տեքստի պարագայում ճշմարիտ թվացող տաղաչափական համակարգից:

Այսպես, հայտնի է, որ հայերենում բառաշեշտն ունի իր կայուն տեղը. այն գրեթե միշտ դրվում է բառի վերջին վանկի վրա, բացառությամբ մի շարք դեպքերի: Սրանով է ահա պայմանավորված հայերենի տաղաչափության գերազանցապես վանկային բնույթը, երբ դիթմը հիմնվում է տողում վանկերի թվի հավասարության վրա [Զրբաշյան Էդ., 204]: Տաղաչափական նման համակարգը բնորոշ է նաև ֆրանսերենին, իտալերենին, իսպաներենին և այլն: Սրան հակառակ՝ ռուսերենը, անգլերենը, գերմաներենը և շատ այլ լեզուներ բառաշեշտի

մշտական տեղ չունեն: Դա է պատճառը, որ այս լեզուներում դիժմը ստեղծվում է շեշտված և անշեշտ վանկերի որոշակի հերթագայումների միջոցով [Ջրբաշյան, 204]: 287 վանկային և վանկաշեշտային տաղաչափական համակարգ ունեցող լեզուների մեջ չափածո ստեղծագործություն թարգմանելիս, փաստորեն, թարգմանիչը կարող է խնդրի առաջ կանգնել:

Բացի այն, որ թարգմանված տեքստը պետք է հնարավորինս նման լինի բնագրին, այն պարտավոր է նաև դառնալ լիարժեք գեղարվեստական ստեղծագործություն՝ հավասարվելով թարգմանության լեզվով գրված բնագիր ստեղծագործությանը: Ընթերցողը երբեք չպետք է զգա, որ դա թարգմանություն է: Իսկ դա հնարավոր է միայն այն ժամանակ, երբ չափածո տեքստի թարգմանիչը, բացի թարգմանական հմտություններից, ինքը ևս բանաստեղծ լինի: Բանաստեղծական լավագույն թարգմանություն կարող է կատարել միայն այն անձը, ով օժտված է բանաստեղծական ճիրքով ու պատկերավոր մտածելակերպով և ունի ռոմանտիկ աշխարհընկալում: Այլ խոսքերով, չափածո ստեղծագործության թարգմանիչն ինքն էլ յուրովի բանաստեղծ է, ով բնագրի հեղինակից տարբերվում է միայն նրանով, որ ոչ թե ստեղծում, այլ փոխանցում է տվյալ գրողի գաղափարը: Թարգմանաբան Ա. Խաչատրյանի խոսքերով՝ «ոչինչ երբեք չի գրվի մինչև թարգմանիչը դա չզգա ներքին հնչողությամբ, իր մեջ՝ ներթափանցելով բնագրի բանաստեղծական հյուսվածքի մեջ» [Կարապետյան, 53]:

Ավելին, չափածո տեքստի թարգմանչի աշխատանքը շատ ավելի դժվարին է ու պատասխանատու, քան բուն գրողինը, քանի որ, ի տարբերություն գրողի, ով ինքն է իր ստեղծածի տերն ու պատասխանատուն և ազատ է լեզվաարտահայտչամիջոցների ընտրության հարցում, թարգմանիչը կաղապարված է գրողի ստեղծածի շրջանակներում, չի կարող իր հայեցողությամբ ձևափոխել նրա ստեղծագործությունը:

Նախաթարգմանական փուլում *ազդեցական* կարգի որոկված տեքստը իր հետ բերում է համապատասխան թարգմանական մեխանիզմների ընտրության անհրաժեշտությունը: Այս կարգի տեքստերում, ինչպես նշվեց, շեշտը դրվում է դրա *սրբացողի* վրա, ինչը թարգմանչի համար պետք է առաջնային ուղենիշ դառնա: Նպատակ ունենալով ազդելու ընթերցողի կամ ունկնդրի վրա՝ այս կարգի տեքստերում, փաստորեն, դրանց նպատակային կողմի ճշմարիտ թարգմանումը առաջին պլան է մղվում:

Ազդեցական կարգի տեքստերը իրենց հերթին հաճախ ենթադրում են որոշակի նախաթարգմանական վերլուծության կատարում, համապատասխան հետազոտության իրականացում: Այսպես, հոնտորական ճառերը կարող են գերհագեցած լինել տարբեր գիտական ու քաղաքական եզրույթներով: Դա նշանակում է, որ մինչ այսպիսի տեքստի թարգմանելը թարգմանիչը պետք է ուսումնասիրի տվյալ բնագավառը, ձգտի լավագույնս հասկանալ ոչ միայն տեքստում առկա գիտաբառերը, այլ այն պատմաքաղաքական կոլորիտը, որի շրջանակներում գրվել (կամ ասվել) է այդ տեքստը: Հմուտ թարգմանիչը պետք է կարողանա նաև զգալ ճառասացի խոսքի բուն նպատակը ու իր լեզվում գտնել այն ամենատեղին միջոցները, որոնց օգնությամբ թարգմանելու պարագայում թիրախ տեքստն իր հասցեատիրոջ՝ ընթերցողի կամ ունկնդրի վրա կթողնի ճիշտ նույն ազդեցությունը, ինչ բնագրի պարագայում է:

Ազդեցական կարգի տեքստ է նաև գիտահանրամատչելի գրականությունը, որ բացի իր տեղեկատվական գործառույթից իրականացնում է նաև հանրությանը այս կամ այն հարցում ուղղորդելու առաքելություն: Նման տեսակի տեքստեր թարգմանելիս, հասկանալի է, թարգմանիչն առավել ազատ է միջոցների ընտրության հարցում, քան տեղեկատվական կարգի տեքստերի դեպքում էր՝ ելնելով թարգմանվող նյութի նպատակադրումից:

Մեր օրերում ազդեցական կարգի ամենատարածված տեքստային միավորները, թերևս, գովազդներն են, որոնք միտված են սպառողներին դրդելու օգտվել գովազդվող ապրանքից կամ ծառայությունից: Բնականաբար, արտասահմանյան ապրանքներ գովազդելիս հարկ է առաջանում տեքստը թարգմանելու: Այս տիպի տեքստերի թարգմանությունն էլ ենթադրում է իր առանձնահատկություններն ու դժվարությունները՝ ելնելով այն բազմազանությունից, որ տիրում է գովազդային աշխարհում: Թարգմանիչը դարձյալ կանգնում է լավագույն լուծումը գտնելու երկընտրանքի առաջ՝ մշտապես աչքի առաջ ունենալով նման տեքստի նպատակը՝ ազդեցական կողմը: Հատկապես գովազդվող ապրանքանիշի անվանումը թարգմանելիս թարգմանական լավագույն լուծում կարող է դառնալ դրա փոխառությունը, մանավանդ բրենդային ապրանքանիշերի պարագայում, որտեղ տվյալ ապրանքի վարկը ոչ մի այլ կերպ հնարավոր չէ ավելի բարձրացնել, քան դրա աղբյուր տարբերակի փոխառման շնորհիվ:

Այսպիսով, ամփոփելով մեր կատարած ուսումնասիրությունը, փաստենք, որ տեքստի կարգերի վերլուծությունը թարգմանությունից առաջ իսկապես նախաթարգմանական կարևորագույն գործընթացներից մեկն է: Դա հնարավորություն է ընձեռում թարգմանչին, մինչև իր բուն աշխատանքին անցնելը, հասկանալ տվյալ տեքստի ձևա-բովանդակային, կառուցվածքային և նպատակային առանձնահատկությունները և դրանցից բխող համապատասխան գործողություններն ու իր կատարելիք աշխատանքի բնույթը: Տեքստի՝ կարգաբանական հստակ վերլուծությունն ու այդ կարգերի էական կողմերի իմացությունը թույլ կտա ցանկացած գիտակ թարգմանչի էլ ավելի խորացնել իր հմտությունները թարգմանության բնագավառում՝ հասնելով ցանկալի արդյունքի: Այս կամ այն կարգի տեքստը թարգմանչից պահանջում են հմտությունների ու համապատասխան գիտելիքի որոշակի պաշար, ինչի ձեռքբերումն ու տեղին կիրառումն էլ թարգմանչությունը դարձնում են ոչ թե աշխատատեք, այլ արվեստի ճյուղերից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Dryden J., Preface to Ovid's Epistles, Steiner, T., 1680
2. Leech G., Style in Fiction, in Philological Insights (Compiled by S. Gasparyan, S. Kuyumgyan), Yerevan, 2007
3. Reiss K., Texttypen, Übersetzungen und die Beurteilung von Übersetzungen, Lebende Sprachen, 1977
4. Вопросы художественного перевода, М., “Советский писатель”, 1955
5. Любимов Н., Перевод – искусство, М., “Советская Россия”, 1982
6. Գաբրիելյան Ս., Թարգմանաբանության քրեստոմատիա, Երևան, Սահակ Պարթև, 2007
7. Կարապետյան Կ., Թարգմանությունը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջմշակութային փոխներթափանցման միջոց, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014
8. Համատեքստ – 2007, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2008
9. Զրբաշյան Ա., Գրականության տեսության արդի խնդիրներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016
10. Զրբաշյան Էդ., Գրականագիտության ներածություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1996

ЭВЕЛИНА ЗАДОЯН - ТИПОВОЙ АНАЛИЗ ТЕКСТА КАК ПРЕД - ПЕРЕВОДЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ

В статье рассматривается пред-переводческая деятельность в качестве необходимой предпосылки для эффективного перевода. Из методов пред-переводческой деятельности выделяется и исследуется процесс текстового анализа. Дается пред-история вопроса, затем рассматриваются ее важнейшие стороны и актуальность. В статье представлены не только возможные текстовые типы как результат пред-переводческой деятельности, но и нюансы и сложность перевода данных типов. Такой подход дает возможность представить данный процесс, как необходимый этап переводческой деятельности.

EVELINA ZADOYAN - THE TEXT TYPE ANALYSIS AS A PRE - TRANSLATION ACTIVITY

The article focuses on pre-translation activity as a necessary condition for effective translation. The text analysis process is thoroughly discussed here as a type of pre-translation activity. The prehistory of the issue is given first then the discussion is passed to the essential aspect and importance of it. The article presents not only possible text types classified through pre-translation phase, but also the translation nuances and complexity of each of them, as a result of pre-translation activity. As a result the given translation study has become more complete and comprehensive.

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՄԻՖՈԼՈԳԵՄԻ ԱՏԵՂԾՄԱՆ
ԼԵՂՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

ԷՎԵԼԻՆԱ ԶԱԴՈՅԱՆ

Հիմնաբառեր՝ միֆոլոգեմ, հեքիաթագրություն, անգլիական հեքիաթներ, լեզվական միջոցներ, բարու ու չարի միֆոլոգեմներ

Վերջին տարիներին հեքիաթագրությունն ու դրա ուսումնասիրությունը գրականագետների ու գրաքննադատների ուշադրության կենտրոնում են: Ժանրը, որքան էլ հին, թվում է՝ երբեք չի կորցնի իր հետաքրքրությունն ու թարմությունը շնորհիվ դրա սյուժետա - կառուցվածքային յուրահատկությունների և շարունակ թատմացվող ու հարստացվող տեսականու: Սույն հոդվածում քննության են առնվում անգլիական հեքիաթներում միֆոլոգեմի դրսևորման հիմնական առանձնահատկությունները: Հոդվածի ուսումնասիրության առարկան, այսպիսով, դառնում է անգլիական գրականությունը, ընդհանրապես, և դրա ճյուղերից մեկը՝ հեքիաթի ժանրը, մասնավորապես: Մեր ուսումնասիրության օբյեկտ է դառնում միֆոլոգեմի դրսևորումն այդ ժանրում: Հոդվածի խնդիրն է դիտարկել նշված ստեղծագործություններում միֆոլոգեմի դրսևորման ամենաէական և ամենահաճախադեպ օրինակները, որոնք կօգնեն հիմնավոր կարծիք կազմելու դրանցում այդ երևույթի հիմնական դրսևորումների ու առանձնահատկությունների վերաբերյալ:

Ընդհանրապես, համաշխարհային գրականությունը բազմաճյուղ և բազմատարր համակարգ է, որի ճյուղերը կազմում են առանձին ազգային գրականությունները, իսկ տարրերը հանդիսանում են գեղարվեստական ստեղծագործության ամեն մի նմուշ առանձին վերցրած: Գեղարվեստական ստեղծագործության առանձին պատառիկներն էլ իրենց հերթին միավորվում են այս կամ այն ժանրում:

Հեքիաթը, լինելով արձակ ստեղծագործության մի նմուշ, հանդիսանում է աշխարհի ճանաչման և պատկերման ինքնատիպ և հավերժական միջոցներից մեկը: Հեքիաթագրությունն ունի միայն իրեն բնորոշ օրենքներն ու չափորոշիչները, որոնք էլ կազմում են խնդրո առարկա ժանրի առանձնահատկությունները:

Քսաներորդ դարից սկսած հեքիաթի տեքստի ուսումնասիրությանը մեծ տեղ է հատկացվում: Դրանք ենթարկվում են ինչպես լեզվագրականագիտական, այնպես էլ հոգեբանական, փիլիսոփայական, էթնոգրական և այլ վերլուծությունների: Սա նշանակում է, որ հեքիաթի տեքստն իր մեջ ներառում է շատ ավելի մեծ տեղեկատվություն, քան զուտ գրականագիտական – գեղարվեստական նյութն է: Ժամրը վաղուց արդեն սիրված և ճանաչված է ոչ միայն երեխաների, այլև բոլոր տարիքի ընթերցողների կողմից՝ շնորհիվ թե՛ իր դինամիկ և գրավիչ սյուժեի և թե՛ դրանում ամփոփված բարոյախրատական կողի:

Սույն վերլուծության նպատակն է քննության առնել անգլիական հեքիաթները, մասնավորապես՝ միֆոլոգեմի դրսևորման լեզվական միջոցները դրանցում:

Միֆոլոգեմը (առասպելայթ) հանդիսանում է միֆոլոգիայի անքակտելի մասը: Այն ունի արքետիպային հենք և հանդես է գալիս իբրև ամբողջական առասպելի կամ առասպելական կառույցի նվազագույն միավոր: Միֆոլոգեմի համար հենքային կարող են դառնալ արքետիպային այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են «Աստվածաշունչը», հունա-հռոմեական դիցաբանությունն ու դրա վերամշակված տարբերակները և այլն: Պահպանելով առասպելական մտածողության կնիքը՝ միֆոլոգեմը որևէ կոնկրետ ստեղծագործության մեջ հանդես է գալիս իբրև դրա առանցք, որի շուրջ հյուսվում է այդ ստեղծագործության ամբողջական սյուժեն: Գրականագետ Ա. Ջրբաշյանի խմբագրած «Գրականության տեսության արդի խնդիրներ» ուսումնասիրության մեջ *միֆոլոգեմ* եզրույթը մեկնաբանվում է այսպես. «Տարբեր ժողովուրդների ազգային գրականության, ինչպես նաև արվեստի ստեղծագործությունների մեջ առկա են սիմվոլային, պատկերային, միֆական մշտակայուն կառույցներ, որոնք ոչ միայն ազգային բնույթ են կրում, այլև իրենց էությամբ համամարդկային արժեք ունեն» [Ջրբաշյան, 102]: Միևնույն Ջրբաշյանի կողմից թարգմանված մեկ այլ ուսումնասիրության մեջ, որ հեղինակել է ռուս գրականագետ Տուրիշևան, վկայակոչելով Լևի – Ստրոսի (ֆրանսիական կառուցվածքաբանության հայրը) կատարած ուսումնասիրությունը, միֆոլոգեմը մեկնաբանվում է այսպես. «Նա առասպելի տեքստում առանձնացնում է այսպես կոչված «միֆեմները», այսինքն՝ այն արտահայտությունները, որոնց միջոցով կարելի է շարադրել նվազագույն դրվագի բովանդակությունը» [Տուրիշևա, 185]: Ինչպես հեշտ է կոահել, *միֆեմ* ասելով հեղինակը միևնույն *միֆոլոգեմը* նկատի ունի:

Փաստորեն, միֆոլոգիան իրավամբ կարելի է համարել միջմշակութային հասկացություն, որ յուրովի իրար է կամրջում աշխարհի տարբեր ժողովուրդների գրական ժառանգությունը: Այն նաև ևս մեկ անգամ փաստում է, որ ազգային գրականությունները, որքան էլ անհատական, որոշակի ընդհանրություններ ունեն մեկը մյուսի հետ: Տարբերությունները վերաբերում են սոսկ լեզվամտածողությանը, իսկ զգայական և արժեհամակարգային մակարդակում ընդհանրությունները, որպես կանոն, ավելի շատ են:

Անգլիական հեքիաթների մեծ մասը գալիս է երկրի ժողովրդական բանահյուսությունից և իր մեջ ներառում է կելտական, գերմանական և Բրիտանիայում երբևէ ապրած մյուս ցեղերի ու ժողովուրդների բնութագրիչ գծերը: Դրանք կա՛մ պահպանվել են իրենց նախնական տարբերակով, կա՛մ ենթարկվել են որոշակի վերամշակումների այս կամ այն հեքիաթագրի կամ խմբագրի կողմից: Սակայն քիչ չեն և այն հեքիաթները, որոնք հենց հեքիաթագիրների մտքի ու երևակայության արգասիքն են: Անգլիական հայտնի հեքիաթագիրներ են Ռոալդ Դալը, Ջոն Ռոուլինգը, Ֆիլիպ Փուլմանը և ուրիշներ:

Անգլիական հեքիաթները, օժտված լինելով ժանրին բնորոշ ընդհանուր գծերով, ունեն նաև իրենց առանձնահատկությունները: Դրանց բնորոշ են խաղը, հեգնանքը, հումորը, տրամադրությունների փոփոխությունը, արձակի և չափածոյի համադրումը:

Անգլիական հեքիաթներում միֆոլոգեմը դրսևորվում է տարբեր լեզվաոճական, քերականական, և շարահյուսական հնարներով, որոնցից մենք այստեղ կանդրադառնանք լեզվական միջոցներին: Ընդ որում, լեզվական միջոցները կարող են լինել ինչպես լեզվում արդեն գոյություն ունեցող բառապաշարը, այնպես էլ նոր բառերն ու արտահայտությունները: Պետք է նշել, որ հեքիաթագիրներն ազատորեն օգտվում են բառակազմական գրեթե բոլոր եղանակներից՝ բառաբարդում, ածանցում, բառիմաստի փոփոխում և այլն:

Մեր կողմից դիտարկված բոլոր միֆոլոգեմները կարելի է դասակարգել երկու խոշոր խմբերի՝ վարքագծային և տարածա-ժամանակային:

Անգլիական հեքիաթներում թերևս ամենատարածված միֆոլոգեմներն են *բարին* և *չարը*, այլ կերպ ասած՝ դրանցում միշտ կա բարու և չարի հակադրում: Համամարդկային այս երկու միֆոլոգեմները, որ գալիս են դեռևս «Աստվածաշնչից» (Աստված – սատանա, Քրիստոս – Հուդա զույգերը բարու և չարի հակադրման լավագույն օրինակներ են),

կազմում են շատուշատ անգլիական հեքիաթների առանցքը: Երբեմն մնացյալ միֆոլոգեմները ստորադասվում են սրանց՝ դառնալով բարու կամ չարի յուրօրինակ դրսևորում: Որպես կանոն՝ ստեղծագործության վերջում բարին միշտ հաղթում է, իսկ չարը՝ դատապարտվում և պախարակվում:

Բարու միֆոլոգեմը անգլիական հեքիաթներում դրսևորվում է առավելապես լեզվում արդեն իսկ առկա բառապաշարի միջոցով: Սակայն երբեմն այս կամ այն բառը կարող է գործածվել մի նոր իմաստով: Օրինակ.

There was once upon a time *a good man* who had two children. [Jacobs, 15]

*Ժուկով ժամանակով մի բարի մարդ էր ապրում, ով երկու երեխաներ ուներ:*⁵⁷

An old woman was sweeping her house, and she found a little crooked sixpence. [Jacobs, 21]

Մի փարեց կին ավում էր իր տունը, երբ գտավ մի փոքրիկ խունացած վեցպենսանոց մեփաղադրամ:

Բերված օրինակներից առաջինում հերոսուհին անմիջապես բնորոշվում է «լավ» (good) բառով, և ընթերցողը հենց սկզբից հասկանում է, թե ինչպիսի կերպարի հետ է գործ ունենալու: Այնինչ երկրորդ օրինակում «կին» բառի «տարեց» (old) որոշիչը ձեռք է բերում մի նոր իմաստ: Մեկ այլ կոնտեքստում այդ բառը կարող էր և վերաբերել հերոսուհու տարիքին՝ դառնալով ոճապես չեզոք. տարեց լինելը բոլորովին էլ չի ենթադրում կամ պարտադրում, որ մենք գործ ունենք բարի կամ չար կերպարի հետ: Այս կոնտեքստում «տարեց» բառն ավելի շատ ստանում է «խելացի, իմաստուն» ենթիմաստը, ինչը միանշանակ դրական հատկանիշ է:

Ընդհանրապես, անգլիական հեքիաթներում old բառը հաճախ է գործածվում նոր և առավելապես դրական իմաստով, ինչը բավականին լավ երևում է ստորև բերվող օրինակում.

And while they were walking, *a little old woman* came to the house. [Jacobs, 96]

Եվ մինչ նրանք քայլում էին, մի փոքրիկ աղջիկ մոտեցավ տանը:

⁵⁷ Այս և մյուս թարգմանությունները մերն են:

Հասկանալի է, որ աղջիկը «Երեք արջերի պատմությունը» հեքիաթում չէր կարող միաժամանակ և՛ երիտասարդ, և՛ տարեց լինել: Եվ ինչպես հեքիաթի սյուժեն է փաստում, իրականում մենք գործ ունենք մի փոքրիկ աղջկա հետ, ով պատահմամբ հայտնվել է երեք արջերի տնակում: Հետևաբար բերված օրինակում old բառը պարզապես չենք թարգմանի:

Չարի միֆոլոգեմը նույնպես դրսևորվում է լեզվում արդեն իսկ առկա բառապաշարի միջոցով: Ամենատարբեր մակդիրների և որոշիչների օգնությամբ հեքիաթագիրները հստակ բնորոշում են իրենց ստեղծած կերպարների չար լինելը, մինչև կոնտեքստի օգնությամբ դա ի ցույց դնելը: Օրինակ.

Her brother loved her dearly, but her wicked
stepmother hated her. [Jacobs, 17]

*Նրա եղբայրը սրտանց սիրում էր նրան,
բայց նրա չար խորթ մայրը ատում էր նրան:*

Wicked որոշիչով հերոսուհին միանգամայն հստակ բնորոշվում է իբրև չար, չարահոգի՝ դառնալով չարի միֆոլոգեմի դրսևորումներից մեկը: Կերպարի չարությունն այս օրինակում ի ցույց է դրվում նաև hated (ատում էր) բայի միջոցով:

Չարի դրսևորումներից մեկն էլ *խորթ մոր կողմից երեխաների սպանության* միֆոլոգեմն է: Այս միֆոլոգեմը դարձյալ գալիս է դեռևս հունական դիցարանից, որտեղ նշվում է, թե ինչպես աստվածուհի Հերան ամեն կերպ փորձում է սպանել իր ամուսնու՝ Զևսի ապօրինի զավակներին: Նույն կերպ և անզլիական հեքիաթներում չարահոգի խորթ մայրը, առանց էական պատճառի սպանում է կամ փորձում է սպանել իր ամուսնու՝ նախկին կնոջից ծնված երեխաներին: Այսպես, «Վարդենին» հեքիաթում խորթ մայրը կացնահարում է իր խորթ դստերը և խնամքով թաքցնում հանցանքը:

Well! she laid down her little golden head
without fear; and whist! *down came the axe, and it was
off.* So the mother wiped the axe and laughed. [Jacobs,
16]

*Դե, նա ցած դրեց իր փոքրիկ ոսկեհեր
զլուխը առանց վախի, և բա՛խ, կացինը ցած իջավ, և
այն թռավ: Հեփո մայրը մաքրեց կացինը և
ծիծաղեց:*

Անգլիական հեքիաթներում տարածված միֆոլոգեմ է նաև *գեղեցիկը*: Ճիշտ է, համամարդկային այս «արժեքը» վերաբերում է կերպարի (և առհասարակ անձի) արտաքին և ոչ թե հոգեկան ներաշխարհին և չի կարող համեմատվել այնպիսի միֆոլոգեմների հետ, ինչպիսիք են ինքնագոհությունը, դավաճանությունը և այլն, սակայն շատ հաճախ արտաքին գեղեցկությունը ասոցացվում է ներքին գեղեցկության հետ: Դա է պատճառը, որ «գեղեցկություն» բառով կան մի շարք դարձվածքներ, ինչպես, օրինակ, «Գեղեցկությունը կփրկի աշխարհը»:

Գեղեցիկի միֆոլոգեմը գալիս է դեռևս հին հունական առասպելներից և սրանց հիման վրա գրված «Իլիականից», որտեղ նշվում է, թե ինչպես Տրոյա քաղաքի արքայորդին՝ Պարիսը, երեք աստվածուհիներից նախապատվությունը տալիս է Աֆրոդիտեին՝ գեղեցկության դիցուհուն: Հենց այս տարածայնությունն էլ բերում է Տրոյական պատերազմին և Տրոյայի կործանմանը:

Անգլիական հեքիաթներում գեղեցիկի միֆոլոգեմը կարող է դրսևորվել ամենատարբեր լեզվաոճական միջոցներով՝ ինչպես առանձին բառերով ու արտահայտություններով, այնպես էլ ոճական տարբեր հնարներով:

296The girl was as white as milk, and her lips
were like cherries. [Jacobs, 16]

*Աղջիկը ճերմակ էր կաթի նման, իսկ նրա
շուրթերը նման էին բալի:*

Վերոբերյալ օրինակում համեմատություն (similie) կոչվող ոճական հնարով ի ցույց է դրվում «Վարդենին» (The Rose -tree), հեքիաթի հերոսուհու գեղեցկությունը: Նրա մաշկի ճերմակությունը համեմատվում է կաթի հետ, իսկ շուրթերի կարմրությունը՝ բալի: Արտաքինի նկարագրման այս օրինակում կերպարի ներաշխարհի մասին ոչինչ չկա ասված, սակայն ընթերցողն ակամա նախատրամադրվում է այն փաստի առնչությամբ, թե հերոսուհին, այնուամենայնիվ, բարի է: Այդչափ գեղեցիկ մարմնում չի կարող գեղեցիկ հոգի չլինել:

Անգլիական հեքիաթներում, բացի վարքագծային միֆոլոգեմներից, հատուկ տեղ է հատկացված նաև տարածական և ժամանակային միֆոլոգեմներին, որոնք այս ստեղծագործություններում ունեն որոշակի առանձնահատկություններ:

Փաստորեն, միֆոլոգեմի դրսևորման հաջորդ օրինակը, որ ոչ պակաս հաճախադեպ է անգլիական հեքիաթներում, ճանապարհի սիմվոլ – միֆոլոգեմն է: Այս միֆոլոգեմը դարձյալ գալիս է հին հունական

դիցարանից և, մասնավորապես, դրա այն հատվածից, որ Հոմերոսը վերաշարադրեց իբրև «Ողիսական»: Եվ ինչպես Ողիսասն ու իր ընկերներն էին անվերջ դեգերումների մեջ, անգլիական հեքիաթների հերոսները ևս հաճախակի ճանապարհ են ընկնում՝ երբեմն չկարևորելով դրա ուղղությունը: Տեղից տեղ փոխադրվելը հեքիաթի հերոսներին հնարավորություն է տալիս նոր արկածների մեջ հայտնվել՝ դրսևորելով իրենց դրական կամ բացասական կողմերը:

Once on a time there was a boy named Jack,
and one morning *he started to go* to seek his fortune.
[Jacobs, 24]

*Լինում է, չի լինում, մի տղա է լինում՝ Ջեք
անունով, և մի առավոտ նա ճանապարհ է ընկնում
իր բախտը որոնելու:*

Այս օրինակում ճանապարհի միջոցով արտահայտվում է ոչ թե առանձին բառի, այլ մի ամբողջական նախադասության միջոցով, և դա հասկանալի է. մենք գործ ունենք ոչ թե առանձին հատկանիշի, այլ մի ամբողջական երևույթի՝ ճանապարհ ընկնելու գործընթացի հետ:

Ինչպես արդեն նշվեց, անգլալեզու հեքիաթներում ճանապարհի ուղղությունը, որպես կանոն, չի նշվում: Դա օգնում է կենտրոնացնել ընթերցողների ուշադրությունը ոչ թե գործողության կատարման տեղի, այլ բուն գործողության վրա, ինչպես ստորև բերվող օրինակում է.

She went a little further, and she met a rat.
[Jacobs, 22]

*Նա մի փոքր գնաց և հանդիպեց մի
աննեղի:*

Once on a time there was a boy named Jack,
and one morning *he started to go* and seek his fortune.
[Jacobs, 24]

*Ժուկով ժամանակով ապրում էր մի տղա՝
Ջեք անունով, և մի առավոտ նա ճանապարհ է
ընկնում իր բախտը որոնելու:*

Այս օրինակում կարևոր չէ, թե «Տարեց կինը և նրա խոզը» (The old woman and her pig), հեքիաթի հերոսուհին ո՞ր ուղղությամբ է գնում: Փաստն այն է, որ նա հանդիպում է առնետին, որ հանդիսանում է այս հեքիաթի սյուժետային հաջորդ օղակը:

Խոսելով միջակայի ժամանակի մասին՝ Ա. Զրբաշյանը նշում է, որ «միջակայի ժամանակը հիմնականում ցիկլիկ բնույթ ունի, այն գտնվում է

հավերժական շրջապտույտի մեջ: Ի տարբերություն միֆական ժամանակի՝ հեքիաթներում այնգծագրվում է որպես շատ անորոշ ժամանակ» [Զրբաշյան, 117]: Այս կանոնը ճշմարիտ է նաև անգլիական հեքիաթների պարագայում, որտեղ միևնույն գործողությունը կարող է ցիկլիկ բնույթ կրել՝ կրկնվելով ստեղծագործության որոշակի հատվածում կամ հենց ամբողջ ստեղծագործության մեջ: Օրինակ, «Տարեց կինը և նրա խոզը» հեքիաթում հերոսուհին շարունակ հանդիպում է նոր կերպարները, սակայն ստեղծագործության մեջ ամեն հերթական կերպարի ներմուծմամբ կրկնվում է նաև նախորդների մուտքի հերթականությունը: «Վարդենին» հեքիաթում հերոսուհին նպարավաճառի խանութ է գնում և այս նախադասությունը աննշան փոփոխությամբ հեղինակը ուղիղ երեք անգամ կրկնում է:

She went again to the grocer's, and she got a third bunch; and just the same happened. [Jacobs, 17]

Նա նորից գնաց նպարավաճառի խանութ և գնեց երրորդ կապոցը, և էլի նույնը պատահեց:

Անգլիական հեքիաթներում, այսպիսով, գրեթե միշտ առկա է *ժամանակի անվերջանալիության* միֆոլոգեմը: Այդ միֆոլոգեմը նշված ստեղծագործություններում բնորոշվում է այսպես. ժամանակը անվերջ է, անսահման, իսկ տվյալ ստեղծագործության մեջ զարգացող դեպքերը կատարվում են այդ անվերջանալի թվացող ժամանակի որևէ պահին, իսկ թե կոնկրետ երբ, այնքան էլ էական չէ: Ժամանակի միֆոլոգեմի դրսևորման լավագույն օրինակը հեքիաթների մեծ մասի սկզբում նշվող *once upon a time, once on a time, once* և նմանատիպ այլ արտահայտություններն են, որոնք մատնանշում են դեպքերի կատարման մեկնարկը, սկզբնակետը:

Once on a time there was a boy named Jack.

[Jacobs, 24]

Ժուկով ժամանակով ապրում էր մի տղա՝ Զեք անունով:

Down in the West, somewhere by the borders of the Texi, there *once* lived a kind old woman. [Будыр, 8]

Հեռավոր արևմուտքում՝ ինչ-որ տեղ Թեքսիի սահմանների մոտ, ժամանակին ապրում էր մի քարի կին:

Բերված օրինակներից երկրորդն առանձնանում է նրանով, որ այստեղ, բացի ժամանակի մեկնարկը ցույց տվող *once* բառից, առկա է նաև տարածական որոշակի անորոշություն մատնանշող *somewhere* բառը, և հերոսուհու *old* որոշիչը, ինչի առանձնահատկությունների մասին արդեն խոսել ենք:

Պետք է նշել, որ անգլիական հեքիաթները ունեն ոչ միայն իրենց բնորոշ սկզբնամաս, այլև, մեծամասամբ, նաև ավարտ՝ դարձյալ ժամանակի միֆոլոգեմի յուրօրինակ կիրառմամբ: Երբեմն այդ եզրափակիչ նախադասությունը կարող է ունենալ փոքր - ինչ այլընտրանքային շարադրանք, սակայն դրա առանցքը կազմող ժամանակի ցուցիչը մնում է անփոփոխ:

And if they didn't live happy *for ever after*,
that's nothing to do with you and me. [Jacobs, 15]

Իսկ թե նրանք երջանիկ ապրեցին այդ պահից ի վեր, թե ոչ՝ ո՛չ ձեզ է վերաբերվում, ո՛չ՝ ինձ:

Այս օրինակում գործողությունների զարգացման ժամանակի ավարտը տրվում է *for ever after* արտահայտությամբ: Վերջինս, սակայն, չի ենթադրում գործողությունների կատարման ավարտը, այլ միայն մատնանշում է դրանց հետագա զարգացման վերջը: Այլ խոսքերով, ընթերցողը, հասնելով հեքիաթի վերջին, ոչ թե մտածում է հերոսների կյանքի ու գործունեության ավարտի մասին, այլ մտովի պատկերացնում է, որ նրանք դեռ երկար են ապրելու իրենց վաստակած երջանիկ կյանքով:

Խոսելով անգլիական հեքիաթներում ժամանակի սկզբի ու ավարտի, և առհասարակ, ժամանակի գործոնի մասին, կարծում ենք՝ տեղին է նշել, որ բուն ստեղծագործության մեջ գործողություններն էլ ունեն իրենց զարգացման ժամանակային բնութագիրը: Իսկ դա հանկարծակիությունն է, դեպքերի զարգացման անսպասելիությունը, որը լարվածության մեջ է պահում ընթերցողին:

However, *all of a sudden* she heard a sort of a
knocking low down on the door. [Jacobs, 4]

Այնուամենայնիվ, հանկարծ նա մի տեսակ թակոց լսեց դռան վրա:

Այս օրինակում *all of a sudden* (հանկարծ) արտահայտությունը մեր ասածի վառ վկայությունն է: Հենց գործողությունների կատարման անսպասելիությունն է դառնում այն գեղարվեստական հնարներից մեկի,

որի կիրառմամբ հեքիաթի ժանրը դառնում է այդքան հետաքրքիր ու սիրված:

Այսպիսով, անգլիական հեքիաթներին բնորոշ են ամենատարբեր միջոլոգեմների առկայությունը: Դրանք կարելի է խմբավորել՝ ելնելով իրենց ընդհանրություններից ու տարբերություններից: Մեր կողմից դիտարկված միջոլոգեմները կարող են միավորվել երկու ընդարձակ խմբերի մեջ՝ վարքագծային և տարածա-ժամանակային միջոլոգեմներ: Սա չի նշանակում, սակայն, որ մենք բացառում ենք խնդրո առարկա ստեղծագործություններում այլ միջոլոգեմների առկայությունը: Ընդհակառակը, ժանրն այնքան հարուստ է տարբեր ժամանակներում ստեղծված և իրենցում այդ ժամանակի բարոյահոգեբանական և կենցաղային կնիքը կրող հեքիաթներով, որ մենք ավելի քան համոզված ենք դրանցում միջոլոգեմի այլ դրսևորումների առկայության հարցում: Ավելին, ելնելով այն փաստից, որ, ըստ էության, յուրաքանչյուր հեքիաթ իր մեջ որոշակի բարոյախրատական կոդ է թաքցնում, սխալված չենք լինի, եթե նշենք, որ տրամաբանորեն դրանց գերակշիռ մասի հիմքում դրված է մեկ կամ նույնիսկ մի քանի միջոլոգեմ: Մեր կողմից մատնանշվածները, պարզապես, դրանց առավել հաճախակի հանդիպող տարատեսակներից են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Jacobs J., English Fairy Tales, G. P. Putnam's Sons, New York, London, 1892
2. Будар Н., Английская литературная сказка XX в., Москва, Тоо “Новина”, 1997
3. Տուրիշևա Օ., Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017
4. Զրբաշյան Ա., Գրականության տեսության արդի խնդիրներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016

ЭВЕЛИНА ЗАДОЯН - ЛИНГВИСТИЧЕСКИЕ СРЕДСТВА СОЗДАНИЯ МИФОЛОГЕМЫ В АНГЛИЙСКИХ СКАЗКАХ

Статья посвящена особенностям создания мифологемы в английских сказках, в частности языковым средствам мифотворчества. В статье рассматриваются некоторые из известных английских сказок

разных времен. Была сделана попытка найти и продемонстрировать мифологемы, которые особенно характерны для английских сказок, которые и образуют их ось. Все рассматриваемые мифологемы не только тщательно раскрываются, но также даются их взаимоотношения с другими мифологемами, в результате чего мы различаем их четкую сгруппированность. Таким образом, исследование проливает свет не только на явление мифологемы, а также, на фольклорные проявления в английских сказках.

EVELINA ZADOYANTHE – LINGUISTIC MEANS OF THE CREATION OF MYTHOLOGEM IN ENGLISH FAIRY TALES

The article focuses on the peculiarities of the creation of mythologem in English fairy tales, in particular the linguistic means of mythmaking. The article examines some of the well-known English tales of different times. An attempt was made to find and demonstrate the mythologems that are very typical to the English fairy tales, forming its axis. All observed mythologems are not only clarified as much as possible, but are also given in relationship with other ones, as a result of which we have a clear grouping. The study thus sheds light on both mythologem and tale writing and on a number of essential issues related to English fairy tales.

ՄԻՋՏԵՔՍԱՅԻՆ ՄԵԶԲԵՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

ՍՅՈՒՋԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ ավելի եղանակավորում, դեռնիքի եղանակավորում, օբյեկտիվ եղանակավորություն, սուբյեկտիվ եղանակավորություն, լրագրային ոճ

Հայտնի է, որ հրապարակախոսության նպատակն է արտահայտել հեղինակի դիրքորոշումը՝ պատմա-մշակութային իրողությունների, հասարակական ու քաղաքական կյանքին առնչվող փաստերի և իրադարձությունների նկատմամբ՝ դրանով իսկ իրականացնել որոշակի սոցիալական առաքելություն:

Անդրադառնալով հրապարակախոսական և լրագրային ոճերի փոխհարաբերության խնդրին՝ Ս . Գասպարյանը նշում է, որ առաջանալով հրապարակախոսական ոճի հիմքի վրա՝ լրագրային ոճն այնուամենայնիվ չի նույնացվում դրա հետ՝ չնայած իր տրամաբանական ապացույցների և խոսքի հուզականության ու փոխաբերականության միջոցով հասարակության վրա ազդեցություն թողնելու միտմանը :

Լրագրային ժանրերի թվին են դասվող առաջնորդող հոդվածը, տեղեկատվությունը, հաղորդագրությունը ներկայացնում են ոչ թե բուն հրապարակախոսությունը, այլ լրագրային ոճը կամ հրապարակախոսական ոճի ենթաոճ [Գասպարյան 2011:100] :

Այս տեսակետից, մեր կարծիքով, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում առաջնորդող հոդվածի՝ ժանրային պատկանելիության խնդիրը: Այն կարելի է դիտել որպես հրապարակախոսականի ենթաժանր: Հաշվի առնելով այն փաստը, որ թե՛ հրապարակախոսական և թե՛ լրագրային տեքստերում հեղինակն այնուամենայնիվ հորդորում է հանրությանը որոշակի գործողության՝ միաժամանակ պահպանելով տեղեկատվական գործառույթը, այդուհանդերձ, հարկ է նշել, որ առաջնորդող հոդվածների առաջնային առաքելությունն է հանրային կարծիքի ձևավորումն ու ուղղորդումը:

Առաջնորդող հոդվածի եղանակավորման միջոցները բխում են հեղինակի ասույթային դիրքորոշումից (positionnement énonciatif): Վերջինս, ըստ ֆրանսիացի հայտնի լեզվաբան Պ . Շարոդոյի,

բացահայտվում է առաջնորդող հողվածի հեղինակի կրկնակի նպատակով, որն է անաչառ կերպով ներկայացնել հանրությանը հուզող կարևորագույն որևէ խնդիր՝ հորդորելով ընթերցողին համապատասխան դիրքորոշում ընդունելու արծարծված հարցի վերաբերյալ:

Այսպիսով, նա միաժամանակ իրականացնում է *իրազեկման* և *ներագրողական* գործառույթները: Նշանագիտական ուսումնասիրության տեսակետից վերջիններս համընկնում են համապատասխանաբար ակթիկ և դեոնթիկ եղանակավորման դրսևորումների հետ:

Այս պարագայում եղանակավորման դրսևորումները պայմանավորվում են առաջնորդող հողվածի հեղինակի կողմից հետապնդվող գլխավոր միտումով, այն է մշտապես վայելել ընթերցողի վստահությունը՝ վերոնշյալ նպատակներին հասնելու համար: Պ. Շարոդոն այս առիթով գրել է **«L'enjeu de crédibilité exige du sujet énonçant qu'il ne prenne pas parti. D'où une délocutivité obligée de l'attitude énonciative qui devrait faire disparaître le «Je» sous des constructions phrastique impersonnelles et nominalisées. Ce n'est pas à proprement parler de l'objectivité, mais c'est le jeu de l'objectivité par l'effacement énonciatif. L'enjeu de captation le conduira parfois à prendre position [Charaudeau 2006]:**

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ մեջբերումից «Je» դերանունը իսպառ վերանում է առաջնորդող հողվածից՝ հանգեցնելով **սուբյեկտի հեղինակի չեզոքացմանը**, այն ինչ Շարոդոն անվանում է **effacement énonciatif du sujet**:

Երևույթը ինքնին միանշանակ չէ և իր ուրույն դրսևորումն է ստանում առաջնորդող հողվածին բնորոշող յուրահատուկ եղանակայնության դրսևորումների շնորհիվ:

Որպես վառ օրինակ կարող ենք վերցնել ֆրանսիական ժամանակակից մամուլի առաջնորդող այն հողվածները, որոնք շոշափում են սոցիալական կյանքի ամենալուրջ խնդիրներն և իրադարձությունները: Առաջնորդող հողվածի հեղինակները կատարում են մանրակրկիտ վերլուծություն: Ի տարբերություն այլ լրագրողների, որոնք պահպանում են չեզոք և անկողմնակալ լինելու կեցվածքը, նրանք կարող են քննադատել և ցույց տալ իրենց անձնական վերաբերմունքը:

Որպեսզի ավելի լավ պատկերացում կազմենք, թե ինչպիսի եղանակավորման հնարքների է դիմում լրագրողը, առաջարկում ենք ուսումնասիրել **«Le Point»** (√2125, 2013) ամսագրում լույս տեսած **Cette**

fâcheuse et nuisible vérité qui infeste notre pays... վերտառությամբ հոդվածը, որի հեղինակը Ֆրանս Օլիվիե Ժիզերն է:

Հոդվածի վերնագրով իսկ հեղինակը կարծես թե փորձում է անհանգստություն առաջացնել ընթերցողի մոտ: Վերնագրում օգտագործվում է օբյեկտիվորեն բնույթի բանադարձում, որտեղ մեկտեղվում են հակադիր իմաստ ունեցող մի կողմից ***vérité*** մյուս կողմից ***nuisible*** և ***infester*** միավորները: Ոճական այս հնարքի կիրառումը խիստ ուշագրավ է դարձնում հոդվածը:

Հոդվածի հիմքում ընկած է «***Vérité***» (***ճշմարտություն***) և «***Mensonge***» (***սուտ***) բառայինների շուրջ հյուսվող իմաստային դաշտերի հակադրությունը: Հոդվածագիրը սուտը և քաղաքականության միասնությունը արտահայտում է «***vivre en concubinage***» բառակապակցության միջոցով, որով ընդգծում է այն միտքը, որ պետության բարօրության տեսակետից սուտն ու քաղաքականությունը իրավունք չունեն մեկտեղվելու, քանի որ պետությունը չի ճանաչում դրանց միասնության իրավասությունը:

Օրինակ՝

S'il vivent depuis longtemps en concubinage, la politique et le mensonge font de moins en moins bon ménage. Pour ne l'avoir pas compris, M. Copé a fait, ces jours-ci, beaucoup rire à ses dépenses.

Քննարկենք իրարամերժ վարքագծի դրսևորումները հետևյալ հաստատում, վերջիններս արտահայտվում են բառային հակադրության միջոցով:

*Le politicien est à l'opposé de l'homme d'Etat. Le premier **s'essouffle à suivre le peuple** ; le second, **altier, le devance**. Tout le monde n'étant pas de Gaulle un certain 18 juin, notre classe politique est surtout entre les mains de **professionnels du cynisme qui clament en public le contraire** de ce qu'il **murmurent en privé**. C'est le syndrome Copé qui les amène à dresser des barricades pour des causes dont ils se contrefichent.*

Այս պարբերությունում նկատվում է երկակի վերաբերմունքի բացահայտ քննադատություն, որն արտահայտվում է «***ils clament en public le contraire de ce qu'ils murmurent en privé***» ասույթով: Ժամանակակից քաղաքական գործիչները բարձրաձայն խոսում են մի բան, մինչդեռ մտերմիկ զրույցներում՝ մեկ այլ բան՝ իրականում անտարբեր լինելով իրավիճակի նկատմամբ: Այս երևույթի վառ օրինակն է քաղաքական գործիչ Ժան Ֆրանսուա Կոպեի վարած

քաղաքականությունը, որին հեղինակը որակում է որպես **professionnel du cynisme**:

Լրագրողը քաղաքական իրավիճակը ներկայացնելիս այն անվանում է «**le syndrome Copé**» - (**Կոպեական «ախպանիշ»**) , որից կարելի է հետևություն անել, որ վերջինս անառողջ է, ինչը դրսևորվում է քաղաքական գործիչների այնպիսի գործելակերպով, որն անջրպետում է խոսքն ու վարքը և հանգեցնում՝ ստախոսության: Նրանք Կոպեի նման են, այսինքն իբր պայքարում են որոշակի արժեքների համար, որոնց նկատմամբ իրականում խորապես անտարբեր են: Հասարակությունը վատառողջ է, այն տառապում է երկփեղկված վարքագծով, քանի որ նրա խոսքն ու գործը չեն համընկնում:

Ինչպես արդեն նշել ենք, հողվածի հիմքում ընկած է սուտ/ճշմարտություն արժեաբանական երկատումը, այստեղ հակադրվում են մի կողմից *ասելը և անելը (le dire # le faire)*, մյուս կողմից *խոսելը և գործելը (le parler # l'agir)*, ինչն ինքնստիճյան մեծ հետաքրքրություն է առաջացնում գործաբանական վերլուծության համար: Անգամ պերֆորմատիվ (կատարողական) իմաստ ունեցող բառերը զրկվում են իրենց իմաստային արժեքից, ինչն էլ հասկանալի է դարձնում ներքոհիշյալ հատվածում հեղինակի կողմից Մարկ Թվենի «Ստի արվեստը» աշխատության վկայակոչումը:

Nos politiciens sont pressés d'en finir avec cette «fâcheuse et nuisible vérité qui infeste notre pays», pour reprendre la délicieuse formule de Mark Twain dans «L'art de mentir»

Ինչպես գիտենք, Թվենը սուր ծաղրի է ենթարկում ստախոսներին՝ նրանց «հորդորելով» առնվազն տիրապետել չափավոր ու սրամիտ ստի արվեստին: Մինչդեռ ժամանակակից քաղաքական գործիչների մտքի սնանկությունը երևում է անզեն աչքով, քանի որ նրանք ուղղորդվում են սոցիալական առաջարկ/պահանջարկ պարզունակ մղումով: Նրանց վարքն ու խոսքը պարուրված են կեղծիքով, հագել են «ստի ամրակուռ զրահ»:

Դիտարկենք հետևյալ հատվածը իմաստառճական տեսակետից:

Bran pour la morale ! Cette conception de la politique s'apparente à celle d'un commerçant en gros : il y a une demande, il faut donc une offre que l'on bâclera au plus vite. Que demande le peuple ?

Այստեղ հեղինակը հնչեցնում է քաղաքական գործիչների ձայնը, որոնք նմանվում են մեծածախ առևտրով զբաղվողներին՝ ջանալով

շուտափույթ բավարարել հաճախորդի այսօրվա պահանջը՝ չունենալով՝ խորը տնտեսական վերլուծություններ և տնտեսական ծրագրեր:

Իրացնելով ասույթային չեզոքության պահանջը, որը բնորոշ է լրագրային ոճին, հեղինակը օգտագործում է եղանակավորման այնպիսի հնարներ, որոնց շնորհիվ տպավորություն է ստեղծվում, որ նա խոսում է ողջ հանրության անունից, որը ծարավ է ճշմարիտ խոսքի:

Օրինակ՝

... des vérités qu'on aimerait entendre sortir des bouches autorisées... .

On անորոշ դերանունը այս դեպքում օգտագործվում է **nous (մենք)** իմաստով, որն էլ վկայում է, որ հեղինակը խոսում է ողջ հանրության անունից, որում ընթերցողը կարող է (պետք է) իրեն նույնպես ընդգրկված զգա: Նշենք, որ այս հատվածում արձանագրվում է ներքին պարտադրանքի եղանակավորություն: Այս դեպքում եղանակավորիչների դերում կարող են հանդես գալ **on** և **nous** դերանունները [Թադևոսյան, 2017:69]:

Հոդվածում սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորման միջոցներից են նաև ածական անունները:

Օրինակ՝

*Il y a pourtant des vérités qu'il est **urgent** de faire éclater, des vérités qu'on aimerait entendre sortir des bouches autorisées sur notre système économique ou sur notre modèle social qui fait eau de toutes parts.*

Լրագրողը արձանագրում է հարցի հրատափ լինելու փաստը. դա է վկայում նրա կողմից օգտագործված «**urgent - հրապապ**» բառը, որն արտահայտում է տագնապալի իրավիճակ և ընդգծում անհապաղ գործելու անհրաժեշտություն, ինչն էլ թույլ է տալիս եզրակացնել, որ սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորումը ստանում է դեռնթիկ իմաստ:

Պետք է նշենք, որ տեքստը աչքի է ընկնում ոճական խճանկարով, որն էլ ուսումնասիրությունների նոր և հետաքրքիր դաշտ է բացում:

Օրինակ՝

Les braillards de la France seule ont beau nous expliquer que c'est la faute à l'euro fort et qu'en revenant au franc faible nos exportations cesseront de s'écrouler, ils n'abusent que les gogos.

«*Les brailards de la France seule*» արտահայտության մեջ հեղինակը օգտագործում է *խոսակցական ոճին* պատկանող **brailard** գոյական անունը, որը շեշտադրում է նման քաղաքականությունն իրականացնող անձանց կարճատեսությունը և միամտությունը, քանի որ **brailard** բառույթի իմականային ծավալում առկայացվում են հատկապես *enfant naïf/docil* միավորները:

Հոդվածը բավականին սուր է, այն ոչ բացահայտ մակարդակում լի է հեգնանքով և անգամ՝ ստուկազմով: Հոդվածը ավարտվում է անիրականալի ցանկությամբ, որն արտահայտվում է «***Puisse le pouvoir, pour une fois, parler et agir vrai***» ասույթով, հնչում է ժողովրդի չիրականացվող երազանքը և միևնույն ժամանակ ցայտուն երևում է հեղինակի հիասթափությունը՝ տիրող քաղաքական իրադրության նկատմամբ:

Առաջնորդող այս հոդվածում հեղինակի՝ չեզոք դիրքորոշմանը միտված օբյեկտիվ եղանակայնությունը հյուսվում է միջտեքստային մեջբերման միջոցով, որը, տեքստի մակերեսային մակարդակում, ընկալվում է որպես փաստի արձանագրում: Մարկ Թվենի աշխատությունում՝ տեքստի ոչ բացահայտ մակարդակում, խորհուրդները հնչում են իբրև սուր և անխնա քննադատություն:

Ինչպես բխում է մեր ուսումնասիրությունից, միևնույն ասույթը, փոխելով համատեքստը, կարող է ունենալ նոր եղանակային արժեք. բանախոսը կարող է մեջ բերել մտքեր, հայտնել կարծիքներ, որոնք ինքը չի կիսում, այս դեպքում համատեքստն է թույլ տալիս ընթերցողին՝ հասկանալու, հեղինակը կիսում է այդ տեսակետը, թե՛ ոչ:

Ուսումնասիրության ընթացքում տեսանք նաև, որ հոդվածագիրը ցույց է տալիս, որ իր խոսքում բացահայտ կերպով չի հաղորդում իր սեփական տեսակետը, այլ ձգտում է արտահայտել տվյալ խնդրի նկատմամբ ողջ հանրության ունեցած վերաբերմունքը, իսկ ինքն ավելի շատ հանդիս գալիս որպես միջնորդ՝ ցանկանալով չպարտադրել բացահայտ կերպով իր տեսակետը: Միաժամանակ նշենք, որ եթե հեղինակը խնդիրը ներկայացնելու համար ընտրել է տվյալ միջոցը, ուրեմն, բնականաբար, կիսում է հոդվածում արտահայտված մտահոգությունները, պարզապես դա անում է անուղակիորեն, ինչն էլ բխում է առաջնորդող հոդվածի յուրահատկություններից և լրագրողական էթիկայի կանոններից:

Այսպիսով, եթե առանձին ասույթի մակարդակով խնդրո առարկա առաջնորդող հոդվածում դիտվում է ավերիկ եղանակավորություն, ապա

տեքստի մակարդակով դիտվում է սուբյեկտիվ գնահատողական եղանակավորություն, որը նշանագիտական հարթությունում ձեռք է բերում դեռնթիկ արժեք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Ս., Գործառական ոճագիտություն, Երևան 2011
2. Թադևոսյան Ս., Լրագրողական էթոսի լեզվական դրսևորումները ժամանակակից ֆրանսիական մամուլում, in: Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, Երևան 2017
3. Charaudeau P., Discours journalistique et positionnements énonciatifs. Frontières et dérives. 2006/22 SEMENJ
4. Le Point 2125, 6 juin 2013

СЮЗАННА ТАДЕВОСЯН– ВНУТРИТЕКСТНЫЕ ССЫЛКИ КАК СРЕДСТВО МОДАЛЬНОСТИ

Целью настоящей статьи является изучение модальной цены внутритекстных ссылок в современной французской прессе, в частности, в передовицах.

Последние одновременно осуществляют миссию осведомления и воздействия, которая в семиотической плоскости исследования и совпадает с алетической (фактической) и деонтической (увещевательной) модальностью.

Исследование дает возможность заключить, что если на уровне отдельного изречения внутритекстная ссылка реализуется как алетическая, то есть, фиксирующее объективные факты модальное средство, то на уровне всего текста она воспринимается как деонтическая модальность внутреннего обаявания, выражаемая посредством единиц **on**, **pous**, которые, с одной стороны, подчеркивают нейтральную позицию автора цитаты, с другой стороны, благодаря анализу стилистической семантиологии на глубинном уровне текста, выявляет необходимость противодействия имеющимся в обществе неотложным проблемам в контексте ценностного раздвоения “правда-ложь”.

SYUZANNA TADEVOSYAN - INTERTEXTUAL QUOTATION AS THE MEAN OF MODALITY

The purpose of This article is to subject the modal value of intertextual quotations to examination in modern French press, particularly, in the leading articles.

The latters carry out informative and influencing mission at the same time, which is coincided with the alethic (factual) and deontic (exhortation) modality in semiotic field of investigation.

The examination permits to conclude that if the intertextual quotation at the level of a separate maxim is realized as a alethic, that is as the modal means recording the objective facts, then it is perceived as a deontic modality of inner compulsion at the level of the whole text being expressed by **on**, **nous** units, which emphasize the neutral position of the author of maxim on one hand, and due to semantic- stylistic analysis implementing at the deep level of the text reveal the necessity to counteract to the urgent problems available among the community in truth-false axiology of bifurcation context on the other hand.

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ ՇՈՒՐՁ**

**ԱԻԴԱ ԹՈՓՈՒՁՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՓԻԼԱՎՋՅԱՆ**

Հիմնաբառեր՝ հասարակություն, քաղաքացի, կրթություն, մոդել, դպրոց

Քաղաքացիական դաստիարակության հիմնախնդիրների ուսումնասիրության համատեքստում նպատակահարմար ենք համարել անդրադառնալ ընդհանրապես դաստիարակության և մասնավորապես քաղաքացիական դաստիարակության նպատակի բացահայտմանը:

Ժամանակակից գիտական միտքը սահմանել է դաստիարակության բազմակերպ նպատակներ, թեև դրանց միջև տարբերությունը կարող է լինել աննշան՝ մարդու առանձին որակների փոփոխությունից մինչև նրա անձի հիմնովին փոփոխություն: Հենց նպատակների այս բազմազանությունն էլ ապացուցում է հիմնախնդրի բարդությունը: Հայտնի է, որ դաստիարակության նպատակի սահմանումը պայմանավորում են մի շարք գործոններ. պետական քաղաքականությունը, ազգային գաղափարախոսությունը, որոնք իրենց հերթին կախված են այլ գործոններից՝ հասարակական կարգից, իշխող կուսակցության գաղափարախոսությունից, հասարակության դասակարգային կազմից, մշակույթի զարգացման մակարդակից, փիլիսոփայական և մանկավարժական մտքի նվաճումներից, մանկավարժական համակարգի հնարավորություններից և այլն: Վերը նշված գործոնները, հանգամանքները մեր երկրում փոխվել են: Նույնն է մնացել միայն դաստիարակության նպատակը՝ անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը, որը, ցավոք, հնարավոր չէ չափել, ստուգել, գնահատել: Դաստիարակության նպատակը սահմանելու համար անհրաժեշտ է նաև պարզել, թե որն է մերօրյա հասարակության դաստիարակության իդեալը: Սրանք հարցեր են, որոնք պետք է որոշել:

Երկրորդ հանգամանքը, ինչը դարձյալ դժվարացնում է դաստիարակության նպատակի սահմանումը. ոչ ոք այսօր չի կարող ասել՝ առաջին դասարանցին 10-15 տարի հետո ինչպիսի հասարակության մեջ է ապրելու: Այս ամենը, և իհարկե, դաստիարակության նպատակի փոփոխության հրամայականը հանգեցրել է այն համոզման, որ

Ժամանակավորապես պետք է հրաժարվել դաստիարակության ուտոպիական նպատակներից և գտնել մեր ապրած ժամանակին և դաստիարակվածության մակարդակին համահունչ պրագմատիկ նպատակներ, որոնց իրականացումը հետագայում կնպատակաուղղվի շատ ավելի բարձր նպատակների սահմանման: Սա չի նշանակում իջեցնել այսօրվա դաստիարակության մակարդակը, այլ նշանակում է ճիշտ հաշվել առկա ներուժը և ըստ այդ մշակել զարգացման հեռանկարներ: Հասարակական փորձը ցույց է տալիս, որ անհատն ամեն քայլափոխի ստիպված է լինելու ընտրություն կատարել: Հետևաբար, մեր կարծիքով, ժամանակակից դաստիարակության գլխավոր և ունիվերսալ նպատակը ընտրություն կատարել սովորեցնելն է: Ելնելով վերոգրյալից փորձել ենք սահմանել ուսումնական հաստատություններում դպրոցականի քաղաքացիական դաստիարակության նպատակը:

Ուսումնական հաստատությունում իրականացվող քաղաքացիական դաստիարակության նպատակն է. **Կրթական համապատասխան միջավայրի ստեղծման, անձնական ու հասարակական պահանջմունքների և ազգային ու համամարդկային արժեքների, ընտանեկան ու հասարակական նորմերի զուգորդման, հումանիստական հարաբերությունների հաստատման միջոցով՝ օգնել դպրոցականին տարբեր իրավիճակներում, հիմնավորված մարդասիրական ընտրություն կատարելու, հավասարակշռված որոշում կայացնելու և համապատասխան վարք դրսևորելու հմտություններ ձևավորելու գործում:**

Այս սահմանումն արժարժում է մի շարք կարևոր խնդիրներ, որոնք ապահովում են դաստիարակվողի և դաստիարակողի համագործակցությունը: Առաջինը վերաբերում է և մեծապես կախված է դաստիարակողից: Նա պետք է համակերպվի իր «իշխանությունը» դպրոցականի հետ կիսելու գաղափարի հետ, և այն մտքի հետ, որ դպրոցականն է ինքն իրեն ձևավորողը, ինքը կողքից օգնում է, աջակցում է, նրա ձևավորման համահեղինակն է, բայց ոչ երբեք միանձնյա հեղինակը: Երկրորդ խնդիրը ցույց է տալիս առաջին խնդրին հասնելու համար անհրաժեշտ հնարավորություններն ու պայմանները, արժեքների բովանդակությունը, որոնք առաջարկում է և ստեղծում է դաստիարակողը, սակայն դրանց վերջնական ընտրությունը կատարվում է միասին, այլապես չի լուծվի երրորդ խնդիրը, որն ապահովում է երկուսի աշխատանքի վերջնարդյունքը՝ ընտրություն կատարելը, որոշում կայացնելը, համապատասխան վարք դրսևորելը:

Կարծում ենք այս սահմանումը հնարավորություն է տալիս պահպանել նպատակների հաջորդականությունը, չափելի է դարձնում դաստիարակվողի և դաստիարակողի գործունեության և համագործակցության արդյունքը, հենվել ազգային դաստիարակության ավանդույթների վրա և զարգացնել դաստիարակչական համակարգը անձի և հասարակության առջև կանգնած նոր նպատակների և արժեքների համաձայն:

Այս նպատակներին հասնելու համար մշակվել են անձի քաղաքացիական դաստիարակվածության և ուսումնական հաստատությունում քաղաքացիական դաստիարակության աշխատանքների չափանիշներ, որոնք սահմանում են դաստիարակության որոշակի այն մակարդակը առանց որին հասնելու չի կարելի դառնալ երկրի քաղաքացի:

Ուսումնական հաստատության քաղաքացիական դաստիարակության աշխատանքի գնահատումը և ապագա քաղաքացու դաստիարակվածության մակարդակի գնահատումը իրականացնելիս պետք է ելնել նրանից, թե որքանով են ուսումնական հաստատությունում ստեղծված պայմանները և մարդկային հարաբերությունները նպաստում անձի ինքնուրույն ընտրություն կատարելուն, որոշում կայացնելուն, ինքնադրսևորմանը, նրա բնածին հակումների, հետաքրքրությունների, պահանջմունքների, ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու բավարարմանը, ազատության, պատասխանատվության զարգացմանը, որքանով են նրան օգնում համերաշխ ապրել ինքն իր և ուրիշների հետ, համագործակցել ու հաղորդակցվել միջավայրում և որքանով է նա իր մտածելակերպով և վարքով պատրաստ ծառայելու իր պետությանը, ընտանիքին ու ժողովրդին:

Այդ նպատակն իրականացնելու համար պետք է դպրոցում ուսումնասիրել՝

- դաստիարակչական ազդեցությունների բնույթը, դրանց համապատասխանությունը սոցիալական պրակտիկային և դրանց նկատմամբ երեխաների վերաբերմունքը,
- դաստիարակության նպատակին հասնելու համար կազմակերպված գործողությունների համապատասխանությունը և ներդաշնակությունը,
- դաստիարակչական միջավայրի օբյեկտիվ և սուբյեկտիվ ազդեցությունների միասնությունը,

- կրթական քաղաքականության սկզբունքների և դաստիարակչական միջավայրի համապատասխանությունը,
- դաստիարակչական գործընթացի բոլոր դերակատարների համակարգված աշխատանքի և յուրաքանչյուրի ակտիվության մակարդակը,
- մանկավարժական շփման և աջակցման բնույթը, մակարդակը և երկուստեք /դաստիարակող-դաստիարակվող/ համագործակցության գիտակցվածության աստիճանը,
- սաների՝ միմյանց և մեծերի հետ շփման, փոխհարաբերությունների բնույթը, գիտակցվածության մակարդակը,
- ուսուցչի, դաստիարակի, դասղեկի, դպրոցի կողմից երեխայի վրա ազդող բոլոր գործոնների արդյունավետությունը,
- դպրոցի ներքին մամուլի ուղղորդվածության բնույթը,
- երեխաների և ծնողների, երեխաների և ուսուցիչների հարաբերությունների ոճը, ձևերը, կոնֆլիկտների լուծման եղանակները,
- դպրոցական և դասարանական կոլեկտիվներում բարոյահոգեբանական մթնոլորտը,
- երեխաների ինքնաճանաչման և ինքնահաստատման մակարդակը, նրանց կողմից հոգևոր, մտավոր, նյութական հետաքրքրությունների և պահանջմունքների գիտակցվածությունը և դրանց մասին ուսուցիչների տեղեկացվածությունը,
- դպրոցականների ընդգրկվածությունը արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում, նրանց մասնակցությունը և ընդգրկվածությունը մանկական ինքնավարության մարմիններում, հանրագուտ աշխատանքներում, երեխաների մասնակցությունն իրենց կյանքին վերաբերող հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունմանը, նրանց նախաձեռնությունների իրականացման և ստեղծագործականության համար մթնոլորտի առկայությունը,
- երեխաների ազատության, իրավունքների և պարտականությունների մասին աշակերտության գիտելիքները, դրանց նկատմամբ վերաբերմունքը, դիրքորոշումը և իրացման պատրաստակամությունը: Այդ ուղղությամբ դպրոցի աշխատանքի ձևերն ու մեթոդները,
- երեխաների շրջանում օրինախախտումների և հանցագործությունների վիճակը, սեփական վարքի համար պատասխանատու լինելու երեխաների պատրաստակամությունը և գիտակցվածությունը,

- ազգային ինքնագիտակցության, հայրենասիրական պարտքի, հասարակության առջև պատասխանատվության մասին երեխաների պատկերացումները, վերաբերմունքը,
- երեխաների ընդհանուր զարգացման մակարդակը, արժեքային կողմնորոշումները և ուղղվածությունը,
- տարբեր հարցերի և հիմնախնդիրների վերաբերյալ սեփական կարծիք և գնահատական արտահայտելու, որոշումներ կայացնելու, "ոչ" ասելու, ընտրություն կատարելու և դրա հետևանքների համար պատասխանատվություն կրելու՝ երեխաների պատրաստակամությունը, տարբեր իրավիճակներում նրանց կողմնորոշվելու ունակությունն ու ինքնուրույնության մակարդակը,
- դպրոց-համայնք, դպրոց-ծնող համագործակցության մակարդակը և այդ ուղղությամբ աշխատանքի ձևերը,

Սովորողի անձի դաստիարակվածության մակարդակի գնահատման որոշ չափանիշներ.

- սովորողի ինքնադաստիարակության, քաղաքացիական ինքնագիտակցության մակարդակը, արժեքային կողմնորոշումները և ուղղվածությունը,
- երեխաների ինքնաճանաչման և ինքնագնահատման մակարդակը, սոցիալական զգացման, մասնագիտական ինքնորոշման առկայությունը,
- ազատությունից օգտվելու սահմանների, իրավունքն ու պարտականությունը զուգորդելու, գիտակցված ենթարկվածության աստիճանը,
- հայրենասիրական, քաղաքացիական ակտիվության, օրինապաշտության դրսևորումները, դրանց նկատմամբ սովորողի դիրքորոշումները, իրավական և քաղաքական մշակույթի առկայությունը,
- ազգային արժանապատվության, քաղաքացիական պարտքի, քաղաքացիական պատասխանատվության առկայությունը և դրանց նկատմամբ սովորողի վերաբերմունքը,
- հայրենի բնության նկատմամբ վերաբերմունքը և դրան համապատասխան վարքագծի դրսևորման կոնկրետ օրինակների առկայությունը,
- տարբեր հարցերի և հիմնախնդիրների վերաբերյալ սեփական կարծիք ունենալու, համեմատություններ անելու և գնահատական տալու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու,

համապատասխան որոշումներ և վարքագիծ ընտրելու և հետևանքների համար պատասխանատվություն կրելու՝ սովորողների պատրաստակամության առկայությունը,

- իր կյանքին վերաբերող հարցերի լուծմանը սովորողի մասնակցության ձևերն ու միջոցները:

Անձի քաղաքացիական դաստիարակության էությունը բնութագրելու համար անհրաժեշտ է անդրադառնալ քաղաքացիական դաստիարակության բաղադրիչներին: Դրանք են՝ քաղաքացիական դիրքորոշումը, քաղաքացիական գիտակցության ձևավորումը, իրավական մշակույթի ձևավորումը

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում քաղաքացիական դիրքորոշումը սահմանվում է հետևյալ կերպ. «Քաղաքացիական դիրքորոշումը քաղաքացիական պարտքի պատասխանատու իրականացումն է, իսկ քաղաքացիական պարտքը դա այն պահանջներն են, որոնք դրված են անհատի վրա կոլեկտիվի և առհասարակ հասարակության առջև պարտավորությունների տեսքով»:

Ուսումնասիրելով քաղաքացու դերը և նրա նկատմամբ դրվող պահանջները պատմության տարբեր ժամանակահատվածներում հասկանում ենք, որ դրանք ձևավորվել են պետության պահանջներից ելնելով: Այսպես՝ տարբեր ժամանակահատվածներում տարբեր են եղել օրինակելի քաղաքացու իդեալները: Ժամանակակից քաղաքացու իդեալը ձևավորելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից պետության պահանջները և միևնույն ժամանակ ուսումնասիրել պատմական փորձը: Ժամանակի ընթացքում քաղաքացու որոշակի հատկանիշներ կորցրել են իրենց արդիականությունը, որոշներն էլ կարող են հակասել ժամանակակից մոտեցումներին, սակայն պատմական տարբեր ժամանակահատվածներում ձևավորվել են քաղաքացու այնպիսի հատկանիշներ, որոնք մինչ օրս արդիական են և դրանց ձևավորման գործում մեծ նշանակություն կունենան նոր մեթոդների կողքին կիրառել նաև արդեն կիրառված և իրենց արդյունավետությունը ապացուցած մեթոդներ:

Մանկավարժության մեջ քաղաքացու իդեալի մասին կան մի շարք պատկերացումներ: Ն. Պազիրևը և Վ. Ուլանովը տվել են քաղաքացու իդեալի իրենց մոտեցումը: Ըստ նրանց՝ իդեալական քաղաքացին պետք է տիրապետի կոնկրետ գիտելիքների (մարդու իրավունքների, պետության, պետության հիմնական օրենքների, ընտրությունների մասին), կարողությունների (սոցիալական և քաղաքական իրավիճակների

վերլուծության, մարդկանց հետ համագործակցելու, քննադատական մտածողության, պետական և հասարակական կառույցների հետ համագործակցության և այլն), ունենա արժեքներ (այլոց իրավունքները հարգել, հանդուրժողականություն, հայրենասիրություն), և սոցիալական փորձ (դպրոցի, համայնքի, երկրի սոցիալաքաղաքական կյանքի մասնակցություն, քննարկումներ անցկացնելու և որոշումներ կայացնելու) [Пазырев, Уланов 2002:237-240]:

Վ.Ա. Մելնիկը քաղաքացու մոդելը ներկայացնում է հետևյալ կերպ՝ մարդ, որը պատրաստ է սեփական կամքով ներգրավվել իրեն անհրաժեշտ կառույցներում և համագործակցել նրանցում, կարողանում է բավարարել իր սեփական հետաքրքրությունները, ընտրություն կատարել իր սոցիալական, քաղաքական և հոգևոր կեցության հարցերում: Նրա կարծիքով սա անհատի և կոլեկտիվի նոր տեսակ է, որը ենթադրում է ինքնուրույնություն, սեփական ուժերով նպատակների հասնելու կարողություն և ավելի մեծ պատասխանատվություն հասարակության նկատմամբ [Мельник 2004:640]:

Պետության կառավարման գործընթացին ճիշտ մասնակցելու համար քաղաքացուց պահանջվում են կոնկրետ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ և անձնային որակներ: Քաղաքացուց պահանջվում է լինել իրավագիտակից, ունենալ ռացիոնալ մտածողություն և սեփական գործուղությունների նկատմամբ պատասխանատվության զգացում: Միևնույն ժամանակ քաղաքացին պետք է իմանա իր պարտականությունները և պարտավորությունները պետության նկատմամբ:

Հայրենասիրությունը քաղաքացու կողմից պետությանը նվիրվածության ամենաբարձր աստիճանն է: Հայաստանի Հանրապետությունը, լինելով դեռևս պատերազմի մեջ գտնվող պետություն, իր առջև խնդիր ունի քաղաքացիների մեջ հայրենասիրություն ձևավորելու և պահպանելու: Հայրենասիրությունն անմիջականորեն կապված է պետության պատմությանը և մշակույթին: Քաղաքացին պետք է լավ ծանոթ լինի սեփական պետության պատմությանը, հերոսական անցյալին, տարբեր ժամանակների ազգային հերոսներին, ինչպես նաև պետք է ծանոթ լինի սեփական պետության մշակույթին և գիտակցի, թե ինչ դեր և ազդեցություն է ունեցել իր երկիրն աշխարհում՝ պատմության տարբեր ժամանակներում և ընթացիկ ժամանակահատվածում:

Օրինակելի քաղաքացին պետության ներսում, ոչ միայն մասնակցում է պետական կառավարմանը, այլ նաև ծավալում է անկախ գործունեություն, որն ուղղված է հասարակության օժանդակմանը: Հենց այստեղ էլ առաջ է գալիս քաղաքացիների հասարակական և սոցիալական ակտիվությունը: Այսօր Հայաստանում գործում են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնց նպատակն է ամենատարբեր հասարակական և սոցիալական խնդիրների լուծումը: Հասարակական ակտիվությունը նպաստում է պետության զարգացմանը և օժանդակող դեր կատարում պետության համար ամենատարբեր խնդիրներ լուծելու գործում:

Ամբողջացնելով քաղաքացու նկատմամբ պատմական տարբեր ժամանակահատվածներում ձևավորված պահանջները, քաղաքացու անձնային և որակական առանձնահատկությունների վերաբերյալ տարբեր մանկավարժների կարծիքները, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության անձի դաստիարակության, ձևավորման, զարգացման գործում պետական քաղաքականությունը, փորձել ենք ստեղծել Հայ ապագա քաղաքացու կատարելատիպը, որի դաստիարակությունն ու ձևավորումն իրականացվում է հայ դպրոցում: Ակնկալվում է, որ հետևողական և նպատակասլաց աշխատանքի արդյունքում դպրոցի շրջանավարտը պետք է.

- Ճանաչի, իմանա և սիրի իր հայրենիքն ու մայրենի լեզուն, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, գիտակցի իր ժողովրդի և պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
- **Ունենա հետևյալ անձնային որակները՝** օրինապաշտություն, հանդուրժողականություն, ապրումակցում, ինքնաճանաչողություն, կարգապահություն, հասարակական պատասխանատվություն, քննադատական մտածողություն, հաղորդակցական կոմպետենցիաներ, իրավագիտակից վարք, քաղաքացիական ակտիվություն, ազնվություն, նախաձեռնողականություն, քաղաքացիական արժանապատվություն, անձնական ազատություն, քաղաքացիական դիրքորոշում:
- **Նրա համար արժեք են՝** հայրենիքը և հայրենասիրությունը, պետականությունն ու անկախությունը, մարդասիրությունն ու ընտանիքը, իրավունքն ու պարտականությունը, քաղաքացիական արժանապատվությունը, պարտքն ու պատասխանատվությունը,

ազգային, համամարդկային, իրավական ու քաղաքական մշակույթը, անձնային և կոլեկտիվ շահի զուգակցումը:

- **Իմանա՝** պետության հիմնական օրենքները, պետական խորհրդանիշերը, իրավունքն ու պարտականությունը զուգորդել, պատասխանատվություն կրել վարքի և կատարած ընտրության համար,
- **Կարողանա՝** պահպանել իր անհատականությունը, գիտակցորեն ենթարկվել, վերլուծել սոցիալական և քաղաքական իրավիճակները, տեղեկատվության «տողատակը» կարդալ, ինքնուրույն որոշում ընդունել և պատասխանատվություն կրել դրա հետևանքների համար, զուգորդել ազատությունն ու քաղաքացիական պարտքը, քաղաքացիական ակտիվություն հանդես բերել, գնալ փոխզիջումների, տարբեր իրավիճակներում կողմնորոշվել, գիտակցված ընտրություն կատարել, համագործակցել իր տարեկիցների, իրենից մեծերի ու փոքրերի հետ:
- **Տիրապետի՝** քաղաքացիական էթիկայի նորմերին, երկխոսություն վարելու, համոզելու, իր նկատմամբ վստահություն առաջացնելու հմտություններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արիստոտել, «Պոլիտիկա», պետական հրատարակչություն, Երևան, 1936 թ.
2. Թոփուզյան Ա., Մանկության ժամանակակից հիմնախնդիրները /հոդված/: «Մանկավարժության արդի հիմնախնդիրները: Մարտահրավերներ և լուծումներ» հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015թ., էջ 124-129:
3. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999 թ.
4. Пазырев Н., Уланов В., Из опыта организации гражданского образования в средней школе //Взаимодействие личности, образования и общества в изменяющихся социокультурных условиях: межвуз. сб. науч. трудов. Ч.1. - СПб.: Изд-во ЛГПУ им. А. И. Герцена, 2002. - С. 237 - 240.
5. Мельник В., Современный словарь по политологии, 2004г.

АИДА ТОПУЗЯН, ГЕВОРГ ПИЛАВДЖЯН - О ПРОБЛЕМЕ ФОРМИРОВАНИЯ ЦЕЛИ ГРАЖДАНСКОГО ОБРАЗОВАНИЯ

Ключевые слова: общество, гражданин, образование, модель, школа.

Гражданское образование современного общества является одной из важнейших задач современного общества в Армении. Изменилась парадигма образования, так как новая государственная политика, национальная идеология, культурные особенности оказали значительное влияние на формирование норм, ценностей, отношений и новых педагогических подходов, которые практикуются современной системой образования в соответствии с новыми требованиями современного общества.

В этой статье авторы пытаются выявить все необходимые компоненты идеального гражданина, которые должна развивать современная армянская школа. Учителя должны стать промоутерами и посредниками в этом развитии, культивируя навыки сотрудничества, терпимость, эффективность, гражданскую ориентацию, автономные навыки обучения, которые помогут личности делать независимый и правильный выбор в соответствии с его личными интересами и быть успешным в жизни.

Автор приходит к выводу, что образцовый гражданин полностью будет вовлечен в государственное управление, будет способствовать развитию общества и страны в целом.

AIDA TOPUZYAN, GEVORG PILAVJYAN - ON THE PROBLEM OF SHAPING THE OBJECTIVE OF CIVIC EDUCATION

Key words: society, citizen, education, model, school.

The civic education and identification of its new content in a contemporary Armenian society and is one of major immediate objectives of the national education system to comply with the new demands and challenges of the contemporary society. The paradigm of education has changed as the new state policy, national ideology, cultural features have been developed which are considerably influenced by the norms, values, attitudes and new pedagogical approaches.

In this article the authors makes an attempt to reveal all the necessary components which should be involved in the model of an ideal civic citizen which the modern school education system needs to develop and practice among the pupils. The teachers should be the promoters and facilitators of this development by cultivating cooperation skills, tolerance, efficacy, civic mindedness, autonomous learning skills which enable the citizen independently make right decisions and choices, as well as be successful in life in line with his personal interests.

The authors concludes that an exemplary citizen is fully engaged in the public administration, engaged in the variety of the activities which support and develop the country and the society.

**ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**ԱԻԴԱ ԹՈՓՈՒՋՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՓԻԼԱՎՋՅԱՆ**

Հիմնաբառեր՝ քաղաքացիական դաստիարակություն, կրթություն, քաղաքացի, հասարակություն

Քաղաքացիական դաստիարակության հիմնախնդիրների ուսումնասիրությունների շրջանակներում ուսումնասիրելով «Հասարակագիտություն» առարկայի ծրագիրը, եկանք այն եզրահանգման, որ նրանում տրված վարժությունները, հանձնարարությունները, առաջադրանքները դեռևս չեն նպաստում դասարանական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների, դպրոցական և ընտանեկան դաստիարակությունների շարունակականության ապահովմանն ու ինտեգրմանը: Սրանով պայմանավորված կարծում ենք, որ անհրաժեշտ է մշակել դպրոցականի քաղաքացիական դաստիարակության ժամանակակից համակարգ: Մենք փորձել ենք մշակել քաղաքացիական դաստիարակության ամբողջական համակարգ, որը չափելի և գնահատելի է դարձնում քաղաքացիական դաստիարակության գործընթացը: Համակարգը ներառում է՝ քաղաքացիական դաստիարակության կառավարման մոդել, քաղաքացիական դաստիարակության խորհրդի անդամների գործառույթները, քաղաքացիական դաստիարակության օրինակելի պլան, մշակվել է դպրոցականի քաղաքացիական դաստիարակության ժամանակակից մոդելը և սահմանվել են քաղաքացիական դաստիարակության համար անհրաժեշտ մանկավարժական պայմանները:

Ստորև տրվում է դպրոցականի քաղաքացիական դաստիարակության ժամանակակից մոդելը, համաձայն որի՝

- Քաղաքացիական դաստիարակության մեթոդաբանական հիմքերն են. համակարգային /մշակութաբանական/, անձնակողմնորոշիչ /մարդաբանական/, գործունային մանկավարժական մոտեցումները:
- Քաղաքացիական դաստիարակության նպատակն է օգնել դպրոցականին տարբեր իրավիճակներում ընտրություն կատարելու,



հավասարակշռված որոշում կայացնելու և համապատասխան վարք դրսևորելու կարողություններ ձևավորելու գործում: Այն իրականացվում է մարդասիրության, փոխգործակցության, հանդուրժողականության, քննականության և երկխոսական սկզբունքներով:


- Քաղաքացիական դաստիարակության կառուցվածքային բաղադրամասերն են՝ քաղաքացիական նորմերի, քաղաքացիական արժեքների, քաղաքացիական որակների և քաղաքացիական էթիկայի ձևավորումը: Քաղաքացիական դաստիարակության գործառնական բաղադրամասերի թվին են դասվում իրավունքների ճանաչումը, պարտականությունների գիտակցումը, քաղաքացիական դիրքորոշումը և իրավագիտակցված վարքը:

Քաղաքացիական դաստիարակության կառուցվածքային և գործառնական բաղադրամասերի բովանդակային ապարատը ապահովելու համար մշակվում և ստեղծվում են համապատասխան մանկավարժական պայմաններ և միջոցներ, որոնք գնահատվում են մեթոդական համալիրի հաղորդակցային-գործունային, արժեքային-ապրումակցային, ինքնագնահատողական չափանիշներով:

Քաղաքացիական դաստիարակության վերջնարդյունքը քաղաքացիաիրավական դաստիարակվածության մակարդակ ունեցող քաղաքացին է:

Դպրոցականի քաղաքացիական դաստիարակության ժամանակակից մոդելը





Ներկայացնում ենք նաև մանկավարժական այն պայմանները, որոնք անհրաժեշտ են դպրոցում քաղաքացիական դաստիարակության իրականացման համար:

- ✓ Մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները ընդունում են սովորողի անձնային զարգացման, ամբողջականության և ինքնատիպության առաջնայնությունը:
- ✓ Ուսուցիչը համակերպվել է «համաձևավորողի» դերի հետ և պատրաստ է «իր իշխանությունը կիսել» սովորողի հետ: Նա բոլոր իրավիճակներում կարողանում է մնալ երեխայի պաշտպանն ու բարեկամը:
- ✓ Դպրոցում քաղաքացիական դաստիարակության նպատակը համարվում է ընտրություն կատարելու և որոշում կայացնելու սովորողի հմտությունը:
- ✓ Մանկավարժական ողջ գործընթացը կառուցված է գործընկերային, երկխոսական, համագործակցական, սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունների հիման վրա:


- ✓ Դպրոցում պայմաններ են ստեղծված սովորողների ֆիզիկական և հոգեբանական անվտանգության, ազատության, իրավունքների կիրառման համար:
- ✓ Յուրաքանչյուր աշակերտ զգում է իրեն դպրոցի տերը, գիտակցում է, որ ինքն է իր զարգացման հիմնական հեղինակը, կարողանում է զուգորդել իրավունքն ու պարտականությունը, գիտի, որ պատասխանատու է սեփական ընտրության, որոշման, վարքի ու կարծիքի հետևանքների համար:
- ✓ Սովորողների ակտիվ գործունեության, նրանց նախաձեռնողականության և ստեղծագործականության խթանումն ու կազմակերպումը, նրանց ծայնը, կարծիքն ու տեսակետը լսելի դարձնելը դրված են մանկավարժական ողջ գործընթացի հիմքում:
- ✓ Մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների հարաբերությունները հիմնված են փոխհանդուրժողականության, փոխապարումակցման, խելամիտ փոխզիջումների վրա:
- ✓ Դասավանդվող յուրաքանչյուր առարկայի դասավանդման գործընթացում մտցված է հայրենասիրական-քաղաքացիական դաստիարակությանը նպաստող բաղադրիչ: Ուստի, յուրաքանչյուր առարկա նպաստում է սովորողների ինքնագիտակցության, իրավական և քաղաքացիական մշակույթի ձևավորմանը:
- ✓ Դպրոցում հետզհետե ինտեգրվում են դասարանական և արտադասարանական աշխատանքները, կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում նպաստում է սովորողների մոտ քաղաքացիական պարտքի, պատասխանատվության, արժանապատվության, օրինապաշտության ձևավորմանը:
- ✓ Մանկավարժական կոլեկտիվի, դպրոցի աշակերտական և ծնողական խորհուրդների համագործակցված աշխատանքի շնորհիվ հետզհետե ամրանում է դպրոց-ընտանիք-համայնք-արտադպրոցական հաստատություն կապը: Լսելի է դառնում սովորողների ծայնը և մասնակցությունը իրենց կյանքին վերաբերող հարցերի ընտրության և լուծման գործում:
- ✓ Դպրոցում քաղաքացիական դաստիարակության իրականացման հիմնական մեթոդներ են համարվում համագործակցային, փոխազդեցությային, երկխոսությունային մեթոդները, երեխայի ինքնաճանաչմանը և ինքնագնահատմանը, ստեղծագործականությանը և նախաձեռնողականությանը նպաստելուն ուղղված

մեթոդները: Բացառվում են մարդու արժանապատվությունը նվաստացնող մեթոդները:

- ✓ Կոռուպցիայի դեմ պայքարն իրականացվում է ոչ թե ծնողներին դպրոցի դեմ հանելու, այլ մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտների իրավագիտակցությունը բարձրացնելու, գիտակցված ենթարկվածության մթնոլորտ ապահովելու միջոցով:

Ստորև ներկայացնում ենք դպրոցի քաղաքացիական դաստիարակության ղեկավարման խորհրդի մեր կողմից առաջարկվող կառուցվածքը, խորհրդի անդամների գործառույթները և այդ գործառույթներին համապատասխան՝ քաղաքացիական դաստիարակության օրինակելի պլանը:

ԴՊՐՈՑԻ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԴԱՏՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՎԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Դպրոցի քաղաքացիական դաստիարակության խորհրդի անդամների գործառույթները

Հ/Հ	Անդամ	Գործառույթներ
1	Խորհրդի նախագահ՝ դպրոցի ուսումնադաստիարակչական գծով փոխտնօրեն	Համակարգում և կազմակերպում է խորհրդի անդամների աշխատանքը, աշակերտների ուսումնական, արտադասարանական ու արտադպրոցական, ընտանիքի ու համայնքի հետ աշխատանքները քաղաքացիական դաստիարակության ուղղությամբ:
2	Պատմաբան	Օգնում է առարկայական ուսուցիչներին հնտեգրված դասեր մշակելու և ցանկացած թեմայի դասավանդման ընթացքում քաղաքացիական բաղադրիչը հաշվառելու գործում: Կազմակերպում է քաղաքացիական դաստիարակությանը նպաստող բանավեճեր, դեբատներ, քննարկումներ, արտադասարանական միջոցառումներ: Օգնում է սովորողներին անցկացնելու «ընտրություն» խաղը և այլ ձեռնարկներ, որոնք կնպաստեն սովորողների տեսական գիտելիքները պրակտիկայում օգտագործելուն:
3	Հոգեբան	Օգնում է աշակերտներին հաղթահարել սոցիալական հարմարման խնդիրները, նպաստում է սովորողի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը, ակտիվ քաղաքացիական վարքագծի ձևավորմանը: Սովորեցնում է ուսուցիչներին և սովորողներին կոնֆլիկտները, ստրեսները և տարբերությունները հաղթահարել:
4	Ծնողական կոմիտեի	Աշխատանքներ են իրականացնում ծնողների շրջանում, նպաստում են դպրոց-

	ներկայացուցիչներ	ընտանիք կապի ամրապնդմանը աշակերտների քաղաքացիական դաստիարակության կազմակերպման և իրականացման հարցերում: Օգնում են դպրոցին հաստատելու կապեր արտադպրոցական հաստատությունների և համայնքի հետ: Օգնում են մանկավարժական կոլեկտիվին դպրոցում անվտանգ բարոյահոգեբանական մթնոլորտ ստեղծելու գործում:
5	Ծրագրավորող	Ստեղծում է տեղեկատվական պորտալ աշակերտների, ուսուցիչների, ծնողների և աշակերտների համար: Հավաքում է տեղեկատվական նյութեր ուսուցիչների, ծնողների, աշակերտների համար, կազմակերպում է մեդիակրթության պարապմունքներ՝ նպաստելով աշակերտների կողմից հավաստի աղբյուրներից, տեղեկատվական հուսալի նյութերից օգտվելու կարողության զարգացմանը:
6	Սոցիալական մանկավարժ	Նպաստում է աշակերտների քաղաքացիական դիրքորոշման ձևավորմանն ու զարգացմանը, իրականացնում է խորհրդատվական գործունեություն ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների, ծնողների շրջանում: Կապ է պահպանում համայնքի արտադպրոցական հաստատությունների (սպորտդպրոց, երաժշտական դպրոց, պալատ և այլն), անչափահասների մանկական սենյակների հետ:
7	Դասղեկներ	Պլանավորում և իրականացնում են քաղաքացիական դաստիարակության բնույթի միջոցառումներ, հետևում են երեխայի քաղաքացիական վարքագծի

		ձևավորմանն ու զարգացմանը: Օգնում և ուղղորդում են առարկայական ուսուցիչներին, ծնողներին: Դասղեկական ժամեր են նվիրում քաղաքացիական դաստիարակության հիմնախնդիրներին:
8	Աշակերտական խորհուրդ	Ներգրավում է բոլոր աշակերտներին քաղաքացիական աշխատանքներին, դպրոցի կրթական աստիճաններին համապատասխան կազմակերպում է դաստիարակչական աշխատանքներ, տարաբնույթ միջոցառումներ, տոներ, հանդիպումներ, մրցույթներ, խմբակներ, ցուցահանդեսներ, քարոզում է քաղաքացիական գաղափարներ, աշխատում է բոլոր աշակերտների համար հանրօգուտ գործ գտնել, յուրաքանչյուրին ընդգրկել աշակերտական ինքնավարության աշխատանքներին:
9	Գրադարանավար	Իրականացնում է լուսավորական, տեղեկատվական աշխատանք ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների և ծնողների շրջանում, կազմակերպում տարբեր հիմնախնդիրներին նվիրված գրական երաժշտական ցերեկույթներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ, դեբատներ, բանավեճեր և այլ միջոցառումներ, պատրաստում է քաղաքացիական դաստիարակության տարբեր բաղադրիչներին նվիրված տեղեկատվական փաթեթներ՝ ուսուցիչների, ծնողների և սովորողների համար:
10	Մեթոդ-միավորումների	Առարկայական ուսուցիչներին օգնում են իրենց դասավանդած առարկայի շրջանակում քաղ. դաստիարակության

	նախագահներ	ուղղությամբ ինտեգրված դասեր, միջոցառումներ, ակցիաներ կազմակերպել՝ սովորողների քաղաքացիական ինքնագիտակցությունը բարձրացնելու, նրանց մեջ իրավական մշակույթ ու օրինապաշտություն դաստիարակելու նպատակով:
11	Առարկայական ուսուցիչներ	Իրենց դասավանդած առարկայի շրջանակում կազմակերպում են ինտեգրված դասեր՝ սովորողների մեջ քաղաքացիական պարտքի , պատասխանատվության, արժանապատվության, ակտիվության հմտություններ ձևավորելու նպատակով:
12	Համայնքի ներկայացուցիչ	Համակարգում է դպրոցի և համայնքի համագործակցությանը նպաստող գործունեությունը , նպաստում է դպրոցընտանիք-համայնք կապի ամրապնդմանը, սովորողների ծայնը համայնքում լսելի դարձնելուն, և նրանց քաղաքացիական նախաձեռնությունների ու ակտիվության իրացմանը համայնքի զարգացման գործում:
13	Զինղեկ	Բացատրական և քարոզչական աշխատանք է տանում սովորողների շրջանում հայրենիքի պաշտպանության՝ որպես քաղաքացիական բարձրագույն դիրքորոշման ձևավորման նպատակով: Կազմակերպում է արտադասարանական միջոցառումներ, մրցույթներ, ըստ տարիքի ակումբներ՝ սովորողների հայրենասիրական-քաղաքացիական դաստիարակության, ուսուցման գործընթացում ստացած տեսական գիտելիքները պրակտիկայում օգտագործելու նպատակով:

14	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	Քարոզում և նպաստում է առողջ կենսակերպը, կազմակերպում է արտադասարանական միջոցառումներ երեխաների առողջությունը պահպանելու և զարգացնելու, նրանց ֆիզիկական և քաղաքացիական ակտիվությունը և նախաձեռնողականությունը խթանելու համար, օգնում է աշակերտությանը ինտեգրվելու համայնքի գործերում:
----	--------------------------------	--

Դպրոցի քաղաքացիական դաստիարակության օրինակելի պլան /ըստ խորհրդի անդամների գործառույթների/

Անդամ	Անհրաժեշտ գործողություններ
<i>Պատմաբան</i>	Քաղաքացիության ինստիտուտի կայացման վերաբերյալ դաս-շնորհանդես՝ «3000-ամյա քաղաքացի թեմայով»: Դասավանդվող բոլոր առարկաների ուղղությամբ մշակել քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության բաղադրիչով օրինակելի դասեր:
<i>Հոգեբան</i>	Բանավեճեր՝ «Իմ տեղը հասարակական գործընթացներում», «Հանդուրժողականությունը ամենաթողություն չէ», «Կոռուպցիան չարիք է» և այլ թեմաներով , զրույցներ՝ «Ներգրավվածություն՝ որոշումներ կայացնելու գործընթացին», «Կոնֆլիկտները լուծելու եղանակները» թեմաներով:
<i>Ծնողական կոմիտե</i>	Ընտանիք-դպրոց-տեղական ինքնակառավարման մարմին համագործակցային օղակի կայացման ուղղությամբ կազմակերպչական, տեղեկատվական աշխատանքների իրականացում: Դասղեկների, առարկայական ուսուցիչների հետ միասին ծնողների համար լուսավորչական

	աշխատանքների կազմակերպում:
<i>Ծրագրավորող</i>	Հասարակական գործընթացների մասին նյութերի կուտակում, ֆիլտրում և ներկայացում: «Ես և իմ դպրոցը» թեմայով պորտալի ստեղծում, որտեղ աշակերտը կիսվում է իր սպասելիքներով, մտահոգություններով, անելիքներով, աշակերտական խորհրդի կազմավորման ժամանակ քվեարկում է իր նախընտրած թեկնածուի օգտին և այլն:
<i>Սոցիալական մանկավարժ</i>	<ul style="list-style-type: none"> • Խորհրդատվական զրույց՝ «Իմ սահմանադրական իրավունքները և պարտականությունները» թեմայով, • Բանավեճ՝ «Ազատություն, իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն» թեմաներով, • Դասղեկների հետ միասին կազմակերպել մշտական գործող սեմինար՝ ծնողների իրավական, մանկավարժահոգեբանական, առողջագիտական գիտելիքները զարգացնելու նպատակով: • Աշակերտների, ծնողների և մանկավարժների շրջանում հարցաթերթիկային անկետավորման անցկացում՝ սովորողների քաղաքացիական ինքնագիտակցության, պարտքի, արժանապատվության, պատասխանատվության, օրինապաշտության, ակտիվության, սոցիալական դիրքորոշման, վարքագծի մակարդակի բացահայտման և գնահատման նպատակով:
<i>Դասղեկ</i>	Առարկայական ուսուցիչների հետ միասին կազմակերպել միջոցառումներ, էքսկուրսիաներ, աշխատանքային ակցիաներ դպրոցում և համայնքում՝ սովորողների քաղաքացիական ակտիվությունը խթանելու նպատակով: Դասղեկական որոշ ժամեր նվիրել սովորողների

	քաղաքական և իրավական մշակույթի ծնավորմանը:
<i>Աշակերտական խորհուրդ</i>	Դերային խաղ «Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն» թեմայով: Միջոցառումների շարք՝ սովորողների ռազմահայրենասիրական, քաղաքացիական դաստիարակության ուղղությամբ՝ նրանց քաղաքացիական ակտիվությունը խթանելու, դպրոցի և համայնքի ծրագրերում նրանց մասնակցությունը ապահովելու, իրենց կյանքին վերաբերող հարցերի լուծմանը նրանց մասնակից դարձնելու նպատակով:
<i>Գրադարանավար</i>	Կլոր սեղան՝ «Գիտելիք և իրավունք» խորագրով, ցերեկոյթներ՝ անկախության տոնի և հանրապետության օրվա առթիվ, գրական-երաժշտական ցերեկոյթներ, վիկտորինաներ, շարադրությունների մրցույթներ՝ նվիրված պետական խորհրդանիշերին, օլիմպիադաներ, տարբեր մասնագիտության տեր անվանի մարդկանց, դպրոցի ծնողների հետ հանդիպումներ՝ «Նրանց աշխատանքով է ուժեղ մեր հայրենիքը» թեմայով՝ սովորողների հայրենասիրական և քաղաքացիական դաստիարակության նպատակով:
<i>Ջինդեկ</i>	Հանդիպումներ սպաների, մարտական հերթապահության ընթացքում խիզախությամբ աչքի ընկած զինծառայողների հետ՝ «Ես եմ տերը և պաշտպանը իմ երկրի» թեմայով: «Դպրոցի լավագույն նշանառու», «Ապագա զինվոր», «Ռազմահայրենասիրական լավագույն երգ» միջդասարանական և այլ ուղղություններով մրցույթներ:
<i>Ֆիզկուլտուրայի</i>	«Իմ առողջությունը և պետության անվտանգությունը միահյուսված են» թեմայով

<p><i>ուսուցիչ</i></p>	<p>տեղեկատվական զրույցներ, բանավեճեր, հայտնի սպորտսմենների հետ հանդիպումներ, «Պատրաստ եմ հայրենիքիս ծառայելու» թեմայով մրցույթ-ստուգատեսներ:</p>
------------------------	--

Այսպիսով կարծում ենք, որ «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացում անհրաժեշտ է լայնորեն օգտագործել համագործակցային, փոխազդեցության, երկխոսությունային, ինքնաճանաչման, ինքնագնահատման մեթոդները, որոնք կնպաստեն քաղաքացիական ինքնագիտակցության և արժանապատվության, իրավական և քաղաքական մշակույթների, քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության ձևավորմանը և ընտրություն կատարելու, որոշում կայացնելու, համապատասխան վարք դրսևորելու դպրոցականի հմտությունների ձևավորմանը: Միևնույն ժամանակ պարտադրված պատերազմի մեջ գտնվող մեզ նման երկրում նպատակահարմար է քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակությունը միահյուսել, քանզի մեզանում յուրաքանչյուր քաղաքացի պետք է հայրենասեր լինի և ցանկացած իրավիճակում պատրաստ լինի պաշտպանել հայրենիքը: Հենց այս սկզբունքով էլ պետք է կառուցվի քաղաքացիական դաստիարակության գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Ա., Խաչատրյան Ա., Հասարակագիտություն. 8-րդ դասարանի դասագիրք, Եր.: Տիգրան Մեծ, 2013, 160 էջ:
2. Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Հասարակագիտություն: 9-րդ դաս. Դասագիրք, Եր.: Տիգրան Մեծ, 2014, 176 էջ:
3. Պետրոսյան Ա., Խաչատրյան Ա., Խաչատրյան Հ. և այլք, Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր.: Տիգրան Մեծ, 2009, 240+8 էջ ներդիր:
4. Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Գյուլբուդաղյան Ա, Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի համար, Եր., Տիգրան Մեծ, 2015, 264 էջ:
5. Պետրոսյան Ա., Խաչատրյան Ա., Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական ավագ դպրոցի 12-րդ դասարանի համար, Եր.: Տիգրան Մեծ, 2011, 144+8 էջ ներդիր:

АИДА ТОПУЗЯН, ГЕВОРГ ПИЛАВДЖЯН - СОВРЕМЕННАЯ СИСТЕМА ШКОЛЬНОГО ГРАЖДАНСКОГО ОБРАЗОВАНИЯ

Проанализировав содержание школьного предмета «Гражданское образование», авторы утверждают, что упражнения и другие задания, интегрированные в учебный план, не обеспечивают непрерывности гражданского образования. Современные методологические основы гражданского воспитания - системный/культурологический, самоопределяющий /антропологический, практический и педагогический подходы, должны быть приняты во внимание при разработке новой предметной программы с целью формирования модели нового гражданина, который оснащен достаточными навыками и компетенциями, которые необходимы для его полноценного участия в жизни общества.

Авторы определяют роль всех участников гражданского образования - учителей, родителей, библиотекарей и т. д., а также определяют те роли, которые они должны выполнять, чтобы способствовать формированию общей структуры необходимых навыков и компетенций, которые требуются гражданам для их успешной интеграции в разнообразных видах деятельности современного общества.

AIDA TOPUZYAN, GEVORG PILAVJYAN - THE CONTEMPORARY SYSTEM OF SCHOOL CIVIC EDUCATION

Having analyzed the content of the school subject “Civic Education” the authors states that the exercises and other activities integrated in the syllabus, do not ensure the continuity of civic education. The contemporary methodological bases of civic education - systemic /culturological, self-identifying /anthropological, and practical pedagogical approaches should be taken into account while developing a new subject programme so as to shape the model of a new citizen which will equip him with sufficient skills and competences which are necessary to be fully engaged in the society and benefit from them.

The authors specifies the role of all the shapers of civic education - teachers, parents, librarians, and so on and identifies the activities they need to perform in order to contribute to the development of the overall framework of the necessary skills and competences which are required to educate successful citizens integrated in the versatile variety of the activities of the contemporary society.

КОННОТАЦИЯ И КОНВЕНЦИОНАЛЬНАЯ ИМПЛИКАТУРА

ТАГУИ ХОДЖАЯН

Ключевые слова: прагматика, семантика, конвенциональная импликатура, коннотация.

В данной статье предпринимается попытка выявить общности и различия между семантикой и прагматикой при определении коннотативного значения.

Импликатура в прагматике

Прагматика изучает функционирование языковых знаков в речи в аспекте отношения «знак -пользователь знака», что актуально как для конвенциональных импликатур, так и для коннотации, поскольку оба однозначно относятся к области изучения прагматики.

Г. П. Грайс первым ввел в научный обиход понятие «импликатура». Грайс считает, что значение является одним из условий употребления слова и приобретает свое полное смысловое выражение лишь вместе с другими контекстно обусловленными факторами, такими как ситуативное знание, знание о мире и знание языковых образцов употребления. Все эти факторы учитываются человеком, использующим язык и воспринимаются как возможные варианты значения. Они не заданы изначально, а путем логических умозаключений формируются в процессе восприятия. Данные в каком-либо высказывании, как для говорящего, так и для слушающего являются предпосылкой для запуска когнитивного процесса, который ведет к выявлению значения высказывания, соответственно значения его отдельных единиц. Понимание высказывания состоит в практических умозаключениях, которые способствуют интерпретации высказывания и помогают понять, с какой целью и намерением было использовано высказывание. Словарное значение слова в высказывании говорит нам, как было использовано данное выражение, а не для чего оно использовалось. Оно не дает нам информацию о том, чего хочет добиться говорящий, что он имеет в виду.

Лишь если коммуникативные партнеры обладают знанием конвенциональных значений слова, а также ситуативным и фоновым знанием, они могут делать умозаключения (это по Грайсу принцип кооперации) [Grice 1975].

Грайс различает конвенциональное и имплицитное значение высказываний. Для того чтобы выявить имплицитный смысл, слушающий должен прибегнуть к выяснению конвенционального значения использованных слов, Грайсовских максимов, языкового и другого контекста высказывания, широких фоновых знаний, а также предполагать, что знание всех этих факторов является общим знанием участников коммуникации [Grice 1979:254]. Импликатурой Грайс обозначает то, что неявно выражается. Он выделяет два вида имплицатур: коммуникативные и конвенциональные.

Коммуникативные имплицатуры выводятся на основе прагматических постулатов речевого общения, это вывод, осуществляемый на основе ситуативных аспектов высказывания. При коммуникативных имплицатурах адресат имеет возможность извлечь смысл из изменчивого ситуативного контекста, интенций адресанта, его целей и предпочтений.

Для конвенциональной имплицатуры не нужна аргументация, она понимается интуитивно и без обращения к конверсионным максимам Грайса. Исходным пунктом для умозаключения является конвенциональное значение высказывания, однако единственной предпосылкой для того, чтобы из него вытянуть конвенциональную имплицатуру является знание о вызывающей имплицатуру конвенции употребления слова (не ситуативный контекст высказывания или другое фоновое знание). Имплицатура возникает использованными словами, а не высказываниями. Носителем имплицатуры является, таким образом, необычное использование слов.

Конвенциональные имплицатуры связаны не с условиями истинности информации, а языковым значением высказывания и зависят от фонологических, лексических, синтаксических единиц предложения, то есть от значения содержащихся в нем слов или форм. При конвенциональной имплицатуре в процессе восприятия и умозаключений формируется “семантический вывод, который делается на основе лингвистических характеристик высказывания, т.е. на основе значений слов, синтаксических конструкций и общих знаний о мире”

[Одинцова 2016:93]. Конвенциональные умозаключения не являются при этом логическими заключениями, как например, семантическими импликациями, которые могут выводиться из значения предложения, также независимо от контекста высказывания и установления референта. Словесное использование конвенций, которые вызывают конвенциональные импликатуры, могут быть применены только в контексте высказывания, как например:

Jan hat etwas getrunken

→ *etwas Alkoholisches*

Даже если импликатура здесь возникает автоматически и ассоциируется со словом *etwas* конвенционально раскрываемые импликатуры не являются просто ассоциациями к соответствующим словам и и тем более частью их лексического значения, а частью значения высказывания, выявляемого языковым контекстом использования слова. [Topczewska 2012: 124].

То что Грайс понимает под конвенциональными импликатурами М. Л. Макаров называет формально-логическими инференциями [Макаров 2003], а Ф. Кифер [Кифер 1978] и И.М. Кобозева [Кобозева 2000:231] семантическими пресуппозициями.

Учитывая то, что под конвенциональной импликатурой в процессе восприятия фонологических, лексических, синтаксических единиц предложения формируется *семантический* вывод некоторые авторы пытаются приравнять ее к коннотации.

Коннотация и когнитивная лингвистика

При рассмотрении семантики с точки зрения когнитивной лингвистики центральным является предположение, что знание хранится в виде ментальных единиц, представляющих собой закрепленные в когнитивной системе информационные “состояния”, которые отражают выхваченные из окружающей среды состояния. Они закреплены в долговременной памяти и имеют такие возможности как, например, категоризация, понимание языка, решение проблем (Schwarz-Friesel, 2004:84).

При когнитивном подходе язык рассматривается как когнитивный феномен, не исключая социальную составляющую. Соответственно при таком подходе происходит сближение когнитивного и коммуникативного подходов к рассмотрению языка [Turner 2001].

При рассмотрении проблемы коннотации в лингвистике можно выделить широкое и узкое понимание коннотации. При узком понимании коннотативное значение употребляется как синоним стилистического значения, как "имплицитно-сопутствующий образ".

При широком понимании коннотации в неё включается любая вторичная информация, в том числе энциклопедическое знание, знание о мире, культурная, социальная информация и др. Воздействуя на язык, культурные и социальные переменные способствуют возникновению концептуализации когнитивного мира. Концептуальное знание о мире, закрепленное в виде фреймов и скриптов в долговременной памяти, помогает реципиенту устранить в тексте недоговоренность, неопределенность, многозначность [Schwarz-Friesel 2004:85].

При рассмотрении коннотации мы исходим из широкого понимания коннотации. К сфере коннотации мы относим периферийные компоненты семантической структуры слова, придающие ему, взятому изолированно или в контексте, семантическую завершенность.

К компонентам коннотации мы относим эмотивность, оценочность, а также экспрессивность, понимаемую нами как усиление значения, как компонент, нацеленный на преодоление стандарта, шаблона, приводящий к отклонению от нормы. К компонентам коннотации мы относим и образность, связанную с экспрессивностью тем, что образное употребление слова приводит к возникновению экспрессии, усиливает его значение. Очень важно, что слово, связанное со зрительным образом, производит над ним важную операцию – освобождает от частностей, от мелких второстепенных подробностей.

Общности и различия конвенциональных импликатур и коннотаций

Некоторыми лингвистами коннотации описываются как семантические абстракции из конвенциональных импликатур, т.е. как формулировки конвенций, которые лежат в основе импликатур, которые уже лексикализированы [Topczewska 2012:124]. Topczewska выражает сомнение в лингвистическом статусе коннотации, аргументируя тем, что с

одной стороны коннотации возникают “*per conventionem*”, с другой стороны применение данных конвенций в более значительной степени чем при лексических и грамматических значениях обусловлено контекстом [Topczewska 2012:10]. Она считает, что конвенциональные импликатуры могут в полной мере охватить коннотации во всем их разнообразии.

Общности между конвенциональной импликатурой и коннотацией состоят в том, что имеются виды коннотаций, которые так же как конвенциональная импликатура выводятся путем умозаключений, например,

- в стереотипах - “Блондинка- значит глупая”:
 - Bin *blond* - bitte sprechen sie langsam!
 - Auf was warten *Blondinen* vor dem Kino? Auf 16 andere, da der Film erst ab 18 ist.
 - Warum machen *Blondinen* ihren Joghurt schon im Supermarkt auf? Weil darauf steht: ""Hier öffnen!""
 - Warum muss man Briefe an *Blondinen* langsam schreiben? - Weil sie nicht so schnell lesen können.(sms-sprueche.und-handy.de).
- в абстрактных существительных, например:
 - *Das Leben quietscht*, wenn es nicht geschmiert wird... (Strittmatter)

В сочетании *das Leben quietscht* (*quietschen* означает *quieken* – пищать, визжать, как свинья, поросенок), оценка отрицательная, поскольку мысль в соответствии с заданной программой (недовольство жизнью) отбирает из ментального пространства концепты с отрицательной оценкой. При этом в связи с временным недостатком информации возникает эмоциональное состояние, которое затем закрепляется в найденном концепте с отрицательной оценкой - ср.: русское выражение «визжать как недорезанный поросенок», нем. *wie ein schlecht gestochenes Schwein quieken*. Глагол в этих выражениях в русском и немецком языках указывает на (неприятный для человека) акустический эффект от действия, однако эти выражения содержат и оценку в значении приставки определения «недорезанный» в русском и оценочного слова *schlecht* в немецком, которые указывают на то, что «какое-то дело плохо сделано». Именно дополнительное значение выражения *wie ein schlecht gestochenes Schwein quieken*, имеющееся в концепте-сценарии «закалывание животного /свиньи/» в виде элементов

«визжать от боли, мучиться», легло в основу семы «плохо сработано, плохо проходить (о каком-либо процессе)» в слове *Leben*, т.е. коннотативного значения абстрактного существительного *Leben* в приведенном контексте. Это коннотативное значение лексической единицы *Leben* выводится путем умозаключений и его подтверждает также наличие ассоциируемых со словом «жизнь» таких определений как «трудная, нелегкая, плохая, тяжело, страдать» [Леонтьев 1977:97-98], которые обозначают восприятие лексемы «жизнь» русскими, однако в большей или меньшей степени могут отражать и восприятие слова *Leben* и немцами.

- в прозвищах. В качестве примера можно привести следующий контекст:

- Die Bande horcht auf, sieht zum Misikautomaten: der Boß, Mario Adolf, ist da. Ein schwächtiger Junge, der *Professor* genannt wird, weil er stark kurzsichtig ist und eine dicke, runde Brille trägt, möchte Mitglied der Bande werden. (G. Wolfgruber)

Образность прозвища *der Professor* создается в процессе прозвищеобразования, т.е. основой прозвища является значение «человек, обладающий теми или иными качествами», в данном случае текст дает разъяснение по поводу этого прозвища: *weil er stark kurzsichtig ist und eine dicke, runde Brille trägt*. Читатель воссоздает имеющийся у него обобщенный образ профессора и путем умозаключения приходит к тому, что такой человек скорее всего физически слаб, поскольку углублен в приобретение и накопление знаний, проводит много времени за чтением в библиотеке, а не в спортивном зале. Отсюда и возникает дополнительное значение этого прозвища - «физически слабый».

Имеются и другие виды коннотаций, которые в большей или меньшей мере выводятся путем умозаключений. Однако на основании этого пытаться приравнивать явление коннотации и конвенциональной импликации не представляется правильным, поскольку имеются виды коннотаций, которые не выводятся путем умозаключений, например, цветоассоциативный подвид психологических коннотаций [Ходжаян 2004:45-50]. Цветопсихология располагает данными, которые свидетельствуют о том, как определённый цвет воздействует на человека и какие ассоциации при этом возникают. Не зная законов

цветопсихологии, человек, видя или, благодаря эмоциональной памяти, представляя себе какой-либо цвет, чувствует и воспринимает воздействие этого цвета, и цветообозначение наряду с его основным значением (цвет), подсознательно приобретает дополнительное значение, Например:

- Es wäre keine Kunst, sagte sie, ein U an die Tafel zu schreiben, ein J oder ein *weißes* O. (A. Wellm)

Психологическими экспериментами доказано, что белый цвет визуально вызывает впечатление пустоты [Фрилинг/Ауэр 1973:42]. Это подтверждается следующими контекстами:

- /Anita/, ..., die den Weg wies und erklärend, beruhigend, drohend redete, durch menschenleere *weiße* Straßen ... (G. de Bruyn)

Не выводятся путем логических умозаключений и коннотативные значения некоторых глаголов с приставками, которые могут иметь коннотативные значения, например, они могут быть коннотативно-усилительными. В отличие от денотативно-усилительных приставок, которые выражают чрезмерную интенсивность самого действия (например, приставка *über-* в глаголе *sich überanstrengen*), коннотативно-усилительные приставки выражают эмоциональное отношение говорящего к этому действию и являются носителями эмотивного компонента коннотации. Сравним следующие дисфемизмы: *fabeln* - сочинять, фантазировать, нести вздор и *zusammenfabeln* - (пренебр.) придумывать, сочинять, фантазировать; *leiern* - (бубнить монотонно, без выражения) и *vorleiern* - (пренебр.) пережевывать, читать, говорить, декламировать; *flicken* - латать, чинить, штопать и *zusammenflicken* - (пренебр.) компилировать, состряпать [Ходжаян 2014:213].

Конвенциональная импликатура и коннотация являются разными лингвистическими понятиями, еще и потому что коннотация включает в себя такие компоненты как эмотивность, образность и др., о которых не идет речь в конвенциональной импликатуре. Кроме того при коннотации обращается особое внимание на конструирование значения, при котором учитывается как информация, полученная из текста, так и концептуальная информация из долговременной памяти в виде ментальных моделей, являющихся когнитивными структурами, которые представляют как концепты, так и связи между концептами [Ходжаян 2004:151-165].

Поскольку конвенциональная импликатура как и семантика в когнитивной лингвистике рассматривает как социальную, так и культурную составляющие, соответственно при таком подходе происходит сближение когнитивного и коммуникативного подходов к рассмотрению языка [Turner 2001] и может возникнуть впечатление, что конвенциональная импликатура может поглотить коннотацию. Однако при коннотации как семантическом явлении речь идет кроме того о процессах, которые связаны с концептами, когда конструируются индуцированные словом или контекстом связи. Это признаки концептуального уровня, которые используются реципиентом для того, чтобы расширить семантическую структуру слова или предложения. Семантический анализ коннотации позволяет выявить глубинные причины возникновения коннотативного значения, начиная с концепта, через внутреннее слово (слово₁) к внешнему слову (слово₂). (ср. личностные смыслы – внутреннее слово /слово₁/ – системные значения – внешнее слово /слово₂/) [Кубрякова 1986:61-62], например при анализе коннотативного значения абстрактных существительных [см.:Ходжаян 2014:151-168]. Подменяя коннотации конвенциональными импликациями мы лишаемся возможности анализировать семантику коннотативного значения, начиная с концепта, что в итоге лишает нас возможности более глубокого анализа коннотативного значения.

Рассматривая коннотацию как конвенциональную импликатуру Torczewska приводит в пример слово *billig*, но при анализе она оперирует семами:

- *Das war aber ein billiges Argument*
 - *Der Film bietet nur billige Witzeleien*
- billig* → „geistlos“, „primitiv“ [Torczewska 2012:181]

На вопрос, откуда появились семы „geistlos“, „primitiv“, она отвечает, что это конвенция, а на основе чего появилась эта конвенция? Если при цветообозначениях *rot*, *grün* как цвета светофора и переосмысленные как “запрет” и “разрешение” конвенция явно просматривается, то конвенциональная связь между *billig* как „geistlos“, „primitiv“ совсем не очевидна.

На связь между *billig* и „geistlos“, „primitiv“ отвечает когнитивная лингвистика, основываясь на глубинных причинах возникновения коннотативного значения, начиная с концепта. Конвенция не появляется ни из чего, она всегда основана на чем-то, в данном случае на концепте,

имеющемся в подсознании человека. Коннотации и конвенциональные импликатуры нельзя идентифицировать и подменять одно другим. Коннотация предполагает наличие таких компонентов коннотации как эмотивность, оценочность, образность, экспрессивность. Например, при употреблении цветообозначений *grün* и *rot* в прямом значении мы имеем конвенциональную импликацию, основанную на общественном договоре:

- ... er kann wieder denken, um ihn ist die Stadt, dort die Verkehrsampel, die ihm mit *Grün* anzeigt, daß er weiterfahren darf. (G.Preuss)
- Die Ampel wurde *grün*. Wir fahren weiter. (J. Laabs)
- Und als er *rote* und *grüne* Lichter sah, begriff er, daß man bei Rot warten muß und bei Grün gehen darf. Und er wartete bei *Rot* und ging bei *Grün*. (P. Bichsel)

При переносном значении же имеется коннотативное значение, но не конвенциональную импликацию, поскольку тут задействованы такие компоненты коннотации как эмотивность, оценочность и экспрессивность, которые отсутствуют в вышеприведенных примерах:

- Dann brauch ich nur noch eins: *grünes* Licht für alle Untaten.(H. Otto)

В качестве конвенциональных импликатур и коннотаций можно рассматривать все коннотации пресуппозитивного типа, в том числе и темпоральные коннотации, которые являются частным видом пресуппозитивного типа коннотаций [Ходжаян 2004:60-61] и связаны с ходом времени и имплицитно развертывающейся цепью умозаключений, нацеленных на установление соответствующих контексту дополнительных значений, например, связанные с течением времени коннотации цветообозначения, указывающие на возраст человека, на смену времен года:

- Alte Frauen mit *grauem* Haar und harten rissigen Händen ... (Borchert)
- Und während des Wartens auf das Essen hatte einer der sonst noch anwesenden Gäste ein kleiner alter Mann in

- bäuerlicher Kleidung mit kutzgeschnittenen *weißen* Haaren ... zu sprechen begonnen ... (E.Y.Meyer)
- Doch heute sehe ich plötzlich, daß der Apfelbaum *gelbe* und *rötliche* Blätter trägt inmitten der anderen Bäume, Birne und Kirsche, deren Blätter noch von einem bräunlichen Grün sind. (H. Czechowski)

Преимущество рассмотрения коннотативного значения с позиций семантики по сравнению с конвенциональными импликатурами при прагматическом анализе состоит еще и в том, что можно охватить этим анализом более широкий круг дополнительных значений, например, также индивидуальные и окказиональные коннотации, которые не поддаются прагматическому анализу. [ср.: Topczewska 2012:187 и Ходжаян 2013:121-142]

Таким образом, имея с коннотациями некоторые общие черты, конвенциональные импликатуры не могут заменить, “поглотить” их, поскольку они слишком поверхностно описывают значение лексических единиц и контекста, не проникая в их глубинную суть.

ЛИТЕРАТУРА

1. Grice, H.P. 1975. Logic and Conversation. In: P.Colt и J.L.Morgan (Hgg.). Syntax and Semantics Bd.3, Speech Acts. New York et al., Academic Press.
2. Grice, H.P.. 1979. Logik und Konversation. In: Meggle (Hg.). Handlung, Kommunikation, Bedeutung. Frankfurt a.M., Suhrkamp.
3. Schwarz-Friesel, M. 2004. Kognitive Linguistik heute - Metavernverstehen als Fallbeispiel. Zeitschrift „Deutsch als Fremdsprache“. 41Jg., 2.Quartal, Heft 2, 83-89.
4. Topczewska, U. 2012. Konnotationen oder konventionelle Implikaturen? Frankfurt a.M., Peter Lang.
5. Turner, M. 2001. Cognitive Dimensions of Social Sciences. Oxford.
6. Грайс, Г.П. 1985. Логика и речевое общение. Новое в зарубежной лингвистике. Лингвистическая прагматика. Москва: общ. ред. Е.В. Падучевой, Москва, «Прогресс», 217-238.
7. Кифер, Ф. 1978. О пресуппозициях. Новое в зарубежной лингвистике. Москва, вып.8, 337-370.

- 8.Кобозева И. М. 2000. Лингвистическая семантика: учеб. пособие. Москва, УРСС.
- 9.Кубрякова, Е.С. 1986. Номинативный аспект речевой деятельности. Москва, «Наука».
- 10.Леонтьев, А.А. 1977. Словарь ассоциативных слов русского языка. Москва, изд-во Моск. ун-та.
- 11.Макаров, М.Л. 2003. Основы теории дискурса. Москва, ИТДГК «Гнозис».
- 12.Одинцова, И.В. 2016. Импликация и интерференция в лингводидактике. #4. В сб.: «Мир русского слова», С.-Петербург, **HYPERLINK "<http://mirs.ropryal.ru/ru/archive/>"** РОПРЯЛ .
- 13.Фрилинг Г., Ауэр К. М., 1973. Человек-цвет-пространство: Прикладная цветопсихология. Москва, «Стройиздат».
- 14.Ходжаян, Т. 2004. Коннотативное значение прилагательных-цветообозначений немецкого языка. Ереван, «Лингва».
15. Ходжаян, Т. 2013. Коннотативные значения лексических единиц немецкого языка. Ереван, «Лингва».

ԹԱԳՈՒՑԻ ԽՈՋԱՅԱՆ - ՀԱՎԵԼԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԻՄՊԼԻԿԱՏՈՒՐԱՆ

Հոդվածում միտված է բացահայտելու իմաստաբանության և գործաբանության միջև եղած ընդհանրությունները և տարբերությունները հավելիմաստային նշանակության սահմանման շրջանակներում: Ընդ որում հիմնավորվում է այն կարծիքը, որ պայմանական իմպլիկատուրաները ունենալով հավելիմաստության հետ որոշ ընդհանուր հատկանիշներ չեն կարող փոխարինել, “կլանել” դա, քանի որ չափազանց մակերեսորեն են նկարագրում լեքսիկական միավորների և համատեքստի նշանակությունը՝ դրանց խորը էության մեջ չներթափանցելով:

TAGUHI KHOJAYAN - CONNOTATION AND CONVENTIONAL IMPLICATURE

The article makes an attempt to reveal differences and similarities between semantics and pragmatics while determining the connotive meaning. At the same time an opinion is proved that conventional implicatures, having some common features with connotations, can't replace, "absorb" them as they describe value of lexical units and a context too superficially, without getting into their deep essence.

**ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱԶՈՂ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՒՐԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՂԻԿՅԱՆ**

Հիմնաբառեր՝ թարգմանություն, համապատասխան թարգմանություն, համարժեքություն, թարգմանության որակի գնահատում, կարգադրական մոտեցումներ, նկարագրական մոտեցումներ, թարգմանության գործընթաց, ձևային համարժեքություն, գործառական համարժեքություն, թարգմանական արժեք:

Թարգմանության հաջող կամ համապատասխան լինելը, որն ընդհանուր առմամբ կարելի է պայմանավորել հաղորդակցական գործառույթի պատշաճ իրականացմամբ, ուշադրության կենտրոնում է եղել թարգմանության որակի գործընթացի և միջլեզվական փոխադրման արդյունքի մասին դատողությունների տեսականացման ամենավաղ շրջանից սկսած և այսօր էլ, իր տեսական զարգացման պատմության ընթացքում ենթարկվելով տարակերպ եզրույթավորման (translation adequacy, translation quality, translation equivalence, correct or appropriate translation), ենթարկվել է մեծածավալ և միջգիտակարգային ուսումնասիրությունների և շարունակում է մնալ թարգմանության գրեթե բոլոր տեսությունների ուշադրության կենտրոնում (Տե՛ս Pinchuk 1968; Reiss 1976; Machulskaya 2015, Frank 1976; Denkowski 2010, Федеров 2002, Виноградов 2001, Սողիկյան և Շահբազյան 2015, Գասպարյան 2008, Գարրիելյան 2014, Զաքարյան 2014 և այլք):

Ցիցերոնից և Հիերոնիմոսից սկսած՝ թարգմանությունը դիտարկվել է բառ-առ-բառ (word-for-word) կամ բառացի թարգմանություն և իմաստային (sense-for-sense) կամ «ազատ» թարգմանություն հակադրության շրջանակներում: Նախապատվությունը տալով իմաստային թարգմանությանը՝ անտիկ շրջանի մտածողները նշում էին, որ «թարգմանության գործում աղբյուր տեքստի լեզվական արտահայտմանը խստագույնս հարելը հանգեցնում է անհեթեթ թարգմանության, որը խեղաթյուրում է բնագրի արտահայտած իմաստը» (տե՛ս Munday 2012: 31): Վերոնշյալ տարբերակումն առաջին հայացքից կարող է տարրական և միանշանակ թվալ, սակայն սրանով ուշադրության

են արժանանում իմաստի և վերջինիս լեզվական արտահայտման յուրահատկությունները: Ըստ էության, թարգմանության, հետազայում նաև թարգմանական համարժեքության դիտարկման գործում հատուկ ուշադրության է արժանանում լեզվի բովանդակության և արտահայտության տիրույթների (plain of content and plain of expression) միջև գոյություն ունեցող բարդ փոխհարաբերությունը (Barkhudarov 1973), և թարգմանության վերլուծության առանցք է դառնում այն կենտրոնական գաղափարը, որ ցանկացած միտք երկու տարբեր լեզուներում կարող է ստանալ տարբեր լեզվական արտահայտում: Այս առանցքային դիտարկումը հիմք է դառնում թարգմանության տեսության հետագա զարգացման համար՝ ուղղորդելով այն շուրջ երկու հազարամյակ: Ինչպես մեկնաբանում է Բասնետը՝ թարգմանության տեսության զարգացման ընթացքում բառացի և ազատ թարգմանությունների այս հակադրությունը «շարունակաբար երևան է գալիս՝ ստանալով զանազան շեշտադրում՝ կախված նրանից, թե լեզվի և հաղորդակցության ինչ գաղափարի շուրջ է այն քննվում» (Bassnett 2002: 50):

Ուշ միջնադարում արդեն թարգմանությունը ստանում է ավելի համակարգված մոտեցում՝ «գիտակցված, հիմնավոր պնդումներով՝ ճշգրիտ նպատակի և իմաստի մեջ» (տե՛ս Munday 2012: 41): Այս միտմամբ, որոշ թարգմանաբաններ, մասնավորապես՝ Դրայդենը, Դոլեն և Թայթերը իրենց աշխատություններում հանդես են գալիս թարգմանության խիստ կարգադրական (prescriptive (տե՛ս Munday 2012, Pym 2016, House 2015)) մոտեցմամբ՝ առաջադրելով չափանիշ-դրույթներ, որոնց թարգմանիչը պետք է հետևի՝ հաջող թարգմանություն ստանալու համար: Դոլեն, օրինակ, առանձնացնում է հինգ սկզբունք՝ դասակարգված ըստ կարևորության՝

1. Թարգմանիչը պետք է կատարելապես ըմբռնի բնագրի հեղինակի կողմից արտահայտված միտքն ու բովանդակությունը, սակայն նա իրավունք ունի հստակեցնել անորոշությունները,
2. Թարգմանիչը պետք է կատարելապես տիրապետի թե՛ աղբյուր, թե՛ թիրախ լեզուներին, որպեսզի չկտրի լեզվի վեհությունը,
3. Թարգմանիչը պետք է խուսափի բառացի թարգմանություններից,
4. Թարգմանիչը պետք է խուսափի լատինակերպ և օտար լեզվական միջոցներից,
5. Թարգմանիչը պետք է վարպետորեն կապակցի բառերը՝ անսովոր հնչողությունից խուսափելու համար (տե՛ս Munday 2008: 27):

Կանոնների ավելի ընդհանրական դասակարգում է առաջադրում Թայթերը՝

1. Թարգմանիչը պետք է ապահովի բնագրում առկա գաղափարների ամբողջական արձանագրությունը,
2. Գրելաձևն ու գրելաոճը պետք է համապատասխանեն բնագրային գրելաձևին և ոճին,
3. Թարգմանությունը պետք է պահպանի բնագրի անբռնագրությունը (տե՛ս Munday 2008: 27):

Հաջող թարգմանության հասնելու համար թարգմանության վերոնշյալ բիհևիորիստական մոտեցման առաջադրած չափանիշները Հաուզը համարում է «սուբյեկտիվ, ներգայական և զավեշտային դատողություններ՝ տրված ոչ մասնագետների կողմից, ովքեր փորձում են մեկանաբանել, թե որքան լավը կամ վատն է թարգմանությունը» (House 2015: 8): Վերոնշյալ չափանիշներն, ըստ էության, մշակվել են ոչ միայն ուղղորդելու թարգմանչին հաջող թարգմանության հասնելու գործում, այլ փոխադարձաբար գործածվել են նաև որպես հստակ չափորոշիչներ, որոնցով կարելի է գնահատել կատարված թարգմանության որակը: Սակայն, ինչպես իրավամբ նշում է հենց ինքը՝ Հաուզը, սույն որակումները հիմնված են զուտ անհատական տպավորության և զգացմունքների վրա և հանգեցնում են թարգմանությունների չհիմնավորված, սուբյեկտիվ և վերացական մեկնաբանման, օր .՝ «Թարգմանությունը չի հաղորդում բնագրի շունչը» կամ «Բնագրի տոնը կարծես թե չի պահպանվել թարգմանության մեջ» և այլն (House 2015: 9, 2001: 244):

Թարգմանության նմանօրինակ ընդհանրական գնահատումը, որը հիմնված է թարգմանությունը բնութագրողի անձնական փորձառության և ըմբռնողականության վրա, գնահատողական արժեք կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ այն հիմնավորվում է թարգմանված տեքստի իմաստային և լեզվական արտահայտման տիրույթների օբյեկտիվ դիտարկմամբ: Թարգմանվածքի հաջողվածության վերաբերյալ նմանատիպ ընդհանուր եզրահանգումը կարող է միայն հիմնավորվել վերջինիս՝ որպես տեքստ ընդհանուր ազդեցության գնահատմամբ միայն: Կախված նրանից, թե ընթերցողն ինչպես է ընկալում աղբյուր տեքստը և թարգմանվածքը, ինչ տպավորություն կամ ազդեցություն են դրանք թողնում նրա վրա, նա «հավանում» է թարգմանությունը կամ ոչ, ձևավորվում է որոշակի սուբյեկտիվ գնահատական, որն, ի դեպ, տարբեր մարդկանց դեպքում կարող է խիստ տարբեր լինել: Կարևոր է շեշտել, որ

թարգմանության գործընթացում միջլեզվական փոխադրման ենթարկվում է ոչ թե տեքստը՝ որպես մեկ ամբողջություն, այլ նրա բաղկացուցիչ միավորները՝ նախադասությունները, բառակապակցությունները, բառերը և այլն: Այդ իսկ պատճառով թարգմանվածքի՝ որպես թարգմանված տեքստի որակն ու հաջողվածությունն ուղղակիորեն կապված են դրա բաղկացուցիչ միավորների թարգմանության որակյալ կամ հաջող լինելու հետ: Իսկ սա ենթադրում է նման լեզվական միավորների թարգմանության օբյեկտիվ վերլուծություն, ինչին վերոնշյալ կարգադրական (prescriptive) մոտեցումները, փաստորեն, ուշադրություն չեն դարձնում:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ չնայած թարգմանության տեսության հետագա համակարգմանն ու մեթոդաբանական հստակեցմանը, նմանատիպ սուբյեկտիվ և ոչ պարզորոշ գնահատումներն ավելի ուշ վերածնունդ են ապրում արդեն թարգմանության նեոհերմենևտիկ մոտեցումներում, որոնց հարող տեսաբանները էապես կարևորում են «թարգմանության արժեքի սուբյեկտիվ մեկնաբանման արդարացիությունը» (House 2015: 9):

Թարգմանության տեսությունների ընդհանուր դիտարկումից պարզ է դառնում նաև, որ թարգմանության ոչ մի տեսություն, անգամ Թուրիի կողմից առաջադրված՝ թարգմանության նկատմամբ նկարագրական (descriptive) մոտեցումը, իրականում լիովին զերծ չի մնում կարգադրականությունից (prescriptivism): Եվ ինչպես նշում է Փիմը, «եթե հիմնանպատակը միայն նկարագրությունը լիներ, որևէ խոշոր տեսության կարիք չէր էլ լինի» (Pym 2012, Liu 2014):

Քսաներոդո դարի երկրորդ կեսին, երբ թարգմանաբանությունը սկսում է հաստատվել որպես հստակ հետազոտական ուղղություն, թարգմանությունը և դրա որակի, համարժեքության և պատշաճության գաղափարները արժանանում են ավելի խորը տեսականացման: Բառացի և ազատ թարգմանության միջև գոյություն ունեցող երկարատև «հակամարտությունից» հետո այս ժամանակահատվածն աչքի է ընկնում այնպիսի տեսություններով, որոնց տեսական հիմքը դառնում է համարժեքության գաղափարը:


Թարգմանության սոսկ լեզվաբանական հայեցակերպի խորը դիտարկում է ներկայացնում Յակոբսոնը, որը, հենվելով իմաստի և վերջինիս նշանային արտահայտման հարաբերակցության Սոսյուրի առաջադրած մեխանիզմի վրա, նախ նկատում է, որ երկու լեզվական կոդերի միջև, որպես կանոն, կատարյալ համարժեքություն գոյություն չի

կարող ունենալ այն պատճառով, որ յուրաքանչյուր լեզու յուրովի է մեկնում և արտահայտում օբյեկտիվ իրականությունն ու մեզ շրջապատող աշխարհը: Սա խիստ էական եզրահանգում է, քանի որ ինչպես նշում է հենց ինքը՝ Սոսյուրը, նույն նշանակյալը, որը կարող է լինել երևույթ, առարկա, կամ գաղափար, յուրաքանչյուր մարդու ճանաչողության մեջ հանդես է գալիս նույն երևույթի որակապես տարբեր պատկերումների տեսքով: Այսինքն՝ որևէ լեզվով արտահայտված նույն նշանակչի (այլ կերպ ասած՝ լեզվական միավորի, օրինակ՝ «ծաղիկ») զուգորդած նշանակյալները տարբեր մարդկանց մոտ երբեք չեն կարող կատարելապես նույնը լինել: Եվ եթե երևույթի՝ մի լեզվական կողմի միջոցով արտահայտման դեպքում դրա կատարելապես համարժեք ըմբռնմանը հասնելն անհնար է, ապա որքան առավել անիրագործելի է խնդիրը թարգմանության դեպքում, երբ գործ ունենք երկու տարբեր լեզվական կողմերի հետ: Նկատելով նաև, որ լեզվական միավորի միջոցով արտահայտված գաղափարի մասին կարելի է պատկերացում կազմել, անգամ եթե մարդը տվյալ երևույթի հետ որևէ շոշափելի շփում չի ունեցել, Յակոբսոնը, ըստ էության, համարժեքության կարևորություն է վերագրում նշանակչի, այսինքն՝ երևույթն անվանող լեզվական միավորի թարգմանությանը: Դիտարկելով «համարժեքությունը տարբերության մեջ» նա սահմանում է միջլեզվական թարգմանությունը որպես «մեկ լեզվով արտահայտված ուղերձների փոխարինումը ոչ թե լեզվական միավորներով, այլ մեկ այլ լեզվով արտահայտված ամբողջական ուղերձներով» և շեշտում, որ թարգմանությունը «ենթադրում է երկու համարժեք ուղերձ՝ արտահայտված տարբեր լեզվական կողմերի միջոցով»: (Jakobson 2004: 139) Համարժեքության լեզվանշանային իր սահմանման մեջ Համբարձումյանը կարևորում է նաև արատալեզվական նշանները՝ նշելով, որ «երկու տեքստերը՝ արտահայտված տարբեր լեզուներով, կարող են համարժեք համարվել այնքանով, որքանով որ դրանց լեզվական և արտալեզվական նշանները կհամարվեն համարժեք»: Ընդհանրացնելով այս միտքը, նա նշում է, որ «լեզվի միավորները նշանակություն են ձեռք բերում միայն որոշակի մշակութային համատեքստում, և ճիշտ է որ լեզվի կիրառությունը մշակութային առկայացման մի կերպ է» (Համբարձումյան 2013: 99):

Իմաստի և տարբեր լեզվական կողմերի միջոցով դրա համարժեք արտահայտման խնդիրը դիտարկում է Նայդան (Nida 1964): Հենվելով Չոմսկու առաջադրած սերող քերականության տեսության սկզբունքների վրա՝ Նայդան նախ իմաստի մեջ տարանջատում է լեզվաբանական

իմաստը, հիմնանշանային իմաստը, և «հուզական» (հարանշանակային) իմաստը և առաջադրում իմաստի որոշման մի քանի մեխանիզմներ, որոնք թարգմանչին հնարավորություն են տալիս որոշել տարբեր լեզվական միավորների արտահայտած իմաստները, օրինակ՝ աստիճանակարգային կառուցումը, որի շնորհիվ կարելի է տարբերակել բառաշարքերը՝ ըստ իրենց պատկանելության մակարդակի, բաղադրիչային վերլուծությունը (componential analysis), որի միջոցով կարելի է տարանջատել միմյանց հետ սերտ առնչություն ունեցող բառերի իմաստային առանձնահատկությունները, ինչպես նաև իմաստային կառուցի վերլուծությունը, որը թույլ է տալիս առանձնացնել բառի տարբեր իմաստները՝ ըստ որոշակի առանձնահատկությունների (Nida 1964: 84-107):

Տեսական և գործնական լուրջ արժեք ունի նաև թարգմանության գործընթացի համար Նայդայի և Թաբերի առաջադրած մեխանիզմը, որը հիմնված է Չոմսկու առաջադրած համընդհանուր լեզվի կառուցի երկու մակարդակների՝ խորքային մակարդակի (որն արտահայտվում է բոլոր լեզուների համար համընդհանուր միջուկ նախադասությունների միջոցով) և մակերեսային մակարդակի (որը ստացվում է խորքային մակարդակի միջուկ նախադասությունների փոխակերպման միջոցով) վրա:



(գծ. 1) (Nida and Taber 1969:33)

Ըստ թարգմանության գործընթացի հաջորդական տրոհման այս մոդելի՝ աղբյուր լեզվով արտահայտված մակերեսային կառույցը, որն, ըստ էության, հենց աղբյուր տեքստն է, հետահայաց փոխակերպման միջոցով վերլուծվում է խորքային մակարդակի տարրական միավորների մեջ, սրանք իրենց հերթին թարգմանության գործընթացում փոխադրվում են թիրախ լեզու, ապա սրա հիման վրա էլ վերածնված վերլուծվում է թիրախ լեզվի մակերեսային մակարդակը: Այս մոդելը նշանակալի է այնքանով, որ բացահայտում է թարգմանության գործընթացի մաս կազմող թերևս ամենահիմնական՝ լեզվական փոխադրման ենթագործընթացը, երբ մտքի՝ աղբյուր տեքստում տեղ գտած լեզվական արտահայտությունը, փաստորեն, վերլուծաբար պարզեցվում է ավելի տարրական լեզվական կառույցների, որոնք կարող են արտահայտել այդ միտքը: Վերջիններս ենթարկվում են միջլեզվական փոխադրման, և արդեն թիրախ լեզվում այդ նույն մտքի խորքային և տարրական արտահայտման հիման վրա վերակառուցվում է աղբյուր տեքստին լեզվագործաբանորեն համարժեք թիրախ տեքստ:

Համարժեքության դիտարկման հետագա փորձերը՝ ներառյալ Նայդայի առաջադրած իմաստների տարանջատումը, հիմնականում պտտվում են բովանդակության և վերջինիս արտահայտման ձևի միջև գոյություն ունեցող անհամարժեքության հարցի շուրջ: Այս անվերջանալի հակամարտ փոխներգործության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ, ինչպես արդեն նշել ենք, նույն միտքը տարբեր լեզուներում կարող է արտահայտվել բոլորովին տարբեր լեզվական կառույցների և միավորների միջոցով: Փոխադարձաբար, երկու՝ լեզվականորեն նույնական արտահայտությունները չեն կարող երաշխավորել մտքի նույնական արտահայտում՝ առանց իմաստի աղճատման և խեղաթյուրման:

Հենց այս կարևոր հանգամանքը հաշվի առնելով էլ՝ Նայդան առաջադրում է համարժեքության «երկու հիմնական մոտեցում» կամ «տեսակ»՝ ձևային (ֆորմալ) համարժեքությունը (formal equivalence) և գործառական կամ դինամիկ համարժեքությունը (dynamic equivalence): Ձևային համարժեքության դեպքում առաջնային ուշադրություն է դարձվում աղբյուր տեքստում մտքի լեզվական արտահայտման յուրահատկություններին (Nida 1964: 159): Այս դեպքում փորձ է արվում հնարավորինս սերտ լեզվական նմանություն պահպանել աղբյուր և թիրախ տեքստերի միջև, որն, ինչպես մեկնում է Մանդելը,

«հնարավորություն է տալիս ընթերցողին անմիջականորեն մուտք գործել աղբյուր մշակույթի լեզվի և ավանդույթների տիրույթ» (Munday 2012: 42):

Գործառական կամ դինամիկ համարժեքության դեպքում էլ հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է հասցեատիրոջ վրա թարգմանության ունեցած ազդեցության պահպանման վրա: Ինչպես սահմանում է հենց ինքը՝ Նայդան, «թարգմանության և վերջինիս հասցեատիրոջ միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը սկզբունքորեն պետք է համապատասխանի բնագրի և դրա հասցեատերերի միջև առկա փոխհարաբերությանը» (Nida 1964: 159): Այս դեպքում թարգմանությունը ենթադրում է կատարյալ բնականություն (naturalness), որն՝ ըստ Նայդայի, գործառական համարժեքության պարտադիր նախապայման է, իսկ աղբյուր լեզվով արտահայտված ուղերձին թիրախ լեզվով ամենամոտ բնական համարժեքը գտնելը նա սահմանում է հիմնանպատակ (Nida 1964: 166, Nida and Taber 1969: 12):

Նայդան թարգմանության պատշաճությունն ուղղակիորեն կապում է վերջինիս իրականացրած համարժեք ներազդման հետ, որին և ավելացնում է երեք այլ նախապայմաններ՝ ցուցաբերելով կարգադրական մոտեցում և հանգելով չորս նախապայմանի.

1. իմաստ արտահայտելը,
2. բնագրի շունչն ու ոճը պահպանելը,
3. բնական և հեշտ արտահայտումը,
4. նման արձագանք ապահովելը (Nida 1964: 166):

Համարժեքության՝ Նայդայի սահմանումը մեծ արժեք ունի հատկապես այն պատճառով, որ նա համարժեքությունը՝ որպես հաջող թարգմանության նախապայման, դուրս է բերում սոսկ լեզվական արտահայտման մակարդակից և այն դիտարկում է այնպիսի մի գործառական առանձնահատկության շրջանակներում, ինչպիսին է թարգմանության ազդեցությունը ընթերցողի վրա՝ սրանով թարգմանության արժեքի կարևոր բաղադրիչ համարելով վերջինիս հաղորդակցական գործառույթը: Հետագայում, Նայդայի առաջադրած գործառական համարժեքության գաղափարը արժանանում է ծավալուն քննադատության (Lefevere 1993, Broek 1978, Larose 1989, Newmark 1981, 1988), իսկ համարժեքության գաղափարը շարունակական զննության արդյունքում ստանում է այլ սահմանումներ՝ տարբեր հայեցակերպերի վրա կենտրոնացմամբ:

«Արտահայտում» և «բովանդակություն» հակադրամիասնությունից չի կարողանում «զերծ մնալ» նաև Նյումարկը, որը, էականորեն

հեռանալով Նայդայի առաջադրած՝ ընթերցողի վրա թարգմանության ունեցած կատարելապես համարժեք ազդեցության կարևորությունից, առանձնացնում է երկու տիպի թարգմանություն՝ իմաստային թարգմանություն (semantic translation) և հաղորդակցական թարգմանություն (communicative translation)՝ նշելով, որ «հավատարմության խնդիրը՝ աղբյուր կամ թիրախ լեզուների շեշտադրման միջև ընկած միջակայքը միշտ լինելու է թարգմանության համար առաջնային խնդիրը թե՛ տեսական, թե՛ գործնականդիտանկյունից» (Newmark 1981: 38): Իմաստային թարգմանությունը, ըստ էության, հիշեցնում է Նայդայի ձևային համարժեքությունն այն տարբերությամբ, որ, ինչպես նշում է հենց ինքը՝ Նյումարկը, այն մեծ ուշադրություն է դարձնում նաև համատեքստին: Հաղորդակցական թարգմանության դեպքում, որը որոշ չափով նման է Նայդայի գործառական համարժեքությանը, Նյումարկը կատարելապես համարժեք ազդեցությունը համարում է անիրագործելի այն պատճառով, որ բնագրի և դրա թարգմանության հասցեատերերն ունեն տարբեր մշակութային պատկանելություն և ժամանակային ու տարածական տեղակայում: Հետևաբար՝ համարժեք ազդեցության կարելի է հասնել միայն ինչ-որ չափով, որն էլ նա վերագրում է ուղերձի հաղորդակցական գործառույթին, այսինքն՝ միտքը հաղորդելու կարողությանը՝ իրականացված վերջինիս լեզվական արտահայտման միջոցով: Այս մոտեցմամբ Նյումարկը բացահայտում է մտքի և դրա լեզվական արտահայտման նշանակության անբաժան լինելը և լեզվական արտահայտումը համարում է համարժեքության ապահովման հիմնական գործոն:

Համարժեքության ավելի ընդգրկուն տեսակավորում է տալիս Քոլլերը, որը նախ տարանջատում է համարժեքությունը լեզվական համապատասխանությունից (correspondence), որի դեպքում հակադրվում են երկու տարբեր լեզվական համակարգերն ու փորձ է արվում նկարագրել վերջիններիս միջև գոյություն ունեցող համակարգային տարբերությունները՝ համարժեքությունը համարելով աղբյուր և թիրախ տեքստերում առկայացած լեզվական տարրերի միջև հաղորդակցական համապատասխանությունները: Նա առաջադրում է համարժեքության հինգ տիպեր կամ մակարդակներ.

1. հիմնանշանակային (denotative) համարժեքություն, որի դեպքում ապահովվում է տեքստի արտալեզվական բովանդակությունը, որը

և Քոլլերն անվանում է «բովանդակային անփոփոխականություն» (content invariance), (Koller 1979)

2. հարանշանակային (connotative) համարժեքություն, որի դեպքում ապահովվում է տեքստի ոճական համարժեքությունը՝ ստացված համապատասխան բառային միավորի ընտրության միջոցով,
3. տեքստ-նորմատիվ համարժեքությունը, որի դեպքում կարևորվում են տեքստի ժանրային, ինչպես նաև տեքստի ստեղծման նորմատիվ առանձնահատկությունները,
4. գործարանական համարժեքությունը, որը Քոլլերը կոչում է նաև «հաղորդակցական համարժեքություն», համընկնում է Նայդայի «գործառական համարժեքության» հետ և ուղղված է դեպի տեքստի հասցեատերը:
5. Ձևային համարժեքություն, որն էլ կապված է տեքստի ձևային կազմի՝ գեղագիտական, արտիստիկ և այլ արտահայտումների համարժեք փոխադրման հետ (տե՛ս Munday 2012: 47):

Համարժեքության նմանատիպ, հնգաստիճան դասակարգում է առաջադրում նաև Կոմիսսարովը, որը համարժեքությունը համարում է աղբյուր և թիրախ լեզուների միջև գոյություն ունեցող իմաստային նմանության չափ: Նա տարանջատում է.

1. Հաղորդակցական նպատակի համարժեքություն, որի դեպքում, ըստ էության, թիրախ տեքստը համարժեքորեն պահպանում է աղբյուր տեքստի հաղորդակցական նպատակը, սակայն կարող է վերջինից խիստ տարբերվել իր լեզվական արտահայտման յուրահատկություններով,
2. Իրադրային համարժեքություն, որի դեպքում համարժեքորեն թիրախ տեքստ են փոխանցվում է նաև ուղերձի իրադրային յուրահատկությունները,
3. Իրադրության նկարագրման համարժեքություն, որի դեպքում թիրախ տեքստում համարժեքորեն պահպանվում են աղբյուր տեքստում առկա իրադրության նկարագրման հիմնական միջոցները, սակայն ընդհանուր լեզվական պլանը կարող է էականորեն տարբեր լինել,
4. Շարահյուսական կառույցների համարժեքություն, որի դեպքում համարժեքորեն թիրախ տեքստ են փոխանցվում աղբյուր տեքստում առկա շարահյուսական կառույցները, սակայն կարելի է նկատել բառային արտահայտման անհամապատասխանություն,

5. Բաղիմաստային համարժեքություն, որի դեպքում թարգմանությունն իր լեզվական արտահայտման միջոցներով համանման է աղբյուր տեքստի լեզվական արտահայտմանը՝ նաև բառային մակարդակում (Комиссаров 1990):

Փաստորեն, ինչպես Քոլլերի, այնպես էլ Կոմիսարովի դիտարկման մեջ համարժեքությունը ներկայացվում է բովանդակության և դրա լեզվական արտահայտման փոխհարաբերության և փոխներգործության հիման վրա, որի տարբեր մակարդակների դեպքում կարելի է հանգել տարբեր աստիճանի համարժեքության: Համարժեքության՝ Քոլլերի դասակարգման մեջ կարևոր է նաև այն, որ Քոլլերն ուշադրություն է դարձնում տեքստի արժեքի գաղափարին՝ ասելով, որ «թե՛ տեքստը որպես մեկ ամբողջություն դիտարկելիս, և թե՛ տեքստի հատվածների դիտարկման գործում, թարգմանիչը պետք է սահմանի արժեքների աստիճանակարգություն (hierarchy of values), որոնք պետք է պահպանվեն և փոխանցվեն թարգմանության գործընթացում: Սրա հիման վրա էլ կարելի է սահմանել դիտարկվող տեքստին համապատասխան համարժեքության պահանջներ» (տե՛ս Panou 2013: 4):

Համարժեքության ուսումնասիրության ժամանակ մեծամասամբ լեզվաբանական կենտրոնացմամբ են հանդես գալիս նաև Քեթֆորդը, Լյումարկը, և Վինեն ու Դարբելնեն, որոնք մեծ ուշադրություն դարձնելով իմաստային ատահայտման միջլեզվական յուրահատկություններին, մասնավորապես՝ այն լեզվաբանական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում թարգմանության ընթացքում, առաջադրում են թարգմանական հնարների բավականին ընդգրկուն դասակարգումներ: Վինեն ու Դարբելնեն, օրինակ, տարանջատում են թարգմանության ռազմավարության երկու տեսակ՝ ուղիղ թարգմանություն և անուղղակի թարգմանություն (direct translation and oblique translation): Ուղիղ թարգմանության մեջ՝ որպես ընդհանուր թարգմանական ռազմավարություն, առանձնացնում են փոխառության, պատճենման և բառացի թարգմանության թարգմանական հնարները (translation procedures): Անուղղակի թարգմանությունն էլ իր հերթին ներառում է փոխատեղման, մոդուլացիայի, համարժեքության և հարմարեցման թարգմանական հնարները (Vinay and Darbelnet 1958; Panou 2013): Ի դեպ, ուղիղ թարգմանության ռազմավարությունը կարևորում է աղբյուր լեզվի լեզվական առանձնահատկությունները, այնինչ անուղղակի թարգմանության ռազմավարությունը շեշտը դնում է թիրախ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունների վրա:

Նյումարքը ներկայացնում է թարգմանական հնարների առավել ընդգրկուն տարանջատում, օր.՝ բառ-առ-բառ թարգմանությունը (word-for-word translation), բառացի թարգմանություն (literal translation), իմաստային թարգմանություն (semantic translation), դարձվածային թարգմանություն (Idiomatic translation), ազատ թարգմանություն (Free translation), բնականեցում (Naturalization), հաղորդակցական թարգմանություն (Communicative translation), մշակութային համարժեք (Cultural equivalent), նկարագրական համարժեք (Descriptive equivalent), գործառույթային համարժեք (Functional equivalent) և այլն (Newmark 1988, Սողիկյան և Գիշյան 2014):

Համարժեքության վրա հիմնված տեսությունների զարգացմանը զուգահեռ առաջ են գալիս թարգմանական տեսություններ, որոնցից յուրաքանչյուրի դիտարկման առանցք է դառնում «թարգմանություն» երևույթի այս կամ այն առանձնահատկությունը, ինչի արդյունքում թարգմանությունը դուրս է գալիս սոսկ լեզվաբանական ուսումնասիրության տիրույթից: Ինչպես նշում է Գասպարյանը, «Թարգմանության տեսության այժմեական խնդիրներից է ոչ միայն աղբյուր լեզվի միջլեզվական համապատասխան տարբերակի համարժեք ընտրությունը թիրախ լեզվում, այլև միջմշակութային հաղորդակցման «բնական» մթնոլորտի ստեղծումը աղբյուր տեքստի և թիրախ տեքստի միջև» (Գասպարյան 2008: 78): Սա նախևառաջ պայմանավորված է թարգմանության՝ այլ գիտակարգերի և հասարակական կյանքի ամենատարբեր տիրույթների հետ ունեցած սերտ առնչության աստիճանական բացահայտմամբ: Այս քայլով, ըստ էության, մեծ ուշադրություն է դարձվում թարգմանության հասարակական, հանրամշակութային, հոգեբանական և այլ առանձնահատկություններին, և թարգմանության վերաբերյալ հետագա տեսություններում մեծ ուշադրության են արժանանում դրա միջգիտակարգային հայեցակերպերը: Ըստ Մանդեյի, «թարգմանաբանության ոլորտում կատարված բոլոր վերջին հետազոտությունները մեծամասամբ միջգիտակարգային կողմնորոշում են ունեցել: Թարգմանաբանությունը դիտարկվել է այլ գիտակարգերի՝ լեզվաբանության, բանասիրության, փիլիսոսփայության, մշակութաբանության, խոսույթի տեսության և այլ գիտակարգերի հետ սերտ փոխգործակցության շրջանակներում» (Munday 2012: 22-24): Այս կարծիքին է նաև Գամբիերը. «Թարգմանաբանությունը նշանակալիորեն փոխ է առել այլ գիտակարգերից...» (Gambier and

Doorslaer 2010) Եվ սա, իհարկե, պայմանավորված է «թարգմանություն» երևույթի բազմակերպ և բազմաշերտ բնույթով:

Բացառապես լեզվաբանական շրջանակից անդին՝ թարգմանության «Սկոպոսի» տեսությունը (Nord 1997, Vermeer 1989, 1996, Chesterman 2010), ինչպես նաև մյուս ֆունկցիոնալիստական տեսությունները (functionalist theories) առավելապես կարևորում էին թարգմանվածքի «սկոպոսին», այսինքն՝ այն գործառույթին, որը թարգմանվածքը կոչված է իրականացնելու թիրախ մշակույթում՝ համարժեքությունը համարելով անկարևոր և ոչ պարտադիր նախապայման: Այս տեսություններով, ըստ էության, տեղի է ունենում նկատելի շեղում թարգմանության առավելապես լեզվաբանական մոտեցումից, որով հետաքրքրված էին թարգմանության՝ համարժեքության վրա հիմնված տեսությունները: Սույն տեսությունների մոտեցման համաձայն, թարգմանությունը կարելի է համարել համապատասխան և համարժեք, եթե այն ապահովում է «գործառական համամասնություն» բնագրի հետ, որն էլ, ըստ Փիմի, «համարժեքության գաղափարին թերևս ամենամոտ առանձնահատկությունն է, որը կարելի է առաջադրել» (Pym 2012):

1990-ականներին առաջ եկած թարգմանական տեսությունների համար հիմք է դառնում ժամանակի թերևս ամենախոշոր լեզվական շարժումը՝ խոսույթի վերլուծությունը (Munday & Zhang 2015): Սույն տեսությունների շրջանակներում առավելագույն ուշադրության են արժանանում թարգմանության՝ որպես տեքստի միջլեզվական և միջմշակութային փոխադրման խոսութային առանձնահատկությունները: Խոսույթի և լեզվի դիտարկման Հելիդեյի առաջադրած մոդելը, որը հիմնված է ժանրի և վերջինս պայմանավորող ռեգիստրի ուսումնասիրության վրա, դառնում է թարգմանության ուսումնասիրության հիմնական մոտեցում, ինչպես նաև հիմք՝ թարգմանության որակի գնահատման տարբեր մոդելների մշակման համար (House 1997, 2015, Volkova 2014 և այլն): Մեծ ուշադրության են արժանանում են նաև թարգմանության գործում տեքստի գործաբանական առանձնահատկությունները (Baker 2011): Թարգմանության գործընթացում տեքստի գործաբանական առանձնահատկությունների կարևոր դիտարկման հիման վրա էլ Բեյքերը՝ համարժեքության բառային, դարձվածային, քերականական և տեքստային մակարդակներին զուգահեռ դիտարկում է նաև հինգերորդ՝ գործաբանական համարժեքության մակարդակը (Baker 2011):

Թարգմանության դիտարկման ժանրային/խոսութային մոտեցումն արժեքավոր է նրանով, որ ուշադրություն է դարձնում տեքստի և լեզվի կիրառության խոսութային առանձնահատկություններին՝ քննելով տեքստերի ստեղծման և առկայացման իրադրային առանձնահատկությունները, տեքստի հաղորդակցական և դրա հեղինակի և հասցեատերերի դերերի խոսութային-գործաբանական յուրահատկությունները և այլն:

Թարգմանությանն ավելի բազմակողմանի են մոտենում Էվեն Չոհարի և Թուրիի առաջադրած տեսությունները: Էվեն-Չոհարի ներկայացրած Բազմահամակարգության տեսությամբ (Polysystems Theory) թարգմանությունը, մասնավորապես՝ գրական ստեղծագործությունների թարգմանությունները, դիտարկվում են որպես թիրախ լեզվի մշակութային, հասակարակական, պատմական, ազգային մակրոհամակարգի բաղկացուցիչ մաս: Այսինքն՝ գրական ստեղծագործության թարգմանությունը համարելով թիրախ գրականության մի մասը հանդիսացող առանձին համակարգ, համակարգերի տեսությունը դիտարկում է այն այլ՝ մշակութային, հասարակական, պատմական համակարգերի հետ դինամիկ հարաբերակցության մեջ (Even-Zohar 1978):

Նմանապես, Թուրիի նկարագրական թարգմանության տեսությունը (DTS), որը նույնպես հիմնված է թարգմանության մակրոհամակարգային դիտարկման Էվեն-Չոհարի առաջադրած տեսության գաղափարների վրա, ի ցույց է դնում թարգմանության դիտարկման առավելապես նկարագրական մոտեցում՝ փորձելով տարբերվել թարգմանաբանության կարգադրական մոտեցումներից (որն, ըստ որոշ տեսաբանների, այս դեպքում լիովին չի հաջողվում (Liu 2014: 13)) և առաջադրել թարգմանության մեկ ընդհանուր տեսություն (Pym 2010):

Այս տեսությունը, փորձելով հանդես գալ որպես «աստիճանակարգային կազմակերպմամբ և հստակ հետազոտական մեթոդաբանությամբ էմպիրիկ գիտակարգ», դիտարկում է թարգմանությունը համակողմանիորեն և տարբեր տեսանկյուններից (Pym 2010):

Բասնետը պայմանավորում է սա այն հանգամանքով, որ «թարգմանության նախորդ տեսությունների դեպքում չկա թարգմանության ողջ գործընթացը պայմանավորող հասարակական-մշակութային պայմանների նկատմամբ զգայունություն» (տե՛ս Castello 2014: 4): Սույն տեսության շրջանակներում հատուկ ուշադրության են արժանանում

թարգմանության ամենատարբեր հայեցակետերը: Այն նախևառաջ ընդունվում է որպես գործընթաց, որի իրականացրած գործառույթը համարվում է թիրախ մշակույթի անբաժան մաս, ուշադրության է արժանանում թարգմանիչը և թարգմանությունը որպես մտավոր գործունեության երևույթ, դիտարկվում են թարգմանության գործընթացի հասարակական-մշակութային միջավայրն ու պայմանները և այլն: Իսկ համարժեքությունը, ինչպես նշում է Փիմը, թարգմանության նկարագրական տեսության մեջ «համարվում է բացառապես բոլոր թարգմանություններին բնորոշ յուրահատկություն» (Pym 2010, տե՛ս նաև Rosa 2016):

Սահմանափակվելով թարգմանական տեսությունների այս ներկայացմամբ՝ կարող ենք համաձայնել Չեսթերմանի հետ առ այն, որ «թարգմանաբանությունը մինչ այժմ մեր ուշադրությանն է ներկայացրել միայն հատվածական տեսությունների մի խառնուրդ», որոնցից յուրաքանչյուրը «թարգմանություն» կոչվող բազմաբարդ, բազմակերպ և ոչ ճշգրիտ երևույթին մոտենում է մեկ կամ մի քանի տեսանկյուններից միայն (Chesterman 2010): Յուրաքանչյուր տեսության շրջանակում վերլուծության առանցքը, որպես կանոն, թարգմանության կոնկրետ, եզակի հայեցակերպ է, որը և դառնում է թարգմանության տեսականացման հիմք, իսկ մնացած բոլոր հայեցակետերն ու առանձնահատկությունները դիտարկվում են հենց այդ լույսի ներքո:

Համարժեքության գաղափարին անդրադարձները նույնպես թարգմանաբանական հատվածական տեսությունների շրջանակներում են: Ինչպես նշում է Հաուզը, համարժեքությունը թարգմանության, ինչպես նաև թարգմանության որակի գնահատման առանցքային գաղափար է (House 2015: 5): Իսկապես, համարժեքությունը, կամ այլ կերպ ասած՝ բնագրի արժեքը նույնությամբ թիրախ լեզվամշակույթ փոխադրելը կարելի է համարել թարգմանության գործընթացի բնական պահանջ և թարգմանչի՝ պատշաճ թարգմանություն ապահովելու ենթագիտակցական միտում: Թարգմանության գործընթացում այն հանդես է գալիս որպես թարգմանության որակի անխուսափելի չափանիշ և նախապայման: Այս կարծիքին են նաև Լեֆևերն ու Բրոքը, որոնք կարծում են, որ «թարգմանությունը կարելի է ամբողջական համարել միայն այն դեպքում, երբ աղբյուր տեքստի հաղորդակցական արժեքն ու ժամանակային և տարածական պատկանելության տարրերը թիրախ տեքստում փոխարինվել են հնարավոր ամենամոտ համարժեքներով» (Lefevere 1975: 102, Broeck 1978: 39):

Համարժեքությանն ուղղված ամենատարբեր մոտեցումների դիտարկումից տպավորություն է ստեղծվում, որ տարակարծությունների պատճառը ոչ այնքան թարգմանական համարժեքության կարևոր կամ անկարևոր լինելն է, որքան այն հանգամանքը, թե որ տեսության շրջանակներում թարգմանության որ հայեցակերպին կամ ներակա առանձնահատկությանն է վերագրվում առավելագույն արժեք: Հետևաբար՝ համարժեքությունից խուսափել չէր կարող և ոչ մի տեսություն կամ մոտեցում, որովհետև դրանցից ամեն մեկը, առաջնայնություն տալով թարգմանական որևէ բաղադրիչի, ինքնաբերաբար ձևավորում է որոշակի արժեք, որն անխուսափելիորեն պետք է փոխանցվի թիրախ լեզվամշակույթ: Այդ իսկ պատճառով «համարժեքությունը...» (տրամաբանորեն նաև թարգմանական արժեքը) «... հարաբերական հասկացություն է, քանի որ այն ենթարկվում է ամենատարբեր լեզվաբանական և մշակութային գործոնների ազդեցությանը» (տե՛ս Panou 2013: 4): Այս պատճառով էլ հավատացած ենք, որ յուրաքանչյուր տեքստի դեպքում թարգմանական արժեքը տարբեր է, և կախված աղբյուր տեքստի բնույթից և առանձնահատկություններից՝ թարգմանության գործընթացում փոխանցվելիք արժեքը մի տեքստի դեպքում կարող է առավելապես ներառել տեքստի «սկոպոսը», մյուսի դեպքում՝ աղբյուր և թիրախ տեքստերի խոսութային, գործաբանական, մշակութային առանձնահատկությունները, մեկ այլ տեքստի դեպքում՝ դրա լեզվական արտահայտման առանձնահատկությունները և այլն: Հետևաբար, թարգմանության վերլուծության գործում նախ հարկ է սահմանել այն արժեքը, որը պետք է ենթարկվի համանման միջլեզվական փոխադրման:

Խոսելով թարգմանական արժեքի մասին՝ հարկ ենք համարում նշել նաև, որ թարգմանությունն, անկախ ամեն ինչից, լեզվական կողերի միջև տեղի ունեցող փոխադրային երևույթ է, և որ թարգմանության՝ որպես լեզվական գործունեության գոյությունը պայմանավորված է մեկ լեզվով արտահայտված տեքստը/խոսույթը այդ լեզուն չտիրապետող մարդկանց համար այլ լեզվով հասանելի դարձնելու տարրական պահանջով: Եվ եթե միտքն իր շոշափելի արտահայտումը գտնում է լեզվի միջոցով, ապա դրա միջլեզվական փոխադրումը (այն է՝ թարգմանությունը) չի կարող ուշադրություն չդարձնել լեզվի դերի և մտքի լեզվական արտահայտման հայեցակերպի կարևորության վրա: Հետևաբար մտքի/ուղերձի լեզվական արտահայտումը վերջինիս արժեքի անբաժանելի մասն է, և դրա լեզվաբանական առանձնահատկությունների քննությունը պետք է լինի

թարգմանության ուսումնասիրության գործընթացի անբաժանելի մաս: Ինչպես նշում է Գասպարյանը, իմաստի, գաղափարի, երևույթի, իրականության «ընկալումը հենց լեզվի ընկալումն է, քանի որ մարդու մտածողությունն ու աշխարհայացքն էլ ձևավորվում և արտահայտվում են լեզվի միջոցով» (Գասպարյան 2015: 33): Այս կարծիքին են նաև Հաուզն ու Փիմը, որոնք համարժեքության մասին իրենց վերջերս հրապարակված ուսումնասիրություններում ցուցաբերում են նմանատիպ «հավասարակշռված» մոտեցում: Ըստ Հաուզի՝ «Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում թարգմանաբանության ոլորտում տեղի են ունեցել նկատելի տեղաշարժեր, որոնք թարգմանությունը համարում են մեծամասամբ հասարակական, մշակութային, քաղաքական, բարոյագիտական և գաղափարախոսության գերակայության տակ տեղի ունեցող գործողություն: Չնայած որ նման նկատառումներն, անշուշտ, անհրաժեշտ են և արժեքավոր, պետք չէ մոռանալ, որ թարգմանությունն իր բնույթով լեզվական գործողություն է» (House 2015: 2): Փիմը, ուշադրություն դարձնելով թարգմանության լեզվական հայեցակերպի կարևորությանը, առանձնացնում է համարժեքության երկու հիմնական մակարդակ՝ բնական համարժեքություն (natural equivalence) որն, ինչպես մեկնում է Փանուն, «գոյություն ունի լեզուների միջև նախքան բուն թարգմանության ակտը» (Panou 2013: 5) և ուղղորդված համարժեքություն (directional equivalence), որի դեպքում, ըստ էության, թարգմանիչն է որոշում այն արժեքը, որը պետք է փոխանցվի թարգմանության ընթացքում:

Այն, որ լեզվական արտահայտման ձևը տեքստի արժեքի անքակտելի մասն է, կարելի է եզրակացնել համարժեքության ավելի վաղ ուսումնասիրություններից ևս: Համարժեքության թե՛ Նայդայի, թե՛ Քոլլերի, և թե՛ Կոմիսարովի դասակարգումներում (իհարկե՝ տարբեր ստորաբաժանմամբ) արժեքը կարծես դիտարկվում է կորդինատային հարթության մեջ, որի մի բևեռը միշտ լեզվական արտահայտումն է (տե՛ս նաև Գասպարյան 2008, 2006, Գաբրիելյան 2014):

Այսպիսով, լեզվական միավորի արժեքի անքակտելի մասն են կազմում ոչ միայն դրա արտահայտած իմաստը՝ այսինքն, արտահայտման բովանդակային տիրույթը, այլ նաև այն լեզվական/ձևային կառույցը, որի միջոցով արտահայտվում է վերոնշյալ իմաստը: Իսկ քանի որ նմանատիպ լեզվական կառույցները հանդիսանում ավելի մեծ լեզվական միավորի՝ տեքստի անմիջական բաղադրիչները, թարգմանության մեջ դրանց արժեքը ներառում է նաև

տեքստի այնպիսի արտալեզվական առանձնահատկությունները, ինչպիսիք են աղբյուր լեզվամշակություն նույն տեքստի ունեցած հաղորդակցական նշանակությունը, իրականացրած գործառույթը, հասցեագրված լսարանի հասարակական-մշակութային և լեզվական առանձնահատկությունները, և այլն: Լեզվական և արտալեզվական գործոնների այս ամբողջությունն էլ ձևավորում է լեզվական միավորի թարգմանական արժեքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Համբարձումյան, Դ. Semiotics and Translation of Literary Works. «Նշան, լեզու, տեքստ», բանասիրական հոդվածների ժողովածու (հայերեն, անգլերեն), Ապոլոն, Երևան. 2013, էջ 94-101
2. Գասպարյան, Ս . Գասպարյան Լ . , Թարգմանական «բաց», անփութություն թե միտում, Օտար լեզուները Հայաստանում N3-4, «Կրթության ազգային ինստիտուտ» հրատ., Երևան, 2008, էջ 76-92
3. Գաբրիելյան, Ս . Գեղարվեստական թարգմանություն և գեղարվեստական համարժեքություն, «Թարգմանությունը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջմշակութային փոխներթափանցման միջոց» ժողովածուում, Երևան, ԵՊՀ Հրատարակչություն, 2014, էջ 17-21
4. Զաքարյան, Ն . Համարժեքության խնդիրը թարգմանության մեջ, «Թարգմանությունը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջմշակութային փոխներթափանցման միջոց» ժողովածուում, Երևան, ԵՊՀ Հրատարակչություն, 2014, էջ 22-27
5. Գասպարյան, Ս . Հերմենևտիկական որպես գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության մեթոդաբանություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» № 3 (18), 2015, էջ 29-36
6. Գասպարյան, Ս . Ձևի և բովանդակության միասնականությունը բանասիրական մոտեցմամբ, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (120), Երևան, 2006, էջ 79-83
7. Սողկյան, Բ . և Գիշյան, Ն . Անգլերենի զեղչված անդամով նախադասությունների գործառական իմաստների արտահայտման միջոցները հայերենում, Երևան, Կանթեղ հոդվածների ժողովածու, 2014, էջ. 163-180

8. Սողիկյան, Ք . , Շահբազյան Ա . Թարգմանության տեսության փիլիսոփայական հայեցակարգը, «ԲԱՆԲԵՐ» հոդվածների ժողովածու ԵՊԼՀ «Լինգվա» հրատարակչություն, 1 (32), Երևան, 2015, էջ 355-370
9. Pinchuk, I., Criteria for Adequacy in Service Translation, Taalfasette, Vol. 7, Iss. 1, 1968, pp. 1-15
10. Reiss, K., Texttyp und Übersetzungsmethode. Der operative Text. In Volume 11 of Monographien: Literatur und Sprache und Didaktik, Cornelsen Verlag Scriptor, 1976, 167 p.
11. Machulskaya, O., The Problem of the Adequacy of Translation. In Fenomenologia ed ermeneutica N 6-2, Italy, Noema, 2015, 10 p.
12. Frank, W., A Note on the Adequacy of Translation, Notre Dame Journal of Formal Logic Volume XVII, Number 2, USA, Duke University Press, 1976, pp. 249-250
13. Denkowski, M., Lavie, A., Extending the METEOR Machine Translation Evaluation Metric to the Phrase Level. Language Technologies Institute. School of Computer Science Carnegie Mellon University Pittsburgh, USA. 2010, pp. 250-253
14. Федоров А. В. Основы общей теории перевода (лингвистические проблемы), М.: ООО «Издательский Дом «ФИЛОЛОГИЯ ТРИ», 2002, 416 с.
15. Виноградов В. С. Введение в переводоведение (общие и лексические вопросы), М.: Издательство института общего среднего образования РАО, 2001, 224 с.
16. Munday, J. and Zhang, M., Discourse Analysis in Translation Studies. International Journal of Translation Studies. Target 27:3, John Benjamins, 2015, 194 p.
17. Munday J., Introducing Translation Studies: Theories and Applications, London/New York, Routledge, 2012, 384 p.
18. Munday J., Introducing Translation Studies. Theories and Applications, Routledge, 2008, 240 p.
19. Bassnett, S., Translation Studies. Third edition. London, Routledge. 2002, 176 p.
20. Broeck, R. van den., The concept of equivalence in translation theory. Some critical reflections. In Holmes, J.S., Lambert, J. and Broeck, R. van den (eds.) Literature and Translation. Leuven: Academic, 1978, pp. 29-47
21. Baker, M. & Saldanha G. (eds.), Routledge Encyclopedia of Translation Studies, London; New York, Routledge, 2011, 674 p.

- 22.Castello, D., Descriptive Translation Studies and the Cultural Turn, Course Module Assignment, University of Birmingham, 2014, 16 p.
- 23.Chesterman, A., Skopos Theory: A Retrospective Assessment. In W. Kallmeyer et al. (eds), *Perspektiven auf Kommunikation. Festschrift für Liisa Tittula zum 60. Geburtstag*. Berlin: SAXA Verlag, 2010, pp. 209-225
- 24.Even-Zohar, I., The Position of Translated Literature within the Literary Polysystem. *Literature and Translation: New Perspectives*. In *Literary Studies* (ed.) James Holmes, Jose Lambert, Raymond van den Broeck. Leuven: ACCO., 1978, pp. 117-127
- 25.House, J., *Translation Quality Assessment. Past and Present*. Routledge, Abingdon, 2015, 160 p.
- 26.House, J., Translation Quality Assessment: Linguistic Description versus Social Evaluation. *Meta*, 46(2), 2001, pp. 243–257
- 27.Jakobson, R., On linguistic aspects of translation, in L. Venuti (ed.), 2000, pp. 113-18
- 28.Koller, W., *Einführung in die Übersetzungswissenschaft*, Heidelberg: Quelle and Meyer, 1979, 290 p.
- 29.Larose, R., *Theories contemporaines de la traduction*, Quebec, Presses de l'Universite du Quebec, 1989
- 30.Lefevere, A., *Translating Literature: Practice and Theory in a Comparative Literature Context*. New York, The Modern Language Association of America, 1993, 165 p.
- 31.Lefevere, A., *Translating Poetry: Seven Strategies and a Blueprint*. Amsterdam: Van Gorcum, 1975, 127 p.
- 32.Newmark, P., *Approaches to Translation*, Oxford and New York, Pergamon, 1981, 200 p.
- 33.Newmark, P., *A Textbook of Translation*. New York and London, Prentice-Hall, 1988, 292 p.
- 34.Nida, E., *Toward a Science of Translating: With Special Reference to Principles and Procedures Involved in Bible Translating*, Brill Archive, 1964, 331 p.
- 35.Nida, E.A. and Taber, C. R., *The Theory and Practice of Translation*, Leiden: E.J. Brill, 2003, 220 p.
- 36.Liu, K., Prescriptive Aspects of Descriptive Translation Studies in *International Journal of English Linguistics*, Vol. 4, No. 4, 2014, pp. 13-21

37. Nord, C., Translating as a Purposeful Activity: Functionalist Approaches Explained. In *Translation and Literature*, Volume 7 Issue 2, Manchester: St. Jerome, 1997, pp. 266-276
38. Panou, D., Equivalence in Translation Theories: A Critical Evaluation. *Theory and Practice in Language Studies*, Vol. 3, No. 1, 2013, pp. 1-6
39. Pym, A., *Exploring Translation Theories*. London: Routledge. Sakellariou, P. (2011). *Translation, Interpretation and Intercultural Communication*. *The Journal of Specialised Translation*, 2010, pp. 229-246
40. Pym, A., *On translator ethics: Principles for mediation between cultures*. Amsterdam, Benjamins, 2012, 185 p.
41. Pym, A., *Translation Solutions for Many Languages. Histories of a Flawed Dream.*, London, Bloomsbury, 2016, 288 p.
42. Rosa, A. A., *Descriptive Translation Studies – DTS (revised version).*” In *Handbook of Translation Studies*. Ed. Yves Gambier and Luc van Doorslaer. Amsterdam: John Benjamins, 2016, pp. 94-104.
43. Volkova, T., *Translation Model, Translation Analysis, Translation Strategy: an Integrated Methodology in Procedia - Social and Behavioral Sciences* 154, 2014. pp. 301 – 304
44. Vermeer, H. J., *Skopos and Commission in Translational Action*. In A. Chesterman (ed.) *Readings in Translation*, Helsinki: Oy Finn Lectura Ab., 1989, pp. 173-187
45. Vinay, J.-P. and Darbelnet, J., *A methodology for translation*, (1995) Venuti, L. in (ed.). 2004, pp. 128-37
46. Комиссаров В. Н. *Теория перевода (лингвистические аспекты): Учеб. для ин-тов и фак. иностр. яз. - М.: Высш. шк., 1990. - 253 с.*

ГУРГЕН КАРАПЕТЯН, КРИСТИНЭ СОГИКЯН ЭКВИВАЛЕНТНОСТЬ КАК ОСНОВНАЯ ХАРАКТЕРИСТИКА АДЕКВАТНОГО ПЕРЕВОДА

Целью статьи является инклюзивный анализ эквивалентности как центрального свойства адекватного перевода. Статья начинается с краткого представления переводческой адекватности, за которым следует широкое пояснение понятия эквивалентности с точки зрения разных теорий перевода. Автор статьи демонстрирует, каким образом в теориях перевода, в том числе и в тех, которые полностью отрицают важность эквивалентности, получает наибольшее значение та или иная переводческая особенность, равноценная передаче которой становится основной проблемой и теоретическим центром данной теории. Таким

образом эквивалентность представляется как центральная характеристика адекватного перевода, которой ни одна теория перевода не может избежать

GURGEN KARAPETYAN, KRISTINE SOGHIKYAN - EQUIVALENCE AS A PIVOTAL CRITERION FOR TRANSLATION ADEQUACY

The intent of this paper is the all-embracing analysis of equivalence as a pivotal characteristic of adequate translation. The study starts off with a modest introduction to translation adequacy, which is then followed by a comprehensive elucidation of the concept of equivalence from the standpoints of a number of different translation theories. The paper illustrates how in all translation theories, even in the ones entirely denying the prominence of equivalence, a particular translational feature receives superlative emphasis and its equivalent interlingual transfer comes to be the primary concern and the theoretical axis of that theory. Thus, equivalence is rendered as a fundamental characteristic of adequate translation that virtually no translation theory, all forming a translation value by prioritizing this or the other feature, can escape.

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ
ՀԵՆՔԸ**

**ԳՈՒՐԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՂԻԿՅԱՆ**

Հիմնաբառեր՝ թարգմանություն, թարգմանության որակ, համարժեքություն, թարգմանության որակի գնահատում, թարգմանության որակի գնահատման մոդել, թարգմանության գործընթաց, նորմ, թարգմանական նորմեր, թարգմանչի վարք, թարգմանական ռազմավարություն, բացահայտ թարգմանություն, ոչ բացահայտ թարգմանություն, թարգմանական սխալ

Թարգմանության որակը պայմանավորող գործոնները բազմաթիվ են և բազմաբնույթ: Թարգմանության՝ որպես արդյունքի որակը, որի առանցքը համարժեքության ապահովումն է, անքակտելիորեն կապված է թարգմանության գործընթացի, թարգմանչի դերի և գործառույթի, վերջինիս կողմից որդեգրած թարգմանական ռազմավարության, թարգմանական հնարների ընտրության, նրա ֆոնային գիտելիքի և մի շարք այլ գործոնների հետ, որոնց համադրությունը կանխորոշում է թարգմանության որակը և պարտադիր կերպով պետք է ուշադրության արժանանա թարգմանության որակի՝ և դրա համատեքստում նաև համարժեքության գնահատման գործում:

Եվ այսպես՝ թարգմանության ողջ գործընթացը, դրա համատեքստում նաև թարգմանչի գործունեությունն ու վարքը, ինչպես նաև թիրախ տեքստի՝ որպես թարգմանության պատշաճ արդյունքի ստացումը նախնառաջ պայմանավորված են այս ողջ գործընթացը կարգաբերող ամենատարբեր լեզվական, մշակութային, հասարակական նորմերով:

Սահմանելով նորմերը միջգիտակարգայնորեն, մասնավորապես՝ մշակութաբանական և հասարակագիտական մոտեցմամբ՝ կարելի է ասել, որ նորմերը «հասարակության անդամների համար սահմանված հասարակական վարքի կաղապարներ են: Եթե մշակութային նորմը խախտվում է, անհատը հասարակայնորեն պատժվում է իր իսկ հասարակության սպասելիքները չարդարացնելու համար» (Rogers and

Steinfatt 1999: 85): Հետևաբար՝ վարքը կարող է «նորմալ» համարվել, եթե այն ցուցաբերվում է որոշակի նորմի սահմաններում:

Ինչպես նշում է Շեֆները, «նորմերն ի ցույց են դնում հասարակական ճշգրտության և պատշաճության երևույթները, այսինքն՝ այն ամենը, ինչն այդ պահին որոշակի համայնքի կողմից ընդունվում է որպես ճիշտ և պատշաճ»: Ավելին՝ նորմերը վերջնականորեն ամրագրված չեն, այլ ժամանակի ընթացքում կարող են փոփոխության ենթարկվել: «Դրանք սուբյեկտների միջև հարաբերություններում գործում են որպես ճիշտ և պատշաճ վարքի մոդելներ՝ այդպիսով կանոնակարգելով հասարակական վարքի հետ կապված ակնկալիքները (Schäffner 2010: 237): Նա շեշտում է, որ լեզվական համարժեքության վրա հիմնված մոտեցումների դեպքում, օրինակ, թարգմանական նորմերը հարկադրում են առավելապես լեզվաբանական համարժեքություն ու ճշգրտություն՝ հետևաբար, սույն նորմատիվ սահմանագծի շրջանակներում թարգմանչից ակնկալվում է ապահովել լեզվաբանորեն համարժեք և տեքստայնորեն պատշաճ թարգմանություն:

Ամփոփելով կարելի է ասել, որ նորմը որոշակի հասարակական-մշակութային համատեքստում գործող օրինաչափությունների շրջանակ է: Տարբեր թարգմանական մշակույթներում և հանրություններում որոշակի նորմեր կառավարում և կանխորոշում են տվյալ ժամանակահատվածում դրսևորվող թարգմանական միտումները: Թարգմանության գործընթացում լեզվական միջոցների ընտրությունը, ինչպես նաև աղբյուր և թիրախ տեքստերի միջև լեզվամշակութային փոխհարաբերությունը նույնպես սահմանվում և կանխորոշվում են նորմերի համաձայն:

Թարգմանչի կողմից լեզվական միջոցների ընտրությունը, կամ այլ կերպ ասած՝ թարգմանչի վարքն, օրինակ, մեծապես պայմանավորված է աղբյուր և թիրախ մշակույթների լեզվական նորմերով, որոնք էլ պայմանավորում են թարգմանության ողջ գործընթացը. աղբյուր տեքստը արձարձում է աղբյուր մշակույթում գործող լեզվական նորմերը, սրանք թարգմանության գործընթացում հակադրվում են թիրախ լեզվամշակույթում առկա լեզվական նորմերին, իսկ այս հակադրության սրությունն էլ որոշում է թարգմանության ընթացքում թարգմանչի լեզվական վարքը:

Թարգմանչի վարքը մեծապես պայմանավորված է վերջինիս որդեգրած ընդհանուր թարգմանական ռազմավարությամբ, որն էլ իր հերթին կարգաբերվում և սահմանվում է առկա և գործող նորմերի համաձայն: Հիմնվելով տարբեր հանգամանքների վրա, ինչպիսիք են,

օրինակ՝ տեքստի «սկոպոր», հաղորդակցական նպատակը, հասցեագրվող լսարանի պահանջներն ու յուրահատկությունները, և որ ամենակարևորն է՝ տեքստի հիմնական արժեքը, որը պետք է պահպանվի թարգմանության ընթացքում, թարգմանիչը որդեգրում է որոշակի ռազմավարություն, որն էլ պայմանավորում է թարգմանության համար լեզվական միավորների ընտրությունը (այն է՝ թարգմանչի լեզվական վարքը):

Թարգմանական ռազմավարության բավականին ընդգրկուն դիտարկում է ներկայացնում Սունը, որը նշում է, որ ««թարգմանական ռազմավարություն» հասկացությունը շատ հաճախ նույնացվել է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են թարգմանական հնարը, մեթոդը, տեխնիկան, գործելաոճը, մոտեցումը և այլն»: Նա շարունակում է՝ ասելով, որ չնայած եզրուֆաբանական անհստակությանը, տեսաբանների կողմից ընդունված երկու հիմնական նախատիպային ռազմավարությունները բառացի (literal) և ազատ (free) թարգմանություններն են, որոնցից առաջինը «կենտրոնանում է բառային մակարդակի վրա, այնինչ մյուսը դուրս է գալիս բառային մակարդակից և կարևորում է այնպիսի տեքստի ստեղծումը, որը բնական կինչի թիրախ լեզվով»: Նա նշում է նաև, որ այս երկու ռազմավարությունները տարբեր տեսաբանների կողմից ներկայացվել են տարբեր հակադրությունների շրջանակներում, օրինակ՝ ուղիղ և անուղղակի թարգմանություն (direct and oblique translation (Vinay & Darbelnet)), իմաստային թարգմանություն և հաղորդակցական թարգմանություն (semantic and communicative translation (Newmark)), օտարացում և տեղայնացում (foreignization and domestication (Venuti)), բացահայտ կամ քողարկված թարգմանություն (overt and covert translation (House)) և այլն (Sun 2012: 1):

Վերոնշյալ հակադրություններից պարզ է դառնում, որ տեքստի բովանդակությունը և ձևային (լեզվական) արտահայտությունը վերջինիս այն երկու հիմնական արժեքային բևեռներն են, որոնցից մեկը կամ մյուսը պետք է առավելապես համարժեքորեն փոխադրվի թիրախ տեքստ: Սա, իհարկե, չի նշանակում, որ մի տիրույթի աննահանջ փոխադրումը կարող է հանգեցնել թարգմանության մեջ մյուսի կատարյալ կորստի: Թարգմանչի ընդհանրական նպատակն, ամեն դեպքում, տեքստի՝ որպես մեկ բովանդակային և լեզվական միավորի համարժեք վերարտադրումն է թիրախ լեզվամշակույթում: Հետևաբար, որոշակի համարժեքությունն անխուսափելի է: (Փիմը սա անվանում է «բնական համարժեքություն» (Pym 2010)): Սակայն թարգմանության կատարման բուն նպատակից,

աղբյուր տեքստի ենթադրած պահանջներից, և մի շարք այլ հանգամանքներից ելնելով՝ թարգմանիչն առաջնայնություն է տալիս երկու տիրույթներից մեկին՝ որպես ռազմավարություն որդեգրելով դրա համարժեք փոխադրումը: Ընտրված ռազմավարությունն էլ կկանխորոշի, թե ինչ հարաբերության մեջ կգտնվի թարգմանվածքն աղբյուր տեքստի հետ, և թե ինչ գործառույթ կամ դեր կիրականացնի թիրախ տեքստը թիրախ լեզվամշակույթում:

Այս կարևոր դերակատարությունների հիման վրա էլ առանձնացվում է երկու հիմնական տիպի թարգմանություն՝ բացահայտ թարգմանություն (overt translation) և ոչ բացահայտ կամ քողարկված թարգմանություն (covert transation) (House 1981, 1997, 2010, 2015): Բացահայտ թարգմանությունը, Հաուզի սահմանմամբ, «ակնհայտորեն որպես թարգմանություն որակվողն է: Բացահայտ թարգմանության դեպքում լեզուն կարող է միախառնված լինել բնագրից վերցրած օտար միավորներով, որը կարելի է կոչել «ներթափանցում»: Բացահայտ թարգմանությունը ներդրված է մի նոր խոսքային իրադարձության մեջ՝ թիրախ մշակույթի միջակայքում»: Եվ «այս դեպքում գործառույթային համարժեքություն ձեռք է բերվում միայն երկրորդական մակարդակում, որը բնույթով անմիջական և առաջնային համարժեքություն չէ»: Նա շարունակում է՝ ասելով, որ «Իսկական մշակութային փոխադրում տեղի է ունենում իրադրությունների շփման արդյունքում, որի ժամանակ աղբյուր լեզվամշակույթի ազդեցության ներքո տեղի է ունենում շեղում թիրախ լեզվամշակույթի նորմերից: Լեզվական-մշակութային փոխադրումը շատ հաճախ աչքի է ընկնում թարգմանության՝ թիրախ լեզվի նորմերից նկատելի շեղմամբ (House 2010: 245):

Պատկերը բոլորովին այլ է ոչ բացահայտ թարգմանության դեպքում: Թիրախ լեզվամշակույթում այն ունի երկրորդ բնագրի կարգավիճակ: «Թարգմանությունը համարվում է ոչ բացահայտ, երբ գործաբանորեն չի ճանաչվում որպես թարգմանություն, այլ ընդունվում է որպես ինքնուրույնաբար ստեղծված միավոր: Այս դեպքում կարելի է ասել, որ բնագիրն ու վերջինիս թարգմանությունը իրենց արտահայտման լեզուներում մեկը մյուսից աննշան կերպով են միայն տարբերվում»: Այս տիպի թարգմանությունների թվին են պատկանում հիմնականում գիտական և լրագրողական տեքստերի, ուղեցույցերի, շահագործման ձեռնարկների թարգմանությունը և այլն: Ոչ բացահայտ թարգմանությունը բավականին բնականորեն է ընդունվում թիրախ լեզվի լեզվամշակույթում՝

առանց բնագրի խոսույթային առանձնահատկությունների ակտիվացման (House 2010: 245):

Թարգմանական ռազմավարության և թարգմանական արդյունքի միջև կապը խիստ էական է և որոշիչ այն պատճառով, որ թարգմանության համար ընտրված ռազմավարությունից շեղումը հանգեցնում է լեզվագործաբանորեն անհամասեռ և անհամամասն թիրախ տեքստի: Բանն այն է, որ թարգմանչի կողմից որդեգրած ռազմավարությունն էլ հենց որոշում է թարգմանչի լեզվական վարքը թարգմանության ողջ գործընթացում: Թարգմանության ընթացքում թարգմանիչն, ըստ էության, գործարկում է մի շարք թարգմանական հնարներ (procedures, techniques), որոնց միջոցով աղբյուր տեքստը ենթարկվում է թիրախ տեքստ լեզվական փոխադրման: Թարգմանության ընթացքում որդեգրած թարգմանական ռազմավարությունից շեղումը հանգեցնում է հնարների սխալ գործածության, սա էլ իր հերթին՝ թիրախ տեքստում թարգմանական սխալների առաջացման:

Սխալը, ինչպես նկատում է Հանսենը, սովորաբար ենթադրում է, որ «ինչ-որ բան սխալ է արված»: Նա նշում է, որ «եթե թարգմանությունը աղբյուր տեքստի հիման վրա թիրախ տեքստի ստացումն է, ապա թարգմանական սխալը ծագում է երկու տեքստերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունից»: «Տեքստային սխալները՝ անկախ նրանից, թե որ տեքստում են դրանք տեղ գտել՝ բնագրում, թե թարգմանվածքում, կարող են լինել ոճական, գործաբանական, ուղղագրական, իմաստային և այլն» (Hansen 2010: 385): Այնինչ թարգմանական սխալն այն սխալն է, որը պայմանավորված է աղբյուր տեքստի թյուրըմբռնմամբ, ինչի արդյունքում չի հաղորդվում այն իմաստը, որն արտահայտված է աղբյուր տեքստում, կամ եզրույթաբանական սխալները և այլն: Դրանց շարքում Հանսենն առանձնացնում է մշակութային, գործաբանական, տեքստային-լեզվաբանական, իմաստային, շարահյուսական, ոճական սխալները, որոնք կարող են ծագել աղբյուր տեքստի լեզվական փոխադրման, այսինքն՝ թիրախ տեքստի ստացման արդյունքում:

Նա արդարացիորեն նշում է նաև, որ թարգմանական սխալի մեկնությունը կախված է այն թարգմանական տեսությունից և նորմերից, որոնց շրջանակներում էլ դիտարկվում է թարգմանվածքը: «Սկոպոսի» տեսության, կամ մյուս ֆունկցիոնալիստական տեսությունների տեսանկյունից, օրինակ, թարգմանական սխալ կարող է համարվել թիրախ տեքստի կողմից աղբյուր տեքստի՝ աղբյուր մշակույթում

իրականացրած գործառույթի չպահպանումը: Նմանապես, համարժեքության, հատկապես լեզվաբանական համարժեքության վրա հիմնված տեսությունների շրջանակներում թարգմանական սխալ կարող են համարվել լեզվական արտահայտման անհամապատասխանություններն ու հակասությունները (Hansen 2010):

Թարգմանության համեմատաբար ավելի ժամանակակից ուղղություններից մեկում՝ մեքենական թարգմանության բնագավառում, թարգմանական սխալներ կարող են համարվել լեզվական, ոճական, իմաստային, գործաբանական, քերականական, ուղղագրական, շարահյուսական և այլ սխալները: Մաթուզակին մեքենական թարգմանության ոլորտում հանդիպող թարգմանական սխալների բավականին ընդհանրական դասակարգում է ներկայացնում՝ դիտարկելով սխալ բառերը, սխալ շարադասությունը, բացակայող բառերը, ոչ ճիշտ քերականական և իմաստային կառույցները որպես բնորոշ, առավել հաճախ տեղ գտնող թարգմանական սխալներ (Matsuzaki et al 2016: 2772):

Մենք հակված ենք թարգմանական համարելու այն սխալները, որոնք ուղղակիորեն կապված են աղբյուր և թիրախ տեքստերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերության հետ, այսինքն՝ այն մշակութային, գործաբանական, և տեքստային-լեզվաբանական սխալները, որոնք ի հայտ են գալիս իմաստի փոխադրման գործընթացում, այլ ոչ թե տեքստում հանդիպող այն լեզվաոճական ուղղագրական սխալները, որոնք հատուկ են թիրախ լեզվամշակույթին և առնչություն չունեն թարգմանության բուն գործընթացի հետ: Թարգմանական սխալները համարելով «թարգմանական բացեր», Գասպարյանը նշում է, որ դրանք «...թարգմանական տեքստում տեղ գտած անհասկանալի, անընդունելի, անարդյունավետ հատվածներն են, որոնք հնարավոր է բացահայտել ու արժևորել՝ տեքստը դիտարկելով հասկանալի/անհասկանալի, ճշմարիտ/սխալ, արդյունավետ/անարդյունավետ երկատումների միջոցով» (Գասպարյան 2008: 78-79):

Հետևաբար, կարևոր է նշել, որ թարգմանական սխալները ոչ այնքան ի ցույց են դնում բնագրի և թարգմանության միջև գոյություն ունեցող լեզվական արտահայտման տարբերությունները, այլ մատնանշում են բովանդակային, իմաստային և հաղորդակցական անհամարժեքություններն ու շեղումները, որոնք տեղ են գտել թիրախ տեքստում: Հետևաբար, թարգմանական սխալների բացահայտումն ու

բազմակողմանի քննությունը պետք է լինի թարգմանության վերլուծության և գնահատման անբաժանելի մաս:

Թարգմանության որակի գնահատման համար առաջադրվել են ամենատարբեր մոտեցումներ և մոդելներ, սակայն ինչպես համարժեքության երևույթի մասին դատողությունների և տեսությունների դեպքում, այստեղ նույնպես դրանք հատվածական են և կրկին հենվում են մի որևէ եզակի առանձնահատկության կամ հայեցակերպի վրա: Ինչպես նշում է Տի Թույր, «թարգմանությունների (որպես արդյունքի) և թարգմանության (որպես գործընթացի) մասին քննարկումներում որակի հարցը միշտ եղել է գլխավոր առաջնահերթություն: Շարունակաբար ասվել է, որ թարգմանական բացառապես բոլոր գործողությունների հիմնանպատակն է ստեղծել լավ թարգմանություն կամ վերարտադրել լավ թիրախ տեքստ»: Շարունակելով միտքը՝ նա նշում է, որ «...կախված գնահատման նպատակից և որակի գնահատման տեսական շրջանակից՝ կիրառվող չափանիշները կարող են տարբեր լինել» (Thi Thuy 2013: 56): Հատկանշական է նրա կողմից Հաուզի սահմանման մեջբերումը, որի համաձայն «թարգմանության որակի գնահատումը ենթադրում է թարգմանության մի ամբողջ տեսություն: Իսկ թարգմանության հետ կապված տարբեր պատկերացումները հանգեցնում են թարգմանության որակի վերաբերյալ տարբեր պատկերացումների՝ առաջ բերելով գնահատման ամենատարբեր մեթոդներ (House 1997 in Schaffner 1997:1, 56-57): Չնայած այն հանգամանքին, որ սկսած ամենահին՝ սուբյեկտիվ գնահատողական չափանիշներից (Թայթեր, Դրայդեն) մինչև ամենանոր գնահատման մոդելները (օր.՝ Toury 1995; Nord 2015; Newmark 1988; Steiner 1998; House 2015, Volkova 2014 և այլն), գնահատման չափանիշները ենթարկվել են մեթոդաբանական համալրման և հստակեցման, մի խնդիր, այնուամենայնիվ, կարծես թե մնում է անհաղթահարելի:

Բանն այն է, որ թարգմանությունը, ինչպես և լեզուն ընդհանրապես, ճշգրիտ երևույթ չէ, (ինչպես, օրինակ՝ մաթեմատիկական հաշվարկները կամ ֆիզիկայի օրենքները), և ստանալ մի այնպիսի գնահատման մոդել, որը գործարկելի կլինի բացառապես բոլոր տեսակի տեքստերի համար, խիստ անհնար է թվում: Հենց թարգմանության ոչ աքսիոմատիկ բնույթի պատճառով էլ դժվար է առաջադրել բացարձակ, տարածամանակայնորեն կիրառելի հրահանգներ կամ որակի գնահատման չափանիշներ, որոնք կիրառական և պատշաճ կլինեն անխտիր բոլոր տիպի տեքստերի համար և առանց բացառությունների

կանդրադառնան բոլոր տեքստերին հատուկ բոլոր լեզվագործաբանական առանձնահատկություններին:

Կարևոր է նշել նաև, որ լեզվական միավորի թարգմանությունը կիրառական է միայն որոշակի ժամանահատվածի սահմաններում, և մշակութային զարգացումների և կանոնակարգային փոփոխությունների արդյունքում թարգմանությունը կարող է ժամանակի ընթացքում հնանալ և դուրս գալ գործածությունից: Հետևաբար, թարգմանության գնահատման մոդելը, որը հիմնվում է միայն մեկ չափանիշի վրա, չի կարող համարվել բավարար և ամբողջական և ապահովել թարգմանվածքի օբյեկտիվ ու հիմնավորված գնահատումը: Այդ իսկ պատճառով թարգմանության միջգիտակարգային և բազմակողմանի քննությունը թարգմանության հետազոտման մեթոդաբանության և վերջինիս որակի գնահատման հիմնայունն է: Վերլուծության նման մոտեցումը պարտադիր նախապայման է ցանկացած տիպի տեքստի նկարագրական վերլուծության համար, սակայն ընտրված միջգիտակարգային հարաբերություններն ու վերլուծական տեսանկյունները կարող են էականորեն տարբերվել՝ կախված տեքստի ժանրից և տիպից, լեզվական յուրահատկություններից, ինչպես նաև գործաբանական առանձնահատկություններից: Իրավական տեքստի թարգմանության առնչությունը եզրութաբանության հետ, անշուշտ, ավելի ակնհայտ և էական է, քան, օրինակ՝ գրական տեքստինը: Նմանապես՝ լեզվամշակութային տեսանկյունից խիստ յուրահատուկ գրական տեքստի թարգմանությունն, իհարկե, առավել մեծ առնչություն ունի թարգմանական սխալների և նորմերի հետ, քան օրինակ՝ գիտական տեքստի թարգմանությունը, որը լի է եզրույթներով: Հետևաբար, տեքստի թարգմանության վերլուծության գործում պետք է դիտարկվեն նաև վերջինիս լեզվագործաբանական առանձնահատկությունները, այսինքն՝ թե մարդկային գործունեության ո՞ր տիրույթի կամ տիրույթների հետ է այն առնչվում և թե լեզվական արտահայտման ի՞նչ յուրահատկություններ է ենթադրում նման խոսութային/ժանրային պատկանելությունը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ տեքստի՝ որպես մեկ ամբողջության փոխադրելի արժեքը ձևավորող առանձնահատկությունները բազմաթիվ են և բազմաբնույթ: Ըստ որում՝ դրանք կարող են էապես տարբեր լինել յուրաքանչյուր տեքստի համար: Նույնպես և թարգմանության որակը, որը սկզբունքորեն կապված է համարժեքության ապահովման հետ, պայմանավորված է բազմաքանակ և տարաբնույթ գործոններով: Եվ եթե թարգմանական արժեքի ձևավորման, ինչպես և որակի ապահովման

գործում դեր են խաղում նմանատիպ մեծ թվով գործոններ, ապա վերջինիս գնահատման հարցում ևս այդ գործոններից յուրաքանչյուրի դիտարկումը պետք է լինի պարտադիր նախապայման: Հիմնվելով այն հանգամանքի վրա, որ թարգմանության որակի գնահատման երբևէ առաջադրված մոդելները կենտրոնանում են միայն որևէ կոնկրետ մոտեցման վրա և հաշվի են առնում վերջինիս մի շարք առանձնահատկություններ և հայեցակերպեր միայն, կարելի է ասել, որ թարգմանության ողջ գործընթացի, ինչպես նաև բնագրի և թարգմանվածքի բովանդակային և լեզվական արտահայտման տիրույթների, ինչպես և վերջիններիս հետ կապված այլևայլ գործոնների (օր՝ բնագիր և թարգմանված տեքստի հաղորդակցական գործառույթը, այն լեզվամշակույթները, որոնցում դրանք առկայանում են, լսարանի հասարակական-մշակութային առանձնահատկությունները և այլն) նկարագրական-զուգահեռական վերլուծությունը միայն կարող է երաշխավորել թարգմանության որակի հնարավորինս օբյեկտիվ և ընդգրկուն սահմանումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այունց, Ա. Բնագրի և թարգմանության զուգահեռական քննության դերը գեղարվեստական ստեղծագործության վերլուծության գործընթացում, «Թարգմանությունը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջմշակութային փոխներթափանցման միջոց» ժողովածուում, Երևան, ԵՊՀ Հրատարակչություն, 2014
2. Գասպարյան, Ս. Գասպարյան Լ., Թարգմանական «բաց», անփութություն թե միտում, Օտար լեզուները Հայաստանում N3-4, «Կրթության ազգային ինստիտուտ» հրատ., Երևան, 2008
3. House, J., A Model for Translation Quality Assessment. (2nd Edition), Tübingen: Narr, 1981
4. House, J., Overt and Covert Translation. In Gambier, Yv. and van, Doorslaer, Luc, (eds.) Handbook of Translation Studies, Volume 1. Philadelphia, PA, USA: John Benjamins Publishing Company, 2010
5. House, J., Translation Quality Assessment. A model revisited. Tübingen, Gunter Narr, 1997
6. House, J., Translation Quality Assessment. Past and Present. Routledge, Abingdon, 2015

7. Matsuzaki, T., Fujita, A., Todo, N., H. Arai, N., Translation Errors and Incomprehensibility: A case Study Using Machine-Translated Second Language Proficiency Tests. In in Proceedings of the Tenth International Conference on Language Resources and Evaluation, Portorož, Slovenia, 2016
8. Newmark, P., A Textbook of Translation. New York and London, Prentice- Hall, 1988
9. Nord, C., Text Analysis in Translation: Theory, Methodology, and Didactic Application of a Model for Translation-oriented Text Analysis., Rodopi, Amsterdam- Atlanta, 2015
10. Rogers, E. and Steinfatt, T., Intercultural Communication, USA, Waveland Press Inc., 1999
11. Schäffner, C., From 'Good' to 'Functionally Appropriate': Assessing Translation Quality, Current Issues in Language & Society, Vol. 4, No 1, 1997
12. Schäffner, C., Norms of Translation. In Handbook of Translation Studies, Volume 1. Philadelphia, PA, USA: John Benjamins Publishing Company, 2010
13. Steiner, G., After Babel: Aspects of Language and Translation, Oxford University Press, 1998
14. Sun, Y., The Shifting Identity of Translation Studies in China. In Intercultural Communication Studies XXI: 2, China, Lingnan University, Hong Kong S.A.R., 2012
15. Thi Thuy, P., House's functional-pragmatic model of translation assessment and implications for evaluating English-Vietnamese translation quality. In VNU Journal of Foreign Studies, Vol. 29, No. 1, Vietnam, 2013
16. Toury, G., Descriptive Translation Studies and Beyond. Amsterdam and Philadelphia: John Benjamins, 1995
17. Volkova, T., Translation Model, Translation Analysis, Translation Strategy: an Integrated Methodology in Procedia - Social and Behavioral Sciences 154, 2014

ГУРГЕН КАРАПЕТАН, КРИСТИНЭ СОГИКЯН - МЕТОДОЛОГИЧЕСКАЯ БАЗА ДЛЯ ОЦЕНКИ КАЧЕСТВА ПЕРЕВОДА

Цель этой статьи систематическое иллюстрирование кардинальных факторов, определяющих качество перевода. Особое внимание уделяется таким важным лингвистическим и внелингвистическим аспектам как переводческие нормы, в том числе их определяющему влиянию на процесс перевода и переводческую манеру, а так же на сам перевод как результат вышеизложенных явлений, основным свойствам и определению переводческих ошибок и неэквивалентностей, открытому и скрытому типов перевода, и.т.д. На этой основе в работе предлагается стратегически всеохватывающая методологическая база для оценки качества перевода.

GURGEN KARAPETYAN, KRISTINE SOGHIKYAN - A METHODOLOGICAL BASE FOR TRANSLATION QUALITY ASSESSMENT

The intent of this paper is to systematically illustrate the different pivotal factors determining the quality of translation, putting profound emphasis on such critical aspects as translation norms, their dooming effect on the process of translation and the translator's behavior, the translation as the outcome of the latter, and the nature and the identification of translation errors and inequivalences, explicating the interconnection between all of the above mentioned factors and suggesting a strategically inclusive methodological base for translation quality assessment.

**«ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ԸՆԴԳՐԿՈՒՄԸ**

ՖՐԻԴԱ ՀԱԿՈՔՅԱԼ

Հիմնաբառեր՝ կորպուսային լեզվաբանություն, լեզվական կորպուս, տեքստային հենք, ԱՐԵՎԱԿ, Արևելահայերենի ազգային կորպուս, ընդհանրական կորպուս, մոնիտորային կորպուս, պատմական կորպուս

Օրինաչափ է, որ լեզուն իր գոյության ընթացքում շարունակ փոփոխությունների է ենթարկվում, և ժամանակի ընթացքում դրա ուսումնասիրության նոր եղանակներ են ի հայտ գալիս, ավելին՝ երբեմն հենց լեզվի իրացումը խոսքում է միջոց դառնում լեզվական իրողությունների ուսումնասիրության, նկարագրության ու ներկայացման համար: Խոսքային օրինակների միջոցով լեզվական երևույթների քննության եղանակներից մեկը *կորպուսային լեզվաբանությունն* է՝ ժամանակակից լեզվաբանության ամենաարագ զարգացող երիտասարդ ուղղություններից մեկը: Կորպուսային լեզվաբանության բնագավառում ձեռք բերված մեծ հաջողություններն առավելապես պայմանավորված են լեզվաբանության մեջ համակարգչային տեխնիկայի լայն կիրառությամբ և այնպիսի ծրագրերի ստեղծմամբ, որոնց միջոցով համակողմանիորեն ուսումնասիրվում և ներկայացվում է լեզուն:

Հայ լեզվաբանության մեջ լեզվական կորպուս ստեղծելու ուղղությամբ տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն *Արևելահայերենի ազգային կորպուսի՝ ԱՐԵՎԱԿ-ի*⁵⁸ ստեղծմամբ: Այն ստեղծվել է տարբեր հաստատություններ ներկայացնող մի խումբ լեզվաբանների և ծրագրավորողների մասնակցությամբ՝ Կորպուս Թեքնոլոջիս (Corpus Technologies), Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտ, Մոսկվայի պետական համալսարան, Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան, Երևանի պետական լեզվաբանական համալսարան, Հայաստանի գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտ: ԱՐԵՎԱԿ-ի ստեղծումը, ներառյալ գրավոր և բանավոր խոսքի հավաքումը,

⁵⁸ Տե՛ս www.eanc.net/EANC/search/?interface_language=am

Ֆինանսավորվել է Կորպուս Թեքնոլոջիս (ԿԹ) ընկերության կողմից, որի նպատակն է լեզվաբանական ծրագրային ապահովումը⁵⁹:

Անշուշտ, սույն հոդվածում մեր նպատակը ոչ թե ԱՐԵՎԱԿ-ը նկարագրել-ներկայացնելն է, այլ կորպուսային լեզվաբանության զարգացման արդի փուլում այն մյուս կորպուսների համեմատությամբ դիտելը՝ առանձնացնելով կիրառության այն ոլորտները, որոնցում, այս կորպուսն օգտագործելով, կարելի է հասնել զգալի հաջողությունների: Կորպուսը որակական զարգացման նոր մակարդակի հասցնելու նպատակով արվում են նաև առաջարկություններ ու դիտողություններ: Նախ տեսնենք, թե լեզվական կորպուսները բնութագրական ինչ հատկանիշներ ունեն, և ԱՐԵՎԱԿ-ը ինչ չափով է համապատասխանում դրանց:

Եթե լեզվական կորպուս ասելով հասկանում ենք տարբեր բնույթի տեքստերի ամբողջական հավաքածու, ապա պայմանականորեն մեկից ավելի ցանկացած տեքստ կարող է կորպուս համարվել: Սակայն կան ընդհանրական մի շարք հատկանիշներ, որոնցով բնութագրվում են կորպուսներն ընդհանրապես: Այդ հատկանիշներից ամենահիմնականն ու թերևս գլխավորն այն է, որ տեքստային հենքում եղած տեքստերի միջոցով պետք է ներկայացվի լեզուն: Հետևաբար, տեքստային հենքը պետք է կազմել այնպես, որ, դրանում եղած տեքստերն ուսումնասիրելով, կարողանանանք քննել լեզվական բոլոր իրողությունները: Հենքում եղած տեքստերը սկզբունքորեն կարելի է երկու եղանակով ուսումնասիրել: Առաջին դեպքում կարող ենք քննել բոլոր տեքստերն առանձին-առանձին: Միանգամից նկատենք, որ այս սկզբունքը գործնականում կիրառելի չէ, որովհետև մեծ ցանկության դեպքում անգամ կարելի է միայն մեռած լեզուների տեքստային բոլոր օրինակները քննել, իսկ կենդանի լեզվում տեքստերն անթիվ են: Նաև որևէ կերպ հնարավոր չէ կազմել տեքստային ամբողջական հենք. մի կողմից՝ կարող են դուրս մնալ լեզվում հազվադեպ գործածվող օրինակները, մյուս կողմից՝ ուշադրությունը բևեռելով միայն սակավ գործածական օրինակների վրա՝ կարող են հենքից դուրս մնալ նույնիսկ հաճախադեպ գործածական լեզվական օրինակները: Ստացվում է այնպես, որ ամեն դեպքում մենք կարող ենք քննել միայն սահմանափակ թվով տեքստային օրինակներ, իսկ թե ինչ չափով հնարավոր կլինի վեր հանել լեզվական բոլոր իրողությունները դրանց քննությունից, դժվար է ասել:

⁵⁹Տե՛ս <http://www.eanc.net/am/grant/>

Այնուամենայնիվ, այսօրվա համակարգչային տեխնիկան հնարավորություն է տալիս ստեղծել չափազանց հարուստ տեքստային այնպիսի հենքեր, որոնք ներառում են հազարավոր տեքստեր՝ միլիոնավոր բառերով: Տեքստերի այդ վիթխարի քանակը հնարավորությունն է տալիս ավելի մեծ թվով լեզվական երևույթների հետ գործ ունենալ. դրանք համապարփակ և ամբողջական կերպով ներկայացնում են լեզվական իրողությունների հիմնական մասը: Ուստի ավելի կարևոր է ոչ թե տեքստերի քանակական շատությունը, այլ տարաբնույթ լինելն ու լեզվական հնարավորինս մեծ թվով տարբեր օրինակներ ցույց տալը: Հետևաբար, լեզվական կորպուսի առաջին և բնութագրական ամենահիմնական հատկանիշը *ներկայացուցականությունն է՝* մեծաթիվ օրինակների միջոցով լեզվական երևույթներ ու իրողությունները ցույց տալը⁶⁰:

Այս առումով ԱՐԵՎԱԿ-ի տեքստային հենքը բավական հարուստ է. 2009 թ. մարտի դրությամբ ընդգրկում է մոտ 110 մլն. բառամթերք: Դրանից բացի՝ ի տարբերություն առավել լայն տարածում գտած այնպիսի կորպուսների, ինչպիսիք են *Ռուսերենի ազգային կորպուսը* կամ *Բրիտանական ազգային կորպուսը*, որոնցում տեքստերը ծավալի հետ կապված որոշակի սահմանափակումներից ելնելով են ընտրված, ԱՐԵՎԱԿ-ը պարունակում է հնարավորինս շատ մատչելի արևելահայերեն գեղարվեստական, գիտական և բանավոր տեքստեր: Այնուամենայնիվ, ժանրային հավասարակշռությունը պահպանելու նպատակով որոշ ժանրերի տեքստեր, ինչպիսիք են, օրինակ, մամուլի և օրենսդրական տեքստերը, որոնք հասանելի են համացանցում, ընդգրկված են սահմանափակ քանակով: ԱՐԵՎԱԿ-ի գրավոր խոսքի ենթակորպուսը պարունակում է 836 արձակ և չափածո գեղարվեստական տեքստեր (ներառյալ 206 թարգմանված տեքստեր), 7858 մամուլի համարներ, ինչպես նաև գիտական և պաշտոնական տեքստերի խոշոր հավաքածու⁶¹:

Ժամանակագրական առումով ԱՐԵՎԱԿ-ում տարբեր ժանրերի տեքստերը հավասարապես բաշխված չեն: 19-րդ դարի տեքստերը հիմնականում ընդգրկում են արձակ և չափածո գեղարվեստական

⁶⁰ Տե՛ս Հակոբյան Ֆ., Հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, գեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 171:

⁶¹ Տե՛ս <http://www.eanc.net/am/composition/>:

գրականության տեքստեր: Հայաստանի ազգային գրադարանի հետ համատեղ նախագծի շրջանակներում ավելացվել են մեծ թվով հին պարբերականների տեքստեր: Քանակական առումով մամուլի ենթակորպուսի հիմնական մասը բեռնվել է համացանցից, այդ իսկ պատճառով մեծ մասամբ ներկայացված է ժամանակակից մամուլի լեզուն: Մամուլի նման բաշխման արդյունքում գեղարվեստական գրականության և մամուլի ժանրերի հարաբերությունը վերջին տասնամյակների համար զգալի տարբերվում է կորպուսի մյուս մասերից: Ոչ գեղարվեստական տեքստերը ևս բաշխված են անհամաչափ: Գիտական տեքստերի հիմնական մասը պատկանում է խորհրդային ժամանակաշրջանին (հիմնականում 1960-ականներին և 70-ականներին), մինչդեռ որոշ օրենսդրական տեքստեր բեռնվել են համացանցից և ներկայացնում են վերջին տասնամյակների լեզուն: ԱՐԵՎԱԿ-ի կարևորագույն բաժիններից է արևելահայերեն բանավոր խոսքի ենթակորպուսը (3 մլն. բառանիշ), որն ամբողջովին մշակվել է ԱՐԵՎԱԿ-ի ջանքերով և ներկայացված է սպոնտան երկխոսություններով, պոլիլոգներով, նպատակաուղղված (task-oriented) հարցազրույցներով, հեռուստատեսային թոք-շոուններով, կինոնկարներով և այլ ձայնագրություններով: Կորպուսի վերջին տարբերակում ավելացված էլեկտրոնային հաղորդակցության տեքստերը, որոնք ընդգրկվել են բանավոր խոսքի ենթակորպուսում, իրականում միջանկյալ դիրք են գրավում բանավոր և գրավոր խոսքի միջև⁶²: Այսպիսով՝ կարելի է ասել, որ ԱՐԵՎԱԿ-ը հիմնականում համապատասխանում է կորպուսների ամենաբնութագրական հատկանիշին՝ *ներկայացուցչականությանը*:

Չնայած հսկայական թվով տեքստային օրինակներ պարունակելուն՝ տեքստային հենքի բնութագրական հատկանիշներից է նաև դրա՝ *սահմանափակ ծավալ* ունենալը, սահմանափակ թվով լեզվական օրինակներ պարունակելն ու ներկայացնելը: ԱՐԵՎԱԿ-ը նույնպես սահմանափակ ծավալ ունի. ինչպես նշեցինք, 2009թ. մարտի դրությամբ ընդգրկում է մոտ 110 մլն. բառամթերք, իսկ ժամանակագրական առումով ներկայացնում է 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2009թ. ընկած տեքստերը:

Ժամանակակից կորպուսների բնութագրական կարևոր հատկանիշներից մեկը էլեկտրոնային եղանակով հասանելի լինելն է:

⁶² Տե՛ս <http://www.eanc.net/am/composition/>

Իհարկե, նախկինում՝ մինչև լեզվաբանության մեջ համակարգչային տեխնիկայի կիրառությունը և համապատասխան ծրագրերի հասանելի լինելը, տեքստային հենքերը տպագիր եղանակով էին օգտագործվում, և դրանցից որոշները մինչև հիմա էլ հենց այդպես են օգտագործվում: Ոչ մեծ թվով տեքստային հենքեր հասանելի են թվային տարբեր սարքավորումների միջոցով (խտասկավառակների և ձայնասկավառակների վրա), որոնք հիմնականում պարունակում են խոսակցական տեքստեր (Lancaster/IBM Spoken English Corpus): Նկատենք սակայն, որ օգտագործման դյուրության և հետագա հարստացման տեսանկյունից տպագիր և ձայնային հենքերի համեմատությամբ ավելի նախընտրելի են էլեկտրոնային եղանակով հասանելի տեքստային հենքերը: ԱՐԵՎԱԿ-ը ես հասանելի է էլեկտրոնային եղանակով. դրա ծրագրային ապահովումը մշակվել է *Կորպուս Թեքնոլոջիսի* կողմից, որի առաջնային նպատակներից է կորպուսի որոնման հնարավորությունները գործածողի համար բաց և մատչելի դարձնելը: ԱՐԵՎԱԿ-ի տվյալների բազայի ծրագրային ապահովումը կազմված է հետևյալ չորս հիմնական մասերից՝ [քերականական վերլուծիչ](#), [ինդեքսատոր](#), [սպասարկիչ](#), [գործածողի ինտերֆեյս և սպասարկյու](#)⁶³: ԱՐԵՎԱԿ-ից կարելի է օգտվել՝ չգրանցվելով կամ համակարգչային որևէ ծրագիր ներբեռնելով:

Այսպիսով՝ ընդհանրացնելով կարող ենք ասել, որ կորպուսները պետք է ներկայացնեն լեզվական կառուցվածքի նկարագիրը, պարունակեն սահմանափակ թվով տեքստային օրինակներ, հասանելի լինեն էլեկտրոնային եղանակով: Արևելահայերենի ազգային կորպուսը, ինչպես տեսանք, համապատասխանում է լեզվական կորպուսների վերոնշյալ բնութագրումներին:

Կորպուսների ստեղծումը բավական բարդ և աշխատատար գործընթաց է, որը պահանջում է լեզվաբանների և ծրագրավորողների սերտ համագործակցություն: Սակայն դա ինքնանպատակ չէ, քանի որ կորպուսներն ունեն ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական մեծ նշանակություն: ԱՐԵՎԱԿ-ը ևս, ինչպես մյուս կորպուսները, կարող է փաստական հարուստ նյութ ապահովել հետազոտողի համար: Այնուամենայնիվ, դրա կիրառական հնարավորություններն առավել ընդլայնելու համար անհրաժեշտ է կորպուսում ձևային և բովանդակային զգալի փոփոխություններ

⁶³ Տե՛ս <http://www.eanc.net/am/software/>

կատարել՝ ներկայացվող տեքստերի ժամանակային ընդգրկումից սկսած՝ մինչև ծրագրային ապահովումը:

Նախ՝ ԱՐԵՎԱԿ-ը աստիճանաբար պատմական կորպուս է դառնում, քանզի դրանում ներկայացված են 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2009թ. եղած տեքստերը: Այսինքն՝ անցել է ավելի քան տասը տարի և կորպուսում որևէ նոր տեքստ չի ավելացվել, իսկ այդ տարիների ընթացքում թեպետ ոչ զգալի, այնուամենայնիվ լեզվում նկատելի փոփոխություններ կատարվել են: Ուստի անհրաժեշտ է շարունակել կորպուսը նորանոր տեքստերով հարստացնել՝ հասնելով նրան, որ սա վերածվի այսպես կոչված մոնիտորային կորպուսի. մեքենական եղանակով հարստացվի համացանցային զանազան աղբյուրներից:

Նպատակահարմար է առավել ընդլայնել ներկայացման ժամանակաշրջանը՝ այն դարձնելով *ընդհանրական* կորպուս, որում ներառված կլինեն հայերենի պատմական զարգացման տարբեր շրջաններում ստեղծված տեքստերը՝ ընդգրկելով գրաբարով, միջին հայերենով, հետո նոր միայն արևելահայերենով ու արևմտահայերենով ստեղծված տեքստեր: Հարկ է ուշադրություն դարձնել ոչ թե տեքստերի քանականան շատության, այլ բազմակողմանիության, լեզվական հնարավորինս բազմաբնույթ օրինակներ ներկայացնելու վրա: Ավելացնելով վերոնշյալ բաժինները՝ կարող ենք ամբողջ կորպուսը բաժանել ենթակորպուսների՝ ըստ հայերենի պատմական զարգացման տարբեր շրջաններն ընդգրկող տեքստերի: Ըստ այդմ՝ կունենանք գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի ու արևմտահայերենի, ինչպես նաև խոսակցական լեզվի ենթակորպուսներ⁶⁴:

Պետք է ոչ միայն նոր բաժիններ ավելացնել ԱՐԵՎԱԿ-ում, այլև եղածները կատարելագործնել: Օրինակ՝ անհրաժեշտ է զարգացնել կորպուսի պիտավորման համակարգը, որովհետև ներկայումս ԱՐԵՎԱԿ-ում իրականացվում է երեք տեսակի պիտակավորում. ա) մետատեքստային (մատենագիտական), որը կցվում է յուրաքանչյուր տեքստային միավորի, բ) բառային և ձևաբանական, որը կցվում է բառանիշերի ավելի քան 90%-ին, ինչպես նաև անգլերեն թարգմանություններ բառանիշների մոտ 85 %-ի համար, գ) կետադրության, նախադասության սահմանների, ինչպես նաև այլ օժանդակ հատկանիշների պիտակավորում⁶⁵:

⁶⁴ Տե՛ս նշվ. աշխ. էջ 173

⁶⁵ Տե՛ս <http://www.eanc.net/am/annotation/>

Ընդհանրապես, լեզվի կառուցվածքային տարբեր միավորների համար, պայմանավորված լեզվական ուսումնասիրությունների նպատակով, կան պիտակավորման տարբեր տեսակներ, ինչպես՝ հնչունական, բառագիտական, քերականական (ձևաբանական և շարահյուսական): ԱՐԵՎԱԿ-ում, ինչպես տեսանք, կիրառվում են միայն ձևաբանական պիտակներ, որոնք, ըստ հեղինակների, արտահայտում են հայերենի խոսքի մասերի քերականական բոլոր կարգերը, սակայն երբեմն չեն համապատասխանում հայերենի նորմատիվ քերականությանը: Օրինակ՝ առանձին խոսքի մաս է համարվում նախդիրը, առանձնացվում է վեց հոլով. սեռականն ու տրականը համարվում են առանձին հոլովներ, իսկ հայցականը ուղղականից չի առանձնացվում: Ածականի համեմատության աստիճանները համարվում են քերականական կարգ, ընդ որում՝ առանձնացվում է միայն գերադրական աստիճանը, բաղդատականը՝ ոչ: Բայի եղանակներից ներկայացվում են միայն երեքը՝ ըղծական, ենթակայական, հրամայական: Ենթակայական եղանակն առանձնացնելիս հեղինակները հավանաբար նկատի են ունեցել ենթադրականը: Իբրև քերականական կարգ է առանձնացվել գոյականացումը՝ իր գոյականացված, անորոշ դերբայ, հարաբերական գոյական տեսակներով: Այստեղ էլ հավանաբար նկատի են ունեցել այլ խոսքի մասերի գոյականաբար գործածությունը⁶⁶:

Անհրաժեշտ է նաև զարգացնել ԱՐԵՎԱԿ-ի ծրագրային ապահովման համակարգը: Օրինակ՝ ի տարբերություն մյուս կորպուսների, որոնցում եղած տեքստերի զգալի մասը կարելի է ներբեռնել տարբեր ձևաչափերով, ԱՐԵՎԱԿ-ն այսօր հնարավորություն չի տալիս. սա զգալիորեն սահմանափակում է դրա օգտագործման հնարավորությունները: Պետք է ստեղծել նաև համակարգչային նոր ծրագրեր՝ այս կորպուսի տեքստերն ուսումնասիրելու համար, քանի որ գործնականորեն հնարավոր չէ պատկերացնել տեքստային հենքերի հետ կապված որևէ բնույթի լեզվական աշխատանք՝ առանց համակարգչային ծրագրերի կիրառության: Շնորհիվ դրանց՝ լեզվական այն աշխատանքները, որոնց կատարման համար նախկինում երկար ժամանակ էր պահանջվում, հիմա կարելի է իրականացնել հաշված վայրկյանների ընթացքում: Թեպետ ընդհանուր առմամբ՝ տարբեր գործառնություններ են կատարում, բայց և ունեն ընդհանուր հատկանիշներ

⁶⁶http://www.eanc.net/EANC/search/frame_parts/gramselp.php?interface_language=am&search_language=armenian1&contexts_output_language=armenian1

(լեզվական տվյալների որոնման արագություն, ճշտությունը): Օրինակ՝ բոլորի միջոցով էլ կարելի է տեքստային հենքերից բառեր և արտահայտություններ որոնել, որոշել բառերի գործածության հաճախականությունը, որևէ համատեքստում գործածվելը:

ԱՐԵՎԱԿ-ի համար այսպիսի ծրագրեր դեռևս չեն ստեղծվել: Ավելին՝ այս կորպուսի մասին եղած ոչ ամբողջական պատկերացումները թույլ չեն տալիս օգտագործել այն հետազոտական աշխատանք կատարելիս: Հարկ է ընդգծել սակայն, որ, ինչպես տեսանք, ԱՐԵՎԱԿ-ն առավել զարգացնելու, ձևային և բովանդակային լուրջ փոփոխություններ կատարելու, այն հայերենի առավել ամբողջական ու համակողմանի ուսումնասիրությանը լիարժեք ծառայեցնելու խնդիր կա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Ֆ.**, Հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 170-178:

2. www.eanc.net/EANC/search/?interface_language=am

3. <http://www.eanc.net/am/grant/>

4. <http://www.eanc.net/am/composition/>

5. <http://www.eanc.net/am/software/>

6. <http://www.eanc.net/am/annotation/>

7. http://www.eanc.net/EANC/search/frame_parts/gramsel.php?interface_language=am&search_language=armenian1&contexts_output_language=armenian1

ФРИДА АКОПЯН- СТРУКТУРА И ВКЛЮЧЕНИЕ ВОСТОЧНОАРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО КОРПУСА

Цель статьи представить Восточноармянский национальный корпус (ВАНК) с его наиболее отличительными особенностями и в текущей фазе развития корпусной лингвистики сравнить ее с другими корпусами разделяя прикладные сфере, где использование корпуса может быть весьма успешным. Чтобы сделать EANC более полным, мы делаем предложения и замечания который приведет корпус на качественно новый уровень.

FRIDA HAKOBYAN- THE STRUCTURE AND INCLUSION OF THE EASTERN ARMENIAN NATIONAL CORPUS

The purpose of the article is to present the Eastern Armenian National Corpus (EANC) with its most distinctive features and in the current phase of the development of corpus linguistics to compare it with other corpuses separating the applied areas, where the usage of the corpus can be highly successful. To make the EANC more complete we make suggestions and remarks which will lead the corpus to a qualitatively new level.

**ՄԱԿԴԻՐՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՄՈՒՐԱՑԱՆԻ
«ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ**

ՄԵՐԻ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ պատկերավորման արտահայտչամիջոցներ, մակդիր, գոյականական, ածականական, դերբայական մակդիրներ, բնութագրական մակդիրներ, գունային մակդիրներ, փոխաբերական իմաստ, օքսիմորոն (նրբաբանություն):

Գեղարվեստական խոսքի պատկերավորման հարցում առանձնահատուկ դեր են խաղում պատկերավորման լեզվական միջոցները, քանի որ բարձրակարգ պատկեր ստեղծելն անհնարին է առանց այս միավորների: «Պատկերավորման ու արտահայտչական միջոցների օգնությամբ գրողը ոչ միայն իրական եւ շոշափելի է դարձնում մտքի առարկան, ընթերցողի երևակայության մեջ առաջ է բերում համապատասխան մտապատկերներ, այլև նկարագրվող երևույթը դարձնում է վառ ու տպավորիչ, ուժեղացնում բանաստեղծական խոսքի հուզական ներգործությունը»⁶⁷: Սույն հոդվածում քննության ենք ենթարկելու Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» վեպում գործածված մակդիրները՝ բացահայտելով Մուրացան գեղագետի պատկերավոր խոսք կառուցելու հմտությունները: Մուրացանի գունեղ և ինքնատիպ մակդիրները ոչ միայն ընդգծում, առանձնացնում են առարկայի, երևույթի այս կամ այն հատկանիշը, այլև դառնում գրողի հուզական վերաբերմունքի ինքնատիպ ու բազմերանգ արտացոլանք:

«Մակդիրը բառ է, որը բնորոշում է առարկան կամ գործողությունը և նրանցում ընդգծում է ինչ-որ էական հատկություն, որակ: Մակդիրի ոճական դերը նրա գեղարվեստական արտահայտչականությունն է»⁶⁸, - գրում է ռուս լեզվաբան Ռոզենտալը: Լ. Եգեկյանը կարևորում է փոխաբերական իմաստի առկայությունը. «Մակդիրը գեղարվեստական որոշիչ է, որի հիմքում ընկած է որևէ փոխաբերական իմաստ»⁶⁹: Կան

⁶⁷ Մարության Ա., Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, Ե., 1979, էջ 152:

⁶⁸ Розенталь Д., Практическая стилистика русского языка, М., 1968, с.399.

⁶⁹ Եգեկյան Լ., ԲաՖՖու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Ե., 1975, էջ 176.:

լեզվաբաններ, որոնք առանձնացնում են մակդիրների ուղղակի և փոխաբերական տեսակները⁷⁰, ինչը մեր մոտեցմամբ ընդունելի չէ, քանի որ ընդարձակվում են մակդիրների սահմանները, և անհնար է դառնում տարբերակել մակդիրը որոշչից:

Մակդիրների ստեղծման հարցում Մուրացանը մեծ վարպետ է: Նրա վարպետությունը ոչ այնքան մակդիրների բազմաքանակության մեջ է, որքան բազմազանության և գեղարվեստական արժեքի: Նրա մակդիրները նոր են, հատուկ են միայն Մուրացան հեղինակի պատկերավոր մտածողությանը: Հերոսների հոգեվիճակը ներկայացնելիս հեղինակն ընտրում է տվյալ իրավիճակին համապատասխան մակդիրներ: Չիչերինի կարծիքով մակդիրը մշտապես հայտնաբերում է մարդու վայրկենական վիճակը կամ ընդհանրապես առարկայի կամ մարդու ժամանակավոր հատկանիշն ու յուրահատկությունները⁷¹: Ճիշտ և դիպուկ ընտրված մակդիրները մակադրյալ բառերի հետ համապատասխանում են խոսքի իրադրությանը: Այն հատվածում, երբ օրիորդ Շահանդուխտը ցանկություն է հայտնում կովին մասնակցելու, Մուրացանը բնութագրում է նրան այսպես. «Նրա գեղանի աչքերը կրակ էին թափում. **Կարմրալար** շուրթերը դեռ դողում էին, և **պարկեշտ** կուրծքը բարձրանում ու իջնում էր՝ տեղի տալով սրտի անհանգիստ տրոփյունին»⁷²: Այս մակդիրները գեղարվեստորեն համոզիչ են և ընդունելի: Աղջկա ամոթխածությունն ավելի է ընդգծվել **կարմարալար** մակդիրի միջոցով, իսկ **պարկեշտ** մակդիրն ամբողջականացրել է համեստ հայուհու կերպարը՝ առաջացնելով համակրանք և դրական վերաբերմունք հերոսուհու նկատմամբ: Մուրացանի մակդիրները կարող են խոր հակակրանք առաջացնել բացասական արարքների դեպքում: Այն հատվածում, որում բացահայտվում է Աշոտ-Երկաթի ստոր արարքը՝ թագուհուն դավաճանության մեջ մեղադրելու զրպարտանքը, Մուրացանի գրիչը չի խնայում նրան. մակդիրները ընթերցողին տրամադրում են թագավորի դեմ. «**Սինլքոր** արարած..., որ գերի և ստրուկ է դարձած **մարդկային արժանիքը անասնական բնագդին ստորագրող**

⁷⁰ Տե՛ս Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական բառարան, Ե., 2000, էջ 115:

⁷¹ Տե՛ս Чичерин А., О языке и стиле романа Л. Н. Толстого «Война и мир», Львов, 1959, с. 22.

⁷² Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Ե., 1982, էջ 247, Այս և հետագա օրինակներում կնշվի համապատասխան էջը:

զգացմունքներին» (էջ 262): Բառակապակցությամբ արտահատված մակդիրները հատկանշվում են իմաստային խորությամբ:

Մակդիրներ կարող են դառնալ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ գոյականը, ածականը, թվականը, դերանվան որոշ տեսակներ, որոշ դերբայներ, մակբայը: Իհարկե, գեղարվեստական գրականության մեջ առավել գործածական են ածականական մակդիրները: «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում դրանք լայնորեն կիրառվում առարկաներին, իրերին, երևույթներին բնութագրելիս: Ահա ածականական մի քանի մակդիրների օրինակներ, որոնք բնորոշում են հեղինակի գեղագիտական հակումները. «Սեդան պետք է կույր լինի, որ յուր տիրուհու դեմքի մշտական թախիծը և նրա ճակատի **փխուր կնճիռները** չտեսնե...» (էջ 9): «...Ոսկեհուռ մանյակը, որ գրկում էր նրա **փղոսկրյա** պարանոցը, գոհարազարդ գոտին, որ սեղմում էր **նազիկ** իրանը... հակինթե ճարմանդը, որով կոճկված էր յուր **հարուստ** կուրծքն սքողող ոսկենկար բաճկոնակը» (էջ 21): Ածականական մակդիրների հմուտ գործածությամբ բացահայտվում են հերոսների հոգեվիճակը. Սահականույշ թագուհուն միշտ ուղեկցում են «... **փխուր** աչքերը, **վշտալի** հայացքը, **դալկահար** դեմքը» (էջ 262), «**դժգույն** արշալույսը» (էջ 8): Ծանր և ճնշող տպավորություն է թողնում Սահակ Սևադայի ապարանքը բնութագրող մակդիրը այս նախադասության մեջ. «Մահվան **ավերիչ** ձեռքը ծանրացել էր այդ իշխանական դոյակի վրա» (էջ 90): Իրավացի է Ա. Տերտերյանը, երբ գրում է. «Մուրացանը ոչ միայն կարողանում է իրերը կենդանացնել, այլև իր հերոսների հոգեկան հուզումը հաղորդել ընթերցողին»⁷³:

Պատմավեպում հաճախ են հանդիպում գոյականական մակդիրներ, որոնք իրենց արտահայտչականությամբ չեն զիջում ածականական մակդիրներին: Առարկայի կամ երևույթի՝ գոյականով արտահայտված հատկանիշը ձեռք է բերում իմաստային ուժգնություն՝ ավելի ընդգծելով հեղինակի վերաբերմունքը: Պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ «Գոյական անվան համար որոշչային գործառությունը ածանցիկ նշանակություն ունի: Իր ու իրողություն անվանող բոլոր խմբի բառերը չէ, որ կարող են մատնանշել հատկանիշ ու դառնալ որոշիչ, այլ միայն նրանք, որոնք ինչ-ինչ կապակցություններում կորցնում են գոյականական բովանդակությունը և ստանում իրենց էությանը բնորոշ

⁷³ Տերտերյան Ա., Մուրացան, Ե., 1971, էջ 267:

հատկանիշի այլևայլ գաղափարներ»⁷⁴: Ահա գոյականով արտահայտված մակդիրի օրինակ. «Կարծում էի, թե իմ ներողամտությամբ, իմ անհիշաչարությամբ կարող եմ կակղեցնել **ապառաժ** սիրտը կամ հարություն տալ մեռած ու դիակնացած խղճին (էջ 103): Ապառաժ գոյականն ավելի է ընդծել հերոսի անխիղճ, անգութ, դաժան վարքագիծը: Իսկ այս նախադասության մեջ. «... Իմ հայրն ու սիրելի եղբայրը աչքերի լույսից չէին զրկվիլ, և ես շարունակ գաղտնի հառաչանքներով, թաքուն արտասուքներով չէի ողբալ մեկի ծերությունը և մյուսի **ծաղիկ** հասակը (էջ 26): **Ծաղիկ հասակ** գոյական-մակդրով կազմված արտահայտությունը որպես կայուն վերաիմաստավորված բառակապակցություն գործածվում է գեղարվեստական գրականության մեջ՝ երիտասարդ, ջահել, դեռավթիթ իմաստներով:

Պատմավեպում հաճախադեպ են դերբայական դարձվածներով մակդիրները՝ ենթակայական դերբայ գերադաս բաղադրիչով: Երևույթներն ու առարկաները Մուրացանի գրչի տակ ստանում են նոր բովանդակություն, խոհերն ու ապրումները ներկայացվում են անսպասելի բառերով ու արտահայտություններով, այսպես. «**հնոցի մեջ խեղդվող բոց**» (էջ 134), «**սև բախտը լացող** ողբերը» (էջ 117), «**ժայռերի ստորոտը կոծող** ալիքներ» (էջ 252), «**մարդկային արժանիքը անասնական բնագրին ստորագրող** զգացմունքներ» (էջ 108):

Հարկ է նշել, որ մակդիրների մեծ մասը ունի նախադաս կիրառություն: Դա օրինաչափ է, քանի որ մակդիրների հետադաս գործառույթն առավել բնորոշ է չափածո խոսքին:

Մուրացանի խոսքարվեստում հանդիպում են մակդիրներ, որոնք իմաստով հակադրվում են բնութագրվող առարկային: Այս մակդիրները ոճագիտության մեջ կոչվում են օքսիմորոն (նրբաբանություն): «Օքսիմորոնը կարևորագույն ոճաբանական միջոց է և մեծ կիրառություն ունի գրական լեզվի գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում: Տրամագծորեն հակադիր և անհամատեղելի հատկանիշներն իրենց անսպասելիությամբ և արտառոցությամբ առավել սուր ու շեշտակի են դարձնում ասելիքը, և ընդգծվող երևույթը ստանում է պատկերավորության մեծ ուժ և արտահայտչականություն»⁷⁵:

⁷⁴ Պապոյան Արտ., Պ. Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Ե., 1970, էջ 277-278:

⁷⁵ Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառայի ոճաբանություն, Ե., 1969, էջ 173:

Նրբաբանության խոսուն օրինակ է հետևյալ նախադասությունը. «Թագավորը չպատասխանեց. **Տխուր ժպիտը** միայն նրա շուրթերը շարժեց» (էջ 258): Հասկանալով իր արաքի ողջ լրջությունը, անխոհեմ քայլի հետևանքները՝ թագավորը գոջումն արտահայտել է տխուր ժպիտի միջոցով: Օքսիոմորոնի լավագույն օրինակ է նաև «**դառը ժպիտ**» (էջ 267) կապակցությունը, որի միջոցով Մուրացանն ընդգծել է Մարգալետունու հուսահատությունը և դժվար իրավիճակից ելք գտնելու անհնարինությունը: Հարկ է նշել, որ սրանց թիվը սահմանափակ է:

Մուրացանի խոսքը ունի ներքին պատկերավորություն: Դա այն ոճը չէ, երբ կուտակվում են գեղեցիկ, զգայացունց բառեր ու ձևեր, բայց վերջին հաշվով խոսքը հիշեցնում է գունավոր լաթերով պատած խրտվիլակի⁷⁶: Տարբեր մակդիրներ կարող են դրվել նույն մակադրյալի վրա՝ հաղորդելով իմաստային զանազան նրբերանգներ: Այսպես՝ վեպի տարբեր հատվածներում աչքեր բառի համար գործածվել են **սրապես, տխուր, դյուրող, հասարակ, կախարդող, փորձված** մակդիրները, «**սրապես աչքեր**» (էջ 46), «**տխուր աչքեր**» (էջ 262), «**փորձված աչքեր**» (էջ 72), «**հասարակ աչքեր**» (էջ 72), «**լուսավիր աչքեր**» (էջ 21), «**կախարդող աչքեր**» (էջ 73), «**արդասվաթոր աչքեր**» (էջ 250), որոնք էլ յուրօրինակ հմայք են հաղորդել մուրացանյան խոսքին:

Վեպում մեծ թիվ են կազմում բնութագրական մակդիրները, որոնք բնութագրում են առարկաների կամ երևույթների արտաքին հատկանիշները: Այդպիսիք են **դալկահար, վշտալի, վեհապանծ, գեղանի, նազանի** բառերը «**դալկահար** դեմք», «**վշտալի** հայացք» (էջ 262), «**աղու աչքեր**» (էջ 6), «**վեհապանծ** դեմք» (էջ 49), «**գեղանի** դեմք», «**նազանի** հասակ», «**սիգաճեմ** շարժում» (էջ 21) բառակապակցություններում:

Առհասարակ, Մուրացանը գունային մակդիրների սիրահար չէ: Միայն **սև** մակդիրն է, որը գործածվում է մի քանի բառակապակցություններում, այսպես՝ «**սև** խորհուրդ» (էջ 237), «**սև** գործ» (էջ 147), «**սև** բախտ» (էջ 117): **խորհուրդ, գործ** բառերի մակդիրը դառնալով՝ սևն ընդգծել է չար մտքի, խարդախության գաղափարը: Իսկ «**սև բախտ**» բառակապակցությամբ Մուրացանը պատկերավոր ներկայացրել է Սահակ Սևադայի ընտանիքի դժբախտությունները:

⁷⁶ Տե՛ս Խլղաթյան Ֆ., Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Ե., 1988, էջ 219:

Մակդիրներ ընտրելիս Մուրացանն օգտվել է հայերենի բառակազմական կաղապարներից՝ ածանցման և բառաբարդման միջոցով՝ փորձելով ստեղծել տարբերվող, ինքնատիպ մակդիրներ: Հատկապես շատ են **-եղեն, -անի, -ավոր, -իկ, -ային** վերջածանցներով կազմված մակդիրները. օրինակ՝ **բոցեղեն լեզուներ** (էջ 235), **քարեղեն աչքեր** (էջ 248), **խորհրդավոր** հայացքներ (էջ 72), **նազիկ** իրան (էջ 21), **գողփրիկ** շուշան (էջ 31), **գեղանի** դեմք (էջ 21), **նազանի** հասակ (էջ 21), **դժոխային** ատելություն (էջ 261), **երկնային** շանթ (էջ 263) և այլն: Նախաձանցներից գործածական են **ան-** կենսունակ և **դժ-** ոչ կենսունակ ժխտական նախաձանցները, որոնցով կազմված մակդիրները ազդեցիկ են ու խոսուն: Ահա մի քանի օրինակներ ժխտական նախաձանցներով. «Այդ **աննկուն** որսորդը կնոջ սերն էր» (էջ 258): «Նրանց խորհրդավոր հայացքները հասարակ աչքերի համար **աննշմարելի** մտքեր հաղորդեցին միմյանց» (էջ 72): «Բայց խղճի **անողոք** խայթերին ես դիմադրել չկարողացա» (էջ 262): «Մի թեթև շառագույն փայլեց յուր դալկացած այտերի վրա, ինչպես ձմեռվա **դժգույն** արշալույս» (էջ 8): Խոսքին առանձնակի երանգ են տալիս համադրական բարդություններով կազմված մակդիրները, որոնցում առկա են ածական+ գոյական (**կարմրալար շուրթեր** (էջ 247), **դառնաշունչ քամի** (էջ 31)), ածական+բայարմատ (**վեհապանծ** դեմք (էջ 49)), գոյ.+գոյ. (**արտասվաթոր** աչքեր (էջ 250)) կաղապարները: Ինչ խոսք, պարզ որակական ածականներով կազմված մակդիրների համեմատությամբ սրանք հատկանիշն ավելի ցայտուն են դարձնում:

Այսպիսով, Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» վեպում գործածված մակդիրները բացահայտում են մեծ գեղագետի պատկերավոր խոսք կառուցելու բոլոր հմտությունները: Մուրացանը ոճ ունեցող հեղինակ է. այսինքն՝ իր լեզվական միջոցներով ընթերցողին հարկադրում է իրերը տեսնել այնպես, ինչպես ինքն է ուզում⁷⁷:

Մակդիրները Մուրացանի խոսքը դարձնում են պատկերավոր, հուզական, գունեղ: Որպես մակդիր՝ հեղինակն օգտագործել է այն խոսքի մասերը, որոնք կարող են ունենալ մակդրային կիրառություն: Դիպուկ ու արտահայտիչ են բառակապակցություններով և դերբայական դարձվածներով կազմված մակդիրները, որոնք իրենց ինքնատիպությամբ հիացնում են ընթերցողին:

⁷⁷ Տե՛ս Տերտերյան Ա., Մուրացան, Ե., 1971, էջ 266:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եզեկյան Լ., Րաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Ե., 1975:
2. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1969:
3. Խլղաթյան Ֆ., Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Ե., 1988:
4. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Ե., 2000:
5. Մարության Ա., Եղիշե Չարենցի չափաձոյի լեզուն և ոճը, Ե., 1979:
6. Մուրացյան, Գևորգ Մարզպետունի, Ե., 1982:
7. Պապոյան Արտ., Պ. Սևակի չափաձոյի լեզվական արվեստը, Ե., 1970:
8. Տերտերյան Ա., Մուրացյան, Ե., 1971:
9. Розенталь Д., Практическая стилистика русского языка, М., 1968.
10. Чичерин А., О языке и стиле романа Л. Н. Толстого «Война и мир», Львов, 1959.

МЕРИ АМБАРЯН- СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ЭПИТЕТОВ В ИСТОРИЧЕСКОМ РОМАНЕ МУРАЦАНА «ГЕВОРГ МАРЗПЕТУНИ»

Данная статья относится к стилистическому применению эпитетов, использованных в историческом романе Мурацана «Геворг Марзпетуни». В качестве эпитетов автор использовал те части речи, которые могут применяться как эпитеты. Эпитеты, составленные с помощью словосочетаний и причастных оборотов, точны и выразительны, и отличаются своей оригинальностью.

MARY HAMBARYAN- STYLISTIC VALUE OF EPITHETS IN THE HISTORICAL NOVEL “GEVORG MARZPETUNI” BY MURATSAN

The article reflects on the stylistic use of the epithets in “Gevorg Marzpetuni” historical novel. The author has used only those parts of speech that can be used as epithets. The epithets comprised by phrases and participle phrases are accurate and admirable, and impress the readers with their uniqueness.

**ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԱՏՈՒ ՖՐԱՆՍԻ
«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ» ՆՈՎԵԼՈՒՄ**

ԷԼԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հիմնաբառեր՝ Ա.Ֆրանս, երջանկություն, ճշմարտություն, սուտ, կեղծիք, գիտություն, տգիտություն, երևակայություն, հրեշտակ, սատրանա:

XIX դարի վերջի և XX դարասկզբի ֆրանսիական գրականության վառ ներկայացուցիչ, նորեկյան մրցանակակիր, Մարդու իրավունքների միության հիմնադիր, 1905թ. Եկեղեցու և Պետության անջատման վերաբերյալ օրենքի ընդունման ջատագով Անատոլ Ֆրանսին մշտապես հուզել ճշմարտության որոնման, տիեզերական ստի և կեղծիքի մերկացման խնդիրը:

«Մարդկային կյանքը ամբողջապես տառապանք է, և նրա տառապանքներն ու ցավերը դադար չունեն, սակայն առավել ցանկալի կլինեն, որ մարդու գոյությունը ծածկված լիներ խավարով և քողարկված՝ թուխպով»,⁷⁸ գրում է Անատոլ Ֆրանսը: Ըստ Ա.Ֆրանսի՝ մինչ մարդ արարածի ծագման և գոյության մասին գիտական վարկածների ի հայտ գալը, նա իրեն համարում էր երկրի վրա գոյություն ունեցող բոլոր կենդանի էակների թագավորը, սակայն բնագիտական գիտությունների զարգացմանը զուգընթաց, նա, կարծես գահընկեց է արվում և իրեն զգում է մի անէություն, աննշան մի արարած, որը այս անսահման տիեզերքում զուր որոնում է ճշմարտություն և երջանկություն: Եթե նա այդքան փոքր է այս հսկա տիեզերքում, ինչու այլևս փնտրել այդ ճշմարտությունը, որը կարող է նրան բերել միայն հիասթափություն և հուսախաբություն:

1909թ. Ֆրանսը լույս է ընծայում նովելների «Սուրբ Կլարայի ջրհորը» խորագրով ժողովածու: Ժողովածույի նովելներից՝ «Մարդկային ողբերգությունը» (*L'Humaine Tragédie*) համարվում է Ֆրանսի ամենահռոտեստական ստեղծագործությունը, որտեղ գրողը գլխավոր հերոսի՝ ֆրանցիսկյան աբբայության եղբայր, Ֆրա Զիովանիի միջոցով փորձում է վեր հանել տիեզերական ճշմարտության ունայնությունը: Ֆրա

⁷⁸ France A. *Hippolyte porte-couronne* //Articles d'Anatole France sur Euripide, *Le Siècle littéraire*, 1 janv. 1876.

Ջիովանին ապրում է կույր հավատքի մեջ՝ զգալով իրեն երջանիկ և հանգիստ: Ի տարբերություն Դանթեի «Աստվածային կատակերգության» Ֆրա Գիովանիի հաղորդման ուղին ընթանում է ոչ թե կենտրոնաձիգ ձևով, որտեղ կենտրոնը Սերն է, ճանաչողությունը, Ֆրանսի նովելում այդ ընթացքը կենտրոնից ուղղվում է դեպի դուրս, դեպի տիեզերական ճշմարտություն, որտեղ մարդ արարածը տարալուծված է:

Ջիովանիի կերպարը այլաբանական է: Խճճված իր հավատքի և իր համոզմունքների մեջ, նա վայելում է բիբլիական, ինչ-որ չափով պարզամիտ երջանկություն: Անատոլ Ֆրանսի կարծիքով տգիտությունը «կեղծ հավատքի» նախապայմանն է, որի հետևանքով մարդը կուրորեն հավատում և հնազանդվում է անառարկելի դոգմաների: Արդյունքում կրոնների օգնությամբ ստեղծվում է անարդար մի հասարակություն՝ հիմնված սարսափի և ահաբեկչության վրա:

Ֆրանսը ծաղրանքով է ներկայացնում Ֆրա Ջիովանիի ճգնափորությունը, քանի որ նրա վարքագիծը հակասում է այն ամենին, ինչը ըստ Ֆրանսի, անհրաժեշտություն է մարդ արարածի բարգավաճման ու զարգացման համար. «*Նա աղքատ էր և զվարթ: Նա բավականություն էր ստանում հնազաղության մեջ: Նա վախենում էր գործել, քանի որ ջանքը ցավոյ է և զուր: Նա վախենում էր մրաժել, քանի որ միտքը չար է:*»⁷⁹

Ինչպես տեսնում ենք, Ֆրանսը ներկայացրել է պարզամիտ, տգետ և անբան մարդու մի կերպար, որը հաճախ է հանդիպում նրա ստեղծագործություններում (Պաֆնուսիոսը «Թախս», Եղբայր Անժը «Սագաթա թաթիկներ թագուհու պանդուկում», Մայելը «Պինգվինների կղզին» ստեղծագործություններում): Եվ ամեն անգամ Անատոլ Ֆրանսը ներկայացնում է այս պարզամիտ հոգիներին, որոնք աշխարհը տեսնում են իրենց դոգմաների ֆիլտրով և ընկնում կեղծիքի ու մոլորության մեջ: Կերպարների այս հավաքածույում Ֆրա Ջիովանին ամենապարզամիտն է, իր կույր, գրեթե մանկական հավատքով նա ապրում է իր քիչ թե շատ անկառավարելի բնազդների աշխարհում՝ ամենաանհետթեթ իր խոհերը ընդունելով որպես հանճարեղ լուսաբանումներ. «*Այդ ընթացքում, Ֆրա Ջիովանին հասկացավ, որ աշխարհի բարիքները Աստված է շնորհում և, որ դրանք պետք է լինեն աղքատներինը, ովքեր Հիսուսի սիրելիներն են... Նա խորհում էր՝ մրաժելով, որ սուրբ Ֆրանսուան ծնվել էր մարագում, ինչպես Հիսուսը... Եվ Ֆրա Ջիովանին էլ այդպես էր ապրում,*

⁷⁹ France A. *L'Humaine Tragédie*. P. Calmann-Lévy. 1900, pp. 135-244

քանզի նա բացահայտել էր, որ այս աշխարհում ամեն բան, որ պատկանում է Աստծուն, պատկանում է աղքատներին»:⁸⁰

Նովելում հատկապես հետաքրքիր է Սատանայի կերպարը, որը Ֆրա Ջիովաննիին առաջին անգամ հանդիպում է քողածածկ այրու կերպարանքով, որպես բարեպաշտության և անսահման հավատքի խորհրդանիշ, բայց նաև ֆիզիկական ու բարոյական թվացյալ թուլության մարմնավորում:⁸¹ Ծեր կինը ճգնավորից ողորմություն է խնդրում, որը, սակայն, պիտի ծառայի սպանության համար, մի բան, որ բնականաբար, հակառակ է Ջիովաննիի բարոյական սկզբունքներին. «Քողածածկ այրու կերպարանքով, ես ողորմություն եմ խնդրում ճանապարհներին, գումար հավաքելու համար, որը տալու եմ Պերուզցիացի մի տղամարդու, ով ըմբռնված է իմ մարմինը, և այս գումարը վերցնելուց հետո նա խոսք է տվել սպանել մի սրիկայի, որին ես արում եմ, որովհետև ինձ նվիրելով Պերուզցուն, նա ինձ խորապես վիրավորեց: Իմ գումարը բավարար չէ, բայց Ձեր տված փողը կլրացնի պակասը {...}: Ողորմությունը, որ դուք տվեցիք կլինի նրա արյան գինը {...}: Դուք վաճառեցիք արդարությունը, քանի որ այն մարդը, որը պիտի սպանվի բարեպաշտ է, աստվածավախ և ժուժկալ, ու ես նրան արում եմ դրա համար: Եվ դուք կդառնաք նրա մահվան պատճառը: Դուք գումար դրեցիք հանցագործության սկույտի վրա»:⁸²

Տիեզերական ճշմարտությունը մարմնավորված է բայրոնյան չար և գեղեցիկ Սատանային հիշեցնող կերպարում. «Քանի որ ես **Հակառակորդ եմ** և քանի որ ես **Մյուսն եմ**, ես կգայթակղեմ այս ճգնավորներին և նրանց կասեմ այն, ինչի մասին լռում է **Նա**, ով իրենց բարեկամն է: Ես կվշտացնեմ այս կրոնավորներին՝ նրանց ճշմարտությունը ասելով և նրանք կտրտվեն՝ լսելով իմ բանական և ողջախոհ ելույթը: Ինչպես սուրը կմխրճվի նրանց երկամների մեջ, ես կխոցեմ նրանց իմ մտքերով: Եվ երբ նրանք իմանան ճշմարտությունը, նրանք իրենց դժբախտ կզգան, քանի որ ուրախությունը միայն պատրանքի մեջ է, իսկ խաղաղությունը գոյություն ունի միայն տգիտության մեջ»:⁸³

⁸⁰ Նույն տեղում, էջ 145

⁸¹ Նույն տեղում, էջ 161

⁸² Նույն տեղում, էջ 162

⁸³ Նույն տեղում, էջ 158

Սատանան տարբեր կերպարանափոխություններով է ներկայանում է Զիովանիին (այրի կին, գիտնական, բանտապահ), սակայն հիմնականում խորհրդանշում է գիտությունը, որը ձգտում է քողազերծել աշխարհը, բացահայտել առեղծվածների պատասխանը և դրանով հանդերձ բոլորովին չի թեթևացնում մարդկանց ցավերը. «Մարդը իր էությանը հիմար կենդանի է, որի մտքի առաջընթացը իր անհանգիստ բնույթի զուր հեղուկանքներն են : Ահա այդ իսկ պատճառով, ես չեմ վստահում այն բանին, որ անվանում են գիտություն և փիլիսոփայություն, որն իմ կարծիքով, ոչինչ է, եթե ոչ խաբուսիկ պատկերացումների չարաշահում, և ինչ-որ իմաստով՝ խորամանկ մտքի հաղթանակ մոլորված հոգիների դեմ»:⁸⁴

Անատոլ Ֆրանսը հեգնանքով ցույց է տալիս, որ տիրող խավարում ոչ գիտությունը, ոչ էլ տգիտությունը անկարող են հասնել ճշմարտությանը: Եվ Անատոլ Ֆրանս-Սատանայի ձախողումը լիակատար է. «Ես չկարողացա գայթակղել այս մարդուն իր ծայրահեղ պարզամտության պատճառով»⁸⁵ : Տգիտությունը հաղթում է բանականությանը: Այսպիսով, Ֆրանսը ընտրություն չի կատարում բանականության և տգիտության միջև, նա ընդունում է միմիանց հակադրվող տեսակետներ, որոնք էլ հանգեցնում են ձախողման:

Երջանկության Ֆրանսի հայեցակարգը ամբողջությամբ արտահայտում է Սատանայի հետևյալ միտքը. «Դու երջանի՞կ ես: Եթե դու ունես այդ երջանկությունը, ես չեմ հավակնի հաղթել քեզ, քանի որ մարդը մտածում է միայն ցավի ու տառապանքի մեջ, խորհում է միայն տիրության ու թախիծի մեջ: Վախից ու ցանկությունից տառապելով, նա անհանգիստ գալարվում է իր անկողնում և ծվեն-ծվեն է անում սրերի ու պատրանքների իր բարձր: Ինչու՞ գայթակղել այս մարդուն: Նա երջանիկ է»⁸⁶ :

Իսկ տիեզերական ճշմարտությունը շարունակում է մնալ անհասանելի: Սրանում է թաքնված «Մարդկային ողբերգություն» նովելի ողջ հոռետեսությունը: Ի վերջո, արդյո՞ք ճշմարտության բացահայտումն է, որ կարող է իմաստավորել մարդկային գոյությունը:

Ճշմարտության որոնումը իր հետ բերում է դժբախտություն, քանզի մարդը այն չգտնելով բախվում է պատրանքների անանցանելի պատին:

⁸⁴ Նույն տեղում, էջ 233-234

⁸⁵ Նույն տեղում, էջ 163

⁸⁶ Նույն տեղում, էջ 172

Նրան, ում հաջողվում է շրջանցել այս դժբախտությունը, անկասկած նա է, ով ընկղմված է հավատքի մեջ և հավատում է կրոնական դոգմաներին: Սուտը և պատրանքը մխիթարում և սփոփում են մարդուն, օգնում նրան լցնել դատարկությունը հանգստցնող մի ճշմարտությամբ, որը, սակայն, չի կարող բավարարել մտածող մարդուն: Այսպիսով, միայն երջանկության բացակայությունն է, որ ուղղորդում է մարդ արարածին, այս անհասկանալի և անսահման տիեզերքից եկող իր վախերի մեջ: Ոմանք հրաժարվում են ընդունել տիեզերքը այնպիսին ինչպիսին կա և թաքնվում են ստի ու կեղծիքի ետևում՝ այն համարելով միակ ընդունելի, մյուսները ցանկանում են ընդունել տիրեզերքը այնպիսին ինչպիսին որ կա և մեկնում են խաչակրաց արշավանքի՝ զինված իրենց գաղափարներով և փորձելով բացահայտել ճշմարտությունը: Բայց նրանցից ոչ մեկի համար այն հասնելի չէ. «Ֆրա Ջիովանի, քանի որ դու ցանկացար ընդունել Ճշմարտությունը որպես մի փրկիչ կամ մի ընկերուհի, ապա քեզ համար շար կարևոր է նրա մասին իմանալ այն ամենը ինչ հնարավոր է իմանալ: Իմացիր, որ նա **Ճերմակ է**, և այնպիսին, որ երբ ես քեզ ցույց կդնեմ նրան, դու կբացահայտես նրա բնույթը, մի բան, որ քեզ շար օգտակար կլինի մտերմանալու համար նրա հետ և գրկել նրան այնպիսի քնքշությամբ ու փաղաքշանքով, ինպես գրկում է ընկերը իր ընկերուհուն»:⁸⁷

Հեզնող Սատանան, ընդունելով անբիծ, անաղարտ ճշմարտության պլատոնական տեսությունը, միևնույն ժամանակ հերքում է այն, ընդգծելով, որ եթե այս աշխարհը անբիծ չէ, ապա ճշմարտությունը ևս աղտոտված է: Հետևաբար, կամ պետք է ընդունել, որ այն գոյություն չունի, կամ ընդունել, որ մեկ ճշմարտություն չկա, որ կա մի քանի ճշմարտություն:

Ըստ Ֆրանսի, մարդը ընկալում է իրեն շրջապատող աշխարհը մասնատված ճշմարտության կտորներով: Եթե նա կարծում է, որ գտել է ճշմարտությունը՝ շրջվելով դեպի Աստված, ապա նա խորասուզվում է պատրանքների մեջ: Եվ հենց այդ պահից սկսած, ճշմարտությունը դառնում է անիմանալի: Եվ, եթե ճշմարտությունը բազմաշերտ է և բացկացած է իրարամերժ մի շարք հասկացություններից, ապա մարդը ունակ է տեսնելու այն հատվածաբար, բայց ոչ երբեք՝ ամբողջապես. «Իմացիր, որ քո սիրեցյալը՝ Ճշմարտությունը, իր մեջ պարուրում է իրար

⁸⁷ Նույն տեղում, էջ 207-208

հակադրվող այնպիսի որակներ, ինչպիսիք են խոնավությունը և չորությունը, փափկությունը և կոշտությունը, սառնությունը և դրա հակառակ, և որ այս տիկնոջ մոտ, ինչպես միս ու արյուն ունեցող մյուս բոլոր կանանց մոտ, քնքանքը և ջերմությունը հավասարապես ու ամբողջապես չեն արտահայտվում{...}

Ափսոսում եմ, որ լքելու եմ քեզ, բարեկամաս : Սակայն ես չեմ կարող երկար մնալ քեզ մոտ, քանի որ ես շատ հակասական մտքեր ունեմ տալու մարդկանց»:⁸⁸

Սատանան ճշմարտությունը ներկայացնում է սպիտակ գույնով, քանի որ սպիտակը բոլոր գույների խառնուրդն է, ուստի ճշմարտությունը ևս իրարամերժ հասկացությունների միախառնումն է, և չնայած բոլոր գույները ընդգրկված են սպիտակի մեջ, դրանցից ոչ մեկը ակնհայտ չի երևում: Այստեղից հետևություն. մարդը ճաշակում է ճշմարտության գոյությունը, բայց ոչ դրա էությունը: Նա գիտի, որ այն գոյություն ունի, առանց կարողանալու տարբերակել դրա բաղադրիչները. «Ձենիր ճերմակ ճշմարտությունը, որին դու կցանկանայիր ճանաչել: Գիտցիր, որ այն ստեղծված է միայնց հակադիր բոլոր ճշմարտություններից, ինչպես բոլոր գույներից կազմված է սպիտակը... Ճշմարիտ է, որ այնտեղ երևում է միայն կրակը»:⁸⁹

Ճերմակ ճշմարտությունը ընկալելի է միայն մասնակիորեն, քանզի այն քողարկում է իր բոլոր բաղադրիչները, և այնուամենայնիվ ստիպում է տառապել նրանց, ովքեր պայքարում են հասնել դրան և երբեք չեն հասնում: Ուրեմն, ինչու՞ մեռնել հանուն ճշմարտության: «Մենք դա չեն հասկանա, ոչ մենք, ոչ էլ ուրիշ մեկը»:⁹⁰

Երբ Ֆրա Զիովանին բանտ է ընկնում, նա մտածում է մեռնել հանուն «Ճշմարտության».*«Ճշմարտությունն ինձ կուղեկցի դեպի կախաղան: Նա ինձ կնայի ու լաց կլինի : Նա կասի. « Ես լաց եմ լինում, որովհետև այդ ինձ համար է, որ այս մարդը մեռնում է»:*⁹¹ Իսկ Սատանան՝ գիտնականի կերպարանքով այցելելով Զիովանին բանտում, տալիս է ճշմարտության մեկ այլ բացատրություն, որը բոլորովին չի համապատասխանում ճգնավորի մեկնաբանմանը: Այստեղ Ֆրանսը խորամանկորեն շարունակում է Պյութագորասի այն միտքը, որ

⁸⁸ Նույն տեղում, էջ.214-215

⁸⁹ Նույն տեղում, էջ 223

⁹⁰ Նույն տեղում, էջ 206

⁹¹ Նույն տեղում, էջ 206

յուրաքանչյուրն ունի իր ճշմարտությունը: Եթե դա դիտարկենք այս տեսանկյունից, ապա «Ճշմարտությունը» փոխվում է ըստ տարբեր տեսանկյունների, ուստի այն փոփոխական է, և բոլոր ճշմարտություններն էլ միմյանց համարժեք են: Ի վերջո, եթե երկու ճշմարտություն իրար հակասում են, ապա դրանցից մեկը կեղծ է: Իսկ եթե ճշմարտություն չկա, ապա մարդու գոյության իմաստը արժեզրկվում է և մարդ արարածը ստիպված է ապրելու պատրանքների աշխարհում, որտեղ տիրում է անարդարությունը և տառապանքը: Ապրել մի աշխարհում, որտեղ չկա ճշմարտություն, որտեղ սուտը և խաբեությունը ընկալման միակ աղբյուրն են, նշանակում է ընդունել մարդկային դժնդակ բոլոր պայմանները՝ չկարողանալով անգամ արտահայտել սեփական դժգոհությունը:

Քանտոմ Զիոլանին խորհրդանշական երազ է տեսնում, իբրև պտտվում է այս հսկա տիեզերքի պատմության սկավառակը և հազարագույն լույսերի մեջ ճգնավորը տեսնում է Կույս Մարիամին, մարգարեների, հզոր թագավորների, մեծանուն մարդկանց, և յուրաքանչյուրի ճշմարտության գույնը հակադրվում է մյուսի գույնին, և ամեն անգամ մի նոր լույսի մեջ հայտնվում է մի կարգախոս, որն ամեն անգամ ավարտվում է նույն՝ «Այսպիսին է ճշմարտությունը» եզրակացությամբ:⁹²

«Ես այլևս հույս չունեմ ճանաչել Ճշմարտությունը, քանի որ նա հայտնվում է հակադրությունների ու հակասությունների մեջ, և ինչպես կարող եմ համարձակվել հավատալ, որ իմ մահով ես կդառնամ այն բանի վկան ու նահապակը, ինչին պետք է հավատալ, այն բանից հետո, երբ տիեզերական այս ողջ ներկայացումը ինձ բացահայտեց, որ սուտը և կեղծիքը կատարյալ և անիմանալի Ճշմարտության մի մասնիկն է կազմում: Ինչու՞, րեբ Աստված, թույլ տվեցիք, որ ես տեսնեմ այս բաները և դրանք բացահայտեցիք իմ վերջին քնից առաջ, որ Ճշմարտությունը ամենուր է, բայց միևնույն ժամանակ այն գոյություն չունի և ոչ մի տեղ»⁹³:

Քանի որ ճշմարտությունը գոյություն չունի, ապա ոչ մի արժեք չի կարող լինել ավելի ճիշտ, քան մեկ ուրիշ արժեք, ուստի տիեզերքը գտնվում է անսահման մի քառոսում: Եվ այդ պահից սկսած մարդկանց սուտը և կեղծիքը դառնում է այդ աշխարհի մի մասը, իսկ ճշմարտությունը՝ անհասանելի մարդկանց համար:

⁹² Նույն տեղում, էջ 220-221

⁹³ Նույն տեղում, էջ 225

Իսկ Զիովանին, ով դեգերում էր աստվածային պարզ և քաղցր ճշմարտության գրկում, ճշմարտության որոնման ճանապարհին դառնում է հանցագործ՝ դեմ դուրս գալով տիրող օրենքներին և սպանելով դատավորին:

Производное слово отсылает нас к значению производящей основы, оно выражает свое значение посредством указания на мотивирующее слово, представляя собой единство семантики производящего, исходного слова и своего индивидуального значения. Е.С.Кубрякова ту часть производного слова, которая отсылает нас к производящему, назвать “отсылочной” [Кубрякова 1981: 16]. Промежуточным звеном между производящей основой и производным является некая формальная операция, которой подвергается мотивирующая основа. Операция эта осуществляется благодаря словообразовательному форманту, который, безусловно, вносит свое значение в производное слово. Таким образом, значение производного слова складывается из значения мотивирующего слова и словообразовательного форманта.

В организации связного текста посредством цепных построений деривация подобно лексическому повтору и местоимениям-субститутам позволяет избежать повторов и сэкономить языковые средства. Так, в слова сворачиваются целые предложения, что, естественно, способствует динамичному развитию текста. Как справедливо отмечает Р.А.Тер-Аракелян, “...в организации и линейном развитии связного текста, в увеличении его информативной емкости и синтаксической компактности играет важную роль синтаксически мотивированное словообразование – синтаксическая деривация...” [Тер-Аракелян 1987: 81].

Девербативы могут организовывать цепные построения самостоятельно, то есть не дополнять какой-либо способ осуществления нанизываний, а выступать автономно:

*Триродов любил быть один. Праздником ему было уединение и молчание. Кто-то приходил, что-то **являлось**. Не то во сне, не то наяву были дивные **явления**. (Ф.Сологуб);*

Он вдруг стал очень угрюм. Казалось, соображал что-то и **не решался**, и томительна была **нерешимость**. (Ф.Сологуб);

Галина Тимофеевна, в свою очередь, боялась крика и не могла **уволить** плохую работницу. Поэтому **увольнениями** занимался местком, а Галина Тимофеевна вручала стахановцам награды. (С.Довлатов).

Чаще всего девербативы участвуют в организации цепных связей в составе местоименных групп, иными словами, производные слова – девербативы сопровождаются притяжательными либо указательными местоимениями:

Как **влюбляются** эти струйки во всякую красоту, которая в них окупается, так **влюблялась** Елена во все милое, что предстало ее очам. Чаще всего **ее влюбленность** направлялась на Петра. (Ф.Сологуб);

В середине десятка три мальчиков и девочек **пели и танцевали**, и танец их строго следовал ритму песни и с прекрасною точностью передавал ее слова. **Их пением и танцем** управляла высокая и стройная девушка с сильным, звучным голосом, роскошными золотистыми косами и серыми веселыми глазами. (Ф.Сологуб)

Примечателен тот факт, что при организации цепных построений девербативы чаще сочетаются с притяжательными местоимениями, чем с указательными. На это справедливо указывает и А.В.Головачева: "...в русском языке имеется тенденция к употреблению в таких структурах притяжательного местоимения во всех случаях, кроме тех, когда на номинализации делается ударение, и тех, когда данное предикатное имя с притяжательным местоимением несочетаемо" [Головачева 1979: 182].

Конструкции такого типа могут также служить для расширения текста – введения новых характеристик, которые вводятся в качестве определений к девербативу:

И мальчик, и девочка **смотрели неподвижно, внимательно**. **Их непорочный взор** казался проникающим в самую глубину души. (Ф.Сологуб)

Отметим, что такой способ построения цепных связей между предложениями был продуктивен и в древнерусском языке, так в произведениях 17-го века встречаем следующие примеры:

А с ним казаков 24 человека, которые **сидели** в Азове городе от турок **в осаде**. И **сиденью своему осадному** привезли оне роспись. (“Повесть об Азовском осадном сидении донских казаков”);

И в таковой великой нужи святая Евдокия терпеливно страда, благодарящи бога, месяца два и полъ, и **преставися** сентября в 11 день. И бысть **преставление ея** слезно. (“Повесть о боярыне Морозовой”)

Интересно, что в древнерусском языке, в отличие от современного русского такие повторы сопровождаются также указательным местоимением:

И та мамка поехала и **просила** всех дворянских дочерей к госпоже своей Аннушке, и **по тому ея прошению** все обещались быть. (“Повесть о Фроле Скобееве”);

Аще начну во врата ударяти и **стукати**, то **тем стуканием моим** всю братию соблажню и смущу... (“Жизнеописание Епифания”).

Помимо рассмотренных выше случаев часто встречается явление так называемой “контекстуальной” деривации, когда производное слово представляет собой сиюминутное образование, созданное для того, чтобы развернуть дальше повествование. Рассмотрим несколько подобных случаев:

Я ничего не вписывал в эту рукопись. Я лишь вычеркивал, **вымарывал**. Каюсь, **мои вымарки** были продиктованы тем, что интонация больного старика была пропитана кое-где сверх меры пресловутой исповедальностью. (И.Меттер)

В общем, **попытаться** нужно чего-нибудь добиться — авось что-нибудь выйдет. Сам процесс этого «**попытывания**» (беганье по городу, по МОССХу, по художникам, собирание мудрых советов и пр.) мне лично противен. Но нечего делать. (Г. С. Эфрон)

Таким образом, роль производных слов в организации связного текста трудно переоценить. Переход предложения или словосочетания в слово способствует связыванию предложений в линейной последовательности. Производные слова помогают избежать повторов, заменяя слова, словосочетания и целые предложения, организуя цепные построения. Не последнюю роль в этом процессе играют также слова-окационализмы, являющиеся результатом контекстуальной деривации.

ЛИТЕРАТУРА

1. Валгина Н.С. Теория текста. М., “Логос”, 2003
2. Головачева А.В. Идентификация и индивидуализация в анафорических структурах. // Категория определенности – неопределенности в славянских и балканских языках. М., “Наука”, 1979
3. Кожевникова К. Об аспектах связности в тексте как целом. // Синтаксис текста. М., “Наука”, 1979
4. Кубрякова Е.С. Типы языковых значений. Семантика производного слова. М., “Наука”, 1981
5. Севбо И.В. Структура связного текста и автоматизация реферирования. М., “Наука”, 1969
6. Тер-Аракелян Р.А. Предложение в тексте. Ереван, “Луйс”, 1987

ՆԻՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ– ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՊԱԿՑՎԱԾ ՏԵՔՍՏԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՄԵԿ

Հոդվածում դիտարկվում է բառակազմության դերը կապակցված տեքստի կայացման գործընթացում: Բայից ածանցյալ բառերը նպաստում են նախադասության բառին կամ բառացապակցության վերածմանը՝ այնպես, որ իրենց մեջ պարունակում են որոշ իրադարձության կամ իրավիճակի հիմնական իմաստը:

NINA GHARIBYAN – DERIVATION AS ONE OF THE METHODS OF ORGANIZATION OF A TEXT

The article studies the role of derivation in the formation of coherent text. Derived words - deverbatives contribute to the folding of a sentence into a word or phrase in such a way that the derived word contains the main meaning of a particular event or situation.

ՓՈՒՍԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱԼԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ փոխաբերություն, փոխաբերական միավոր, ճանաչողականություն, գիտության ոլորտ, բժշկագիտություն, փոխաբերությամբ միջնորդավորված մտածողություն:

Փոխաբերության վերաբերյալ ուսումնասիրություններում 20-րդ դարը համարվում է կարևոր փուլ, քանի որ այս շրջանում փոխաբերությունը սկսեց դիտարկվել որպես գիտության ոլորտում գործածական և կիրառելի արտահայտչամիջոց: Վիճարկելով փոխաբերության *status quo*-ն, այն է՝ փոխաբերությունը որպես բանաստեղծական հնար կամ ճարտասանական խոսքարվեստի միջոց դիտարկելը՝ մի շարք լեզվաբաններ, տեսաբաններ և փիլիսոփաներ կազմավորեցին փոխաբերության մասին բեկումնային մոտեցում, համաձայն որի փոխաբերությունը մարդու ճանաչողական «անատոմիայի» հիմնարար բաղադրիչ է, և տեղաշարժելով փոխաբերությունը ոճական տիրույթից դեպի ճանաչողականության և գիտության ոլորտ՝ վերադասեցին այն գիտականորեն գործածելի արտահայտչամիջոցների շարքին [Lakoff, Johnson 2003; Kittay 1987; Gibbs 1994]:

Գիտության տարբեր բնագավառներում փոխաբերական միավորների գործածությունը թելադրված է լինում որոշակի նպատակներով: Մասնավորապես բժշկագիտության բնագավառում փոխաբերական միավորները լայնորեն կիրառվում են տարատեսակ հիվանդություններ, կլինիկական նշաններ, ախտանշաններ և օրգանիզմի ախտաբանական գործընթացները նկարագրելու նպատակով: Օրինակ՝ շաքարախտ հիվանդության մասին անգլալեզու նյութերում կարելի է հանդիպել «**honeymoon period**» (բառացի՝ մեղրամսի փուլ) միավորը, որը մատնանշում է հիվանդության կլինիկական փուլերից մեկը, ինչպես հետևյալ օրինակում՝ «*The **honeymoon period** (i.e., partial remission) of*

type 1 diabetes mellitus is characterized by reduced insulin requirements while good glycemic control is maintained.»,

«*The **honeymoon period** was defined as a period with insulin requirements of less than 0.5 U/kg/day and hemoglobin A1c (HbA1c) level of less or equal to 6%.*» [Abdul-Rasoul, et al. 2006]:

Խոսքը գնում է առաջին տիպի շաքարախտի դեպքում կիրառվող ինսուլինային թերապիայի մասին: Այսպիսի բուժման ընթացքում օրգանիզմում արտադրվող ինսուլինի չափաբաժինը լրացվում է՝ բարելավելով հիվանդի ինքազգացողությունը: Կլինիկորեն այս փուլը նկարագրվում է որպես «մեղրամսի փուլ», որն ամենայն հավանականությամբ, կապվում է իմունային համակարգի բարելավված գործունեության հետ: Տվյալ դեպքում զուգորդումներ են տարվում հիվանդի ինքազգացողության և նորապսակների համատեղ կյանքի ենթադրաբար՝ հոգեհուզական առավելագույնս երջանիկ փուլի միջև:

Կան փոխաբերական միավորներ, որոնց միջոցով առկայացվում է նկարագրությունը ախտահարված օրգանի կամ հյուսվածքի մասին: Օրինակ՝ «**wandering kidney**» (թափառող երիկամ) միավորը վկայում է երիկամի ախտաբանական վիճակի մասին: Այն բնութագրվում է երիկամի չափից ավելի կամ ոչ բնականոն շարժունությամբ, դիտվում է երիկամի իջվածք, կտրուկ շարժումների ժամանակ երիկամը շեղվում է սահմանված դիրքից: Ախտաբանական այս վիճակը հայտնի է նաև «**floating kidney**»՝ «լողացող երիկամ» անվանումով [Stedman’s Online Medical Dictionary]:

Մեկ այլ օրգանի՝ ստամոքսի ախտաբանական վիճակի մասին է վկայում «**hourglass stomach**» (ավազի ժամացույցի տեսքով ստամոքսի նեղացում) փոխաբերական միավորը: Այս դեպքում ստամոքսի պատի կենտրոնական հատվածը կծկվելով սեղմվում է՝ բաժանելով ստամոքսը երկու խոռոչների՝ ստամոքսամուտքի և ստամոքսատեղքի, որոնք հիշեցնում են ավազի ժամացույցի երկու առանձին ապակե գնդերը [Stedman’s Online Medical Dictionary]:

Ակնաբուժության ոլորտում, օրինակ, հաճախ ախտորոշում են «**fish eye disease**» (ծկան աչքի հիվանդություն) կոչվող ախտաբանությունը, որը մասնակի ֆերմենտային անբավարարությամբ բնութագրվող ժառանգական խանգարում է՝ ներկայացված հետևյալ օրինակներում. «*Fish-eye disease, also called partial LCAT deficiency, is a disorder that causes the clear front surface of the eyes (the corneas) to gradually become cloudy.*» [National Center for Biotechnology Information, Genetic Testing Registry, Fish-eye disease],

«Fish eye disease (FED) is characterized by severe corneal opacities, causing impaired vision, and dyslipoproteinaemia: hypertriglyceridaemia, raised levels of very low density lipoproteins (VLDL), triglyceride enrichment of low density lipoproteins (LDL) and reduction of high density lipoproteins (HDL).» [Carlson, Philipson 1979]:

Այս խնդրի հետևանքով ակնազնդի առաջնային մասում գտնվող եղջերաթաղանթը աստիճանաբար պղտորվում է կամ դառնում անթափանցիկ, ինչը, որպես կանոն, առաջին անգամ ի հայտ է գալիս պատանեկության կամ վաղ ծերության շրջանում, և կազմված է լինում եղջերաթաղանթի վրա տարածված մաղձաճարպի (խոլեստերոլ) փոքր, գորշավուն կետերից (վերջիններս անվանվում են նաև անթափանցիկություններ, պղտորություններ): Հիվանդության զարգացումը հանգեցնում է եղջերաթաղանթի խիստ արտահայտված պղտորության, իսկ ծայրահեղ դեպքերում՝ տեսողության խանգարման: Եղջերաթաղանթի այսպիսի պղտորություն կամ անթափանցիկություն դիտվում է եփած ձկան ակնային մարմնում և մարդու աչքի այս խանգարման անվանումը ձևավորված է ձկան եղջերաթաղանթի՝ խիստ պղտոր և անթափանցիկ տեսքի համանմանությամբ:

Շնչառական ուղիների սկզբնական հատվածի՝ քթի ախտահարումները նույնպես կարող են առկայացվել փոխաբերությունների միջոցով: Օրինակ, բնածին սիֆիլիսի, տարածուն կարծրախտի, քթի որոշակի բորբոքումների կամ կոտրվածքների հետևանքով քթի հյուսվածքը որոշ չափով ենթարկվում է ձևափոխությունների: Տվյալ դեպքում դիտվում է քթի ոսկրային բեկորների տեղաշարժ և քթային կամուրջը (քթամեջքը) ներհրվում է դեպի քթի խոռոչ՝ հիշեցնելով ձիու թամբի արտաքին ուրվագիծը: Այս պարագայում օգտագործվում է **«saddle nose»** (թամբաձև քիթ) արտահայտությունը՝ նկարագրելու համար նշված ախտաբանությունը [Stedman's Online Medical Dictionary]:

Հարկ է նշել, որ վերացական երևույթները հասկացության մակարդակում առկայացնելու գործում օգնության է գալիս փոխաբերությամբ միջնորդավորված մտածողությունը, որը միախլուտում և հաճախ վերափոխատավորում է առօրյայում կիրառվող լեզվամիավորները: Օրինակ՝ ակնաբուժության ոլորտում **«setting-sun phenomenon»** կամ **«sunset eye sign»** («արևամուտի» ախտանիշ) փոխաբերական միավորն օգտագործվում է՝ նկարագրելու ներգանգային գերճնշման հետևանքով առաջացած լուրջ ակնային խանգարումը, որի

ժամանակ դիտվում է վերին կոպի իջվածք կամ կոպանկ՝ կոպը կարծես անկում է դեպի ներքև, իսկ ծիածանաթաղանթի և վերին կոպի միջև նկատվում է սպիտաթաղանթը: Կլինիկական այս նշանները նկարագրված են հետևյալ օրինակներում. «*The sunset eye sign (also known as the setting sun phenomenon) is a clinical phenomenon encountered in infants and young children with raised intracranial pressures. It consists of an up-gaze paresis with the eyes appearing driven downward. The lower portion of the pupil may be covered by the lower eyelid, and sclera may be seen between the upper eyelid and the iris.*» [Radiopaedia.org, Sunset eye sign],

«*The setting-sun phenomenon is an ophthalmologic sign in young children resulting from upward-gaze paresis. In this condition, the eyes appear driven downward, the sclera may be seen between the upper eyelid and the iris, and part of the lower pupil may be covered by the lower eyelid.*» [Boragina, Cohen 2006]:

Տվյալ դեպքում ախտաբանության կլինիկական դրսևորումը զուգորդվում է բնության երևույթներից՝ մայրամուտի արևի պատկերի հետ: Փոխաբերությունն, այս առումով, մեկնաբանում է բարդ բժշկագիտական տեղեկատվությունը՝ այդպիսով մատչելի դարձնելով դրա իմաստաբովանդակային պլանը և ապահովելով ասելիքի, հաղորդագրության դյուրըմբռնելիությունը հասցեատիրոջ համար:

Անդրադառնալով բժշկագիտության ասպարեզում արվող պնդումներին և հաղորդվող տեղեկատվությանը՝ փիլիսոփայության պրոֆեսոր Ուորեն Շիբլզը և բժիշկ, մանկաբարձ-գինեկոլոգ, բժշկահրավական էթիկայի մասնագետ Բարբարա Մեյերը գտնում են, որ բժշկության մեջ ցանկացած պնդում հոետորական է, քանի որ ուղղված է ասելիքի մեջ համոզելուն և ներազդեցություն գործելուն, և, ըստ այդմ, բժշկագիտության մեջ օգտագործվող գիտական լեզուն հոետորական է իր բնույթով և մեծապես միջնորդավորված փոխաբերությամբ [Maier, Shibles 2011]: «*The Philosophy and Practice of Medicine and Bioethics: A Naturalistic-Humanistic Approach*» վերնագրված գրքում հեղինակները չեն պարտադրում դիրքորոշումներ, այլ առաջարկում են տվյալ իրադրությունը գնահատել այլընտրանքորեն կամ իրավիճակը դիտարկել քննադատական տեսանկյունից՝ միջնորդավորված փոխաբերությամբ, այլ խոսքով՝ օգտագործելով փոխաբերությունը՝ որպես իրադրությունը գնահատելու միջոց [Maier, Shibles 2011]:

Բժշկական կրթության և բժշկահումանիտար գիտությունների ակադեմիայի պրոֆեսոր Ալան Բլիքլեյը 2017 թ. լույս տեսած իր՝ «Thinking with Metaphors in Medicine: The State of the Art» գրքում նշում է, որ հոետորական լեզվի առաջնանպատակը ազդեցություն գործելն է, մինչդեռ նկարագրական, տեխնիկական լեզուն հիմնականում կոչված է տեղեկատվություն հաղորդելուն կամ լրամշակումներ կատարելուն: Ըստ նրա՝ տեխնիկական լեզվի դեպքում խոսքային ակտը կարող է կազմվել փոխաբերության հիմքով «և *հենց այս միջուկն է, որը երաշխավորում է ասելիքի կամ տեքստի ազդեցիկությունը*» [Bleakley 2017:9]:

Բժշկագիտության պատմության մեջ սակավ թիվ չեն կազմում նաև այն դեպքերը, երբ տեսաբանները, գիտության պահանջի դրդմամբ, լեզվականացրել են իրենց գիտատեսական մտահանգումը կամ հետազոտության վերջնարդյունքը՝ փոխաբերական միավորների միջոցով, ինչը ժամանակի ընթացքում դարձել է հանրության սեփականությունը և սկսել է դիտարկվել որպես տվյալ տեսության մեջ շրջանառվող ելակետային տերմին: Օրինակ, ըստ Էմիլի Մարտինի՝ փոխաբերությունը խորապես արմատացած է եղել բժշկության ոլորտում դեռևս Վերածննդի ժամանակաշրջանում [Martin 2001]: Այս առումով հիշատակության են արժանի հատկապես գիտական անատոմիայի հիմնադիր՝ Անդրեաս Վեզալիուսի ուսումնասիրությունները մարդու անատոմիայի մասին: Վեզալիուսը (1514-1564թթ.) Վերածննդի դարաշրջանի առաջին բժիշկներից էր, ով բացահայտել է մարդու օրգանիզմը և մկանային համակարգը դիաֆրագմաների միջոցով, իսկ նրա հեղինակած աշխատությունները դարձել են այդ շրջանի անատոմիայի՝ որպես բժշկագիտության նոր ուղղության զարգացման սկիզբը: 1543 թվականին Բազելում հրատարակված «De humani corporis fabrica libri septem» («Մարդու մարմնի կառուցվածքի մասին») աշխատությունում Վեզալիուսը ներկայացրել է մեկնաբանություններ, որոնք հազեցած են մեխանիկական բնույթի փոխաբերություններով, օրինակ՝ ոսկրակմախքային համակարգի վերաբերյալ հատվածերում: «Function of Auditory Ossicles» բաժնում նկարագրության մեջ հանդիպում ենք հետևյալ մեկնաբանությանը «*these bones certainly resemble an anvil and a hammer in shape...*», «*it is as if the ossicle just described were performing the function of a little hammer while the other were playing the part of an anvil*» [Vesalius 1998:86], մեկ այլ դեպքում գանգը համեմատվում է ամրաշինության հետ, որը պաշտպանիչ դեր է կատարում գլխուղեղի համար, այն է՝ «*a fortification, a protecting rampart*

defending the brain» [Vesalius 1998:138], իսկ կրծոսկրը համեմատվում է տուսերի հետ ամրության առումով՝ «*The breastbone is like a sword*» [Vesalius 1998:215]:

Վեզալիուսը Վերածննդի մեծագույն հետազոտողներից էր, ում շնորհիվ լայն տարածում գտավ այն միտքը, որ մարդն օժտված է մեքենայանման գործառույթներով և մարդու անատոմիան և անատոմիական առանձնահատկություններն ընկալելը դառնում է առավել դյուրին, երբ նկարագրությունը տրվում է մեքենայի մոդելի կիրառությամբ: Այս առումով Վեզալիուսի աշխատանքն ունի ընդհանրություններ իտալացի ականավոր գիտնական, արվեստագետ, նկարիչ Լեոնարդո դա Վինչիի (1452-1519թթ.) աշխատանքների հետ անատոմիայի բնագավառում: Կատարելով ոսկրերի, մկանների և տարբեր օրգանների բազմաթիվ գծանկարներ՝ դա Վինչին կազմել է նաև այդ նկարների գրավոր բացատրությունները մասնավորապես մեխանիկայի օրենքների տեսանկյունից: Ըստ այդմ, մարդն օրգանական մեքենա է և կարող է ներկայացվել մեխանիկական կառույցի կամ մեխանիզմների տեսքով, որն ունակ է միաժամանակ կատարելու բազմաթիվ գործողություններ [Tombs 2002]: Իր «*Notebooks*» աշխատությունում գիտնականը հստակ արտահայտում է այն միտքը, որ մարդկային մարմինը մեքենա է կամ գործող մեխանիզմ, որի բաղկացուցիչ մասերը կարող են փոխարինվել որևէ այլ մասով անսարքության դեպքում [Richter, <http://www.gutenberg.org/catalog/world/readfile?fk_files=3275533&pageno=2>):

Մեկ այլ գիտնական՝ Ժյուլիեն Օֆրե դը Լամետրին (1709-1751թթ.), իր ուրույն տեղն է զբաղեցնում փիլիսոփայության ասպարեզում: Որպես ֆրանսիական լուսավորության շրջանի փայլուն մատերիալիստ և բժիշկ՝ նրա գրչին է պատկանում 1747 թվականին գրված «*Machine Man and Other Writings*» աշխատությունը (մեզ համար աղբյուր է ծառայել 1996 թվականի հրատարակությունը), որում Լամետրին փորձ է արել բացատրել մարդու մարմնի և ուղեղի կառուցվածքը մատերիալիստական տերմինների կիրառմամբ: Մարդու օրգանիզմը Լամետրին համարել է ինքնալար մեքենա՝ նման ժամացույցի մեխանիզմին: Այս առումով «*Machine Man and Other Writings*» աշխատությունը կարևորագույն բացատրություններ է ապահովում և հատկանշական է, որ այս բոլոր նկարագրությունները տրվում են ճանաչողական արժեք ունեցող փոխաբերություններով, որոնցից կարելի է առանձնացնել «*the human body winds itself up*» [La Mettrie 1996:7], «*we think, and we are even honest*

citizens...it all depends on the way our machine is constructed» [La Mettrie 1996:8], «body is disturbed and recovers like a watch, ... thanks to ... own springs» [La Mettrie 1996:101] արտահայտությունները: Նմանաբնույթ օրինակներն ակնհայտորեն հիմք են տալիս փաստելու, որ մարդու մարմինը մեխանիկորեն արձագանքում է խթան հանդիսացող ազդակներին՝ անկախ այն հանգամանքից՝ արթմնի վիճակում է, թե ոչ, իսկ օրգան-համակարգի գործունեությունը պայմանավորված է օրգանիզմի կենսաբանական մեխանիզմների աշխատանքով՝ տվյալ դեպքում զսպանակների շարժումների զուգորդությամբ:

Որպես ամփոփում՝ կարելի է փաստել, որ փոխաբերությունը, լինելով մտածողության լեզվաճանաչողական մեխանիզմներից մեկը, արմատավորվում է գլխուղեղի ճանաչողական գործունեության մեջ՝ այլընտրանքային կերպով լեզվականացնելով մտածողության և երևակայության վերջնարդյունքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Abdul-Rasoul, M., Habib, H., & Al-Khouly, M. (2006). *“The honeymoon phase” in children with type 1 diabetes mellitus: Frequency, duration, and influential factors*. *Pediatric diabetes*. 7(2), 101–7.
2. Bleakley, A.D. (2017). *Thinking with metaphors in medicine: the state of the art*. Abingdon, Oxon New York, NY Routledge/Taylor & Francis Group
3. Boragina, M., & Cohen, E. (2006). *An infant with the “setting-sun” eye phenomenon*. *CMAJ*: Canadian Medical Association Journal, 175(8), 878. <http://doi.org/10.1503/cmaj.060507>
4. Carlson, LA, Philipson, B. (1979). *Fish-eye disease. A new familial condition with massive corneal opacities and dyslipoproteinaemia*. *Lancet*.2:922–4.
5. Gibbs, R.W. (1994). *The Poetics of Mind: Figurative Thought, Language, and Understanding*. Cambridge: Cambridge University Press.
6. Harvard Classics, Vol. 38, Part 3, *On the Motion of the Heart and Blood in Animals*, William Harvey, <<http://www.bartleby.com/38/3>> 25.08.2012
7. Harvey, W. (1964). *The Anatomical Lectures of William Harvey*. / Tr. by G. Whitteridge. Edinburgh.

8. Kittay, E.F. (1987). *Metaphor: Its Cognitive Force and Linguistic Structure*. Oxford: Oxford University Press.
9. Lakoff, G., Johnson, M. (2003). *Metaphors we live by*. London: The University of Chicago press.
10. La Mettrie, J.O. (1996). «*Machine Man and Other Writings*» <https://books.google.am/books?id=_JMigX9R8qwC&source=gbs_navlinks_s>, 101, 25.08.2012
11. Martin, E. (2001). “*Rationality, Feminism, and Mind*,” pp. 214-230 In *Science, Medicine, Technology: The Difference Feminism Has Made*, Angela N.H. Creager, Elizabeth Lunbeck, and Londa Schiebinger, eds. Chicago, IL: University of Chicago Press.
12. Maier B., Shibles W.A. (2010). *The Philosophy and Practice of Medicine and Bioethics: A Naturalistic-Humanistic Approach*, Springer Science & Business Media.
13. National Center for Biotechnology Information, Genetic Testing Registry, Fish-eye disease <<https://www.ncbi.nlm.nih.gov/gtr/conditions/C0342895/>> 16.01.2013
14. Radiopaedia.org, Sunset eye sign <<https://radiopaedia.org/articles/sunset-eye-sign>> 20.10.2014
15. Stedman’s Online Medical Dictionary, <<http://stedmansonline.com/>> 25.08.2012
16. The Notebooks of Leonardo Da Vinci. (1888) // Translated by J.P. Richter. Vol.1/ <http://www.gutenberg.org/catalog/world/readfile?fk_files=3275533&pageno=2>. 25.08.2012
17. Tombs, G. (2002). *Man the machine: A history of a metaphor from Leonardo da vinci to H. G. Wells*. Montreal, Canada: Department of History, McGill University.
18. Vesalius, A. (1998). *On The Fabric Of The Human Body*, Book I: *The Bones and Cartilages*, A Translation of *De Humani Corporis Fabrica Libri Septem*, By William Frank Richardson, in collaboration with John Burd carman, San Francisco: Norman Publishing, p. 86

СВЕТЛАНА МАРГАРЯН, АЛИНА ПЕТРОСЯН-ЗНАЧИМОСТЬ МЕТАФОРЫ В МЕДИЦИНЕ

В настоящей статье изучаются метафоры, которые используются в медицине как термины для обозначения определенных болезней, клинических признаков и симптомов, а также патологий различных органов и мягких тканей организма. В статье рассматриваются ряд утверждений, которые развиваются вокруг использования метафоры в медицине. В попытке выявить когнитивную значимость метафоры, в статье кратко изложены некоторые основные аргументы, демонстрирующие с точки зрения медицинской рациональности эффективность применения метафор в медицине.

SVETLANA MARGARYAN, ALINA PETROSYAN- THE SIGNIFICANCE OF METAPHOR FROM THE PERSPECTIVE OF MEDICINE

This paper focuses on how metaphor works in a medical setting for naming certain diseases, clinical signs and symptoms as well as pathologies of different organs and soft tissues of the human body. The paper examines the strand of debate, which evolves around the usage of metaphor in medicine. In an attempt to reveal the cognitive force of the metaphor, the paper succinctly analyses some of the major claims on the effectiveness of using metaphors in medicine from the perspective of medical rationality.

ԱՆՑՅԱԼ ԴԵՐՔԱՅԻ ԿԵՐՊԱՍԵՌԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ Վ ԴԱՐԻ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ անցյալ դերբայ, -եալ և -եցեալ վերջավորություններ, սեռային դրսևորումներ, ներգործական և կրավորական սեռեր, V դար

Անցյալ դերբայը գրաբարում ուներ **-եալ** վերջավորությունը, որը տարբեր կերպ է ստուգաբանվել: Ա. Տոմսոնը, Ք. Պատկանյանը, Ա. Մեյեն, Գր. Ղափանցյանը, Հր. Աճառյանը այն կարծիքին են, որ այս դերբայական ձևի **-եալ** մասնիկի **լ** վերջնահնչյունը առաջացել է հնդեվրոպական **-lo-**ից և նույն ծագումն ունի, ինչ անորոշ դերբայի **լ** հնչյունը⁹⁶, որը հայերենում խոնարհիչի հետ կազմում է անորոշ, իսկ **եա** կապակցության հետ՝ անցյալ դերբայ: Իր հերթին **եա**-ն կազմված է երկու տարրից՝ **ե**-ից և **ա**-ից, որոնցից **ե**-ն առաջացել է հնդեվրոպական **is** ածանցից, իսկ **ա**-ն՝ հնդեվրոպական երկար **a-**ից⁹⁷:

Մարիետը, Ա. Մեյեն, Հ. Աճառյանը փաստում էին, որ հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենն ու սլավոնական լեզուները միակն են, ուր **-lo** մասնիկը տվել է անվանական ձևեր, որոնք կցվել են բայական բներին: Իսկ **g-**ն համարում են կրավորականի ցուցիչ: Այսինքն՝ գրաբարում «սիրեալ» նշանակում է «սիրած», «սիրեցեալ»՝ սիրված: Սա մասնավորապես վերաբերում է այն բայերին, որոնք բայական վերջավորությունից առաջ ունեն **յ, չ, ճ, ջ** բաղաձայնները, որոնց ավելի հեշտ է ավելացնել **եա** երկբարբառը՝ աճ-եալ, աղաչ-եալ: Սակայն սեռային այս տարբերակումը հստակ չէ գրաբարում⁹⁸:

⁹⁶Томсон А., Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб, 1890, ст. 254, К. Патканов, Исследование о составе армянского языка, СПб, 1864, ст. 104, Գր. Ղափանցյան, “К Происхождению армянского языка”, Հայկ. ՍՍՌ ԳԱ §Տեղեկագիր՝ 1946, N 7, էջ 18, հմմտ. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ

⁹⁷ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Մաս I, Եր., 1940, էջ 31, հմմտ. Թ. Ղարազուլյան, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Եր., 1961, էջ 172-174:Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Եր.1961, էջ 379:

⁹⁸ Հմմտ. Աճառյան Հ., Լիակատար քերականություն...., հ. 5, էջ 23:

Անցյալ դերբայի կապը անորոշ դերբայի հետ, ինչպես նաև **եա** երկբարբառի կապը անցյալի հիմքի համանուն մասնիկի հետ նշվել է նաև Գ. Զահուկյանի, Ս. Ղազարյանի, Ա. Աբրահամյանի կողմից՝ **is >եա**⁹⁹:

Այսպիսով՝ անցյալ դերբայի **-եալ** վերջավորությունը բաղադրյալ ձևույթ է. բուն վերջավորությունն է **լ-lo-ն**, **եա-is-ը** բայահիմքի մասն է:

Անցյալ դերբայը գրաբարում կազմվում է ներկայի և անցյալ կատարյալի հիմքից, ինչպես՝ աղալ-աղացեալ, գթալ-գթացեալ, գտանել-գիտ-գտեալ, հատանել-հատ-հատեալ, տեսանել-տես-տեսեալ, հեծնուլ-հեծ-հեծեալ, լնուլ-լից-լցեալ, ծնանիմ-ծին-ծնեալ, մեռանիմ-մեռ-մեռեալ, ուսանիմ-ուս-ուսեալ և այլն:

Ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի անցյալ դերբայը կազմվում է նրանց պատճառականի կատարյալի հիմքից, օրինակ՝ մարտնչել (իմ)-մարտուցեալ, թռչել(իմ)-թռուցեալ, զարթնում-զարթուցեալ, ոստնուլ-ոստուցեալ, մածնուլ-մածուցեալ:

Ե և **ի** խոնարհումների պարզ բայերի անցյալ դերբայը կազմվում է և՛ կատարյալի, և՛ ներկայի հիմքերից, այսպես՝ գրեմ-գրեալ//գրեցեալ, սիրեմ-սիրեալ//սիրեցեալ, այրեմ-այրեալ//այրեցեալ. բնակիմ-բնակեալ//բնակեցեալ:

Այս հարցի վերաբերյալ Հ. Աճառյանը համակարծիք է Մարիեսի պնդմանը, ըստ որի՝ «**-եմ**, **-իմ** լծորդության բայերի մի մասի դերբայը կազմվում է **-եցեալ** մասնիկով, փոխանակ **-եալ**, ուր **-եա** մասը կրկնված է երկու անգամ (սիրեցեալ/սէր **-եա-ց-եալ**): Անշուշտ այն ժամանակ, երբ կազմվում էին այս ձևերը, այս **-եց** մասնիկի մեջ զգալի չէր **is-a**»¹⁰⁰:

Վերջին ժամանակներում գրաբարի դերբայների ուսումնասիրությամբ զբաղվել է նաև Թ. Շահվերդյանը, որն իր «Գրաբարի դերբայները...» աշխատության մեջ ամփոփում է անցյալ դերբայի վերաբերյալ բոլոր տեսակետները և հանգում այն եզրակացության, որ լեզվում համաբանության օրենքի համաձայն՝ **-ել**, և **-իմ** խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայի կազմության ժամանակ **եա+եա**, **ե+ե** վանկերից մեկը վերանում է ամփոփման օրենքով¹⁰¹:

⁹⁹ Հմմտ. Джаукян Г., Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, ст. 190, Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 378-379, հմմտ. Թ. Ղարազույան, նշվ. աշխ., էջ 172-174:

¹⁰⁰ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ 5, էջ 23:

¹⁰¹ Շահվերդյան Թ., Գրաբարի դերբայները. ձևաբանություն և շարահյուսություն, Եր., 2001, էջ 114:

Մ.Աբեղյանի կարծիքով **-եցեալ** ձևը արտահայտում է կրավորականի իմաստ¹⁰²:

Ինչպես տեսնում ենք, մի շարք լեզվաբաններ անցյալ դերբայի կատարյալի և ներկայի հիմքերից կազմության մեջ տեսնում են բայասեռի դրսևորման իրողություն:

Այս տեսակետը գալիս էր 17-րդ դարի քերականներ Հովհաննես Հոլովից և Մխիթար Սեբաստացուց: Նրանք հստակորեն առանձնացնում են ներգործական և կրավորական սեռերը՝ կրավորական սեռի համար վերցնելով **-եց-** բաղադրիչը, ինչպես՝ Սեբաստացու աշխատության մեջ ներգործական սեռի համար՝ **թողեալ** (էջ 99), **տեսեալ** (էջ 58), **բացեալ** (էջ 58), **սիրեալ** (էջ 48), կրավորականի համար՝ **թողեցեալ, տեսանեցեալ, բանեցեալ**: Հովհ.Հոլովի աշխատության մեջ ներգործականի համար՝ **ծանեալ** (էջ 107), **տուեալ** (էջ 49), **խոստովանեալ** (էջ 70), **տրեալ** (էջ 92), **արարեալ** (էջ 82), կրավորականի համար՝ **ծանեցեալ, տուեցեալ, խոստովանեցեալ, տրեցեալ, արարեցեալ**:

Ի դեպ՝ այս քերականների աշխատություններում հանդիպում ենք անցյալ դերբայի այնպիսի ձևերի, որոնք մեր մատենագրության մեջ չեն գործածվել, օրինակ՝ Սեբաստացու աշխատության մեջ՝ **ընթեռնանեցեալ** (էջ 106), **թողանեցեալ** (էջ 99), **լուանեցեալ** (էջ 68), **իմանեցեալ** (էջ 75), **լնանեցեալ** (էջ 95), Հովհաննես Հոլովի աշխատության մեջ՝ **լալեցեալ** (էջ 49), **ողբանեցեալ** (էջ 92), **հաւատանեցեալ** (էջ 92), **բառնեցեալ** (էջ 94)¹⁰³:

Ա. Բագրատունին ճիշտ չի համարում անցյալ դերբայի **-եալ** մասնիկով կազմված ձևը ներգործական և **-եցեալ**-ով ձևը կրավորական դիտելը՝ նշելով, որ «երկրորդ և երրորդ լծորդության առաջին օրինակի դերբայքն **եցեալ** և **եալ** յանգին անխտիր են ի ներգործական և ի կրաւորական կամ չեզոք միտս»¹⁰⁴:

Ա. Աբրահամյանը գրում է. «Այս դերբայի **-եալ** մասնիկը ընդհանուր է բոլոր սեռերի համար: Ներգործական սեռի բայերն այս դերբայում ընդհանուր նշանակություն ունեն: Սրանք ևս, հասարակ (deponens)

¹⁰² Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Եր. 1974, էջ 722:

¹⁰³ Ջուրթին հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, շարադրեցեալ ի Յովհաննեսէ վարդա-պետէ Կոստանդնուպօլսեցոյ, Հոռմ, 1674, Մխիթար Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի, Հայ-կազեան սեռի, Վենետիկ, 1730, Հմմտ. Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, Եր., 2010, էջ 291:

¹⁰⁴ Բագրատունի Ա., նշվ. աշխ., էջ 199:

բայերի նման, մի ձևով ունենում են և՛ ներգործական, և՛ կրավորական նշանակություն: Սակայն քիչ չէ այն քերականների թիվը, որոնք աշխատում են ներգործական և կրավորական սեռերի միջև անցյալ դերբայում ձևական տարբերություններ տեսնել: Նրանք որոշակիորեն անջատում են (ըստ ձևի) այդ սեռերի դերբայը: Կրավորական սեռի համար դերբայը վերցնում են - **եց**- բաղադրիչով....:

Այս բայերի անցյալ դերբայը -**եց**- բաղադրիչով, իհարկե, կարող է լինել, բայց այն միայն կրավորական սեռի համարելը սխալ է»¹⁰⁵:

Ստորև V դարի մատենագրությունից քաղած օրինակների հիման վրա փորձենք պարզաբանել -**եալ** և -**եցեալ** բաղադրիչներով ձևավորվող դերբայների յուրահատկությունները և տեսնենք՝ ինչքանով են ճիշտ այն պնդումները, թե -**եցեալ**-ով կազմվածները կրավորական են, իսկ առանց -**եց**-ի կազմվածները՝ ներգործական:

Կոչեցեալ դերբայը կիրառված է և՛ ներգործական, և՛ կրավորական նշանակությամբ, ինչպես՝ «....ի նոյն փառատիրութիւն նորին Հոգւոյ **կոչեցեալ** (ներգործական) եւ Դաւթաւ եւ երեք մանկամբքն ի հնոցի անդ ընծայեցուցանէ» (Եզ., 158)՝ (Նոյն հոգին նոյն փառատիրութեան է կոչել և՛ Դավթի, և՛ հնոցի մեջ նետված երեք կտորիճների միջոցով /էջ 159/): «Անուն իմ ի վերայ ձեր **կոչեցեալ է** (կրավորական)» (Ագ.,100)՝ (Իմ անունը ձեր վրա է կոչված /էջ101/): «Եւ անդէն թագաւորն ի ներքս **կոչեցեալ** (ներգործական) գդպրապետն» (Եղ., 84)՝ (Եվ թագավորը, անմիջապես ներս կանչելով դպրապետին /էջ 85/....): «....և **կոչեցեալ** (ներգործական) սրբոյն Բարսղի» (Բուզ., 162)՝ (Սուրբ Բարսեղը կանչեց /էջ 163/): «Յայնժամ արքային Պարսից Վռամայ **կոչեցեալ** (ներգործական) ի դուռն զթագաւորն Հայոց Արտաշիր» (Խոր., 432)՝ (Այն ժամանակ Պարսից Վռամ թագավորը դուռը կանչեց Արտաշիր թագավորին էջ /433/):

Այստեղ կարևոր է նաև բայիմաստը. **կանչել** իմաստով գործառույթները ներգործական սեռի են, իսկ **անվանել** իմաստով՝ կրավորական:

Ստորև բերվող դերբայները, անկախ իրենց հիմքի կազմությունից, կիրառվում են և՛ ներգործական, և՛ կրավորական նշանակությամբ, ինչպես՝ «....ընդէ՛ր դուք ընդ նոսա **այրեցեալ** (կրավորական) սոչորեցայք....» (Եղ., 110)՝ (Ինչո՞ւ եք նրանց հետ այրվում-խորովվում /էջ 111/): «....զի այն անկիւնն ի վեր կոյս **ուղղեալ է** (կրավորական) իբրև զկշռուած սահման» (Ագ., 270)՝ (....որպեսզի այդ վեր ուղղված անկյունը....

¹⁰⁵ Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները, էջ 170-171:

/էջ 271/): «....լաւ էր թէ յայտնէր և սրբովք **աղաչեցեալ** (ներգործական) զԱստուած՝ օգնականութիւն գտանել բուժելոյ ի չարէն» (Կողբ., 70)' (....լավ կլինէր հայտնել սրբերին և, նրանց միջոցով Աստծուն խնդրելով, օգնություն գտնել՝ չարից բուժվելու համար /էջ 71/): «Հարցցուք. փառքն յումեքէ՞ **յաջողեալ էին** (կրավորական) նմա: Եթէ յումեքէ **պարգևեալ էին** (կրավորական) նմա փառքն» (Կողբ., 96)' («Հարցնենք՝ փառքը մեկի կողմի՞ց էր շնորհված նրան: Եթե փառքը մեկի կողմից էր պարգևված էր նրան /էջ 97/): «Ձոր **խոցեալ էր** (կրավորական) ի պատերազմի» (Բուզ., 392)' (...որ խոցվել էր պատերազմում /էջ 393/): «....զի յառաջ նախ անդ **շինեալ էր** (կրավորական) զսուրբ եկեղեցին....» (Բուզ., 58)' (....որովհետև առաջին անգամ այնտեղ էր շինված սուրբ եկեղեցին /էջ 59/): «**Հրամայեալ լինէր** (կրավորական) ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել» (Կոր., 114)' («Հրամայվեց՝ մի որոշ ժամանակ այնտեղ, տիեզերական քաղաքում մեծարել /էջ 115/¹⁰⁶): «Որոյ **ատեցեալ** (ներգործական) զայրն իւր զՏրդաստ» (Խտոր., 236)' (Կինը ատեց իր ամուսնուն՝ Տրդաստին /էջ 237/):

Վերոբերյալ օրինակներից երևում է, որ կրավորական սեռի իմաստ արտահայտելու համար ամենևին էլ պարտադիր չէ բայերի մեջ **-եց-** բաղադրիչի առկայությունը: Եվ ընդհակառակը, նշված են **-եց-** բաղադրիչով ձևեր ներգործական սեռի նշանակությամբ:

Այսպիսով՝ V դարում անցյալ դերբայի երկու տարբերակների մեջ ներգործական և կրավորական սեռերն առանձնացնելը սխալ է¹⁰⁷: Այդ մասին են փաստում նաև ստորև մեր կողմից ներկայացվող վիճակագրական տվյալները.

¹⁰⁶ Բնագրային թարգմանությունները ներկայացվում են ըստ Մ. Աբեղյանի: Տե՞ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1981:

¹⁰⁷ Մենք համակարծիք ենք Թ. Շահվերդյանի նույն պնդմանը: Տե՞ս Թ. Շահվերդյան, Գրաբարի դերբայները. ձևաբանություն և շարահյուսություն, էջ 117-118:

Վ դար	ներգ. -եալ	ներգ. -եցեալ	կրավ. -եալ	կրավ. -եցեալ
Բուզանդ	263	7	159	3
Կորին	67	1	33	3

Այլ է մոտեցումը **խօսեալ** և **խօսեցեալ** բայերի վերաբերյալ: Ըստ Ա. Աբրահամյանի՝ այս ձևերի մեջ կա իմաստային տարբերություն. **խօսեալ** նշանակում է «նշանած», իսկ **խօսեցեալ**՝ «խօսած»: Ա. Աբրահամյանը նշում է. «Խօսիմ» բայի անցյալ դերբայը ներկայի հիմքով (**խօսեալ**) նշանակում է **նշանած** (աղջիկ). հմմտ. «Քանզի յորժամ **խօսեալ** լինի կին առն՝ հեղի ի նմանէ տեսությամբ....», «Դարձեալ որպէս չէ օտար փեսայն կուսին՝ որ **խօսեալն իցէ** նմա.....» (Լամբրոնացի Խորհրդածութիւնք ի կարգս...., Վենետիկ, 1847, էջ 122-123), իսկ կատարյալի հիմքով (**խօսեցեալ**)՝ խոսած, խոսել»¹⁰⁸:

Սակայն պետք է նշենք, որ Ա. Աբրահամյանը այս օրինակները վերցրել է 12-րդ դարի հեղինակ Լամբրոնացուց: Իսկ 5-րդ դարի փաստական նյութի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամենևին էլ այսպիսի տարանջատում չկա. **խօսեալ** և **խօսեցեալ** դերբայներն ունեն նույն նշանակությունը, ինչպես՝ «Եւ գայս ամենայն **խօսեցեալ** ընդ թագաւորին քահանայապետին մեծին Ներսէսի» (Բուզ., 188): «Ձոր....քո և նորա **խօսեցեալ էր** ընդ միմեանս» (Փարպ., 172): «....ոչ ի մէջ **արուեստախօսեալ** մերոյն կարծեօք վիճաբանելով» (Կոր., 72): «Եւ ամենայն բանից քոց հաւատամք, զոր քո **խօսեալ է** ընդ մեզ և **երդուեալ** (Փարպ., 322):

Նշենք մի հանգամանք ևս. եթե անցյալ դերբայի **-եց-** հիմքով կազմությունը բնորոշ լիներ միայն կրավորական սեռին, ապա **-եց-** բաղադրիչով մի շարք բայեր չէին արտահայտի չեզոք սեռի նշանակություն: Հմմտ. «....զի **աճեցեալ** բազմացին ազգք Հայոց» (Եղ., 52): «Իսկ իբրև **հայեցեալ** ի բազմախոտն գումարութիւն արդարոցն....» (Կոր., 74): «....ընդ նոյն իսկ ընդ այս **նայեցեալք**, անցուցին չարութեամբք քան յամենայն դարս» (Բուզ., 56): «....**ամաչեցեալ** կորանային և ընդ

¹⁰⁸ Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները, էջ 168-169:

երկիր պշնուին» (Եղ., 84): «...չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՛ որ **իշխեցեալ է** յիշեցուցանել թագաւորաց...» (Բուզ., 316):

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ գրաբարի անցյալ դերբայը կազմվում է և՛ ներկայի, և՛ անցյալ կատարյալի հիմքից՝ **-եալ** վերջավորությամբ: Անցյալ դերբայ ունեն չորս խոնարհումների բոլոր սեռերի պարզ, ածանցավոր, պատճառական և անկանոն բայերը: Սակայն որոշ լեզվաբաններ սեռային տարբերակում են կատարել **-եալ**-ը համարելով ներգործական, **-եցեալ**-ը՝ կրավորական, որը, սակայն, օրինաչափություն չէ: Լատինաբան հայերենի շրջանում (Հովի. Հոլով, Մ. Սեբաստացի) հստակորեն առանձնացվում են ներգործական և կրավորական սեռերը՝ ներգործականի համար ընդունելով **-եալ**, կրավորականի համար՝ **-եցեալ** տարբերակները: Անշուշտ, այս երկու ձևերի մեջ ներգործական և կրավորական սեռերն առանձնացնելը գիտականորեն հիմնավորված չէ:

ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Երկեր, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 848 էջ:
2. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ., Եր., «Լույս» հրատ., 1976, 558 էջ:
3. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1953, 441 էջ:
4. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Եր., Հայկ. ԱԱՀ ԳԱ հրատ., հ. IV, Ա գիրք, 1959, 594 էջ, հ. IV, Բ գիրք, 1961, 544 էջ, հ. V, 1965, 430 էջ:
5. Այտընեան Ա., Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վիեննա, Մխիթարեան տպ., 1866, 502 էջ:
6. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, 3-րդ հրատ., Եր., Եր., համալս. հրատ., 1992, 319 էջ:
7. Բագրատունի Արսէն, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1852, 744 էջ:
8. Կղեմէս Գալանոս, Քերականական և տրամաբանական ներածութիւն առ իմաստասիրութիւնն շահելոյ (Grammaticae et logicae institutiones linguae literalis Armenicae Armenis traditae), Հռոմ, Ուրբանեան տպ., 1645, 444 էջ:

9. Համբարձումյան Վ., Լատինաբան հայերենի պատմություն, Եր., «Նաիրի հրատ., 2010, 371 էջ:
10. Ղազարյան Ա., Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Եր., Հայպետ. Հրատ., 1961, 535 էջ:
11. Ղազարյան Ա., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., Եր. Համալս. Հրատ., 1981, 404 էջ:
12. Ղարազույան Թ., Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, 181 էջ:
13. Ղափանցյան Գր., «К происхождению», Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» 1946, N 7, 3-30 էջ:
14. Մխիթար Սեբաստացի, Քերականութիւն գրաբանի լեզուի Հայկազնեան սեռի, Վէնէտիկ, 1730, 584 էջ:
15. Յօհաննէս Կոստանդնուպօլսեցի, Ձտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674, 216 էջ:
16. Շահվերդյան Թ., Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Եր., «Հայաստան» հրատ., 2007, 312 էջ:
17. Շահվերդյան Թ., Գրաբարի դերբայները. Ձևաբանություն և շարահյուսություն, Եր., «Վան Արեան» հրատ., 2001, 159 էջ:
18. Շրյոդեր Յոհան, Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711, 410 էջ:
19. Джаукян Г., Сравнительная грамматика армянского языка, Ер., изд., АН Арм ССР, 1982, 275 ст.
20. Патканов К., Исследование о составе армянского языка, СПб, 1864, 110 ст.
21. Томсон А., Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб, 1890, 263 ст.

ԲՆԱԳՐԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց , Եր., Եր. համալս. հրատ., 1983, 551 էջ:
2. Եզնկայ Վարդապետի Կողբացոյ Եղծ Աղանդոց, Եր., Եր. համալս. հրատ., 1994, 345 էջ:
3. Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., Եր. համալս. հրատ., 1989, 447 էջ:
4. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Եր., Եր., համալս. հրատ., 1981, 587 էջ:

5. Փալատոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Եր., Եր. համալմ. հրատ., 1987, 456 էջ:

НАРИНЕ МАРКОСЯН-ПРОЯВЛЕНИЯ ВИДА И ЗАЛОГА ПРИЧАСТИЯ ПРОШЕДШЕГО ВРЕМЕНИ В БИБЛИОГРАФИЯ 5-ГО ВЕКА

Прошрое причастие грабара составляется из корня настоящего времени, как и из корня прошлого совершенного- с окончанием **-եալ**. Прошрое причастие есть у простых, приставочных, казуальных и неправильных глаголов всех залогов четырех спряжений. Но некоторые лингвисты сделали дифференциацию залог, считая **-եալ** действительным, **-եցեալ**- страдательным, что, однако, не закономерность. В рамках латинского армянского (О. Олов, М. Себасти) четко выделяются действительные и страдательные залогов, для действительного принимая вариант **-եալ**, а для страдательного- вариант **-եցեալ**. Конечно, разделение действительного и страдательного залогов между этими двумя формами не является научно обоснованным.

NARINE MARKOSYAN- MANIFESTATIONS OF ASPECT AND VOICE OF PAST PARTICIPLE IN THE BIBLIOGRAPHY OF THE 5TH CENTURY

The past participle of Grabar is made up of the root of the present time, as well as from the root of the past perfect-with the ending **-եալ**. The past participle is present in simple, prefix, casual and irregular verbs of all the voices of the four conjugations. But some linguists have done differentiation of voices, considering **-եալ** as active, and **եցեալ**- as passive, which, however, is not regularity. In the cycle of Latin in Armenian language (H. Holov, M. Sebastatsi) clearly distinguish between active and passive voices, for active accepting the variant **-եալ**, and for the passive- the variant **-եցեալ**. Of course, the division of the active and passive voices between these two forms is not scientifically justified.

**О НЕКОТОРЫХ СПОСОБАХ РАЗГРАНИЧЕНИЯ ПОЛИСЕМИИ И
ОМОНИМИИ РУССКОГО ЯЗЫКА И ВОЗМОЖНЫХ МЕТОДАХ
ПРЕПОДАВАНИЯ ОМОНИМИИ В ТЕХНИЧЕСКОМ ВУЗЕ**

СИЛЬВА МАРТИРОСЯН

Ключевые слова: полисемия, омонимия, практическое применение, разграничение, критерий.

Омонимия – важная теоретическая проблема, связанная с установлением границ основной единицы языка – слова. Отмечалось, что наличие омонимии противоречит логичности языка, основному закону языкового знака, что омонимы – явление нежелательное, а их возникновение – это “отклонение от нормы, аномалия, поскольку двум значениям соответствует одна звуковая оболочка” [1,48]. Тогда, что говорить о многозначных словах: ведь в каждом многозначном слове одна звуковая оболочка соответствует не только двум, но иногда и более двадцати значениям! При этом, никто не считает многозначность отрицательным явлением языка. Она рассматривается как один из результатов закономерного развития лексики. Также нужно относиться и к омонимам. Их наличие в языке – результат действующих в нём закономерностей.

В настоящее время проблеме омонимии в вузе придаётся очень большое значение, поскольку круг вопросов, связанных с омонимией очень широк: способы разграничения и выделения омонимов – семантические, морфологические, синтаксические – на основе различий в формах сочетаемости, реакции языка на омонимию, утрата слов в силу омонимии, устранение омонимии путём лексических заимствований, изменения звуковой формы слова, преобразования морфологического состава слов для избежания омонимии, новообразования в приёмах сочетания морфем и слов и. д.

Общая характеристика словарного состава русского языка, даваемая в вузовском курсе, не может быть достаточно полной без характеристики омонимов. Изучение омонимов обуславливается особой

необходимостью правильного освещения многих сторон грамматики и лексики русского языка.

Развитие общей и русской лексикологии последнее время позволяет обогатить и уточнить теоретические представления об омонимах. В связи с этим возникает возможность обрисовать тот круг сведений об омонимах, который желателен в вузовском курсе современного русского языка. Считается, что при установлении факта омонимии трудно всего решить имеем мы дело с омонимией или многозначностью. Трудность здесь двоякого рода: одни из них связаны с отсутствием выработанных принципов исследования, другие – с самим характером исследуемого явления, с взаимопереходностью и взаимопроницаемостью полисемии и омонимии.

В связи с тем, что омонимы возникают и формируются в результате взаимодействия лексических грамматических значений, одной из важных задач в нерусской аудитории – это как можно последовательно и чётко определить критерии разграничения полисемии и омонимии. Только всесторонний учёт фактов языковой системы может привести к успешному решению вопросов об омонимии, проявление которой не ограничивается собственно созвучными словами.

Для нахождения критериев разграничения омонимии и полисемии необходимо предложить студентам рассматривать слово не отдельно, не изолированно, а в ассоциативных отношениях с другими словами.

Группируя омонимы, учитываем их возникновение. С этой точки зрения показываем студентам допустимую группировку:

1. этимологическая, когда два разных по происхождению слова случайно, в результате фонетических изменений, приобрели тождественную форму (одинаковое произношение и написание). Например: **брак** (в производстве) и **брак** (супружество); **град** (город) и **град** (осадки); **бор** (лес) и **бор** (машина); **шашка** (игральная) и **шашка** (оружие) и др.;

2. омонимы, возникшие вследствие фонетического отождествления грамматических форм разных русских слов. Например: **жавший** по глаголу **жать** – **жну** и по глаголу **жать** – **жму**, **жатый** по тем же двум глаголам;

3. омонимы, возникшие вследствие семантического разделения одного слова на два. Например: **рабочий** (работник) – **рабочий** (относящийся к работе); **благодаря** (деепричастие) – **благодаря**

(предлог). Эти омонимы называются семантическими. Семантические омонимы составляют основную массу омонимов современного русского языка. Хотя, общепризнанно, что этот критерий менее конкретен, чем грамматический фактор, и опираться на него полностью нельзя, но и отказываться от него тоже не следует.

При рассмотрении семантических омонимов обращаем внимание студентов на следующие подгруппы омонимов:

а) лексико – семантические омонимы, возникшие в результате отрыва одного из лексических значений слов от остальных: **совет** (орган власти) – **совет** (указание)); **глава** (руководитель) – **глава** (книги) и т.д.

б) словообразовательно – семантические омонимы, возникшие в результате разрыва словообразовательных связей между значениями, опирающимися на одну и ту же производящую основу: **запросить** – начать просить и **запросить** – послать запрос; **почитать** – осуществить непродолжительное чтение и **почитать** – оказать почёт, уважение, любовь кому –нибудь.

в) морфолого – семантические омонимы, возникшие в результате второго грамматического значения в слове и связанного с переходом слова в другую часть речи: **бар** – ресторан и **бар** – единица атмосферного давления; **животное** –тип живого существа и **животное** – от животного, свойственного ему.

При лексико – семантическом анализе отдельных слов для сопоставления привлекаем другие отдельные словарные единицы – **синонимы** и **антонимы**, поскольку считается, что наличие у слов различных синонимов, наряду с семантической отдалённостью, является признаками распада слов на омонимы.

Указываем на то, что слова считаются омонимами в том случае, если подобранные к ним синонимы не вступают в синонимические отношения. Например, слово **ключ** – “ручeёк” и “отмычка” признаётся омонимичным, поскольку его идентификаторы не синонимичны друг другу, а слово **гнездо** в сочетаниях **гнездо человека** и **гнездо птицы** – полисемичны, т.к. в обоих случаях ему соответствует один и то же синоним – жилище.

Разные синонимы, хотя и могут быть свойственны омонимам, в разной степени могут быть характерны и для различных значений одного и того же слова. Следовательно, этот критерий не всегда универсален [2].

Немаловажную роль при разграничении полисемии и семантической омонимии отводим и антонимам, т.к. уточняющее действие проявляется прежде всего при рассмотрении омонимичных значений одного и того же. Семантическое расхождение проявляется благодаря тому, что каждое значение имеет свой отдельный антоним. Наличие разных антонимов свидетельствует об омонимии. Например: **крепость** (хрупкость камня, металла) – **крепость** (лачуга); **посадить** (срубить) – **посадить** (отпустить, освободить). Но здесь нужно показать, что разные антонимы, с одной стороны могут быть синонимичные антонимы, т.е. взаимозаменяемы в одном и том же контексте без изменения смысла выражения (ср. **нападать** – **атаковать** к защищать и **позволять** – **разрешать** к запрещать), а с другой – антонимы не синонимичные, в связи с чем замещение одним из них фиксированной позиции сопровождается изменением смысла выражения. Например, **атаковать** – **позволять**. Контекст будет способствовать выявлению омонимичных значений, но полную ясность внесут антонимы.

Далее знакомим студентов с омонимами, появление которых возможно в тех случаях, когда расщепление значений слова сопутствует образованию новых словообразовательных центров, не связанных между собой семантически. Они образуются, как правило, когда отсутствует (или слабо прослеживается) смысловая связь между значениями (**болеть** – болезнь, болезненный, боль, больной и **болеть** – болельщик). Как правило, при сильном отходе значений наблюдается и наличие новых словообразовательных центров. В случае, когда одно из значений имеет какую-нибудь чрезвычайную узкую специальную сферу употребления, нового производного ряда у этого значения может и не образоваться. Новое значение слова должно начать сосуществование со старым значением. А т.к. слова обрастают производными, то и новое словоомоним также обрастает производным, и для того, чтобы не путать эти производные со старыми, указываем, что народ-носитель данного языка даёт этим производным форму. Таким образом, образование у значений, сильно отошедших по смыслу от других значений, является процессом, поддерживающим становление в языке омонимов из многозначных слов.

При работе с методом контекстуального описания значений потребуются уточнения понятий. Естественно, что это должен быть по возможности наиболее “выгодный” текст, который устраняет многозначность слова [3]. Включая слова в жизненную ситуацию, с

помощью контекста студенты прекрасно различат как значение многозначного слова, так и слова-омонима:

The beginning is inevitably connected with the end and is mainly opposed to it. As, for example, L. V. Mikheyeva states “the time consists of one piece” [Михеева 2010:75]. In this respect, we have considered the phenomena of pregnancy: first, a woman is pregnant, then she waits for her delivery - “the end of the process”. Actually, this is not the end, on the contrary - the beginning, namely the beginning of a child's life. Therefore, it is relative, since for the mother it is the end of her pregnancy, but for the child it is the beginning of his independent life. Thus, we see that the idea of the beginning and the end forming integrity in the notion of time is completely true. These notions in most cases interchange each other, and sometimes we cannot detect where the actual start and the actual end are.

Many scholars and researchers in different fields of science, who somehow dealt with language, have always been concerned with the problem of the notion “beginning”. This problem has been discussed by many linguists, as well as philosophers, because the problem of beginning has always been spoken about in the theories proposed by ancient philosophers. As the sources of philosophy go back to ancient Greece, the Greek

philosophers were the first to refer to the so-called “beginning” of the world. They had the following question to answer: “What lies in the source of the world’s variety?” The representatives of Miletus School had various ideas on this matter as well. Tales, for example, believed the beginning of everything in this world to be water, which meant that everything emerged from water and in the end will turn back into it. Anaximenes, in his turn, claimed that the beginning of everything was air, which was “before water”. Further, Heraclitus accepted fire to be the source of existence [Мирумьян 1999:23-33]. All these philosophers criticized each other, each considering his own theory the only valid one.

From the linguistic point of view, we are supposed to consider the words “*begin*” and “*start*” to be the key elements/identifiers for the definition of the notion “beginning”. In this respect, we should also say that “There is not much difference in meaning between **begin** and **start**, though **start** is more common in spoken English: *What time does the concert start/ begin?* **Begin** is often used when you are describing a series of events: *The story begins on the island of Corfu.* **Start**, but not **begin**, can also mean “to start a journey”, “to start smth happening” or “to start a machine working”: *We’ll need to start at 7.00. The car won’t start*” [Hornby 2005:99].

As a result of the analysis based on the material of Oxford Advanced Learner’s Dictionary, we have worked out several principles of classification applicable to the words denoting “beginning”.

The part of speech meaning was chosen to be the first principle of classification. It was found out that the number of verbs expressing the notion of beginning exceeds the number of nouns, adjectives and adverbs, the last two having very few examples. The abundance of verbs may perhaps be explained by the fact that “beginning” is mainly connected with movement, change of events. For example:

Engage – verb 4. (formal) to begin fighting with sb: [VN] *to engage the enemy.*

The number of the nouns is smaller than that of the verbs, but is still bigger than that of the adjectives and adverbs, with only 3 and 2 cases, respectively. For example:

Ignition – noun 2. [U] (technical) the action of starting to burn or of making sth burn: *The flames spread to all parts of the house within minutes of ignition.*

Initial – adj., happening at the beginning, first: *in the initial stages (= at the beginning) of the campaign.*

Off – adv. **3.** starting a race: *They're off (=the race has already begun).*

The following quantitative distribution of the above-mentioned parts of speech, as reflected in percentage, is given having analyzed 51 words: verbs– 29 (56.8 %), nouns–17 (33.3 %), adjectives– 3 (5.9 %), adverbs– 2 (4 %).

At a closer look, we can see that the nouns are in majority of cases derived from the corresponding verbs by means of conversion. For example:

Begin – verb **1.** to start doing sth; to do the first part of sth: [VN] *We began work on the project in May.*

Beginning – noun **1.** [C, usually sing.] ~ (of sth) the time when sth starts; the first part of an event, a story, etc: *We are going to Japan at the beginning of July.*

Establish – verb **1.** [VN] to start to create an organization, a system, etc. that is meant to last for a long time: *The committee was established in 1912.*

Establishment – noun **3.** [U] the act of starting or creating sth that is meant to last for a long time: *The speaker announced the establishment of a new college.*

Well-known linguist V. G. Gak offered the second principle of categorization. He proposes different kinds of shade meanings that can be observed in the words under study [Гак 2002:53].

Having analyzed 46 words expressing the notion of beginning, we come to the following results reflected in percentage for each meaning: cause/effect – 18 (39.1 %), time – 9 (19.5 %), purpose – 9 (19.5 %), manner – 5 (10.9 %), tool – 1 (2.2 %), change – 1 (2.2 %), quality – 1 (2.2 %), moment – 1 (2.2 %), state – 1 (2.2 %).

As can be seen from the percentage calculated for each meaning, the shade meaning of cause and effect is abundant in number. This can probably be explained in the following way: when somebody starts doing something, his actions are intended to bring about effect or to cause something else to be done, created, or to bring some result to the addressee of the action. For example:

Mount – verb **1.** [VN] to organize and begin sth: *to mount a protest/campaign/an exhibition.*

Ignite – verb, (written) to start to burn; to make sth start to burn: *Gas ignites very easily.*

As we see, the shade meaning of time is the second on the list of frequency of occurrence. This can be explained by the fact that the beginning and the start are surely related to time. Whenever we hear the above-mentioned words, the first idea that comes to our minds is that of time. That is why its occurrence is great in number, too. For example:

Begin – verb 2. [V] to start to happen or exist, especially from a particular time: *When does the concert begin? The evening began well.*

Initially – adv., at the beginning: *Initially, the system worked well.*

The meaning of purpose, which is the second in frequency of occurrence too, is very closely connected with the notion of beginning, as whenever we start doing something we do it for a particular purpose or some special intentions. For example:

Abort – verb 2. [V] (technical) to give birth to a child or young animal too early for it to survive: *The virus can cause pregnant animals to abort.*

Establish – verb 1. [VN] to start to create an organization, a system, etc. that is meant to last for a long time: *The committee was established in 1912.*

If we refer to the meaning of manner, it is not so frequently met. Still, it is very topical, because the notion of beginning is connected with action, verbs and consequently the manner of doing something is very appropriate to be spoken about in this respect. For example:

Erupt – verb 2. ~ (into sth) to start happening, suddenly and violently: *Violence erupted outside the embassy gates.*

Outbreak – noun, the sudden start of sth unpleasant, especially violence or a disease: *the outbreak of war. Outbreaks of rain are expected in the afternoon.*

It is worth mentioning that all the other shade meanings are few in number and very rare in their occurrence. This can be explained by the fact that they are unlikely to play an essential role in expressing the notion of beginning.

The rest 5 words out of 51 analyzed ones express two different shade meanings at the same time, such as:

- *change and effect:*

Develop – verb 3. to begin to have sth such as a disease or a problem; to start to affect sb/sth: [VN] *Her son developed asthma when he was two.* 4.

[V] to start to happen and then become more serious or important: *A crisis was rapidly developing in the Gulf.* **5.** to start to have a skill, ability, quality, etc. that becomes better and stronger; to become better and stronger: [V] *Their relationship has developed over a number of years.*

- *time and part.*

Beginning – noun **1.** [C, usually sing.] ~ (of sth) the time when sth starts; the first part of an event, a story, etc: *We are going to Japan at the beginning of July. We missed the beginning of the movie.*

- *cause and place:*

Origin – noun **1.** the point from which sth starts, the cause of sth: *the origins of life on earth.*

- *time and place:*

Start – noun **1.** [C, usually sing.] the point at which sth begins: *Things did not look too hopeful at the start of the year.* **2.** [sing.] the act or process of beginning sth: *I'll point the ceiling if you make a start on the walls.**4.** (the start) [sing.] the place where a race begins: *The runners/ riders lined up at the start.**

- *cause and purpose:*

Start – verb **4.** ~ (sth) (up) to begin to exist; to make sth begin to exist: [V] *There are a lot of small businesses starting up in that area.* **6.** [V + adv./prep.] to begin to move in a particular direction: *He started for the door, but I blocked his way.*

The last principle of categorization type that has been proposed by us is grouping the words denoting the notion of beginning into two classes, the first one being for the words possessing abstract meanings and the second one for words with concrete meanings. As a result of the quantitative analysis, we observe the following: concrete notion – 38 (74.5 %), abstract notion – 13 (25.5 %),

It is obvious that the number of the words denoting concrete notion exceeds the number of the words denoting abstract ones. This fact can be explained as follows: whenever we start speaking about the notion of beginning, we mean the start of something concrete and specific, which can be a process, a phenomenon, an organization, a machine, a person or something else. For example:

Establish – verb **1.** [VN] to start to create an organization, a system, etc. that is meant to last for a long time: *The committee was established in 1912.*

In terms of the quantitative distribution of the parts of speech, which possess concrete and abstract shade meanings of beginning, we get the following percentage:

- Concrete meaning: verb – 20 (52.6 %), noun – 15 (39.5 %), adjective – 2 (5.3 %), adverb – 1 (2.6 %).
- Abstract meaning: verb – 9 (69.2 %), noun – 2 (15.4 %), adjective – 1 (7.7 %), adverb – 1 (7.7 %).

Thus, in this article an attempt has been made to single out the main philosophical ideas about the notion “beginning” and then to show how it is realized on the linguistic platform. We have observed that the notion “beginning” is mainly reflected in concrete meanings, which is justified by the philosophical approach. In this respect, the opinions of both the linguists and the philosophers coincide.

BIBLIOGRAPHY

1. *Hornby A. S. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Sixth Edition, Oxford University Press, 2005.*
2. Гак, В. Г. Семантическое поле конца [Текст] / В. Г. Гак / Логический анализ языка, Семантика начала и конца, Российская академия наук, Институт языкознания, «Индрик», Москва: 2002– 648 с.
3. Мирумян, К. А. Очерк античной философии [Текст] / К. А. Мирумян / Национальная Академия Наук Армении, Институт философии и права, Ноян Тапан, Ереван: 1999 – 122 с.
4. Михеева, Л. Н. Топологические свойства времени с точки зрения лингвофилософии, Известия вузов. Серия «Гуманитарные науки» 1 (1) 2010 [Электронный ресурс] / Л. Н. Михеева - Режим доступа: http://isuct.ru/epubl/gum/sites/ru.epubl.gum/files/2010/t01n01/humscience_2_010_t01n01_74.pdf

ԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ - «ՍԿԻՉԲ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ԼԵՉՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՅՆԱՑՈՒՄ

«Սկիզբ» հասկացությունը միշտ եղել է թե՛ լեզվաբանների, և թե՛ փիլիսոփաների հետաքրքրությունների շրջանակում: Վերջիններիս կողմից առաջարկվել են աշխարհի ծագման տարբեր հայեցակետեր:

Տվյալ հոդվածի շրջանակներում փորձել ենք ներկայացնել «սկիզբ» հասկացությանն անդրադարձող մի շարք փիլիսոփայական և լեզվաբանական տեսությունների վերլուծությունը: Ուսումնասիրվել է, թե ինչպես է «սկիզբ» հասկացությունը լեզվականացվում ժամանակակից անգլերենում: Որպես եզրահանգում, ցույց է տրվել, որ ժամանակը բաղկացած է «մեկ կտորից», այլ շրջանակ է, որը միմյանց հերթափոխող սկզբնական և վերջավոր կետերից է կազմված: «Սկիզբ» իմաստն արտահայտող բառերը հիմնականում ներկայացնում են կոնկրետ երևույթներ՝ հստակ արտահայտված նպատակներով և ակնկալվող արդյունքներով:

АНИ МИКАЕЛЯН - ПОНЯТИЕ "НАЧАЛО" В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ: ОТ ФИЛОСОФСКИХ ТЕОРИЙ ДО ЛИНГВИСТИЧЕСКОЙ КАТЕГОРИЗАЦИИ

Проблема понятия "начало" всегда была в сфере интересов как лингвистов, так и философов. Последние предлагали различные подходы относительно основы мироздания. В настоящей статье представлен анализ идей и теорий, приведенных рядом философов. Исследовано, как понятие начала реализуется в современном английском языке. В результате анализа выясняется, что "время" состоит не "из одного куска", а представляет собой своеобразный круг со сменяющимися друг друга началом и концом. Слова, содержащие идею "начало", в основном обозначают конкретные явления с ярко выраженными намерениями и ожидаемыми результатами.

ԱՐՎԵՍՏԻ ԵԶՐ ԴԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՄԱՆՇԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ հոմանիշ, տարբերակ, համապեքստ, փոխաբերական իմաստ, իմակ, գլխավոր բաղադրիչ, ուղղակի նշանակություն, հիմնանշանակություն, հարանշանակություն, գաղափարագիր (իդեոգրամ):

Ինչպես հայտնի է, հոմանիշները բնութագրվում են որպես բառեր, որոնք արտահայտում են իրականության միևնույն երևույթները և իրարից տարբերվում են ոճական և իմաստային պլաններում: Հայտնի է նաև, որ համատեքստային բացարձակ հոմանիշները լայն տարածում չունեն: Բառերի նման դարձվածքները նույնպես, լինելով բարդ իմաստային միավորներ, սերտորեն կապված են իմաստային հարաբերություններ արտահայտող երևույթների հետ: Դարձվածքներում հոմանշության երևույթը դրսևորվում է մի եզրով արտահայտված գլխավոր բաղադրիչը մեկ այլ եզրով բաղադրիչով փոխարինելով: Այլ կերպ ասած՝ երբ դարձվածքների տարբեր գլխավոր բաղադրիչներն ունենում են տարբեր նշանակիչներ, սակայն միևնույն նշանակյալը, կամ միևնույն իմաստային նվազագույն տարրը, գործ ենք ունենում հոմանշության հետ: Հարկ է նշել, որ արտահայտության պլանում կարող են տարբեր լինել ոչ միայն գլխավոր, այլ նաև մյուս՝ սպասարկու բաղադրիչները: Դարձվածքի բաղադրիչների փոփոխությունը կարող է առաջացնել նաև ողջ միավորի իմաստի փոփոխություն: Սակայն, եթե հոմանշով է փոխարինվում գլխավոր բաղադրիչը, որը նշանակության առավել վերացական կողմի կրողն է, ապա դարձվածքի ամբողջական իմաստը կարող է մնալ անփոփոխ: Ինչպես բառերի դեպքում, դարձվածքների հոմանիշները նույնպես չեն կարող ամբողջությամբ արտահայտել նույն իմաստը, պահպանվում է միայն իմակը: Վերջինս մեծ մասամբ հարանշանակային է և առավել արտահայտված է լինում, երբ այն զգալիորեն հեռանում է իր ուղղակի նշանակությունից: Հոմանշային շարք կազմող բոլոր դարձվածքներն իմաստով տարբերվում են, և նրանցից յուրաքանչյուրն ունի իր իմակների որոշակի խումբը: Մասնավորապես չեն համընկնում

իմաստային տարրերը՝ կախված ձևից, մեծությունից, ինչպես նաև՝ առանձին հատկանիշներից: Իսկ երբ տեղի է ունենում նաև իմաստային նվազագույն տարրերի համընկնում, խոսքը գնում է բացարձակ հոմանիշների մասին:

Ըստ Տ. Չերդանցևայի՝ «Քանի որ դարձվածքներում բառ-բաղադրիչներից պահպանվում են միայն հարանշանակության իմակները, ապա բառ-բաղադրիչների փոխարինումը հնարավոր է լինում այն դեպքում, երբ այդ իմակները մնում են անփոփոխ»¹¹⁵:

Օրինակ՝ *fare un castello di carte* (բառացի՝ թղթե ամրոց սարքել) և *fabbricare castelli in aria* (բառացի՝ օդում ամրոցներ կառուցել) դարձվածքները, թեև ունեն տարբեր արտահայտման ձևեր, սակայն երկուսն էլ բովանդակային տեսանկյունից պարունակում են միևնույն նվազագույն իմաստային տարրը, այն է՝ *օդային ամրոցներ կառուցել*: Չնայած բաղադրիչները փոխարինվում են, այնուամենայնիվ, ոչ հասարակորեն, ոչ իրարեսական լինելու գաղափարը պահպանվում է: Այդ պատճառով է, որ ճիշտ չէ դարձվածքի իմաստային բնի՝ կենտրոնի մասին խոսելը: Համենայն դեպս, այս կամ այն դարձվածքի բաղադրիչների դերը միևնույնը չէ, քանի որ դարձվածքի գլխավոր բաղադրիչը, հաճախ լինելով քերականական նշանակության կամ գործառույթի կրողը, ազդեցություն է թողնում նաև ամբողջ դարձվածքի իմաստի վրա, որովհետև կազմում է նվազագույն իմաստային տարրերի դասույթը:

Տ. Չերդանցևան գտնում է, որ «յուրաքանչյուր դարձվածային միավոր՝ իբրև բաղադրիչ պարունակում է բառեր կամ բառային խմբեր, որոնք միմյանց կապված են կառուցվածքային և իմաստային կապերով: Այդ կապերից առավել ամուր են անհրաժեշտ արժույթականություն ապահովողները, ինչպես նաև այն կապերը, որոնք հնարավորություն են տալիս դարձել իմաստային համաձայնության առկայության կամ բացակայության մասին: Բացի այդ, դարձվածային միավորներում գոյություն ունեն առավել առանձնահատուկ, միայն իրենց բնորոշ ներքին իմաստային կապեր, որոնք կազմում են այն պարկերը, որի հիման վրա կարող են ի հայտ գալ հարանշանակային նվազագույն իմաստները»¹¹⁶:

Հաճախ պատկերը ստեղծվում է իմաստային անհամաձայնության հիման վրա: Օրինակ՝ *un colosso dai piedi di argilla*՝ բառացի՝ կավե

¹¹⁵ Черданцева Т. З., *Очерки по лексикологии итальянского языка*, «Высшая Школа», М., 1982, с. 119.

¹¹⁶ Черданцева Т. З., նույն տեղում, с. 120.

ոտքերով հսկա և *un gigante dai piedi di terracotta*՝ բառացի՝ թրծակալվե ոտքերով հսկա դարձվածքներում *հսկան* և *կալվե* կամ *թրծակալվե* (փխրուն) *ոտքերն* անհամատեղելի են: Իմաստաբանորեն չհամաձայնեցվող բաղադրիչը կարող է փոխարինվել մեկ այլ բաղադրիչով և արտահայտել միևնույն դարձվածային իմաստը, երբ հարանշանակային իմակները մնում են անփոփոխ: Նշված օրինակներում հոմանշությունը կայանում է, քանի որ պահպանվում է *փխրունության*, ոչ *հասարարունության* հարանշանակային իմակը:

Ըստ Տ. Չերդանցևայի՝ պատկերը, որը ստեղծում է հարանշանակային իմակներ, համարվում է անուղղակի միջանկյալ օղակ դարձվածքի և նրա գաղափարագրի՝ չեզոք համարժեքի միջև: Լեզվական հանրության անդամները ըմբռնում են լեզվական պատկերը՝ շնորհիվ իրենց ձեռք բերած ոչ միայն լեզվական գիտելիքների, այլև՝ արտալեզվական պատմական փորձի, պրակտիկայի: Գաղափարագրի վերհանումը կարելի է դիտարկել որպես փոխաբերացման հակառակ գործընթաց: Եթե փոխաբերացման ժամանակ կոնկրետ բառը փոխարինվում է վերացականով, այնուհետև՝ այլ կոնկրետ բառով, ապա գաղափարագրի վերհանման ժամանակ մեկնում ենք պատկեր պարունակող բառակապակցությունից դեպի այն բառը կամ բառակապակցությունը, որն առավել ընդհանուր բնույթ ունի: Այսպիսով, պատկերը կարելի է նյութականացնել՝ կոնկրետը ընդհանուրի փոխակերպելու միջոցով: Պատկերի հաղորդումը ոչ պատկերավոր միջոցներով՝ պահանջում է այլ բառերի առկայություն, որոնք ունենան համապատասխան նոր տարրական իմաստներ: Սակայն պատկերի՝ նման լեզվական նյութականացումը գործնականորեն անհրաժեշտ է հատկապես լեզվական նյութն ուսումնասիրողին կամ թարգմանչին, որը համարժեքների որոնման ժամանակ ստիպված է անցկացնել դարձվածքի կամ բառի ամբողջական իմաստի ուսումնասիրություն: Այն դարձվածքները, որոնք ունեն ընդհանուր գաղափարագրեր, այսինքն՝ այնպիսի չեզոք գաղափարագիր, որը համատեքստում կարող է փոխարինել դրանցից յուրաքանչյուրին, հարկ է դիտարկել որպես հոմանիշներ կամ տարբերակներ¹¹⁷:

Տ. Չերդանցևան գտնում է, որ «...և՛ տեսականորեն, և՛ գործնականորեն հնարավոր է, որ առանձին բաղադրիչների տարբերակման և նրանցից մեկի հոմանշային փոխարինման դեպքում,

¹¹⁷ Черданцева Т. З., նույն տեղում, с. 122

ողջ դարձվածքը ստանա իմաստային նոր երանգավորումներ, գոնե ոճական, և այդ դեպքում այդ դարձվածքը տարբերակից կվերածվի հոմանշի: Եթե հոմանիշ են համարվում այն դարձվածքները, որոնք իմաստով մոտ են՝ ըստ նշանակյալի և տարբերվում են՝ ըստ նշանակիչի, ապա տարբերակներ պետք է համարել այն հոմանշային դարձվածքները, որոնք ունեն ընդհանուր բաղադրիչներ կամ ընդհանուր տարրեր՝ ըստ նշանակիչի»¹¹⁸:

Arrivare al capolinea՝ բառացի՝ հասնել վերջին կանգառին, *arrivare al tetto*՝ բառացի՝ հասնել տանիքին և *abbassare/calare/chiudere il sipario (su qcs)*՝ բառացի՝ իջեցնել/փակել վարագույրները, *andare/giungere in porto*՝ բառացի՝ նավահանգիստ հասնել, *mettere il tetto* բառացի՝ տանիք դնել, *arrivare al tetto*՝ հասնել տանիքին դարձվածքների հարանշանակային իմակն է՝ *ավարտել, ավարտին հասցնել ձեռնարկած ինչ-որ բան: Essere al primo gradino*՝ բառացի՝ առաջին աստիճանի վրա լինել դարձվածքը, մինչդեռ, պարունակում է նախորդ դարձվածքների հականշային իմակը, այն է՝ *ինչ-որ գործ նոր սկսել, ձեռնարկել:*

Salire sul palcoscenico՝ բառացի՝ բեմ, բեմահարթակ բարձրանալ, *venire alla ribalta* բառացի՝ բեմահարթակ, ամբիոն բարձրանալ, *ascendere al trono*՝ բառացի՝ գահ բարձրանալ դարձվածքները նույնպես հոմանիշներ են և նշանակում են *հեղինակություն, ճանաչում ձեռք բերել, ուշադրության կենտրոնում լինել:*

Portare alla ribalta (qc/qn)՝ բառացի՝ մեկին/ինչ-որ բան բեմի, բեմահարթակի, ամբիոնի վրա դնել/տանել և *mettere in rilievo/risalto (qc)*՝ բառացի՝ մեկին/ինչ-որ բան բարձր հարթակի՝ պատվանդանի վրա դնել/տանել հոմանիշ դարձվածքները նշանակում են՝ *մեծ կարևորություն տալ, առանձնացնել մեկին, ինչ-որ բան:*

Sentire/ascoltare tutte le campane՝ բառացի՝ լսել/ունկնդրել բոլոր զանգերը (*եկեղեցիների զանգակատների*) և *essere l'altra faccia/il rovescio della medaglia*՝ բառացի՝ մեղայի մյուս/հակառակ կողմը, երեսը լինել դարձվածքները հոմանիշ են, քանի որ երկուսն էլ պարունակում են *լսել բոլորի կարծիքը* հարանշանակային իմակը:

Tenere sotto vetro՝ բառացի՝ ապակու (ջերմոցի) տակ պահել/խնամել և *tenere sotto una campana (qn)*՝ բառացի՝ զանգի (զանգակատան) տակ պահել/պահպանել և դարձվածքների նշանակությունն է՝ *հոգապար վերաբերմունք ցուցաբերել, փայտիայել:*

¹¹⁸ Черданцева Т. З., նույն տեղում, с. 123

Մինչդեռ *uscire di scena*՝ բառացի՝ բեմից դուրս գալ կամ *abbandonare la scena del mondo*՝ բառացի՝ կյանքի բեմը լքել և *andare/finire al cimitero*՝ գերեզմանատանը հանգրվանել դարձվածքներն ունեն մահանալ նշանակություն: Դրանք երեքն էլ գործածվում են մեղմասությի ձևով:

Fare da piedistallo (a qc/qn)՝ բառացի՝ իբրև պատվանդան ծառայել և *fare fondamento* (su/in qc/qn)՝ բառացի՝ իբրև հիմք ծառայել դարձվածքների արտահայտած նվազագույն իմաստն է *հենարան լինել/հանդիսանալ*: Այս երկու դարձվածքները նույնպես հոմանշային հարաբերությունների մեջ են գտնվում միմյանց նկատմամբ:

S. Չերդանցևան նշում է. «...դարձվածքներն արտահայտում են խոսողի վերաբերմունքը իրականության նկատմամբ, փոխալ իրավիճակի գնահատանքը, որին հակադրում է խոսողը: Հետևաբար, իմաստային ընդհանրության, փոխարինելիության չափանիշ համարվում է նախ և առաջ դրանք՝ իբրև նման իրավիճակների հակազդեցություն օգտագործելու հնարավորություն: Իրավիճակը, որի հակազդեցությունը համարվում է այս կամ այն դարձվածքը, կարող է լինել թե՛ խոսքային, թե՛ ոչ խոսքային»¹¹⁹:

Հայերենի դարձվածային հոմանիշների մասին Ա. Սուքիասյանը նշում է. «Ինչպես և բառային հոմանիշները, դարձվածային հոմանիշները նույնպես համաժամանակյա՝ սինխրոնիկ, լեզվական կարգ են ներկայացնում: Դարձվածքների մեջ հոմանշային հարաբերությունները պետք է դիտել լեզվի զարգացման փոխալ, նույն ժամանակահատվածի փեսակետից, այդ նշանակում է, որ հոմանիշներ կարող են համարվել հայոց լեզվի զարգացման արդի շրջանի դարձվածաբանական միավորները միայն, արդի հայերենի համակարգի մեջ մտնող դարձվածները»¹²⁰: Ըստ Ա. Սուքիասյանի՝ դարձվածային միավորները հատկապես իրենց շարահյուսական-քերականական կառուցվածքով և ծագումով նոր են և վերաբերում են ժամանակակից հայոց լեզվի ժողովրդախոսակցական և մասամբ նաև գրքային ոճերին: Հայերեն դարձվածային միավորների մասին խոսելիս դարձվածաբանն ընդգծում է նաև այն փաստը, որ «արդի հայերենում պատմականորեն կազմավորված հոմանշային հարաբերությունների հիման վրա իմաստների նույնության

¹¹⁹ Черданцева Т. З., նույն տեղում, с. 124

¹²⁰ Սուքիասյան Ա. Մ., Հոմանիշները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Ե., 1971, էջ 257

կամ մուրաբայի սկզբունքներով դարձվածներն իրար նկատմամբ կամ համարժեք բառերի հետ կազմում են համապատասխան հոմանշային շարքեր»¹²¹:

Հայերենի՝ արվեստի եզրով հոմանիշներից կարելի է նշել՝ կտորը ծակ է, պատերը ականջ(ներ) ունեն, պատի վրա ճանճ կա դարձվածքները, որոնց հարանշանակային նվազագույն իմաստն է՝ զգուշացնել, ակնարկել, որ խոսակցությունը կարող է լսեն:

Մի կտավից կտրած, միևնույն փայտից տաշված լինել դարձվածքները նույնպես բովանդակային պլանում միևնույն իմաստն են արտահայտում, այն է՝ իրար նման լինել, նույն բնավորությունն ունենալ, սակայն նրանց արտահայտության պլանները բոլորովին տարբեր են:

Ավազի վրա տուն կառուցել, օդային ամրոցներ կառուցել և կարտոնե տնակ կառուցել դարձվածքների նվազագույն հարանշանակային իմաստն է՝ ցնորական, խարխուլ ծրագրեր կազմել:

Իր աղունն աղալ և ջրաղացին ջուր ավելացնել/լածել/լցնել դարձվածքները նույնպես միմյանց նկատմամբ գտնվում են հոմանշային հարաբերությունների մեջ, քանի որ նրանց համար ընդհանուր է հոգուր իրեն գործել հարանշանակային իմակը:

Արվեստի եզր պարունակող բեմ բարձրանալ, թափերաբեմ դուրս գալ/ելնել դարձվածքները նույնպես միմյանց նկատմամբ գտնվում են հոմանշային հարաբերությունների մեջ, քանի որ պարունակում են հարանշանակային՝ բեմին նվիրվել, դերասան, նվազագույն իմաստ: Սակայն բեմից հեռանալ, բեմից իջնել, թափերաբեմից իջնել/դուրս գալ/դուրս ելնել դարձվածքները գտնվում են հականշային հարաբերությունների մեջ:

Գույն առնել՝ գույն տալ կամ գույն տալ, գույն առնել և պատի ծեփ դառնալ դարձվածքները, որոնք նշանակում են գունատվել, այլայլվել, միմյանց նկատմամբ գտնվում են հոմանշային հարաբերությունների մեջ, սակայն, ինչպես հայտնի է, հոմանիշները բոլոր համատեքստերում չէ, որ կարող են միմյանց կատարելապես փոխարինել, քանի որ դրանց գործածությունը կախված է նաև հանրալեզվաբանական, իրավիճակային, խոսվածքային գործոններից: Այդ դարձվածային հոմանիշներից յուրաքանչյուրը կարող է համարվել գույնը տեղը գալ (մեկի) դարձվածքի հականիշը: Քար եզրով կազմված քար քաշել, քարից հաց առնել,

¹²¹Սուքիասյան Ա. Մ., նույն տեղում, էջ 258

քարի/հողի հեղ կոհիվ տալ դարձվածային հոմանիշներն ունեն *քրտնաջան աշխատանքով ապրուստը ճարելու* նշանակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Casadei F., *Lessico e semantica*, Carocci editore, Roma, 2010
2. Բեդիրյան Պ. Ա., Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն, «Լույս» հրատ., Ե., 1973
3. Սուքիասյան Ա. Մ., Հոմանիշները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Ե., 1971
4. Черданцева Т. З., *Язык и его образы*, изд. «Международные отношения», М., 1977
5. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 1975
6. Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 2009
7. Quartù M., Rossi E., *Dizionario dei modi di dire della lingua italiana*, HOEPLI, Milano, 2012

АНАИТ МКРЯН- СИНОНИМИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ФРАЗЕОЛОГИЗМОВ, СОДЕРЖАЩИХ ТЕРМИНЫ ИСКУССТВА, В ИТАЛЬЯНСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

Целью настоящей статьи является сопоставление синонимических особенностей фразеологизмов итальянского и армянского языков, содержащих термины искусства, а также выявление их общих и различительных черт.

Согласно итальянской паремиологии, фразеологизмы-синонимы обозначают одни и те же явления действительности и отличаются друг от друга стилистическими и семантическими особенностями. О явлении синонимии следует говорить в том случае, когда различные стержневые компоненты фразеологизмов имеют одно и то же означаемое, но различаются означающими.

В современном армянском языке исторически сложившиеся синонимические отношения базируются на идентичности или близости значений фразеологизмов, либо образуют синонимические ряды с эквивалентными словами.

ANAHIT MKRYAN - SYNONYMIC CHARACTERISTICS OF PHRASEOLOGICAL UNITS CONTAINING AN ART TERM IN ITALIAN AND ARMENIAN

The purpose of the present paper is to reveal synonymic characteristics of some phraseological units containing an Art term in Italian and Armenian. According to the Italian phraseology phraseological synonyms represent the same realia but they differ from stylistic and semantic viewpoint . In Armenian we can notice some phraseological units which historically either have the same/close meaning or form synonymic patterns.

**ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՎ ԿԱԶՄԱՆՈՍԱԿԱՆ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ ներպարփակ կառուցվածք, կաղապար, եղանակավորման կարգ, իմակ, կենսունակություն, ասոյթ, փոխազդեցություն, նախադասություն, համալրեքստ, խոսակցական լեզու, համարժեք:

Նախադասության կառուցվածքով դարձվածքներին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, դրանցից են՝ ներպարփակ կառուցվածք, խոսակցական լեզվի համատեքստ, առանձնահատուկ պայմաններ՝ անուղղակի խոսքով թարգմանելիս, որը կապված է որոշակի փոփոխությունների հետ, ինչպես, օրինակ, բայական, ժամանակաձևային, բառային և այլն: Այս բոլոր առանձնահատկությունները բնորոշ են նաև նախադասության կառուցվածք ունեցող ասացվածքներին, առածներին, շրջասություններին, թևավոր խոսքերին և այլն:

Վերջիններիս համար ընդհանուր հատկանիշ է ոչ կենսունակ կաղապարի առկայությունը, որը բնորոշ է նաև դարձվածքների մեծ մասի համար: Այն դեպքում, երբ առկա է կաղապարի կառուցվածքի խախտում, գործ ունենք դարձվածքների հետ, որտեղ որոշակի կառուցվածքի համապատասխանում են որոշակի բառային միավորներ: Հեռանալով համատեքստից՝ տվյալ կաղապարը, մի կողմից իր արտահայտչականության, մյուս կողմից նկարագրվող իրավիճակի մեծ տարածվածությամբ, սկսել է գործել որպես մի միավոր, որը նման է բառին, որտեղ նախադասության շատ կարգեր բառային արտահայտություն են ձեռք բերում, օրինակ՝ եղանակավորման կարգ, իսկ իմաստը գոյանում է ոչ թե բառերի նշանակությունների հանրագումարից, այլ՝ պատկերի հիման վրա, որը ծագում է տվյալ բառակապակցությունների կամ նոր տարրական իմաստների՝ իմակների հայտնվելու արդյունքում, որոնք տվյալ նախադասությունը չունի այդ կառուցից դուրս: Դարձվածքների կառուցվածքային կաղապարի

արդյունավետությունը պայմանավորված է այն բանով, որ նման դարձվածքները ներպարփակ միավորներ են¹²²:

Նախադասության կառուցվածքով դարձվածքների բնորոշ հատկանիշներից է նաև բառային փոփոխությունների անհնարինությունը և արտաքին իմաստային համաձայնության խախտումը: Վերջինս դարձվածքին շրջապատող բառերն են և դարձվածքի ու նրանց միջև առկա փոխկապակցվածությունը: «Արտաքին իմաստային համաձայնությունը» ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ դարձվածքին նախորդող կամ հաջորդող ասույթների տրամաբանությանը այն չի հակասում: Բառույթների և իմակների ի հայտ գալը, որը հակասում է ասույթների տրամաբանությանը, վկայում է իմաստային համաձայնության խախտման մասին: Այն հանգեցնում է բառակապակցության, նախադասության փլուզման: Իսկ եթե այդ ամենով հանդերձ տրվալ բառակապակցությունը կամ նախադասությունը լեզվակիրների համար ունի նշանակություն, ապա ունենք կայուն բառակապակցություն, որի իմաստը չի բխում բաղադրիչների նշանակությունների հանրագումարից»¹²³:

Նախադասության կառուցվածք ունեցող դարձվածքներին բնորոշ հատկանիշներից են նաև արտաքին իմաստային համաձայնեցումը և բառային փոխակերպման անհնարինությունը: Դարձվածքների այս առանձնահատկության հետ են պայմանավորված դրանց՝ ուրիշի անուղղակի խոսքի փոխակերպելը, որի համար համապատասխան գործողություններ է հարկավոր անել: Որիշի անուղղակի խոսքում նախադասության կառուցվածքով դարձվածքները փոփոխության չեն կարող ենթարկվել: Այսինքն, այն չի ենթարկվում նաև ժամանակների համաձայնեցման կանոններին: Այդ է պատճառը, որ երբեմն դարձվածք-նախադասությունները կարող են գործածվել բայի ուղիղ, չխոնարհված ձևով: Նախադասության կառուցվածքով դարձվածքների եղանակավորող-արտահայտչական նշանակությունը արտահայտվում է ոչ թե առանձին բառույթներով, այլ դարձվածքի նշանակության մասն է կազմում: ԿԴ-ները, որոնք հանդես են գալիս որպես խոսքային կամ ոչ խոսքային իրավիճակների փոխազդեցություն, չեն կարող չպարունակել խոսողի՝ այդ կապակցությամբ տաժած վերաբերմունքը: Վերջինս կարող

¹²² Черданцева Т. З., *Язык и его образы*, изд. «Международные отношения», Москва, 1977, էջ 132

¹²³ Черданцева Т. З., նշվ. աշխ., էջ 133

է նշանակել հավանություն տալ/չտալ, նախագգուշացում, ժխտում, երգիծանք և այլն: Այն պարունակվում է հենց դարձվածքի նշանակության մեջ որպես իմակ և հանդես է գալիս խոսքում, չնայած որ նրա եղանակավորման-գնահատողական հատկանիշը նրա նշանակության մասն է կազմում: Դրանք հանդիպում են խոսքում միայն որպես փոխազդեցություն խոսակցի ռեպլիկին կամ ժեստին և կարող են սկսել խոսքային գործունեություն միայն որոշակի իրավիճակում¹²⁴:

Նախադասության կազմով զուտ դարձվածքները շարահյուսորեն ավարտված ամբողջականություն են, ունակ՝ գործելու մեկ ուրիշ առավել բարդ շարահյուսական միավորի կազմում: Երբեմն դրանք լինում են անդեմ, իսկ հաճախ բայը դրվում է երկրորդ կամ երրորդ դեմքով: Օրինակ՝ *Le gambe fanno giacomo-giacomo* (ոտքերը ծալվում են՝ մասնավորապես հարբածների մասին խոսելիս, իսկ *giacomo-giacomo*-ն բնածայնություն է, որի արտասանությունը նմանեցվում է ծալվող հոդերի ճոճոջին): Երբեմն էլ դրանք չեն ունենում դեմքով արտահայտված բայ, այդ դեպքում պետք է ունենան գրավոր խոսքում որևէ կետադրական նշան, օրինակ՝ բացականչական, իսկ ասույթում պետք է արտահայտվեն առոգանությամբ, օրինակ՝ *acqua in bocca!* (բառացի՝ բերանդ ջր՛ւր առ) - լռի՛ր, ոչ ոքի չասես:

Նախադասության կառուցվածքով դարձվածքների ներքին կազմում կարող են տեղի ունենալ բառային և իմաստային խախտումներ, բայց ոչ քերականական, ինչպես դա լինում է բառակապակցության կառուցվածքով դարձվածքներում: Սակայն այս տիպի դարձվածքները պակաս կենսունակ են բառակապակցության կառուցվածքով դարձվածքների հետ համեմատած: Նրանք լինում են երկու տեսակի՝ ըստ իմաստի և կառուցվածքի: Դատողությունները, եզրահանգումները ունեն պատմողական կամ բացականչական նախադասությունների կառուցվածք և հիշեցնում են ասացվածքներ, սակայն ավելի համառոտ են: Նրանք ավելի շուտ ցույց են տալիս իրավիճակներ՝ կապված մարդկային կենսափորձի հետ, ինչպես նաև բնածայնությունների, մարդկային լեզվի, որոշակի ժեստերի վերածելու հետ, նշանների հաղորդման հետ: Օրինակ՝ *Per un orecchio entra e per l'altro esce* (հայերենում առկա է զուգահեռ համարժեքը՝ մի ականջից մտնում է, մյուսից դուրս գալիս): Երկրորդ տեսակը ներկայացնում է չտարածված

¹²⁴ Черданцева Т. З., *Язык и его образы*, изд. «Международные отношения», Москва, 1977, էջ 142

նախադասություններ, հաճախ ստորոգյալի կրկնությամբ կամ առանց ստորոգյալի: Օրինակ՝ *In bocca al lupo!* (բառացի՝ թող փամփուշտը գայլի բերանը մտնի, նկատի ունենալով՝ *թող որսորդը հաջողություն ունենա*), որի պատասխանն է՝ *Crepi il lupo!* (բառացի՝ թող պայթի գայլը):

Իտալական դարձվածաբանության մեջ նախադասության կառուցվածքով ԿԴ-ների, առաձների և ասացվածքների անվանումներն արդեն խոսում են այն մասին, որ ուղղակիորեն կապվում են բանավոր խոսքի հետ: Հետազոտողների մեծ մասը դրանք դասում է ժողովրդական բանահյուսության ոլորտի շարքին և մեծ տեղ է հատկացնում լեզվում: Շատերի կարծիքով՝ դրանք համարվում են դարձվածաբանության մաս և կազմում են դարձվածապաշարի և առհասարակ լեզվի հարստացման գլխավոր աղբյուրը: Նախադասության կառուցվածք ունեցող դարձվածքների նման, առաձներն ու ասացվածքները աչքի են ընկնում ոչ արդյունավետ, ոչ կենսունակ կաղապարով, որոնց բնորոշ է ներքին իմաստային համաձայնեցման խախտումը՝ ուրիշի ուղղակի խոսքից անուղղակի անցման առանձնահատուկ պայմանների առկայությամբ: Հաճախ նրանք նկարագրում են իրավիճակներ, որոնցից բխում է որոշակի դատողություն, բարոյախոսություն, որը համարվում է առաձի կամ ասացվածքի բուն իմաստը: Առաձները կարող են ունենալ, ի տարբերություն ասացվածքների, նաև բաց կառուցվածք, այսինքն՝ ունենալ անորոշ դերբայով արտահայտված բայ և այդ դեպքում ունենում են բառակապակցության կառուցվածք և ոչ թե նախադասության: Նրանք նաև ունենում են բառակապակցության կառուցվածքով դարձվածքների մնացած բոլոր առանձնահատկությունները: Տ. Չերդանցևայի կարծիքով՝ «Առաձը ավարտուն ասույթ է կամ ավարտուն տեքստ: Սակայն ժամանակակից լեզվում այս ասույթը առկա է որպես նախապես տրված, այդ իսկ պատճառով՝ ինքնուրույն ձևով, համատեքստից դուրս, խոսքային իրավիճակի փոխազդեցությունից դուրս չգործածվող: Ի տարբերություն դարձվածքների՝ առաձների բաղադրիչները պահպանում են իրենց ուղիղ իմաստը և կարող են լինել երկպալանային, այսինքն՝ ունենալ թե՛ ուղիղ և թե՛ փոխաբերական իմաստ: Սակայն հենց փոխաբերական իմաստով է պայմանավորվում առաձների ներքին իմաստի մեկնաբանությունը: Առաձը անցյալի իրավիճակ է, որը գործածվում է ներկայիս իրավիճակների բացատրության համար: Առաձի համար չեզոք համարժեք գտնելը ենթադրում է իր ընդհանրացումը, այսինքն՝ կոնկրետ ասույթի վերածվելը՝ վերացական դատողության: Օրինակ՝ *La barba non fa il filosofo* (բառացի՝ Մորուքով չի որոշվում փիլիսոփա լինելը) առաձը կարող

է չեզոքանալ *barba* (բառացի՝ մորուք) բաղադրիչը այլ բաղադրիչով փոխարինելով»¹²⁵:

Նախադասության կառուցվածք ունեցող *ասացվածքները* առաձներից տարբերվում են նրանով, որ այլաբանությունից զերծ են, և նրանցում մեծ մասամբ բառերն ընկալվում են ուղիղ իմաստով: Ասացվածքները, որպես կանոն, զուրկ են բարոյախոսությունից, սակայն մեկնաբանում են տեղի ունեցած իրադարձությունները և տալիս դրանց գնահատականը: Սրանք նույնպես համառոտ, հանգավորված ասույթներ են, որոնք հանդիպում են բանավոր, խոսակցական լեզվում: Սակայն դրանք թարգմանության ժամանակ պահանջում են այլ լեզուներում համարժեքների որոնում, հակառակ դեպքում կարող են ընկալվել որպես նախադասություն, որը ծագել է խոսելու պահին: Առաձներն ու ասացվածքները չեն ենթարկվում փոփոխությունների: Նրանք կարող են միայն համարժեքներ ունենալ: Չի կարելի դրանք փոխակերպել անուղղակի խոսքի՝ ըստ գոյություն ունեցող օրենքների:

Դրանք համարվում են մարդկանց կոլեկտիվ փորձի լեզվական արտահայտությունը, որը ամրագրվել է որոշակի ձևով: Առաձների ստորոգյալը սովորաբար դրվում է ներկա ժամանակով, երբեմն հարակատար դերբայով իսկ երբեմն էլ՝ անորոշ դերբայով: Դարձվածքների մեծ մասը ծագել է առաձներից, նրանց կրճատ տարբերակն է: Օրինակ՝ *Partire a cavallo tornare a piedi* (բառացի՝ ձիով գնալ, ոտքով վերադառնալ, այսինքն՝ *ձեռնունայն վերադառնալ*), որը ծագել է՝ *L'arroganza è partita a cavallo, ed è tornata a piedi* (բառացի՝ գոռոզությունը ձիով գնաց, ոտքով վերադարձավ) տարբերակից: Դարձվածքում գոռոզության իմակը պահպանվել է, չնայած որ բաղադրիչների մի մասը զեղչվել է: Առաձը և դարձվածքը միևնույն իմաստն են արտահայտում: Այստեղ ստորոգյալն արտահայտված է բայի անցյալ կատարյալ ժամանակով: Առաձները ածանցման մեծ հնարավորություն ունեն, նրանցից ձևավորվում են դարձվածքներ, որոնցից, իրենց հերթին, կարող են գոյանալ բառեր: Սակայն ոչ բոլոր առաձներն են, որոնցից կարելի է զեղչման միջոցով ստանալ համառոտ դարձվածքներ:¹²⁶ Առաձներն ու ասացվածքները, լինելով տվյալ լեզվի լեզվակիրների կոլեկտիվ կենսափորձի արտահայտիչները, տարբերվում

¹²⁵ Черданцева Т. З., *Язык и его образы*, изд. «Международные отношения», Москва, 1977, էջ 145

¹²⁶ Черданцева Т. З., նշվ. աշխ., էջ 150

են առակներից և մեջբերումներից նրանով, որ չունեն կոնկրետ հեղինակ: Նրանք տարբերվում են նաև իդիոմներից, որոնք նույնպես ժողովրդական կոլեկտիվ ստեղծագործության արդյունք են, քանի որ նրանց բնորոշ է այլաբանությունը, փոխաբերական իմաստը: Առածներն անընդհատ սերում են իդիոմներ, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր իդիոմ նախկինում եղել է առած, կամ կոլեկտիվ կենսափորձի արտահայտության այլ ձև, որը հնարավոր է, որ ամրագրված չլինի առածում, այլ գոյություն է ունեցել միայն որոշ մարդկանց գիտակցության մեջ, լեզվական ձևավորում ստանալով ուրիշների կողմից, ի վերջո ամրագրվել է լեզվում ինչ-որ գրողի շնորհիվ՝ հասու դառնալով բոլոր լեզվակիրների համար:

Ըստ Պ. Բեդիրյանի՝ *«Նախադասություն դարձվածքները կառուցվածքային առանձին տիպ են ներկայացնում և այնտեղ չեն մտնում ենթակայական ուղղականով բաղադրիչ ունեցող այն դարձվածքները, որոնք միայն ռճական անհարթության ու խորթության պատճառով է, որ գործ չեն անում բայի անդամ ձևով: Նախադասություն Դ-ների շարքը դասվում են այն կապակցությունները, որոնք կազմավորվում են միայն իբրև նախադասություն՝ ստորոգմամբ: Ինչպես և բոլոր նախադասություն դարձվածքները, նախադասություն դարձվածքներին նույնպես բնորոշ են հետևյալ գծերը»*¹²⁷:

Ա. Բաղադրիչները գերազանցապես կայուն են, կամընտիր անդամներով նախադասություն դարձվածքները՝ համեմատաբար սակավաթիվ: Բաղադրիչները, որպես կանոն, ձևաբանական կայուն ձևավորում ունեն: Օրինակ՝ *աչքս բաց եմ արել և տեսել եմ* բայերը՝ վաղակատար ժամանակային ձևով, *աչք* գոյականը՝ հայցական հոլովով և անպայման ստացական հոդով (նայած խոսքային միջավայրին՝ *ս, դ, ն*, որոնց համապատասխան և բայերի դեմքերը), «ազատ» բաղադրիչ՝ անպայման հայցական հոլովով (գոյական կամ դերանուն): Հաճախ ավելանում է և ցուցական դերանուն, կամ վիճակ ցույց տվող կապակցություն:

Բ. Նախադասություն ԿԴ-ների բայ բաղադրիչները եղանակային սահմանափակ ձևերով են դրվում, երբեմն միայն մեկ ժամանակային ձևով, նույնիսկ մեկ դեմքով ու թվով, ինչպես՝ *ծոծրակդ կտեսնես* և այլն:

¹²⁷ Բեդիրյան Պ. Ս., *Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն*, «Լույս» հրատ., Երևան, 1973, էջ 180

Գ. Որպես կանոն, նախադասություն ԿԴ-ները ամբողջությամբ վերցրած են վերափմաստավորված լինում: Այստեղ չեն լինում գլխավոր և ոչ գլխավոր բաղադրիչներ:

Ժամանակակից հայերենում սրանք իրենց կազմությամբ բավական խայտարդետ են: Կարելի է թվել կազմությամբ և առաջացմամբ իրարից տարբեր հինգ տեսակ նախադասություն ԿԴ-ներ:

Ա. ԿԴ-ներ հարցական դերանուններով: Օրինակ՝ *Ո՞վ է բերանդ փակել, Ի՞նչ գլխովս եմ տալիս* և այլն:

Բ. Ժխտական նախադասություն դարձվածքներ՝ *սրանով փոր չի կշտանա* և այլն:

Գ. Բաղադրյալ ստորոգյալով նախադասություն ԿԴ-ներ: Օրինակ՝ *Մատենների վրա կարելի է հաշվել* և այլն:

Դ. Ստորադասական նախադասություն ԿԴ-ներ: Սրանց մեջ կան ամբողջական բարդ ստորադասական, ինչպես նաև միայն ստորադաս մասը ներկայացնող ԿԴ-ներ: Օրինակ՝ *Քանի դեռ աչքս բաց է/բերանումս չունչ չկա/բերանիցդ մարգարիտ թափես/ ինչի վրա մատդ դնես* և այլն:

Ե. Անդեմ նախադասություն Դ-ներ: Օրինակ՝ *Գլուխը քարը, սատրանի ականջը խուլ* և այլն:

Պ. Բեդիրյանի դասակարգմամբ՝ «Երկրորդ խումբը ներկայացնում են այն դարձվածքները, որոնք կազմված են ժողովրդական լեզվամտածողությամբ, հանդիպում են առավելապես տրամախոսությունների մեջ, այն էլ իբրև պատասխանական խոսք: Այդպիսին են՝ մեջքդ/կոնակդ տեսնեմ, կրունկդ դեսն արա և այլն: Երրորդ խմբի մաս են կազմում այն նախադասությունները, որոնք կազմված են առած-ասացվածքների հիման վրա»¹²⁸:

¹²⁸ Բեդիրյան Պ. Ս., *նշվ. աշխ.*, «Լույս» հրատ., Երևան, 1973, էջ 184

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Lapucci C., *Dizionario dei proverbi italiani*, Le Monnier, Firenze, 2006
2. Cardona G. R., *Introduzione all'etnolinguistica*, De Agostini Scuola SpA, Novara, 2006
3. Բեդիրյան Պ. Ս., *Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն*, «Լույս» հրատ., Երևան, 1973
4. Բեդիրյան Պ. Ս., *Հայերեն շրջասույթների բառարան*, Էդիթ Պրինտ, Երևան, 2010
5. Թոսունյան Գ. Բ., *Թևակոր խոսքեր*, «Խորհրդային գրող», Երևան, 1989
6. Պետրոսյան, Հ.Ձ., *Հայերենագիտական բառարան*, Երևան «Հայաստան» 1987
7. Черданцева Т. З., *Язык и его образы*, изд. «Международные отношения», Москва, 1977

ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ - ՏՐՈՒԿՏՈՐՆՈ-ԳՐԱՄՄԱՏԻԿԵՍԻԿԵ ՕՍՈԲԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՖՐԱԶԵՕԼՈԳԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՏԱԼԻԱՆԿԱՆ ԵՎ ԱՐՄԵՆԻԱՆԿԱՆ ԻՅԱԿԱՆ

Целью настоящей статьи является выявление общих и различных структурных и грамматических черт соматических фразеологизмов-предложений итальянского и армянского языков. Фразеологизмам-предложениям итальянского языка свойственны следующие особенности: закрытая структура, наличие непродуктивной модели, контекст разговорного языка и т.д.

В армянском языке к фразеологизмам-предложениям относятся те сочетания, которые, как и предложения, строятся на основе предикации.

ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ - STRUCTURAL AND GRAMMATICAL PECULARITIES OF SOME PHRASEOLOGICAL UNITS CONTAINING A SOMATIC TERM IN ITALIAN AND ARMENIAN

This article presents a contrastive analysis of structural and grammatical features of some phraseological units containing a somatic term in Italian and Armenian. In the above mentioned units in Italian and Armenian some dissimilarities are observed in the frequency of the use of syntactic construction. As far as lexical and grammatical features are concerned, differences stand out.

**ՀԱՅԵՐԵՆԻ, ՌՈՒՍԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԿԵՐՊԻ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

ԼՈՒՍԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հիմնաբառեր՝ քերականական կարգ, կերպ, կապարյալ, անկապար

Կերպի քերականական կարգը հատուկ է զուգադրվող լեզուներին, սակայն դրա ընկալման սահմանները տարբեր են: Եթե զուգադրենք երեք լեզուների կերպերը, ապա ավելի շատ ընդհանրություն կտեսնենք *հայերենի* և *ռուսերենի*, քան *հայերենի* և *անգլերենի* կամ *ռուսերենի* և *անգլերենի* կերպի քերականական կարգերի միջև: Պատճառը *հայերենում* և *ռուսերենում* կերպի և ժամանակի քերականական կարգերի միջև եղած կապն է:

Հայերենում կերպի քերականական կարգի վերաբերյալ կան տարբեր բնորոշումներ: Մ. Աբեղյանն առաջարկում է չորս կերպ՝ *կապարվող, կապարված, կապարելի, պարզ*: Կապարվող կերպը ցույց է տալիս ներկայում, անցյալում և ապառնիում ընթացքի մեջ եղող գործողություն՝ *սիրում եմ, սիրում էի, սիրելիս կլինեմ, կապարվածը՝* ավարտված գործողություն՝ *սիրել եմ, սիրել էի, սիրած կլինեմ, կապարելին՝* կատարվելիք գործողություն՝ *սիրելու է, սիրելու էր, սիրելու կլինի*, իսկ *պարզ կերպը* ցույց է տալիս գործողություն՝ առանց հաշվի առնելու, թե այն ընթացքի մեջ է, վերջացած է, թե դեռ կատարվելու է՝ *սիրեմ, սիրեցի կսիրեմ*¹²⁹: Ըստ Մ. Աբեղյանի՝ *սիրում եմ, սիրել եմ, սիրելու եմ* բայաձևերը, ճիշտ է, պատկանում են տարբեր կերպերի, բայց ներկա ժամանակի բայաձևեր են: Բայի քերականական կերպի վերաբերյալ պատկերացումն արմատապես փոխեց Գ. Զահուկյանը¹³⁰ : Ի տարբերություն Մ. Աբեղյանի՝ նա առաջարկեց երկու կերպ՝ *կապարյալ* և *անկապար*: Կատարյալ կերպը ցույց է տալիս կատարված, ավարտված,

¹²⁹ Աբեղյան, Մ. Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 299-300: Նույնի՝ Երկեր, հ. 6, Ե., 1974, էջ 270, 459: Գ. Սևակը լրացնում է Աբեղյանին և չորրորդ՝ պարզ կերպը, անվանում է անկերպ (ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 306-307)

¹³⁰ Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 229-237, 268-270

իսկ անկատար կերպը՝ ընթացքի մեջ եղող, տևական գործողություն: Գ. *Ջահուկյանի* կարծիքով *սիրեմ, սիրել, սիրելու* դերբայներն արտահայտում են ոչ թե կերպային հակադրություն, այլ համընթացություն, նա վերոնշյալ դերբայները դիտարկում է *եմ/էի* օժանդակ բայերի հետ և ժամանակի հակադրության մեջ՝ նախորդում, հաջորդում, առաջարկում իրադրական ժամանակ և ոչ իրադրական ժամանակ (հաջորդականություն): Այս բնորոշմամբ հայերենի և ռուսերենի կատարյալի և անկատարի կերպերը նման են: Ջուզադովող լեզուներում կերպային իմաստների արտահայտման միջոցները տարբեր են:

Անզլերենում կերպի քերականական կարգը կապված է ոչ այդքան ժամանակի քերականական կարգի, որքան գործողության կատարման ձևի հետ, այն է՝ գործողությունն ընթացքի մեջ է, թե՛ ավարտված: Ըստ այդմ, *անզլերենում* կա երկու կերպ՝ *անորոշ (Indefinite)* և *շարունակական (Continuous)*: Ի տարբերություն հայերենի և ռուսերենի՝ անզլերենը ներկա, անցյալ և ապառնի ժամանակներում տարբերակում է առհասարակ կատարվող և այդ պահին կատարվող գործողությունները երկու ժամանակաձևերով՝ անորոշ և շարունակական: Այսինքն՝ *I am working*-ը (*աշխատում եմ* հիմա) կերպային հակադրության մեջ է ոչ թե *I was working*-ի (*աշխատում էի* այդ պահին), այլ *I work*-ի (*աշխատում եմ* առհասարակ) հետ¹³¹: Գործողությունը կարող է ընթացքի մեջ լինել ինչպես ներկայում, այնպես էլ անցյալում և ապառնիում: *Ա. Սմիռնիցկին*¹³² նշում է, որ անորոշ կերպն արտահայտվում է բայի *Indefinite*-ով, իսկ շարունակականը՝ *Indefinite+ing*-ով: Բայի այս բնորոշումը ցույց է տալիս, որ *անզլերենում, ի տարբերություն հայերենի և ռուսերենի, կերպի գաղափարը կապված է գործողության կատարման ձևի հետ*:

Հայերենում կա *կատարյալի* և *անկատարի* հիմք¹³³, որը բայակազմության կարևոր բաղադրիչն է: Բայի եղանակաժամանակային ձևերը կազմվում են ըստ վերոնշյալ հիմքերի: Ընդ որում, անկատար և կատարյալ հիմքից կազմված բայաձևերը, որ արտահայտում են ժամանակ, ցույց են տալիս նաև տվյալ բայաձևի կերպը: Բոլոր այն

¹³¹ Մանրամասն տե՛ս Ավետյան Ս., Անզլերենի ժամանակային հարաբերակցության կարգի և հայերենի ոչ իրադրական ժամանակի (ենթա-)կարգի զուգադրական քննություն. «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2015 № 1 (16), էջ 43

¹³² Смирницкий А., Морфология английского языка, М., 1959, с. 316-327:

¹³³ Մանրամասն տե՛ս Աբրահամյան Ս., ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 188-190

բայաձևերում, որտեղ հիմքը պահպանվում է, բայի կերպն անկատար է՝ *խոսում են, հանգցնում էի, (կ)հանգցնեմ...* Կատարյալի հիմքի կազմությունն անկատարի համեմատությամբ բարդ է, հիմքի կազմության եղանակները՝ բազմազան: Անցյալ կատարյալի հիմքից կազմված ժամանակներն ունեն կատարյալի կերպ. *որսացի, որսացել են, որսացել էի*:

Ռուսերենում կերպի քերականական կարգը ¹³⁴ բայական համակարգի ամենաբարդ բաժինն է: Բացառությունները շատ են, կատարյալ և անկատար կերպերի կազմության ձևերը՝ ամբողջությամբ չհամակարգված: Կատարյալի և անկատարի կերպի բայերը կազմում են կերպային հակադրություն, որով պայմանավորված է ժամանակաձևերի կազմությունը: Կերպային հակադրության մեջ մտնող երկու բայերը նույնն են *բառային*, տարբեր՝ *քերականական իմաստի* արտահայտության տեսանկյունից՝ *говорить-поговорить, любить-полюбить*: Կա կերպային զույգ կազմելու քերականական մի քանի միջոց¹³⁵.


- 1) նախաձանցի միջոցով, երբ անկատար կերպի ածանց չունեցող բային կցվում է նախաձանց. այդպիսի նախաձանցներ են *по-, про-, при-, под-, раз-, на-, из-, с-, вы-, в3-, воз-, за-, о-, об-, от-, у-*ն - *делать-сделать, задать-погодать, писать-написать, сигнализировать-просигнализировать, пугать-испугать, мыть-помыть* (в-, до-, над, недо, низ-, пре-, со-, де-, дис-, ре-, пред- նախաձանցներն ունեն բառակազմական նշանակություն, կերպային զույգերի կազմությանը չեն մասնակցում),
- 2) ածանցի միջոցով (*-ва-, -ива-, -ева-, -а-*), երբ կատարյալ կերպի աննախաձանց և նախաձանցավոր բայից կազմվում է անկատար կերպի բայ. *переставить-переставливать, решить-решать, вдавить-вдавливать, откусить-откусывать, присвоить-присваивать*,
- 3) *-ну-* ածանցով, երբ անկատար կերպի բայից կազմվում է կատարյալ կերպի բայ. *пугать-пугнуть, кричать-крикнуть*,

¹³⁴ Հ. Աճառյանը ռուսերենում նշում է հինգ կերպ՝ կատարելական, անկատարական, վայրկենական, տևողական, հաճախական՝ կերպերի տեսակների մեջ մտցնելով նաև *-ну-* (однократное действие) և *-ива-, -ива-, -ва-* (многократное действие) քերականական մասնիկներով կազմված բայերը (Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր IV, գիրք Ա, Ե., 1959, էջ 56)


¹³⁵ Русская грамматика, т. I, М., 1980, с. 586

- 4) բայի արմատում կամ հիմքում ձայնավորի հերթագայությամբ–
решить-решать, вооброзить-воображать,
- 5) տարարմատությամբ՝ սուպլետիվիզմով, – *класть-положить, говорить-сказать,*
- 6) հնչյունական նույն կազմն ունեցող բառում շեշտի փոփոխությամբ ¹³⁶ – *насыпать-насыпать, разрезать-разрежать, рассыпать-рассыпаться:*

Ռուսերենի նախաձանցներն ունեն կարևոր մի առանձնահատկություն ևս. դրանք ունեն ինչպես քերականական, այնպես էլ բառակազմական նշանակություն. մի կողմից՝ աննախաձանց բայերից նախաձանցի օգնությամբ կարելի է նոր բովանդակությամբ բառ կազմել, օրինակ՝ **от-говорить-отговорить**, **рас-ставить-расставить**, **за-говорить-заговорить**, մյուս կողմից՝ նախաձանցը կարող է դառնալ կերպային հակադրության հիմք՝ *делать-сделать* (քերականական), *дать-сдать* (բառակազմական): Ռուսերենին չտիրապետողի համար նախաձանցները սերտելը և տարբերակելը բարդ է, քանի որ կերպային հակադրություն կազմելու համար անհրաժեշտ է պարզել, թե նախաձանցն ինչ իմաստ է հաղորդում բային՝ բառակազմակա՞ն, թե՞ քերականական: Հայերենում և անգլերենում նախաձանցներն ունեն միայն բառակազմական նշանակություն: Հայերենի կերպի քերականական կարգի համեմատությամբ *ռուսերենն* ունի առանձնահատկություն. այն չունի կերպային հակադրություն կազմելու համար ելակետային ձև: Ինչպես անկատար կերպից կարող է կազմվել կատարյալ կերպ ունեցող բայ, այդպես էլ կատարյալից՝ անկատար:



Հայերենում, ինչպես *ռուսերենում*, անկատար կերպից՝ կատարյալ և կատարյալ կերպից անկատար կերպի նոր բայ անհնար է կազմել:



¹³⁶ Аракин В., Сравнительная типология английского и русского языков, М., 1989, с. 122

խաղացվել

խաղաց

խաղացրեց

խաղացվեց

Անգլերենում ևս բայի *to* մասնիկով ձևը ելակետային է կերպի կազմության համար: Սակայն, ի տարբերություն հայերենի, չկա կրավորականի առանձին ձև, որից կկազմվի կրավորական սեռի բայի կատարյալ կերպը: Հետևաբար, կերպային հակադրություն կազմելու հնարավորությունը սահմանափակ է:

to play ————— play (Indefinite aspect)
playing (Continuous aspect)

Այսպիսով, զուգադրվող երեք լեզուներում կերպի քերականական կարգի ընկալման սահմանները և արտահայտությունը տարբեր են: Ընդ որում, ռուսերենի կատարյալ և անկատար կերպերի կազմության ժամանակ, երբ բայը ստանում է նախածանցներ և ածանցներ, ինչպես արդեն նշել ենք, բայի կազմում կատարվում է ձայնավորների և բաղաձայնների փոփոխություն. носить-ношу-носишь, купить-куплю, з>с, раз+трогать – растрогать, из+печь, испечь, вз+пахать, вспахать: Այսինքն՝ ռուսերենը կատարյալ և անկատար կերպի կազմության ժամանակ պահպանում է թեքական լեզուներին բնորոշ հատկանիշը:

Հայերենի անկատար և կատարյալ կերպի բայածների կազմության ժամանակ հանդես է գալիս և՛ թեքական տիպի լեզուներին բնորոշ հատկանիշ (հնչյունական հերթագայություն՝ խաղալ-խաղացնում եմ-խաղացրի, հոգնեցնել-հոգնեցնում եմ-հոգնեցրի, հասցնել-հասցնում եմ-հասցրի), և՛ կցական տիպի լեզուներին բնորոշ հատկանիշ (քերականական մասնիկների կցում՝ խաղալ-խաղ+աց, խաղ+աց+ել եմ, էի):

Անգլերենում անորոշ և շարունակական կերպը կազմվում է քերականական մասնիկի կցումով: Բայի անորոշ ձևին կցվում է *-ing* քերականական մասնիկը, որի ժամանակ բայի վերջին ձայնավորը կարող է սղվել՝ *share+ing-sharing*, իսկ բաղաձայնը՝ կրկնապատվել՝ *drop+ing-dropping*: Կարևոր մի առանձնահատկություն ևս. ի տարբերություն հայերենի և ռուսերենի՝ անգլերենի բայի կերպի քերականական կարգի մասին կարելի է պատկերացում կազմել անգամ դերբայական բաղադրիչից՝ *speak-speaking, drop-dropping*:

Լեզու	Հայերեն		Ռուսերեն		Անգլերեն	
Կերպ	անկա տար	Կատարյալ	անկա տար	կատար յալ	շարունակ .	անորոշ
Ներկա	լսում եմ	-	слушаю	-	listening	listen
անցյալ	լսում էի	Լսեցի	слушал	послуш ал	listening	listen

Այսպիսով, եթե համադրենք երեք լեզուների կերպի քերականական կարգը, ստացվում է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1: Չուգադրվող լեզուների կերպի քերականական կարգի հարացույց

Կերպի քերականական կարգի հետ սերտ կապ ունի նաև Ա. Սմիռնիցկիի առաջարկած *հարաբերակցության կապեզորիան*, որը վերաբերում է վաղակատարի (պերֆեկտի) առանձնահատկություններին: Ա. Սմիռնիցկին *անգլերենի* պերֆեկտային ձևերը ներկայացնում է կերպաժամանակային քերականական կարգից դուրս՝ որպես *հարաբերակցության քերականական կարգ* (the category of correlation)¹³⁷: Ըստ նրա՝ *անգլերենում* պերֆեկտային ձևերը՝ *have (has/had)*-ով կազմությունները, կարող են լինել *անորոշ* և *շարունակական կերպերի*, բայց կարող են նաև տարբերվել *ժամանակի* քերականական կարգի տեսանկյունից այնպես, ինչպես ոչ պերֆեկտային ձևերը՝ *I have/had wrote, I have/had been writing, I shall/should have written, I shall/should have been writing*:

Ա. Սմիռնիցկիի *հարաբերակցության քերականական կարգն* իր արտահայտությունն ունի նաև հայերենի բայական համակարգում: Այն, որ, օրինակ, հայերենի վաղակատարի և ներկա անկատարի, անցյալ վաղակատարի և անցյալ կատարյալի միջև կա կերպաժամանակային հակադրություն, նկատել են նաև հայ լեզվաբանները: Ս. Աբրահամյանը նշում է, որ *գնացել է* և *գնաց* ձևերի հակադրության մեջ, *գնաց* ձևը ցույց է տալիս գործողության կատարված, ավարտված լինելը խոսելու պահից

¹³⁷ Смирницкий А., Морфология английского языка, М., 1959, с. 308-316

անմիջապես առաջ¹³⁸: Կերպաժամանակային այս հակադրության և Ա. Սմիռնիցկիի առաջարկած հարաբերակցության քերականական կարգի միջև ընդհանրությունը նկատել է Հ. Ասմանգուլյանը՝ առանձնացնելով նախաներկայի (գրում եմ-գրել եմ) և նախասանցյալի (գրեցի-գրել էի) գաղափարը ներկա և անցյալ վաղակատարների խոնարհման հարացույցում, և նշել, որ «վաղակատարի հակադրությունը հայերենի մյուս կերպաժամանակային ձևերին, մասնավորապես անցյալի բայաձևերին, կազմում է բայի հատուկ քերականական կարգ: Այդ քերականական կարգը մեծ ընդհանրություն ունի *անգլերենի ժամանակային վերաբերության կարգի հետ*»¹³⁹: Ի տարբերություն Գ. Ջահուկյանի, որ վաղակատարի իմաստը բնութագրում է որպես ոչ իրադրական ժամանակ՝ այն դիտարկելով որպես ժամանակի քերականական կարգի ենթակարգ¹⁴⁰, Հ. Ասմանգուլյանը, կարծում է հայերենում և անգլերենում կա ժամանակային վերաբերության քերականական կարգ, որը *անգլերենում* արտահայտվում է պերֆեկտի, իսկ *հայերենում*՝ վաղակատարի ձևերով: Բովանդակային տեսանկյունից *հայերենի* ներկա և անցյալ վաղակատարները նման են անգլերենի ներկա և անցյալ վաղակատարներին, որոնք ունեն համապատասխանաբար *նախաներկայի* և *նախասանցյալի* իմաստ, սակայն, ի տարբերություն *հայերենի*, *անգլերենի* պերֆեկտային ձևերն ունեն նաև *նախասպառնու* գաղափար՝ արտահայտված անորոշի և շարունակականության կերպով (*I shall/should have written, I shall/should have been writing*): *Ռուսերենի* բայական համակարգում պերֆեկտային ձևեր չկան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 699:
2. Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 418:
3. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր IV, գիրք Ա, Ե., 1959, էջ 591:

¹³⁸ Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1967, էջ 369-370

¹³⁹ Ասմանգուլյան Հ., Ժամանակային վերաբերության կարգը անգլերենում և հայերենում. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, № 9, էջ 54

¹⁴⁰ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի կառուցվածքը և զարգացումը, Ե., 1969, էջ 269

4. Ամանգույան Հ., Ժամանակային վերաբերության կարգը անգլերենում և հայերենում. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, № 9, էջ 49-57:
5. Ավետյան Ս., Անգլերենի ժամանակային հարաբերակցության կարգի և հայերենի ոչ իրադրական ժամանակի (ենթա-)կարգի զուգադրական քննություն. «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2015 № 1 (16), էջ 38-51:
6. Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 291:
7. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 357:
8. Аракин В., Сравнительная типология английского и русского языков, М., 1989, с. 255:
9. Русская грамматика, т. I, М., 1980, с. 784:
10. Смирницкий А., Морфология английского языка, М., 1959, с. 440:

ЛУСИНЕ МУРАДЯН - СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ГРАММАТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ ВИДА ГЛАГОЛОВ АРМЯНСКОГО, РУССКОГО И АНГЛИЙСКОГО ЯЗЫКОВ

Грамматическая категория вида характерна для трех сопоставляемых языков, но есть много общего между армянским и русским, чем армянским и английским или русским и английским грамматическими категориями вида. Причина заключается в связи между грамматическими категориями аспекта и времени армянского и русского языков. Грамматическая категория вида английского языка не столько связана с грамматической категорией времени, сколько с формой действия, существуют две формы глагола: неопределенный (инфинитив) и длительный. В английском языке грамматическая категория вида тесно связана с категорией корреляции, которая в свою очередь связана с перфектными видами глагола. Перфектные формы глагола есть и в системе спряжения армянского языка, но по сравнению с английским языком, в армянском языке перфектные формы употребляются не в трех временах глагола, а в двух.

LUSINE MORADYAN-COMPARATIVE ANALYSIS OF ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH CATEGORY OF ASPECT

The grammatical category of aspect is typical for three compared languages, but there is much in common between the Armenian and Russian, than between Armenian and English or Russian and English grammatical categories of aspect. The reason is the connection between the grammatical categories of aspect and time in the Armenian and Russian languages. In English the grammatical category of aspect is not so much associated with the grammatical category of time, as with the form of the action, there are two forms of the verb: indefinite (infinitive) and continuous. In English the grammatical category of aspect is closely related to the category of correlation, and which is related to the verbs in perfect form. There are perfect forms of the verb in the Armenian system of conjugation too, but in comparison with the English language, the perfect forms in the Armenian language are used not in three tenses, but in two.

**ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ «THE INQUIRY» ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄ ՎԻՆՅԱՄ
ՎԵՍՏԵՐՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ**

ԳԵՎՈՐԳ ՆԱԶԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ Հայկական հարց, Հայաստանի պետական սահմաններ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Վուդրո Վիլսոն, Վիլյամ Լին Վեստերման, *The Inquiry* փաստաթուղթ խումբ, Հայկական լեռնաշխարհի, Միացյալ Հայաստան, Փոքր Ասիա, Անապոլիա, Փարիզի խաղաղության վեհաժողով, Արևմտյան Հայաստան, Անդրկովկաս, Օսմանյան կայսրություն, Արևելյան Հայաստան, Կիլիկիա, Ադանա, Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Սեբաստիա, Երևան, Սև ծով, Տրապիզոն, Բաթում, Բոսֆորի և Դարդանելի նեղուցներ, Միջերկրական ծով, Տավրոս, Միջագետք, Թուրքիա, Սիրիա, Պաղեստին, Արաբիա, Ռուսաստան, Վրաստան, Քրդաստան:

1917 թվականի վերջում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը ստեղծեց մի կառավարական փաստաթուղթ մարմին (*The Inquiry*), որի նպատակն էր հավաքել տարաբնույթ տեղեկություններ և պատրաստել զեկույցներ որոնք ամերիկյան պատվիրակության կողմից պետք է օգտագործվեին Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կայանալիք խաղաղության վեհաժողովում:¹⁴¹ Խմբի աշխատանքների վերահսկողությունը կատարում էր նախագահի խորհրդատու Էդուարդ Հաուզը:¹⁴²

Նշյալ ամերիկյան պետական մարմինը հատուկ ուշադրություն էր դարձնում Հայաստանին և Հայկական հարցին: Նման հետաքրքրությունը հիմնականում պայմանավորված էր հայ-ամերիկյան սերտ հարաբերություններով, որոնք հաստատվել էին 19-րդ դարի ընթացքում Արևմտյան Հայաստանում գործող ամերիկացի միսիոներների գործունեության արդյունքում:

¹⁴¹ Stu David Hunter Miller, *My Diary at the Conference of Paris, with Documents*, 21 vol., Appeal Printing Company, New York, 1924-1926

¹⁴² Lindsay Rogers, "The Inquiry: American Preparations for Peace, 1917-1919 by Lawrence E. Gelfand," *Geographical Review*. 54 (3), July 1964, pp. 260-462

The Inquiry-ի Մերձավոր Արևելքի հարցերով գլխավոր մասնագետներից էր պատմաբան Վիլյամ Լին Վեստերմանը¹⁴³ ով նաև զբաղվում էր Հայաստանի պետական սահմանների ճշտման խնդիրներով:

Վեստերմանն ու իր գործընկերները պատրաստեցին՝ «Ձեկույց Թուրքական կայսրության արդար և իրագործելի սահմանների ենթաբաժանման վերաբերյալ»¹⁴⁴ որտեղ ներկայացնում էին պատերազմից հետո Օսմանյան կայսրության տրոհումի արդյունքում առաջացած հավանական նոր քաղաքական միավորների սահմանները:

Այն հաշվի էր առնում և հիմնված էր աշխարհագրական, ժողովրդագրական, տնտեսական և պամտական գործոնների վրա: The Inquiry անդամները առաջարկում էին տրոհել Օսմանյան կայսրությունը վեց մասի: Հայաստան, Անատոլիա, Սիրիա, Պաղեստին, Միջագետք և Արաբիա:

Նշվում էր որ Օսմանյան կայսրությունը բաղկացած է տարբեր ժողովուրդներից որոնք իրար տարանջատում էին կրոնական և լեզվական պատկանելիության հիման վրա: Սակայն այդ տարանջատումն որոշ առումներով հստակ չէր, օրինակ հիմնականում իրենց թուրք համարողները խոսում էին թուրքերեն և կրոնական պատկանելիությամբ մահմեդական էին: Իսկ արաբների պարագայում, կային տեղական տարբերություններ: Օրինակ Սիրիայի¹⁴⁵ արաբները իրենց մշակույթով ու

¹⁴³ Վիլյամ Լին Վեստերման (1873-1954) ամերիկացի ականավոր պատմաբան ով 1944-ից ղեկավարեց Ամերիկայի պատմաբանների միությունը: Նա համարվում էր հին աշխարհի առևտրի և տնտեսագիտության մասնագետ: Վեստերմանը Հռոմի ամերիկյան ակադեմիայի (որը ուսումնասիրում էր հին աշխարհի մշակույթն ու պատմությունը) անդամ էր: Վեստերմանը ավելի քան կես դար դասավանդեց Միացյալ Նահանգների մի շարք համալսարաններում: Իր կյանքի վերջին տարիներին նա դասավանդեց Եգիպտոսի Ալեքսանդրիայի Համալսարանում: Նա նախագահ Վիլյունի վարչակարգի կողմից նշանակվեց The Inquiry փաստահավաք խմբի անդամ և 1919-ից մաս կազմեց Փարիզի Խաղաղության Վեհաժողովում ամերիկյան պատվիրակությանը որտեղ նաև ներկայացվեց Վեստերմանի առաջարկը Հայաստանի սահմանների վերաբերյալ: 1920 թվականի հուլիսի կեսերին, ԱՄՆ Պետքարտուղարությունը Վիլյամ Լին Վեստերմանի գլխավորությամբ կազմեց մասնագետների «Հայաստանի և Թուրքիայի սահմանի հաստատման Իրավարար Վճիռի հանձնաժողով»: 1920 թ. նոյեմբերի 22-ին, նախագահ Վուդրո Վիլսոնը, սույն հանձնաժողովի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա, կայացրեց իրավարար վճիռ (Arbitration), որի միջոցով հաստատվեց Հայաստան-Թուրքիա միջպետական սահմանը:

¹⁴⁴ Ձեկույցում տարեթիվը չի նշվում, թերևս պատրաստվել է 1918 թ.

¹⁴⁵ Այս ժամանակ Լիբանանը, որտեղ գերիշխում էր կաթոլիկ (մարոնական) տարրը, Սիրիայի մաս էր կազմում, կամ ինչպես նշվում էր գեկույցում «Սիրիայի ենթամաս է»: Լիբանանը իբրև անջատ միավոր հռչակվեց, Սիրիայի մանդատը ստանձնած Ֆրանսիայի

քաղաքական նպատակներով տարբերվում էին «անապատի արաբներից»: Իսկ հայերը, ինչպես նշում էր Վեստերմանը և իր գործընկերները, պատկանում էին քրիստոնեական տարբեր դավանանքների (առաքելական, կաթոլիկ կամ բողոքական), սակայն Ադանայում ու Երևանում ապրող հայն էլ պատկանում էր նույն հայ ժողովրդին:

Ջեկույցը սկսում էր ԱՄՆ համար ամենամեծ նշանակություն ունեցող Հայաստանից (մաս առաջին): Սա իհարկե պայմանավորված էր արդեն այդ ժամանակ շուրջ մեկ դարի վաղեմություն ունեցող խորը և ամուր կապերով որոնք հաստատվել էին ամերիկացի միսիոներների ջանքերով:

Վեստերմանը նշում էր որ Հայաստանի զարգացման համար կար կարևոր նախապայման: Գտնվելով Սև ծովի արևլյան ավազանի հատվածում, Հայաստանը կարիք ուներ որ այդտեղի նավահանգիստները մշտական առևտրական կապ ունենային Միջերկրական ծովի հետ, որը միայն կարող էր տեղի ունենար եթե Բոսֆորի և Դարդանելի նեղուցները լինեին ազատ և դրանք, Մարմարայի ծովի և Կոստանդնուպոլիսի հետ մեկտեղ, պետք է վերածվեին միջազգային չեզոք գոտու:¹⁴⁶

Մինչ պատերազմը, նշում էր Ջեկույցը, Մերձավոր Արևելքում կար երեք հիմնական հայկական կենտրոն: Դա «մեծ կենտրոնական բարձրավանդակն էր» (Հայկական լեռնաշխարհը), որը հաճախ նույնացվում էր վեց հայկական նահանգներին (Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և Սեբաստիա): Մյուսը՝ Անդրկովկասի Երևանի նահանգն էր, որտեղ գտնվում էր հայերի սրբազան կենտրոն Էջմիածինը: Երրորդը Ադանայի նահանգի արևելյան մասն էր (Կիլիկիա): Հետևաբար, Վեստերմանը նշում էր որ Հայաստանի սահմանների ներքո ընդգրկվել են հենց այս տարածքները հաշվի առնելով աշխարհագրական, ազգագրական և տնտեսական գործոնները:

Արևելքից արևմուտք Հայաստանը ձգվելու էր պարսկական սահմանից մինչև Ջեյհան գետի ավազան (Կիլիկիա): Վանից հարավ և հարավ-արևմուտք ընկած տարածքները (Ջուլամերկ, Սղերդ, և Դիարբեքիրի մեծ մասը) որոնք ինչպես նշվում էր, թեպետ, պատմական

կողմից, 1926 թվականին, և ստացավ իր լիարժեք անկախությունը Երկրորդ աշխարհամարտից հետո

¹⁴⁶ Inquiry doc. 606, "Report upon Just and Practical Boundaries for the Subdivision of the Turkish Empire" by W. L. Westermann (and others), undated, in National Archives and Records Administration (NARA), Record Group (RG) 256, Entry 4

Հայաստանի մաս են կազմում, սակայն, քանի որ հիմնականում քրդաբնակ են, դուրս էին թողնվում Հայաստանի պետության սահմաններից: Սա նաև հնարավորություն էր տալիս որ քրդերը հետագայում այստեղ (մի գուցե) հաստատեն իրենց ինքնավարությունը, որը կնշանակեր որ Հայաստանի այլ տարածքների քրդերը ի վերջո կստեղծվեին այստեղ, նպաստելով Հայաստանի այլ տարածքներում հայկական տարրի գերակայությանը:

Հարավում Հայաստանի սահմանները հասնելու էին մինչև Տիգրիս գետի արևմտյան ավազանը (Հայկական լեռնաշխարհից հարավ): Արևմուտքում Հայաստանը ընդգրկելու էր Կիլիկիայի մեծ մասը և Տավրոսյան լեռներով բաժանվելու էր Անատոլիայից (Փոքր Ասիա): Հայաստանը հյուսիսում դուրս էր գալու դեպի Սև ծով, իսկ արևելքում պետք է ընդգրկեր Արևելյան Հայաստանի նահանգները:

Վեստերմանը նշում էր որ հայերը, 1915 թվականի համատարած կոտորածի արդյունքում ունեցան մեծ կորուստներ, սակայն դրանք հնարավոր է վերականգել: Ոմանք պնդում էին, որ հայերի թվաքանակը Հայաստանի առաջարկված սահմաններում բավարար չէ, սակայն այն շատ արագ կարող էր վերականգնվել հաշվի առնելով որ հայ վերապրողների մեծ մասը կվերադառնար իր հայրենիք և տնտեսության զարգացման պարագայում կխթաներ բնակչության կտրուկ աճ: Վեստերմանը հիշեցնում էր որ Դաշնակից ղեկավարներից շատերը առաջարկում էին Պաղեստինում ստեղծել հրեական պետություն, որտեղ հրեաները բնակչության հազիվ մեկ յոթերորդն էին կազմում, սակայն դա իրենց ետ չէր պահում այդ ծրագիրն առաջ տանելու համար, հայերի պարագայում տոկոսային հարաբերությունը այլոց նկատմամբ Հայաստանում կլիներ շատ ավելի մեծ: Քրդական ինքնավարության ստեղծումով Հայաստանից հարավ և հարավ-արևմուտք ընկած հատվածում, տեղի կունենար ժողովուրդների փոխանակում, որը ավելի կբարձացներ հայերի տոկոսային հարաբերությունը Հայաստանի պետությունում: Վեստերմանը հավելում էր որ Հայկական լեռնաշխարհի հողն շատ բերի է: Դրանից լիարժեք կերպով օգտվելու համար անհրաժեշտ էր միայն հաստատել ճիշտ կառավարման համակարգ: Բացի դրանից, Հայաստանը հարուստ էր մի շարք բնական պաշարներով և հանքերով որոնք ևս զարկ կտային տնտեսության վերականգմանը: Զեկուցագիրը նշում էր որ հայերը Հայաստանի միակ բնիկ տարրն են և հազարավոր տարիներ ի վեր շարունակական կերպով իրենց բնօրրանում կերտել են հարուստ պատմություն և մշակույթ: Կիլիկիան, մատնանշում

էր Վեստերմանը, այն վայրն է որտեղ մի քանի հարյուր տարի գոյատևեց հայոց պետականությունը: Կիլիկիայի ընդգրկումը Հայաստանի պետության մեջ, ոչ միայն հիմնված էր պատմական, այլ նաև, տնտեսական գործոնների վրա որոնք անհրաժեշտ էին Հայաստանի զարգացման համար:¹⁴⁷

Վեստերմանը նշում էր որ Հայաստանում պետք է ի վերջո կայանա իբրև անկախ պետություն: Սակայն նախնական փուլում, նա գտնում էր որ Հայաստանում պետք է հաստատվի միջազգային վերահսկողություն (մեկ կամ մի քանի երկրի գլխավորությամբ), որը առաջին հերթին կպաշտպանի հայերին թուրքերի և այլ հարևանների ոտնձգություններից:¹⁴⁸

Թուրքերին վերապահվում էր Հայաստանից արևմուտք ընկած ընդարձակ Անատոլիայի տարածքը: Նաև առաջարկվում էր ստեղծել Սիրիայի, Պաղեստինի (որը նաև կարող էր վերածվել հրեաների «Ազգային օջախի»), Միջագետքի (որի հյուսիսում նաև կարող էր ստեղծվել ինքնավար Քրդաստան ենթամիավորը) և Արաբիայի պետական միավորներ:

Ի տարբերություն հայերի ում համար առաջարկում էր մշտական անկախություն, հարևան վրացիներին և «Ադրբեջանի թաթարներին» առաջարկվում էր ժամանակավոր անկախություն:¹⁴⁹

Սա բացատրվում էր նրանով որ Անդրկովկասի հայերը կազմում էին հոծ զանգված որը ապրում է «Արմենոիդ ցեղի պատմական հայրենիքում»: Հայերը չունեին լուրջ տարբերություններ Արևմտյան Հայաստանում ապրող իրենց արյունակիցներից, նշում էր ուսումնասիրող խումբը, և հետևաբար Հայաստանի երկու մասերն պետք է միանային իրար հետ, այդպիսով իրենց նորաստեղծ պետությունը կդառնար հզոր և այդպես կպահպանվեր ազգերի ինքնորոշման իրավունքը որը նշում էր որ նույն ժողովուրդը չպետք է արհեստականորեն բաժանվի տարբեր պետությունների և կայսրությունների միջև:¹⁵⁰

Հավելվում էր որ Վրաստանը պետք է հարավում հասնի մինչև Հայկական լեռնաշխարհի և դրանից ոչ ավել: Եթե վրացիները ցանկանային կազմել հայերի հետ դաշնություն, ապա դա, ըստ The

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 10-15

¹⁴⁸ Lawrence E. Gelfand, *The Inquiry: American Preparations for Peace, 1917-1919*, New Haven, 1963, էջ 248-249

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 229

¹⁵⁰ Նույն տեղում:

Inquiry-ի ողջունելի քայլ կլիներ: Ադրբեջանի թաթարները «ուրույն ազգային և ցեղային պատկանելիություն ունեն», հետևաբար ըստ The Inquiry- ի, իրենց ընդգրկումը նման (հավանական) դաշինքի մեջ խնդիրներ կառաջացնեն, սակայն ինչ որ (դաշնային) միություն Հայաստանի և Վրաստանի միջև չէր բացառվում եթե տեղի ունենար վիճակի «որոշակի կայունացում»:¹⁵¹

Աշխարհագրորեն և տնտեսապես, նշում էր ուսումնասիրող խումբը, Կիլիկիան (Ադանայի վիլայեթ), չի պատկանում թուրքական Անատոլիային կամ Սիրիային, այլ պատկանում է Հայկական լեռնաշխարհին: Հայաստանի պետության կազմի մեջ պետք է ներառվեին Արևելյան Հայաստանի տարածքները, քանի որ «այս տարածքում բնակվում է հայերի ամենահոծ զանգվածը»: Տրապիզոնի նավահանգիստը դառնալու էր Հայաստանի ելքը դեպի Սև ծով: Նախապես The Inquiry-ն առաջարկում էր իբրև Սև ծովի ելք Հայաստանի կազմում ընդգրկել Բաթումի նավահանգիստը, սակայն հետագայում ավելի հակված եղավ Տրապիզոնի տարբերակին:¹⁵²

Վիլյամ Լին Վեստերմանի և The Inquiry-ի նախնական (1918-1919 թթ.) «ծովից ծով Հայաստանի» առաջարկը կյանքի չկոչվեց: Սակայն, իր 1920 թ. ղեկավարած ԱՄՆ Պետքարտուղարության «Հայաստանի և Թուրքիայի սահմանի հաստատման Իրավարար Վճռի հանձնաժողովի» ուսումնասիրությունը հիմք կազմեց 1920 թ. նոյեմբերի 22-ին նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից կայացված Իրավարար Վճռի (Arbitration Award), որով հաստատվեց Հայաստան-Թուրքիա միջազգային սահմանը:¹⁵³

¹⁵¹ Նույն տեղում, էջ 230.

¹⁵² Inquiry doc. 291, "Briefer Summary of Report upon Just and Practical Boundaries for Subdivisions of the Turkish Empire," NARA, RG 256: Զեկուցագրվում նշվում էր որ. «Հայաստանը ձգվելու է Միջերկրական ծովից մինչև Սև ծով և իր մեջն է ներգրավելու Ռուսահայաստանի հայկական նահանգները»:

¹⁵³ Հայաստանի պետության արևմտյան հատվածի սահմանը սկսվում էր Իրանին սահմանամերձ Կոտուր քաղաքից, անցնում Վանա լճից հարավ-արևմուտք, Բաղէշ և Մուշ քաղաքներից հարավ-արևմուտք: Այնուհետև սահմանը ձգվում էր դեպի հյուսիս, անցնում Երզնկայից ոչ հեռու: Հայաստանին դեպի Սև ծով հարմար ելք ապահովելու համար սահմանն անցնում էր Խարբերդից հյուսիս՝ իր մեջ ներառելով Տրապիզոնի նավահանգիստը և հարակից Սև ծովյան եզերքը: Քարտեզը տես Lawrence Martin, *Boundary Between Turkey and Armenia: As Determined by Woodrow Wilson, President of the United States of America*, U.S. Department of State, Washington D.C., 1920.

ГЕВОРК НАЗАРЯН - ДОКЛАД УИЛЬЯМА ЛИННА УЭСТЕРМАНА О ГРАНИЦАХ ГОСУДАРСТВА АРМЕНИЯ

В сентябре 1917 года президент США Вудро Вильсон основал исследовательскую группу «The Inquiry», целью которой было подготовить материалы для мирной конференции, которая должна была состояться после Первой мировой войны. В эту группу вошли 150 учёных и её руководителем был советник президента США Эдвард Хауз. Одной из задач этой американской правительственной группы была задача определения границ государства Армения. В составе учёных был также известный американский историк Уильям Линн Уэстерман, который в 1944 году стал президентом Американской ассоциации историков. Уэстерман предложил разделить Османскую Империю на шесть частей: Армения, Анатолия, Сирия, Палестина, Месопотамия и Аравия. Уэстерман и его коллеги в 1918-1919 гг. настаивали на том, чтобы граница государства Армения протягивалась от Чёрного до Средиземного морей. Это предложение официально было представлено в 1919 году американской делегацией на Мирной Парижской Конференции.

GEVORG NAZARYAN - WILLIAM LINN WESTERMANN'S (THE INQUIRY) REPORT ON THE BORDERS OF THE STATE OF ARMENIA

In September of 1917 US President Woodrow Wilson established *The Inquiry*, a study group which was tasked with preparing materials for the peace negotiations that were to follow World War I. *The Inquiry* was composed of around 150 academics and was directed by presidential adviser Edward House. The U.S. government research body was also tasked with proposing the boundary of the State of Armenia. Among these, was the prominent American historian, William Linn Westermann, who in 1944 became the president of the *American Historical Association*. Westermann proposed that the Ottoman Empire should be divided into six parts: Armenia, Anatolia, Syria, Palestine, Mesopotamia and Arabia. Westermann and his colleagues in 1918-1919 argued that the boundary for the State of Armenia should extend from the Black Sea to the Mediterranean Sea. This proposal was officially presented at the Paris Peace Conference by the members of the *American Commission to Negotiate Peace*.

ԱՌՆՈՒԴ ԹՈՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ
ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՊԱՆԹՈՒՐՔԻՍԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ՄԱՍԻՆ»

(1917 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ)

ԳԵՎՈՐԳ ՆԱԶԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ Աննոլդ Ջոզեֆ Թոյնբի, Ջեյմս Բրայս, Մեծ Բրիտանիա, Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարություն, «Կապույտ գիրք», պանթուրքիզմ, թյուրքեր, Իթթիհատ, Թուրան, Թուրքիա, Օսմանյան կայսրություն, Աբդուլ Համիդ Բ, համաթուրանական, համախլամական, Հայաստան, Հայկական հարց, հայոց ցեղասպանություն, երիտթուրքեր, Մունիս Թեքալի, Ջիա Գյոքալի, քրդեր, Դերսիմ, Կովկաս, Ռուսաստան, Փետրվարյան հեղափոխություն, Ժամանակավոր կառավարություն, Ալեքսանդր Կերենսկի, թաթարներ (ադրբեջանցիներ), Բաքու, Պարսկաստան, Միջին Ասիա, Էնվեր:

Աննոլդ Ջոզեֆ Թոյնբին (1889-1975) 20-րդ դարի բրիտանացի ականավոր պատմաբաններից մեկն է, ինչպես նաև իր ժամանակի միջազգային քաղաքականության խոշորագույն մասնագետներից մեկը: Նա երկար տարիներ դասավանդել է Լոնդոնի Համալսարանում (University of London) և Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության դպրոցում (London School of Economics and Political Science): Թոյնբին հեղինակել է բազմաթիվ գրքեր: Նա իր առաջին գիրքով՝ «Հայերի խոշտանգումները: Մի ողջ ազգի սպանություն», որը գրել է 1915 թ., լուսաբանում էր հայոց ցեղասպանությունը և ահազանգում էր ողջ աշխարհին:

1916 թ. Լոնդոնում Ջեյմս Բրայսի¹⁵⁴ հեղինակությամբ և Թոյնբիի խմբագրությամբ լույս տեսավ «Հայերի վիճակը Օսմանյան

¹⁵⁴ Ջեյմս Բրայս (1838-1922) Օքսֆորդի համալսարանի պատվավոր դոկտոր պրոֆեսոր, Ազատական կուսակցության հայտնի բրիտանական խորհրդարանի ներկայացուցիչ որը նաև կառավարությունում զբաղեցրել էր տարբեր պաշտոններ: Դեռ 1877 թվականին Բրայսը այցելել էր Հայաստանը և բարձացել

կայսրությունում 1915-1916 թթ.»¹⁵⁵ փաստաթղթերի ժողովածուն, որտեղ զետեղվեցին երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը մերկացնող բազմաթիվ հաղորդագրություններ և վկայություններ: Հատկանշական է, որ ժողովածուն պատրաստվել էր բրիտանական արտգործնախարարության կողմից և հրատարակվել 1916 թվականի հոկտեմբերին իբրև բրիտանական խորհրդարանի պաշտոնական «Կապույտ գիրք» զեկուցագիր: Ժողովածուն բաժանված էր 20 գլխի, որտեղ բերվում էին բազմաթիվ ականատեսների վկայություններ, զեկուցումներ, հաղորդագրություններ, լուրեր մամուլից և նամակներ: Այս կարևոր «ամբողջական և իրական» փաստավավերագրական ժողովածուն նպաստեց Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և աշխարհի այլ երկրներում հզոր հասարակական ալիքի ձևավորմանը՝ ի պաշտպանություն բնաջնջվող հայության և Հայկական հարցի հանգուցալուծման:

Թոյնբին 1915-ից սկսեց աշխատել բրիտանական արտգործնախարարությունում (Foreign Office) և պատերազմի տարիներին նրա հեղինակած մի շարք քաղաքական հուշագրեր վերաբերում էին Հայկական հարցին: Թոյնբիի «Հայերի խոշտանգումները. Մի ողջ ազգի սպանություն» գիրքը ցնցեց անգլիախոս աշխարհը: 1917 թ. հունիսին Թոյնբին գրեց նաև «Թուրքիայի անցյալն ու ապագան» գիրքը, որտեղ նա մեկ անգամ ևս հաստատում էր, որ թուրքերը փորձեցին բնաջնջել հայերին, սակայն իրենց նպատակին չհասան, քանի որ եղան հայեր, որոնք հրաշքով փրկվեցին: Հայ ժողովուրդը և Հայաստանը պետք է մեկընդմիջտ ազատագրվեն թուրքական լծից - պնդում էր Թոյնբին, և Հայաստանը պետք է վերահաստատի իր անկախությունը՝ իր մեջ ընդգրկելով վեց հայկական նահանգները, ինչպես նաև Կիլիկիան, որը ելք կապահովի դեպի Միջերկրական ծով:¹⁵⁶

1917 թ. սեպտեմբեր 7-ին Թոյնբին բրիտանական արտգործնախարարության տեղեկատվական բաժանմունքի համար պատրաստեց մի հուշագիր՝ «Պանթուրքիստական շարժման մասին», որը Մեծ Բրիտանիային և դաշնակիցներին ներկայացնում էր համաթուրանական (պանթուրքիստական) գաղափարախոսական

էր Մեծ Մասիսի գազաթը: Այդ այցից հետո Բրայսի կապն ու համակրանքը դեպի հայ ժողովուրդը ու իրեն արդար դատը իրեն մոտ մնաց մինչև իրեն կյանքի վերջը:

¹⁵⁵The Treatment of Armenians in the Ottoman Empire: Documents presented to Viscount Grey of Fallodon, Hodder and Stoughton, London, 1916.

¹⁵⁶Arnold Toynbee, Turkey: A Past and a Future, Hodder and Stoughton, 1917, p. 57.

հիմքերը և վտանգները: Թոյնբին նշում էր, որ երիտթուրքերի իշխանության գալուց հետո պանթուրքիզմի գաղափարախոսությունը լայն թափ ստացավ:¹⁵⁷ Նախ նրանք սկսեցին զտել թուրքական լեզուն՝ նրանից հանելով պարսկական և արաբական բառերը: 1912-1913 թթ. բալկանյան պատերազմների ծանր կորուստներից հետո համաթուրանական գաղափարախոսությունն ավելի ու ավելի էր ընդգծվում երիտթուրք երեք ղեկավար փաշաների՝ Թալեաթ, Էնվեր և Ջեմալ, կողմից: Թուրքիան մի նոր գաղափարախոսության կարիք ուներ, որը նոր լիցք կհաղորդեր քայքայվող կայսրությանը: Ազատականության և ժողովրդավարության բարեփոխումները ձախողվեցին, և դրանից հետո երիտթուրքերը իբրև հենարան ընտրեցին ծայրահեղ ազգայնամոլությունը և համաթուրանակությունը, որի քարոզիչները խոսում էին մեկ միասնական թյուրքական պետության՝ Թուրանի ստեղծման անհրաժեշտության մասին, որը կընդգրկեր Պոլսից մինչև Գոբիի անապատը:

Երիտթուրքերը, ըստ Թոյնբիի, թյուրքական տարածքներում (Կովկաս, Իրան, Միջին Ասիա և այլն) սկսեցին հիմնել ակումբներ, որտեղ քարոզում էին համաթուրանական գաղափարներն մեծարում էին թյուրքական նախամահմեդական հավատամքները: Իթթիհատը սկսեց հետապնդել երկու հիմնական համաթուրանական նպատակ՝ Օսմանյան կայսրության թյուրքացումը և թյուրքաբնակ տարածաշրջանների մերձեցումը Թուրքիայի հետ, որը կարող էր հարմար դաշտ ստեղծել դրանց կցմանը վերջինիս հետ:¹⁵⁸

Թոյնբին ընդգծում էր, որ համաթուրանականությունը, ինչպես և համախլամականությունը, պարզապես Թուրքիայի պարագլուխների ձեռքում գործիք էին՝ փորձելու իրենց գերիշխանությունը հաստատել թյուրքական այլ ժողովրդների վրա՝ քայքայվող Օսմանյան կայսրությունը հզորացնելու նպատակով:¹⁵⁹ Նաև նշվում էր, որ համաթուրանականության հիմնական գաղափարախոսը Սալոնիկցի Մոհ Բոհենն է, ով հետագայում փոխեց իր անունը՝ Մունիս Թեքալիի: Նա քարոզում էր օսմանահպատակ բոլոր ժողովուրդների թուրքացման և թուրքերի մեջ ձուլվելու գաղափարը:¹⁶⁰ Ուշագրավ է, որ հետագայում

¹⁵⁷Jacob M. Landau, *Pan-Turkism: From Irredentism to Cooperation*, C. Hurst & Co., 1995, p. 38.

¹⁵⁸ Նույն տեղում:

¹⁵⁹CAB 24/25, Department of Information, Intelligence Bureau, Memorandum on the Panturanian Movement. 7th September, 1917.

¹⁶⁰ Նույն տեղում:

(1923-ից հետո) Թեքալիը քարոզում էր նույն Թուրքիայի փոքրամասնություններին թուրքացնելու գաղափարներն արդեն թուրք ազգայնական-քեմալականի դիրքերից:¹⁶¹

Հուշագիրը մատնանշում էր, որ համաթուրանական քաղաքականությունում ոչնչացվեցին հայերը, ինչպես նաև հույները: Նրանց փոխարեն բալկաններից բերվեցին այսպես կոչված մուհաջիներ (բառացիորեն՝ գաղթականներ), որոնք տեղավորվեցին հայերի տներում: Իթթիհատը ցանկանում էր վերականգնել իր կորցրած տարածքները, բնակչությունը և հեղինակությունը՝ փորձելով յուրացնել այս գաղափարախոսությունը: Երիտթուրք պարագլուխները գիտակցում էին, որ համաթուրանականությունը և համախլամականությունն իրար հակասում են, և ավելի հակված էին դեպի պանթուրքիզմը, սակայն իրենց իշխանության գալու (1908 թ.) սկզբնական փուլում նրանք փորձեցին օգտագործել համախլամական գաղափարախոսությունը, որը շրջանառության մեջ էր դրվել դեռ սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի օրոք: Համախլամական գաղափարախոսության միջոցով փորձ էր արվում օգտագործելու մահմեդական աշխարհի ներուժը և փրկելու քայքայվող Օսմանյան կայսրությունը կործանումից:¹⁶²

¹⁶¹1924 թվականին Մուստաֆա Քեմալը նաև վերացրեց խալիֆությունը՝ համարելով այն հնի վերապրուկ, հետևաբար համախլամական գաղափարախոսությունը այլևս պիտանի չէր, Մունիս Թեքալիի և Զիա Գյուքալիի պես պանթուրքիստ գաղափարախոսների՝ «Թուրքիան թուրքացնելու և ողջ թյուրքական աշխարհի հետ ամուր կապեր ստեղծելու» ծրագրերը դարձան թուրքական վերնախավի հենքերից մեկը: 1923-ից հետո Թուրքիայում բոլորը անխտիր հռչակվեցին թուրք: Միայն ըստ Լոզանի պայմանագրի պարտավորվածությունների թուրքական իշխանությունը ստիպված ճանաչեց ոչ թե ազգային, այլ կրոնական համայքներ (այլ դավանանքի թուրքեր), իսկ ամենամեծ ազգային փոքրամասնությունը՝ քրդերը, օրենքով հռչակվեցին «լեռնային թուրքեր» (որը մնաց օրենքով ամրագրված մինչև 1990-ականները): Երիտթուրքերի դերի վերաբերյալ քեմալական շարժման հիմնավորման և դրանց թևերից մեկի կողմից Թուրքիայի Հանրապետության հիմնադրման վերաբերյալ տե՛ս Erik J. Zürcher, *The Young Turk Legacy and National Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey*, I. B. Tauris, 2010.

¹⁶²CAB 24/25, Department of Information, Intelligence Bureau, Memorandum on the Panturanian Movement. 7th September, 1917. Azmi Özcan, *Pan-Islamism: Indian Muslims, the Ottomans and Britain, 1877-1924*, Brill, 1997, p. 145.

Երբեմնի գրեթե ամբողջովին հայաբնակ Հայաստանը թուրքական տիրապետության ժամանակ կամաց-կամաց հայաթափվեց. բնիկների տեղը զաբղեցրին հարավից և հարավարևելքից եկած քրդերը: Թոյնբին նաև մատնանշում էր, որ Հայաստանում բնակվող մի շարք ցեղեր, ինչպես, օրինակ, Դերսիմի շրջանում բնակվող այսպես կոչված քրդերը, ունեն հայկական ծագում, և իբր նրանք բնիկ հայերի հետնորդներն են: Օսմանյան սուլթանները քրդերին հայերի դեմ սկսեցին օտագործել դեռ 16-րդ դարից: Իսկ սուլթան Աբդուլ Համիդ Բ-ն, նշում է Թոյնբին, 1891-ից սկսած, նրանցից կազմում էր համիդյե գնդերը, որոնց նպատակն էր պայքարել հայերի դեմ: 1915 թվականին թուրքական իշխանությունները բանտերից բաց թողեցին հանցագործներին և թուրք ժանդարմների հետ մեկտեղ օգտագործելով նաև տարբեր քրդական ցեղերի՝ նրանց բոլորին մասնակից դարձրին հայերի զանգվածային բնաջնջմանը: Թոյնբին նշում էր, որ 1915 թվականին մի թուրք բարձրաստիճան սպա ասել էր դանիացի մի բուժքույրի, որ հայերին ոչնչացնելուց հետո իրենք անցնելու են հույներին, դրանից հետո՝ քրդերին: Թոյնբին հավելում էր, որ ոչ բոլոր քրդական ցեղերը մասնակցեցին հայերի համատարած սպանդին: Նույն Դերսիմի (Ծովաց աշխարհի) քրդերը կամ, ինչպես նշվում էր, «պսևդոքրդերը», որոնք, ըստ Թոյնբիի, ունեին հայկական ծագում, պատասպարեցին հայերին: Նույնը կատարեցին նաև Կիլիկիայի և այլ վայրերի քրդերը:¹⁶³

Իթթիհատի պարագլուխները որոշել էին, որ ընդհանուր լեզուն՝ թուրքերենը, ավելի ամուր «սոսնձող» ուժ կարող է լինել, քան մահմեդական կրոնը: Այդ լեզվի (թուրքերենի) շուրջ կարելի է համախմբել ողջ բնակչությանը՝ դրանով իսկ համախմբվելով խիստ կենտրոնացված և ռազմականացված վերնախավի (երիտթուրքերի) շուրջ: Արդեն 1911 թվականի Իթթիհատի կուսակցական համաժողովում որոշում կայացվեց թուրքերենը պարտադրել օսմանահպատակ ժողովուրդներին: Թոյնբին շեշտում էր, որ այդ որոշումից գրեթե անմիջապես հետո երիտթուրքերը սկսեցին նպատակաուղղված աշխատանք կատարել. պատերազմի գրեթե սկզբից հայերը ենթարկվեցին զանգվածային բնաջնջման, իսկ հույները արտաքսվեցին Փոքր Ասիայից: Դրանով ողջ տարածաշրջանը ենթարկվեց բռնի թուրքացման:¹⁶⁴

¹⁶³ CAB 24/33, Intelligence Bureau, Department of Information, Report on the Pan-Turanian Movement, October 1917.

¹⁶⁴ CAB 24/25, Department of Information, Intelligence Bureau, Memorandum on the Panturanian Movement. 7th September, 1917.

Հատկանշական է, որ հետագա թուրք ազգայնական-քեմալականները, որոնց վերնախավը (Մուստաֆա Քեմալ, Իսմեթ Ինյոնյու, Ֆեվզի Չակմակ, Քյազիմ Կարաբեկիր, Ալի Ֆուատ Չեքետյ, Ֆեթի Օքյար, Քյազիմ Օզալի, Ռեֆետ Բելե, Դելե Հալիթ, Սեյֆի Դյուզգյորեն և այլք) ամբողջովին բաղկացած էր երիտթուրքերից, իբրև այսպես կոչված թուրք ազգայնականներ՝ 1923-ից (Թուրքիայի հանրապետության հռչակումից) հետո վերջնական ավարտին հասցրին թրքացման ծրագիրը:¹⁶⁵

Ըստ Թոյնբիի՝ աշխարհով մեկ թուրքերի ընդհանուր թիվը մոտ 27 միլիոն էր, որից շուրջ 8 միլիոնը ապրում էր Օսմանյան կայսրությունում: Թյուրքերի մեծ մասը (18 միլիոն) բնակվում էր Ռուսական կայսրությունում, իսկ մնացածը տարածված էր այլ երկրներում: Հետևաբար, ըստ նրա, պանթուրքիզմի հիմնական թիրախը Ռուսաստանն էր:¹⁶⁶

Թոյնբին մասնավորապես նշում էր.«Կովկասի թաթարները ավելի հետամնաց են քան Կազանի կամ Անատոլիայի թյուրքերը»: Նա հավելում էր, որ Կովկասի թաթարները թշնամաբար են տրամադրված հայերի նկատմամբ: Ըստ նրա՝ Բաքվի գրավումը թուրքական կամ թաթարական ուժերի կողմից կարող էր կարևոր նշանակություն ունենար պանթուրքիստների համար:¹⁶⁷

1917 թվականի (փետրվարյան) ռուսական հեղափոխությունը «նոր լիցք հաղորդեց համաթուրանական շարժմանը»՝ երիտթուրք պարագլուխներին տալով մի հնարավորություն, որի մասին նրանք անգամ երազել չէին կարող: Այսինքն, Ժամանակավոր կառավարության ավելի ապակենտրոնացված իշխանությունը, ըստ Թոյնբիի, պանթուրքիստների համար հնարավորություն էրստեղծում, որ նրանք փորձեն իրենց ներկայությունը հաստատել Ռուսաց կայսրության թյուրքաբնակ ընդարձակ տարածքներում (Կովկաս, Միջին Ասիա, Ղրիմ, Մերձվոլգա, Սիբիր և այլն):¹⁶⁸ Ռուսական հեղափոխությունը նաև խիստ թուլացրեց կովկասյան ռազմաճակատը, որը 1917 թվականի վերջերին քայքայման

¹⁶⁵ *The Young Turk Legacy and National Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey*, p. 105.

¹⁶⁶ CAB 24/25, Department of Information, Intelligence Bureau, Memorandum on the Panturanian Movement. 7th September, 1917.

¹⁶⁷ Նույն տեղում:

¹⁶⁸ Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. (документы и материалы), сост. Х. А. Бадалян, ред. А. О. Арутюнян, Ереванский государственный университет, Ереван, 1970, с. 242.

եզրին էր: Սա երիտթուրք պանթուրքիստների մեծ հնարավորություն էր տալիս շարժվելու առաջ և փորձելու իրենց ենթարկացնել Կովկասը, Միջին Ասիան և այն տարածքներ, որտեղ իրենք պանթուրքիստ համակիրներ շատ ունեին:¹⁶⁹

Ռուսական կայսրության անկման պարագայում Թոյնբին չէր բացառում, որ երիտթուրքերը կարող էին օգտվել առիթից և բռնազավթելին հատկապես Կովկասի՝ թաթարներով բնակեցված տարածքները: ¹⁷⁰ Նա նաև մտավախություն էր հայտնվում, որ զարգացնելով իրենց ռազմարշավը՝ երիտթուրքերը նաև կարող էին հաստատել թուրքա-մահմեդական ինչ-որ միավոր Միջին Ասիայում, որը կվտանգեր բրիտանական տիրապետությունը Հնդկաստանում: Բրիտանական տիրապետությունն այն ժամանակ իր հյուսիսային մասում ներառում էր ներկայիս Պակիստանի տարածքը և հիմնականում բնակեցված էր մահմեդականներով:¹⁷¹

Այս կանխատեսումն իսկապես տեղի ունեցավ, երբ Ալեքսանդր Կերենսկու ժամականավոր կառավարությունը հուշագրից մեկ շաբաթ անց՝ 1917 թվականի սեպտեմբերի 14-ին, Ռուսական կայսրության փոխարեն հռչակեց Ռուսաստանի Հանրապետությունը, որը գոյատևեց ընդամենը վեց շաբաթ:¹⁷² Դրանից հետո տեղի ունեցավ բոլշևիկների հեղաշրջումը, ինչն էլ հռչակեց Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետությունը և ընդմիջտ վերջ դրեց Ռուսաստանի կայսրությանը: Դրա հետևանքներից մեկը եղավ թուրքական գործերի առաջխաղաղումը դեպի Բաքու: Այդ ընթացքում միակ լուրջ դիմադրությունը թուրք-թաթարական պանթուրքիստներին ցույց տվեցին

¹⁶⁹ CAB 24/33, Intelligence Bureau, Department of Information, Report on the Pan-Turanian Movement, October 1917.

¹⁷⁰ CAB 24/25, Department of Information, Intelligence Bureau, Memorandum on the Panturanian Movement. 7th September, 1917.

¹⁷¹ Briton Cooper Busch, *Mudros to Lausanne: Britain's Frontier in West Asia, 1918-1923*, State University of New York Press, 1976, p. 27.

¹⁷² ԺԿ և խորհուրդների իշխանության փոխարեն երկիրը պետք է կառավարեր Համառուսաստանյան Սահմանադիր ժողովը: Սակայն ընտրությունները տեղի ունեցան 1917 թվականի նոյեմբերի 25-ին՝ բոլշևիկյան հեղաշրջումից հետո, և վերջիններս այն ցրեցին (քանի որ սահմանադիր ժողովում ավելի մեծ ներկայություն ունեին ոչ բոլշևիկ կուսակցությունները) հենց առաջին նիստից հետո, որը տեղի ունեցավ 1918 թվականի հունվարի 18-19-ին: Տե՛ս «Конституция Российской демократической Федеративной республики 1917 года», Чиновникъ, 2002, № 202 (18).

Հայկական կորպուսի զորամիավորումները: Հայ զինվորները շուրջ 9 ամիս (1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. սեպտեմբեր) հերոսաբար դիմադրեցին թուրքերին Արևմտյան Հայաստանից մինչև Բաքվի մատույցները:

Էնվերի և այլ երիտթուրք պարագլուխների նպատակը Թուրքիային այս տարածքների (մերձկասպյան և հնարավորության դեպքում Միջին Ասիայի) բռնակցումն էր, որը տեղի չունեցավ միայն Թուրքիայի՝ Առաջին աշխարհամարտում պարտության (1918 թ. հոկտեմբերի վերջ) շնորհիվ: Նույնիսկ պարտությունից հետո Էնվերը հավատարիմ մնաց իր պանթուրքիստական նկրտումներին և հանուն այդ գաղափարների պայքարեց մինչև իր կյանքի վերջը:¹⁷³

ГЕВОРК НАЗАРЯН - «МЕМОРАНДУМ О ПАНТЮРКИСТСКОМ ДВИЖЕНИИ», ПОДГОТОВЛЕННЫЙ АРНОЛЬДОМ ТОЙНБИ В МИДЕ ВЕЛИКОБРИТАНИИ (СЕНТЯБРЬ 1917 г.)

Имеющий мировую известность историк Арнольд Тойнби начал свою научную карьеру в 1915 году, написав книгу «Зверства в Армении: Убийство нации», документирующую геноцид армян. В том же году Тойнби начал работать в разведывательном департаменте МИДа Великобритании и в 1916 году отредактировал книгу Британского парламента «Положение армян в Османской империи в 1915-16 гг.», автором которой был лорд Джеймс Брайс. Во время Первой мировой войны Тойнби написал целый ряд меморандумов Британского МИДа по Армянскому вопросу. «Меморандум о Пантюркистском движении» был написан в сентябре 1917 года и представлял развитие этого движения, возникшего с приходом к власти младотурков, которые взяли пантюркистскую идеологию как основу своей национальной политики. Тойнби представил, что основной мишенью пантюркистов были армяне,

¹⁷³1921 թ. Էնվերը հաստատվեց Միջին Ասիայում, որտեղ ցանկացավ հիմնել պանթուրքիստական իսլամական պետություն, որը նա հույս ուներ, որ մի օր կդառնա այդքան երազած Թուրանի միջուկը: Սակայն իր գլխավորած բասմաչների շարժումը ճնշվեց Կարմիր բանակի կողմից, և Էնվերը սպանվեց 1922 թվականի օգոստոսի 4-ին խորհրդային զորքերի հետ բախումներից մեկի ժամանակ արցախցի հրամանատար Հակոբ Մելքոնյանի կողմից: А. И.Зевелев, Ю. А. Поляков, А. И. Чугунов, Басмачество: возникновение, сущность, крах, Москва, «Наука», 1981, с. 244.

так как они стояли на пути младотурков, желающих создать пантюркистскую империю от Константинополя до пустыни Гоби. По мнению Тойнби это была одна из основных причин, мотивирующих младотурков предпринять попытку истребления армян и тем самым устранить «клин», разделяющий их от других тюркских народов, живущих на территориях, прилегающих к Каспийскому морю и далее.

GEVORG NAZARYAN - ARNOLD J. TOYNBEE'S "MEMORANDUM ON THE PAN-TURANIAN MOVEMENT" PREPARED BY THE BRITISH FOREIGN OFFICE (SEPTEMBER OF 1917)

The renowned historian Arnold J. Toynbee began his academic calling in 1915 by writing *The Armenian Atrocities: The Murder of a Nation*, which documented the Armenian Genocide. That same year Toynbee began working for the intelligence department of the British Foreign Office and in 1916 edited the official "Blue Book" of the British Parliament: *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916*, written by James Bryce, which documented the Armenian Genocide through countless eyewitness testimonies. During World War I Toynbee also wrote several important Foreign Office memoranda which dealt with the Armenian Question. *Memorandum on the Pan-Turanian Movement*, was written in September of 1917 and outlined the development of this movement, which emerged with the rise of the Young Turks, who had embraced pan-turkism as their main ideology. Toynbee showed that the primary target of the Pan-Turkists were the Armenians, who stood in the way of the Young Turks who wanted to create a "Pan-Turanian Empire stretching from Constantinople to the Gobi Desert." This was, according to Toybee, one of the motivating factors that drove the Young Turks to carry out the attempted extermination of the Armenian people in order to "eliminate the wedge" that separated them from the other Turkic speaking peoples who resided in the greater basin of the Caspian Sea and beyond.

**BUTTER/ԿԱՐԱԳ ՍՆԵԴԱՆՈՒՆՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՏՐԻԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ

Հիմնաբառեր՝ լեզվամշակույթ, դարձվածային միավոր, սննդանուն, համարժեք, խորհրդանշանային իմաստ

Լեզվաբանության ժամանակակից ճանաչողական, մշակութաբանական, գործաբանական զարգացումներին զուգահեռ՝ արդի փուլը բնորոշվում է լեզուների իմաստաբանական, զուգադրական ուսումնասիրությունների նկատմամբ աճող հետաքրքրությամբ: Իմաստաբանությունը, համարվելով վիճելի կարգերի ամբողջություն, դիտարկվում է լեզվի տարբեր մակարդակներում և հետազոտողների ուշադրությունը հաճախ սևեռվում է դարձվածային միավորներին, որոնք մի տեսակ միջանկյալ դիրք են զբաղեցնում բառույթային և ստորոգական մակարդակների միջև և որոնց կայացման և ձևավորման համար ոչ այնքան լեզուն, որքան տվյալ մշակույթն է «պատասխանատու»:

Սույն հոդվածի թեման *Butter/կարագ* սննդանունով դարձվածքներն են գերմաներենում և հայերենում, ընդ որում առաջին անգամ համեմատվությունը կատարվում է ավստրիական գերմաներենի և հայերենի միջև:

Ուտելը և խմելը մարդու ամենահիմնական պահանջմունքներից են, իսկ քաղցն ու ծարավը պարզապես զգացողություններ չեն, որոնք պետք է հագեցվեն: Դրանք մարդու կենսագործունեության անհրաժեշտ պայմաններ են, որոնց չբավարարման դեպքում օրգանիզմը կիրաժարվի գործել: Այս կարևոր հանգամանքն իհարկե չէր կարող չարտացոլվել լեզուների դարձվածքներում: Սնունդը լինելով կենսական անհրաժեշտություն՝ տարբեր քաղաքակրթությունների զարգացման ընթացքում նոր ու շատ հետաքրքիր գործառույթներ է ստանձնել. այն դարձել է ազգեր, մշակույթներ, անգամ նույն մշակույթի ներսում հասարակական դասեր ու խմբեր տարբերակելու միջոց: Սնվելու ձևով պայմանավորված բնորոշում են մարդկանց. ոմանք շատակեր են, ոմանք՝ քչակեր, կան քաղցրակերներ կամ էլ՝ գուրմաններ: Ահա թե ինչու կարևոր

ենք համարում կոնկրետ սննդանուններով դարձվածքներին անդրադառնալը: Կդիտարկվեն նաև Օլ/յուղ բաղադրիչով դարձվածքները, քանի որ ուսումնասիրության հենց սկզբից պարզ դարձավ, որ, ի տարբերություն ավստրիացու, հայ մարդու աշխարհի լեզվական պատկերում ոչ թե *կարագ*, այլ *յուղ* սննդանունն է կարևոր տեղ զբաղեցնում և համապատասխանաբար դարձվածքներում էլ ավելի շատ *յուղ* բաղադրիչն է հանդիպում: Ըստ Վ. Հումբոլդտի՝ «Տարբեր լեզուներ իրենց բնույթով տարբեր աշխարհընկալումների արդյունք են» [Гумбольдт 1985:452]: Ալպյան լեռների ստորոտում զով կլիմայական պայմաններում ապրող ավստրիացիների համար հարյուրամյակներ շարունակ հարմար է եղել կենցաղում ունենալ և պահպանել կարագ բնամթերքը, իսկ մերձարևադարձային գոտու հյուսիսային մասում ընկած Հայաստանն ունի հիմնականում տաք կլիմա, հայ գյուղացին հալել է կարագը և յուղ ստացել, քանի որ հալելու ընթացքում ավելացրած աղը, որն ունի մթերքները փշանալուց պահպանելու հատկություն, թույլ է տվել այդ բնամթերքը պահպանել ավելի երկար ժամանակ: Անհրաժեշտ է նշել նաև, որ հայերենում բազմաթիվ բարբառներում օգտագործվում է *յուղ* սննդանվան «եղ» ձևը: Putter/Puter սննդանունը ծագում է մվգ. buter (մվգ.-ում կար նաև butern բայը), հվգ. butira ձևից, որը փոխառվել է լատիներենի butīra ձևից [Kluge, 115]: Սլովեներենում այն ունի púter, խորվաթերենում՝ putr կամ putar, սերբերենում՝ púter (Schlagobers/սերուցք իմաստով) ձևերը և այլն [WBÖ, 1963:1553]: Ըստ Հր. Աճառյանի հայերենի կարագ բառը ծագում է *կարակ ձևից, պահլավերենի *karak բառի հոմանիշն է, սրանից են փոխառվել նաև թուրքերենի *kere yayə և քրդերենի kere-yayi «կարագ» ձևերը [[http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7\(05.01.18.\)](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7(05.01.18.))]: Մինչ ավստրիական գերմաներենի և հայերենի *Butter/կարագ* սննդանունով դարձվածքներին անդրադառնալն անհրաժեշտ է նշել, որ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության (այսուհետ՝ ԳՖՀ) գերմաներեն լեզվի և ավստրիական գերմաներենի միջև առկա են բազմաթիվ լեզվական տարբերություններ: Այդ տարբերություններն ինչպես հնչյունական համակարգում և ուղղագրության մեջ են, այնպես էլ՝ ձևաբանական, շարահյուսական և դարձվածային մակարդակներում: Սույն հոդվածում այդ տարբերություններին անդրադարձ չի կատարվի, դա առանձին ուսումնասիրության թեմա է: Կարևոր է հիշատակել նաև, որ, ի տարբերություն սովետական լեզվաբանական դպրոցի, որն անցյալ դարի 40-ական թվականներից ակտիվ կերպով ուսումնասիրում էր

դարձվածաբանությունը որպես առանձին գիտակարգ լեզվաբանության մեջ (որոշ լեզվաբաններ էլ որպես բառագիտության մի բաժին), գերմաներենում և ավստրիական գերմաներենում դարձվածաբանությունը բավականին երիտասարդ ճյուղ է (3-4 տասնամյակ): Դարձվածքների դերը շատ կարևոր է որևէ լեզվամշակույթ հասկանալու համար: Յուրաքանչյուր դարձվածաբանական միավորի մեջ դրված է աշխարհը լեզվի և ազգային մշակույթի պրիզմայի միջով ընկալելու յուրահատկությունը [Брытан, 1968:50]: Դարձվածքները դիտարկվում են որպես կայուն, վերահիմաստավորված, պատրաստի վերարտադրելի կապակցություններ: Հ. Բուրգերը գրում է՝ «Դարձվածքը որպես մտային միավոր պահպանվում է մեր հիշողության մեջ ինչպես բառը և կարող է որպես մեկ ամբողջություն վերականգնվել և օգտագործվել» [Burger H., 1998:17]: «Ավստրիական գերմաներենի բառապաշար են ներթափանցել բազմաթիվ օտար ծագումով բառեր հարևան երկրների լեզուներից և դա բառապաշարի հարստացման մի արգասաբեր ձև է: Այս երևույթը բնորոշ է նաև ավստրիական գերմաներենի դարձվածքներին» [Földes C., 1992:10]: Ավստրիական գերմաներենի դարձվածքների մի մասը ռեգիոնալիզմներ են, ինչպես օրինակ՝ *kein Leiberl haben*, որը նշանակում է հաջողություն չունենալ: Հաճախ դրանք համարժեք տարբերակներ չունեն գերմաներենում, օրինակ՝ *beim Salzamt klagen/anzeigen* (իզուր բողոքել) կամ *seinen Sanktus dazu geben* (իր թույլտվությունը/համաձայնությունը տալ մի բանի համար): «Միանաշանակ «աուստրիացիզմների» կողքին ավստրիական գերմաներենի դարձվածաբանությունը բնականորեն արտացոլում է ամբողջ հարավ-գերմանական լեզվական տարածքի առանձնահատկությունները: Ավստրիական գերմաներենի առանձնահատկություններն ի հայտ են գալիս հատկապես պետականության և կառավարման տիրույթներում, մասնագիտական և անձնական կյանքում, ինչպես նաև **խոհանոցում** [Földes C., 1992:17]: Դարձվածքների կազմում հանդես եկող սննդանունների խորհրդանշային իմաստների վերլուծությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ այն թույլ է տալիս բացահայտել տվյալ ժողովրդի ազգային-մշակութային յուրօրինակ լեզվամտածողությունը: Ուսումնասիրության համար հիմք են ծառայել «Ավստրիայում բավարական բարբառների բառարանը» (WBÖ, Wörterbuch der bairischen Mundarten in Österreich), Գրյոդենի բարբառների բառարանը (WGM, Wörterbuch der Grödner Mundarten), Ավստրիայի Գիտությունների Ակադեմիայի Ֆորարլբերգյան

բառարանը (Vorarlbergisches Wörterbuch), իսկ հայերենի համար՝ Հ. Աճառյանի Հայերենի արմատական բառարանը և Պ. Բեդիրյանի Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանը: Ստորև ներկայացվում են ավստրիական գերմաներենին բնորոշ դարձվածքները՝ *Butter/Öl* սննդային բաղադրիչներով.

- (1) *in den Butter gehen* (փախչել, «ծլկել»)
- (2) *dastehen wie der Butter in der Sunn (Sonne)* (շփոթված լինել, անելիքը չհմանալ)
- (3) *zerrinnen wie der Butter in der Sonne* (բավարարված նայել մի բանի)
- (4) *ein Gesicht machen wie der Butter in der Sonne* ասվում է կեղծավոր մարդկանց մասին
- (5) *eingehen wie der Butter an der Sonn* (նիհարել)
- (6) *an-/stillhalten wie der Butter an der Sunn* (թողնել՝ ամեն ինչ իր հունով գնա)
- (7) *Butter auf dem Kopf/am Kopf/am Schädel haben* (խղճի խայթ ունենալ)
- (8) *schon wissen was der Butter im Himmel kostet* (սեքսուալ առումով ինֆորմացված, տեղեկացված լինել)
- (9) *einen mit dem Butter verschmieren* (մեկին կաշառել, սիրաշահել) [WBÖ, Band 3, Spalte 1553]
- (10) *Wer Butter auf 'm Kopf hat, darf/soll nicht in die Sunn' gehen* (խղճի խայթ ունենալ)
- (11) *Was an Butter zergeht, kimmt an Schmalz wieder* (ամեն վատ բան մի լավ կողմ է ունենում)
- (12) *ausschauen wie Milch und Butter* (ծաղկող, առողջ տեսք ունենալ, այս դարձվածքը Չալցբուրգի բարբառով է)
- (13) *mip bûdär unt dûdä [Dotter]* (ամենանուրբ ձևով)
- (14) *wie Butter sein* (չափազանց սիրալիր լինել)
- (15) *in Butter sein* (ամեն ինչ կարգին լինել)
- (16) *wie Butter gehen* (1.փախչել, 2.անխափան աշխատել (սարքի մասին))
- (17) *Butter am Kopf haben* (մարդու մասին, ում բանտարկություն է սպառնում)[WGM, 1905:1551]
- (18) *Öl verschütten/ Öl in das Feuer schütten* (կրակին յուղ լցնել)
- (19) *ein Guter Wein rinnt wie Öl abhin,* (այսինքն՝ կոկորդով հալած յուղի պես իջնում է)
- (20) *einen verprügeln, (bis) er Öl seicht* (մեկին այնպես ծեծել, որ հիմարություններ ասի), (ասվում է որպես սպառնալիք)

(21) *Öllampe* (ծաղրական արտահայտություն է քնկոտ մարդու համար)[Vorarlbergisches Wörterbuch, 1960:604]:

Ընդհանուր թվով 21 դարձվածք են դուրս բերվել վերը նշված

երեք տարբեր բառարաններից: Նշված դարձվածքներում *Butter* բաղադրիչի հետ օգտագործվում են *gehen, zerrinnen, dastehen, verschmieren, an-/stillhalten, eingehen, sein, haben, gehen, ausschauen* բայերը: Որոշ պատկերավոր իմաստների դեպքում *Butter* բաղադրիչն օգտագործվում է *Sonne* (արև) բաղադրիչի հետ և հանդես է բերում բազմաթիվ հարանշանակային իմաստներ: Դարձվածային միավորի կազմում *Butter* սննդանվան հետ կապված զուգորդությունները երբեմն հասկանալի են, ինչպես օրինակ՝ (3) *zerrinnen wie der Butter in der Sonne* (հալվել ինչպես կարագն արևի տակ), սակայն դրանք ավելի հաճախ հանդես են գալիս վերացարկված ձևով և հեռու են գտնվում տվյալ սննդատեսակի բնական հասկանիչներից, օրինակ՝ (8) *schon wissen, was der Butter im Himmel kostet* (սեքսուալ առումով ինֆորմացված լինել): Այստեղ կարելի է խոսել սննդանվան ստեղծած պատկերի փոխաբերական իմաստավորման մասին: Վերը նշված դարձվածքներից (7)-րդը և (10)-րդը միևնույն իմաստն են արտահայտում՝ խղճի խայթ ունենալ, իսկ (17)-րդը թեպետ նման ձևակերպում ունի (*Butter am Kopf haben*), սակայն ըստ «Գրյոդենի բարբառների բառարան»-ի այն քրեական ժարգոնին պատկանող բառ է և ասվում է, երբ մեկին բանտարկություն է սպառնում: *Butter* բաղադրիչի միջոցով առկայանում են հետևյալ իմաստները՝ *ծեծել, փախչել, անելիքը չիմանալ, կաշառել/սիրաշահել, կեղծավորություն անել, մի բանով բավարարված տեսք ունենալ, սեքսուալ առումով տեղեկացված լինել, ամեն ինչ կարգին լինել, չափազանց սիրալիր լինել, անխափան աշխատել (սարքի մասին), կրակին յուղ լցնել, առողջ տեսք ունենալ, նիհարել, խղճի խայթ ունենալ, մեկին այնպես ծեծել, որ հիմարություններ ասի, կոկորդով հալած յուղի պես իջնել:*

Ստորև ներկայացվում են նաև հայերենի թվով 38 *կարագ/յուղ(եղ)* բաղադրիչով դարձվածքները.

(1) *հալած յուղի պես* նշանակում է, որ գործն ընթանում է հարթ, առանց խնդիրների

(2) *կրակի վրա/ կրակին յուղ լցնել/ ածել/ ավելացնել/ կաթեցնել*- կրակն ավելի մեծացնել, սաստկացնել դարձվածքը փոխաբերաբար նշանակում է կրքերը բորբոքել, իրավիճակն ավելի սրել, մեկին գրգռել

- (3) մեղր ու կարագ դառնալ դարձվածքը խորհրդանշում է լավ, մտերմական հարաբերություններ մեկի հետ
- (4) մեղր ու կարագով ուտել նշանակում է ամենայն ուրախությամբ ընդունել առաջարկը, համաձայն լինել
- (5) բերանին յուղ քսել նշանակում է մեկին կաշառել
- (6) յուղ ու մեղր դառնալ խոսակցական լեզվում հանդիպում է եղ ձևը և այս դարձվածքը նշանակում է իրար հետ շատ սիրով լինել
- (7) (հնց.)կարագի տեղ թնդանոթներ հնացած ձև է և ասում են ռազմական նպատակների հետամուտ լինելու (և մարդկանց բարորությունն անտեսելու նպատակով), հմմտ. ռուս. пышки вместо масла
- (8) մի կիլո կարագը հալել, ութ կիլո յուղ անել (բրբ.) նշանակում է փորձանքին նորն ավելացնել
- (9) Յուղաբերի մոմ (հնց.) նշանակում է ուրախացնող, մխիթարող, պայծառացնող (Յուղաբերից Ավետարանը կարդալու ժամանակ վառվող մոմերի անունից)
- (10) յուղալի պատրառ/ յուղալի թիքա (բրբ.) նշանակում է շահելու, օգտվելու հարմար առիթ, չաղ որս, (գոհկ.), իսկ երկրորդ իմաստով՝ գրգռիչ կին
- (11) յուղ բռնել ասում են կերակրի երեսը յուղակալել, յուղ կապել իմաստով
- (12) յուղ թափել (փոթորկված ծովի, ճահճի և այլնի վրա) փխբ. նշանակում է հանգստացնել, խաղաղեցնել
- (13) յուղ թափես/լցնես, կհավաքվի նշանակում է տնարար, մաքրասեր լինել
- (14) յուղ թափող, մեղր հավաքող, մեղր թափող, յուղ հավաքող (խսկց.) նախորդ դարձվածքի իմաստն է՝ շնորհալի, տնարար կին
- (15) յուղոտ տեղ նշանակում է շահութաբեր պաշտոն
- (16) յուր յուղը յուր գլուխը քսել (հնց.) նշանակում է ինքդ արել ես, ինքդ էլ քաշիր
- (17) յուր յուղով տապակվել/իր յուղում տապակվել, նշանակում է մի կերպ յուր գնալ
- (18) յուղ ու մեղրը շան տկումը- 1. (ժղ.) հարուստ, բայց ժլատ, 2. ընդունակ, բայց վատաբարո (լավ հատկության հետ մի ուրիշ՝ վատ հատկություն, որով առաջինը ի դերև է ելնում)
- (19) եղ ու մեղր իրար հետ հալել (բրբ.) - ներդաշնակ լինել, դաշնություն կազմել

- (20) եղ ու մեղրի մեջ լողացող (բրբ.) նշանակում է հարուստ, ունևոր, շոայլ ապրող
- (21) յուղ կապել նշանակում է գիրանալ
- (22) յուղն ու միսը հալվել նշանակում է նիհարել, հյուծվել
- (23) (անարատ) եղի պես ջուրին երեսը ելլել նշանակում է իր (վատ) էությունը բացահայտել
- (24) աչքերում յուղ լինել նշանակում է չաղլիկ, սիրուն լինել (կնոջ մասին)
- (25) եղն ու բրինձը նշանակում է պահ տրված ապրանքը
- (26) յուղ վառել նշանակում է դատարկ, անտեղի բաներ ասել
- (27) յուղի պես հալվել նշանակում է փափկել, կակղել մեկի հրապույրից
- (28) յուղով ձեթով (բրբ.) նշանակում է
 հաջողակ [[http://www.nayiri.com/imaginedictionarybrowser.jsp?dictionary/d=64&pageNumber=642 \(05.01.18.\)](http://www.nayiri.com/imaginedictionarybrowser.jsp?dictionary/d=64&pageNumber=642 (05.01.18.))]:
- (29) եղդ (եղը...) թավին էրվե՞ց (բրբ.) ասում են շտապող/աճապարող մարդու մասին
- (30) գինը հալած ե՞ղ ես տվել նշանակում է շատ չես վճարել (հեգն.)
- (31) եղը դմակին քսել, պարկը ջվալին դնել նշանակում է շոայլ, շվայտ ապրուստ ունենալ (բրբ.)
- (32) եղը կրակին էրվի՝ տեղիցը լնգալ չի նշանակում է ծոյլ է (ժող.)
- (33) մեկուն եղը հալել նշանակում է զգացմունքներ հուզել, հրապուրել (ժող.)
- (34) մեկի եղը քամել նշանակում է մեկի ունեցվածքը քամել (խսկց.)
- (35) մեկի աչքի եղը քաշել (բրբ.) նշանակում է մեկին անընդհատ նկատողություն անել
- (36) եղին եղնեն գալ (բրբ.) նշանակում է շատ շտապել
- (37) եղով տալ նշանակում է շահավետ պայմաններով վարձու տալ
- (38) մեկի գլխին եղ քսել (խսկց.) նշանակում է շողում խոսքերով շոյել, միամտացնել [Բեդիրյան Պ., 2011:418]

Հայերենի կարագ/յուղ բաղադրիչով դարձվածքների գերակշռող մասը դուրս են բերվել Հ. Աճառյանի Արմատական բառարանից, իսկ մի քանի դարձվածք էլ Պ. Բեդիրյանի Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանից: Հետաքրքիր է, որ կարագ/յուղ բաղադրիչով դարձվածքները հայերենում կարող են արտահայտել տրամաբանորեն հակառակ իմաստներ, ինչպես (2)-րդ օրինակում՝ կրակին յուղ լցնել բացասական իմաստ է արտահայտում և նշանակում է հրավիճակն ավելի տրել, մեկին գրգռել, իսկ (13)-րդ օրինակում (յուղ թափել) արտահայտված

է *հանգստացնել/խաղաղեցնել* դրական իմաստը: Միայն մի դարձվածքում է էքսպլիցիտ երևում դարձվածքի իմաստը՝ (11) *յուղ բռնել*, որը նշանակում է *կերակրի երեսը յուղակալել, յուղ կապել*, մնացած բոլոր դարձվածքներում հանդես են գալիս իմպլիցիտ իմաստներ: Կարագ և մեղր (6) և եղ ու մեղր (19) համադրությունը դարձվածքների մեջ դրական հարանշանակություն ունի, այն խորհրդանշում է մտերմիկ, «քաղցր-մեղր» հարաբերություններ, բայց նույն համադրությունը մի ուրիշ դարձվածքում ունի բացասական հարանշանակություն՝ *յուղ ու մեղր շան տրկում* (18) նշանակում է հարուստ և ժլատ մարդ կամ ինչ որ առաքինություն վատ մարդու մեջ: *Յուղ կապել* (21) և *յուղն ու միսը հավվել* (29) դարձվածքները ևս հակադիր իմաստներ են արտահայտում, առաջինը նշանակում է *գիրանալ*, իսկ երկրորդը՝ *նիհարել/հյուծվել*: Կարագ/յուղ բաղադրիչով դարձվածքներում առկայանում են նաև *մաքրասիրություն/տնարար կին, գրգռիչ կին, մտերմական հարաբերություններ, ժլատություն, շահ/շահութաբեր պաշտոն, ուրախացնող/մխիթարող, մի կերպ յուրա գնալ, իր վատ էությունը բացահայտել, կաշառք տալ, մարդկանց բարօրությունն անտեսել, գործը սահուն/հարթ ընթանալ, փորձանքին նորն ավելացնել, սիրուն տեսք ունենալ, անտեղի բաներ ասել, մեկի հրապույրից կակղել, շոայլ ապրել, ներդաշնակ լինել, հաջողակ լինել, մեկի հետ լիովին համաձայն լինել, շահավետ պայմաններով վարձու տալ, շտապել, մեկին նկատողություն անել, շողոմ խոսքերով միամտացնել, մեկի ունեցվածքը քամել, ծուլ լինել* իմաստները: Դարձվածքների զուգադրական վերլուծության ժամանակ շատ կարևոր խնդիր է դարձվածքների համարժեքության աստիճանը որոշելը: Մեր կողմից ընտրված դարձվածքները համեմատելիս ելակետային լեզուն ավստրիական գերմաներենն է, իսկ թարգմանական լեզուն՝ հայերենը: Մասնագիտական գրականության մեջ առաջարկվել են համարժեքության բազմաթիվ տեսություններ (Koller 1974, Földes 1985, Wotjak 1985, Hessky 1987, Kempcke 1989, Wotjak/Ginsburg 1987): Մենք կհետևենք Հեսկիի, Ֆյոլդեսի և Քրիստոփ տեսությանը, (Hessky 1987, 57ff, Földes 1996, 117ff, Chrissou 2001, 95ff), որոնք առանձնացնում են համարժեքային հարաբերության երեք տեսակ՝ *լրիվ համարժեք, մասնակի համարժեք և ոչ համարժեք*: Ռ. Հեսկին գտնում է, որ «դենոտատիվ իմաստի նույնությունը նախապայման է դարձվածքների արտալեզվական իմաստային համարժեքության համար» [R. Hessky, 1987:128], իսկ Դ. Դոբրովոլսկին համարում է, որ դարձվածքների թարգմանության ժամանակ առաջացող դժվարությունները ոչ թե նրանց

ավանդական ազգային բնույթով են պայմանավորված, այլ դարձվածքների բովանդակային պլանով, որոնք այնքան բարդ են, որ հազիվ թե մի լեզվից մյուսը թարգմանելիս այնպիսի համարժեք գտնվի, որը ունենա բացարձակ նույն իմաստը: Եթե անգամ թվում է, թե ելակետային լեզվի որևէ դարձվածք կոնկրետ կոնտեքստում դիտարկելիս լրիվ համարժեք միավոր ունի թարգմանական լեզվում, ապա դա չի նշանակում, որ այդ համարժեքը բոլոր իսկական կոնտեքստներում կարող է հանդես գալ որպես թարգմանական համարժեք: Պատճառներից մեկն այն է, որ երկու լեզուների անգամ իմաստով շատ մոտ դարձվածքներն իրարից տարբերվում են եզրային (պերիֆերիկ) գոտում ունեցած իրենց իմաստային բաղադրիչներով [Dobrovol'skij D., 2014:197-211]: Կատարված հետազոտության արդյունքում լրիվ համարժեք խմբին դասվել են երկու դարձվածք՝ *wie Butter gehen* ((հալած) յուղի պես գնալ), *Öl verschütten/ Öl in das Feuer schütten* (կրակին յուղ ցնել), քանի որ նրանք ունեն նույն բառմաստային, ձևաբանա-շարահյուսական, գործառութային և հարանշանակային իմաստները և հիմքում էլ նույն պատկերն է ընկած: Մասնակի համարժեք խմբին պատկանում են հետևյալ դարձվածքները՝ *zerrinnen wie der Butter in der Sonne* -յուղի պես հալվել, *einen mit dem Butter verschmieren*-բերանին յուղ քսել, *ausschauen wie Milch und Butter*-աչքերում յուղ լինել, *eingehen wie der Butter an der Sonne*- յուղն ու միսը հալվել: Այս խմբին պատկանող դարձվածքները թեև հայերենում իմաստային համարժեք ունեն, սակայն՝ այլ բաղադրիչներով և այլ իմաստա-գործառութային համարժեքով: *Butter/կարագ* սննդանունով մնացած բոլոր դարձվածքները (15 դարձվածք) հայերենում համարժեք չունեն: «Այս խմբի դարձվածքների գործառութային իմաստը ելակետային լեզվում արդեն մասնակիորեն կորչում է: Այդ պատճառով հնարավոր է լինում հասնել ոչ թե ոճական-հաղորդակցական համարժեքի, այլ միայն թարգմանական համարժեքի» [Földes 1996:125]: Համարժեք չունեցող դարձվածքները թարգմանական լեզվում նկարագրվում են կամ էլ վերարտադրվում են այլ արտահայտությամբ կամ բառով:

Այսպիսով, *Butter/կարագ* սննդանուն բաղադրիչը դարձվածքներում խորհրդանշում է տարբեր հատկանիշներ՝ արտահայտելով թե՛ դրական, թե՛ բացասական խորհրդանշական հավելիմաստներ: Ավստրիական գերմաներենում և հայերենում այդ հատկանիշները մեծ մասամբ չեն համընկնում, ինչը պայմանավորված է այդ երկրների իրարից ունեցած աշխարհագրական հեռավորության և մշակութային տարբերությունների

փաստով: Այն հանգամանքը, որ ավստրիական գերմաներենի դարձվածքներում ավելի հաճախ հանդիպում է *Butter*, իսկ հայերենի դարձվածքներում *յուղ/եղ* բաղադրիչը, ևս խոսում է երկու ժողովուրդների մոտ աշխարհի տարբեր լեզվական պատկերների և ազգային-մշակութային տարբերությունների մասին: *Butter/կարագ* սննդանվան խորհրդանշային իմաստները բխում են մարդու կեցադրում և խոհանոցում ունեցած նրա դերից, տվյալ սննդատեսակի համից ու հոտից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. WBÖ, Wörterbuch der bairischen Mundarten in Österreich. Hrsg. Von der Kommission für Mundartkund und Namenforschung. Wien. 1963 ff., Spalte1553
2. Wörterbuch der Grödner Mundarten, Innsbruck, 1905:1551
3. Österreichische Akademie der Wissenschaften, Vorarlbergisches Wörterbuch, Leo Lutz, in Kombination bei Adolf Holzhausens Nachfolgen, Wien, 1960:604
4. Burger H., Phraseologie. Eine Einführung am Beispiel des Deutschen. Erich Schmidt Verlag. 1998:17
5. Dobrovolskij D.,(Russische Akademie der Wissenschaften/ Universität Moskau/Universität Wien) Idiome in der Übersetzung und im zweisprachigen Wörterbuch 2014:197-211
6. Földes C., Zu den österreichischen Besonderheiten der deutschen Phraseologie. (Hrsg.): Deutsche Phraseologie in Sprachsystem und Sprachverwendung. Wien, 1992:11
7. Földes C. Deutsche Phraseologie kontrastiv Intra- und interlinguale Zugänge, Julius Gross Verlag, Heidelberg, 1996: 51
8. Hessky R., Herausgegeben von Helmut Henne, Horst Sitta, und Herbert Ernst Wiegand Pheaseologie, Linguistische Grundfragen und kontrastives Modell deutsch-ungarisch Max Niemeyer Verlag, Tübingen, 1987:128
9. Wotjak B., Verbale Phraseolexeme in System und Text, Tübingen, 1992 :106
10. Брутян Г., Гипотеза Сепира-Уорфа Лекция, прочитанная в Лондонском университете в 1967 году, Луис, Ереван, 1968: 70

11. Гумбольдт В. фон., Характер языка и характер народа // Вильгельм фон Гумбольдт. Язык и философия культуры. - М: Прогресс, 1985, 452 с.
12. Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, Երևանի պետ. համալսարան, 1926-1935թթ.
13. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան ԵՊՀ հրատ. 2011:418-419

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԷՋԵՐ

1. [http://granish.org/sayings-and-proverbs/\(03.01.18\)](http://granish.org/sayings-and-proverbs/(03.01.18))
2. [http://www.nayiri.com/ImagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7\(03.01.18\)](http://www.nayiri.com/ImagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7(03.01.18))

СИРАНУШ ПАПОЯН - СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ФРАЗЕОЛОГИЗМОВ С КОМПОНЕНТОМ МАСЛО (BUTTER/ԿՈՐԿ) В АВСТРИЙСКОМ НЕМЕЦКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

Настоящая статья посвящается изучению фразеологизмов с компонентом Butter/կորկ в австрийском немецком и в армянском языках. Сравнение показывает, что компонент Butter/կորկ в фразеологизмах обоих языков выявляет многие коннотативные значения, как имплицитно, так и эксплицитно. В обоих языках значения фразеологизмов в основном не совпадают, и это обусловлено географическим расстоянием, разным менталитетом и языкомышлением, разным восприятием мира этих народов.

SIRANUSH PAPOYAN - COMPARATIVE ANALYSIS OF PHRASEOLOGISMS WITH COMPONENTS BUTTER IN AUSTRIAN GERMAN AND ARMENIAN LANGUAGES

This article is dedicated to studying phraseologisms with the component butter in Austrian German and Armenian languages. The comparison shows that the component butter in phraseologisms of both languages reveal many connotative meanings as both implicit and explicit. The meaning of phraseologisms in both languages do not coincide on the whole and it is conditioned by geographical distance, with different mentality and language thinking, different apprehension of the world of these people.

**ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅՀՈՅԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ

Հիմնաբառեր՝ լեզվական խտրականություն, հայիոյանք/կշտամբանք, ընտանի կենդանիների անվանումներ, քերականական սեռ, մասնագիտական խումբ

Լեզվի ցանկացած դրսևորում մենք ընկալում ենք որպես գործունեություն [Hornscheidt, 2006]: Տարբեր անձանց, բայց նաև արտեֆակտները, գործողությունները, գործունեությունները, զգացմունքները, գնահատողական վերաբերմունքը առակայացնող լեզվական արտահայտությունները անհատին տալիս են շրջակա միջավայրն ընկալելու հնարավորություն: Նշված երևույթների անվանմամբ լեզվական տարբերակման ու դասակարգման շնորհիվ մարդիկ իրենց հաղորդակցության ընթացքում կերտում են սոցիալական իրականությունը: Լեզվական անվանողական ձևերը, որոնք բնորոշվում են որպես կոչականներ, մարդուն, նրան վերագրվող հատկանիշների, նրա հասարակական դիրքի, ինչպես նաև կոլեկտիվ բնորոշումների և ինքնության լեզվականորեն արտահայտվող կառուցվածքի միջոցով, դարձնում են հանրության համար առավել ընկալելի: Մարդկանց և մարդկանց խմբերի լեզվական դասակարգման միջոցով ձևավորվում են գնահատողական բնույթի արտահայտություններ՝ պայմանավորված տվյալ իրավիճակով և խոսքային իրադրությամբ: Այդ արտահայտությունները հիմնվում են ընդունված պայմանականությունների ու կուտակված գիտելիքի՝ այսինքն փորձի վրա, որոնք խտացված ձևով վերարտադրվում են լեզվական անվանողական ձևերում: Գնահատողական/դասակարգող անվանումների, այսինքն՝ դրանց լեզվական արտահայտությունների միջոցով մարդիկ, մարդկանց խմբերը և անհատները ենթարկվում են լեզվական խտրականության: Խոսքային գործունեության ընթացքում խտրականության ենթարկող արտահայտությունների շարքում Ա. Հորնշայդն ու Ի. Հանան առանձնացնում են նաև հայիոյանքների խումբը:

[Hornscheidt A./Hanna I., 2011:8]: Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվում առկա է վերը նշված այն «համեմոդ» բառապաշարի շերտը: Կ. Սորնիգը բնորոշում է հայհոյանքները հետևյալ կերպ. «Հայհոյանքները պեյորատիվ (նվաստացնող) արտահայտություններ են, որոնք ասվում են խոսակցին վիրավորելու նպատակով, երբեմն դրանք կարող են ուղղված լինել նաև անշունչ առարկաներին» [Sornig K., 1975:155]: Ըստ Ռ. Ամանի. «Ցանկացած բառ, որը ազդեսիայով է արտաբերվում, հայհոյանք է» [Aman R.,1972:165]: Հայհոյանք/կշտամբանքները խոսակցին դրդում, հրահրում են, և չնայած դրան կամ միգուցե հենց այդ պատճառով էլ, դրանք մշտապես առկա են մեր առօրյա խոսքում և մեր լեզվում: Դրանք հաճախ ընկալվում են որպես տվյալ հասարակության հայելին, իսկ ավելի հաճախ որպես երիտասարդ մարդկանց մշակույթի և մեզ սպառնացող արժեքային համակարգի անկման հայելին [Hornscheidt A./Hanna I., 2011:95]: Հայհոյանք, կշտամբանք, վիրավորանք բառերի բառիմաստներն իրար բավականին մոտ են, դրանք ընդհանուր իմաստ ունեն՝ *մեկին վատ խոսք ասել, նեղացնել*: Ըստ Հր. Աճառյանի *հայհոյելը* բնածայնական բառ է և նշանակում է վատ խոսք ասել, վատահամբավել, հիշոց տալ, անարգել, չարախոսել, *վիրել/վիրավորելը* ծագում է վերք բառից, իսկ *կշտամբել* նշանակում է գէշ չախել, հանդիմանել, դատապարտել, նախատել, թշնամանալ [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7&dt=HY_HY&pageNumber=1423](28.01.2018): Ըստ Դուդենի բառարանի *schimpfen* նշանակում է «մեկին նվաստացնելով, վիրավորելով որպես մի բան բնորոշել, իր զայրույթը սաստիկ բառերով արտահայտել» [https://www.duden.de/rechtschreibung/schimpfen]:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում մասնավորապես ընտանի կենդանիների անուններով հայհոյանք/կշտամբանքներին գերմաներենում և հայերենում: Հետազոտության համար հիմք են ծառայել գլխավորապես հետևյալ գերմանական բառարանները՝ Կ. Pfeifer-ի «Das große Schimpfwörterbuch, Über 1000 Schimpf-, Spott- und Neckwörter zur Bezeichnung von Personen» (1997), Գ. Wahrig-ի «Deutsches Wörterbuch» (1999) և Wörterbuch der bairischen Mundarten in Österreich (1963), իսկ հայերենի համար՝ Հր. Աճառյանի Հայերենի Արմատական բառարանը (1926): Դժվար չէ դուրս բերել այն կենդանիների ցանկը, որ առավել հաճախ են «հիշատակվում» վերը նշված մշակույթներում: Դրանց անգամ պարզ զուգադրությունը ակնհայտ է դարձնում, որ կան բավականին համընկնումներ, սակայն ոչ բոլոր կենդանիների անվանումներն են, որ

տեղ են գտնում երկու լեզվամշակույթների հայհոյանքներում նույն հաճախականությամբ կամ նման նշանակությամբ: Յուրաքանչյուր լեզվամշակույթի այսպես կոչված «ամենաանմիջական շփումների» բառապաշարը համեմված է նախ և առաջ այն կենդանիների անվանումներով, որոնք տեղ են զբաղեցնում կամ երբևէ զբաղեցրել են տվյալ ժողովրդի կենցաղում և տնտեսության մեջ (ընտանի կենդանիների դեպքում), նրա մշակույթի մաս են կազմում: Սրան նպաստում է այն հանգամանքը, որ այդ կենդանիներն այդ ժողովրդի հետ ապրում են նույն բնակլիմայական պայմաններում կամ նույն աշխարհագրական գոտում: Վերը նշվածը սակայն նախապայմաններից միայն մեկն է: Առավել կարևոր է այն հանգամանքը, թե ինչպես է հիշատակվող կենդանին ընկալվում տվյալ հասարակության կողմից, նրա որ հատկանիշներն է կարևորում այդ հասարակությունը կամ ինչպիսի հատկանիշներ է վերագրում տվյալ կենդանուն: Վերջինից հետևում է, որ ոչ միայն կենդանիներին բնորոշ հատկություններն են որոշիչ այն որպես հայհոյանք կամ հայհոյական արտահայտության բաղադրիչ գործածելու համար, այլև այն հանգամանքը, թե տվյալ մշակույթում ինչ հատկանիշներ են վերագրում նրանց: Դրա ամենավառ արտահայտությունը թերևս տոտեմիզմն է, երբ մի շարք ժողովուրդների հավատալիքներում՝ ցեղի նախահայրն ու հովանավորը համարվում էր պաշտպանունքի առարկա դարձած կենդանի (երբեմն նաև բույս): Հնդկաստանում կովը սուրբ կենդանի է համարվում և սպասելի է, որ կովի անունով հայհոյանքներ տվյալ հասարակության մեջ չկան: Ուղտը շատ կարևոր կենդանի է արաբական և հյուսիս-աֆրիկյան որոշ երկրներում՝ ուստի այդ հասարակություններում ուղտի անունով հայհոյանքներ հազիվ թե հանդիպեն: Ուրեմն, ինչպես են կենդանիների անվանումները վերածվում հայհոյանքի: Եթե որևէ մեկը արտաբերում է կով, ցուլ կամ շուն կենդանիների անունները չեզոք տոնով, բնականաբար դա հայհոյանք չէ, սակայն եթե նա այդ բառերը խոսակցին ուղղի ծաղրական կամ ջղային տոնով, արդեն կարելի է խոսել հայհոյանքի մասին: Հետևաբար հայհոյանքը միշտ ուղեկցվում է հարալեզվական միջոցներով՝ ձայնի ուժգնություն, հնչերանգ, տոն, ժեստեր և միմիկաներ: Բ. Ամանը գրում է. «Թե արդյոք որևէ բառ որպես հայհոյանք կընկալվի թե ոչ ձայնի տոնի հետ մեկտեղ վճռորոշ են այնպիսի ոչ խոսքային գործոններ, ինչպես միմիկան և ժեստերը» [Aman 1972:167]: Օրինակ, վեր պարզած միջնամատը ավելի է ընդգծում կամ աստկացնում հայհոյանք տվողի «ուղերձը», քան եթե միայն

համապատասխան բառերն արտաբերվեն: Կենդանիների անվանումներով հայհոյանքների մեծ մասը փոխաբերություններ են, մարդկանց բացասական հատկանիշներ վերագրելու միտումով նրանց հավասարեցնում են կենդանիներին: Չնայած անվիճելի է, որ հայհոյանքների դեպքում խոսքն առավելապես գոյական և ածական անունների մասին է, սակայն լեզվաբանների շրջանում դեռևս չկա միասնական կարծիք այն մասին, թե որ խոսքի մասերը պետք է դիտարկել հայհոյանքների մասին խոսելիս կամ թե արդյոք ասացվածքները և թևավոր խոսքերը նույնպես կարելի է հայհոյանք համարել: Ընտանի կենդանիների անուններով միայն մեկ անվանական խմբից կազմված զեղչված նախադասությունները հայհոյանքի ամենատարածված ձևն են բազմաթիվ լեզվամշակույթներում, այդ թվում նաև՝ գերմաներենում (*Du dumme Kuh! Du blöde Gans! Du Mistvieh!*) և հայերենում (ա՛յ կեղտոտ խոզ, ա՛յ շճմած հավ): Ինչպես բերված օրինակներից երևում է, հաճախ հայհոյանքներում կենդանու անվանումը ուղեկցվում է ածականով, որը ավելի է սաստկացնում ասվածի իմաստը, գերմաներենում նաև երկրորդ դեմքի **du** անձնական դերանունով, իսկ հայերենում **ա՛յ** կոչական բառով: Ըստ «Ավստրիայում բավարական բարբառների բառարան»-ի («Wörterbuch der bairischen Mundarten in Österreich») նույն ընտանի կենդանու անվանումով հայհոյանքների լեզվական տարբեր ձևակերպումներ կարող են հանդիպել, ինչպես օրինակ *Esel* ընտանի կենդանու անունով՝ *alter Esel, so ein Esel, ist des ein Esel, bist du ein Esel, du Esel du.*[WBÖ, 2015:1752]: Հայերենում նույնպես հանդիպում են տարբեր ձևակերպումներ՝ **ա՛յ** կոչական բառով (**ա՛յ՛ էշ**), որոշ բարբառային ձևերում նաև **տոո՛** բառով (**տոո՛ էշ**), երբեմն նաև **մեկը** անորոշ դերանունով (**ա՛յ էշի մեկը**): Հայհոյանքների միջոցով, հաճախ իմպլիցիտ կերպով, հասնում են էքսպլիցիտ հակադրության կամ բևեռացման, ինչպես հետևյալ օրինակում՝ *Friss einen Hund, du hässliche Hure!:* Գերմաներենում կենդանիների անուններին հաճախ միացող ածականներն են՝ *alt, blind, blöd, dumm, dreckig, schmutzig, geil, lahm, rüdig* և այլն, իսկ հայերենում՝ *կեղտոտ, փնթի, խորամանկ, հիմար, շճմած, քոսոտ* և այլն: Գերմաներենում հանդիպում են հայհոյանքներ հետևյալ ընտանի կենդանիների անվանումներով՝ *Auerochse, Bock, Büffel, Dachshund, Dromedar, Esel, Faultier, Hase (Angsthase), Hirsch, Hund, Kaninchen, Katze, Maulesel, Maultier, Kuh, Pferd, Rind, Renntier, Rüde, Sau, Sauhund, Schaf, Schwein, Schweinehund, Trampeltier, Wiederkäuer, Kalb, Stachelschwein, Ziege, Gewitterziege*, փոքր կենդանիների՝

Meerschweinchen, Hamster, Ratte և ընտանի թռչունների անվանումներով՝ *Ente, Gans, Grünschnabel, Huhn, Hahn*: Հայերենում հանդիպում են *կապուռ, շուն, ավանակ, էշ, գոմեշ, այծ (էծ), ձի, ջորի, խոզ, ճագար, նապաստակ, ոչխար* ընտանի կենդանիների անվանումները, ինչպես նաև *հավ, հնդկահավ, սագ, բար, ղազ* (բրբ.) ընտանի թռչունների անվանումները: Գերմաներենի հայիոյանքներում հանդիպող կենդանիների անվանումները, այդ լեզվի բառակազմական առանձնահատկություններով պայմանավորված, շատ ակտիվ են նաև բառակազմական կաղապարներում, ինչպես օրինակ՝ *Hundewetter, hundesgemein* (Hund/շուն) աշխարհի շատ լեզուներում ամենաշատը հիշատակվող ընտանի կենդանու անվանումով: Ակտիվ են նաև *-schwein, -sau, -bock* կենդանիների անվանումները որպես բաղադրիչ: Կենդանիների անվանումներով հայիոյանքների «ամենաբարձրագույն աստիճանը» այնպիսի անունների օգտագործումն է, որոնք հայտնի չեն կենսաբանություն գիտությանը, ինչպես օրինակ՝ *Dreckschwein, Sauhund, Angsthase, Hornochse, Mondkalb, Schafskopf, Meckerziege* և այլն [http://www.swp.de/ulm/nachrichten/vermishtes/dreckschwein-und-hasimausi_-beleidigungen-und-kosenamen-auf-tierischer-basis-7995326.html] (13.01.2018): Նույնը կարելի է ասել նաև դրական հարանշանակությամբ *Schmeichelkätzchen, Schmusekatze* բառերի մասին: Կենդանիների անվանումներով հայիոյանքները կարող են տարածվել ինչպես առանձին մարդու, այնպես էլ մարդկանց խմբերի վրա: Գերմաներենում առանձին խմբի վրա տարածվող կենդանիների անվանումներով հայիոյանքները հատկապես մասնագիտական խմբերին կարող են ուղղված լինել, ինչպես օրինակ, *Dunsthund* (ասվում է վատ խոհարարին), *Fliegenfänger* (ասվում է վատ դարպասապահին), *Schankschnecke* (ասվում է մատուցողուհուն, որը շատ դանդաղ է աշխատում) և այլն: Հայերենում մասնագիտական խմբերին ուղղված հայիոյանքներ այս հազոտության շրջանակներում չեն հանդիպել: Երկու լեզուներում էլ կոնկրետ կենդանու անվան փոխարեն լեզվակիրների կողմից օգտագործվում է նաև հիպերոնիմը, գերմաներենում՝ *Vieh* կամ *Mistvieh*, իսկ հայերենում՝ անասուն, տավար և այլն: Կենդանիների անուններով հայիոյանքները տարածվում են թե՛ արական, թե՛ իգական սեռի վրա՝ առավելապես տվյալ կենդանու քերականական սեռով պայմանավորված: Այսպես օրինակ, *Esel, Hund* կենդանիների անվանումներով հայիոյանք/կշտամբանքները արական սեռին են ուղղված, քանի որ այդ գոյականները պատկանում են արական սեռին, իսկ *Kuh, Ziege, Gans, Katze* կենդանիների անվանումներով

հայիոյանք/կշտամբանքները՝ իգական սեռին, քանի որ այդ գոյականները պատկանում են իգական սեռին: Չնայած հայերենում կենդանիների անվանումների քերականական սեռի նման տարբերակում չկա, սակայն կով, հավ, այծ, նապաստակ, կատու կենդանիների անվանումներով հայիոյանքները հիմնականում ուղղված են կանանց, էշ, ավանակ, շուն, ձի՝ տղամարդկաց, իսկ խոզ, ճագար, գոմեշ, ջորի, անասուն, ոչխար՝ երկու սեռին էլ: Անհրաժեշտ է նշել, որ այս դասակարգումը միանշանակ չէ, խոսքային իրադրությամբ և վերագրվող բացասական հատկանիշով պայմանավորված հնարավոր են բազմաթիվ շեղումներ վերը ասվածից: Հատկանշական է, որ նույն ընտանի կենդանու հետ կապված փոխաբերությունը մի լեզվում արտաքին հատկանիշին կարող է վերաբերել, մյուս լեզվում՝ բնավորության գծերին, մտավոր ունակություններին և այլն: Գերմաներենում *blöde Kuh* մեկին ասելիս ի նկատի ունեն անխելք լինելը, իսկ հայերենում *ա՛յ կով* ասելիս մարդու արտաքին տեսքը, այն ուղղվում է խոշորամարմին, կոպիտ արտաքինով մարդկանց: Բացի դրանից գերմաներենում կով իգական սեռին պատկանող բառով հայիոյանք/կշտամբանքները իգական սեռի անձանց էլ հենց ուղղվում են, այն դեպքում, երբ հայերենում հնարավոր է, որ դրանք երկու սեռին էլ հավասարապես ուղղված լինեն: Երեխաների համար երկու լեզվում էլ օգտագործվում են կենդանիների ձագերի անվանումները, ինչպես օրինակ գերմաներենում՝ *Welp, Ferkel, Kalb, Füllen*, իսկ հայերենում՝ *խոզուկ գոճի, գառնուկ, հորթուկ, փիսիկ, շունիկ* և այլն: Երեխաներին են ուղղված նաև ֆիզիկական փոքր չափսերով կենդանիների անվանումները, ինչպես՝ գերմաներենում *Käfer, Frosch, Wurm* և այլն, իսկ հայերենում՝ *բզեզ, մրջյուն*, և այլն: Անհրաժեշտ է նշել, որ հայերենում կենդանիների ձագերի անվանումները հիմնականում փաղաքշական իմաստով են օգտագործվում և հազվադեպ են բացասական կոնոտացիա պարունակում: Բառակազմական առումով էլ դա արտահատվում է փաղաքշական -իկ, -ուկ մասնիկների (դիմինուտիվների) միջոցով: Հատկանշական է նաև *ձագ, ձագուկ* բառերի օգտագործումը որպես փաղաքշական խոսք: Ընտանի կենդանիների անվանումներով հայիոյանքները, ինչպես վերը նշվեց, փոխաբերություններ են և դրանցից շատերը ժամանակի ընթացքում կարող են գործածությունից դուրս գալ, նաև՝ իմաստի կամ քերականական սեռի փոփոխություն կրել: Բերված օրինակներում (*Du dumme Kuh! Du blöde Gans!*) կենդանու քերականական սեռը ազդել է այլաբանական կիրառման վրա: Սակայն կան դեպքեր, երբ

այլաբանությունն է ազդում քերականական սեռի վրա: *Schlange* (օձ) կենդանին, օրինակ, հվգ.-ում ուներ *slango* ձևը և պատկանում էր արական սեռի, մվգ.-ում այն ուներ *slange* ձևը և դարձյալ պատկանում էր արական սեռի [KLUGE;1989:636]: Բայց քանի որ օձի անունը կանանց հետ էր կապվում, ինչպես նաև բառավերջի *-e* վերջավորության պատճառով տեղի է ունեցել փոփոխություն, այսօր *Schlange* –ն օգտագործվում է միայն որպես իգական սեռին ուղղված հայիոյանք և պատկանում է իգական սեռի գոյականների թվին [https://www.rjas.ro/.../paper_version.paper_file.

a12a2468fff403d7...(01.13.2018)]: Երկու լեզվանշակոյթներում էլ հանդիպում են նաև փոխանունության դեպքեր, երբ մասն օգտագործվում է ամբողջի փոխարեն (*pars pro toto*), ինչպես օրինակ գերմաներենում՝ *Du Eselkopf!*, իսկ հայերենում՝ *ա՛յ է՛չի գլուխ, ա՛յ հավի ուղեղ և այլն*: Հետաքրքիր է նաև այն երևույթը, երբ մարդն ինքն իր վրա զայրացած կամ ինքն իրենից հիասթափված, կենդանու անվանումով հայիոյանքն իր սեփական անձին է հասցեագրում, հայերենում՝ *է՛ջ եմ է, է՛ջ, իսկ գերմաներենում նման երևույթ չի հանդիպում, գերմանացին ինքն իր անձի դեմ ուղղված զայրույթն առաջին հերթին արտահայտում է *Ich bin so ein Depp!* արտահայտությամբ: Անհրաժեշտ է նշել, որ երկու լեզուներում էլ կան կենդանիների հետ համեմատություններ, որոնցում մարդկանց դրական հատկանիշներն են գովաբանվում, ինչպես օրինակ, *fleißig wie die Biene* (մեղվի պես ժրաջան), *treu wie der Hund* (շան պես հավատարիմ) և այլն:*

Ամփոփելով կարելի է ասել, որ հայիոյելը բանավոր ագրեսիայի մի ակտ է, որով հարձակվում են դիմացինի վրա կամ նրան խտրականության են ենթարկում: Յուրաքանչյուր ժողովրդի լեզվամշակույթում տարբեր կենդանիների անվանումներ կարող են համալրել հայիոյանքների շարքը՝ պայմանավորված տվյալ ժողովրդի բնակության աշխարհագրական գոտիով և բնակլիմայական պայմաններով, որոնցում էլ ապրում են նաև համապատասխան կենդանիները: Հայիոյանքները կարող են ուղղված լինել կոնկրետ մեկ անձի կամ էլ մարդկանց խմբի: Եթե դրանք կոնկրետ մեկ անձի են ուղղված, ապա պարզ է դառնում, որ կա նաև սեռային տարբերակում: Գերմաներենին բնորոշ են նաև մասնագիտական խմբերին ուղղված հայիոյանքները: Հայիոյանք/կշտամբանքները (ձևաբանական և լեզվատիպաբանական տեսանկյունից) կարող են առկայանալ բազմաթիվ ձևերով՝ տարբեր լեզվական իրավիճակներում առանձին բառերի

օգտագործումից մինչև նախադասություններ և տեքստեր, և մինչև անգամ ոչ էքսպլիցիտ լեզվական արտահայտություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Duden, Herkunftswörterbuch-Etymologie der deutschen Sprache, 4.,neu bearbeitete Auflage, (Bd.7), Dudenverlag, Mannheim-Leipzig-Wien –Zürich, 2006
2. Kluge, F., Etymologisches Wörterbuch der deutschen Sprache, de Gruyter, Berlin. 1989 S. 636
3. Hornscheidt Antje Lann/Ines Jana Hanna Acke Schimpfwörter, Beschimpfungen, Pejorisierungen (Wie in Sprache Macht und Identitäten verhandelt werden). Brandes & Apsel, 2011:8
4. Sornig K., Beschimpfungen, in: Grazer linguistische Studien, Bd.1: Sprache und Gesellschaft, Graz, 1975 S. 150-167.
5. Pfeifer H., Das große Schimpfwörterbuch, Über 1000 Schimpf-, Spott- und Neckwörter zur Bezeichnung von Personen, 1997
6. Reinhold Aman: Bayrisch-Österreichisches Schimpfwörterbuch. Süddeutscher Verlag, München 1972, ISBN 3-7991-5725-5, S. 165
7. Berliner Schimpfwörterbuch Constantin, Theodor 6. Aufl. Berlin : Haude Spener, 1982
8. Wörterbuch der bairischen Mundarten in Österreich, Wien, 2015:1752
9. <http://www.rindvieh.com/>
10. https://pikabu.ru/story/nemetskie_rugatelstva_i_maternyje_slova_1290474

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԷՋԵՐ

1. https://www.rjas.ro/.../paper_version.paper_file.a12a2468fff403d7...
2. <http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=7>
3. gretert.com/hայիդյանքներ-կյանքից-դեպի-գրականութ/

СИРАНУШ ПАПОЯН - АНАЛИЗ РУГАТЕЛЬСТВ С НАЗВАНИЯМИ ДОМАШНИХ ЖИВОТНЫХ (В НЕМЕЦКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ)

Настоящая статья посвящается изучению ругательств с названиями домашних животных в немецком и армянском языках. Рассматриваются мнения различных исследователей, которые считают ругательства как акт агрессии и дискриминации. В обеих лингвокультурах есть как сходства, так и различия. Оба народа живут (почти) на той же самой географической полосе и имеют тоже самые животные дома. Различия обусловлены

ментальностью народа и его восприятием языковой картины мира, а также грамматическим строем языка.

SIRANUSH PAPOYAN - THE ANALYSIS OF SWEARING WITH THE NAMES OF DOMESTIC ANIMALS (IN GERMAN AND ARMENIAN LANGUAGES)

This article is devoted to studying swears with the names of domestic animals in German and Armenian languages. The opinions of different researchers are examined, who consider the swearing as an act of aggression and discrimination. There are both likeness and differences in lingua-cultures. They both live in the same geographical zone and have the same domestic animals. The differences are stipulated for the mentality of people and its perception of the language picture of the world, also the grammar system of the language.

К ВОПРОСУ О МОТИВИРОВАННОСТИ ГРАММАТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ РОДА В ИТАЛЬЯНСКОМ ЯЗЫКЕ В СОПОСТАВЛЕНИИ С РУССКИМ

ЭРИКА ПИНЕЛЛИ
РУЗАННА САРКИСЯН

Ключевые слова: грамматическая категория рода, мотивированность категории рода, пол – род – гендер, фемининность, маскулинность.

Вопросы, связанные с происхождением и развитием (генезис категории рода), а также онтологическими (сущностными) характеристиками категории рода, вовлекают в дискуссию не одно поколение философов и лингвистов. Проблемы категории рода поднимались в классических трудах JI. Блумфилда, Я. Гримма, В. фон Гумбольдта, О. Есперсена, Т. Кампанеллы, М.В. Ломоносова, А. Мейе, Г. Пауля, Э. Сепира, Г. Штейнталя, А.В. Бондарко, И.А. Бодуэна де Куртенэ, В.В. Виноградова, А.А. Потебни и многих других ученых.

Категория рода как объект лингвистического исследования имеет долгую традицию и своими корнями уходит в античные представления о грамматическом роде как отражении естественного деления людей на два пола (мужской и женский биологический пол). Данное предположение впервые было выдвинуто Аристотелем и впоследствии получило название **символико-семантической гипотезы рода**. Еще в античный период род был выделен как языковая категория, и тогда же была сформулирована общепринятая терминология. Исследованию категории рода посвящены труды многих античных мыслителей, среди которых Порфирий, Секст-Эмпирик, Дионисий Фракийский, Ариститель, Платон, Протагор, Принциан, Элиан, Помпей и многие другие. “Средневековое языкознание продолжило традиции в подходах к категории рода, заложенные в Античности,.... а основные направления в языкознании Ренессанса... дополнили существовавшую систему представлений о роде рядом новых идей и подходов” [Казанцева 2008: 69)].

Символико-семантическая гипотеза получила свое логическое продолжение в трудах В. Гумбольдта, который разделял мнение о взаимосвязи природного пола и грамматического рода [См. Гумбольдт 1984]. Гипотеза основывалась на двух особенностях мифологического

мышления - анимизме и антропоморфизме. В своих исследованиях ученый широко использовал свой внеязыковой опыт для объяснения экстралингвистической мотивированности лингвистической категории рода. Открытие языков, в которых отсутствует категория рода (в частности, языков североамериканских племен), поставило под сомнение символическо-семантическую гипотезу и выдвинуло на первый план морфологические и синтаксические исследования рода, которые, однако, имели значительный недостаток – ограниченность только рамками языка и игнорирование экстралингвистических факторов.

По данным современной лингвистики, появление категории рода в индоевропейских языках связывается со становлением категории одушевленности/неодушевленности [БЭС: 418]. Семантически одушевленность связывается с представлением о живом и реализуется одушевленными существительными мужского и женского рода, которые называют существа мужского и женского пола. Однако известно, что словами мужского и женского рода могут являться и неодушевленные существительные - названия предметов. В языках же, где есть и средний род, неодушевленные существительные распределяются по трем родам (мужской, женский и средний). Таким образом, рассматривать категорию рода в отрыве от категории одушевленности/неодушевленности нельзя.

В настоящее время в лингвистике оперируют тремя близкими, но не идентичными понятиями: “род”, “пол” и “гендер”. Однако не каждый язык их дифференцирует, и возникает некоторая путаница, смешение этих понятий. Известно, что грамматический род служит для выражения полового различия. Однако это не всегда так. На самом деле половое различие не может быть всегда и точно выражено грамматическим родом. И само распределение по родам базируется не только на половом различии. Согласно Лингвистическому энциклопедическому словарю “лишь в части существительных можно видеть отражение реальных половых различий (названия людей и некоторых животных)” [См. ЛЭС]. В связи с этим возникает вопрос о мотивированности грамматического рода биологическим полом.

Целью данной статьи является рассмотрение соотношения понятий биологического пола и грамматического рода в итальянском языке в сопоставлении с русским. Несмотря на то, что оба языка относятся к одной и той же индоевропейской языковой семье, что предполагает определенные сходства как в словаре, так и грамматической структуре

данных языков, наблюдаются и различия, обусловленные их историческим развитием. Выбор именно этих языков в сопоставительно-типологическом плане отнюдь не случаен: в обоих языках есть грамматическая категория рода, однако наблюдается различие в количестве выделяемых родов, то есть в итальянском языке имеется двухуровневая родовая система, а в русском – трехуровневая.

Известно, что категория рода присуща всем существительным: и одушевленным, и неодушевленным. Если категория рода у одушевленных существительных имеет номинативное содержание – отражение биологического пола, то род неодушевленных существительных часто называют немотивированным, “пустым”, лишенным какого-либо номинативного содержания. Отто Есперсен в своем трактате “Философия грамматики” писал: “В языке есть много примеров непоследовательности, все же соответствие между женским полом и женским родом, с одной стороны, и между мужским полом и мужским родом — с другой, настолько отчетливо, что оно чувствуется довольно сильно” [См. Есперсен 1958]. Отсюда вполне логичная и предсказуемая тенденция установить соответствие между грамматическим родом и естественным, биологическим полом. О. Есперсен считает, что этого можно достичь прежде всего путем изменения формы и приводит следующие примеры: в латинском языке было образовано слово *lupa* (волчица) вместо более раннего *lupus* (волк), которое употреблялось для обозначения волчицы, вскормившей Ромула; позднее появились исп. *leona* (львица), франц. *lionne* (львица) от лат. *leo*, не различавшего пола [См. Есперсен 1958].

В итальянском языке, в отличие от русского, не три, а два рода имен существительных: мужской и женский. Род одушевленных существительных и в итальянском языке, и в русском в большинстве случаев является мотивированным, то есть совпадает с биологическим полом референта. Так, названия лиц мужского пола относятся к мужскому роду, а названия лиц женского пола – к женскому: *il signore* (сеньор) – *la signora* (сеньора), *il padre* (отец) – *la madre* (мать), *il maestro* (учитель) – *la maestra* (учительница) и т.д. Однако здесь есть исключения, например: *la spia* (шпион), *la guida* (проводник, гид; наставник) и т.д. Как видно из последних примеров, женский грамматический род этих существительных не мотивирован биологическим полом референтов, так

как вышеприведенные существительные женского рода могут обозначать лиц обоих биологических полов.

При наличии омонимичных форм, обозначающих лиц мужского и женского пола, классификатором пола выступает неопределенный или определенный артикль: *il nipote* (внук, племянник) – *la nipote* (внучка, племянница), *lo stilista* – *la stilista* (стилист, модельер, дизайнер), *il barista* (бармен) – *la barista* (барменша (разг.)), *il finalista* (финалист) – *la finalista* (финалистка), *un pianista* (музыкант) – *una pianista* (музыкантка), *un artista* (художник) – *un' artista* (художница) и т.д. В вышеприведенных примерах функция различения рода переходит к артиклю.

Если существительные образуют коррелятивные пары, морфологическими показателями отнесенности к мужскому или женскому грамматическому роду служат не только определенные или неопределенные артикли, но и соответствующие деривационные суффиксы со словообразовательным значением лица мужского или женского пола, то есть возможна **вторичная морфологизация рода**. Ср.:

- *ore/-tore* (м.р.), *-trice/-essa* (ж. р.): *il traduttore* (переводчик) – *la traduttrice* (переводчица), *il professore* (профессор) – *la professoressa* (профессорша) (разг.), *il dottore* (доктор) – *la dottoressa/докторша*(разг.);
- *-aio* (м.р.), *-aia* (ж. р.): *un operaio* (служащий) – *un' operaia* (служащая);
- *-aro* (м. р.), *-ara* (ж.р.): *lo scolaro* (ученик, школьник) – *la scolara* (ученица, школьница);
- *-iere* (м.р.), *-iera* (ж.р.): *un infermiere* (фельдшер) – *un' infermiera* (медсестра), *un cameriere* (официант) – *una cameriera* (официантка).

Что касается названий животных (фаунонимов) в итальянском языке, которые, как и в русском, считаются одушевленными, здесь наблюдается несколько иная картина. В итальянском языке большинство фаунонимов обозначаются нерасчлененно, одной лексемой. Общие названия животных, не содержащие указания на биологический пол, могут в итальянском языке относиться либо к мужскому (*il cammello* (верблюд), *il delfino* (дельфин), *l'elefante* (слон), *il rappagallo* (попугай) и т.д.), либо к женскому роду (*la zebra* (зебра), *la tigre* (тигр), *la mosca* (муха), *la farfalla* (бабочка) и т.д.). Однако наряду с такими

существительными, обозначающими животных безотносительно к их биологическому полу, в итальянском языке, как и в русском, есть фаунонимы, обозначающие самца и самку расчлененно: *il lupo* (волк) – *la lupa* (волчица), *il cane* (собака, кобель) – *la cagna* (сука, в итальянском, как и в русском, имеет отрицательную коннотацию), *il gatto* (кот) – *la gatta* (кошка), *l'orso* (медведь) – *l'orsa* (медведица), *il gallo* (петух) – *la gallina* (курица), *il leone* (лев) – *la leonessa* (львица), *l'elefante* (слон) – *l'elefantessa* (слониха) – и т.д. Как видно из приведенных примеров, в большинстве случаев словообразовательным формантом, образующим фауноним женского рода от соответствующего фаунонима мужского рода, является морфема *-a* (*-ina* в случае с *gallina*), а также суффикс *-ess(a)* как один из самых продуктивных и регулярных суффиксов “женскости” итальянского языка. Однако анализ фаунонимов женского рода в итальянском языке показывает, что, в сравнении с русским языком, таких соотносительных пар фаунонимов по признаку биологического пола в итальянском языке не много. Для номинации фаунонимов по признаку пола итальянский язык в некоторых случаях использует супплетивизм: *la mucca* (корова) – *il bue* (бык). В ряде случаев могут использоваться также такие классификаторы пола, как *maschio* и *femmina*: *elefante maschio* / *elefante femmina* [См. Саркисян 2017].

Достаточно интересным является отнесение к одному из двух родов названий деревьев и плодов этих деревьев. В итальянском языке существует достаточно большое количество пар – названий деревьев и фруктов где названия деревьев относятся к мужскому роду, а названия фруктов – к женскому. Ср.: *il melo* (яблоня) – *la mela* (яблоко), *il pesco* (персиковое дерево) – *la pesca* (персик). В этом особенность итальянской языковой картины мира. Названия деревьев обладают чертами маскулинности, а названия плодов, фруктов с этих деревьев – чертами фемининности. Отметим здесь, что в индоевропейских языках названия деревьев (особенно плодовых) относились к женскому роду, а названия плодов этих деревьев – к среднему. Дерево рассматривалось как нечно рождающее, то есть подчеркивалось женское начало плодовых деревьев. Ср. в русском языке: *яблоня* – *яблоко*.

В итальянском языке географические названия (названия городов, стран, континентов, островов и т.д.) в большинстве случаев относятся к женскому роду. Ср.: *Roma*, *Venezia*, *Londra*, *Italia*, *Russia*, *Europa*, *Africa* и т.д. Однако это правило имеет ряд исключений, например: *il Cairo* (Каир),

il Madagascar (Мадагаскар), а также названия озер, которые относятся к мужскому роду: *il lago di Garda (озеро Гарда)*, *il lago di Como (озеро Комо)*. Названия рек могут относиться как к мужскому (*il Po, il Tevere, il Ticino*), так и женскому роду (*la Dora Baltea, la Dora Riparia, la Brenta, la Magra*).

Ярко выраженные черты маскулинности проявляются и в отнесении названий металлов и сплавов к мужскому роду: *il ferro (железо)*, *il rame (медь)* и т.д. В русском языке картина иная: здесь названия металлов и сплавов могут относиться ко всем трем родам. Ср., металл, чугун (м.р.), золото, серебро (ср.р.), сталь, медь (ж.р.) и т.д.

К мужскому роду в обоих языках относятся названия месяцев. Ср. *gennaio, febbraio, январь, февраль* и т.д..

Также в итальянском языке к мужскому роду относятся дни недели (*il lunedì, il martedì* и т.д.), кроме *la domenica (воскресенье)*. Названия дней недели в итальянском языке по происхождению являются сложными существительными, которые образованы от латинских названий небесных светил (луна, Марс, Меркурий, Венера, Юпитер) и компонента *di' (день* в латинском). В русском языке названия дней недели относятся к мужскому (*понедельник, вторник, четверг*), женскому (*среда, пятница, суббота*) и среднему роду (*воскресенье*).

Современное итальянское слово *день – il giorno*, как и в русском языке, относится к мужскому роду. Противопоставление по роду *день – ночь* характерно для многих индоевропейских языков, что можно объяснить религиозно-мистическими представлениями древнего человека о свете и тьме, дне и ночи. Поэтому во многих индоевропейских языках, где есть родовые оппозиции, *день / il giorno* относится к мужскому роду, то есть обладает ярко выраженными чертами маскулинности, а *ночь / la notte* относится к женскому роду, то есть обладает чертами фемининности.

Таково же противопоставление *огонь – вода* во многих индоевропейских языках, в том числе в итальянском и русском: *огонь / il fuoco* – мужского рода, *вода / l'acqua* – женского. Обожествление огня и придание ему одушевленности было характерно для всех народов мира, ибо известно огромное значение огня для древнего человека. Исследователи отмечают, что “в тех странах, где господствовало материалистическое миропонимание, как например, в Древней Греции, названия воды, огня и т.п. оказываются неодушевленными (среднего

рода); у тех же народов, где сильны были религиозные взгляды на мир, как, например, в Индии и в Древнем Риме, формы класса одушевленного обязательно берут верх, причем такие языки характеризуются также противопоставлением женского рода мужскому” [Одинцов 1988: 65].

В итальянском языке наблюдается также оппозиция обозначений луны и солнца, земли и неба. Мужское начало солнца (*il sole*) и неба (*il cielo*) противопоставляется женскому началу в обозначении луны (*la luna*) и земли (*la terra*). Небу во многих языках, в том числе и итальянском, приписывалось мужское начало, а земле – женское, производящее, рождающее. В русском языке слова *небо* и *солнце* относятся к среднему, а *луна* и *земля* – к женскому роду.

Таким образом, категория грамматического рода и в итальянском, и в русском языках семантизирована частично. Когда речь идет о людях, эта категория мотивирована, осмыслена почти полностью. В применении к животным она осмыслена, когда имеются в виду самцы и самки животных, но она не мотивирована при названии животных вообще. Что касается неодушевленных существительных, то категория грамматического рода оказывается лишенной смысла. Однако “пустая”, “бессмысленная”, “лишенная семантики” категория рода является пережитком древних мистических и религиозных воззрений, которыми определяется придание основополагающим понятиям черт маскулинности или фемининности, и, следовательно, отнесение существительных, обозначающих данные понятия, к тому или иному грамматическому роду.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Андреев О.А. Словообразование в современном итальянском языке. Учебное пособие. Воронеж, 2004. –35с.
2. Большой энциклопедический словарь (БЭС). URL <http://www.vedu.ru/bigencdic/53615/> Дата обращения: 07.08.2016.
3. Гумбольдт В. фон. Избранные труды по языкознанию. М.: Прогресс, 1984. — 400 с.
4. Есперсен О. Философия грамматики. –М., Изд-во иностранной литературы, 1958. –400с.
5. Казанцева Т.Ю. История развития учений о грамматическом роде в рамках индоевропеистики // Вестник ТГПУ, Выпуск 2 (76), 2008. С.68-73.

6. Лингвистический энциклопедический словарь (ЛЭС). Под ред. В.Н. Ярцевой. – М., Советская энциклопедия, 1990 URL <http://www.tapemark.narod.ru/les/417a.html> Дата обращения: 07.08.2016.
7. Одинцов В.В. Лингвистические парадоксы. – М., Просвещение, 1988. – 172с.
8. Русская грамматика: В 2 т. Главный редактор Н.Ю. Шведова.–М., Наука, 1982. Т. I. –783с.
9. Саркисян Р.Р. Номинация фаунонимов по признаку взрослости/невзрослости (детскости) в русском языке (в сопоставлении с армянским и английским) // Studia Slavica XV, Научные труды молодых филологов, Таллинский университет, Институт гуманитарных наук, Таллин, 2017, С. 130-142.

ԵՐԻԿԱ ՊԻՆԵԼԼԻ, ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ – ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ՌՈՒՍԵՐԵՆԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱԾԱՆՑՅԱԼՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հոդվածը նվիրված է արդի իտալերենում ռուսերենի համադրությամբ քերականական սերի իմաստային և ձևային (ֆորմալ) ածանցյալության խնդրին: Համադրվող լեզուները բնորոշվում են սերի քերականական կարգի առկայությամբ, որը կարող է պայմանավորված լինել ինչպես բառիմաստով, այնպես էլ բառաձևերի առանձնահատկություններով: Ձևայած անձնանուն գոյականները պատկանում են արական կամ իգական սերին՝ կենսաբանական սերին համապատասխան, գոյականների մեծ մասի արական, իգական (կամ չեզոք) սերի պատկանելիությունը պայմանավորված է ձևային հատկանիշներով: Բառիմաստով ածանցյալության դեպքում քերականական սերը պայմանավորված է արական/իգական հիմնարար հակադրությամբ: Ձևաին ածանցյալության ուսումնասիրությունը վեր է հանում քերականական սերի պայմանավորվածությունը հնագույն առեղծվածային և կրոնական պատկերացումներով և գաղափարներով:

ERICA PINELLI, RUZANNA SARGSYAN – ON THE MOTIVATION OF THE GRAMMATICAL CATEGORY OF GENDER IN ITALIAN COMPARED WITH RUSSIAN

The article touches upon semantic and formal motivation of the grammatical gender in the present-day Italian language compared with Russian. The compared languages are characterized by the grammatical category of gender which can be motivated by semantics or formal features of

the words. Although there is a semantic core of grammatically masculine and feminine nouns that have a biologically masculine or feminine referent, nouns are generally masculine, feminine (or neuter) due to formal rather than semantic reasons. In case of semantic motivation the fundamental opposition “masculine/feminine” reflects the grammatical gender. In case of formal motivation the reference goes back to ancient mystical and religious concepts and ideas.

**ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐ և ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ
(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ՇԱՀԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ դարձվածաբանական միավոր, դարձվածային հոմանիշ, դարձվածային փոքրբերակ, դարձվածաբանական շարք, իմաստային համընկնում, բառային հոմանիշ, իմաստային կապ

Դարձվածաբանության մեջ դարձվածային հոմանիշներ և տարբերակներ տարրորոշելը ունի թե՛ տեսական և թե՛ գործնական կարևորություն: Եթե առանձին բառը ունի ձևաբանական, հնչյունաբանական և ուղղագրական տարբերակներ, ապա դարձվածքների հատուկ են դարձվածային տարբերակները: Դրանք լեզուն հարստացնելու և թարմացնելու լավագույն միջոցներ են: Ֆրանսերենում դարձվածային տարբերակները մեծ տարածում ունեն, ինչով և պայմանավորված է վերջիններիս հանդեպ եղած հետաքրքրությունը:

Դարձվածային հոմանիշների և դարձվածային տարբերակների միջև սահմանազատման համար ընդունելի են հետևյալ կետերը. այն դարձվածքները, որոնք ունեն տարբերվող բառաքերականական ձև, սակայն պատկերային նման կառուցվածք, հանդես են գալիս որպես տարբերակներ, իսկ այն դարձվածքները, որոնք արտահայտում են մեկ ընդհանուր իմաստ, (ոճական բազմազանությամբ հանդերձ), սակայն ունեն պատկերային տարբեր կառուցվածք, հանդես են գալիս որպես հոմանիշներ:

Դարձվածային տարբերակները որպես կանոն ունեն.

- Պատկերային նման կառուցվածք
- Միևնույն բովանդակությունը
- Լեզվում նույն դերը և բառաքերականական իմաստը

Ամենակարևոր հատկանիշը վերը նշվածներից պատկերային նման կառուցվածք ունենալն է, սովորաբար մեկ բաղադրիչի տարբերությամբ, որը տարանջատում է դարձվածային տարբերակները դարձվածային հոմանիշներից: Ինչ վերաբերում է **բովանդակությանը**, ապա դարձվածային տարբերակները իմաստային առումով համարժեք են, սակայն տարբեր են ոճական, հուզարտահայտչական նրբերանգներով:

Դարձվածային տարբերակները լեզվում կատարում են նույն դերը, ինչը նշանակում է, որ դարձվածային տարբերակը պետք է վերաբերի միևնույն դասին կամ ենթադասին (անվանողական, սպասարկու), բառաքերականական կարգին (գոյականական, բայական, մակբայական, և այլն): Եթե նման համընկնում չկա, ապա չի կարելի համարել, որ դրանք դարձվածային տարբերակներ են:

Օրինակ.՝ **mettre au point – mise au point ; à l’ombre - à l’ombre de ; hurler avec les loups – il faut hurler avec les loups, և այլն:**

Այս ամենից բխում է իմաստային համընկնումը: Եթե դարձվածային տարբերակներն ունենում են նույն կառուցվածքն ու բովանդակությունը, ապա իմաստային համընկնումն անխուսափելի է: Սովորաբար դարձվածաբանական միավորի նոր իմաստը տարածվում է իր բոլոր տարբերակների վրա: Հազվադեպ, բայց պատահում է նաև, որ այդ նոր իմաստը միայն մեկ տարբերակի վրա է տարածվում, որի արդյունքում վերջինս ստանում է նոր իմաստ բազմիմաստ դարձվածաբանական միավորի սահմաններում:

Օրինակ.՝ **faire la cour à qn և faire sa cour à qn**

Երկուսն էլ ունեն նույն կառուցվածքը, բայց երբ խոսքը «մեկին ուշադրություն դարձնել», «սիրալիր խոսել մեկի հետ» արտահայտությունների մասին է, ապա դրանք դարձվածային տարբերակներ են, սակայն «**faire la cour à qn**» ունի նաև «**սիրատածել**», «**սիրահետել**» իմաստը, ինչը հատուկ չէ «**faire sa cour à qn**» արտահայտությանը:

Այսպիսով կարող ենք փաստել, որ դարձվածային տարբերակները դարձվածաբանական միավորների տարատեսակներ են, որոնք ունեն միևնույն ձևն ու բովանդակությունը, լեզվում կատարում են նույն դերը, ունեն նույն բառաքերականական իմաստը:

Ժամանակակից ֆրանսերենում առկա են դարձվածային տարբերակների հետևյալ տարատեսակները.

1. Ձևաբանական տարբերակներ, որոնցում տարբերակումը ի հայտ է գալիս.

- եզակի և հոգնակի թվի կիրառման ժամանակ
Sans phrase/sans phrases – առանց խոսքի, անխոս
Marquer un point/marquer des points – առաջադիմել
- տարբեր հոդերի գործածության ժամանակ

Trembler comme une feuille/trembler comme la feuille - տերևի պես դողալ

Filer un mauvais coton/filer du mauvais coton (fam.) – ծանր հիվանդ լինել

- հողի սղման դեպքում

Faire la loi/faire loi – օրենքի ուժ ունենալ

Dur comme du fer/dur comme fer – քարի պես ամուր՛պինդ

Blanc comme la neige/blanc comme neige – ձյան պես սպիտակ

- հողի փոխարինման ժամանակ (ավելի հաճախ ստացական դերանվանական ածականով)

En mettre la main au feu/ en mettre sa main au feu (fam.) – համոզված պնդել (վիզս կկտրեմ, քիթս կկտրեմ, եթե ...)

Etre à l'aise/être à son aise – միանգամայն ապահովված լինել, բարեկեցիկ կյանքով ապրել. իրեն ազատ զգալ, անկաշկանդ՝ անբռնազբոս վիճակում լինել

Pour le coup/pour ce coup – այս անգամվա համար

- տարբեր նախդիրների կիրառման ժամանակ

Jeter de l'huile dans le feu/ jeter de l'huile sur le feu – կրակի վրա յուղ լցնել

Au reste/du reste – ինչ վերաբերում է մնացածին

Mot à mot/ mot pour mot – բառացի, բառ առ բառ

- տարբեր ժամանակաձևերի կիրառման ժամանակ

Innocent comme l'enfant qui naît/ Innocent comme l'enfant qui vient de naître – նորածնի պես անմեղ լինել

- դերանվանական բայի կիրառման դեպքում

Faire une vie/ se faire une vie – ընտանիք կազմել

Casser comme du verre/ se casser comme du verre – փշուր-փշուր լինել

- իգական և արական սեռերի կիրառման ժամանակ (ավելի հաճախ կենդանիների, թռչունների դեպքում)

Tête comme un dindon/ tête comme une dinde – հնդկահավի պես համառ

2. Բառային տարբերակներ – այս շարքին են պատկանում այն դարձվածքները, որոնք տարբերվում են իրենց բառային կազմով: Այս դարձվածքներում կարող են փոփոխվել.

- գաղափարանիշ հոմանիշները

barrer la route = barrer le chemin – ճանապարհը փակել

- հոմանիշները, որոնք միայն տվյալ դարձվածքի մեջ են հոմանիշ

de bon matin = de grand matin – վաղ առավոտյան, առավոտ շուտ

dormir la grasse matinée = faire la grasse matinée – առավոտյան երկար քնել, ուշ վեր կենալ, երկար մնալ անկողնում

- հոմանիշները, որոնք ունեն կամ փաղաքշական կամ ուժգնացնող իմաստ

les murs ont des oreilles = les murailles ont des oreilles – պատերն ականջ ունեն

- բառեր, որոնք հարաբերվում են ինչպես մասը ամբողջին

la tête haute = le front haut – հպարտ, գլուխը բարձր, ինքնավստահ

être volé comme dans un bois = être volé comme au coin d'un bois – ամբողջովին՝ իսպառ կողոպտվել, թալանվել

- դասական կամ քանակական տարբեր թվականներ

à deux pas de = à quatre pas de – երկու քայլի վրա, շատ մոտ

en un mot comme en cent = en un mot comme en mille – մի խոսքով, կարճ ասած

3. Ոճական տարբերակներ – այստեղ հանդիպում են այն դարձվածքները, որոնց փոխարինվող բաղադրիչ բառերը ոճական հոմանիշներ են

manger du lion = bouffer du lion (fam.) - առյուծ կտրել

mettre զգո à la porte = flanquer զգո à la porte (fam.) – դուրս անել, դուռը ցույց տալ, վռնել

4. **Քանակային տարբերակներ** – այս դասին են պատկանում այն դարձվածքները, որոնք տարբերվում են իրենց ամբողջական լինելու աստիճանով
bon comme le pain = bon comme le bon pain – չափազանց բարի՝ բարեսիրտ
rien à faire = il n'y a rien à faire – անօգուտ է, ոչինչ անել չես կարող, անկարելի է որևէ բան անել

5. **Ուղղագրական տարբերակներ** – այստեղ այն տարբերակներն են, որոնք տարբերվում են իրենց գրելաձևով, որից չի փոխվում ոչ կառուցվածքը, ոչ էլ դարձվածքի իմաստը:
vérité de la Palisse = vérité de la Palice – հին երգ, բոլորին հայտնի ճշմարտություն
dès le potron-minet = dès le patron-minet – արևածագին, արշալույսին

Դարձվածային տարբերակները միմյանցից տարբերվում են նաև **քերականական որոշակի առանձնահատկություններով.**

ա. գոյականի թվով

jouer des mâchoires – jouer de la mâchoire (fam.) – ուտել, ծամել

բ. հոդով կամ հոդի բացակայությամբ

faire mal, faire du mal, faire le mal – ցավ պատճառել

faire queue, faire la queue – հերթ կանգնել

faire la (sa) méridienne – հետմիջօրեի հանգիստը վայելել

գ. անդրադարձ և ոչ անդրադարձ բայերի ընտրությամբ

faire le marché de զո - faire son marché – մեկ ուրիշի փոխարեն գնումներ անել

donner du mal - se donner du mal - նեղություն կրել, ջանք թափել

դ. բառերի շարադասությամբ

chercher qn par mer et par terre - chercher qn par terre et par mer - մեկին ամենուր՝ աշխարհով մեկ փնտրել

ե. ենթակա – խնդիր հարաբերության դասավորվածությամբ

ça me tourne les sangs - j'en ai les sangs tournés (fam.) - արյունս պղտորվում է

Ի տարբերություն դարձվածային տարբերակների, **դարձվածային հոմանիշները** կառուցվածքով ու բառակազմով տարբեր են և այլ ծագում ունեն: Նրանք ունենալով մոտ կամ ընդհանուր իմաստ, տարբերվում են իմաստային, երբեմն էլ ոճական երանգներով: Դրանով է պայմանավորված, որ դարձվածային հոմանիշներն իրենց կազմում չեն կարող փոխարինվել բառային հոմանիշներով:

Դարձվածային հոմանիշները հասկացություններն ու երևույթները արտահայտում են ավելի մասնավորեցված: Հենց այս յուրահատկությունն է որոշում նրանց ավելի բարդ իմաստաբանական կառուցվածքը, որոնք, միացած լինելով իմակային ընդհանուր կապով, օժտված են ոճական նրբերանգով:

Օրինակ՝ **avoir de l'estomac (fam.)**

n'avoir pas froid aux yeux (fam.)

avoir du sang dans les veines (fam.)

Այս բոլորն ունեն նույն իմաստը – **խիզախ լինել**, սակայն նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ, տարբերակող իմակ: Առաջինին հատուկ է կոպտություն, երկրորդին՝ հանդգնություն, երրորդին՝ վճռականություն իմակը:

Ինչպես արդեն նշեցինք, դարձվածային հոմանիշներին հատուկ է իմաստի մոտ կամ ընդհանուր լինելը: Ավելի յուրահատուկ իմաստային կապ գոյություն ունի տարբեր կառուցվածք ունեցող հոմանիշների միջև: Այս դեպքում խոսքը ոչ թե իմաստի ընդհանրության, այլ մոտ լինելու մասին է:

Օրինակ՝ **être sur la paille (fam.) - tirer le diable par la queue (fam.)**

prendre la mouche (fam.) – s’emporter comme une soupe au lait

Ավելի սերտ իմաստային կապը հատուկ է դարձվածային այն հոմանիշներին, որոնք տարբերվում են իրենց բառային կազմով, բայց ունեն նույն հարադրական կառուցվածքը.

**Օրինակ՝ jouer un tour à qn – faire une farce à qn
quitter le monde – rendre l’âme**

Ֆրանսերենը հարուստ է ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշներով ու տարբերակներով: Ֆրանսերեն բազմաթիվ դարձվածաբանական միավորներ կազմում են դարձվածաբանական շարքեր, որոնց մեջ շատ են թե՛ տարբերակները, թե՛ հոմանիշները: Ստորև բերենք մի քանի օրինակ.

Մահանալ – s’en aller, quitter le monde, rendre l’âme, rendre l’esprit, rendre le dernier soupir, partir pour l’autre monde, aller ad patres (fam.), finir ses jours, fermer les yeux, passer de vie à trépas, descendre dans la tombe, paraître devant Dieu, mettre ses habits bas pour toujours (fam.), plier bagage (fam.), manger les pissenlits par la racine (fam.), partir/sortir les pieds en avant (fam.), y rester (fam.), avaler son extrait de naissance (fam.), passer l’arme à gauche (fam.), casser sa pipe (fam.), tourner de l’œil (pop.)

Փախչել – prendre la clé des champs, montrer les talons, courir comme un dératé, prendre ses jambes à son cou, s’enfuir / se sauver comme un lièvre, prendre la poudre d’escampette, jouer/se tirer des flûtes (fam.), mettre les bouts (fam.), mettre les voiles (fam.), foutre le camp (pop.), les mettre (pop.).

Պարսոթյուն կրել – faire four, faire fiasco, tomber à l’eau, remporter/ramasser une veste (fam.), faire chou blanc (fam.), mordre la poussière (fam.), s’en aller en eau de boudin (fam.), perdre la partie, aller à veau-l’eau, faire long feu, se casser le nez (fam.).

Ուսումնասիրված լեզվանյութը պարզորոշ մատնանշում է այն իրողությունը, որ դարձվածային տարբերակներն ու հոմանիշները զուգահեռաբար առկա են լեզվաոճական բոլոր շերտերում, ինչը երևույթի ընդհանրական դիտարկման պայմաններում հանգում է հետևյալին՝

*գրական ոճ – գրական ոճ,
գրական ոճ – խոսակցական ոճ,
խոսակցական ոճ – խոսակցական ոճ*

Բերենք յուրաքանչյուր զույգը պատկերող տարբերակների ու հոմանիշների երկուական օրինակ՝ հայերեն համարժեքներով.

Տարբերակներ

գրական ոճ – գրական ոճ

démasquer ses batteries = dévoiler ses batteries – բացահայտել մտադրությունը՝ դիտավորությունը՝ գործողության ծրագիրը

décharger sa bile = épancher sa bile – մաղցը (դուրս) թափել, անզուսպ արտահայտել զայրույթը

գրական ոճ – խոսակցական ոճ

prendre du ventre = prendre du bidon – փոր զգել, որովայնը հաստացնել, գիրանալ, ճարպակալել

cela vaut la peine = ça vaut le coup – արժե փորձել՝ ռիսկի դիմել

խոսակցական ոճ – խոսակցական ոճ

clouer le bec à qn = boucler le bec à qn – մեկի բերանը փակել՝ ծեփել, մեկին լռեցնել

bas du béret = ras du béret – բութ, թանձրամիտ

Հոմանիշներ

գրական ոճ – գրական ոճ

avoir de l'argent plein les poches = remuer l'argent à la pelle – անչափ հարուստ լինել, փողի հաշիվը չիմանալ

avoir une courte vue = ne pas voir plus loin que le bout de son nez – անհեռատես՝ անշրջահայաց՝ անխոհեմ լինել, քթից այն կողմ չտեսնել

գրական ոճ – խոսակցական ոճ

**avoir du sang chaud = être soupe au lait – տաքարյուն՝
ոյուրաբորբոք՝ ոյուրագրգիռ լինել**

**avoir froid aux yeux = avoir du sang de lapin – վախկոտ՝
անհամարձակ լինել**

խոսակցական ոճ – խոսակցական ոճ

**avoir du plomb dans l'aile = filer un mauvais coton - ծանր՝
անհուսալի հիվանդ լինել, հոգու հետ կռիվ տալ**

**casser la gueule à qn = passer qn à tabac – մեկի քիթ ու
մոռուքը ջարդել, գլուխը կոտրել, սաստիկ ծեծել**

Ամփոփելով շարադրանքը կարող ենք հաստատել, որ դարձվածային հոմանիշների և դարձվածային տարբերակների այս ընդարձակ բազմապիստության մեջ իրենց ուրույն տեղն ունեն խոսակցական ֆրանսերենի դարձվածաբանական միավորները, որոնք գալիս են լեզուն հարստացնելու իմաստային ու ոճական զանազան երանգներով: Երևույթը շարունակական է, քանի որ խոսակցական ֆրանսերենը անընդհատ համալրվում է կենդանի խոսքին բնորոշ նորանոր արտահայտչամիջոցներով, որոնք ասելիքին հաղորդում են գունեղ պատկերավորություն և հուզարտահայտչականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Lacotte Daniel, Les expressions les plus truculentes de la langue française, Editions Larousse, 2014.
2. Pouget Anne, Le pourquoi des choses ; origine des mots, expressions et usages curieux, Paris, 2009.
3. Rey Isabel Gonzalez, La phraséologie du français, Presses Universitaires du Mirail, Toulouse, 2002.
4. Жуков В.П., Семантика фразеологических оборотов, Москва, «Просвещение», 1978.
5. Липшицене - Зибуцайте Э.И., Фразеологические синонимы французского языка, «Просвещение», Ленинград 1971.

6. Назарян А.Г., Фразеология современного французского языка, «Высшая школа», Москва, 1987.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, ԵՊՀ հրատարակչություն, 1975:
2. Ashraf M, Miannay D., Dictionnaire des expressions idiomatiques, Librairie Générale Française, 1995.
3. Nazarian A., Dictionnaire pratique français-russe-arménien des termes linguistiques, Apollon, Erévan, 1993.
4. Rey - Chantreau, Dictionnaire des expressions et des locutions, Le Robert, Paris, 1997.
5. Гак В. Г. и др., Французско-русский фразеологический словарь, под редакцией Я. И. Рецкера, Москва, 1963.

ШАГАНЕ ПЕТРОСЯН - ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ СИНОНИМЫ И ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ВАРИАНТЫ (на основе материала современного французского языка)

В статье рассматривается задача разграничения фразеологических синонимов и фразеологических вариантов, их различительные признаки и особенности. В этой совокупности фразеологических единиц свое особое место имеют синонимы и варианты, относящиеся к разговорному французскому, которые наряду со средствами выражения литературного языка значительно пополняют и обогащают речь, делают ее более наглядным, эмоциональным, красочным, стилистически маркированным.

SHAHANE PETROSYAN - PHRASEOLOGICAL SYNONYMS AND PHRASEOLOGICAL VARIANTS (based upon the modern French material)

The article refers to the issue of the differentiation of the phraseological synonyms and phraseological variants, as well as their distinctive characteristics and peculiarities. In this range of phraseological units, the synonyms and variants of colloquial French, which, along with other linguistic means of expression of the literary language, considerably complete and enrich the speech, make it more figurative, emotional, colorful and stylistically marked.

ԱՐՄԵՆ ԴՈՂՈՍՅԱՆ

汉语中词的构成

第一节 语素和词

词汇是语言中词语的总和。词汇包括语言中的词和固定语。确认语言中除了词以外，还从在固定语，它是词汇的重要组成部分。

词汇学是以词和词汇为研究对象的语言学部门。一般认为它研究词的性质，词的创造和结构，词的本质和内容，词义的发展，词的各种关系，研究词汇的划分，关系，发展，研究各种词语的应用和规范等等。近年来，词汇学注意同语义学相结合，积极为语言文字的信息处理研究服务。

一、语素

语素是语言中最小的音义结合体。把一个语言片段切分到最小的单位，例如“春天快到了”中的“春”，语义形式是 **chun**, 意义为“春季”，这就是一个语素。如果继续切分下去，所得到的就是没有意义的音素，或是没有语音形式的义素了。作为语言单位，语素是最小的。

现代汉语的语素绝大多数都是单音节的，例如“天，地，水，农，头”。也有两个音节的，例如“参差，荒唐，尼龙，沙发”。三音节以上的几乎都是从外族语译音而来的，例如“的确良，法西斯，乌鲁木齐，布尔什维克”。

现代汉语中的一个音节，写下来是一个汉字，也有可能不是音素，例如“芙，蝙，獠”；再如“尼龙”中的尼“尼”，“沙发”的“沙”。鉴别一个音节或一个字是不是语素，主要看它是不是有意义，这个意义可以是具体的词汇意义，也可以是抽象的语法意义。一般可以采用替换方法来帮助检验。所谓替换法是将一两个音节（两个汉字）的组合，分别替换上字或下字，如果在替换后可以结合成为另一个组合，那马就说明没有替换的另一字是语素。如果两个字都不能替换，那马就说明这两个字都不是语素。在运用替换法时，要随时考察意义。首先，经替换检验的字在意义上必须具有同一性；其次，经检验认定是语素的字必须有意义。例如“汉语”这个词中的两个字，“汉”可以替换为“英，俄，

日”等，“语”可以替换为“族，朝，人”等，在替换时“汉”的意义始终是同一的；“语”的意义也始终是同一的，它们都有意义，都是语素。再如“芙蓉”这两个字，“芙”不能替换，“蓉”也不能替换，它们都没有意义，不是语素，只是字和音节。

替换法作用有限，只能作参考。汉语里有很多语素只在一个词里出现，例如“蓖麻”的“蓖”，“蹂躏”的“蹂”。如果用替换法检验，它们都是一用的，即不能与其他字结合，但是它们确实有意义，应该是语素。

语素可以分为成词语素和不成词语素。成词语素本身也是词，例如“人，手，牛，笔，葡萄”；不成词语素一般只能做构词成分，本身不是词。例如“民，基，为，恐”。

语素可以分为单义语素和多义语素。双音节，多音节语素单义的居多，例如：

徘徊：来回走。蟑螂：一种昆虫。巧克力：可可粉制作的食品。多义的例子：

玫瑰：1) 一种植物 2) 花

常用的单音节语素单义的少，例如：

爸：父亲。扩：放大。技：才能。买：拿钱换东西，跟“卖”相对。

多义的比较，例如：

水：1) (能喝的)水；2) 河流；3) 江，河，湖，海的通称；4) 汁液；5) 额外附加的费用；6) 衣服洗的次数。

铁：1) 一种金属元素；2) 坚硬；3) 意志坚定；4) 确定不移；5) 精锐；6) 借指兵器，等。

大：1) 在体积，面积，数量，力量，强度等方面超过一般或超过所比较的对象；2) 大小的程度；

3) 程度深，等。

语素中，成词语素本身就可以成词，不成词语素在古代汉语中一般也都是词。因此语素也可以按语法功能分类，分名词性，动词性，形容词性语素等。

二、词

词是最小的，能独立运用的语言单位。词和语素都是语言单位，词比语素高一级。词和语素的区别在于，词是能够独立运用的。“独立运用”包括单说和单用，单说就是单独成句，单用就是单独充当句子成分或单独起语法作用。

在语言单位中，词的上一级单位是词组，词组是由两个或两个以上的词组织起来的语言单位。词和词组都是能独立运用的语言单位，区别就在于词是更小的。由一个语素构成的词，例如：“人，树，鸟，跑，灿烂，雷达，托拉斯”，无疑是最小的，不能再分割的。由两个语素构成的单位，如果这两个语素都是不成词语素，例如“感觉，介绍，思索，具体”等；或其中的一个是不成词语素，例如“习俗，普遍，漫长”那么这是比较容易判定的，它们一定是词，不可能是词组。由两个成词语素构成的单位是词还是词组，问题则比较复杂。通常是采用扩展法来检测，这两个语素的中间插进一些表示关系或修饰的词，例如：

A. 大树——大的树，红笔——红的笔，吃鸡——吃了一只鸡

B. 火车=/=火的车，马路=/=马的路，绑腿=/=绑了一条腿

其中 A 组可以扩展，扩展后的意义也没有改变；B 组不能扩展，或者扩展后的意义改变了。经过分析，我们可以确定 A 组的“大树，红笔，吃鸡”都是词组而不是词；B 组的“火车，马路，绑腿”都是词而不是词组。

三、词的构成

词是由语素构成的。在构词语素中，实语素是词汇意义的承担者，我们称之为词根；虚语素加在词根上表示附加意义，称为词缀。例如“帽子”词里的“帽”是词根，“子”是后缀。

由一个语素构成的词叫单纯词，由两或两个以上的语素构成的词叫合成词。

（一）单纯词

1. 单音节类单纯词绝大多数都是单音节词。例如“天，地，江，山，国”等。
2. 多音节类两个音节的最多。又可以分为以下几类：
(1)联绵词

联绵词是古代汉语遗留下来的两个音节连缀成义不能拆开来讲的词。联绵词属于语音造词，从语音上可以分为双声，叠韵，非双声叠韵三种。

a.双声指两个音节声母相同的连绵词。例如：
仿佛，流连，参差，，吩咐，惆怅，仓促等。

b.叠韵指两个音节的韵相同或相近的连绵词。叠韵的韵指的是韵腹加韵尾，不包括韵头。例如：玫瑰，伶俐，蟑螂，葫芦，烂漫，蹁跹，迷离，橄榄等。

c.非双音叠韵两个音节的声韵都不相同的联绵词。例如：芙蓉，蝙蝠，扶摇等。

(2)叠音词

叠音词是重叠音节构成的词。例如：

a.依依，切切，沾沾，淋淋，常常，翩翩，济济，洋洋，楚楚等。

b.汨汨，淙淙，瑟瑟等。

c.猩猩，拂拂，蝈蝈，蚰蚰等。

其中 a 类是表示情状的，b 类是表示声音的，c 类是表示指称的。它们共同的特点是其中的一个音节没有意义，不能单用。

(3)拟声词为模拟声音而造的词。例如：

呼噜，哗啦，叮当，咕噜，骨碌等。

拟声词中的一个音节有的也能单用，但表示的声音就不同了，因此不算合成词。象“哗啦”的“哗”。

(4)译音词

译音词是用读音相同或相近的字翻译外民族词语形成的词。例如：

a.葡萄，琉璃，石榴

b.沙发，巧克力，迪斯科，奥林匹克

其中 a 类是古代由西域借来的译音词，b 类是近现代从欧美借来的译音词。

(二) 合成词

合成词可以分为复合式，重叠式，附加式三大类。

1. 复合式

复合式合成词是词根加词根直接组合而成的，是汉语构词的主要形式。主要有联合，偏正，动宾，补充，主谓语种结构。

(1) 联合型

联合型的两个构词语素从结构上说是平等的，不分主次的。例如：

- a. 伟大，美丽，计算，制造
- b. 骨肉，江山，身心
- c. 天地，矛盾，横竖，
- d. 动静，国家，忘记

联合型构词的两个语素一般都是语法性质相同的。

(2) 偏正型

偏正型是前一个词根修饰，限制后一个词根，以后一个词根为主的复合词。偏正型构词内部又可以根据语素的性质和语义分出很多类型。例如：

马路，火车，手表，气功；都是“名+名”，即前一个名素修饰限制后一个名素。

白酒，高级，红旗，热浪，快门；都是“形+名”即前一个形素修饰限制后一个名素。

(3) 动宾型

动宾型的前一语素都是动素，后一个语素是前一语素支配涉及的对象。例如：

司机，绑腿，避难，失望，举重，减肥等。

(4) 补充型

补充型以前一个语素为主，后一语素补充说明前一语素。例如：

扩展，推翻，看见，压缩，提高，延长，信件等。

(5) 主谓型

主谓型前一个语素是陈述的对象，后一个语素对前一个语素进行陈述。例如：

地震，人为，日食，性急，头疼，心虚，自信，自愿，自在等。

2. 重叠式

重叠式由两个相同的词根重叠构成。例如：爸爸，妈妈，爷爷，姑姑，哥哥，偏偏，整整，好好儿，多多等。

3. 附加式

附加式是词根加词缀共同构成的词。词根由实语素充当，是词汇意义的负载者，词缀由虚语素充当，一般表示语法意义或类别意义。根据词缀在词根的前后位置，附加式可以分为前附式，后附式和中附式。

前附式例如：

老师，老板，老乡，小姐，小王，初一，第一，以前，之后，等。

后附式例如：画儿，小说儿，儿子，石头，尾巴，在乎，突然，善于，人家等。

中缀式例如：

稀里糊涂，看得见，打不到等。

四、缩略语

简称就是把长的词语减缩或紧缩而成短的词语，如：基建（基本建设），民企（民营企业），联网（互联网络），世博会（世界博览会）。简称可以专名词语，如民盟（中国民主同盟），亚运会（亚洲运动会）。行业语，如安检（安全检查），减亏（减少亏损），财险（财产保险）；也可以是一般通用的词语，如卫视（卫星电视），中小学（中学小学）等等。

简称可以从构成方式上加以分类。常见的有：

1. 减缩

减缩是截取原词语的部分词语构成。如上例子，再如：解放军（中国人民解放军）。

2. 紧缩

是抽出原词语中有代表性的语素组成简称。上举例子中几个例子属这种类型。如“基建”、“民企”，

再如“民警（人民警察），增产（增加生产），港澳（香港澳门）”。

3. 带数字简称

这种简称的构成有两种情况：一是抽出词语中的共同成分加一个数次构成如：

三军 ---- 陆军，海军，空军

四化 ---- 农业现代化，工业现代化，国防现代化，科学技术现代化。

另一种是概括原来词语表示的事物的共性加一个数词构成如：

五谷 ---- 稻，麦，豆，黍，高粱

七窍 ---- 两眼，两耳，鼻子，嘴

有一部分简称在长期使用中固定为词，如“基建，增长，五谷”等。

参考文献

1. 周荐《汉语词汇结构论》，上海：上海辞书出版社，2004-12-01
2. 葛本仪《现代汉语词汇学》，济南：山东人民出版社，2001-4-1

ԱՐՄԵՆ ԴՈՂՈՍՅԱՆ - ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՆԱՐԵՆ ԼԵԶՎՈՒՄ

Ուսումնամեթոդական նյութում խոսվում է այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում մորֆեմա-ձևույթը չինարեն լեզվում՝ ինչպիսին կարող է այն լինել ըստ հիերոգլիֆային կառուցվածքի, ինչպես տարբերակել հիերոգլիֆը (որը արտասանական ձևում համապատասխանում է մեկ վանկի) , արդյոք համարվում է ձևույթ, թե՛ ոչ: Ներկայացվում է ձևույթի սահմանորոշումը. որոնք են համարվում բառ

կազմող ձևային: Նկարագրված են ձևային տեսակները՝ ըստ իրենց վանկային կառուցվածքի, ըստ իմաստի:

Համակողմանիորեն ներկայացված է բառակազմույթը չինարեն լեզվում. պարզ բառերի տեսակները՝ ըստ իրենց վանկային կառուցվածքի, ածանցավոր բառեր: Ինչպես նաև բարդ բառերի կազմությունը. բարդ բառերում կապերի տեսակները հիերոգլիֆների միջև: Տրվում է բացատրություն, թե ինչպես տարբերակել երկու հիերոգլիֆներից կազմված բառակապակցությունները բառերից:

АРМЕН ПОГОСЯН - СЛОВООБРАЗОВАНИЕ В КИТАЙСКОМ ЯЗЫКЕ

В учебно-методическом материале говорится о том, что из себя представляет морфема в китайском языке, какой она может быть согласно иероглифической структуре, как отличить иероглифы (которые по форме произношения соответствуют одному слогу), считается ли это морфемой или нет. Представляется определение морфемы, какие морфемы образуют слово. Описаны виды морфем по структуре слога и по смыслу.

Всесторонне представлено словообразование в китайском языке, виды простых слов по структуре слога, производные слова. А также образование сложных слов, в сложных словах виды связей между иероглифами. Дается объяснение, как отличить словосочетания слов состоящие из двух иероглифов, от слов.

ARMEN POGHOSYAN - THE WORD-FORMATION IN THE CHINESE LANGUAGE

In methodic-educational material is spoken about what the morpheme is in the Chinese language how it can be according to his hieroglyphic structure, how to distinguish hieroglyphics (which conform to one syllable by the form of pronunciation) is it a morpheme or not.

It is shown the determination of morpheme which morphemes form the word. Here was described the types of morphemes by the structure of syllable and by meaning.

In detail is represented the word formation in the Chinese language, the types of simple words by the structure of syllable, derivatives. And also the forming of complex words, in complex words the types of connection between hieroglyphics. It is given the explanation how to distinguish the combination of words consisting of two hieroglyphics from words.

**ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԱՌՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ**

ՔՐԻՍՏԻՆԵ ՌԱՖԱՅԵԼՈՎԱ

Հիմնաբառեր՝ բառապաշար, աշխարհի պատկեր, մշակույթ, աշխարհընկալում, բուսանուն, ազգ, հասկացույթ, դարձվածք

Անհիշելի ժամանակներից սկսած մարդկությունն իր ճանաչումներով, զգացմունքներով և զգացողություններով անջնջելի հետք է թողել տարբեր ազգերի լեզուների վրա: Եվ նրա որոշ բացահայտումներ և ճանաչումներ ամրագրվել են այդ լեզուներում՝ մինչ այսօր պահպանվելով ասացվածքների, ասույթների և թևավոր խոսքերի տեսքով:

Ակադեմիկոս Լ.Վ. Շերբայի, տարիներ առաջ առաջադրած այն գաղափարը, որ «Աշխարհն ամենուրեք նույնը մնալով՝ տարբեր լեզուներում տարբեր կերպ է ընկալվում ...» [Щербак 1974: 64], այժմ էլ շատ արդիական է տարբեր լեզվական համակարգերի և մշակույթների խորը և համապարփակ ուսումնասիրության համար: Աշխարհի ազգային պատկերի առանձնահատկությունը, ըստ Լ. Բիկովի և Ն. Սուկոլենկոյի «առաջին հերթին հիմնված է տարբեր ժողովուրդների էմպիրիկ և խորհրդանշական աշխարհի յուրօրինակության վրա»: Առաջինին, նրանց կարծիքով, վերաբերում են բնական և կլիմայական պայմանները, տվյալ ազգին բնորոշ տնտեսական գործունեությունը, երկրորդին՝ բանահյուսությունը, դիցաբանությունը, գեղարվեստական գրականությունը, մշակույթը և այլն: Այսինքն, աշխարհի ազգային պատկերների տարբերությունները հիմնականում պայմանավորված են մշակութային առանձնահատկություններով: Սակայն, «մշակութային առանձնահատկությունների ամրագրումը հիմնականում կապված է լեզվական նշանների հետ» [Быков, Сукаленко 1996: 412], որոնց շարքում կարևոր դեր են խաղում դարձվածքային միավորները (այսուհետ ԴՄ) և կայուն համեմատությունները (այսուհետ ԿՀ):

Սույն աշխատության ուսումնասիրության առարկան են հանդիսանում այն ԴՄ-ները, որոնք կապված են բնության և բուսանունների հետ: Բնությունն է միշտ շրջապատել մարդուն, որի

գրկում մարդն առաջացել և լույս աշխարհ է եկել: Չեխ գրող Վացլավ Ցիլեկը նկատում է՝ «գոյություն չունի երկու պատմություն՝ մարդկության և բնության, այլ միայն մեկը, որը վերջին միլիոնավոր տարիների ընթացքում ընդհանուր է»: Բուսական աշխարհի անունները ցանկացած լեզվում կազմում են բառապաշարի անհրաժեշտ մասը: Դրանցում արտացոլվում է տվյալ ժողովրդի մշակույթը, սովորույթները, խորհրդանիշերը, առասպելական և կրոնական հիմնավորումները: Ցանկացած ժողովրդի կյանքն անհնար է առանց բույսերի աշխարհի հետ սերտ կապի:

Բուսանուններ ասելով՝ հասկանում ենք ինչպես տարատեսակ ծառերի, թփերի, ծաղիկների և խոտերի, մշակովի և վայրի, ուտելի և անուտելի բույսերի անվանումները, այնպես էլ դրանց պտուղները: Արաբերենի և հայերենի ԴՄ-ները զուգադրաբար են դիտարկվում, ինչը թույլ է տալիս հաստատել երկու տարբեր կառուցվածք ունեցող լեզուների դարձվածաբանության համապատասխանությունն ու անհամապատասխանությունը: Աշխատությունն ավելի ընկալելի դարձնելու միտումով՝ բոլոր բուսանունները, որոնք կազմում են արաբերենի և հայերենի ԴՄ-ների մաս, բաժանել ենք մի քանի խմբերի՝ *ծառեր, ծաղիկներ, խոտաբույսեր, պտուղներ*:

Առաջին իմաստային խումբն ընդգրկում է այն բոլոր ԴՄ-ները, որոնք կազմված են *ծառ* հասկացույթից և դրա տարատեսակներից: Յուրաքանչյուր ազգ, կյանքի այլ իրողություններով հանդերձ, իր լեզվում պատկերում է բնության այն երևույթները, որոնք մոտ և հասկանալի են իրեն: Դրանից ելնելով, միանգամայն պարզ է դառնում, որ հայերենի և արաբերենի ԴՄ-ներից շատերն իրենց կազմում ունեն այնպիսի ծառատեսակների անվանումներ, որոնք աճում են Արաբական երկրների և Հայկական լեռնաշխարհի տարածքում:

Հայերենում և արաբերենում ծառերի անվանումներով ԴՄ-ները հիմնականում անհամարժեք են: Բացառություն են կազմում միայն *ծառ* և *տերև* հասկացույթներով ԴՄ-ները, որոնք հանդիպում են վերոհիշյալ լեզուներում: Օրինակ՝ արաբ. *maqṭū' min ašajara* / *ծառից կտրված (միայնակ)*, *alkalima alhelwa šajara mudlima* / *քաղցր քառը զովացնող ծառ է* և այլն, հայ. *պտուղը ծառից հեռու չի ընկնի, ծառի պես*, արաբ. *al mu'min kalwaraqa, la yasquṭ mahma habat al'wāšif* / *հավապրացյալը կանաչ տերևի պես է, ինչքան էլ քամի փչի չի ընկնի*, հայ. *աշնան տերև, կանաչ տերևից ընկած* այլն:

Արաբերենում հաճախ հանդիպում են *արմավենի* հասկացույթով ԴՄ-ներ, օրինակ՝ *āda aljamal wa āda annaxla / ուղտի համար վճարողը արմավենու համար էլ կվճարի*, *rajul šāmix miṭla annaxla / արմավենու պես սլացիկ տղամարդ և այլն:*

Մերձավոր Արևելքում արմավենին խորհրդանշել է հաղթանակ, հանրաճանաչություն, երկարակեցություն և անմահություն: Հին Եգիպտոսում և Արաբական աշխարհում այն համեմատել են կյանքի ծառի հետ [Трессидер 1999]:

Արաբերենում ինչ-որ մեկի կամ իրի ուժը ցուց տալու համար կիրառվում է *ծառի ճյուղ / փայտ* հասկացույթը, օրինակ՝ *ištadda ‘ūdūhu/ բունն ուժեղացավ*, *šulb al‘ūd / բնի ամրություն:* Այս բուսանունը արտահայտում է այլ իմաստներ ևս *ašbahā kal‘ūd / ճյուղի (փայտի) պես դարձավ (տեղեկացավ):*

Հայերենում արաբերենի համեմատությամբ հաճախ հանդիպում են *կաղնի, բարդի, չինար, ուռենի* բուսանուններով ԴՄ-ներ, քանզի այդ ծառատեսակները բնորոշ են հայկական լեռնաշխարհին: Օրինակ՝ *կաղնու պես ամուր, բարդու պես սլացիկ, չինար բոյ, ուռու պես դողալ և այլն:*

Երկրորդ իմաստային խումբը կազմում են ծաղկանուններից կազմված ԴՄ-ները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արաբերենում այդպիսի ԴՄ-ներն այնքան էլ շատ չեն, բայց այլ պատկեր է հայերենում, որտեղ դրանք մեծ թիվ են կազմում: Դա կապված է Հայաստանին բնորոշ բնակլիմայական առանձնահատկությունների հետ: Օրինակ՝ արաբ. *laun azzahr byaqhar qahr/ ծաղկի գույնը հաղթում է բռնությանը*, հայ. *մի ծաղկով գարուն չի գա:*

Վարդ հասկացույթով հայերենում դիտարկվել են հետևյալ ԴՄ-ները՝ *առանց փշի վարդ չկա*, արաբերենում՝ հետևյալ ԴՄ-ներ՝ *barra warda wa jauwa qirda / դրսից՝ վարդ, ներսից՝ կապիկ* (այսպես ասում են այն կանանց հասցեին, ովքեր զարդարելով տան շեմքը՝ արհամարհում են ներսի մաքրությունը) և այլն:

Արաբերենում հաճախ հանդիպում են *լոտոս (սիդրա)* հասկացույթով դարձվածքներ: *āšāba sadrata ašawāb / նպատակին խփել, sadrat almutahī / սահմանային լոտոս (աշխարհի հեռավոր ծայրը):* Ըստ իսլամական ավանդույթի, այս ծաղիկն աճում է յոթերորդ երկնքում, Արարչի գահի աջ կողքին, որտեղ հավաքվում են հրեշտակները: Ըստ մեկ այլ աղբյուրի՝ այս ծաղկի պտուղները երկու տեսակ են լինում՝ աղբյուրների և գետերի ափին աճող անփուշ և մեծ պտուղներ, որոնցից

օգտվում են Ջեննեթի (Դրախտի) բնակիչները և փշոտ և մանր, որոնք հասնում են Դժոխքի բնակիչներին:

Հետաքրքրել են նաև արաբերենի հետևյալ ԴՄ-ները *բաշթին* կամ *Նեղոսի վարդ* հասկացությամբ, որոնք ունեն բացասական նշանակություն: Գաղտնիքը թաքնված է այս ծաղկի յուրահատուկ կենսակերպի մեջ: Աճելով Նեղոսի ափերին՝ այն մեծ քանակությամբ ջուր է խմում, որի արդյունքում ծանծաղուտ և գարշահոտություն է առաջանում: Օրինակ՝ *la yu‘ajibuhu albaštīn wa man zara‘ahu / ոչ բաշթինն է դուրը գալիս, ոչ էլ նա, ով այն ցանել է (քթին չի գալիս),*

Հաջորդ իմաստային խումբը կազմում են զանազան խոտերի անվանումներով ԴՄ-ները: Եվ հայերենում, և արաբերենում *փուշ* հասկացությամբ ԴՄ-ները բազմաթիվ են: Դա պայմանավորված է երկու երկրների բնակլիմայական առանձնահատկություններով: Հայաստանում այն հաճախ պահում են տանը՝ ելնելով այն նախապաշարմունքից, որ փուշը վախեցնում և դուրս է քշում չար ոգիներին տան շեմից: Օրինակ՝ *աչքի փուշ դառնալ, փշերի վրա նստած լինել, ամառվա փուշը, ծմեռվա նուշը* և այլն:

Փուշը կազմում է արաբական անապատների անբաժան մասը, որը հնում եղել էր ուղտերի սնունդի և արաբական քոչվոր ցեղերի համար ջեռուցման միջոց: Օրինակ՝ *jā‘a bišauk waššajar / եկավ փուշով և ծառով (մեծ քանակությամբ), kaššauka filjanb / ասես փուշը կողի մեջ (աչքի փուշ), man yazra‘a šauk la yahšud bihi ‘anaban / ով փուշ ցանի, խաղող չի հնձի և այլն:*

Եվ հայերենում, և արաբերենում կարելի է հանդիպել ԴՄ-ներ, որոնք կազմված էն *բույս, ծղոտ* և *ռեհան* բուսանուններից: Օրինակ՝ *հայ. ավշանը բեջարես ռեհան չի դառնա, ջերմոցային բույս (թույլ, տկար), ծղոտի վրա նստեցնել (սնանկացնել), արաբ. kannabat ašaytānī / ինչպես Շեյթանի բույսեր (սնկի պես բուսնել), ibra fi qaumat qis / ասեղը ծղոտի մեջ (անհետանալ), qalam arīḥānī / ռեհան գիր (գեղագրական ձեռագրի տեսակ) և այլն:*

Արաբական աշխարհին բնորոշ բուսանուններից են կազմված հետևյալ ԴՄ-ները՝ *ja‘alahu hašīman tadrūhu arriyāh / չորացրած խոտ դարձնել, որին քամին թոցնում է (բմբուլները քամուն տալ), zay almaqadūnus mahšūr fi kul akl / մաղաղանոսի պես ամեն ուրելիքում հայտնվել (անպոչ գդալի պես մեջ ընկնել), zay alhayš la ‘ayš wa la ‘alayš / մոլախոտի պես ոչ կապրի, ոչ էլ կվերանա և այլն:*

Հայկական բնաշխարհին բնորոշ են *յոնջա*, *դաղձ* բուսանունները, որոնք հանդիպում են մի շարք ԴՄ-ներում: Օրինակ՝ *գարուն կգա՝ յոնջա կբուսնի*, *օձը դաղձից կփախչի*, *դաղձն էլ օձի բնի մոտ կաճի* և այլն:

Մյուս իմաստային խումբը կազմում են պտուղների անվանատեսակներով ԴՄ-ները: Այս խումբը մենք բաժանել ենք մի քանի ենթախմբերի՝ մրգեր/ հատապտուղներ, բանջարեղեն և հատիկավորներ:

Առաջին ենթախումբը կազմում են մրգանուններով ԴՄ-ները: Հայերենում *խնձոր* հասկացույթով ԴՄ-ները մեծ թիվ են կազմում: Հետաքրքրական է նշել, որ ի տարբերություն արաբերենի, հայերենում *խնձորը* խորհրդանշական իմաստ է արտահայտում: Այն սիրո, ամուսնության, երիտասարդության և պտղաբերության խորհրդանիշն է: Հայ ժողովրդական հեքիաթներն ավարտվում են այսպես՝ *երկնքից երեք խնձոր ընկավ...*: Սա կապված է նաև քրիստոնեական ավանդույթի հետ: Չնայած այն բանին, որ Աստվածաշնչում ոչ մի խոսք չի ասվում Եվայի ճաշակած մրգի մասին, այնուամենայնիվ այն ընդունված է կոչել խնձոր: Օրինակ՝ *մի կծած խնձոր (գեղեցիկ)*, *կարմիր խնձոր ուղարկել (ջերմ հրավեր անել)*, *մի խնձոր՝ երկու կես արած (հրաբ նման)* և այլն:

Երկու լեզվամշակույթներում էլ հանդիպում են *պտուղ* հասկացույթով ԴՄ-ներ: Օրինակ, *արաբ. awal tamar / առաջին պտուղ, xaşani fulān biṭamrati qalbihi/ առանձնացնել, որպես սրտի պտուղ* և այլն: Հայերենում ներկայացված ԴՄ-ները հետևյալներն են՝ *արգելված պտուղ, պտուղը ծառից հեռու չի ընկնի* և այլն:

Հետևյալ ԴՄ-ների մաս է կազմում *խաղող* հասկացույթը՝ *արաբ. innaki la tajnī min aṣauk al'inab / չես հավաքի փշից խաղող (ինչ որ ցանես, այն կհնձես)*, *հայ. խաղողի լավը բաղվանչին կուտի, խաղողի պես քաղցր* և այլն: Այս պտուղը Միջագետքի տարածքում համարվում է բնության և պտղաբերության ամենահին խորհրդանիշներից մեկը [Տրեսսիդեր 1999]: Բիբլիական ավանդույթի համաձայն, Նոյը՝ դուրս գալով տապանից, խաղողի վազ է տնկում և այնուհետև պտուղներից գինի քանում: Հայ ժողովրդի համար խաղողը խորհրդանշում է լիություն և կենսուրախություն [Մանասյան 2007: 65].

Հայկական լեռնաշխարհում առաջնային տեղ է ունեցել նաև *նուռը*: Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են հետևյալ ԴՄ-ները՝ *ճաքած նուռ, ալ նուռ* և այլն: Այս միրգը խորհրդանշում է պտղաբերություն և հարստություն նաև ողջ Արևելքում, քանզի նոնենիները ողջ տարին զարդարված են պտուղներով [Մանասյան 2007: 15]: Եվ պատահական չէ, որ հայկական քանդակագործական,

նկարչական արվեստների և մանրանկարչության մեջ խաղողը և նուռն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում (տես՝ Մոմիկ, Փարաջանով):

Եվ հայերենում, և արաբերենում բազմաթիվ են դեղձ և ծիրան հասկացույթներով ԴՄ-ները: օրինակ՝ արաբ. bukra filmišmiš / վաղը՝ ծիրանին (երբեք), սպասում է մինչև դեղձն ընկնի բերանը, ծիրանի գոտի (ծիածան): Այս երկու մրգատեսակներն էլ համարվում են ավանդական և բնորոշ են հայկական բնաշխարհին:

Արմավն արաբների կյանքում դարեր շարունակ հսկայական դեր է խաղացել: Դեռ հին ժամանակներից քոչվոր արաբները բավարարվել են ամենաքչով՝ սննդակարգում օգտագործելով արմավի պտուղները ձավարեղենի և ուղտի կաթի հետ միասին, որոնցից պատրաստվել են զանազան ուտեստներ: Այն օգտագործվել է թե թարմ, և թե չոր վիճակում: Ըստ արաբների՝ հմուտ տանտիրուհին պետք է կարողանար արմավից պատրաստել մոտ հարյուր տարատեսակ ուտեստ: Արմավենու պտուղները նաև ծիսական նշանակություն ունեին: Հարսին ուղեկցող աղջիկները արմավի պտուղներ են տանում, կամ փեսայի տանը հարսին դիմավորում են արմավով լցված սափորներով: Մահացածի թաղման յոթերորդ օրը դրանցից պատրաստվում է հավվա և, տանելով մահացածի տուն, բաժանվում է ընտանիքի անդամներին: Ռամադանին (պահք) իսլամադավան ազգերի օրվա առաջին սնունդը կազմում են արմավենու պտուղները (խուրմա) և ջուրը: Արմավի կտերի միջոցով կարողացել են ձերբազատվել ցիններից (չար ոգիներից) [Ախունով 2014: 323-329]: Ընդ որում արմավը հասունության տարբեր աստիճաններում, չորացրած կամ թարմ վիճակում տարբեր անվանումներ ունի: Օրինակ basr / խակ արմավ, tamr / արմավ (չորացրած), balah / թարմ (չորացրած) արմավ, raṭb / թարմ, հասած արմավ և այլն: Այդ է պատճառը, որ այդ լեզվում այդքան շատ են հանդիպում տվյալ բաղադրիչով և ԴՄ-ներ և ԿՀ-ներ: Օրինակ՝ *arxaş min attamar filbaşra / Բասրայի արմավի պես էժան, innahu liaşbah bihi min attamar bittamara / նման լինել ինչպես արմավը արմավին, lađīd mīl attamar / քաղցր ինչպես արմավ* և այլն:

Չնայած այն բանին, որ ավանդական արաբական խոհանոցում այսօր շատ են օգտագործվում ընդեղենի տարբեր տեսակները՝ նուշ, գետնանուշ, պիստակ և այլն, արաբերենում այս հասկացույթներով ԴՄ-ներ համարյա թե չեն հանդիպում: Նույնը չի կարելի ասել հայերենի մասին: Այստեղ մենք դիտարկում ենք տվյալ հասկացույթներով մի շարք ԴՄ-ներ: Օրինակ՝ *գլխին ընկույզ կոտրել, էշն ինչ գիտի նուշն ինչ է, ուշ լինի, նուշ լինի, ամառվա փուշ ձմեռվա նուշ* և այլն:

Հաջորդ իմաստային ենթախումբին պատկանում են բանջարեղեն հասկացույթով ԴՄ-ները: Եվ արաբերենում և հայերենում ամենագործուն հասկացույթները *սոխն* ու *սխտորն* են, որը ցույց է տալիս այս բանջարեղենների լայն կիրառությունը երկու տարբեր ազգերի խոհանոցային մշակույթներում: *mā yusawī qīšra bašla / սոխի կճեպ չարժի* (արտահայտությունը վերաբերվում է մարդկանց, ովքեր ոչինչ չարժեն ուրիշների աչքերին), *ib'adu tabqū 'asal wa āqrubū tabqū bašal / հեռացրու՝ կմնա քաղցր, մուրեցրու՝ կմնա սոխ* (ինչքան հեռու, այնքան քաղցր), *addunā badal yom 'asal wa yom basal / աշխարհը մի օր մեղր է՝ մի օր սոխ*: Վերջին երկու օրինակներում երևում է արաբների կյանքի դառնության նմանակումը *սոխ* բուսանվան հետ, մինչդեռ հայկական լեզվամշակույթում այն ավելի շուտ մատնանշում է դրա կիրառման եղանակն ու անհրաժեշտությունը: Օրինակ՝ *Սոխ ու սխտոր հաշիվ անողը խաշ չի ուրի, սոխ ուտողի բերանը կմրմռա, սոխի անուշը չի լինում* և այլն:

Երկու լեզուներում էլ լայն կիրառություն ունեն *բողկ* և *դդում* բուսանունները: *akala alfallāh tuhāh, qal: alfijl aḥsan / գյուղացին խնձոր կերավ՝ ասաց բողկն ավելի լավն էր, albaṭīxa alqar'a lubbuha katīr / դդումի կուպը շար է լինում, zay alqara' yamuddu libbarrihi / դդումի պես տարածվում է հողի վրա, հայ. բողկի գլուխ, բողկի պես առողջ, դդումի գլուխ և այլն*:

Արաբական լեզվամշակույթին բնորոշ կարելի է համարել հետևյալ հասկացույթներով ԴՄ-ները՝ *շաղգամ*, *կիլկաս*, *մանանեխ* և *մի շարք այլ բուսանուններ*: Հատկանշական է *կիլկաս* բուսատեսակը, որն աճում է Նեղոսի ափերին, լայն տարածում ունի Եգիպտոսում և առանձնանում է մշակման բարդությամբ: Օրինակ՝ *bayāduha šiq allft / սպիտակությունը շաղգամի է (բնորոշում է մաշկի գույնը), kul šay' bilbaxt illā alqilqās miya wa fahṭ / ամեն ինչ բախտով, միայն կիլկասը ջրով և փորելով, inqasamat kainnaha fūla / ինչպես կիսած ոլոռ (նման), biḥajm alxadala / մանանեխի մեծության (փոքր) և այլն*:

Հայկական լեզվամշակույթին բնորոշ ԴՄ-ների թվին կարելի է դասել հետևյալ արտահայտությունները՝ *խիարը քոքիցն ա ծուռ, գազար կերած էշի ձեն (զիլ), լոբի կերած դուրս տալ (հիմար բաներ ասել), լոբի ուտող (անխելք) և այլն*: Հետաքրքիր են *հատկապես վերջին օրինակները՝ լոբի բուսանունով, որը լայն տարածում ունի ամբողջ Կովկասում*:

Վերջին ենթախմբն ընդգրկում է հատիկավորների դասին պատկանող բուսանուններից կազմված ԴՄ-ներ: Դրանք են *կորեկ*, *գարի*,

կուր, ցորեն բուսանուններով դարձվածքները: Օրինակ՝ հայ. *կաթ ու կորեկ դառնալ (հարար սիրել), գարի գցել, հավը երազում կորեկ է տեսնում, ցորեն վարեցի սխտոր դուրս եկավ* և այլն: Արաբերենում առավելագույն գործածություն ունեցող ԴՄ-ները հետևյալներն են՝ *awal ašajara badra / առաջին ծառը կուր է գնում, jamāluk jamāl rubāni wa qalbuk badra šaytāni / գեղեցկությունդ աստվածային է, իսկ սիրտդ սատանայի կուր է (սերմ), yaʿmal min alhibā qiba / կրից գմբեթ սարքել* (լուն ուղտ դարձնել), *fulān kašaʿir yuʿkil wa yadum / նման է գարու՝ և ուտում են և զրպարում* (այսպես ասում են այն մարդկանց մասին, ովքեր լավություն են անում, բայց չարությամբ պատասխան ստանում): Ժողովրդական լեզվում շատ գործածական են հետևյալ ԴՄ-ները *կորեկ* բուսանունով, օրինակ՝ *hua minka ʿla tumām / կորեկի հեռավորության վրա է: Հայտնի է, որ կորեկը* շատ ցածր բույս է և այս ԴՄ-ները մատնանշում է ինչ որ բանի մոտ գտնվելը կամ մատչելի լինելը (քթի տակ, ձեռքի տակ), *lam takun fi ʿaynyihī qumħa wāħida min anum / մի ցորենի հատիկի չափ քուն չեկավ աչքերին, šahāt wa ʿāyi z ʿayš qamħin / աղքատի աստուստը ցորենն է և այլն:*

Հայկական լեռնաշխարհին, հատկապես Արցախին բնորոշ բուսատեսակներ են *կորկուրը և բլղուրը, որոնք հանդիպում են հետևյալ ԴՄ-ներում:* Օրինակ՝ *գլխին կորկուր ծեծել, բլղուրը բրինձ չի դառնա* և այլն:

Չնայած այն հանգամանքին, որ *բրինձը* արաբական խոհանոցում և սովորույթներում իր ուրույն տեղն է զբաղեցնում, արաբերենում այս հասկացույթով ԴՄ-ներ չեն հանդիպում: Օրինակ՝ ի նշան բազմազավակության՝ նորապսակների գլխին բրինձ են շաղ տալիս, կամ նորածին երեխային շնորհավորելիս հյուրերին հյուրասիրում են մուղլի՝ բրնձով, վարդաջրով և զանազան համեմունքներով պատրաստված ուտեստ, որից հրաժարվել չի կարելի, այլապես կվնասեն նորածինն և այլն: Այլ պատկեր է հայերենում, որտեղ այդպիսի ԴՄ-ները բազմաթիվ են: Օրինակ՝ *բեղից ընկած բրինձ, խոսքով փլավ չի եփվիլ՝ յուղ ու բրինձ է հարկավոր* և այլն:

Եվ այսպես, ուսումնասիրության արդյունքում ընդհանուր առմամբ երկու տարակազմ լեզուներում ուսումնասիրվել են 400 բուսանուններից կազմված ԴՄ-ներ, որոնցից 195-ը արաբերենում, և 205՝ հայերենում: Իհարկե, ամենայն հավանականությամբ դրանք կենդանի լեզվում շատ ավելին են, իսկ ուսումնասիրել ողջ լեզվական ֆոնդը պրակտիկորեն հնարավոր չէ: Բայցևայնպես, կարելի է հետևություն անել, որ

բուսանուններից կազմված ԴՄ-ները երկու լեզուներում էլ շատ բազմազան են, որը կապված է բնակլիմայական պայմանների, սովորույթների, կրոնի և մշակութային առանձնահատկությունների և առհասարակ արտաքին աշխարհի պատկերավոր ընկալման հետ: Հարազատ բնությունը, իրեն բնորոշ բուսական և կենդանական աշխարհով, կազմում է իրականության միասնական պատկերի անբաժանելի մասը: Ռուսական մշակույթի համար դա կեչու, սնձենու կերպարն է, ճապոնականի համար՝ սակուրան, չինականի՝ մեյ սալորը [Сыколенко 1992: 49]: Շարունակելով այս միտքը՝ պետք է նկատել, որ թե՛ արաբ, թե՛ հայ ժողովուրդներն իրենց դարձվածքների, ասույթների և առածների, ասացվածքների և հեքիաթների մեջ գործածել են այն պատկերները, որոնք բնորոշ են իրենց հայրենի բնությանը: Դիցուք, հայկական պատկերներում բացակայում են արմավենու, ծիթենու, նարնջի, կիտրոնի և այլ արևադարձային բույսերի մասին հաղորդումները, մինչդեռ բազմիցս հիշատակվում են ծիրանը, նուռը, նուշը, խաղողը, բարդին, դաղձը և շատ ուրիշ բուսանուններ, որոնք աճում են Հայաստանի պայմաններում: Նույնը կարելի է ասել և արաբական աշխարհի վերաբերյալ, որտեղ գերակշռում են արմավն ու արմավենին, ձիթապտուղը, ոսպը, մանանեխն ու այլ չոր, անապատային կլիմային բնորոշ բուսատեսակներ:

Բույսերի աշխարհը, ստեղծելով մարդու կենսական միջավայր և ապահովելով այն ամենը, ինչն անհրաժեշտ է նրա գոյությունը պահպանելու համար, աշխարհի լեզվական պատկերի կարևորագույն մասն է կազմում: Բուսանունների դերը աշխարհի լեզվական պատկերի ձևավորման մեջ բազմակողմանի է: Դրանց ուսումնասիրությունը լեզվամշակութային առումով թույլ է տալիս որոշակի պատկերացումներ կազմել որևէ ազգի լեզվական զանազան երևույթների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1.Գագիկ Մանասյան - Խորհրդանշանների հանրագիտարան, Երևան, 2007թ (343 էջ)
- 2.Ахунов А. М. Основы этнографии стран арабского востока – Казань, 2014. С. 336.

3.Быкова Л., Сукаленко Н. Специфика национально-культурных символов // Annales Universitatis Mariae Curie-Skłodowska Lublin-Polonia Vol XIV/XV. Sectio FF Philologiae 1996/1997. С. 411-425.

4.Суколенко Н. О. Отражение обыденного сознания в образной языковой картине мира. Наукова думка, 1992 – 160 с.

5.Трессидер Д. Словарь символов. - М. 1999 (442 стр.), https://www.booksite.ru/localtxt/tre/sid/der/tresidder_d/slovar_sim/2.htm

6.Щерба Л. В. Языковая система и речевая деятельность. Л.: Наука (Ленинградск. отд.), 1974, (428 стр.).

КИСТИНЕ РАФАЕЛОВА – ОСОБЕННОСТИ ФИТОНИМИЧЕСКИХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ В АРМЯНСКОМ И АРАБСКОМ ЯЗЫКАХ

Данная статья посвящена исследованию фитонимических фразеологических единиц в армянском и арабском языках. В лингвокультурологическом аспекте оно позволяет получить определенное представление о многообразных языковых явлениях данных этносов, а также узнать, как внеязыковая действительность отражается в языке.

KRISTINE RAFAYELOVA - PECULIARITIES OF PHYTONYMIC PHRASEOLOGICAL UNITS IN THE ARMENIAN AND ARABIC LANGUAGES

The article is devoted to the study of phytonymic phraseological units in Armenian and Arabic. The study of the linguocultural aspect allows to get a certain idea of the diverse linguistic phenomena of ethnic groups, as well as to find out how extralinguistic reality is reflected in the language.

К ВОПРОСУ ОБ ОСОБЕННОСТЯХ ЮРИДИЧЕСКОГО ДИСКУРСА

АЛЛА РУДЕНКО

Ключевые слова: право, правовой, текст, юридический дискурс, юридическая коммуникация, дискурсивная компетенция.

Современная система профессионально-ориентированного высшего образования призвана сформировать основные виды компетенций, в том числе дискурсивную компетенцию, владеть которой одинаково важно для представителей любой специальности.

Преподавание РКИ на юридическом факультете Международного университета Евразия сопряжено с некоторыми трудностями, поскольку обучение юридическому дискурсу в рамках овладения коммуникативной компетенцией осуществляется в отрыве от языковой среды, что является причиной довольно низкого уровня развития дискурсивной компетенции студентов и проявляется в неспособности достичь целей коммуникативного акта в конкретной ситуации профессионального общения, в нарушении норм статусно-ролевого общения.

Одну из причин подобного положения вещей следует усматривать в том, что понятие «дискурс» недостаточно знакомо преподавателям и нередко подменяется или вытесняется понятием «текст», приемы формирования дискурсивной компетенции сводятся к привычным формам работы над специальным текстом, а студенты в лучшем случае способны воспринимать и воспроизводить тексты как образцы определенной темы, но не умеют самостоятельно продуцировать дискурсы в соответствии с коммуникативной целью и ситуацией общения.

Отметим здесь, что и среди ученых-лингвистов нет единого подхода к определению термина и понятия «дискурс», который очень часто соотносится с понятием «текст».

Для уточнения значения терминов и понятий «дискурс» и «юридический дискурс» обратимся к дефинициям, предложенным в современных словарях.

Так, Оксфордский словарь английского языка определяет дискурс как определенный жанр, в центре внимания которого находится мысль в ее развитии [The Oxford English Dictionary 1989:124].

В словаре Вебстера дискурс трактуется как поле, материальная форма и формат воплощения вербальной деятельности [The Merriam Webster Dictionary 2002:98].

Согласно Лингвистическому энциклопедическому словарю, дискурс есть текст плюс контекст; он включает в себя паралингвистическое, что прочитывается через функции – ритмическую (автодирижирование), референтную (дейктические жесты), семантическую (мимика, жесты, сопутствующие значениям), эмоционально-оценочную, а также функцию воздействия на собеседника (иллокутивная сила) [Арутюнова 1990:105].

Как видим, данные в словарях определения термина и понятия «дискурс» далеко не однозначны, что поясняет необходимость дополнительного обращения к авторским определениям понятия.

Предложенное Т. Ван Дейком уравнение «дискурс= текст+контекст» [4] получило дальнейшее развитие в работах Н. Фэрклаффа [Fairclough 1989] и объединило в дальнейшем представителей дискурс-анализа [Борботько 1981; Каплуненко 1992; Кибрик 2003; Кубрякова 2004 и др.]

Так, В.Г. Борботько считает, что в речевой деятельности дискурс выглядит как единица, которая состоит из связанных по смыслу предложений и рассматривается как создающаяся в речи относительно самостоятельная языковая единица высшего порядка [Борботько 1981:18]. А.А. Кибрик определяет дискурс как «единство процесса языковой деятельности и ее результата, то есть текста» [Кибрик 2003:10]. Согласно Е.С. Кубряковой, дискурс есть «форма использования языка в реальном времени, которая отражает определенный тип социальной активности человека, создается с целью конструирования особого мира (образа) с помощью его детального языкового описания и является в целом частью процесса коммуникации между людьми, характеризуемого участниками коммуникации, условиями осуществления и целями» [Кубрякова:525].

В современной лингвистике понятие дискурса расширяется до «коммуникативного события, происходящего между говорящим и слушающим в процессе коммуникативного действия» [Чернобров 2005:97].

Таким образом, дискурс может быть определен как специфическая единица языка высшего уровня, отличающаяся по своей структуре от всех других единиц данного языка, способная функционировать как целое и обладающая воспроизводимостью как модель некоей ситуации.

Термин «дискурс» близок по смыслу к понятию «текст», подчеркивая при этом динамический характер языкового общения; под текстом же понимается преимущественно статический объект, абстрактно-формальная конструкция, результат языковой деятельности.

Согласно Н. Фэрклаффу, каждый речевой акт состоит из трех измерений:

- текст;
- дискурсивная практика, которая включает производство и восприятие текстов;
- социальная практика [Fairclough 1989].

Текст является продуктом процесса продуцирования и процесса интерпретации, а дискурс есть динамический процесс, частью которого является текст. Дискурсивную практику можно считать своего рода посредником между текстами и социальной практикой, социальными условиями, которые обуславливает порождение и восприятие текста [Fairclough 1989].

В сравнении с текстом дискурс может быть определен как более широкий и универсальный лингвистический объект. А.М. Каплуненко отмечает: «Редкий текст является самодостаточным для адекватной интерпретации, поэтому восхождение к дискурсу, к знаниям, оставшимся за пределами высказанных в тексте, является закономерным» [Каплуненко:11].

Дискурс – это речевое произведение, наряду с лингвистическими характеристиками обладающее экстралингвистическими параметрами, которые отражают ситуацию и особенности участников общения.

